Սույն գիրքը թվայնացվել է Գրքասեր ՀԿ-ում՝ հայերենով գրականության պահպանման, հանրայնացման և ժամանակակից թվային միջավայրում հասանելի դարձնելու նպատակով:

Կազմակերպության նախաձեռնությունը միտված է հայերեն գրքերի և տեքստերի տարածմանը, ընթերցանության խթանմանը և մշակութային ոչ նյութական ժառանգության պահպանությանը՝ ապահովելով դրանց հասանելիությունը հնարավորինս լայն շրջանակների համար:

Մենք հավատում ենք, որ թվայնացումը ոչ միայն պահպանման միջոց է, այլև գիտելիքի, գրականության և մշակույթի շարունակական փոխանցման կարևոր ուղի:

Գրքասեր ՀԿ-ն գրքերը ձայնագրում և թվայնացնում է բացառապես Ձեր նվիրատվությունների շնորհիվ: Կազմակերպությանը կարող եք օժանդակել հետևյալ հղումով՝

https://grqaser.org/hy/donate

Ստուգված
Բրիտանական գրականություն, Անգլիական գրականություն, Հեքիաթ-վիպակ, Ֆենթզի, Արձակ
9+
Թարգմանիչ՝ Էմմա Մակարյան

Ջոն Ռոնալդ Ռուել Թոլքին
Պահապանները

Նախաբան

Մենք հիմնականում պատմելու ենք հոբիթների մասին, և հետաքրքրասեր ընթերցողը մոտիկից կծանոթանա նրանց կյանքին, բնավորությանն ու պատմությանը: Ոմանք, հավանաբար, արդեն կարդացել են «Հոբիթ» վիպակը, որտեղ կան Արևմտյան Երկրի Ալ Գրքի սկզբնական գլուխները, որ գրել է առաջինը համընդհանուր փառաբանության արժանացած հոբիթ Բիլբո Պարկինսը: Այդ գլուխները կրում են «Գնալն ու գալը» ենթավերնագիրը, որովհետև պատմում են Բիլբոյի Արևելք կատարած ճամփորդության և տունդարձի մասին: Հենց Բիլբոյի պատճառով հոբիթներն ընկան ահավոր իրադարձությունների հորձանուտի մեջ, որը հիմնովին ու անճանաչելիորեն փոխեց հին աշխարհը:

Բայց և այնպես նախաբանում համառոտ պատմվում է Բիլբոյի արշավանքի մասին, չէ՞ որ ոչ բոլորն ունեն «Հոբիթ» գիրքը: Եթե ցանկանում եք՝ կարդացեք հոբիթների մասին սկզբնական տեղեկությունները և վերհիշեք Բիլբոյի արկածները, երևի մի քիչ մոռացած կլինեք:

Հոբիթները փոքր, բայց հնադարյան ժողովուրդ են: Առաջներում նրանք ավելի շատ են եղել, քան այժմ: Սիրում են լռություն ու անդորր, առատ հունձք ու ծաղկավետ մարգագետիններ, իսկ հիմա աշխարհն ինչ-որ շատ աղմկալի ու նեղվածք է դարձել: Լինելով հմուտ ու ճարտար, հոբիթները, սակայն, տանել չէին կարող, ու մինչև հիմա էլ չեն կարողանում, դարբնի փուքսից, ջրաղացից և ճախարակից բարդ սարքեր: Ի սկզբանե անտի խուսափել են մարդկանցից, իրենց լեզվով՝ «հսկաներից», իսկ հիմա պարզապես մեր աչքին չեն էլ երևում: Նախանձելի լսողություն ունեն, սուր աչք, ճիշտ է, նրանք գիրուկ են ու շտապել չեն սիրում, բայց հարկ եղած դեպքում ժիր են ու ճարպկությամբ էլ ոչ ոքի չեն զիջի: Հոբիթները վարժվել են վայրկենապես ու անաղմուկ անհետանալ անկոչ «հսկայի» հայտնվելու առաջին իսկ պահին: Եվ այնքան ճարպկորեն են այդ անում, որ մարդկանց դա կախարդություն է թվում: Իսկ հոբիթներր գաղափար էլ չունեին որևէ կախարդանքի մասին, ուղղակի նրանք ի բնե թաքնվելու վարպետ էին, և հենց մի փոքր բան էր լինում՝ աչքից կորչում էին, ի զարմանս իրենց մեծ ու անճոռնի հարևանների:

Նրանք ախր փոքրիկ են, մարդու կեսի չափ, նույնիսկ թզուկներից էլ փոքր ու վտիտ: Հիմա արդեն մեկմետրանոց հոբիթներն էլ հազվադեպ են հանդիպում, իսկ առաջներում, ասում են, ավելի բարձրահասակ էին: Խաղաղ ու բարեբեր օրերին հոբիթներն ապրում էին իրենց քեֆն ուզածին պես, այսինքն՝ ուրախ էին ապրում: Հագնվում էին խայտաբղետ, առավելապես դեղին ու կանաչ գույների, ոտնաման չէին հագնում՝ նրանց կոշտ թաթերը ծածկված էին խիտ, գանգուր մազով, սովորաբար, ինչպես և գլխի մազերը՝ մուգ խարտյաշ: Այնպես որ կոշկակարի արհեստը նրանց մոտ հարգի չէր, դրա փոխարեն ծաղկում էին մյուս արհեստները, և հոբիթների երկար ու հմուտ մատները սարքում էին շատ օգտակար, և գլխավորը հոյակապ իրեր: նրանց դեմքերը գեղեցկությամբ աչքի չէին ընկնում, ավելի շուտ բարեհոգի էին՝ ջինջ աչքերով, կարմրաթուշ, բերանները համարյա մինչև ականջները բաց միշտ ծիծաղող, ուտել-խմելու պատրաստ: Ծիծաղում էին ամբողջ հոգով, ուտում ու խմում էին ըմբոշխնելով, կատակները պարզունակ էին, ուտում էին օրը վեց անգամ (միայն թե ուտելու բան լիներ): Սրտաբաց հոբիթները շատ էին սիրում հյուրեր ընդունել ու նվերներ ստանալ իրենք էլ պարտքի տակ չէին մնում: Միանգամայն հասկանալի է, որ հոբիթները մեր ուղղակի ազգականներն են, անհամեմատ ավելի մոտ, քան էլֆերն ու թզուկները: Հնում նրանք խոսում էին մարդկային, իրենց ձևով փոխակերպված լեզվով, շատ բաներով նմանվում էին մարդկանց: Բայց թե ի՞նչ ազգակցություն է նրանց հետ, հիմա արդեն դժվար է պարզել: Հոբիթները Նախասկզբնական դարաշրջանի անհիշելի օրերի ծնունդ են: Միայն էլֆերն են պահպանում այդ հեռավոր անցյալի խորքն անցած ժամանակների գրավոր ավանդությունները, այն էլ միայն իրենց մասին, մարդկանց մասին քիչ բան կա այնտեղ, իսկ հոբիթների մասին բոլորովին չի հիշվում: Այսպես, դարեր շարունակ բոլորից աննկատ, հոբիթներն իրենց համար ապրում էին Միջերկրում: Բայց Բիլբոյի և նրա ժառանգորդ Ֆրոդոյի օրոք նրանք հանկարծ, իրենք էլ ամենևին այդ չցանկանալով, բոլորի համար կարևոր ու հայտնի դարձան, և նրանց մասին խոսեցին Իմաստունների ու Տիրակալների խորհուրդներում:

Միջերկրի Երրորդ դարաշրջանը վաղուց անցել է, և աշխարհն այժմ շատ է փոխվել, բայց հոբիթներն ապրում են նույն տեղում, որտեղ որ ապրում էին այն ժամանակ՝ Հին աշխարհի հյուսիս-արևմուտքում, ծովից դեպի արևելք: Իսկ որտեղից էին նրանք հայտնվել և որտեղ էին ապրում ի սկզբանե՝ դա ոչ ոք չգիտեր նույնիսկ արդեն Բիլբոյի ժամանակներում: Նրանց սեփական տարեգրություններն սկսվում էին Հոբիթստանի բնակեցումից, և նույնիսկ ամենահին հոբիթյան պատումները հասնում էին մինչև Դեգերումների օրերը, ոչ ավելի վաղ: Սակայն և ըստ այդ զրույցների, և ըստ որոշ բառերի ու սովորույթների հասկանալի է, որ հոբիթները, ուրիշ շատ ժողովուրդների նման, ինչ-որ ժամանակ Արևելքից են եկել:

Մշուշապատ լեռնաշղթայի և Կապույտ լեռների միջև հոբիթներին և էլֆեր էին հանդիպում, և մարդիկ: Այն ժամանակ այստեղ դեռ ապրում էին դունդանացիները՝ Անդրծայրամասային Արևմուտքից ծովով եկածների թագավորական սերունդները: Բայց նրանք հետզհետե պակասում էին, և Հյուսիսային Իշխանությունը աստիճանաբար ավերակների էր վերածվում: Հոբիթ եկվորներին չէին նեղացնում, տեղը բավականացնում էր, և նրանք արագորեն բնակություն հաստատեցին նոր հողերում:

Այդ նույն հեռավոր ժամանակներում հոբիթները, հավանորեն, և գրությունը յուրացրին՝ դունադանցիների օրինակով, որոնք ինչ-որ ժամանակ, շատ վաղուց այն վերցրել էին էլֆերից: Շուտով նրանք մոռացության տվեցին նախկին բարբառները և սկսեցին խոսել համընդհանուր լեզվով՝ տարածված ամենուր, Արնորից մինչև Գոնդոր: Ի դեպ, իրենց որոշ հին բառեր հոբիթներն այնուամենայնիվ պահպանեցին. օրերի, շաբաթների, ամիսների անունները և, իհարկե, հատուկ անունները:

Արևելքից արևմուտք, Արևմտյան բարձրավանդակից մինչև Բրենդիդուիմյան Կամուրջ, նրանց հողերը տարածվում էին հարյուրավոր լիգերով և հարյուր հիսուն լիգ՝ հյուսիսային խրուտներից մինչև հարավային ճահիճները: Այդ բոլորը կոչվեց Հոբիթստան: Այդ տաքուկ անկյունում հոբիթներն ապրում էին յուրօրինակ ձևով, ուշադրություն չդարձնելով իրենց հողերի սահմաններից այն կողմ տեղի ունեցող անկարգություններին, և վարժվել էին խաղաղությունն ու լիությունը Միջերկրի բնակիչների ճակատագիրը համարել: Սրանք մոռացել էին կամ մոռացության էին տվել այն մի քիչը, որ գիտեին Պահակների՝ հյուսիս-արևմուտքում խաղաղության վաղեմի պաշտպանների, ռազմական գործերի մասին: Հոբիթները նրանց պաշտպանության տակ էին գտնվում և դադարել էին դրա մասին մտածելուց:

Մի բան, որ հոբիթների մեջ չկար՝ դա ռազմասիրությունն էր, իրար հետ նրանք երբեք չէին կռվում: Իհարկե, ժամանակին ստիպված եղան իրենք իրենց պաշտպան կանգնել, ինչպես և լինում է մեր աշխարհում: Բայց Բիլբոյի օրոք դա արդեն անհիշելի անցյալ էր: Նույնիսկ կլիման էր մեղմացել, այնպես որ անգամ հյուսիսային գայլերի ձմեռային հարձակումները տատի հեքիաթ էին դարձել:

Սակայն կուշտ ու անվրդով կյանքը, չգիտես ինչու, բնավ էլ փափկասուն չէր դարձրել այդ պստիկներին: Ահաբեկել, առավել ևս ընկճել հոբիթին, այնքան էլ հեշտ բան չէր: Թերևս, հենց դրա համար էլ նրանք սիրում էին երկրային բարիքները, որ կարողանում էին շատ հանգիստ ապրել առանց դրանց էլ: Փորձանքներին, զրկանքներին, աղետներին ու վատ եղանակին ավելի լավ էին դիմանում, քան կարելի էր սպասել նայելով նրանց տռուզ փորերին ու կլորիկ երեսներին: Անսովոր լինելով կռվելու, որսորդությունը չընդունելով, նրանք բոլորովին էլ իրենց չէին կորցնում վտանգի դեպքում և այդքան էլ խորթացած չէին զենք բանեցնելուն: Սուր աչքն ու ամուր ձեռքը նրանց դիպուկ նետաձիգներ էին դարձրել ու ոչ միայն նետաձիգներ: Եթե պատահում էր, որ հոբիթն արդեն կռացել էր քար վերցնելու, ապա ամեն գազան գիտեր, որ, գլխապատառ ծլկելուց բացի, իրեն ուրիշ ոչինչ չի մնում անելու: Ըստ ավանդության, ինչ-որ ժամանակ բոլոր հոբիթներն իրենց համար բներ էին փորում՝ նրանք հիմա էլ համարում են, որ գետնի տակ ապրելն ամենից հարմարավետն է, բայց ժամանակի ընթացքում ստիպված եղան այլ բնակարանների ևս վարժվել ճիշտը որ ասենք, Բիլբոյի օրոք հին ձևով ապրում էին միայն ամենահարուստ ու ամենաաղքատ հոբիթները: Աղքատները ծվարում էին խղճուկ գետնախուցերում, իսկական բներում՝ առանց պատուհան կամ մեկ պատուհանով: Իսկ նրանք, որ ունևոր էին, հին սովորույթը հարգելով՝ իրենց համար ստորգետնյա պալատներ էին կառուցում: Բոլոր հողերը չէ, որ հարմար էին փորելու համար, և հարթավայրերում հոբիթներն սկսեցին վերգետնյա տներ կառուցել նույնիսկ բլրաշատ տեղերում և հին գյուղերում փայտե, աղյուսե ու քարե շինություններ հայտնվեցին:

Հոբիթստանը բաժանվում էր չորս նահանգի Հյուսիսային, Հարավային, Արևելյան և Արևմտյան, իսկ նահանգները՝ շրջանների, որոնց տրվում էր տեղի ամենահին ու ամենահարգված տոհմի անունը, չնայած այդ տոհմի սերունդները երբեմն բնակվում էին Հոբիթստանի բոլորովին այլ հատվածում: Համարյա բոլոր Ճագարակներն ապրում էին Բրենդիդուիմի ձախափնյակում Բրենդիդուիմքում, բայց Պարկինսների ու Բոքոնակների հարցն այլ կերպ էր դասավորվել:

Այն ժամանակներում, երբ սկսվում է մեր պատմությունը, Հոբիթստանի չորս նահանգներն իրար հերթ չտալով լուրեր էին փոխանակում չտեսնված-չլսված գազանների ու անհասկանալի «օտարականների» մասին, որոնք վարգում էին սահմանի երկարությամբ, հաճախակի խախտելով այն: Դա առաջին նշանն էր, որ կյանքը բոլորովին էլ այնպես չէր ընթանում, ինչպես հարկավոր էր, ինչպես եղել էր միշտ՝ չէ՞ որ վաղուց մոռացված եղելությունների մասին աղոտ հիշեցնում էին միայն ամենահին ավանդապատումները: Այն ժամանակ դեռ ոչ ոք չէր հասկանում, թե բանն ինչ է, նույնիսկ Բիլբոն ինքը: Վաթսուն տարի էր անցել այն օրից, ինչ վերադարձել էր իր հիշարժան ճանապարհորդությունից: Նա արդեն ծեր էր, նույնիսկ հոբիթական հաշվումներով, չնայած նրանց մոտ մինչև հարյուր տարի ապրելը սովորական երևույթ էր, բայց նրա բերած գանձերը, դատելով ըստ ամենայնի, չէին սպառվում: Շա՞տ էր մնացել այդ հարստությունից, թե քիչ, նա այդ գաղտնիքը ոչ ոքի չէր բացում, նույնիսկ սիրելի զարմիկ Ֆրոդոյին: Եվ Մատանու մասին նույնպես խոսք անդամ չկար:

... Ինչպես և պատմված է «Հոբիթ» գրքում, մի անգամ Բիլբոյի մոտ է գալիս մեծ հրաշագործ Գանդալֆ Մոխրագույնը, իսկ նրա հետ տասներեք թզուկ՝ արտաքսյալ թագավոր Թորին Կաղնեվահանը և նրա տասներկու ընկերակիցները: 1341 թվականի ապրիլյան մի առավոտ Բիլբոն, ի մեծ զարմանս իրեն, հանկարծ Հոբիթստանից ճանապարհ է ընկնում հեռու Արևելք թզուկներին վերադարձնելու նրանց անհամար գանձերը, որ հարյուրամյակների ընթացքում կուտակվել էին Սարամիջի թագավորությունում: Հաջողությունն ուղեկցում է նրանց, և կարողանում են ազատվել գանձը պահպանող վիշապից: Գործի ելքը որոշում է Հինգ Զորաց ճակատամարտը, որտեղ զոհվում է Թորինը և բազում քաջագործություններ են կատարվում: Սակայն Երրորդ դարաշրջանի երկարաշունչ տարեգրությունը այդ մասին կհիշատակեր ընդամենը մեկ կամ ծայրահեղ դեպքում երկու տողով, եթե չլիներ կարծես թե պատահական մի իրադարձություն, որ տեղի ունեցավ ճանապարհին:

Մշուշապատ լեռներում է Խլուտ տանող ճանապարհին ճամփորդների վրա են հարձակվում օրքերը. Բիլբոն յուրայիններից հետ է մնում և կորչում լեռան ընդերքի խորշերի լաբիրինթոսում: Սողալով ու շոշափելով առաջ շարժվելիս, ինչ-որ մատանի է ընկնում նրա ձեռքի տակ, և նա, առանց երկար ու բարակ մտածելու, գտածը դնում է գրպանը:

Ապարդյուն որոնելով ելքը, նա հասնում է լեռան խորքում գտնվող մի սառնորակ լճի ափ, որի կենտրոնում, քարե կղզու վրա, անթափանցելի խավարում, ապրում էր Գորլումը՝ սպիտակավուն, առկայծող աչքերով մի նողկալի արարած: Նա լողում էր մակույկով, թիավարելով տափակ ոտնաթաթերով, կույր ձկներ էր բռնում որ երկար, ճանկավոր մատներով ու հում-հում ուտում: Նա ուտում էր ամեն տեսակ մանր ու մեծ կենդանիներ, նույնիսկ օրքերին, եթե հաջողվում էր նրանցից որևէ մեկին բռնել ու խեղդել: Գորլումը մի խորհրդավոր գանձ ուներ, որ նրան էր հասել շատ վաղուց, երբ դեռևս ապրում էր վերևում, ցերեկային լույսի մեջ: Դա կախարդական ոսկե մատանի էր, որն անտեսանելի էր դարձնում: Գորլումը սիրում էր այն ու անվանում «Իմ սքանչելի» և խոսում էր հետը նույնիսկ այն ժամանակ, երբ հագած չէր լինում, իսկ հագնում էր օրք որսալու համար: Նա անմիջապես կհարձակվեր Բիլբոյի վրա, բայց մատանին կղզում էր, իսկ հոբիթն էլֆական դաշույն ուներ ձեռքին: Ժամանակ շահելու համար Գորլումն առաջարկում է հանելուկներ լուծել, եթե Բիլբոն պատասխանը չգտնի, ապա ինքը կուտի նրան, հակառակ դեպքում լույս աշխարհ դուրս կբերի:

Բիլբոն համաձայնում է և հաղթում, չնայած նրան փրկում է ոչ թե հնարամտությունը, այլ պատահականությունը, նա հապաղում է դժվար հանելուկը լուծելիս, հանկարծ գրպանում շոշափում է մոռացված մատանին ու շփոթված բացականչում՝ «Ինչ կա իմ գրպանում»: Գորլումը երեք անգամ սխալվում է: Վեճեր կան թե կարելի՞ է այդ հարցը հանելուկ համարել: Սակայն բոլորը համաձայնում են, որ եթե Գորլումը հանձն էր առել, ապա պարտավոր էր պատասխանել: Հենց դա էլ նրանից պահանջում էր Բիլբոն, կասկածելով, որ լպրծուն արարածը կխաբի, թեպետ նման պայմանադրությունը հնուց ի վեր սրբություն է համարվում: Մենության ու խավարի մեջ Գորլումի հոգին սևացել էր, և պայմանազանցությունը նրա համար ոչինչ չարժեր: Սոված ու զայրացած նա մտածում է. «Մի՞թե ինքը՝ «սքանչելիի» տերը, պետք է վախենա ինչ-որ զենքից ու լողում է դեպի կղզյակ: Բայց մատանին կղզյակում չէր, անհետացել էր: Գորլումի աղիողորմ գոռոցից Բիլբոն սարսռում է, չնայած սկզբում չի հասկանում, թե ինչ է պատահել: Իսկ Գորլումը ուշացած, բայց կռահում է, թե «Ինչ կա նրա գրպանում»: Կատաղորեն շտապում է հետ, որ հոբիթին սպանի և մատանին վերցնի: Հոբիթը վտանգն զգալով փախչում է և նորից նրան փրկում է պատահականությունը՝ մատանին գրպանում մտնում է մատը: Գորլումն անցնում է նրա կողքով ու չի տեսնում: Բիլբոն գնում է նրա հետևից ու «սքանչելիին» ուղղված աղերսանքից ամեն ինչ հասկանում, կախարդական մատանիով նա կարող էր փրկվել և օրքերից, և Գորլումից: Նրանք կանգ են առնում մի սողանցքի առջև, որտեղից նեղ անցում էր ձգվում դեպի ստորին դարպասը: Այստեղ Գորլումը դարան է մանում: Բիլբոն ուզում է խոցել նրան դաշույնով, բայց խղճում է, և, ցատկելով նրա վրայով, միջանցքով վազում է դեպի ելքը: Սրա հետևից լսվում է գոռոցը, «Գո՛ղ, գո՛ղ... թալանչի՛,.. Հավետ ատելի Պարկինս. . . »:

Հետաքրքիր է, որ իր ուղեկիցներին Բիլբոն սկզբում այդ ամենը քիչ այլ կերպ պատմեց, իբր Գորլումը նրան «նվեր» է խոստացել, եթե նա խաղում հաղթի, բայց երբ լողալով գնացեք է կղզյակը, որ վերցնի իր ծննդյան օրը նվեր ստացած կախարդական մատանին, հայտնաբերել է, որ անհետացել է: Բիլբոն գլխի է ընկել, որ իր գտածը հենց այդ մատանին է, բայց քանի որ ինքը խաղը շահել է, ուրեմն, մատանին իրեն է պատկանում: Եվ քանի որ ինքը պետք է դուրս գար այդտեղից, լռել է մատանու մասին ու ստիպել է Գորլումին, որ խոստացված «նվերի» փոխարեն ճանապարհը ցույց տա իրեն: Նա այդպես էլ գրել է իր հուշերում և իր ձեռքով ոչ մի բառ չի փոխել նույնիսկ Էլրոնդի մոտ կայացած Խորհրդից հետո: Պետք է, որ այդ տեսքով էլ նրա պատմությունը մտած լինի Ալ Գրքի բնագրի, դրանից որոշ արտագրությունների ու մեջբերումների մեջ: Ուրիշ արտադրություններում, սակայն, բերվում է իսկական պատմությունը (հորինվածի կողքին), այն որոշակիորեն կազմված է Ֆրոդոյի կամ Սամի ծանոթագրություններով՝ երկուսն էլ գիտեին, ինչպես է եղել իրականում, բայց, հավանաբար, չեն ցանկացել ուղղել ծեր հոբիթի ձեռագիրը: Իսկ Գանդալֆր հենց սկզբից էլ չէր հավատացել Բիլբոյի պատմությանը և շատ խիստ հետաքրքրվում էր մատանիով: Նա Բիլբոյին հոգեհան էր անում իր հարցաքննություններով և աստիճանաբար ճշմարտությունը դուրս քաշեց նրանից: Ընդ որում շփոթեցնում ու զգոնության էր մղում այն, որ հոբիթը հանկարծ սկսեց ստել. դա նրան նման չէր: «Նվերի» մասին էլ ինքը չէր հնարել: Հետագայում Բիլբոն

խոստովանեց, որ այդ միտքն իր մոտ առաջացել է Գորլումի մրթմրթոցները լսելուց հետո, որը մատանին անվանում էր «իր ծննդյան օրվա նվեր»: Բայց ճշմարտությունը դեռևս երկար տարիներ անհայտ մնաց նրան: Թե դա ինչ ճշմարտություն էր, կիմանաք մեր վիպակից:

Բիլբոյի հետագա արկածները նկարագրելու կարիք չկա: Նա անտեսանելի դարձած, դարպասից դուրս եկավ օրքերի պահակների կողքով ու հասավ իր ուղեկիցներին, իսկ հետո մատանու օգնությամբ շատ անգամ փրկեց իր բարեկամ թզուկներին, բայց որքան հնարավոր էր գաղտնի էր պահում մատանին: Տանը մատանիով չէր պարծենում, և այդ մասին գիտեն միայն Գանդալֆն ու Ֆրոդոն և ուրիշ ոչ ոք, ողջ Հոբիթստանում, համենայնդեպս այդպես էր կարծում Բիլբոն: Միայն Ֆրոդոյին էր ցույց տվել նոր սկսած «Գնալն ու գալը» գրքի գլուխները:

Իր թուրը, որին «Ձարդող» անունն էր տվել, Բիլբոն կախեց բուխարիկի վերևում, կախարդական օղազրահը, որը թզուկները նրան նվիրել էին վիշապի գանձերից, փոշոտ ընկած էր խորդանոցում, շատ բան տեսած ճամփորդական կնգուղավոր թիկնոցը կախված էր պահարանում, բայց մատանին միշտ մոտն էր՝ գրպանում, շղթայից կապված:

Նա տուն վերադարձավ իր կյանքի 52-րդ տարում, հոբիթական թվարկության 1342 թ. հունիսի 22-ին: Հոբիթստանում ամեն ինչ գնում էր իր սովորական ճանապարհով, մինչև այն օրը, երբ Բիլբո Պարկինսն սկսեց պատրաստվել նշելու իր 111 -ամյակը (1401 թ.): Այստեղից էլ սկիզբ է առնում մեր վիպակը:

ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

Գլուխ առաջին. Երկար սպասված հյուրասիրություն

Երբ Բիլբո Պարկինսը, Ձառիթափի Պարկուտի տիրակալը, հայտարարեց, որ ուզում է շքեղ տոնել իր մոտալուտ հարյուր տասնմեկամյակը, ողջ Նորգորդը բզզաց ու իրար անցավ:

Ահա արդեն վաթսուն տարի էր Բիլբոն չտեսնված հարուստի ու խիզախ խենթի համբավ էր վայելում այն ժամանակից ի վեր, երբ հանկարծ չքացավ, իսկ հետո անսպասելի վերադարձավ ավարով, որի չափը զանազան ասեկոսեները հարյուրապատիկ մեծացնում էին: Միայն ամենաիմաստուն ծերունիներն էին կասկածի տակ առնում, թե Բլրի ընդերքում ստորգետնյա ուղիներ են փորված, իսկ այդ ուղիներն էլ լցված են գանձերով: Այդ բոլորը քիչ է, դեռ փողերին էլ գումարած առողջությունը, այն էլ ի՜նչ առողջություն. . . Որքա՜ն ջրեր են հոսել, իսկ միստր Պարկինսը ինսնուն տարեկանում էլ հիսունամյա էր թվում: Երբ լրացավ նրա ինսնունինը տարին, սկսեցին ասել, թե նա «լավ է պահպանվել», թեպետ ավելի ճիշտ կլիներ ասել՝ «բոլորովին չի փոխվել»: Շատերը գլուխներն էին օրորում. սա արդեն չափազանց էր, նույնիսկ անարդարացի՝ ո՜նց է, է՜հ, ոմանց բախտը բերում՝ և՛ ծերությունն է կողքով անցնում, և՛ փողերին թիվ ու համար չկա:

— Բարի նշան չէ, — ասում էին նրանք, — ա՜խ, բարի նշան չէ ու փորձանքի բուն. . .

Բայց փորձանք առայժմ չկար, միստր Պարկինսի փողերն էլ չէին պակասում, այնպես որ նրա հարուստ ու տարօրինակ լինելը շատ թե քիչ ներվում էր: Ազգականների հետ համերաշխ էր (իհարկե, բացի Քսակ-Պարկինսներից), և աղքատ ու հասարակ հոբիթները նրան սիրում ու հարգում էին: Բայց նա ինքը ոչ մեկի հետ մոտիկություն չէր անում, մինչև զարմիկների թոռները մեծանան:

Դրանցից ավագը և Բիլբոյի սիրելին վաղաժամ որբացած Ֆրոդո Պարկինսն էր, որը նրա հորեղբոր ծոռն էր մի կողմից և մորաքրոջ աղջկա տղան՝ մյուս կողմից: Ինսնունինը տարեկանում Բիլբոն նրան իր ժառանգորդը դարձրեց և Քսակ-Պարկինսները նորից քթները կախ, ձեռքները դատարկ մնացին: Բիլբոն ու Ֆրոդոն միևնույն օրն էին ծնվել՝ սեպտեմբերի 22-ին: «Որդյակս, տեղափոխվիր ինձ մոտ ապրելու, — մի անգամ ասաց Բիլբոն,— թե չէ այդ ծննդյան օրը մի իսկական գլխացավանք է»: Եվ Ֆրոդոն տեղափոխվեց: Այն ժամանակ նա դեռ ջահել էր՝ հոբիթներն այդպես էին անվանում քսաներկուսի ու երեսուներեքի միջև ընկած բուռն ու թեթևսոլիկ տարիքը:

Այդ ժամանակից ի վեր նրանք տասնմեկ անգամ տոնեցին իրենց համատեղ ծննդյան տոնը, բայց տասներկուերորդ անգամ ինչ-որ չտեսնված ու չլսված բան էր նախապատրաստվում:

Լրանում էր Բիլբոյի հարյուր տասնմեկ տարին՝ երեք մեկ թվանշանն իրար կողքի, յուրօրինակ կլոր ու լիովին պատվավոր թիվ (նույնիսկ առասպելական Կրոլն ապրել էր ընդամենը հարյուր երեսուն տարի), իսկ Ֆրոդոյի երեսուներեքը՝ երկու երեք թվանշանը, նույնպես առանձնահատուկ տարեթիվ էր՝ կյանքի երեսունչորսերորդ տարում հոբիթը համարվում է չափահաս: Սեպտեմբերյան տաք եղանակ էր, և նշանակված օրը մոտենում էր: Մի անգամ, երեկոյան, զարմանահրաշ արկղերով բեռնված մի տարօրինակ սայլ Նորգորդը դղրդացնելով կանգ առավ Զառիթափի Պարկուտի մոտ: Հոբիթները գլուխները հանեցին դռներից ու սկսեցին նայել մթության մեջ: Ձիերը վարում էին գլխներին կնգուղներ քաշած երկարամորուք թզուկներ, որոնք անհասկանալի երգեր էին երգում: Նրանցից ոմանք հետո գնացին, իսկ մյուսները մնացին Պարկուտում: Սեպտեմբերի երկրորդ շաբաթվա վերջին Բրենդիդուիմյան կամրջի կողմից օրը ցերեկով մի բեռնված սայլ երևաց, իսկ սայլի վրա՝ ծերունի: Նա բարձր, սրածայր, կապույտ լայնեզր գլխարկ էր դրել, հագել էր համարյա մինչև կրունկները հասնող մոխրագույն թիկնոց և կապել արծաթավուն շարֆ: Նրա երկար, սպիտակ մորուքը խնամված ու վեհաշուք էր, իսկ փրչոտ ունքերը ծվեն-ծվեն կախ էին ընկել գլխարկի տակից: Փոքրիկ հոբիթները նրա հետևից վազում էին ողջ ավանով մինչև Բլուր ու բարձրացան Բլուրի վրա: Սայլին հրթիռներ էին բեռնված, դա նրանք իսկույն գլխի ընկան: Բիլբոյի դռան մոտ ծերունկն սկսեց բեռնաթափել զանազան ու անհավանական հրթիռների մեծ-մեծ կապոցներ, որոնց վրա «Գ» կարմիր նշան էր արված և նույնն էլ արված էր էլֆերեն:

Դա իհարկե, Գանդալֆի նշանն էր, իսկ սայլում նստած ծերունին հենց հրաշագործ Գանդալֆն էր, որը Հոբիթստանում հայտնի էր գույնզգույն կրակներ պատրաստելու և ուրախ ծխաքուլաներ բաց թողնելու վարպետությամբ: Առավել վտանգավոր ու դժվար էին նրա իսկական գործերը, բայց հոբիթներն այդ մասին ոչինչ չգիտեին: Հրաշագործը նրանց համար սոսկ Հյուրասիրության հրաշալի հավելում էր: Դրա համար էլ հոբիթների երեխաները վազում էին նրա հետևից ու գոռում. «Գանդա՛լֆն է գալիս, որոտն է որոտում», իսկ ծերունին ժպտում էր: Նրան դեմքով գիտեին, թեպետ Հոբիթստան այցելում էր ոչ հաճախ ու փութանցիկորեն, իսկ նրա շառաչուն հրավառություններն այժմ չէին հիշում նույնիսկ ամենազառամյալ ծերունիները. շատ վաղուց նա այստեղ այդպիսի բաներ չէր սարքել:

Երբ ծերունին Բիլբոյի ու թզուկների օգնությամբ սայլը բեռնաթափեց, Բիլբոն փոքրիկ անբաններին մանրադրամ բաժանեց, բայց ոչ շխկշխկաններ, ոչ էլ զավեշտախաղեր նրանց բաժին չընկավ:

— Վազեք տուն, — ասաց Գանդալֆը: — Ժամանակին բոլորիդ էլ ամեն ինչ կհասնի, — և Բիլբոյի հետևից մտավ ներս ու դուռը կողպեց: Փոքրիկները մի քիչ էլ սպասեցին ու ցրվեցին: «Բայց իսկապես, ե՞րբ է լինելու այդ տոնակատարությունը, հը՞», — մտածում էին նրանք:

Իսկ Բիլբոն ու Գանդալֆը նստել էին բաց պատուհանի մոտ, նայում էին արևմուտք, ծաղկած պարտեզին: Օրը դեպի իրիկնամուտ էր թեքվում, մաքուր ու վառ լույս էր: Բոսորագույն առյուծաբերանները, ոսկեգույն արևածաղիկներն ու հուրհրան ջրկոտեմները հպվում էին կլոր պատուհաններին:

— Լավ պարտեզ ունես, — ասաց Գանդալֆը:

— Այո, — համաձայնեց Բիլբոն: — Հրաշալի պարտեզ է ու հիանալի վայր է Հոբիթստանը, միայն թե ես եմ արդեն հոգնել, հանգստի գնալու ժամանակն է:

— Ուրեմն, ինչպես ասացիր, այդպես էլ կանե՞ս. . .

— Իհարկե: Ես իմ խոսքից երբեք հետ չեմ կանգնում:

— Դեհ, ուրեմն այլևս խոսելիք չունենք: Դե որ որոշել ես, որոշել ես՝ ամեն ինչ արա, ինչպես որ նախապես մտածել ես, քեզ համար գոնե լավ կլինի, իսկ գուցեև ո՛չ միայն քեզ համար:

— Լավ կլիներ: Իսկ հինգշաբթի ես դեռ մի լավ կծիծաղեմ, մտքիս մի բան եմ դրել. . .

— Տե՛ս, հա՛, որ հանկարծ քեզ վրա չծիծաղեն, — գլուխն օրորեց Գանդալֆը:

— Հետո կերևա, — ասաց Բիլբոն:

Սայլերն իրար հետևից գալիս էին Բլուր: Ոմանք փնթփնթում էին, թե՝ «միայն օտարներն են ձեռքները տաքացնում, իսկ տեղական արհեստավորներն անգործ նստած են», բայց շուտով Պարկուտից զանազան կերակուրների, ըմպելիքների ու շքեղությունների և ամեն տեսակ

բաների (ինչի առևտուր որ կատարվում է Նորգորդում և առհասարակ Հոբիթստանում) պատվերներ սկսեցին տեղալ: Ժողովուրդը անհանգստանում էր. մինչև տոնը հաշված օրեր էին մնացել, իսկ ո՞ւր է հրավիրատոմսեր բաժանող փոստատարը. . .

Հրավերներն էլ չուշացան, քանի որ փոստատարները չէին բավականացնում, ստիպված եղան կամավորներ հավաքել: Բիլբոն հարյուրավոր քաղաքավարի ու ճոռոմ պատասխաններ էր ստանում. «Շնորհակալություն, — զանազան ձևերով հայտնում էին նրանք, — շնորհակալություն, անպայման կգանք»:

Պարկուտի դարպասը զարդարում էր հետևյալ ցուցանակը. «Մտնել միայն Հյուրասիրության գործերով»: Բայց նույնիսկ Հյուրասիրության հետ կապված գործ հնարելու դեպքում էլ մտնել համարյա հնարավոր չէր: Մինչև կոկորդն զբաղված Բիլբոն հրավերներ էր գրում, պատասխանները կպցնում, նվերները փաթեթում և իր որոշ՝ Հյուրասիրության հետ բոլորովին առնչություն չունեցող, գործերն էր դասավորում: Գանդալֆի ժամանելուց հետո նա այլևս ոչ մեկի աչքին չէր երևում:

Մի առավոտ հոբիթները տեսան, որ Պարկուտի գլխավոր մուտքից հարավ գտնվող լայնարձակ մարգագետնում վրաններ են խփում ու տաղավարներ դնում: Ճանապարհի կողմից թփուտները կտրել, անցում էին բացել և մի մեծ սպիտակ դարպաս էր կանգնեցրել:

Վրանները աճում էին ոչ թե օրեցօր, այլ ժամ առ ժամ: Դրանցից ամենամեծն այնքան մեծ էր, որ այնտեղ տեղավորվեց սեղանի գլխամասում գտնվող հսկայական ծառը: Ծառի ճյուղերին լապտերիկներ կախեցին: Իսկ ամենահետաքրքիրը հոբիթների համար՝ բաց երկնքի տակ, մարգագետնում տեղավորված հսկայական խոհանոցն էր: Սեղանի պատրաստությունը տեսնում էին բոլոր պանդոկներում ու խորտկարաններում, մի քանի մղոն շառավղով, իսկ այստեղ՝ Պարկուտի մոտ, ձեռք ու ոտք էին ընկել թզուկներն ու նոր ժամանած օտարերկրացիները: Հոբիթներն Է՛լ ավելի խիստ հուզվեցին:

Իսկ երկինքն այդ օրերին թխպեց: Չորեքշաբթի, Հյուրասիրության նախօրեին եղանակը փչացավ: Բոլորը անխտիր տագնապեցին: Բայց ահա եկավ հինգշաբթին, սեպտեմբերի քսաներկուսը: Արևը փայլեց, ամպերը ցրվեցին, դրոշները ծածանվեցին, և քեֆ-ուրախությունն սկսվեց:

Բիլբո Պարկինսն ընդամենը Հյուրասիրություն էր խոստացել, իսկ իրականում մեծ տոնախմբություն էր կազմակերպել: Մոտիկ հարևանները հրավիրված էին մեծից մինչև փոքր: Իսկ եթե որևէ մեկին էլ մոռացել էին հրավիրել, ապա միևնույն է, եկել էին, այնպես որ դա կարևոր չէր: Շատերը կանչված էին Հոբիթստանի հեռավոր անկյուններից, իսկ մի քանիսը՝ նույնիսկ արտասահմանից: Բիլբոն հրավիրված ու չհրավիրված հյուրերին դիմավորում էր Սպիտակ դարպասի մոտ: Նա նվերներ էր բաժանում բոլորին ու ամենքին, իսկ ով մեկ հատ էլ ավել էր ուզում ստանալ, ետնամուտքով դուրս էր գալիս ու նորից մոտենում դարպասին: Հոբիթները միշտ էլ իրենց ծննդյան օրը նվերներ են տալիս ուրիշներին, սովորաբար ոչ թանկագին նվերներ և ոչ բոլորին, ինչպես այդ օրը, և դա լավ սովորություն է: Նորգորդում և Գետամերձում ամեն օր մեկնումեկի ծննդյան օրն է, դա նշանակում է այդ կողմերում ամեն հոբիթ կարող է շաբաթական գոնե մեկ նվերի հույս ունենալ: Նրանք դրանից չեն ձանձրանում:

Իսկ այս անգամ նվերներն էլ ուղղակի զարմանալի էին: Ավելի երիտասարդ հոբիթներն այնպես էին զարմացել, որ քիչ էր մնում հյուրասիրությունը մոռանային: Նրանց զարմանահրաշ խաղալիքներ էր բաժին ընկել. ոմանց հրաշալի, իսկ ոմանց՝ կարելի է ասել, նույնիսկ կախարդական: Խաղալիքների մի մասը վաղօրոք էին պատվիրված եղել, մեկ տարի առաջ, և բերված էին Սևագետքից կամ Սարամիջի թագավորությունից. դա թզուկների ջանքերի արդյունքն էր:

Երբ բոլորին դիմավորեցին, ողջունեցին ու դարպասից ներս անցկացրին, երգ պար, երաժշտություն, խաղեր սկսվեցին՝ իսկ կերուխումին չափ ու սահման չկար: Հյուրասիտությունը եռակի էր. նախաճաշ, թեյ, ճաշ (կամ համարյա թե՝ ընթրիք): Նախաճաշի և թեյի համար ժողովուրդը մտնում էր վրանները, իսկ մնացած ամբողջ ժամանակ ուտում ու խմում էին ով ինչ և որտեղ ուզում էր, տասնմեկից մինչև յոթի կեսը, մինչև հրավառության սկսվելը:

Հրավառության կառավարը Գանդալֆն էր. նա ոչ միայն բերել էր հրթիռները, այլև անձամբ ինքն իր ձեռքով էր սարքել, որպեսզի երկինքը զարդարի կրակե պատկերներով: Հենց ինքն էլ շատ շրխկաններ, բենգալյան կրակներ, ոսկեցրոնք, ջահ-կայծանետեր, գաճաճ մոմեր, էլֆական կայծակներ ու գոբլինական շանթահարվածներ էր պատրաստել: Նա դրանք շատ լավ էր սարքում, տարեցտարի ավելի լավ:

Հրավառ թռչունները սավառնում էին երկնքում, թնդացնելով երկնային բարձունքներն իրենց զիլ երգով: Ծխի մուգ բների վրա գարնանային վառ կանաչ տերևներ էին բռնկվում, փայլփլուն ճյուղերից հոբիթների գլխին կրակե ծաղիկներ էին սփռվում ու հանգչում ուղիղ նրանց քթի մոտ՝ օդում նուրբ բույր տարածելով: Պսպղուն թիթեռնիկների պարսերը ճախրում էին ծառերի վրա, երկինք էին խոյանում գունավոր կրակները և դառնում արծիվներ, առագաստներ, կարապների երամներ: Բոսոր ամպերը հողին փայլուն հորդ անձրև էին թափում: Հետո հնչեց մարտական կոչը, ու արծաթե նիզակների խուրձը սլացավ դեպի երկինք և օձի ֆշշոցով թափվեց գետը: Բիլբոյի պատվին տրվելիք իր ամենաշքեղ համարը Գանդալֆը պահել էր վերջում, երևի որոշել էր հոբիթներին մահացու զարմացնել, և նա հասավ իր նպատակին: Բոլոր կրակները հանգան, երկնքում ծխի մի վիթխարի սյուն հայտնվեց: Սա քուլա-քուլա դառավ հեռավոր սար, որի գագաթը հուրհրաց ու բոցավառվեց վառ կանաչ կրակով: Բոցից ոսկեկարմիր վիշապ դուրս թռավ, սարսափելիորեն իսկական, միայն թե մի քիչ փոքր. աչքերը կատաղությամբ վառվում էին, երախից կրակ էր ժայթքում, կատաղի մռնչոցով նա երեք ֆշշացող շրջան գծեց՝ իջնելով դեպի ժողովուրդը: Բոլորը կռացան, շատերը բերանքսիվայր պառկեցին: Վիշապը անցավ հոբիթների գլխավերևով, օդում գլուխկոնծի տվեց և խլացուցիչ թնդյունով պայթեց Գետամերձի վրա:

— Համեցե՛ք սեղանի մոտ, — լսվեց Բիլբոյի ձայնը:

Համընդհանուր սարսափն ու շփոթությունը ասես օդ ցնդեց. հոբիթները մեկը մյուսի հետևից ոտքի էին թռչում: Հրաշալի խնջույք էր լինելու. ազգականների համար հատուկ սեղաններ էին բացված ծառի մոտի մեծ վրանում: Այնտեղ հարյուր քառասունչորս հրավիրյալ էր հավաքված (այդ թիվը հոբիթների մոտ կոչվում է «գուրտ», բայց ժողովրդին գուրտերով հաշվելը ընդունված չէ)՝ ընտանիքներ, որոնց հետ Բիլբոն և Ֆրոդոն թեկուզ որևէ հեռավոր ազգակցական կապ ունեին, և մի քանի ընտանիքի բարեկամներ, ինչպես Գանդալֆը:

Շատ-շատ էին այնտեղ Պարկինսներն ու Բոքոնակները, Ճագարակներն ու Բրենդիզայքները, չէին մոռացված Գեղանիցները (Բիլբոյի տատիկի ազգականները), Ուտոնցներն ու Խմոնցները (պապիկի ազգականները), ներկայացված էին Խորափորները, Կուղբոնցները, Ցմփորիկները, Փորսուղները, Տոհմակները, Զուռնաչները և Մազթափները: Ոմանք չգիտես ինչ ազգական էին գալիս Բիլբոյին, նրանց մի մասը Նորգորդում բնավ չէր եղել: Ներկա էր նաև Օթհո Քսակ-Պարկինսը, կնոջ՝ Սերինիայի հետ: Նրանք Բիլբոյին տանել չէին կարողանում և արհամարհում էին Ֆրոդոյին, բայց հրավերը ոսկե թանաքով գրված էր մարմարե թղթի վրա, և նրանք գայթակղությանը չդիմացան: Բացի այդ, նրանց զարմիկ Բիլբոն վաղուց ի վեր մեծ համբավ էր վայելում իր խոհանոցի շնորհիվ:

Հարյուր քառասունչորս ընտրյալները հույս ունեին փառավոր հյուրասիրվել, միայն տանտիրոջ հետճաշյա ճառից էին վախենում (իսկ առանց դրա չի կարելի): Մեկ էլ տեսար «բանաստեղծության» անվան տակ մի անհեթեթություն դուրս կտա կամ մեկ-երկու բաժակ գցելուց հետո կսկսի իր հիմար ու անհասկանալի ճանապարհորդության պատմությունն անել: Ինչ-որ չկարողացան ուտել, վերցրին հետները: Հետո մի քանի շաբաթ շրջակայքում համարյա ոչ ոք ուտելիք չէր գնում, բայց վաճառականները դրանից չտուժեցին. միևնույնն է, Բիլբոն նրանց մառանները, պահուստներն ու պահեստները մաքուր դատարկել էր, վճարելով, իհարկե:

Վերջապես, ծնոտներն սկսեցին ավելի դանդաղ շարժվել և եկավ ճառելու ժամը: Հյուրերը, ինչպես հոբիթներն են ասում «կշտանալու վրա էին» և լավ տրամադրության մեջ էին: Բաժակներում սիրած խմիչք էր, ափսեներում՝ սիրած խորտիկները: Դե ուրեմն՝ ինչ ուզում է, թող խոսի, կլսենք և ծափ կտանք:

— Իմ սիրալիր ազգակիցնե՛ր, — վեր կենալով սկսեց Բիլբոն:

— Լռությո՛ւն, լռությո՛ւն, լռությո՛ւն, — բղավեցին հյուրերը. լռության խմբովին կոչը ավելի ու ավելի բարձր էր հնչում և ոչ մի կերպ չէր կարողանում հանդարտվել:

Բիլբոն վեր կացավ, մոտեցավ լապտերներով զարդարված ծառին և բարձրացավ աթոռի վրա: Գույնզգույն շողերը ցոլցլացին նրա հանդիսավոր դեմքին. մետաքսե անթև բաճկոնի վրա փայլփլում էին ոսկե կոճակները: Նա բոլորին երևում էր իր ողջ հասակով, մի ձեռքը գրպանից չէր հանում, իսկ մյուսը թափահարում էր գլխավերևում:

— Իմ սիրելի Պարկինսնե՛ր և Բոքոնակնե՛ր, — նորից սկսեց նա, — սիրելիներդ իմ Ճագարակնե՛ր և Բրենդիզայքնե՛ր, Գեղացինե՛ր, Ուտոնցնե՛ր ու Խմոնցնե՛ր, Խորափորնե՛ր, Զուռնաչնե՛ր, ինչպես նաև Կուղբոնցնե՛ր, Ցմփորիկնե՛ր, Տոհմակնե՛ր, Փորսուղնե՛ր և Մազաթափնե՛ր. . .

— Եվ Մազաթաթնե՛ր, — անկյունից գոռաց մի տարիքավոր հոբիթ: Նա, իհարկե, Մազթաթ էր, սեղանին դրած նրա խոշոր թաթերը մազոտ էին:

— Մազթաթնե՛ր, — համաձայնեց Բիլբոն: — Սիրելի Քսակ-Պարկինսներ, ես ուրախ եմ ձեզ ողջունելու Զառիթափի Պարկուտում: Այժմ լրացել է իմ հարյուր տասնմեկ տարին՝ կարելի է ասել երեք հատ մեկ. . .

— Ուռռա՛, ուռռա՛, ուռռա՛, երկար կյանք ունենաս, — գոռացին հյուրերն ու ուրախ թեմբկահարեցին սեղաններին:

— Հուսով եմ, որ բոլորդ էլ նույնքան ուրախ եք, որքան ես:

Խլացուցիչ ծափահարություններ, ճիչեր. «Բա ո՞նց, բա ո՞նց»: Շեփորներ ու փողեր, սրինգներ ու ֆլեյտաներ, զրնգոց ու թնդյուն:

Երիտասարդ հոբիթները հարյուրավոր երաժշտական չրխկաններ բացեցին՝ ՉՐՆՐՉ տարօրինակ դաջվածքով, նրանք չէին հասկանում, թե այդ դաջվածքն ինչի համար է, բայց չրխկանները հիանալի էին: Դրանց մեջ դրված էին փոքրիկ հնչեղ գործիքներ: Վրանի անկյունում պատանի Ճագարակներն ու Բրենիզայքները որոշելով, որ քեռի Բիլբոն արդեն վերջացրել է խոսելը (կարծես թե ամեն ինչ ասաց), նվագախումբ կազմեցին ու սկսեցին պարել: Պատանի Շատուրախ Ճագարակն ու դեռատի Չաչանակ Բրենդիզայքը բարձրացան սեղանին ու սկսեցին զանգակները ձեռքներին «Ճմփիկ-դմփիկ» պարել՝ շատ դուրեկան, բայց մի քիչ բուռն պար:

Սակայն Բիլբոն ուշադրություն պահանջեց: Նա մի փոքրիկ հոբիթի ձեռքից փողը խլեց ու երեգ անգամ փչեց: Աղմուկը դադարեց:

— Ես ձեզ երկար չե՛մ զբաղեցնի, — գոռաց Բիլբոն:

Ամեն կողմից ծափահարեցին:

— Ես ձեզ հավաքել եմ այժմ մի հատուկ նպատակով: — Սա այնպես էր ասված, որ բոլորը զգուշացան: — Ավելի ճիշտ՝ ոչ թե մեկ, այլ երեք հատուկ նպատակով (համարյա լռություն տիրեց և Ճագարակներից ոմանք նույնիսկ պատաստվեցին լսելու): Նախ՝ ձեզ ասեմ, որ ես երջանիկ եմ բոլորիդ տեսնելու համար և որ այդպիսի հրաշալի հոբիթների հետ, ինչպիսին դուք եք, հարյուր տասնմեկ տարի ապրելուց հեշտ բան չկա. . .

Հավանության ուրախ գվվոց:

— Ձեր բարի կեսին ես երկու անգամ ավելի վատ գիտեմ, քան հարկն է, իսկ վատ կեսին սիրում եմ երկու անգամ ավելի պակաս, քան պետք է:

Ուժեղ էր ասված, բայց ոչ լրիվ հասկանալի: Հատուկենտ ծափեր հնչեցին, և բոլորը մտքերի մեջ ընկան. արդյոք հաճելի՞ է դա լսելը:

— Երկրորդը, որ դուք ուրախանաք իմ ծննդյան օրը:

Նախկին խրախուսիչ գվվոցը:

— Ոչ թե իմ, այլ՝ մեր: Քանի որ այդ օրը, ինչպես գիտեք, ոչ միայն ես եմ ծնվել, այլև իմ հորեղբոր ծոռը, իմ ժառանգ Ֆրոդոն: Այժմ նա չափահաս է դառնում և անցնում է իմ կյանքի տնօրինությանը: Ավագներից ինչ-որ մեկը մեծահոգաբար ծափահարեց: «Ֆրոդո՛, Ֆրոդո՛. . . ծերուկ Ֆրո՛դո. . . » գոչգոչում էին երիտասարդները: Քսակ-Պարկինսները մռայլվեցին ու սկսեցին մտմտալ, թե այդ ինչպե՞ս է Ֆրոդոն «անցնում կյանքի տնօրինությանը»:

— Լրանում է երկուսիս հարյուր քառասունչորս տարին, ճիշտ այնքան, ինչ քանակությամբ որ դուք եք այստեղ հավաքվել, կներեք արտահայտության համար՝ մեկ գուրտ: Հյուրերը լուռ էին: Այս ինչ նորություններ են: Շատերը, հատկապես Քսակ-արկինսները վիրավորվեցին, ենթադրելով, որ իրենց հրավիրել են այստեղ միայն կլոր թիվ լրացնելու համար: «Համա՛ թե բան ասաց, մեկ գուրտ: Թուհ, ի՜նչ էլ գռեհիկ է»:

— Բացի այդ, այսօր տարելիցն է այն օրվա, երբ ես տակառին հեծած հասա Երկար լճի Էսգարոթ քաղաքը: Չնայած այն ժամանակ ծննդյանս օրվա մասին բավական ուշ եմ հիշել: Ընդամենը հիսունմեկ տարեկան էի, իսկ երիտասարդ տարիքում մեկ-երկու տարին ի՞նչ որ: Ճիշտ է, չտեսնված քեֆ սարքեցինք, միայն թե, հիշում եմ, խիստ մրսած էի ու հազիվհազ կմկմում էի. «Չազանց երախտ եմ»: Այժմ առիթից օգտվելով ասում եմ ինչպես հարկն է. չափազանց երախտապարտ եմ բոլորիդ այն բանի համար, շնորհ եք արել իմ համեստ տոնախմբությանը. . .

Համառ լռություն: Բոլորը վախենում էին, որ հիմա ն մի երգ կամ բանաստեղծություն կսկսի, ու նախապես ձանձրանում էին. ի՞նչ կլիներ, որ դրանով էլ վերջացներ, իրենք էլ կխմեին նրա ողջության կենացը: Բայց Բիլբոն ոչ երգեց, ոչ էլ բանաստեղծություն արտասանեց: Նա դանդաղ շունչ քաշեց:

— Երրորդը և վերջինը, — ասաց նա, — ես ուզում մեկ Հայտարարություն անել: — Այդ բառը հանկարծ նա այնքան բարձր արտասանեց, որ բոլորը, ով դեռ չ վիճակի էր այդ անել, ուղղվեցին: — Վշտագին հայտարարում եմ ձեզ, որ թեպետ, ինչպես արդեն ասացի, հարյուր տասնմեկ տարի ձեր մեջ ապրելը շատ հեշտ է, սակայն ժամանակն է նաև պատվի մասին մտածելու: Ես վերանում եմ: Այս էր, որ ինձ տեսաք: Մնաք բարով. . . Նա աթոռից իջավ ու անհետացավ: Կուրացուցիչ բոց բռնկվեց, ու բոլոր հյուրերը աչքները փակեցին: Աչքները բացելով, նրանք տեսան, որ Բիլբոն ոչ մի տեղ չկա: Հարյուր քառասունչորս շշկռված հոբիթներն այդպես էլ քարացան: Ծերունի Օթհո Մազթաթը ոտքերը սեղանից իջեցրեց ցած ու սկսեց դոփել: Հետո մեռյալ լռություն տիրեց, հյուրերն ուշքի էին գալիս: Եվ հանկարծ Պարկինսները, Բոքոնակները, Ճագարակները, Բրենդիզայքները, Գեղանիցները, Ուտոնցներն ու Խմոնցները, Խորափորները, Կուղբոնցները, Ցմփորիկները, Փորսուղները, Տոհմակները, Զուռնաչները, Մազթափներն ու Մազթաթները՝ բոլորը միաժամանակ սկսեցին խոսել:

Նրանք համաձայնում էին մեկը մյուսի հետ, որ դա անվայել արարք էր ու անհարգալիր, որ հարկավոր է շտապ ուտելով ու խմելով դա մոռացության տալ: «Ես միշտ էլ ասում էի, որ նա ծալապակաս է», — լսվում էր ամեն կողմից: Նույնիսկ չարաճճի Ճագարակները, չնչին բացառությամբ հավանություն չէին տալիս Բիլբոյին: Համարյա ոչ ոք չասկացավ, թե ինչ տեղի ունեցավ. փնովում էին հիմար արարքը: Միայն ծեր ու իմաստուն Դուրրի Բրենդիզայքը խորամանկորեն աչքը ճտեց: Ոչ զառամյալ հասակը, ոչ ուտեստների լիառատությունը նրա դատողությունը չէին կարողացել մթագնել, և նա իր հարս Զամիրալդային ասաց.

— Ոչ, սիրելիս, այդ բոլորը հենց այնպես չէ: Պարկինսը, ախր, համբակ է, երևի նորից փախավ: Ծեր հիմարը չի հանդարտվում: Ի՜նչ արած: Սեղանին ուտելիք հո՛ մնացել է:

Եվ նա ձայնեց Ֆրոդոյին, որ էլի գինի բերի:

Իսկ Ֆրոդոն միակն էր, որ ոչ մի բառ չէր արտասանել: Լուռ նստել էր Բիլբոյի դատարկ աթոռի մոտ, բացականչություններին ու հարցերին ոչ մի ուշադրություն չդարձնելով: Նա, իհարկե, գնահատեց արվածը, թեպետ այդ մասին նախապես գիտեր, ու հազիվ էր ծիծաղը պահում հյուրերի համերաշխ վրդովմունքի վրա: Բայց ինչ-որ շատ ծանր էր իր համար: Նա հանկարծ հասկացավ, որ ծեր հոբիթին բավական լրջորեն է սիրում: Հյուրերն ուտում-խմում էին, քննարկում ու դատապարտում էին Բիլբո Պարկինսի հին ու նոր հիմարությունները: Զայրացան ու մեկնեցին միայն Քսակ-Պարկինսները: Վերջապես, Ֆրոդոն կարգադրություններ անելուց հոգնեց. նա ձայն տվեց, որ էլի գինի մատուցեն, լուռ վեր կացավ, գավաթը դատարկեց Բիլբոյի ողջության կենացը և սուսուփուս վրանից դուրս ելավ:

Բիլբո Պարկինսը ճառելիս գրպանում շոշափում էր ոսկե Մատանին, այն նույն Մատանին, որ այսքան տարի գաղտնի էր պահում: Աթոռից իջնելով, նա Մատանին հագավ, և այդ ժամանակվանից Հոբիթստանում նրան ոչ մի հոբիթ այլևս չի տեսել:

Ժպիտով ականջ դնելով, թե ինչպես էն խժդժում ապշահար հոբիթները վրանում և ինչպես են լիասիրտ քեֆ անում հատուկ հրավերով չեկած հոբիթները, Բիլբոն գնաց տուն, հանեց տոնական հագուստը, ծալեց մետաքսե անթև բաճկոնը, խնամքով փաթաթեց թղթի մեջ և պահեց դարակում: Հետո արագորեն վրան գցեց ինչ-որ քրջեր ու կապեց հին կաշվե գոտին: Գոտուց մի կարճ, հնամաշ պատյանով թուր էր կախված: Բիլբոն հառաչեց և նավթալինով հագեցած պահարանից հանեց կնգուղավոր թիկնոցը: Թիկնոցը պահված էր որպես թանկարժեք մի բան, չնայած պատված էր լաքաներով ու խունացած էր, իսկ ինչ-որ ժամանակ երևի մուգ կանաչ էր եղել: Հագուստը հոբիթի վրայով մեծ էր: Նա մտավ իր աշխատասենյակը և գաղտնի դարակից շորի մեջ փաթաթված խորհրդավոր կապոց հանեց. ձեռագիրը մեջը կաշվե թղթապանակ և ինչ-որ հաստ ծրար: Ձեռագիրն ու կապոցը խոթեց մի մեծ ու բերնեբերան լցված ուսապարկը: Բայց հետո շտապով վերցրեց և դրեց գրպանը: Այստեղ դուռը բացվեց ու արագաքայլ ներս մտավ Գանդալֆը:

— Ողջույն, — ասաց Բիլբոն: — Ես էլ հենց մտածում էի, թե ինչու չես երևում:

— Ուրախ եմ, որ հիմա տեսանելի ես, — պատասխանեց հրաշագործը բազկաթոռին նստելով, — որովհետև ուզում եմ մի երկու խոսք փոխանակել քեզ հետ: Դե ինչ, քո կարծիքով, ամեն ինչ լա՞վ ստացվեց:

— Իհարկե՛, — հաստատեց Բիլբոն: — Միայն բոցի բռնկումն էր ավելորդ, նույնիսկ ես զարմացա, ո՞ւր մնաց մյուսները: Պարզ է, որ քո գործերն են:

— Իհարկե, իմ: Իզուր չէ, որ երկար տարիներ Մատանին թաքցրել էիր, դե թող հիմա քո հյուրերը որոշեն. դու անհայտացա՞ր, թե կատակ արեցիր:

— Իսկ կատակս փչացրիր, — ասաց Բիլբոն:

— Դե ոչ թե կատակը, այլ հիմար խաղը. . . միայն թե խոսելն արդեն ուշ է: Անհանգստացրիր հարազատներիդ և ինն օր կամ իննսունինն օր քո մասին կխոսի ողջ Հոբիթստանը:

— Թող բարբաջեն: Ինձ հանգիստ է պետք, երկարատև հանգիստ, ես քեզ ասել եմ, չէ՞, անժամկետ հանգիստ. հազիվ թե երբևէ վերադառնամ այստեղ: Դե, կարիք էլ չկա, ամեն ինչ տեղը տեղին դասավորված է. . . Ծերացել եմ ես, Գանդալֆ, ոսկորներս նվվում են: Բա՜ն են գտել ասելու. «Լավ է պահպանվել». . . : — Նա ֆռթացրեց: — Հասկանո՞ւմ ես, բարակ-բարակել եմ, ոնց որ քցիպի հացի վրայի կարագը: Դա զզվելի է, հարկավոր ինչ-որ ձևով փոփոխել կյանքը:

Գանդալֆը նրանից չէր հեռացնում սևեռուն, մտահոգ հայացքը:

— Ճիշտ է, իսկապես զզվելի է, — մտախոհ ասաց նա: — Դու ամեն ինչ ճիշտ ես մտածել:

— Արդեն էլ ինչ կա, գործը վճռված է: Ես ուզում եմ նորից տեսնել լեռները: Հասկանո՞ւմ ես, Գանդալֆ, լեռները: Ուզում եմ մի տեղ գտնել, որտեղ իսկապես կարելի է հանգիստ առնել: Խաղաղ ու հանգիստ, առանց պնդերես ազգականների, առանց հյուրերի, որպեսզի զանգը տվող չլինի: Չէ որ գիրքս էլ պետք է ավարտեմ: Գրքիս համար հրաշալի վերջ եմ մտածել. «. . . Եվ ապրեց երջանիկ մինչև իր օրերի վերջը»:

Գանդալֆը ծիծաղեց.

— Վերջը վատ չի: Մենակ թե կարդացող չկա, ինչպես ուզում ես վերջացրու:

— Ում պետք է, կկարդա: Հրեն, Ֆրոդոն արդեն կարդացել է, չնայած վերջը չկար: Ի դեպ, դու աչքդ Ֆրոդոյի վրա կպահե՞ս:

— Երկու աչքս, չնայած հիմա դրա ժամանակը չունեմ:

— Նա, իհարկե, հենց իմ առաջին կանչով կգար ինձ հետ: Նույնիսկ խնդրում էր՝ հյուրասիրությունից քիչ առաջ: Բայց առայժմ այդ բոլորը նրա մոտ խոսքեր են: Ա՛յ ինձ հարկավոր է մեռնելուց առաջ թավուտներն ու լեռները տեսնել, իսկ Ֆրոդոյի սիրտն այստեղ է, Հոբիթստանում, որտեղ կան մարգագետիններ, անտառակներ՝ տաքուկ, հարմարավետ: Հասկանալի է, ես ամեն ինչ թողել եմ նրան, բացի մի քանի չնչին բաներից, հուսով եմ, երբ լրիվ վարժվի, երջանիկ կլինի: Ժամանակն է, որ ինքը տերուտնօրեն դառնա:

— Ամեն ինչ թողե՞լ ես, — հարցրեց Գանդալֆը, — Մատանի՞ն էլ: Դու այդպես էիր որոշել, հիշո՞ւմ ես. . .

— Ի-հիարկե ամեն ինչ. . . իսկ Մատանին. . . — Բիլբոն հանկարծ պապանձվեց:

— Որտե՞ղ է. . .

— Ծրարի մեջ, եթե ուզում ես իմանալ, — զայրացավ Բիլբոն: — Այնտեղ, բուխարիկի վրա: Ոչ, այնտեղ չէ. . . գրպանումս է: — Նա շփոթվեց: — Տարօրինակ է, — քրթմնջաց նա: — Չնայած ի՞նչ տարօրինակ բան կա այստեղ: Ուզենամ՝ կթողնեմ, չեմ ուզի՝ չեմ թողնի:

Գանդալֆը նայեց Բիլբոյին, և նրա աչքերը մի թեթև փայլեցին:

— Իմ կարծիքով, Բիլբո, հարկավոր է թողնել, — ասաց նա: — իսկ դու, ի՞նչ է, չե՞ս ուզում:

— Ինքս էլ չգիտեմ: Հիմա ինչ-որ չեմ ուզում բաժանվել դրանից: Եվ հետո՝ ինչո՞ւ: Իսկ դու ի՞նչ ես կպել ինձանից, — հարցրեց նա բեկբեկուն համարյա ծղրտալից ձայնով, գրգռված ու կասկածամտորեն: — Իմ Մատանին անհանգստացնում է քեզ, ասենք թե շատ բան եմ ձեռք բերել, քո ի՞նչ գործն է. . . .

— Այո, իսկապես հանգիստ չի տալիս, — հաստատեց Գանդալֆը: — Վաղուց էի ուզում քեզանից իմանալ ճշմարտությունը, շա՛տ վաղուց: Կախարդական Մատանիները, գիտե՞ս արդյոք, կարխարդական են ամեն տեսակ նենգություններով ու անակնկալներով: Իսկ քո Մատանին ինձ հատկապե՛ս էր հետաքրքրում, չեմ թաքցնի: Եթե դու արդեն գնում ես ճանապարհորդելու, ապա ես ամեն կերպ պետք է աչքիցս չկորցնեմ այն: Չափազանց երկար չտիրեցի՞ր դրան: Հավատա ինձ, Բիլբո, Մատանին քեզ պետք չի գա:

Բիլբոն կարմրեց ու Գանդալֆի վրա մի կատաղի հայացք նետեց: Նրա բարեհոգի դեմքը հանկարծ դաժանացավ:

— Որտեղի՞ց գիտես, — գոռաց նա: — Քո ի՞նչ գործն է: Ի՛մն է, ի՛մն էլ կա: Իմը, հասկանալի՞ է: Ես եմ գտել, ինքն է իմ ձեռքը եկել:

— Իհարկե, իհարկե, — ասաց Գանդալֆը: — Միայն թե ի՞նչ կարիք կա այդպես հուզվելու:

— Քեզ հետ մարդ իրենից դուրս կգա, — պատասխանեց Բիլբոն: — Քեզ ասում եմ՝ իմն է: Իմը . . ի՛մ սքանչելին. . Այո, հենց այդպես, ի՛մ սքանչելին. . .

Գանդալֆը նայում էր հանգիստ ու սևեռուն, միայն թե նրա աչքերում տագնապալի զարմանք վառվեց:

— Գիտենք, — նկատեց նա, — Մատանին այդպես անվանել են, բայց ո՛չ դու:

— Այն ժամանակ ես չէի, իսկ հիմա՝ ես եմ ասում: Եվ ի՞նչ: Տեսե՛ք, տեսե՛ք, Գորլումն է ասել: Նրանն է եղել Մատանին, իսկ հիմա իմն է: Ի՛մն է, և ընդմիշտ:

Գանդալֆը վեր կացավ, և նրա ձայնը դաժան դարձավ:

— Զգուշացի՛ր, Բիլբո, — ասաց նա: — Մատանին թող, իսկ ինքդ գնա ուր ուզում ես, և կազատվես:

— Թո՛ւյլ տվեցիր, շնորհակալ եմ: Ինքս եմ իմ գլխի տերը. . . — համառորեն ճչաց Բիլբոն:

— Հանգի՛ստ, հանգի՛ստ, սիրելի հոբիթ, — խոսեց Գանդալֆը: — Քո ողջ կյանքում մենք ընկերներ ենք եղել, համա մի հիշի՛ր: Դե՛, դե՛, արա ինչպես խոստացել ես՝ տուր այստեղ Մատանին:

— Ուրեմն, ի՞նքդ ես ուզում. . . Այդ դեպքում՝ ո՛չ, — գոռաց Բիլբոն: — Չե՛ս ստանա. . . Ես իմ սքանչելիին քեզ չեմ տա, հասկացա՞ր: — Նա բռնեց փոքրիկ թրի կոթը: Գանդալֆի աչքերը փայլատակեցին:

— Չէ՞ որ ես էլ կարող եմ զայրանալ, — զգուշացրեց նա: — Զգո՛ւյշ, թե չէ Գանդալֆ Մոխրագույնին կտեսնես զայրացած. . . — Նա մի քայլ արեց դեպի հոբիթը, ահագնացավ, և նրա ստվերը գրավեց ամբողջ սենյակը: Բիլբոն հետ-հետ գնաց. նա հևում էր և չէր կարողանում ձեռքը գրպանից հանել: Այդպես նրանք կանգնել էին մեկը մյուսի դիմաց, և օդը

ասես զնգում էր: Գանդալֆը հայացքով հոբիթին մեխեց պատին. Բիլբոյի բռունցքները բացվեցին, և նա դողաց.

— Այդ ի՞նչ ես անում, Գանդալֆ, ախր ոնց որ բոլորվին էլ դու չլինես, — ասաց նա: — Ի՞նչ է պատահել: Չէ՞ որ դա իմն է: Չէ՞ որ ես եմ գտել, և եթե դա չլիներ, Գորլումն ինձ կսպաներ: Ես գող չեմ, ես դա չեմ գողացել, հետո ի՞նչ, թե իմ հետևից ինչ է գոռացել:

— Ես քեզ գող չեմ էլ անվանել, — պատասխանեց Գանդալֆը: — Դե ես ինքս էլ թալանչի չեմ՝ քո «սքանչելին» ձեռքիցդ չեմ խլում, այլ օգնում եմ քեզ: Ավելի լավ կլիներ առաջվա պես վստահեիր ինձ: — Նա շրջվեց, ստվերը սեղմվեց, և Գանդալֆը նորից ծեր ու հոգնած, կորամեջք ու մտահոգ դարձավ: Բիլբոն ձեռքի ափով շփեց աչքերը:

— Ների՛ր, խնդրում եմ, — ասաց նա, — վրաս ինչ-որ բան եղավ. . . Իսկապես որ, հիմա կարծես անցավ: Վաղուց ես՝ ես չեմ. ինչ-որ մեկի հայացքն է ինձ փնտրում, թե ինչ. . . Ու անընդհատ էլ, գիտե՞ս, ցանկություն եմ ունենում հագնել, որպեսզի անհետանամ, դրա համար էլ շարունակ շոշափում եմ, հետո ձեռքս հանում: Փորձում եմ փակել դարակում, բայց երբ Մատանին գրպանումս չէ, հանգիստ չունեմ: Ահա հիմա ինքս էլ չգիտեմ, թե ինչ անեմ այն:

— Քո փոխարեն ես գիտեմ, թե ինչ պետք է անել, — հայտարարեց Գանդալֆը: — Առայժմ գիտեմ: Գնա և Մատանին թող այստեղ: Հրաժարվիր դրանից: Տուր Ֆրոդոյին, իսկ մնացածն իմ հոգսն է: Բիլբոն անվճռականությամբ կանգնեց: Հետո հառաչեց:

— Լավ, — ասաց նա, — կտա՛մ:

Ապա ուսերը թոթվեց ու մեղավոր ժպտաց:

— Ճիշտն ասած, դրա համար էլ սարքեցի այս տոնախմբությունը, որ ավելի շատ նվերներ բաժանվեր և միաժամանակ արդեն. . . Թվում էր, այդպես ավելի հեշտ կլինի: Իզուր էր թվում, իսկ հիմա պետք է գործը մինչև վերջ հասցնել:

— Այլապես չարժեր սկսել, — հաստատեց Գանդալֆը:

— Ինչ արած, — ասաց Բիլբոն: — Թող այն մնացած բաների հետ մեկտեղ հասնի Ֆրոդոյին: — Նա խոր հառաչեց: — Ժամանակն է, ես գնամ, թե չէ մեկ էլ տեսար մեկնումեկի աչքովն ընկա: Բոլորին հրաժեշտ եմ տվել. . . — Նա վերցրեց ուսապարկն ու քայլեց դեպի դուռը:

— Մատանին գրպանումդ մնաց, — հիշեցրեց հրաշագործը:

— Մնաց, այո, — դառնությամբ գոռաց Բիլբոն: — Դրա հետ էլ կտակն ու մյուս թղթերը: Վերցրու, ինքդ տնօրինիր: Այդպես ավելի հուսալի կլինի:

— Ոչ, Մատանին ինձ մի տուր, — ասաց Գանդալֆը: — Դիր բուխարիկի վրա: Ֆրոդոն հիմա կերևա: Ես կսպասեմ:

Բիլբոն ծրարը հանեց գրպանից ու քիչ էր մնում դներ ժամացույցի կողքը, բայց ձեռքը դողաց ու ծրարն ընկավ գետնին: Գանդալֆը վայրկյանապես կռացավ, բարձրացրեց ու դրեց տեղը: Հոբիթը նորից կատաղությունից ցնցվեց:

Բայց հանկարծ նրա դեմքը պայծառացավ ու ժպիտով լուսավորվեց:

— Դեհ, ահա և բոլորը, — թեթևացած ասաց նա: — Գնալու ժամանակն է:

Նրանք դուրս եկան միջանցք: Բիլբոն ձեռքը վերցրեց իր սիրելի ձեռնափայտը և սուլեց: Զանազան դռներից երեք թզուկ հայտվեցին:

— Ամեն ինչ պատրա՞ստ է, — հարցերց Բիլբոն: — Փաթաթվա՞ծ, մակագրվա՞ծ է. . .

— Պատրաստ է, — եղավ պատասխանը:

— Դե ուրեմն՝ գնացինք: — Եվ նա քայլեց դեպի դուռը:

Պարզ գիշեր էր, սև երկնքում աստղեր էին փայլում: Բիլբոն նայեց երկնքին ու լիաթոք շունչ քաշեց:

— Մի՞թե, մի՞թե նորից ճանապարհ, ուր աչքդ կտրի, այն էլ թզուկների հետ. . . Օհ, քանի՜ տարի եմ երազել այդ մասին. . . Մնաս բարով. . . — ասաց նա իր տանը, գլուխը խոնարհելով: — Մնաս բարով, Գանդալֆ. . .

— Ոչ թե մնաս բարով, Բիլբո, այլ ցտեսություն. . . Միայն զգույշ եղիր. . Դու փորձված հոբիթ ես ու իմաստուն. . .

— Զգույշ եղիր. . . Էլ ի՞նչ կուզեիր. . . Այդ մեկն արդեն՝ ո՛չ, իմ մասին հիմա մի անհանգստացիր: Ես երջանիկ եմ, ինչպես վաղուց չեմ եղել, հավանաբար ինքդ էլ հասկանում ես, թե դա ինչ է նշանակում: Իմ ժամանակը հասել է, և իմ ճամփան ինձ է սպասում:

Նա հառաչեց, առանց մի խոսք ասելու՝ մեջքով շրջվեց դեպի լույսերն ու գնաց՝ հետևից էլ երեք թզուկը: Սկզբում գնաց մտավ այգի, մտավ բարձր, խիտ խոտերի մեջ, ասես քամին շարժեր դրանք: Գանդալֆը կանգնած նայում էր նրա հետևից, մթության մեջ:

— Ցտեսությո՛ւն, Բիլբո՛, իմ թանկագին հոբի՛թ. . . — ցածրաձայն ասաց նա և վերադարձավ տուն:

Ֆրոդոն իրեն շատ սպասել չտվեց, հայտնվեց ու տեսավ, որ Գանդալֆը մտքերի մեջ խորասուզված նստած է կիսախավար սենյակում:

— Գնա՞ց, — հարցրեց Ֆրոդոն:

— Այո, գնաց, — պատասխանեց Գանդալֆը, — կարողացավ գնալ:

— Իսկ ի՞նչ լավ կլիներ. . . այսինքն, ես այնուամենայնիվ ամբողջ երեկո հույս ունեի, որ դա պարզապես կատակ է, — ասաց Ֆրոդոն: — Թեպետ հոգուս խորքում գիտեի, որ նա իսկապես էլ կգնա: Նա միշտ էլ լուրջ կատակներ է արել: Իսկ հիմա ախր ուշացա ճանապարհ դնելուց:

— Ոչինչ, նա հավանաբար այդպես էլ ուզում էր գնալ՝ սուսուփուս, — ասաց Գանդալֆը: — Մի՛ վշտանա: Հիմա նա իրեն լավ կզգա: Քեզ փաթեթ է թողել: Ա՛յ, այնտեղ է:

Ֆրոդոն վերցրեց ծրարը բուխարիկի վրայից, նայեց, նայեց, բայց չբացեց:

— Այնտեղ պետք է կտակը լինի և այդ կարգի այլ թղթեր, — ասաց հրաշագործը: — Դու այժմ Պարկուտի տերն ես: Հա, այնտեղ է նաև ոսկե Մատանին:

— Ինչպե՞ս, Մատանի՞ն էլ, — բացականչեց Ֆրոդոն: — Նա դա էլ է թողել ինձ: Ինչի՞ համար: Ոչի՛նչ, պետք կգա:

— Գուցե պետք կգա, իսկ գուցե և՝ ոչ, — ասաց Գանդալֆը: — Ես քո փոխարեն Մատանուն առայժմ ձեռք չէի տա: Պահպանիր այն և բացբերանություն մի արա: Իսկ ես գնամ քնեմ:

Նոր օրը հոգսերով լի էր: Հրդեհի արագությամբ լուր տարածվեց, իբրև թե Բիլբոյի ողջ ունեցվածքը վաճառքի է հանվելու կամ, ավելին՝ ձրի է բաժանվելու՝ արի ու վերցրու: Հոբիթները խառնիխուռն ներս էին խուժում, իսկ տնից դուրս էին գալիս առանձին-առանձին: Սայլերն ու սայլակները բակը լցրել էին առմուտքից մինչև դարպաս: Իրարանցման թեժ պահին հայտնվեցին Քսակ-Պարկինսները: Ֆրոդոն հենց այդ ժամանակ գնացել էր մի քիչ հանգստանալու և իր փոխարեն թողել էր բարեկամի՝ Մերի Բրենդիզայքին: Երբ Օթհոն բարձրագոչ պահանջեց Բիլբոյի «այդ զարմիկ կոչեցյալին», Մերին խոնարհվեց և ձեռքերը տարածեց:

— Նա վատառողջ է, — ասաց նա:

— Կարճ ասած, այդ զարմիկը թաքնված է, — ճշտեց Սերինիան: — Դե, իսկ մենք եկել ենք նրան տեսության և անպայման կտեսնենք: Հապա մի գնա ու զեկուցիր նրան:

Մերին գնաց զեկուցելու, և Քսակները երկար տնկվեցին դրսում: Վերջապես նրանց ներս թողեցին աշխատասենյակ: Ֆրոդոն նստած էր թղթերի մեջ կորած աշխատասեղանի առջև: Նրա տեսքը հիվանդի էր, համենայնդեպս ոչ շատ բարեհամբույր՝ նա վեր կացավ, կանգնեց սեղանի մոտ, ձեռքերը գրպանում, բայց խոսում էր շատ հարգալիր:

Իսկ Քսակներն իրենց բավական աներես էին պահում: Սկզբում նրանք սկսեցին զանազան իրերի համար շան մսի գին առաջարկել: Ֆրոդոն պատասխանեց, որ նվերները՝ նվեր, իսկ ինչ վերաբերում է վաճառքին, ապա այստեղ առհասարակ ոչինչ չի վաճառվում: Նրանք շրթունքները ծռմռեցին և ասացին, որ դա նրանց շատ կասկածելի է թվում:

— Մի բան ինձ համար պարզ է, — ավելացրեց Օթհոն, — որ ո՛վ-ո՛վ, բայց դու ձեռքերդ լավ-լա՛վ յուղել ես: Պահանջում եմ անմիջապես ցույց տալ կտակը. . .

Եթե «զարմիկը» չլիներ, կալվածքը Օթհոյին կհասներ: Նա կարդաց կտակը, վերընթերցեց և ֆռթացրեց: Ավաղ, ամեն ինչ այնպես հստակ էր, և ութ վկա շատ խնամքով ստորագրել էին կարմիր թանաքով:

— Մեզ նորից հիմարացրին, — կնոջն ասաց Օթհոն: — Վաթսուն տարի սպասեցինք՝ և նորից . . . Նա քեզ ի՞նչ է նվիրել, արծաթե գդալներ. . . Ա՛յ քեզ սրիկա. . .

Նա չարացած նայեց Ֆրոդոյին ու հեռացավ: Ճիշտ է, Սերինիան մի քիչ էլ մնաց: Շուտով Ֆրոդոն զգուշությամբ գլուխը դուրս հանեց աշխատասենյակից և տեսավ, որ նա մանրակրկիտորեն ստուգում է բոլոր անկյուններն ու թխկթխկացնում պատերն ու հատակը: Ֆրոդոն վճռականորեն դուրս ճանապարհեց նրան: Ըստ երևույթին, Սերինիան պատրաստվում էր հրաժեշտին ինչ-որ սպանիչ բան ասել և, շեմին շրջվելով՝ ֆշշացրեց.

— Դու դեռ դրա համար կզղջաս, կաթնակեր: Դո՞ւ ինչու ես մնացել, այստեղ քո տեղը չէ. քեզնից ի՞նչ Պարկինս. . . Դու. . . դու ամենաիսկական Բրենդիզայք ես. . .

— Լսեցի՞ր, Մերի: Այ թե ինչպես են ինձ անպատվում, — ասաց Ֆրոդոն նրա հետևից դուռը փակելով:

— Ի՞նչ էլ մի անպատվություն է, — արձագանքեց Մերի Բրենդիզայքը: — Քեզ հաճոյախոսություն արեցին, իսկ դու ասում ես՝ անպատվեցին: Դե քեզանից ի՞նչ Բրենդիզայք . . .

Ֆրոդոն ու Մերին զննեցին ամբողջ տունը ու վռնդեցին երեք պատանի հոբիթի (երկու Բոքոնակ ու մեկ Կուղբոնց), որոնք խուզարկում էին նկուղները: Արագաշարժ Կրծունիկ Մազաթաթի հետ իսկական ծեծկռտուք ստացվեց. նա մեծ մառանում թխկթխկացնում էր հատակը, ականջ դնում արձագանքին և առանց դադարի քանդում:

Բիլբոյի գանձերի մասին պատմությունները ագահ հետաքրքրասիրություն ու սին հույսեր էին արթնացնում, մանավանդ որ հայտնի է, թե մութ ճանապարհներով, երբեմն էլ չարագործությամբ ձեռք բերված ոսկի արժե հափշտակել, միայն թե չխանգարեն:

Գրիզլիին խեղճացնելով ու դռնից դուրս շպրտելով, Ֆրոդոն փլվեց աթոռին:

— Վերջակետ դիր, Մերի, — ասաց նա: — Դուռը կողպիր և այլևս ոչ ոքի չթողնես, թեկուզ բաբանով գա:

Նա հազիվ էր նստել ու ուզում էր թեյ խմել, երբ դուռը կամաց թակեցին: «Նորից Սերինիան է, — մտածեց նա, — թող սպասի մինչև վաղը, թերևս ավելի վիրավորական մի բան կմտածեմ»: Նա գավաթից կում արեց, ուշադրություն չդարձնելով նոր, ավելի ուժեղ թակոցին: Հանկարծ պատուհանից երևաց հրաշագործի գլուխը:

— Եթե դու հենց հիմա ինձ ներս չթողնես, Ֆրոդո, ես ոչ թե դուռդ կպոկեմ, այլ քո ամբողջ հյուղակը տարտարոսի գիրկը կուղարկեմ, — ճչաց նա:

— Այդ դո՞ւ ես, Գանդալֆ, ներիր, խնդրում եմ, — շտապեց ասել Ֆրոդոն, դեպի դուռը նետվելով: — Նե՛րս արի, նե՛րս արի. . . Ես կարծում էի Սերինիան է:

— Որ այդպես է. լա՛վ, ներում եմ: Մի անհանգստացիր, ես նոր նրան տեսա Գետամերձում, այնպիսի թթված դեմք ուներ, որ մինչև հիմա ատամներս սվսվում են:

— Իսկ ես ավելի լավ է չտրտնջամ: Ազնվորեն ասած, քիչ էր մնում Բիլբոյի Մատանին հագնեի, այնքան որ ուզում էի անհետանալ:

— Չե՞ս հագել, ուրեմն՝ ապրես, — ասաց Գանդալֆը: — Մատանու հետ զգույշ եղիր, Ֆրոդո: Ես հենց այդ պատճառով էլ եկել եմ, որ քեզ երկու խոսք ասեմ:

— Իսկ ի՞նչ կա որ:

— Ի՞նչ գիտես Մատանու մասին:

— Ինչ որ Բիլբոն պատմել է, ամբողջ պատմությունը՝ ինչպես է ինքը գտել Մատանին, ինչպես է իրեն օգնել:

— Եվ ի՞նչ պատմություն է նա քեզ պատմել, — հետաքրքրվեց հրաշագործը:

— Ոչ, ո՛չ այն, որ թզուկներին է պատմել և որ գրված է իր գրքում, — պատասխանեց Ֆրոդոն: — Նա ինձ ճիշտն է պատմել, այստեղ իմ տեղափոխվելուց համարյա անմիջապես հետո: «Թող մեր մեջ ամեն ինչ մաքուր լինի, Ֆրոդո, — ասաց նա, — միայն թե դու լռիր: Հիմա արդեն, միևնույն է, իմն է Մատանին»:

— Մեկը մեկից հետաքրքիր է, — նկատեց Գանդալֆը: — Դե, իսկ քեզ դո՞ւր է գալիս:

— «Նվերի» մասի՞ն ես ասում: Այո, հիմար ու անհեթեթ մտահղացում է: Իսկ որ գլխավորն է, Բիլբոյին բոլորովին նման չէ, հիշում եմ, ես շատ զարմացա:

— Ես նույնպես: Բայց կախարդական գանձերի տերերը վաղ թե ուշ սկսում են իրենք իրենց չնմանվել: Այնպես որ դու էլ շրջահայաց եղիր: Այդ Մատանին նրա համար չի սարքված, որ երբ ուզենաս՝ անհետանաս, այն կարող է ուրիշ հատկություններ էլ ունենալ:

— Ինչ-որ անհասկանալի է, — ասաց Ֆրոդոն:

— Դե ինձ համար էլ լրիվ հասկանալի չէ, — խոստովանեց հրաշագործը: — Այդ Մատանին ինձ իսկապես հետաքրքրեց միայն երեկ երեկոյան: Դու մի հուզվիր, ես կպարզեմ: Եվ լսիր իմ խորհուրդը, մի խոր տեղ պահիր: Իսկ ամենակարևորը, խոսացկությունների ու ասեկոսների առիթ չտաս: Կրկնում եմ՝ պահիր այն և բերանբացություն չանես:

— Այ քեզ, հանելո՛ւկ: Իսկ դրա մեջ ի՞նչ վտանգավոր բան կա:

— Ես դեռ վստահ չեմ և չեմ խոսի: Բայց հաջորդ անգամ, երևի, որոշ բան կլսես: Առայժմ մնաս բարով, ես հենց հիմա գնում եմ: — Նա վեր կացավ:

— Ինչպես թե, հենց հիմա. . . — բացականչեց Ֆրոդոն, — իսկ ես կարծում էի գոնե մի շաբաթ կապրես մեզ մոտ և այնպես հույս ունեի քո օգնության վրա. . .

— Ես էլ էի մտադիր, բայց չվիճակվեց: Հավանաբար, երկար ժամանակ կբացակայեմ, բայց վերջիվերջո անպայման կհայտնվեմ, կգամ քեզ այցելության: Պատրաստ եղիր ինձ ցանկացած ժամանակ ընդունելու. թաքուն կգամ: Հոբիթների աչքին այլևս չեմ ուզում երևալ, ես հո տեսնում եմ, որ Հոբիթստանում ինձ չսիրեցին: Ասում են, որ ինձանից միայն գլխացավանք ու անկարգություն է գալիս: Ուրիշ էլ ո՞վ, եթե ոչ ես եմ Բիլբոյին խելքից հանել, իսկ գուցեև նրան աշխարհից վերացրել եմ: Բանից դուրս է գալիս, որ ես ու դու դավադրություն ենք սարքել և հիմա կիսում ենք նրա հարստությունը:

— Ասո՛ւմ են, — բացականչեց Ֆրոդոն: — Ասում են, իհարկե, Օթհոն ու Սերինիան: Թու, ինչ զզվելի է: Ես ուրախությամբ կտայի և՛ Պարկուտը, և՛ աշխարհում ամեն ինչ, միայն թե Բիլբոյին վերադարձնեի կամ գնացած լինեի նրա հետ մասին: Ես իմ հարազատ վայրերը շատ եմ սիրում, բայց, ազնիվ խոսք, զգում եմ, որ իզուր պոչից չկպա: Երբևէ նորից կտեսնե՞մ նրան, կտեսնե՞մ արդյոք. . .

— Ես էլ չգիտեմ, թե երբ, — ասաց Գանդալֆը: — Եվ դեռ շատ բան չգիտեմ: Զգույշ եղիր. . . Եվ սպասիր ինձ ամենաանպատեհ ժամանակ: Իսկ հիմա՝ մնաս բարով:

Ֆրոդոն ճանապարհ դրեց նրան մինչև շեմը, Գանդալֆը թափահարեց ձեռքն ու մեծ-մեծ քայլերով գնաց: Ֆրոդոյին թվաց, թե ծեր հրաշագործին մի ինչ-որ ծանր բեռ գետնին է խոնարհում: Մթնում էր, նրա մոխրագույն թիկնոցը վայրկենապես հալվեց աղջամուղջում:

Նրանք երկար ժամանակով բաժանվեցին:

Գլուխ երկրորդ. Անցյալի ստվերը

Խոսակցությունները չդադարեցին ոչ ինն օր, ոչ էլ հինսունինն օր հետո: Բիլբո Պարկինսի երկրորդ անգամ անհետանալը քննարկվում էր ոչ միայն Նորգորդում, այլ ամեն տեղ ու ամենուրեք. քննարկում էին տարուց ավելի, իսկ հիշում էին դրանից էլ երկար: Փոքրիկ հոբիթներին այդ պատմությունը երեկոները պատմում էին բուխարու մոտ, և հետզհետե Խենթ Պարկինսը, որ փայլ ու շուքով անհետացել էր և պարկերով գանձ շալակած հայտնվել, դարձավ հեքիաթային սիրված հոբիթ և մնաց հեքիաթներում, երբ նրան վերաբերող իրական իրադարձությունների մասին հիշողություններն արդեն մարում էին:

Բայց սկզբնական շրջանում խոսում էին, որ Բիլբոն առանց այն էլ ծալը պակաս էր, իսկ հիմա լրիվ գժվել է, նրա երգը երգված է: Անտարակույս, ընկել է մի լճակի մեջ կամ խեղդվել է գետում ու գտել իր տխուր, բայց արժանի վերջը: Իսկ այդ ամենում ո՞վ է մեղավոր, եթե ոչ Գանդալֆը:

«Այդ հիմար հրաշագործը գոնե Ֆրոդոյին հանգիստ թողնի՝ մեկ էլ տեսար նրանից մի խելամիտ հոբիթ դուրս եկավ», — ասում էին խելոքները, գլուխները տարուբերելով: Եվ եղածից դատելով, հրաշագործն իսկապես էլ Ֆրոդոյին հանգիստ էր թողել, բայց նրա հոբիթական խելամտությունն ինչ-որ չէր ավելանում: Ֆրոդոն էլ Բիլբոյի նման տարօրինակություններ ուներ: Նա սուգ չպահեց և հաջորդ տարի Բիլբոյի հարյուր տասներկուամյակը նշեց. լիակշիռ տարեթիվ է, ասում էր նա: Բայց թե դա ինչ տոն էր, ընդամենը քսան հոգի էր հրավիրված. . . Ճիշտ է, շատ ուտելուց արդեն պայթում էին, շատ խմելուց՝ արդեն գլորվում, ինչպես ասում են հոբիթները:

Մի խոսքով, ոմանք շատ զարմացան, բայց Ֆրոդոն Բիլբոյի ծնունդը կատարելը սովորություն դարձրեց, և հետզհետե բոլորը վարժվեցին: Նա ասաց, որ Բիլբոն, իր դատելով, ողջ-առողջ է: Իսկ երբ հարցնում էին, թե որտե՞ղ է, Ֆրոդոն ուսերն էր թոթվում:

Նա էլ, Բիլբոյի նման, մեկուսացած էր ապրում, միայն թե ընկերներ շատ ուներ, հատկապես երիտասարդներից: Իսկ իրենց լրիվ յուրային էին զգում Պարկուտում Փերեգրին Ճագարակը (ընկերների համար պարզապես Փին) և Մերի Բրենդիզայքը (նրա լրիվ անունը Մերիադոք էր, բայց այդ մասին շատ հազվադեպ էին հիշում): Ֆրոդոն նրանց հետ մասին սար ու դաշտ ոտքի տակ էր տալիս, բայց ավելի հաճախ մենակ էր թափառում, և հասարակ ժողովուրդը զարմանում էր, թե ինչու նրա աչքին քուն չի գալիս: Մերին ու Փինը կասկածում էին, որ նա, իր հորեղբայր Բիլբոյի օրինակով՝ կապերի մեջ է մտել էլֆերի հետ:

Ժամանակն անցնում էր, և բոլորը սկսեցին նկատել, որ Ֆրոդոն էլ վատ չի «պահպանվում». նա առաջվա պես պինդ է ու առույգ, հազիվ երեսունն անց հոբիթի տեսք ունի: «Երջանկությունը բախտավորին է սիրում», ասում էին նրա մասին: Բայց երբ մոտենում էր հիսունին, ժողովուրդը զգուշացավ:

Ֆրոդոն ինքը, վշտից սթափվելով, հայտնաբերեց, որ Ձառիթափի Պարկուտի տեր, միստր Պարկինս լինելը նույնիսկ շատ հաճելի է: Տասնյակ տարիներ նա ուրախ-ուրախ վայելում էր կյանքը և ապագայի մասին բնավ չէր մտածում, թեպետ երբեմն, այնուամենայնիվ, ափսոսում էր, որ Բիլբոյի հետ չի գնացել: Եվ ժամանակ առ ժամանակ, հատկապես աշնանը, նրա անուրջներում կուսական վայրեր էին հայտնվում, աչքին սարեր էին երևում, որտեղ երբեք չէր եղել և ծովեր, որոնց մասին միայն լսել էր: Նա սկսեց ինքն իրեն կրկնել. «Այ մի օր էլ կվերկենամ ու կգնամ Գետի այն կողմը»: Եվ իսկույն էլ ներքին ձայնն ասում էր. «Հե՜տո, մի օր . . . »:

Մինչդեռ մոտենում էր նրա հիսնամյակը, իսկ հիսուն տարին Ֆրոդոյին բավական նշանավոր (և նույնիսկ չարագուշակ) տարեթիվ էր պատկերանում: Այդ նույն տարիքում էր, որ Բիլբոն խիզախ հոբիթ դարձավ: Ֆրոդոյի մեջ անհանգստություն բուն դրեց, սիրելի կածանները ձանձրացրել էին նրան: Նա աչքի էր անցկացնում տեղական քարտեզները, որտեղ Հոբիթստանը շրջապատված էր սպիտակ բծերով: Նա ավելի ու ավելի հաճախ և ավելի ու ավելի երկար էր շրջում մենակ, իսկ Մերին ու մյուս ընկերները տագնապով հետևում էին նրան: Իսկ ով հետևում էր, տեսնում էր, թե ինչպես է նա երկար զրույցի բռնվում օտարականների հետ, որոնք Հոբիթստանում շատ-շատացել էին:

Լուրեր էին պտտվում արտասահմանում կատարվող ինչ-որ զարմանահրաշ բաների մասին. Գանդալֆն արդեն երկար տարիներ չէր երևացել և նույնիսկ իր մասին իմաց չէր տալիս: Հոբիթստանի միջով շտապողականորեն շարժվում էին էլֆերի ջոկատները՝ առաջներում հոբիթները նրանց մասին միայն լսածներով գիտեին, իսկ այժմ էլ էլֆերը անտառների եզրերով երեկոները գնում էին ու գնում, անցնում էին ու էլ չէին վերադառնում: Հեռանում էին Միջերկրից: Նրանք էլ իրենց ճակատագիրն ունեին: Սակայն թզուկներն էլ էին գնում՝ դարձյալ մեծ քանակությամբ: Արևելքից արևմուտք ձգվող հնադարյան ճանապարհը Հոբիթստանի միջով գնում էր Արծաթափայլ Նավահանգիստ, թե թզուկներն էլ ի սկզբանե այդ ուղիով էին գնում-գալիս Կապույտ լեռների հանքերը: Նրանցից էլ հոբիթներն իմանում էին, թե ինչ է կատարվում օտար երկրներում, թեև տանտերերը հետաքրքրասեր չէին, իսկ անցորդները սակավախոս էին: Բայց հիմա Ֆրոդոյին ավելի ու ավելի հաճախ էին հանդիպում ուրիշ,

հեռավոր թզուկներ: Նրանք գնում էին արևմուտք ու, շուրջը նայելով, շշուկով խոսում էին Թշնամու և Մորդոր երկրի մասին:

Այդ բառերը հայտնի էր միայն շատ հինավուրց ասույթներից, և չարագուշակ ստվեր էր գցում նրանց վրա: Իսկ հիմա, պարզվում է, որ Սև Դղյակը նորից վերակառուցված է, ու այնտեղից սառնաշունչ խավար ու ուժաթափ անող սարսափ է սողում Միջերկիր: Ամենուրեք թնդում են պատերազմները: Լեռներում բազմանում էին օրքերը: Թրոլներն էլ են փոխվել, բթամիտ ու ծուռթաթ չեն, այլ խորամանկ և նոր ձևով զինված: Խոսում էին ավելի սարսափելի բաների մասին, բայց այստեղ արդեն ակնարկներով էին խոսում:

Հասարակ ժողովուրդը, իհարկե, այդ մասին քիչ բան գիտեր: Սակայն նույնիսկ ամենախլականջ տանը նստածները, նույնիսկ սրանք որոշ բան լսել էին, իսկ ով պատահաբար եղել էր սահմանի մոտ՝ նաև տեսել էր: Գարնանային մի երեկո «Կանաչ վիշապում» բուխարիկի մոտ Սամ Համեստուկը՝ Ֆրոդոյի այգեպանը, զրույց էր անում Թոդ Ավազունսի՝ ջրաղացպանի որդու հետ: Շուրջը հավաքվել էին պանդոկի մշտական հաճախորդները:

— Զարմանալի լուրեր են պտտվում, — ասաց Սամը:

— Իսկ դու ականջդ կախ արա, — խորհուրդ տվեց Թոդը, — էլ ավելին կլսես: Հրե՛ն գնա իմ մամիկի մոտ՝ էնքա՜ն պատմի, որ. . .

— Դե ինչ արած, — ասաց Սամը, տատի հեքիաթներն էլ մեկ-մեկ լսելը չի խանգարի: Հո դրանք ինքը չի հնարել: Վերցնենք, օրինակ հենց քո ասած վիշապները:

— Վերցրու քեզ, — ասաց Թոդը, — ինձ պետք չէ: Ես դրանք սեղանի տակ չոչ անելիս էնքան եմ լսել, իսկ հենց որ տաբատ հագա, մտքիցս դուրս թռան: Մեր Գետամերձում միայն մի վիշապ կա, էն էլ կանաչ: Ճի՞շտ եմ ասում, — դիմեց նա ունկնդիրներին, և նրանք միահամուռ քրքջացին:

— Էդ դու իմ խոսքը կտրեցիր, — մյուսների հետ Սամն էլ ծիծաղեց: — Իսկ ծառ հսկաների հաշվով ի՞նչ կասես: Ասում են, հյուսիսային ճահիճներից այն կողմ վերջերս մեկին տեսել են՝ ուզածդ ծառից բարձր:

— Էդ ո՞վ է ասում:

— Դե, թեկուզ իմ ախպերացու Հելը: Նա պարոն Կուզբոնցի մոտ է բանում և միշտ լինում է Հյուսիսային նահանգում: Հենց ինքն էլ տեսել է:

— Նա կտեսնի, մենակ մեզ ցույց չի տա: Իսկ թե ինչ է էնտեղ տեսնում, ինքն ավելի լավ գիտի, քանի որ ուրիշները ոչինչ չեն տեսնում:

— Դե չէ, էլի, իսկական հսկա է, ամեն լոնքը երեք սաժեն է, ինքն էլ ոնց որ վիթխարի ծփի լինի, իր համար քայլում գնում է. . .

— Ծփիները չեն քայլում, այլ աճում են, որտեղ որ բուսել են:

— Դե քեզ ասում են՝ քայլելիս է եղել, իսկ ծփի էնտեղ չի աճում:

— Դե որ ասածիդ պես չի աճում, էլ որտեղի՞ց է նա էնտեղ ծլել, — կտրեց Թոդը:

Բոլորը, հավանություն տալով, ծիծաղեցին. Թոդին մատներիդ վրա չես խաղացնի:

— Համա՛ թե լեզու ունես, — ասաց Սամը, — մենակ թե ախր մեր Հելիուսը միակը չի, որ տեսակ-տեսակ բաներ է տեսել: Ամբողջ Հոբիթստանով մեկ խոսում են, որ այդպիսի բան մինչև օրս չի եղել: Արևելքից չտեսնված-չլսված օտարականներ գալիս են ու գալիս: Ու ականջիս է հասել, որ էլֆերը տեղահան են եղել դեպի արևմուտքի Սպիտակ Բերդից այն կողմի նավահանգիստները: — Սամը ինչ-որ անորոշ ձեռքը թափ տվեց. ոչ նա, ոչ էլ հոբիթներից որևէ մեկը չգիտեր, թե իրենց արևմտյան ծայրամասից այն կողմ, հինավուրց ավերակների հետևում ծովը որտե՞ղ է գտնվում: Միայն հին ավանդություններ կային Արծաթափայլ Նավահանգստի մասին, որտեղից լողում-հեռանում ու էլ չեն վերադառնում էլֆերի նավերը:

— Դրանք լողում ու լողում են արևմուտք, իսկ մեզ թողնում են, — խոսեց Սամը համարյա երգելով, տխուր ու հանդիսավոր գլուխն օրորելով:

Թոդը փռթկացրեց:

— Հին նանիկը նոր եղանակով: Ախր ես կամ դու ի՞նչ գործ ունենք նրանց հետ: Թող լողան իրենց համար: Չնայած ո՞ւր պետք է լողան: Չէ՞ որ դու և առհասարակ Հոբիթստանում որևէ մեկը իր աչքով նրանց չի տեսել: Գուցե իսկի էլ չեն լողում, ով գիտի նրանց:

— Ի՞նչ իմանամ, — մտածկոտ ասաց Սամը: Կարծես թե մի անգամ անտառում նա էլֆ էր տեսել և շարունակ հույս էր տածում, որ երբևէ նորից կտեսնի ու հարցուփորձ կանի: Մանուկ հասակում լսած լեգենդներից ամենից շատ հիշողության մեջ մնացել էին էլֆերի մասին պատմությունների պատառիկներ: — Նույնիսկ մեր կողմերում էդպիսիները կան, որ հասկանում են Զարմանալի Ժողովրդին և կարողանում են նրանց հետ խոսել, — ասաց նա: — Մեկն էլ իմ տերը՝ պարոն Պարկինսը: Նա ինձ պատմում էր, ոնց էին նրանք լողում և առհասարակ, ամեն խոսքի տակին գլխին՝ էլֆեր էին: Էլ չեմ ասում ծերուկ Բիլբոն, նա, հիշում եմ, աշխարհի երեսին նրանց մասին ինչ կար-չկար՝ գիտեր:

— Երկուսն էլ խախտված են, — ասաց Թոդը: — Ծերուկ Բիլբոն հո կար ու կար, հիմի էլ հրեն Ֆրոդոն է խախտվել: Դու էլ նրանի՞ց ես, ինչ է, լուրերդ հավաքում: Տես, հա՛, դու էլ չխախտվես: Դե լավ, տղերք, ով ուր կուզի, ես՝ գնացի տուն: Ողջ կենաք. . . — Նա գավաթը կոնծեց ու աղմուկով հրաժեշտ տվեց:

Սամը մի քիչ էլ նստեց, բայց այլևս ոչ ոքի հետ չխոսեց: Նա ահագին բան ուներ խորհելու: Առավոտյան էլ այգում աշխատանքն անսպառ էր, միայն թե պարզ եղանակ լինի: Ծիլերն ավելի ու ավելի են խտանում: Աշխատանքն, իհարկե, աշխատանք. . . Բայց Սամը բոլորովին ուրիշ բանի մասին էր մտածում: Հետո հառաչեց, վեր կացավ ու դուրս եկավ: Ապրիլյան երկինքը մաքրվում էր անձրևներից հետո: Արևը մայր էր մտել, և երեկոն նահանջելով, կամաց-կամաց դժգունում էր: Աստղերը առկայծում էին Սամի գլխավերևում, իսկ նա ոտքերը քարշ տալով բարձրանում էր լանջն ի վեր, մտախոհ ու շատ ցածր սուլելով:

Եվ հանկարծ հայտնվեց Գանդալֆը՝ միշտ անակնկալ հյուրը: Հյուրասիրությունից հետո կլիներ երեք տարի չէր երևացել: Հետո փութանցիկ այցելեց, ուշադիր նայեց Ֆրոդոյին, մի երկու դատարկ բան ասաց և նույնիսկ գիշերելու չմնաց: Եվ հանկարծ սկսեց հաճախ գալ. հայտնվում էր մթնշաղին, բայց լուսադեմին հետքն ու հոտն էլ չէր մնում: Որտեղ էր կորչում ու ինչու՝ չէր բացատրում, իսկ հետաքրքրվում էր միայն Ֆրոդոյի առողջությամբ, մեկ էլ զանազան մանր-մունր բաներով: Եվ հանկարծ դրանով էլ դադարեց հետաքրքրվել: Ինը տարուց ավելի Ֆրոդոն նրան չէր տեսել և նրա մասին ոչինչ չէր լսել. ուրեմն, որոշեց նա, Գանդալֆը այլևս հոբիթների հետ գործ չունի: Բայց մեկ անգամ երեկոյան, երբ իջնում էր մթնշաղը, աշխատասենյակի պատուհանին լսվեց ծանոթ թակոցը:

Ֆրոդոն ամբողջ սրտով ուրախացավ վաղեմի բարեկամին տեսնելու համար: Նրանք կանգնել ու զննում էին իրար:

— Դեհ, ամեն ինչ կարգի՞ն է, — հարցրեց Գանդալֆը: — Այ դու կեցցե՛ս, Ֆրոդո. . .

— Դու էլ, — ասաց Ֆրոդոն, իսկ ինքն իր մեջ մտածեց, որ հրաշագործը ծերացել է ու կորացել: Հոբիթը անընդհատ հարցուփորձ էր անում, և նրանք նստեցին մինչև կեսգիշեր:

Նախաճաշելուց հետո հրաշագործն ու Ֆրոդոն նստեցին բաց պատուհանի առջև: Բուխարիկում կրակը ճարճատում էր, թեպետ արևն էլ էր տաքացնում և հարավից գոլ քամի էր փչում: Ամենուրեք թարմություն էր բուրում, գարնանային կանաչը ծածկում էր դաշտերը, և վառ սաղարթով գանգրանում էին ծառերը:

Գանդալֆը հիշում էր, թե ինչպիսի գարուն էր համարյա ութսուն տարի առաջ, երբ Բիլբոն առանց թաշկինակի սուրաց արկածների գնացողների հետևից: Այն ժամանակից ի վեր Գանդալֆի մազերն ավելի են ճերմակել, մորուքի ու հոնքերի մազերն ավելի են երկարել, դեմքին հոգսերը նոր կնճիռներ են ակոսել, բայց աչքերի փայլը առաջվանն է:

Ֆրոդոն մտազբաղ նստած էր և նույնիսկ առավոտյան լուսավոր պայծառության մեջ գուշակում էր Գանդալֆի հաղորդած լուրերի մութ սառնությունը: Վերջապես նա խզեց լռությունը:

— Կարծես թե մի բան սկսեցիր ինձ ասել Մատանու մասին, Գանդալֆ, — հիշեցրեց նա: — Սկսեցիր ու չվերջացրիր, հետաձգեցիր առավոտյան: Գուցե հիմա կշարունակե՞ս: Ասում ես,

Մատանին վտանգավոր է, իսկ գիտե՞ս, ինձ համար անհասկանալի է: Ի՞նչ է նշանակում վտանգավոր:

— Դե ուրեմն լսիր, — պատասխանեց հրաշագործը: — Նա այնպիսի զորություն ունի, որ ցանկացածդ մահկանացուին կխոնարհի: Կխոնարհի և կտիրի նրան. — Քեզ պետք է ասեմ, Ֆրոդո, որ մահկանացուները, որոնց վստահվում է տիրել Կախարդական Մատանիների, չեն մեռնում, բայց և իսկական կյանքով չեն ապրում. նրանք ուղղակի քաշում են կյանքի լուծը՝ առանց ուրախության, առանց զվարճությունների և դեռ հսկայական դժվարությամբ: Եվ եթե մահկանացուն հաճախ է հագնում Մատանին, անտեսանելի դառնալու համար, ապա նա հալվում է, կամ՝ ինչպես Իմաստուններն են ասում, ետմարմնավորում է ապրում, իսկ հետո հավիտյան անտեսանելի է դառնում, տեսանելի միայն Մատանիների Տիրակալի աչքին: Այո, վաղ թե ուշ, ուշ՝ եթե նա ուժեղ է ու բարի, բայց միևնույն է, նրան վիճակված է դառնալ Մութ Ուժերի Սպասավորը, որոնց թագավորն է Սև Տիրակալը:

— Ի՞նչ սարսափելի է. . . — ասաց Ֆրոդոն:

Եվ նրանք երկար լռեցին: Միայն պարտիզպան Սամ Համեստուկի մկրատն էր չխկչխկում պատուհանի տակ:

— Եվ դու վաղո՞ւց գիտես այդ մասին, — վերջապես հարցրեց Ֆրոդոն: — Իսկ Բիլբոն գիտե՞ր:

— Բիլբոն գիտեր ճիշտ այնքան, որքան որ քեզ է ասել, — պատասխանեց Գանդալֆը: — Այլապես նա քեզ այդպիսի վտանգավոր ժառանգություն չէր թողնի, նույնիսկ ինձ վրա հույս չէր դնի: Նա մտածում էր, որ Մատանին շատ գեղեցիկ է ու միշտ կարող է պետք գալ. իսկ եթե ինքն անձամբ ինչ-որ իրեն լավ չի զգում, ապա Մատանին այստեղ կապ չունի: Նա ասում էր, որ Մատանին իր գլխից դուրս չի գալիս և շարունակ տագնապի մեջ է պահում իրեն, բայց թե բանը, մտածում էր նա, Մատանին չէ: Թեպետ և հասկացավ. Մատանուն պետք է հետևել՝ այն մեծանում է ու փոքրանում, ծանրանում է ու թեթևանում, կարող է հանկարծ սահել մատից ու կորչել:

— Այո, այդ մասին նա ինձ գրել է, — ասաց Ֆրոդոն, — ու ես միշտ շղթայով եմ պահում:

— Բավական խելամիտ է, — նկատեց Գանդալֆը: — Իսկ իր կյանքի երկարությունը Բիլբոն Մատանու հետ չէր կապում: Նա մտածում էր, որ պարզապես իր ճակատին երկարակեցություն է գրված և դրանով շատ էր պարծենում: Իսկ ապրում էր տագնապի և անորոշ վախի մեջ: «Ես բարակել եմ ու մի տեսակ թափանցիկ դարձել», — մի անգամ գանգատվեց ինձ: Մի քիչ էլ՝ և Մատանին իր գործը կաներ:

— Դե ասա ինձ, դու վաղո՞ւց դա գիտես, — նորից հարցրեց Ֆրոդոն:

— Ի՞նչը, — հարցրեց Գանդալֆը, — Ես, Ֆրոդո, շատ այնպիսի բաներ գիտեմ, որ ոչ ոքի հայտնի չէ: Բայց եթե հարցնում ես այդ մատանու մասին, ապա կարելի է ասել, մինչև հիմա էլ ամեն ինչ չէ, որ գիտեմ: Մնացել է վերջին փորձը: Բայց իմ ենթադրությունը հաստատ է, այստեղ ես համոզված եմ: Իսկ երբ իմ մտքով անցա՞վ, — Գանդալֆը մտածմունքի մեջ ընկավ: — Հապա համբերիր. . . Այո, այն նույն տարին, երբ Լուսավոր Ուժերի Խորհուրդը մաքրեց Չարքանտառը՝ հենց Հինգ Զորաց Ճակատամարտից անմիջապես առաջ: Ճիշտ է, երբ Բիլբոն գտավ Մատանին, հանկարծ ես տագնապ զգացի, բայց թե ինչու՝ չգիտեի: Ինձ զարմացնում էր, թե ինչպես է Գորլումը տիրացել Կախարդական Մատանիներից մեկին, իսկ որ դա Կախարդականներից մեկն էր՝ պարզ էր: Բիլբոն խոսակցության ժամանակ տարօրինակ կերպով սուտ խոսեց՝ նվերի մասին, հետո, երբ ինձ բացեց ճշմարտությունը, ես հասկացա, իմիջիայլոց, այստեղ հասկանալու բան էլ չկար, որ նրանք երկուսն էլ ցանկացել են ապացուցել Մատանու նկատմամբ իրենց անառարկելի իրավունքը: Իբրև թե Գորլումը «ծնունդյան օրը նվեր է ստացել», իսկ Բիլբոն «խաղում ազնվորեն» շահել է: Սուտը ստի վրա, և այնքա՜ն էլ իրար նման. ես, իհարկե, անհանգստացա: Երևում է, Մատանին ստիպում է խաբել և ստախոսություն է հուշում: Այստեղ ես առաջին անգամ հասկացա, որ դա բոլորովին էլ կատակ բան չէ, և Բիլբոյին ասացի, որ Մատանու հետ զգույշ լինի, բայց նա չլսեց և նույնիսկ ինձ վրա բարկացավ: Ի՞նչ էր մնում անելու: Հո Մատանին ձեռքից չէի խլելու, և ինչի՞ց ելնելով: Ես հետևում էի և սպասում: Մտածեցի, որ հարկավոր էր խորհրդակցել Սարուման Ճերմակի հետ, բայց ինչ-որ բան ինձ կաշկանդում էր:

— Ո՞վ է դա, — հարցրեց Ֆրոդոն, — դրա մասին երբեք չեմ լսել:

— Դու որտեղի՞ց պետք է լսեիր, — ժպտաց Գանդալֆը: — Նա հոբիթների հետ գործ չունի, կամ՝ չի ունեցել: Նա շատ իմաստուն է, հրաշագործների մեջ առաջինն է, Խորհրդի գլխավորը: Շատ գաղտնիքներ նրա առաջ բաց են, բայց նա գոռոզացել է իր գիտելիքներով և իրեն բարձր է դասում բոլորից: Շատ վաղ ժամանակներից նա խորացել է Մատանիների գաղտնիքների մեջ՝ թափանցելով մոռացումի խավարը, և երբ դրանց մասին Խորհրդում խոսք բացվեց, նրա խոսքերը ցրեցին իմ տագնապը: Ես ժխտեցի կասկածներս, բայց չփարատվեցի: Եվ առաջվա նման հետևում էի ու սպասում:

Բիլբոն չէր ծերանում, իսկ տարիներն անցնում էին: Անցնում էին ու անցնում, ասես նրան չէին էլ դիպչում: Եվ կասկածը նորից տիրեց ինձ: Բայց ես ինձ ասացի. «Նա մորական կողմից երկարակեցություն է ժառանգել: Նրա տարիքն այդքան էլ մեծ չէ: Կսպասենք. . . » Ես անգործության մատնված սպասում էի մինչև Բիլբոյի հրաժեշտի երեկոն: Այդ ժամանակ նա վերջապես խոսեց և իրեն այնպես պահեց, որ իմ մեջ գլուխ բարձրացրին Սարումանի կողմից մարած բոլոր տագնապները: Ես հասկացա, որ այստեղ մի մութ գաղտնիքի սև երախն է երևում: Եվ երկար տարիներ ծախսեցի այն բացելու համար:

— Բայց չէ՞ որ սարսափելի ոչինչ չի պատահել, — վախեցած հարցրեց Ֆրոդոն: — Ժամանակի ընթացքում Բիլբոն ուշքի կգա, կհանգստանա:

— Նա հենց որ Մատանուց ազատվեց, իսկույն թեթևացավ, — պատասխանեց Գանդալֆը: — Սակայն Մատանիների վրա միայն մեկ ուժ է իշխում, և կա մեկը, որին հայտնի է ամեն ինչ Մատանիների և այն մասին, թե ինչ են սպառնում նրանք իրենց, նույնիսկ ժամանակավոր, տիրակալներին: Ճիշտ է, հոբիթների մասին, թվում է, ոչ ոք խելքը գլխին ոչինչ չգիտե: Նրանց միայն ես եմ ուսումնասիրել և որքան ուսումնասիրել եմ, այնքան զարմացել եմ: Մեկ նրանք կարագից փափուկ են, մեկ՝ ծեր ծառի արմատներից կոշտ: Ըստ իս, դրանցից ոմանք նույնիսկ կարող են երկար դիմադրել Մատանիներին, չնայած հազիվ թե Իմաստունների Խորհրդում դրան հավատային: Այնպես որ Բիլբոյի համար դու մի անհանգստացիր:

Նա, իհարկե, երկար տարիներ Մատանու տերն էր և շատ անգամ է հագել այն: Մատանին դրոշմվել էր նրա կյանքին, և այդ հետքը հեշտությամբ չի ջնջվի, ավելի լավ է Մատանին այլևս նրա աչքով չընկնի: Որ չընկնի՝ Բիլբոն էլ գուցե առանց դրա շատ ավելի երկար ապրի, քանի որ դա ավելի հեշտ է, քան Մատանուց բաժանվելը: Իսկ նա Մատանուց բաժանվեց սեփական կամքով, ահա թե որն է ամենագլխավորը: Ոչ, Բիլբոյի համար ես հանգիստ եմ՝ այն ժամանակից ի վեր, ինչ նա գնաց ու Մատանին թողեց: Այժմ քո հերթն է և քո պատասխանը: Իսկ քեզ համար շատ եմ տագնապում, քեզ համար և ձեր բոլորի՝ սիրելի, հիմարավուն, անխելք հոբիթներիդ համար: Դա աշխարհի համար մեծ կորուստը կլինի, եթե խավարը կլանի Հոբիթստանը, Բոքոնակները, Ցմփորիկները և մնացածը, էլ չասենք հրաշալի տարօրինակ Պարկինսների մասին, խղճուկ վախլուկներ ու խավարամիտ ստորներ դառնան:

Ֆրոդոն կուչ եկավ:

— Էդ ինչո՞ւ պետք է վախլուկներ ու ստորներ դառնանք, — հարցրեց նա: — Եվ այդպիսի հպատակներն ո՞ւմ են պետք:

— Համընդհանուր Թշնամուն, — մռայլ պատասխանեց Գանֆալդը: — Չնայած, ճիշտը որ ասենք, մինչև օրս հոբիթները նրա մտքով չեն անցել, նկատի ունեցիր՝ մինչև օրս: Դրա համար շնորհակալություն ասա ճակատագրին: Բայց այսուհետև Հոբիթստանին վտանգ է սպառնում: Դուք նրան պետք չեք՝ նա ստրուկներ շատ ունի, բայց հիմա նա ձեզ չի մոռանա: Իսկ ստրուկ-հոբիթները նրան ավելի հաճելի են, քան ազատ հոբիթները: Ընդ որում նա ձեզ վրա չարացած է, և նրա վրեժը ահավոր կլինի:

— Վրե՞ժը, — զարմացավ Ֆրոդոն: — Իսկ ինչի՞ համար պետք է վրեժխնդիր լինի: Թեկուզ սպանես, չեմ հասկանում: Ի՞նչ կապ ունի այստեղ Բիլբոն, ես և մեր Մատանին:

— Ինչպե՞ս թե՝ ինչ կապ ունի, — խոժոռվեց Գանդալֆը: — Դու, երևում է, ինչ-որ բան չընմբռնեցիր, ասենք հիմա կհասկանաս: Ես ինքս էլ անցյալ անգամ դեռ համոզված չէի, բայց հիմա ամեն ինչ պարզվեց: Հապա մի ինձ տուր Մատանին:

Ֆրոդոն տաբատի գրպանից հանեց Մատանին, արձակեց գոտուն ամրացված շղթան ու դժկամ մեկնեց հրաշագործին: Մատանին ձեռքը հետ էր պահում, կարծես թե նա, կամ Ֆրոդոն ինքը, կամ երկուսը միասին, չգիտես ինչու, չէին ուզում, որ Գանդալֆը կպչեր դրան:

Հրաշագործը զգուշությամբ ընդունեց այն: Մատանին մաքուր կարմիր ոսկուց էր:

— Որևէ նշան կա՞ վրան, — հարցրեց Գանդալֆը:

— Բացարձակ, — պատասխանեց Ֆրոդոն: — Դրա վրա քերծվածք անգամ չկա, կարծես ոչ ոք ոչ մի անգամ չի հագել:

— Դե հիմա տես:

Եվ ի զարմանս, եթե ոչ ի սարսափ Ֆրոդոյի, հրաշագործը անսպասելի նետեց այն կրակը: Ֆրոդոն ճչաց ու հափռեց ունելին, բայց Գանդալֆը գրկեց նրան:

— Սպասիր, — հրամայական ասաց նա, ճերմակած հոնքերի տակից խիստ հայացք գցելով Ֆրոդոյի վրա:

Մատանին չհալվեց: Քիչ հետո Գանդալֆը վեր կացավ, վարագույները ծածկեց: Խաղաղ սենյակը մթնեց և միայն Սամի մկրատի չխկոցն էր լսվում այգուց: Հրաշագործը անթարթ նայում էր կրակին: Հետո կռացավ, ունելիով բռնեց Մատանին և ճարպկորեն հանեց ածուխների արանքից: Ֆրոդոն շունչ քաշեց:

— Սառն է, — հայտարարեց Գանդալֆը, — վերցրու:

Ֆրոդոյի ձեռքի ափը անսպասելի ծանրության տակ դողաց:

— Մատներով բռնիր, — հրամայեց Գանդալֆը, — Եվ նայիր:

Ֆրոդոն վերցրեց և Մատանու ներսի ու դրսի երեսին մի նրբին փորագրություն տեսավ: Ասես այն գրված էր վառ, բայց ինչ-որ խորքից եկող աղոտ կրակով:

— Այս կրակե տառերն անհասկանալի են ինձ համար, — դողացող ձայնով ասաց Ֆրոդոն:

— Քեզ համար անհասկանալի են, — կրկնեց Գանդալֆը, — փոխարենը ինձ են հասկանալի: Էլֆերի հնագույն գաղտնագրեր են, իսկ լեզուն՝ մորդորերեն: Ես չեմ ուզում, որ այն հնչի այստեղ: Համընդհանուր լեզվով կարելի է թարգմանել այսպես.

Իսկ այս մեկը՝ Ամենազորը, Տիրակալին Մորդորի,
Որ թշնամանք ցանի, կամազրկի մարդկանց,
Խառնամբոխվեն նրանք Չարչարանց երկրում:

Այս տողերը միայն էլֆերի համար հիշարժան չափածո հմայախոսքից են.

Երեք մատանի՝ Էլֆերին իմաստուն,
վեհ բարության համար,
Յոթ մատանի՝ անձավների անխոնջ թզուկներին
հանքաջանքի համար,
Ինը մատանի՝ Միջերկրի մարդկանց
Սևին ծառայելու,
Կռիվներում խիզախ մարտնչելու համար:
Իսկ այս Մեկը՝ Ամենազորը, Տիրակալին Մորդորի,
Որ թշնամանք ցանի, կամազրկի մարդկանց,
Խառնամբոխվեն նրանք Չարչարանց երկրում՝
Զորության տակ՝ Մորդորի տիրակալի:

Գանդալֆը հառաչեց և դանդաղ արտաբերեց.

— Քո Մատանին Համիշխանության Մատանին է, որին ենթակա են մնացած տասնինը: Մատանի, որ շատ տարիներ առաջ կորել է՝ ի վնաս Թշնամու իշխանության: Աշխարհում ամենից շատ վերջինիս է հարկավոր այն՝ և նա չպետք է ստանա. . .

Ֆրոդոն նստած էր լուռ ու անշարժ, վախից կծկված, ասես նրան պատել էր արևելյան սև ու ցուրտ ամպը:

— Ուրեմն սա թշնամու Մատանի՞ է, — թոթովեց նրա: — Իսկ ինչպե՞ս, իսկ ինչո՞ւ է ինձ մոտ ընկել:

— Ա՛, — ասաց Գանդալֆը: — Դա շատ երկար պատմություն է: Դա սկսվել է այն Սև Տարիներին, որոնց մասին հուշը Իմաստունների սեփականությունն է, այն էլ ոչ բոլորի: Եթե սկզբից սկսեմ պատմել, ապա քեզ հետ միասին մինչև աշուն կնստենք. . . Երեկ ես քեզ ասում

էի Սաուրոնի՝ Մատանիների Տիրակալի մասին: Քո ականջին ճիշտ լուրեր են հասել. նա ընդվզել է, լքել Չարքանտառը և տեղափոխվել Մորդորյան դղյակը՝ իր հնագույն ամրոցը: «Մորդոր» բառը քեզ ծանոթ է, այն մեկ էլ տեսնում ես սևին է տալիս նույնիսկ հոբիթական տարեգրություններում, սարսափ ու խավար սփռելով: Այո, նորից ու նորից՝ ջախջախում, դադար, իսկ հետո Խավարը փոխում է կերպարանքը և կրկին տարածվում:

— Գոնե իմ օրոք դա չլիներ, — ասաց Ֆրոդոն:

— Իսկ իմ օրոք շատ անգամ է եղել, — պատասխանեց Գանդալֆը, — բոլորն էլ միշտ ասում են՝ գոնե ոչ մեր օրոք: Ճակատագիր ընտրելու հնարավորությունը մեզ չի տրված. սակայն այս անգամ մեզ ժամանակ է տրված և գլխավորն այն է, որ բաց չթողնենք այդ ժամանակը: Իսկ մեր ժամանակը, Ֆրոդո, գրեթե վերջանալու վրա է: Թշնամին օրը օրին ուժեղանում է: Նրան էլի ժամկետ է հարկավոր, բայց ոչ երկարատև: Հարկավոր է կանխորոշել նրա ծրագրերն ու օգտվել անհավանական դեպքերից՝ գուցե և ի հաշիվ սեփական կործանման:

Թշնամին շատ հզոր է, բայց ամեն տեսակ դիմադրություն կոտրելու, վերջին պատվարները քանդելու և Միջերկիրը Խավարի մեջ խեղդելու համար նրան մի բան է պակասում՝ Համիշխանության Մատանին:

Էլֆերը երեք հրաշագեղ Մատանի նրանից թաքցրել են. նրա ձեռքը դրանց չի կպել և չի պղծել: Թզուկները յոթ Մատանի ունեին. երեքը նա խլեց, մնացածները վիշապները ոչնչացրին: Ինը նա բաժանեց վեհատես ու հպարտ մարդկանց, որպեսզի ստրկացնի նրանց: Վաղուց, շատ վաղուց նրանք դարձել են մատանեկիր-ուրվականներ, խավարի ծառաներ, նրա ամենասարսափելի վասալները. . . Այո, շատ վաղուց հողագնդի վրա Ինոյակին չեն տեսել: Բայց ո՞վ գիտե: Խավարը նորից տարածվում է. հնարավոր է՝ նրանք էլ ի հայտ գան, Խավարի նզովից արմատները. . . Ե՛կ հիմա չխոսենք նրանց մասին Հոբիթստանում, այս պայծառ առավոտ:

Այո, այսպես է բանը. ինը Մատանի նրա հպատակ-օգնականների մոտ են և Յոթից փրկված երեքն էլ պահվում են Մորդորում: Երեքը առայժմ թաքցված են, բայց դրանք նրա ինչի՞ են պետք: Նրան Համիշխանության Մատանին է հարկավոր, նա ինքն է կրել այն, դա նրա Մատանին է, դրա մեջ է դրված նրա հնագույն զորության մասը, և այդ զորությունից չի ծախսվել Մատանին սև շղթային զոդելու վրա: Եթե այդ Մատանին գտնվի, Սաուրոնի իշխանությունը հարյուրապատիկ կուժեղանա, և նույնիսկ Երեք էլֆյանները նրա իշխանությանը կենթարկվեն. նրանց օգնությամբ ամբողջ արվածը կխորտակվի, և նրա ուժը անհաղթելի կդառնա:

Մենք ահավոր ժամանակների նախաշեմին ենք կանգնած: Սաուրոնը կարծում էր, որ Համիշխանության Մատանին այլևս չկա, որ էլֆերն այն ոչնչացրել են, ինչպես և պետք էր անել: Իսկ այժմ նա գիտի, որ Մատանին կա, որ այն գտնվել է: Եվ ինքն է փնտրում՝ որոնումների համար միտքն այս կողմը ծռելով: Այսպիսին է նրա մեծ հույսը և մեծ սարսափը:

— Իսկ ինչո՞ւ, ինչո՞ւ այն չեն հալել, — գոռաց Ֆրոդոն: — Եվ այդ ինչպես է թշնամին զրկվել Մատանուց, եթե ինքն այդքան հզոր է, իսկ դա էլ այդքան թանկ է նրա համար: — Նա Մատանին սեղմել էր ձեռքի մեջ, կարծես թե դեպի այն էին ձգվել արդեն սև մատները:

— Մատանին նրանից խլվել է հնագույն ժամանակներում, — ասաց Գանդալֆը: — Այն ժամանակ էլֆերը զորեղ էին, և մարդիկ էլ դեռ միաբան էին նրանց հետ: Այո, Արևմուտքի մարդիկ սատարեցին նրանց: Վատ չի լինի վերհիշել հին պատմության այդ գլուխը. այդ ժամանակ և արհավիրք կար, և խավարն էր վրա գալիս, բայց նրանց դեմ հառնում էր մեծ խիզախությունը, և այն ժամանակվա սխրագործությունները զուր չանցան: Երևի ես մի անգամ քեզ կպատմեմ այդ պատմությունը, կամ դու կլսել այն ինձանից լավ իմացող որևէ մեկից: Բայց այսօր բավական է, որքան պատմեցինք: Չէ՞ որ ուզում ես իմանալ, թե Մատանին ինչպես է ընկել քեզ մոտ: Դա առանձին պատմություն է:

… Խլուտում, Մեծ գետի՝ Անդուինի ափին, մի ճարտար ու խաղաղ փոքր ժողովուրդ էր ապրում, Բրենդիդուիմյան հոբիթների նման: Նրանք եղեգից մակույկներ էին գործում և լողում գետում, որովհետև սիրում էին այդ գետը: Նրանց մեջ մի պատվարժան ընտանիք կար, մեծ ու ունևոր, գլխավորը դաժան ու հին սովորույթների հետևորդ տատն էր: Այդ ընտանիքից ամենաճարպիկն ու հարցախույզը Սմեագորլ անունով մեկն էր: Նա ամեն ինչ պետք է իմանար, սուզվում էր լճափոսերը, փորփրում կանաչ բլուրների ստորոտները, հասնում մինչև

ծառերի արմատները, բայց աչքերը չէր բարձրացնում վերև, դեպի լեռների գագաթները, երկնքի մեջ խրված ծառերի սաղարթներն ու ծաղիկները: Նրա հայացքը հողին էր գամված:

Նա Դեագորլ անունով մի բարեկամ ուներ, նույնքան սրատես, բայց պակաս ուժեղ, խորաման ու ժիր: Մի անգամ նրանք նավակով լողացին դեպի Հիրիկների դաշտավայրը, մտան մանուշակագույն հիրիկների մեջ ու հասան մինչև փարթամ շամբերը: Սմեագորլը թռավ ափ ու գնաց մարգագետին, իսկ Դեագորլը նավակում մնաց և սկսեց ձուկ որսալ: Հանկարծ մի մեծ ձուկ խայծը կուլ տվեց և նրան էլ իր հետ ձգելով՝ քաշեց ջրի տակ: Հատակում ինչ-որ փայլուն բան նկատելով, նա կարթաթելը բաց թողեց, որքան կարելի էր շատ օդ ներքաշեց, սուզվեց ջրի խորքն ու բռով վերցրեց: Նա դուրս լողաց մի բուռ տիղմ ձեռքում, շնչեց ու լողաց դեպի ափ: Ափից ձեռքը մտցրեց ջրի մեջ, ցեխը լվաց և՝ ասացեք խնդրեմ, նրա ափի մեջ հիասքանչ ոսկե մատանի մնաց. այն զարմանալի շողշողում էր արևի տակ, և Դեագորլը հիանում էր դրանով: Հետևից անլսելի մոտեցավ Սմեագորլը:

— Դա տուր մեզ, փոքրիկ Դեագորլ, — ասաց Սմեագորլը, բարեկամի ուսի վրայից նայելով:

— Ինչո՞ւ, — զարմացավ Դեագորլը:

— Դե, որովհետև այսօր մեր ծննդյան օրն է, սիրելիս, և մենք ուզում ենք նվեր ստանալ, — պատասխանեց Սմեագորլը:

— Մի սրան նայեք, — ասաց Դեագորլը: — Այսօր դու արդեն ինձանից նվեր ստացել ես, կարծում եմ՝ բողոքավոր չես: Իսկ սա ես ինձ համար եմ գտել:

— Ախր ոնց թե, սիրելիս, ի՞նչ ես ասում, մի՞թե հենց այդպես, — մռթմռթաց Սմեագորլը, մատներով բռնեց Դեագորլի կոկորդն ու խեղդեց նրան: Մատանին շատ էր սիրուն ու վառվռուն:

Նա վերցրեց Մատանին ու հագավ մատին:

Ոչ ոք չիմացավ, թե ինչ պատահեց Դեագորլին. նա մահն ընդունեց տնից հեռու տեղում, ու նրա մարմինը խորամանկորեն թաքցվեց: Իսկ Սմեագորլը մենակ վերադարձավ, տուն հասավ որպես անտեսանելի, քանի որ երբ Մեծ Մատանու տիրակալը հագնում է այն՝ մահկանացուների աչքին չի երևում: Անհետանալը շատ դուր եկավ նրան. քի՞չ բան կարելի էր անել այդ ձևով, և նա շատ բան արեց: Նա սկսեց թաքուն դիտել, լսել սրան-նրան և նողկալիություններ անել: Մատանին նրան օժտել էր մանր համիշխանությամբ՝ այնպիսի իշխանությամբ, որը համապատասխան էր նրա չափերին: Ազգուտակը խրտնում էր նրանից (երբ նա անտեսանելի չէր), մոտիկները խույս էին տալիս, փախչում: Նրան աքացի էին տալիս, նա կծում էր: Նա արդեն ճարպիկ գող էր դարձել, քայլում էր ու քթի տակ կատաղած գռմռում. գորլում, գորլում, գորլում. . . Դրա համար էլ նրան անվանեցին Գորլում, նրանից բոլորը զզվում էին ու վռնդում, իսկ տատիկն արգելեց վերադառնալ որջ:

Այդպես էլ նա մենակ թափառում էր, թնկթնկում, գռմռում, փնթփնթում, և ինքն իրեն գանգատվում, թե ինչ չարն են բոլորը: Լալով ու բողոքելով, նա հասավ լեռնային մի սառը վտակի ու սկսեց հոսանքով վեր բարձրանալ: Անտեսանելի մատներով նա ձուկ էր որսում ու կենդանի կուլ տալիս: Մի շատ շոգ օր, երբ նա կռանում է ջրափոսի վրա, ծոծրակը սկսում է վառվել, իսկ ջուրն անտանելի փայլփլում է: Դա նրան շատ է զարմացնում, ախր նա բոլորովին մոռացել էր, որ աշխարհում արև գոյություն ունի: Իսկ երբ հիշում է, բարձրացնում է բռունցքն ու սպառնում արևին:

Հետո նա աչքերն իջեցնում է ու տեսնում Մշուշապատ լեռները, որի ընդերքից բխում է աղբյուրը: Եվ հանկարծ մտածում է. «Ախ, ինչ զով ու մութ կլինի այդ ժայռերի խորքում. . . Այնտեղ արևի աչքից հեռու կլինենք: Լեռներն էլ են արմատները տարածում, նրանց էլ իրենց գաղտնիքներն ունեն, և այդ գաղտնիքները միայն մենք կիմանանք»:

Գիշերը նա բարձրանում է լեռները, գտնում քարանձավը, որից ծորում էր մութ հոսանքը, և որդի նման սողում քարակերտ խորքն ու երկար ժամանակով անհայտանում երկրի երեսից: Եվ անապական խավարը Գորլումի հետ միասին կլանում է նաև Մատանին, այնպես որ նույնիսկ նա, ով կռել էր այդ Մատանին, թեպետ առաջվանից ավելի հզոր էր դարձել, բայց դրա մասին ոչ մի տեղեկություն չուներ:

— Սպասիր, ասացիր Գորլո՞ւմ, — ճչաց Ֆրոդոն, — ինչպե՞ս թե՝ Գորլում: Դա ինչ է, նույն այն զզվանքն է, որին հանդիպել էր Բիլբո՞ն: Ի՞նչ գարշելի է. . .

— Իմ կարծիքով, դա ոչ թե գարշելի է, այլ ողբալի, — առարկեց հրաշագործը, — Չէ՞ որ այդպիսի բան կարող էր հոբիթներից որևէ մեկին էլ պատահել:

— Ոչ մի կերպ չեմ կարող հավատալ, որ Գորլումը հոբիթներին ազգակից է, — կտրեց Ֆրոդոն: — Դա չի կարող պատահել:

— Սակայն սա զուտ ճշմարտություն է, — նկատեց Գանդալֆը: — Ի՞նչ-ինչ, բայց հոբիթների ծագման մասին ես ավելի շատ գիտեմ, քան դուք ինքներդ: Նույնիսկ Բիլբոյի պատմածից ազգակցական կապը լիովին ակներև է: Նա և Գորլումը շատ բաների մասին միատեսակ էին դատում և շատ բաներ միանման ընկալում: Իսկ միմյանց հասկանում էին կես խոսքից, շատ ավելի լավ, քան հոբիթը կհասկանա, ասենք՝ թզուկին, օրքին կամ նույնիսկ էլֆին: Հիշո՞ւմ ես, նրանց հանելուկներն ուղղակի ընդհանուր էին:

— Դա ճիշտ է, — համաձայնեց Ֆրոդոն: — Չնայած միայն հոբիթները չէ, որ հանելուկներ են լուծում ու դրանք բոլորն է, ընդհանուր առմամբ, նման են: Թեպետ հոբիթները երբեք խաբեբայությամբ չեն զբաղվում, իսկ Գորլումը միայն այդ էր անում: Չէ՞ որ այդ խաղը հորինեց, որ կարողանա հարմար պահը որսալ ու Բիլբոյին հանկարծակիի բերել: Նրա համար շատ հաճելի խաղ էր ստացվում. կշահի՝ ուտելու բան կունենա, կտարվի՝ մեծ դժբախտություն չէ:

— Վախենում եմ, որ դա այդպես էլ եղել է, — ասաց Գանդալֆը: — Բայց մի ուրիշ բան էլ է եղել, որը առայժմ դու չըմբռնեցիր: Նույնիսկ Գորլումը ամբողջապես կորած էակ չէ: Նա որոշ մարդկանցից ավելի ամուր դուրս եկավ, ինչքան չլինի հոբիթներին ազգակից է: Նրա հոգում նվիրական մի անկյուն էր մնացել, որտեղ լույս էր թափանցում, ինչպես արևը ճեղքից, անցյալից հասնող լույս: Եվ, ըստ երևույթին, նրան հաճելի էր նորից լսել քամու և ծառերի, արևով ողողված խոտի և շատ ու շատ այլ մոռացված բաների մասին հիշեցնող բարի ձայնը:

Բայց դե, իհարկե, վերջիվերջո սև անհաղթահարելի չարությունը նորից կատաղի բորբոքվեց նրա մեջ, իսկ ամոքիչ մոտակայքում չկար: — Գանդալֆը հառաչեց: — Ավա՜ղ. . . Նրա համար քիչ հույս կա: Բայց այնուամենայնիվ կա, նույնիսկ նրա համար, չնայած շատ երկար է տիրել Մատանուն, այնքան երկար, որ ինքն էլ չի հիշում, թե երբվանից: Ճիշտ է, նա հազվադեպ էր հագնում այն՝ անթափանց խավարում ինչի՞ն էր պետք: Դրա համար էլ չէր «հալվել»: Նա տաշեղի պես բարակ էր, մկանուտ ու դիմացկուն: Բայց նրա հոգին Մատանին մաշել էր, և կորստի ցավը անտանելի էր:

Իսկ «լեռների բոլոր խոր գաղտնիքները» անծայր գիշերներ դարձան. ոչ մի բան չկար հայտնաբերելու, էլ ինչի՞ համար ապրել: Միայն գողունի սնունդ ճարիր, հիշիր հին վիրավորանքներն ու նորերը հնարիր: Ողորմելի էր նրա կյանքը: Նա ատում էր խավարը, իսկ լույսն՝ ավելի, նա ատում էր ամեն ինչ, իսկ ամենից ավելի՝ Մատանին:

— Այդ ինչպե՞ս, — զարմացավ Ֆրոդոն: — Չէ որ Մատանին նրա «սքանչելին» էր, նա միայն դրա մասին էր մտածում. . . Իսկ եթե ատում էր, ինչո՞ւ չէր շպրտում:

— Դու արդեն շատ բան ես լսել, Ֆրոդո, և ժամանակն է, որ հասկանաս, — ասաց Գանդալֆը: — Նա Մատանին ատում էր և սիրում, ինչպես սիրում ու ատում էր ինքն իրեն: Իսկ ազատվել նրանից չէր կարողանում: Այդքան կամք չուներ: Համիշխանության Մատանին, Ֆրոդո, ինքն իր պահակն է: Մատանին կարող է դավաճանորեն սահել մատից, իսկ տերը երբեք չի գցի այն: Կարող է պատահել, իհարկե, համարյա կատակով, որևէ մեկին պահ տա, այն էլ սկզբում, քանի դեռ Մատանին տիրոջից կառչած չէ: Որքան ինձ հայտնի է, միայն Բիլբոն է վճռել հանձնել Մատանին և հանձնել է: Այն էլ ո՛չ առանց իմ օգնության: Բայց նույնիսկ Բիլբոն Մատանին չէր թողնի բախտի քմահաճույքին, չէր գցի այն: Ոչ, Ֆրոդո, հարցը ոչ թե Գորլումն էր որոշում, այլ Մատանին ինքը: Եվ վճռեց:

— Ի՞նչ է, վճռեց Գորլումին փոխարինել Բիլբոյո՞վ, — հարցրեց Ֆրոդոն: — Ավելի լավ չէ՞ր լինի գլորվել որևէ օրքի մոտ:

— Դե, դա նույնպես հեշտ գործ չէ, — ասաց Գանդալֆը: — Եվ դու չէ, որ պետք է ծիծաղես դրա վրա: Այո, դու զարմանում ես, որ Բիլբոն հենց պետք եկած ժամանակ հայտնվեց այնտեղ, պատահաբար ափլփեց խավարում ու գտավ. . . Բայց չարը մեն մենակ չի տիրում աշխարհին,

Ֆրոդո: Մատանին ուզում էր վերադառնալ իր Տիրակալի մոտ՝ իզուր չէր, որ այն գտավ խեղճ Դեագորլը, իսկ հետո էլ խեղդամահ արվեց: Եվ իզուր չէր, որ Գորլումը տիրացավ դրան: Գորլումին սա քիչ-քիչ հյուծում էր՝ բայց հետո ի՞նչ. . . Նա մանրախնդիր է ու ողորմելի. և քանի Մատանին նրա մոտ էր, մնում էր իր լճակում: Եվ ահա, երբ Մատանու իսկական տիրակալը ուժ հավաքեց և իր սև մտքերով ձգվեց Մատանու հետևից, սա Գորլումին լքեց: Սակայն Մատանին գտավ ոչ թե մի օրք, ոչ թե մի թրոլ, ոչ թե մի մարդ, այլ հոբիթստանցի Բիլբոն:

Կարծում եմ, որ դա պատահել է Թշնամու կամքին հակառակ: Ըստ երևույթին, այդպես էր վիճակված, որ Մատանին գտնի ոչ այլ ոք, այլ հատկապես Բիբլոն: Ստացվում է, որ քեզ էլ վիճակված էր այն ժառանգելը: Դա ինձ մի փոքր հույսի նշույլ է տալիս:

— Իսկ ինձ չի տալիս, — առարկեց Ֆրոդոն: — Չնայած, ճիշտն ասած, ես քեզ այնքան էլ լավ չեմ հասկանում: Ավելի լավ է ասես, թե ինչպես ես այդ ամենն իմացել Մատանու ու Գորլումի մասին: Թե՞ դու խելքը գլխին ոչինչ չգիտես, այլ պարզապես հնարում ես:

Գանդալֆը նայեց Ֆրոդոյին ու նրա աչքերը փայլեցին:

— Որոշ բան ես գիտեի, իսկ որոշ բան՝ պարզեցի, — ասաց նա: — Բայց գիտե՞ս, որ չեմ պատրաստվում քեզ իմ բոլոր որոնումների մասին զեկուցել: Այնքանն էլ բավական է, որ քո Մատանին, պարզվում է, Համիշխանության Մատանին է՝ թեկուզ միայն կրակե մակագրությունից դատելով. . .

— Իսկ դու ե՞րբ հայտնաբերեցիր, — ընդհատեց նրան Ֆրոդոն:

— Քո աչքի առաջ, քո հյուրասենյակում, — չոր պատասխանեց հրաշագործը: — Բայց ես նախապես գիտեի, որ դա պարզելու եմ: Շատ եմ ճանապարհորդել և շատ երկար եմ փնտրել, իսկ դա իմ վերջին փորձն էր, վերջին ապացույցը և հիմա ամեն ինչ պարզ է: Հեշտ չէր պարզաբանելը, թե ինչ կապ ունի այստեղ Գորլումը և ինչպես է խցկվել այս հնադարյան արյունոտ պատմության մեջ: Երևի ես իմ կռահումները պետք է Գորլումից սկսեի, բայց հիմա ենթադրություններ չեմ անում: Ուղղակի գիտեմ ինչպես է եղել: Ինքս տեսա նրան:

— Գորլումի՞ն ես տեսել, — անմիջապես բացականչեց Ֆրոդոն:

— Այո, տեսել եմ: Առանց նրա հասկանալ չես կարող, դա պարզից էլ պարզ է: Բայց դե նրան հասնելն էլ այնքան դյուրին չէր:

— Իսկ ի՞նչ եղավ հետագայում, Բիլբոյից հետո. . . Դու գիտե՞ս:

— Շատ աղոտ: Ինչ որ քեզ պատմեցի՝ Գորլումի պատմածից էր, չնայած նա, իհարկե, հո այդպես չէր պատմել: Գորլումը սոսկալի ստախոս է և նրա յուրաքանչյուր խոսքը հարկավոր է լինում զտել: Օրինակ, Մատանին նրա մոտ այդպես էլ մնում է «ծննդյան օրվա նվեր», իբրև թե տատիկից, որն, իբր, այդպիսի զրտի-պրտի զարդեղեն շատ է ունեցել: Հիմա՛ր մոգոնվածք: Իհարկե, Սմեագորլի տատը ազդեցիկ ու տնտես կին է եղել, բայց որ նրա տնտեսության մեջ Համիշխանության Մատանիներ գտնվեին՝ դա հազիվ թե, էլ ո՛ւր մնաց, որ ծննդյան տոներին նվիրեր թոռներին: Սակայն սուտը՝ սուտ, բայց այնուամենայնիվ ճշմարտություն կա, թեպետ և շուռ տված:

Գորլումը ոչ մի կերպ չէր կարողանում մոռանալ, որ սպանել է Դեագորլին և ամբողջ ուժով պաշտպանվում էր սեփական հիշողությունից. մթության մեջ սև ոսկորներ էր կրծում, միևնույն սուտը իր «սքանչելիին» կրկնելով այնքան, մինչև ինքը համարյա լրիվ հավատաց դրան: Չէ՞ որ իսկապես այն ժամանակ նրա ծննդյան օրն էր, և Դեագորլը պետք է Մատանին իրեն նվիրեր: Դրա համար էլ այն գտնվեց: Դա ծննդյան օրվա ամենահիսկական նվեր է և այլն և այլն:

Ես ամեն կերպ համբերում էի, դիմանում նրա անկապ շատախոսությանը, որովհետև հարկավոր էր պարզել եղելությունը, և ստիպված եղա խիստ վարվել նրա հետ. ես նրան սպառնացի և, վերջապես, ամեն ինչ պատմեց այնպես, ինչպես եղել էր՝ տեղը տեղին, արցունք ու փսլինք թափելով: Ես նրանից դուրս քաշեցի և հանելուկների, և Բիլբոյի փախուստի մասին եղածը, բայց այ դրանից հետո մնացածը՝ այստեղ նա ասես համր կտրեց և միայն երբեմն-երբեմն լացախառն մռայլ ակնարկներ էր անում: Երևում էր, ինչ-որ բանի սարսափը նրա լեզուն կաշկանդում էր, ու ես չկարողացա ոչինչ անել: Նա լացակումած մռթմռթում էր, որ ոչ ոքի չի զիջի և ոմն մեկը դեռ կիմանա, թե ինչ է նշանակում իրեն

ոտնահարել, խաբել ու թալանել: Այժմ Գորլումը այնքան լավ, հրաշալի բարեկամներ ունի, և նրանք, ում որ պետքն է, շատ լավ էլ ցույց կտան, թե օրքի ձեռքն ինչ թափ ունի: Վերջիններս նրան կօգնեն, իսկ ավազակ Պարկինսը դեռ պատասխան կտա: Նա դեռ պատասխան կտա ու գլխին կխփի, անընդհատ մռթմռթում էր Գորլումը: Նա ահավոր ատում է Բիլբոյին ու սարսափելի անիծում: Բայց առավել վատն այն է, որ նա գիտե, թե ով է Բիլբոն ու որտեղից է հայտնվել:

— Ախր նրան ո՞վ է ասել, — հուզվեց Ֆրոդոն:

— Դե եթե գործը դրան հասնի, ապա Բիլբոն ինքն է հիմարաբար ներկայացել նրան, իսկ այդքանից հետո դժվար չէ պարզելը, թե նա որտեղից է հայտնվել՝ եթե, իհարկե, դուրս սողա: Եվ Գորլումը դուրս է սողացել, համա՛ թե դուրս է սողացել: Մատանու կարոտն անտանելի էր՝ այդ կարոտը գերազանցեց օրքերի նկատմամբ տածած սարսափը և նույնիսկ նրա արևավախությունը: Տխրեց նա մեկ, նույնիսկ երկու տարի: Հասկանո՞ւմ ես, թեպետ Մատանու կորուստը տանջում էր նրան, բայց արդեն չէր հյուծում, ինչպես առաջներում, և Գորլումը մի քիչ սկսեց կենդանանալ: Ծերությունը ճնշում էր նրան, սարսափելի ճնշում էր, բայց մշտական զգուշությունն անցել էր, դրան գումարած նաև, որ մահվան չափ սոված էր:

Լույսը՝ լուսնի, թե արևի, նրա համար անտանելի ու ատելի էր: Սա արդեն երևի այդպես էլ կմնա մինչև կյանքի վերջը, իսկ խորամանկության ու ճարպկության համար ձեռքը գրպան տանելու կարիք չունի: Նա հասկացավ, որ կարելի է քողարկվել և՛ արևի, և՛ լուսի լույսից, կարելի է արագ ու անաղմուկ դուրս գալ մութ գիշերով, երբ խավարի մեջ տեսնում են միայն նրա սպիտակավուն աչքերը, և որսալ փոքրիկ ու անզգույշ գազանիկների: Քամին նրան թարմացրեց, սկսեց կուշտ ուտել, դրա համար էլ ավելի ուժեղ ու համարձակ դարձավ: Չարքանտառը հեռու չէր, դե նա էլ որոշեց ու հասավ այնտեղ:

— Այնտեղ էլ դու նրան հանդիպեցի՞ր, — հարցրեց Ֆրոդոն:

— Այնտեղ էլ տեսա նրան, — պատասխանեց Գանդալֆը, — բայց նա միանգամից չէր ընկել այդտեղ, սկզբում գնացել էր Բիլբոյի հետքերով: Իսկ հետո. . պատկերացրու, այդպես էլ մի կարգին չգիտեմ, թե ինչ է եղել հետո. նա ինչ-որ անհեթեթություններ էր դուրս տալիս, հայհոյանքներից ու սպառնալիքներից շնչակտուր լինելով: «Ինչ կար նրա գրպանում, — մռթմռթում էր նա: — Չէ, գլխի չընկա, որ նրա մոտ, նրա գրպանում, սքանչելին էր: Օ՛ձ, օ՛ձ, օ՛ձի ճուտ: Անազնիվ հարց, անազնիվ: Նա խարդախություն արեց, նա, և ոչ թե ես, նա կանոնները խախտեց: Պետք էր իսկույն նրան խեղդել, ճի՞շտ է, իմ սքանչելի. . . Ոչինչ, իմ սքանչելի, ոչինչ, դեռ կխեղդենք»:

Եվ այդպես անվերջ: Դու ահա արդեն կնճռոտում ես դեմքդ, իսկ ես օրերով դիմանում էի դրան, առավոտից մինչև երեկո: Բայց դե իզուր չէր: Նրա բերանից թռցրած որոշ բառերից այնուամենայնիվ հասկացա, որ նա ճլմփացրել է մինչև Էսգարոթ, աչք է ածել ու ականջը կախ պահել քաղաքի փողոցներում: Մեծ նորությունները ամայի տեղերում թնդում են, բոլորը միայն Բիլբոյի մասին էին խոսում, միահյուսելով եղածն ու չեղածը: Դե, իսկ վերադարձի ճանապարհին, Հինգ Զորաց Ճակատամարտում հաղթելուց հետո մենք էլ անհայտ չմնացինք: Գորլումը ականջները սրած՝ արագորեն ինչ իրեն հարկավոր էր լսեց ու հասկացավ:

— Ինչո՞ւ այն ժամանակ նա մինչև վերջ չհետևեց Բիլբոյին, — հարցրեց Ֆրոդոն, — թե՞ եղել է մեզ մոտ, Հոբիթստանում:

— Այ հենց բանն էլ այդ է, որ չի եղել, — ասաց Գանդալֆը: — Մեզ մոտ ուզեցել է գալ, հասել է մինչև Մեծ գետը և հանկարծ շուռ եկել: Ճանապարհի հեռավորությունից հազիվ թե վախենար, նա այդպիսիներից չէ: Ոչ, ինչ-որ բան նրան ճանապարհից շեղել է: Եվ իմ բարեկամները, որոնք բռնել էին նրան ինձ համար, նույն կարծիքին էին:

Անտառի էլֆերը բացահայտեցին նրա թարմ հետքերը: Դրանք անցնում էին Չարքանտառի միջով և հետ դառնում. ճիշտ է, դրանց չհաջողվեց բռնել Գորլումին: Իսկ անտառը լի էր նրա մասին զզվելի հիշողություններով, բոլոր գազանիկներն ու թռչունները սարսափահար էին եղել: Լսվում էր, որ նոր հրեշ է հայտնվել՝ արյունախում-ուրվական, որից ճագուկները փրկություն չունեն ո՛չ ծառերի վրա, ո՛չ բներում:

Չարքանտառի արևմտյան ծայրից հետքը հետ էր շրջվում, հետո գալարվելով գնում էր հարավ, անտառից դուրս գալիս ու կորչում: Այ այստեղ էլ ես մի մեծ սխալ թույլ տվեցի: Այո, Ֆրոդո, սխալ, և ո՛չ առաջինը, բայց միայն վախենում եմ, որ դա ամենավտանգավորը լինի: Ես

նրան հանգիստ թողեցի՝ թող ուր ուզում է գնա: Մի կույտ անհետաձգելի գործեր ունեի և առաջվա պես հավատում էի Սարումանի իմաստնությանը:

Այդ ժամանակվանից անցել է կես դարից ավելի, ու ես իմ սխալի պատճառով սև, ծանր օրեր ապրեցի: Երբ հասկացա, որ Գորլումն ինձ խիստ անհրաժեշտ է, իսկ դա Բիլբոյի մեկնելուց հետո էր, նրա հետքը շատ վաղուց արդեն կորել էր: Հազիվ թե ես Գորլումին գտնեի, բայց ինձ օգնության եկավ Արագորն անունով հավատարիմ բարեկամս, մեր ժամանակների լավագույն հետքագետն ու որսորդը: Նրա հետ միասին տակնուվրա արեցինք ողջ Խլուտը, առանձնապես հույս չտածելով: Եվ երբ հուսահատված որոշեցի վերջ տալ որոնումներին, հանկարծ Գորլումը գտնվեց: Բարեկամս համարյա հրաշքով վերադարձավ մահացու վտանգավոր ճանապարհորդությունից և նրան քարշ տալով բերեց իր հետ:

Թե ուր էր անհետացել Գորլումը, այդպես էլ գաղտնիք մնաց: Նա արցունք էր հեղում, մեզ գարշելի ու դաժան էր անվանում, իսկ կոկորդում կլթկլթում էր. «գորրրլում», «գորրրլում», — իզուր չէ, որ այդպես են անվանել նրան: Նույնիսկ կրակի սպառնալիքի տակ նա միայն հեծկլտում էր, կուչ գալիս, կոտրտում երկար ձեռքերն ու լիզում մատները, կարծես դրանք այրված էին, ասես դրանք նրան հիշեցնում էին ինչ-որ վաղեմի դաժան տանջահարություն: Նա ոչինչ չասաց, բայց վախենում եմ, որ անկասկած դանդաղ, քայլ առ քայլ, ծածուկ հասել է հարավ և ընկել Մորդոր:

Սենյակը սուզվեց ծանր լռության մեջ, և Ֆրոդոն լսեց, թե ինչպես է տկտկում իր սիրտը: Դրսում նույնպես ամեն ինչ կարծես մեռավ, նույնիսկ Սամի մկրատը դադարեց չխկալուց:

— Այո, Մորդոր, — կրկնեց Գանդալֆը: — Դա հասկանալի է, Մորդորը ամեն տեսակ չարության ու նախանձի ապաստարան է, չարագործներին այնտեղ է հավաքում Սև Տիրակալը:

Չէ՞ որ Թշնամու Մատանին աղավաղել էր Գորլումի հոգին, ու նա հլու հնազանդ էր համառ կանչին: Ընդ որում բոլորն էին փսփսում այն մասին, որ Մորդորը նորից պարուրված է խավարով և որ այնտեղ մոլեգնում է հեղձուկ ու դաժան ատելությունը: Եվ Գորլում մտածում էր, որ այնտեղ, միայն այնտեղ էին նրա իսկական բարեկամները. հենց նրանք էլ կօգնեին իրեն վրեժը լուծելու:

Դժբախտ հիմար. . . Այո, նա հասել է Մորդոր և շատ բան է իմացել, նույնիսկ չափազանց շատ: Նա երկար թափառել է այդ սարսափելի երկրի սահմանների մոտ, մինչև որ բռնվել է և ենթարկվել օտարների համար պարտադիր հարցաքննության: Արագորնը Գորլումին որսացել է, երբ վերջինս երկար ժամանակ այնտեղ մնալուց հետո վերադառնալիս է եղել: Գուցե նրան ուղարկել են, կամ ինքն է որևէ նողկալի բան մտածել: Մի խոսքով, դա չէ կարևորը, կարևորն այն է, որ նրանից եկող վնասն արդեն անցած է:

Այո, բայց նրա տրված վնասն անդառնալի է: Քանզի Թշնամին նրանից իմացել է, որ Համիշխանության Մատանին գտնվել է: Հայտնի է, թե Մատանին որտեղ է Գորլումի ձեռքն ընկել: Հայտնի է, որ դա Մեծ Մատանին է, որը հավիտենական կյանք է պարգևում: Հասկանալի է, որ դա Երեք էլֆական մատանիներից մեկը չէ, էլֆերը դրան պահպանել են, և դրանց մեջ սրիկայություն չկա, դրանք մաքուր են: Հասկանալի է, որ դա թզուկների յոթ մատանիներից մեկը չէ, և ոչ էլ ինքը ուրվականների մատանիներից մեկը: Թշնամին հասկացել է, որ այդ Մատանին հենց Համիշխանության Մատանին է: Եվ, դրան էլ ավելացրած՝ իմացել է հոբիթների ու Հոբիթստանի մասին:

Կարող է և այդպես լինել, որ նա հիմա փնտրում է Հոբիթստանը, եթե արդեն չի գտել: Եվ թող հայտնի լինի քեզ, Ֆրոդո, որ ձեր տոհմի անունը նույնպես մնացած ամեն ինչի հետ ջրի երես է դուրս եկել:

— Բայց չէ՞ որ դա սարսափելի է, — ճչաց Ֆրոդոն: — Սարսափելիից էլ սարսափելի, նույնիսկ տհաճ ակնարկներն ու մշուշապատ զգուշացումներն ինձ այդպես չէին վախեցնում: Գանդա՛լֆ, ո՛վ Գանդա՛լֆ, իմ հուսալի բարեկամ, ի՞նչ անեմ ես. . . Այ հիմա իսկապես սարսափում եմ: Ասա՛, Գանդալֆ, ես ի՞նչ անեմ. . . Այնուամենայնիվ, ի՜նչ ափսոս է, որ Բիլբոն այդ սրիկային չի դաշունահարել այն ժամանակ, երբ այդքան հարմար առիթ կար:

— Ասում ես՝ ափսո՞ս: Ախր հենց այդ ափսոսանքն է հետ պահել նրա ձեռքը, ափսոսանքն ու գութը՝ առանց ծայրահեղ անհրաժեշտության սպանել չի կարելի: Եվ դրա դիմաց, իմ

բարեկամ Ֆրոդո, նա փոքր հատուցում չի ստացել: Իզուր չէ, որ նա չարի կամակատար չի դարձել, իզուր չէ, որ փրկվել է՝ և բոլորը նրա համար, որ խղճից է սկսել. . .

— Ներիր, խոսքը դրա մասին չէ, — ասաց Ֆրոդոն: — Սարսափը պատել է ինձ, բայց, միևնույնն է, Գորլումին խղճալը հիմարություն է:

— Դու նրան չես տեսել, — ասաց Գանդալֆը:

— Չեմ տեսել և չեմ էլ ուզում տեսնել, — կտրեց Ֆրոդոն: — Իսկ քեզ պարզապես չեմ հասկանում: Մի՞թե դու, էլֆերը և չգիտեմ էլ ովքեր, մի՞թե դուք խնայեցիք Գորլումին նրա բոլոր սև գործերից հետո: Ախր նա օրքից վատն է և նույնիսկ թշնամի է: Նա արժանի է մահվան:

— Արժանին՝ արժանի էր, խոսք չկա: Եվ նա, և շատ ուրիշները, նրանց անունը լեգեոն է: Իսկ հապա մի հաշվիր այնպիսիներին, որոնք պետք է ապրեին ու հա ապրեին, բայց մեռած են: Կարո՞ղ ես նրանց հարություն տալ, որպեսզի ամեն մեկն ըստ արժանվույն ստանա: Քանի որ ոչ՝ ուրեմն և մի շտապիր ոչ ոքի մահվան դատապարտել: Քանզի նույնիսկ ամենաիմաստուններն անկարող են ամեն ինչ կանխատեսել: Գորլումի ուղղվելու հույսը փոքր է, շատ փոքր, բայց ո՞վ կարող է երաշխավորել, թե այն բոլորովին չկա: Նրա ճակատագիրը միահյուսված է Մատանու ճակատագրին, և իմ սիրտը վկայում է, որ, դեռևս չգիտեմ ի չարը, թե ի բարին, ինչ-որ բանի համար նա պետք է գալու: Օրհասական ժամին Բիլբոյի գթասրտությունը կարող է շատերի փրկության գրավականը դառնալ, ի դեպ նաև՝ քո: Այո, մենք նրան խնայեցինք՝ նա ծեր է և խղճուկ, այդպիսիներին չեն դատապարտում: Նա անտառային էլֆերի մոտ բանտարկված մնաց, հուսով եմ, այնտեղ նրա հետ մեղմ են վարվում:

— Միևնույն է, — ասաց Ֆրոդոն, — գուցե իրոք հարկավոր չէր Գորլումին սպանել, բայց ինչու էր Բիլբոն Մատանին պահում իրեն: Իսկ գլխավորը՝ ի՞նձ ինչու հասավ այն: Չէ որ ես այս բոլորի հետ ոչ մի կապ չունեմ: Ինչո՞ւ դու ինձնից չվերցրիր, ինչո՞ւ չստիպեցիր դեն նետել կամ ջարդուփշուր անել:

— Նետե՛լ, ջարդուփշո՛ւր անել, — ջղայնացած կրկնեց հրաշագործը: — Ի՞նչ է, իմ խոսքերը ականջներիդ կողքով բա՞ց թողեցիր: Խոսելուց առաջ մտածիր: Նետել այն կարելի է միայն անխելքության հետևանքով: Կախարդական Մատանիները անհետ չեն կորչում. ժամանակի ընթացքում նրանք վերադառնում են կյանք, և ի՞նչ իմանաս ով կգտնի, ինքդ մտածիր: Չէ՞ որ Մատանին կարող է ընկնել Թշնամու ձեռքը, դե և անպայման կընկնի. նա Մատանուն դեպի իրեն է ձգում հզոր, տառապալից ջանքերով:

Այո, սիրելի Ֆրոդո, քո գլխին մեծ վտանգ է կախված, դրա համար էլ ես անհանգիստ եմ: Բայց հիմա վիճակն այնպիսին է, որ ամենից վտանգավորը՝ ռիսկի չդիմելն է, նույնիսկ քեզ ռիսկի չենթարկելը. սակայն հիշիր, որ երբ ես հեռացա, դու աչալուրջ հսկողության ու պահպանության տակ էիր: Ես գիտեմ, որ ոչ մի անգամ Մատանին չես հագել, և, ուրեմն, այն քեզ չի ստրկացրել. Առայժմ որ՝ ոչ. . . Իսկ ինը տարի առաջ, մեր վերջին տեսակցության ժամանակ, ես դեռ ոչինչ կարգին չգիտեի:

— Լավ, դեն նետել չի կարելի, գոնե կարելի՞ է ջարդուփշուր անել. չէ՞ որ ինքդ ասացիր, որ վաղուց, շատ վաղուց էր պետք այդ անել, — հուսահատված բացականչեց Ֆրոդոն: — Կզգուշացնեիր ինձ, որ հարկավոր է դա անել, և ես հիմա ազատված կլինեի:

— Ազատված կլինեի՞ր. . . Իսկ ինչպե՞ս, փորձե՞լ ես. . .

— Ոչ, չեմ փորձել: Բայց դե, երևի, որևէ կերպ կարելի է ճզմել կամ հալեցնել. . .

— Իսկ դու փորձիր, — ասաց Գանդալֆը: — Վերցրու ու փորձիր:

Ֆրոդոն նորից գրպանից հանեց Մատանին ու տնտղեց: Այն մաքուր էր և հարթ, առանց որևէ մակագրության: Ոսկին պայծառ փայլում էր, և Ֆրոդոն մտածեց. ինչ հոծ ու հրաշալի ձուլվածք է, ինչ զարմանալի ողորկ է: Զարմանալի և իսկապես թանկագին Մատանի: Նա հանեց այն, որ նետի կրակի մեջ, բայց հանկարծ հասկացավ, որ չի կարող այդ անել, որ ինքդ քեզ չես կոտրի: Նա վարանմունքով ծանրութեթև էր անում Մատանին ափի մեջ, հիշելով Գանդալֆի չարագուշակ պատումը. վերջապես բոլոր ուժերը հավաքեց և զգաց, որ Մատանին շուտափույթ գրպանն է մտցնում:

Գանդալֆը անուրախ ծիծաղեց:

— Ահա, տեսնո՞ւմ ես, Ֆրոդո, արդեն դու չես կարողանում բաժանվել Մատանուց, պահպանում ես վնասվելուց: Ես քեզ «ստիպել» չէի կարող՝ թերևս միայն կոպիտ ուժով, իսկ դրան էլ դու չէիր դիմանա: Եվ ոչ մի ուժով Մատանին ջարդուփշուր չես անի: Ինչքան ուզում ես հարվածիր նրան դարբնոցի վեց փթանոց մուրճով՝ դրա վրա հետք էլ չի մնա: Դե դու ինչ, երբ ես՝ որ ես եմ, էլի դրան ոչինչ անել չեմ կարող:

Քո բուխարիկի կրակում նույնիսկ սովորական ոսկին էլ չի հալվի: Իսկ Մատանին, դու տեսար, այն կրակի մեջ միայն թարմացավ, նույնիսկ չշիկացավ: Եվ քո ողջ Հոբիթստանում ոչ մի այդպիսի դարբին չկա, որ կարողանա գոնե մի փոքր տափակացնել այն: Նույնիսկ թզուկների քուրան ու մուրճը դրան չեն վնասի: Ասում են, թե Կախարդական Մատանիները հալվում են վիշապի կրակի մեջ, բայց այսօրվա վիշապները խղճուկ արարածներ են, նրանցից որի՞ ուժը կպատի հալել Մեծ Մատանին, որը Սաուրոնն անձամբ է կռել:

Միայն մի միջոց կա. գնալ Օրոդրուին՝ ճակատագրի լեռը, և Մատանին գցել նրա հրակեզ ընդերքը. . . Եթե դու իսկապես ցանկանաս, որ այն հալվի ու հավիտյանս չհասնի Թշնամուն:

— Դե չէ, ես, իհարկե, շատ եմ ուզում, որ այն. . . չընկնի Թշնամու ձեռքը, — շտապ վրա տվեց Ֆրոդոն: — Միայն թե թող դա անեմ ոչ ես, թող անի ուրիշ որևէ մեկը, մի՞թե իմ ուժերը կներեն այդպիսի քաջագործության համար: Առհասարակ, ինչո՞ւ Մատանին ինձ հասավ, ես ի՞նչ կապ ունեմ: Եվ ինչո՞ւ հատկապես ես. . .

— Հարցեր իրար հետևից, — ասաց Գանդալֆը, — իսկ քեզ ի՞նչ պատասխաններ են հարկավոր. . . Որ դու քաջագործության համա՞ր չես ընտրված: Ո՛չ, ոչ քաջագործության համար: Դու ո՛չ ուժ ունես, ո՛չ իմաստնություն: Սակայն ընտրված ես դու: Իսկ դա նշանակում է. ստիպված կլինես դառնալ ուժեղ, իմաստուն ու քաջազուն:

— Ախր ես ինչպե՞ս. . . Դու, Գանդալֆ, և ուժեղ ես, և իմաստուն, վերցրո՛ւ ինձնից Մատանին, վերցրո՛ւ:

— Ո՛չ, — ճչաց Գանդալֆն ընկրկելով: — Եթե այդպիսի սարսափելի հզորություն ունենայի, ես կդառնայի Մատանու ամենազոր ստրուկը: — Նրա աչքերը փայլեցին, դեմքը ներսից լուսավորվեց մութ կրակով: — Ո՛չ, ո՛չ, ես չեմ ուզում Մատանին, Սև Տիրակալը ահավոր է, իսկ չէ որ ես կարող եմ ավելի ահավոր դառնալ: Մատանին գիտի դեպի իմ սիրտը տանող ճանապարհը, գիտի, որ ինձ տանջում է խղճահարությունը բոլոր թույլերի ու անպաշտպանների նկատմամբ, իսկ իր օգնությամբ՝ օ՜հ, որքան հուսալի կպաշտպանեի ես նրանց՝ որպեսզի հետո դարձնեի իմ ստրուկները: Դու իմ վզին մի փաթաթիր: Ես չեմ կարող սոսկ պահապան լինել, Մատանին չափազանց հարկավոր է ինձ: Իմ առջև խավար է ու մահ:

Նա մոտեցավ պատուհանին և հետ քաշեց վարագույրները: Սենյակը նորից հեղեղվեց արևով: Պատուհանի տակով, շվշվացնելով, անցավ Սամը:

— Ինչպես տեսնում ես, — ասաց հրաշագործը, դեպի Ֆրոդոն շրջվելով, — ստիպված պետք է ինքդ որոշես: Բայց ես քեզ չեմ լքի: — Եվ նա ձեռքը դրեց Ֆրոդոյի ուսին: — Ես կօգնեմ քեզ տանելու այդ բեռը, քանի այդ բեռը քոնն է: Միայն թե հապաղել պետք չէ: Թշնամին չի դանդաղում:

Լռություն տիրեց: Գանդալֆը նորից նստեց բազկաթոռին և ծխամորճը ֆսֆսացրեց՝ ուրեմն մտքերի մեջ է ընկել: Աչքերը կիսախուփ էր արել ու կոպերի տակից աչալուրջ հետևում էր Ֆրոդոյին: Իսկ Ֆրոդոն անթարթ նայում էր բուխարիկի ալ կարմիր ածուխներին, ասես նոր էր դրանք տեսել, ու նրան թվում էր, թե կրակի հորի մեջ է նայում: Նա մտածում էր հինավուրց ու ահարկու Լեռան բոսոր վիհերի մասին:

— Այդպես, — ասաց վերջապես Գանդալֆը: — Դե, ինչի՞ մասին ես մտածում: Ի՞նչ որոշեցիր. . .

— Ոչի՛նչ, — խուլ պատասխանեց Ֆրոդոն: Բայց կրակե խավարը հանկարծ բաց թողեց նրան: Նա նորից նստած էր լուսավոր սենյակում՝ հիանալով պայծառ լուսամուտով և արևավառ այգով: — Այսինքն՝ որոշեցի: Ես քո ասածներից բոլորը չէ, որ հասկանում եմ, բայց առայժմ երևի ստիպված կլինեմ Մատանին ինձ մոտ թողնել ու պահպանել այն, իսկ հետո ինչ լինելու է թող լինի:

— Քեզ շատ բան կարող է պատահել, — ասաց Գանդալֆը, — բայց դու բավական լավ ես սկսում: Մատանին քեզ դեռ շուտ չի շեղի դեպի չարը:

— Դու դա ավելի լավ գիտես, — ասաց Ֆրոդոն: — Միայն թե լավ կլիներ ավելի հուսալի պահապան գտնեիր: Իսկ առայժմ, եթե դու ճիշտ ես, ապա ես մեծ վտանգի մեջ եմ, և իմ բարեկամներն էլ ինձ հետ: Ըստ երևույթին, հազիվ թե ինձ հաջողվի պահպանել Մատանին և բարեկամներիս, եթե մնամ տանը: Ստիպված պետք է լինեմ լքել Պարկուտը, լքել ու հեռանալ Հոբիթստանից և առհասարակ գնալ ուր աչքս կտրի: — Նա հառաչեց: — Միայն թե Հոբիթստանում ամեն ինչ մնա այնպես, ինչպես եղել է, ճիշտ է, ես մեկ-մեկ հոբիթներին հիմարության համար անիծել եմ վերջին խոսքերով, նրանց երկրաշարժ ու վիշապների ներխուժում հղելով, բայց այս դեպքում՝ ոչ, ավելի լավ է այդպիսի բան չլինի: Քանի որ Հոբիթստանը թիկունքումս է, հեշտ է ինձ համար՝ գիտեմ, որ նահանջը հնարավոր է, թեպետ նահանջելու տեղ չկա:

Ես, իհարկե, առաջ էլ էի մտածում, չմեկնե՞մ արդյոք, ինչ-որ խնջույք էի պատկերացնում, արկածներ, Բիլբոյի արկածների պես կամ նույնիսկ ավելի հետաքրքիր՝ չէ՞ որ տարբեր արկածներ են լինում և բոլորն էլ լավ են վերջանում: Իսկ հիմա անընդհատ վախը սրտումս է, մահն էլ կրնկակոխ: Դե, ինչպես երևում է, ստիպված եմ լինելու մենակ ճանապարհորդել, քանի որ ինձ այդպիսի ճակատագիր է վիճակվել՝ փրկել Հոբիթստանը: Միայն թե ես ախր փոքր եմ, այնտեղ բոլորի համար օտար եմ, և չգիտեմ ինչպես ասեմ՝ նրանցից չեմ: Իսկ Թշնամին այնպես ուժեղ է ու ահարկու:

Նա Գանդալֆին չխոստովանեց, որ մինչ խոսում էր, սրտում ցանկություն բռնկվեց Բիլբոյի հետևից գնալու՝ գուցև հանդիպի՞ նրան: Ցանկությունն այնքան ուժեղ էր, որ վախը նահանջեց. նա, երևի թե, հենց այդպես էլ կնետվեր փախչելու, Բիլբոյի պես՝ առանց գլխարկ ու հանկարծակի:

— Այդ դո՞ւ ես, Ֆրոդո, — բացականչեց Գանդալֆը: — Ժամանակին ճիշտ եմ ասել. հոբիթները զարմանալի էակներ են: Թվում է, թե մեկ ամիսն էլ է բավական նրանց ուսումնասիրելու համար, իսկ նրանք հարյուր տարի հետո անասելի կզարմացնեն քեզ: Այ, թե ի՜նչ չէի սպասում՝ նույնիսկ քեզնից էլ: Դե Բիլբոն էլ հո չի սխալվել ժառանգորդ ընտրելիս, չնայած չի հասկացել, թե դա որքան կարևոր է: Այո, երևում է, որ դու իսկապես ճիշտ ես: Ներկա վիճակով Հոբիթստանը Մատանու տեղը չէ, դո՛ւ և ոչ միայն դու, ստիպված կլինես հեռանալ և որոշ ժամանակով մոռանալ, որ դու Պարկինս ես: Այդ անունը վտանգավոր է նաև Հոբիթստանից դուրս: Արի ես քեզ ուրիշ անուն դնեմ: Ասենք, Ձառիթափցի. . .

Իսկ կգնաս, այնուամենայնիվ, ո՛չ մենակ: Քո բարեկամներից ո՞ւմ ես լիովին վստահում, նրանցից ո՞վ է ընդունակ մահացու փորձությունների դիմանալ. . . Իմիջիայլոց, փորձություններ երևի չեն էլ լինի, բայց այնուամենայնիվ մտածիր ուղեկցի մասին, նա քեզ շատ պետք կգա. . . Եվ դուրս մի տուր, նույնիսկ մոտիկ բարեկամներիդ մի ասա. . . Թշնամին ամեն տեղ լրտեսներ ունի, նա ամեն ինչ լսում է:

Հրաշագործը հանկարծ լռեց ու ականջ դրեց: Սենյակում ու այգում զրնգուն լռություն էր տիրում: Գանդալֆը ծածուկ մոտեցավ պատուհանին, թռավ պատուհանի գոգին, երկար ձեռքը պարզեց՝ և պատուհանի մեջ, խղճալիորեն ծվծվալով հայտնվեց Սամ Համեստուկի գանգրահեր գլուխը՝ ականջից ձգված:

— Այդպե՛ս, այդպե՛ս, մորուքս վկա, — ասաց Գանդալֆը: — Սամ Համեստուկն է՝ հենց ինքը. . . Ուրեմն պատուհանի տակ. . .

— Ի՞նչ եք ասում, տեր իմ, ի՞նչ եք ասում, պարոն Գանդալֆ, — եռանդուն առարկում էր Սամը: — Ո՞ր պատուհանի տակ. . . Ես այդտեղ քաղհանում ու ջրում էի խոտը, տեսնո՞ւմ եք, — և իբրև ապացույց ցույց տվեց այգեպանի մկրատը:

— Տեսնում եմ, — մռայլ ասաց Գանդալֆը: — Իսկ այ քո մկրատը վաղուց դադարել է չխկչխկալուց. . . Ակա՞նջ էիր դնում, լրտեսում էիր:

— Ի՞նչ եք ասում, պարոն: Խոտը լրիվ չորացել է. . .

— Հիմարի տեղ մի դիր քեզ. . . Ի՞նչ ես լսել և ինչո՞ւ էիր ականջդ կախել, — Գանդալֆի աչքերը փայլեցին ու հոնքերի մազերը բիզ-բիզ կանգնեցին:

— Պարոն Ֆրոդո, գոնե դուք խոսեք, — սարսափահար ճչաց Սամը, — գոնե դուք թույլ մի տվեք նրան, թե չէ մեկ էլ տեսար ինձ ինչ-որ բան դարձրեց: Հետո արի ու իմ ծերուկին ապացուցիր, որ դա ես եմ: Ես ոչ մի վատ բան չէի անում, ազնիվ խոսք, պարոն. . . .

— Ոչ մի բան էլ քեզ չի դարձնի, — ծիծաղը հազիվ զսպելով, ասաց զարմացած ու մտահոգված Ֆրոդոն: — Նա էլ ինձ նման գիտի, որ դու լսում էիր առանց չար մտքի: Վախենալը մի վախենա, իսկ որ հարց է տալիս, պատասխանիր:

— Դե ի՞նչ, տեր իմ, — գլուխն ուսերի մեջ քաշած խոստովանեց Սամը: — Ես ահագին լսեցի, չնայած հո բոլորը չհասկացա՞. և՛ Թշնամու, և՛ Մատանու, և՛ պարոն Բիլբոյի, համ էլ վիշապների մասին, Հրամեջ լեռան, և իհարկե, էլֆերի մասին: Բոլորվին էլ չէի ուզում լսել, բայց լսեցի, ինքներդ գիտեք, ինչպես է պատահաբար լինում: Ախր ինձ ոչ հաց տուր, ոչ ջուր, մենակ թող էլֆերի մասին լսեմ, հետո ինչ, թե Թոդն ինչեր է ասում: Գոնե կես աչքով դրանց տեսնեի: Ա՛յ, տեր իմ, դուք կգնաք, դե ինձ էլ էլֆերին ցույց կտաք, հը՞. . .

Գանդալֆը հանկարծ ծիծաղեց:

— Հապա մի արի այստեղ, — գոռաց նա և պատուհանից ներս քաշեց ապշած Սամին՝ մկրատն ու բահը ձեռքին, և դրեց հատակին:

— Ասում ես, էլֆերին ցո՞ւյց տանք քեզ, — հարցրեց նա, Սամին հայացքով զննելով ու ակամա ժպտալով: — Ուրեմն դու լսե՞լ ես, որ քո տերը գնում է:

— Լսել եմ, բա ո՞նց: Այ էդտեղ էլ հազս կատիկս թռավ, ու դուք էլ լսեցիք: Այո, ես պատահական եմ լսել, չէ որ դա շատ ցավալի է. . .

— Ի՞նչ արած, Սամ, — տխուր ասաց Ֆրոդոն: Նա հանկարծ հասկացավ, որ Հոբիթստանին հրաժեշտ տալը շատ դժվար է լինելու և որ ինքը հրաժեշտ է տալիս ոչ միայն Պարկուտին: — Ես պետք է մեկնեմ, իսկ դու, — նա խստությամբ նայեց Սամին, — եթե դու իսկապես անհանգստանում ես ինձ համար, ապա լեզուդ քեզ քաշիր, լա՞վ. . . Որևէ բան դուրս տվեցիր անմեղ լսածներիցդ, մեկ էլ տեսար Գանդալֆը կվերցնի ու քեզ պտավոր գորտ կդարձնի, իսկ լորտուները, գիտես, մի բարի պտուղ չեն: — Սամը դողաց ու ծնկի եկավ:

— Վեր կաց, Սա՛մ, — կարգադրեց Գանդալֆը: — Ես ավելի սարսափելի մի բան մտածեցի. դու ոչինչ դուրս չես տա և սրանից հետո կիմանաս, թե ինչ է նշանակում թաքուն ականջ դնել: Ֆորդոյի հետ կգնա՞ս:

— Ե՞ս: Տիրոջս հե՞տ, — բացականչեց Սամը և վեր թռավ, ինչպես շունը, որին կանչում են զբոսնելու: — Ե՛վ էլֆերին կտեսնեմ, և՛ դեռ շատ ուրիշ բանե՞ր էլ. . . Ուռռա՛, — գոռաց նա և հանկարծ լաց եղավ:

Գլուխ երրորդ. Երեք ճանապարհորդ

— Դուրս գալ հարկավոր է սուսուփուս և որքան կարելի է արագ, — մշտապես հիշեցնում էր Գանդալֆը:

Առաջին խոսակցությունից արդեն անցել էր երկու թե երեք շաբաթ, իսկ Ֆրոդոն դեռևս ճանապարհի պատրաստություն չէր տեսնում:

— Գիտեմ, գիտեմ, — ասում էր Ֆրոդոն: — Մենակ թե դա այդքան էլ ճիշտ չէ՝ արագ, այն էլ սուսուփուս: Կգնամ Բիլբոյի պես ու լուրը կթնդա ամբողջ Հոբիթստանում:

— Ոչ, դու Բիլբոյի պես մի գնա, — ասաց Գանդալֆը: — Միայն այդ էր մեզ պակաս: Արագ՝ այո, բայց ոչ հանկարծակի: Մտածիր, իհարկե, թե ինչպես հեռանալ Հոբիթստանից առանց ավելորդ աղմուկի, և այնուամենայնիվ մի հապաղիր, այնպես չլինի, որ ուշանաս:

— Գուցե աշնանը, մեր ընդհանուր ծննդյան օրից հետո, — առաջարկեց Ֆրոդոն: — Մինչև այդ կհասցնեմ ամեն ինչ կարգավորել:

Ճիշտն ասած, երբ բանը հասավ գործին, լրիվ կորավ ճամփորդելու ցանկությունը: Պարկուտը հանկարծ դարձավ անչափ հարմարավետ, ու Ֆրոդոն ամբողջ սրտով ուրախանում էր Հոբիթստանում իր վերջին ամառով: Իսկ աշնանը, մտածում էր նրա, մեզ մոտ ձանձրալի կլինի ու սիրտս էլ, մշտականի պես, կձգտի դեպի օտար երկրներ: Մտքում նա արդեն հաստատ որոշել էր սպասել իր հիսնամյակին և Բիլբոյի հարյուրքսանութամյակին:

Տարեդարձը կլինի՝ այդ ժամանակ էլ ճամփա ընկիր: Բիլբոյի օրինակով: Առանց այդ օրինակի ինքը մի քայլ էլ չէր անի, կյանքում սիրություն չէր ունենա: Ճամփորդության նպատակի մասին աշխատում էր չմտածել և Գանդալֆի հետ էլ չէր անկեղծանում: Գուցե հրաշագործն ինքն էլ ամեն ինչ կռահում էր, բայց ըստ սովորության, լռում էր. . .

— Այո, այո, ամեն ինչ կկարգավորեմ և ճանապարհ կընկնեմ:

Գանդալֆը նայեց նրան և քմծիծաղեց:

— Լավ, — ասաց նա, — թող այդպես լինի, միայն թե ոչ ուշ: Ինչ-որ շատ եմ տագնապում: Միայն թե տես, հա՛, ոչ մեկին ոչ մի խոսք այն մասին, թե ուր ես ճանապարհվում. . . Եվ որպեսզի քո Սամն էլ մեռելի պես՝ ձայն չհանի, թե չէ այնպես կանեմ, որ իսկապես գորտի նման կցատկոտի:

— Իսկ ո՞ւր եմ ճանապարհվում, — ասաց Ֆրոդոն, — ես ինքս էլ չգիտեմ, այնպես որ այստեղ դուրս տալը դժվար է:

— Առանց հիմարությունների, — հոնքերը կիտեց Գանդալֆը: — Նրա համար չեմ ասում, որ գլուխդ առնես ու կորչես: Բայց Հոբիթստանից հեռանում ես, և հարկավոր է, որ այդ մասին ոչ ոք չիմանա: Մի որևէ տեղ կգնաս՝ գուցե հյուսիս, հարավ, արևմուտք կամ նույնիսկ արևելք, հենց դա էլ հարկավոր է գաղտնի պահել:

— Ես այնքան տխուր եմ, որ Պարկուտը պիտի թողնեմ ու բոլորին հրաժեշտ տամ, որ նույնիսկ չեմ մտածել, թե ուր եմ ճանապարհվելու, — ասաց Ֆրոդոն: — Իսկապես ո՞ւր: Ես ի՞նչ գիտեմ, որտեղ կարելի է թաքնվել: Բիլբոն գնաց գանձ բերելու և վերադարձավ, իսկ ես ուրեմն, պետք է գանձը վերադարձնեմ, իսկ ինքս չքվե՞մ, հա՞:

— Այդպես է, ու այդպես չէ, — արձագանքեց Գանդալֆը: — Այստեղ ես էլ քեզ ցուցում տվող չեմ: Գուցե դու կհասնես մինչև Օրոդրուին, իսկ գուցե դա բոլորովին էլ քո գործը չէ, ի՞նչ իմանաս: Ես ուրիշ բան գիտեմ. առայժմ դու այդպիսի ճանապարհի համար պատրաստ չես:

— Չէ մի, էլ ի՞նչ կուզեիք, — բացականչեց Ֆրոդոն: — Դե, իսկ իմ ճանապարհը, ախր, ո՞րն է, ո՞րը. . .

— Եզրով, — պատասխանեց հրաշագործը, — ամենածայրով, հաստատ ու զգույշ: Ասենք, թե առայժմ գնա, թեկուզ հենց Ազատք: Դա շատ վտանգավոր ուղի չէ, չնայած ճանապարհին հիմա ամեն ինչ պատահում է, իսկ աշնանը նույնիսկ սարսափելի կլինի:

— Ազա՞տք, — հարցրեց Ֆրոդոն: — Լավ, կգնամ արևելք, դեպի Ազատք: Սամն էլ ինձ հետ կգա, էլֆերին կտեսնի, ա՛յ թե կուրախանա. . .

Նա իբրև թե իմիջիայլոց մեջ գցեց դա, բայց դե շատ էր ցանկանում լինել այն երանելի հովտում, որտեղ Զարմանալի Ժողովուրդը շարունակում էր խաղաղ ու երջանիկ ապրել:

Մի անգամ, ամռան մի երեկո, «Գողտրիկ անկյունում» և «Կանաչ վիշապում» քննարկում էին մի անհավանական բան, որ իբր այնտեղ սահմանների վրա հսկաներ ու չարքեր կան. . . Պարզվում է, Ֆրոդոն վաճառում է, եթե արդեն չի վաճառել, Պարկուտը և այն էլ ում՝ Քսակ-Պարկինսին:

— Դե, մեծ գումարով, — ասում էին ոմանք:

— Իր գնով, — առարկում էին մյուսները, — հանգիստ եղեք, Սերինիան մի գրոշ անգամ ավելի չի տա (Օթհոն արդեն հասցրել էր մեռնել, ապրելով մինչև հարյուր երկու տարի և չհասնելով իր իղձերի կատարմանը):

Գնի շուրջ շատ էին վիճում, բայց ավելի շատ վիճում էին այն մասին, թե ինչո՞ւ Ֆրոդոյի խելքին փչեց վաճառել այդպիսի հրաշալի կալվածքը: Ոմանք ակնարկում էին, այդ էր ակնարկում նաև պարոն Պարկինսն ինքը, որ փողերը հաշիվ են սիրում, իսկ նրա փողերն արդեն վերջանում են: Եղածը հազիվհազ կբավականացնի Նորգորդում հաշիվները փակելու և Զայգորդ՝ բարեկամների մոտ տեղափոխվելու համար:

— Միայն թե Քսակներից հեռու, — ավելացրեց ինչ-որ մեկը:

Բայց բոլորն այնպես էին վարժվել Բիլբոյի անհամար հարստությունների մասին ասեկոսներին, որ դրանցից հրաժարվելու ուժ չունեին, և շատերը Գանդալֆին էին

մեղադրում: Թեպետ նրան ոչ տեսնող էր եղել, ոչ լսող, բայց դե նա ապրում էր, հայտնի է, Ֆրոդոյի մոտ՝ իբր թաքնվում է Պարկուտում:

Ասենք, որ այնքան էլ հասկանալի չէ, թե հրաշագործին ինչու է հարկավոր, որ Ֆրոդոն տեղափոխվի Զայգորդ, բայց, երևում է, ինչ-որ բանի համար պետք է:

— Այո, աշնանը տեղափոխվում եմ, — հաստատում էր Ֆրոդոն: — Մերի Բրենդիզայքն այնտեղ ինձ համար մաքուր բույն, իսկ գուցեև հարմարավետ տնակ է փնտրում:

Մերին իսկապես էլ փնտրեց և շատ փոքրիկ մի տնակ գտնեց Ճագարի Գերանում, Զայգորդից քիչ հեռու: Բոլորին, բացի Սամից, Ֆրոդոն ասում էր, որ ինքը որոշել է տեղափոխվել այնտեղ: Դեպի արևելք գնալու ճանապարհը հուշեց նրան այդ միտքը. Նապաստակի բլուրները ճանապարհին են, Ֆրոդոն մանկության տարիներին ապրել է այդ վայրում, իսկ ի՞նչն է խանգարում, որ հիմա վերադառնա այնտեղ:

Գանդալֆը երկու ամսից ավելի մնաց Հոբիթստանում: Հետո, մի անգամ երեկոյան, հունիսի վերջերին, հենց այն ժամանակ, երբ Ֆրոդոյի պլանները կայունացան, նա հանկարծ հայտարարեց, որ առավոտյան մեկնում է:

— Հուսով եմ, ոչ երկար ժամանակով, — ասաց նա: — Ես հարավում որոշ գործեր ունեմ: Ձեզ մոտ երկար մնացի:

Դա իմիջիայլոց էր ասված, բայց Ֆրոդոյին թվաց, որ հրաշագործը խիստ մտահոգված է:

— Որևէ բա՞ն է պատահել, — հարցրեց նա:

— Դե առայժմ ոչինչ չգիտեմ, բայց ինձ տագնապալի և ոչ այնքան հասկանալի լուրեր են հասել՝ հարկավոր է պարզել բանն ինչ է: Ես իսկույն կվերադառնամ կամ ծայրահեղ դեպքում լուր կուղարկեմ: Իսկ դուք արեք այնպես, ինչպես որոշված է, միայն զգույշ եղեք, և ամենակարևորը՝ պահպանեք Մատանին: Եվ իմ անկապտելի խորհուրդը քեզ. չհագնես այն.
. .

Սկզբում Ֆրոդոն վախեցած մտմտում էր, թե այդ ինչ լուրեր կարող է ստացած լինել Գանդալֆը, Բայց հետո հանգստացավ. ախր շատ լավ եղանակ էր: Շքեղ ամառ էր, բերքառատ աշուն՝ նույնիսկ Հոբիթստանը վաղուց այդպիսի աշուն չէր տեսել: Խնձորների ծանրությունից ճյուղերը կոտրվում էին, խորիխսներից մեղրը ծորում էր, ցորենը վեր էր պարզում տռուզ հասկերը:

Միայն երբ աշունն արդեն սկսվեց, Ֆրոդոն լրջորեն տագնապեց: Սեպտեմբերի կեսն է, իսկ Գանդալֆն ասես գետնի տակ է անցել: Ծնունդյան տոնն ու ճանապարհվելու ժամանակ քթի տակ է, իսկ նրանից ձեն ու ձուն չկա: Այդ ընթացքում Ֆրոդոն նոր հոգսերի մեջ ընկավ: Իրերը կապկպելու համար նրան օգնում էին բարեկամները՝ Ֆրեդեգար Կուզբոնցը, Ֆոլկո Բոքոնակը, և իհարկե՝ Փերեգրին Ճագարակը՝ Մերի Բրենդիզայքի հետ միասին: Նրանց ընդհանուր ջանքերով Պարկուտում ամեն ինչ տանկուվրա էր արված:

Սեպտեմբերի քսանին Ֆրոդոյի տնից դեպի Բրենդիդուիմյան կամուրջ ուղևորվեց երկու սայլ՝ բեռնված վաճառքից հետո մնացած կահույքով ու իրերով: Հաջորդ օրն անցավ Գանդալֆին սպասելով: Ֆրոդոյի հիսնամյակի առավոտը պարզ էր ու պայծառ, ինչպիսին հիշարժան Հյուրասիրության օրն էր: Գանդալֆը չկար: Երեկոյան Ֆրոդոն հինգ հոգու հետ սեղան բացեց, փորձելով ցրել իր վհատությունը: Ահա շուտով բարեկամներից բաժանվելու հերթը կգա: Երիտասարդ հոբիթները՝ Մերի Բրենդիզայքը, Ֆրեդեգար Կուզբոնցը, Ֆոլկո Բոքոնակը, Փերեգրին Ճագարակը աղմկալի ու անհոգ ուրախանում էին. բազմաթիվ երգեր երգեցին, հազարումի բան հիշեցին, խմեցին Բիլբոյի կենացը, հետո երկու նորածինների կենացը միասին, ինչպես որ սովորություն էր դարձել Ֆրոդոյի ծնունդյան օրերին: Հետո դուրս եկան մաքուր օդ շնչելու, նայեցին աստղերին ու գնացին քնելու: Իսկ Գանդալֆն այդպես էլ չերևաց:

Հաջորդ օրն առավոտյան նրանք արագ-արագ վերջին սայլը բեռնեցին: Սրանով մեկնեցին Մերին ու Գիրուկը (նրանք այդպես էին անվանում Ֆրեդեգար Կուզբոնցին):

— Մեկնումեկը պետք է, որ անբաններիդ համար վառարան վառի նոր տանը, — ասաց Մերին: — Դե լավ, վաղը չէ մյուս օրը կտեսնվենք, եթե դուք ճանապարհին մեռելի պես չքնեք:

Ֆալկոն նախաճաշեց ու գնաց, մնաց միայն Փինը: Ֆրոդոն իրեն կորցրել էր, նա դեռ սպասում էր Գանդալֆին և որոշել էր սպասել մինչև մութն ընկելը: Դե իսկ հետո, եթե ինքը

հրաշագործին շատ հարկավոր լինի, թող վերջինս գա Ճագարի Գերան: Մեկ էլ տեսար առաջինը նա հասավ այնտեղ: Ֆրոդոն որոշեց Զայգորդյան գետանցմանը մոտենալ զարտուղի ճանապարհով, որպեսզի գոնե վերջում մի անգամ էլ նայի Հոբիթստանին:

— Միաժամանակ ճարպերս կհալեցնեմ, — ասաց ինքն իրեն, նայելով կիսադատարկ նախասենյակի փոշոտ հայելու մեջ: Նա շատ նստելուց ահագին լայնքին էր տվել:

Կեսօրից քիչ անց հայտնվեցին Քսակ-Պարկինսները՝ Սերինիան իր սպիտակամազ ժառանգի՝ Լոթոյի հետ: «Մի կերպ դիմացանք էսօր», — ասաց նա, շեմից մտնելով: Դա անքաղաքավարի էր և ոչ արդարացի. մինչև գիշերվա ժամը տասներկուսը Պարկուտի տերը մնում էր Ֆրոդոն: Բայց դե Սերինիայից ի՞նչ պահանջես, ախր նա յոթանասուն տարի ավելի է սպասել, քան ենթադրում էր, նրա հարյուրն արդեն անցել էր: Եվ հենց այնպես չէր եկել, այլ նայելու, որ Բրենդիզայքներն ու մյուսները սխալմամբ իրենց հետ որևէ բան չտանեն, և մեկ էլ բանալիների համար: Նրան ճանապարհ դնելը հեշտ գործ չէր. նա իր հետ բերել էր վաճառված կայքի ցուցակը և ցանկանում էր ստուգել, արդյոք ամեն ինչ տեղո՞ւմ է, թե ոչ:

Ստուգեց մեկ անգամ, հետո՝ երկրորդ, ստացավ բանալիների երկրորդ կապուկը և հավաստիացավ, որ բանալիների երրորդ կապուկը նրա համար կթողնեն Պարկուտավանում Համեստուկների մոտ: Նա «հըմ» արեց և շրթունքները սեղմեց՝ իբր, գիտենք այդ Համեստուկներին, առավոտյան իրերի կեսը չի լինի, բայց վերջիվերջո գնաց:

Պնդերես հյուրերից ազատվելով, երեք ճամփորդները խոհանոցում անշտապ թեյ էին խմում:

— Պարկուտում վերջին թեյախմությունն էր. . . — ասաց Ֆրոդոն և վճռականորեն հետ տարավ աթոռը: Իրենց ափսեները ի հեճուկս Սերինիայի, չլվացին: Սամը և Փինը արագորեն կապեցին երեք պարկերի բերանները և հանեցին շեմքը: Փինը գնաց այգում զբոսնելու, իսկ Սամն անհետացավ ինչ-որ տեղ:

. . . Արևը թեքվեց դեպի մայրամուտ, ու Պարկուտը մռայլ, դատարկված և քայքայված էր թվում: Ֆրոդոն շրջում էր ծանոթ սենյակներում՝ մայրամուտի լույսը դժգունում էր, և անկյուններից մռայլ ստվերներ էին դուրս լողում:

Շուտով բոլորովին մթնեց: Նա գնաց այգու հեռավոր դռնակի մոտ՝ հանկարծ ու այնուամենայնիվ Գանդալֆը գա:

Պարզ երկնքում աստղեր վառվեցին:

— Լավ գիշեր է լինելու, — բարձրաձայն ասաց Ֆրոդոն: — Դա հրաշալի է, քայլելը հաճելի կլինի: Շատ նստեցինք, ազնիվ խոսք: Կգնամ, իսկ Գանդալֆն արդեն թող ինքը հասնի իմ հետևից: — Նա շրջվեց տան կողմը և իսկույն կանգ առավ, ինչ-որ մոտիկ տեղից ձայներ լսելով. երևի Պարկուտավանից է: Խոսում էին Համեստուկը ու էլի ինչ-որ մեկը. ձայնն անծանոթ էր, բայց սրտխառնության չափ քստմնելի: Օտարականն ինչ-որ բան էր հարցնում՝ լավ չէր լսվում, լսվում էր միայն ծեր Համեստուկի պատասխանը՝ զգուշավոր ու երկյուղած, համարյա թե վախեցած:

— Ոչ, պարոն Պարկինսը մեկնել է: Այսօր առավոտյան, իմ Սամն էլ է նրա հետ, ամեն ինչ արդեն տեղափոխել են: Հենց այդպես էլ տեղափոխել են, ինչ որ չեն վաճառել՝ տեղափոխել են . . . Իսկ թե ինչու ու ինչի համար՝ դա արդեն իմ գործը չէ. . . դե և ոչ էլ ձերը: Հայտնի է, թե ուր՝ Ճագարի Գերան, իսկ գուցեև ավելի հեռու, դա բոլորը գիտեն: Այ, հրեն՝ ուղիղ ճանապարհ է: Չէ, ես ինքս չեմ եղել, իմ ինչին է պետք, էնտեղ ժողովուրդը վատն է: Չէ, ինչ-որ բան հաղորդել հանձն չեմ առնի: Բարի գիշեր:

Քայլերը փափուկ իջան Զառիթափից, և Ֆրոդոն զարմացավ, թե ինքն ինչու է այդքան ուրախ, որ իջան, և ոչ թե բարձրացան: «Ըստ երևույթին, ես անչափ հոգնել եմ հարցաքննություններից և ամեն տեսակ հետաքրքրասիրությունից, — մտածեց նա: — Սարսափելի հետաքրքրասեր ժողովուրդ է մեզ մոտ»:

Նա մեկ ուզեց ծերուկ Համեստուկից իմանալ, թե ով էր նրան նեղել, բայց հանկարծ միտքը փոխեց ու արագ քայլեց դեպի Պարկուտ: Փինը իր տոպրակին հենված նստած քնել էր: Սամը չկար: Ֆրոդոն ներս նայեց սև դռնից:

— Սա՛մ, — կանչեց նա: — Ո՞ւր ես. . . ժամանակն է:

— Գալի՛ս եմ, տեր իմ, — արձագանքեց Սամը ինչ-որ խորքերից, շրթունքները մաքրելով: Նա մառանում հրաժեշտ էր տալիս գինու տակառին:

Ֆրոդոն ծածկեց ու կողպեց կլոր դուռը, իսկ բանալին տվեց Սամին:

— Դու վազիր քո սենյակը, իսկ այնտեղից՝ կարճ ճանապարհով, կհանդիպենք մարգագետնի կողմի դռնակի մոտ: Գյուղով չենք գնա՝ թաքուն հետևում են, ականջ են դնում: Դե, թռիր:

Սամը սուրաց մթության մեջ:

— Դե վերջապես գնում ենք, — Փինին ասաց Ֆրոդոն:

Նրանք պարկերը մեջքներին գցեցին, ցուպերը վերցրեցին ու գնացին Պարկուտի արևմտյան պատի երկարությամբ:

— Մնաք բարով, — ասաց Ֆրոդոն, նայելով սև, կույր պատուհաններին: Նա ձեռքը թափահարեց, շրջվեց և (ճիշտ այնպես, ինչպես Բիլբոն, միայն թե ինքն այդ մասին չգիտեր) սուզվեց այգու թփերի մեջ՝ Փինի հետևից: Նրանց թռան ցածրիկ, բարակ գերանի վրայով և գնացին դաշտ, ալեկոծելով խավարը և խշխշացնելով բարձր խոտերը:

Պայմանավորված դռնակի մոտ նրանք կանգ առան, ձգեցին պարկերի փոկերը և շուտով լսվեց Սամի ոտնաձայնն ու ֆսֆսոցը:

Լիքը լցրած ուղեպարկը նա բարձրացրել էր համարյա ուսերի վրա, իսկ գլխին ինչ-որ ճմրթված ֆետր էր դրել, իբրև գլխարկ: Մթության մեջ իսկ և իսկ թզուկ էր:

— Որը որ ծանր է, դա, իհարկե, ինձ եք տվել, — ասաց Ֆրոդոն: — Խեղճ խխունջներ ու չարքաշ արարածներ, ովքեր իրենց տունն ու կահույքը սեփական մեջքին են կրում. . .

— Իմ պարկը շատ թեթև է, տեր իմ, ինչքան ուզեք՝ ավելացրեք, — հայտարարեց Սամը բարի ու կեղծ ձայնով:

— Էդ մեկը չէ, Սամ, — ասաց Փինը: — Մի կերպ կտանի, ինքն է դասավորել՝ մեզ էլ, իրեն էլ հավասար: Դե ինքը մի փոքր ճարպակալել է. մի քիչ կքայլի, պարկն էլ կթեթևանա, ինքն էլ:

— Ողորմացեք ծեր, անուժ հոբիթին, — ծիծաղելով աղաչեց Ֆրոդոն: — Ճամփի վերջում ես հալից ընկած կօրորվեմ, ոնց որ եղեգը քամուց: Սակայն կատակը մի կողմ: Սամ, դու երևի քեզ վրա չափից շատ ես վերցրել, այ որ դադար տանք, կնայենք ու կտեղափոխենք:

Եվ նա վերցրեց իր ցուպը:

— Գիշերային զբոսանքից լավ ի՞նչ կա, — ասաց նա: — Քնելուց առաջ մի երկու լիգ մաքուր օդում:

— Մի երկու լի՞գ, — հարցրեց Սամը: — Տեր իմ, շատ ծավալվեցիր: Լիգը նույնիսկ հսկա մարդու համար հեշտ բան չէ՝ երկու հազար քայլ: Իսկ մեր, հոբիթականով՝ երևի մի չորս հազար կդառնա: Չէ, տեր իմ, ե՛ս համաձայն չեմ այդպիսի երեկոյան զբոսանքների. . .

Նրանք իծաշարուկի գնում էին կանաչ ցանկապատի երկարությամբ, հողաբաժան թփուտների կողքով, և գիշերային խավարը պարուրել էր նրանց: Թիկնոցները մուգ էին, քայլում էին անտեսանելի, ասես երեքն էլ կախարդական մատանի էին հագել: Երբ երեք հոբիթ գնում են սուսիկ ու փուսիկ՝ նրանց հետևելը դժվար է: Նույնիսկ զգուշավոր դաշտային գազանիկները հազիվ էին նկատում անաղմուկ ճամփորդներին:

Երբ Նորգորդն իր գողտրիկ հովտով մնաց հեռվում, իսկ կածանը բարձրացավ սարը, և փողոցի լամպի հեռավոր լույսը վերջին անգամ թափանցեց ծառերի միջից, Ֆրոդոն շրջվեց ու նորից ձեռքը թափահարելով հրաժեշտ տվեց:

— Ի՞նչ իմանաս, էլ երբևէ կտեսնե՞մ մեր հովիտը, — ցածր ձայնով խոսեց նա:

Անտառապատ, զառիկող բլրի գագաթից նրանք մտան եղևնուտ, կածանից դուրս եկան և մտան խեժահոտ խավարը, չոր ճյուղեր կոտրատեցին, կոն հավաքեցին և խարույկ վառեցին: Կրակն ուրախ պար սկսեց դարավոր եղևնու արմատների մոտ, հոբիթները տաքացան և սկսեցին ննջել: Յուրաքանչյուրն իր ձևով տեղավորվեց արմատների արանքում, փաթաթվեց թիկնոցով ու վերմակով և տեղնուտեղը խոր քուն մտավ:

Պահակ չէին թողել. նույնիսկ Ֆրոդոն չէր անհանգստացել, չէ՞ որ նրանք Հոբիթստանում էին. . . Խարույկը մոխրակույտի էր վերածվել, և որոշ գազաններ էին հայտնվել քնածներին նայելու: Աղվեսը, որ պատահաբար վազում էր նրանց կողքով, կանգնեց ու սկսեց հոտոտել:

— Հոբիթներ են, — ասաց ինքն իրեն: — Ա՛յ քեզ բան. . . Չորս կողմը հազարումի հրաշքներ են լինում, բայց որ հոբիթը քնի անտառո՞ւմ, ծառի տակ, այն էլ ոչ մենակ, երեք հոգով. . . Չէ-է-է՛, այստեղ ինչ-որ բան կա թաքնված. . .

Նա, իհարկե, իրավացի էր, բայց այդպես էլ տարակուսած մնաց:

Անշտապ նախաճաշելով, ժամը տասի մոտերքը նրանք ճանապարհ ընկան: Պարզ, տաք օր էր: Շատ չանցած նրանք շոգեցին, պարկերն ավելի ու ավելի էին սեղմում ուսերը, իսկ ճանապարհը գալարվում էր բլուրներն ի վեր ու նորից իջնում ներքև, բայց հետո սահուն վայրէջքով շրջվեց դեպի լայնարձակ հովիտը: Նրանց առջև փռվեց նոսր անտառը, որը հեռվում ձուլվում էր ծառերի գորշ պատի հետ: Երբ հոբիթները բլրից իջան, երեկոյանում էր: Առայժմ ոչ մի կենդանի շնչի չէին հանդիպել՝ Անտառաեզր հազարից մեկն էր գալիս, և ինչի՞ համար գային այստեղ: Երեք ճամփորդները մեկ-երկու ժամ առաջ էին գնում խոտածածկ ճանապարհներով, երբ հանկարծ Սամը կանգ առավ ու ականջ դրեց:

— Կարծես թե մեր հետևից կամ ձի է գալիս կամ պոնի, — ասաց նա:

Նրանք հասել էին ոլորանին, որտեղից ոչինչ չէր երևում:

— Գուցե Գանդա՞լֆն է, — ենթադրեց Ֆրոդոն, բայց իսկույն էլ զգաց, որ ո՛չ, Գանդալֆը չէ, և հանկարծ նրա մոտ ցանկություն առաջացավ թաքնվել այդ հեծյալից, ով էլ որ նա լինի:

— Հիմարություն է, իհարկե, — ասաց նա, ասես ներողություն խնդրելով, — բայց այնուամենայնիվ պետք չէ, որ մեզ ճանապարհին տեսնեն, թող կորչեն բոլորն էլ. . . Իսկ եթե Գանդալֆն է, — քմծիծաղով ավելացրեց նա, — ապա մենք նրան մի լավ կդիմավորենք, որ մյուս անգամ չուշանա: Մեկ-երկու-երեք, դե վազեք ու տեսեք. . .

Սամն ու Փինը վազելով ձախ, անհետացան ճանապարհից ոչ հեռու գտնվող ձորակում: Ֆրոդոն դանդաղեց. հետաքրքրասիրությունը, թե ինչ-որ ուրիշ մի զգացում խանգարեց նրան թաքնվել: Սմբակների դոփյունը մոտեցավ: Նա հազիվ հասցրեց իրեն գցել ծառի հետևի խիտ խոտերի մեջ ու գլուխը հանեց հաստ արմատի վրայից:

Ոլորանից դուրս եկած սև ձին բոլորովին նման չէր հոբիթների պոնիներին, իսկ բարձրահասակ հեծյալը կռացել էր թամբի վրա, և լայն ու սև թիկնոցի տակից երևում էին միայն նրա ասպանդակներն ու կոշիկները: Դեմքը ծածկված էր կնգուղով:

Ձին հավասարվեց ծառին, որի հետևում պառկած էր Ֆրոդոն և քարացավ: Հեծյալն էլ էր անշարժ. նա ասես ականջ էր դնում: Խռպոտ ֆսֆսոցը հասնում էր Ֆրոդոյին: Հեծյալի գլուխը շրջվեց աջ, հետո՝ ձախ: Թվում էր, նա հոտառությամբ ինչ-որ հազիվ զգացվող հոտ էր որսում:

Անսպասելի ու խելագար մի սարսափ պատեց Ֆրոդոյին. իրեն տեսնում են, իրեն հիմա կգտնեն. . . և հանկարծ հիշեց Մատանին: Նա չէր համարձակվում շնչել, վախենում էր շարժվել, բայց Մատանին հանկարծ դարձավ նրա միակ հույսը և ձեռքն ինքն իրեն սողաց գրպանը: Միայն թե հագնի, հագնի այն, և ամեն ինչ կարգին կլինի, ինքը ապահով կլինի: Գանդալֆն արգելել է. . . դե լա՛վ. . . Բիլբոն էլ է հագել Մատանին և ոչինչ: Ես չէ՞ որ իմ տանն եմ, Հոբիթստանում, մտածեց ու ձեռքը հպեց շղթային: Այդ վայրկյանին հեծյալն ուղղվեց ու սանձերը ձգեց: Ձին անվստահ ոտքերը փոխեց, առաջ քայլեց ու շորորալով գնաց:

Ֆրոդոն սողաց դեպի ճանապարհի եզրը ու նայեց հեծյալի հետևից, մինչև նա անհետացավ մթնշաղի հեռուներում: Հեռու հեռվում սև ձին շրջվեց դեպի աջ, դեպի ճանապարհամերձ անտառակը:

— Սա ինչ-որ զարմանալի է, եթե չասենք, որ սարսափելի է, — քրթմնջաց Ֆրոդոն, գնալով իր ուղեկիցների մոտ:

Փինը և Սամը բերանքսիվայր պառկած էին և ոչինչ չէին տեսել: Ֆրոդոն պատմեց նրանց տարօրինակ հեծյալի մասին:

— Չգիտեմ ինչու, ես համոզված էի, որ նա ինձ է փնտրում և ինձ է հոտոտում: Այդ ամենը տարօրինակ է, Հոբիթստանում երբեք այդպիսիք չեն եղել:

— Առհասարակ Մեծ ժողովուրդը մեզ հետ ի՞նչ գործ ունի, — փնթփնթաց Փինը: — Էդ ի՞նչ է քարշ եկել մինչև էստեղ: Որտեղի՞ց է եկել. . .

— Ներողություն եմ խնդրում, — հանկարծ միջամտեց Սամը: — Ես գիտեմ որտեղից: Այդ սև ձիավորը Նորգորդից է, քանի որ այստեղ միայն նա է, մեն միակը: Եվ նույնիսկ գիտեմ, թե դեպի ուր է ճամփա ընկել:

— Այսինքն ինչպե՞ս, — խստորեն հարցրեց Ֆրոդոն՝ Սամի վրա մի զարմացած հայացք գցելով: — Գիտես ու չե՞ս ասել:

— Ախր ես նոր միայն հիշեցի, տեր իմ, մեծահոգաբար ներող եղեք: Դա ախր էսպես է եղել. երեկ գնացի իմ ծերուկի մոտ բանալիները տալու, նա էլ թե՝ «Ա՛յ քեզ բան, — ասում է, — բա ես հիմարս էլ կարծում եմ, թե դու քո Ֆրոդո տիրոջ հետ միասին էս առավոտ մեկնել ես: Գիտե՞ս, էստեղ մեկը կպել-պոկ չէր գալիս. ո՞ւր է, ասում է, մեկնել Պարկինսը Զառիթափի Պարկուտից: Իսկ ո՞ւր ունի կորչելու, մեկնել է՝ պրծավ գնաց: Ես էլ ուղարկեցի նրան Ճագարի Գերան, բայց նա, հասկանո՞ւմ ես, ինձ իսկի դուր չեկավ: Մեկնել է, ասում եմ, մեկնել է պարոն Պարկինսը և հետ չի գալու: Պատկերացնո՞ւմ ես, նա ֆշշաց ինձ վրա իսկը օձի պես»: «Իսկ նա ումոնցի՞ց էր» — էդ ես եմ հորս հարցնում: «Ի՞նչ իմանաս, — ասում է, — բայց որ հոբիթ չէր, էդ մեկը հաստատ: Էնպես բոյով էր ու սև, կռացել էր վրա ու ֆսֆսում էր: Երևում է, հեռուներից էր, Մեծ ժողովրդից: Մի տեսակ ֆսֆսացնելով էր խոսում»: Դե ես ժամանակ էլ չունեի հորս հարցուփորձ անելու, չէ՞ որ դուք ինձ սպասում էիք, ու հետո էլ մոռացա ձեզ ասեմ: Համ էլ իմ ծերուկը լավ չի տեսնում, իսկ երբ էդ ձիավորը եկել էր, արդեն մթնած էր եղել: Հայրիկը կարծես թե ամեն ինչ ասել է, ոնց եղել է, իսկ թե մի բան էլ ես եմ մոռացել, Է՛հ, էլ ո՞նց կլիներ, առանձնապես մի բան չկա, ճի՞շտ է, տեր իմ:

— Դե ծերուկից ի՞նչ պահանջես, — պատասխանեց Ֆրոդոն: — Ես ինքս էլ լսեցի, ինչպես էր նա խոսում օտարականի հետ, որն իմ մասին էր հարցնում, նույնիսկ ուզում էի գնալ հարցնել նրան, թե ի՞նչ է պատահել: Ափսոսում եմ, որ չգնացի և ափսոս, որ այն ժամանակ ինձ չես ասել: Ավելի զգույշ պետք է լինենք:

— Իսկ գուցե դա այն ձիավորը չէ, — միջամտեց Փինը: — Մենք ծածուկ ենք դուրս եկել, քայլել ենք անաղմուկ, նա չէր կարող մեզ հետևել:

— Իսկ ֆսֆսում ու հետևում էր ինչպես նա, — ասաց Սամը: — Եվ նրա նման էլ ոտքից գլուխ սև էր:

— Իզուր մենք Գանդալֆին չսպասեցինք, — փնթփնթաց Ֆրոդոն: — Իսկ գուցեև ոչ իզուր, դժվար է ասել:

— Հիմա դու էդ ձիավորի մասին որևէ բան գիտե՞ս, թե՞ պարզապես ենթադրություններ ես անում, — Ֆրոդոյի փնթփնթոցը լսելով, հարցրեց Փինը:

— Խելքը գլխին ոչինչ չգիտեմ, իսկ գուշակել վախենում եմ, — մտածկոտ պատասխանեց Ֆրոդոն:

— Դե, քո գործն է, սիրելի ազգականս. . . Խնդրեմ, քո գաղտնիքները քեզ պահիր, միայն թե հետո ի՞նչ պետք է անենք. . . Ես դեմ չէի լինի, եթե հանգիստ առնեինք, ընթրեինք, բայց ավելի լավ է ոտքներս գետնից կտրենք: Թե չէ ես ինչ-որ վատ եմ զգում այդ հոտոտող ձիավորների մասին ձեր պատմություններից:

— Այո, ավելի լավ է չդանդաղենք, — ասաց Ֆրոդոն: — Եվ եկեք ճանապարհով չգնանք, թե չէ հանկարծ այդ ձիավորը հետ կգա կամ մեկ ուրիշը կհայտնվի: Քայլներս արագացնենք, մինչև Նապատասակի Բլուրները պետք է քայլենք ու քայլենք:

. . . Երբ նրանք նորից ճանապարհ ընկան, մայրամուտի վառ արևը խամրում էր նրանց թիկունքում: Ճանապարհը կտրուկ թեքվում էր ձախ, իսկ աջ կողմում կապտին էր տալիս հզոր թավուտը՝ անվերջ ու անսահման:

— Այնտեղ էլ կգնանք, — ասաց Ֆրոդոն:

Հոբիթները մոմ չվառեցին. մտան մի հսկայական փչակ, հանգստացան, մի քիչ կերան (մի ժամանակ ընթրում էին) և նույնիսկ երգեցին իրիկնային երգը, որը վերջանում էր հետևյալ խոսքերով. «Իսկ հետո էլ քնել: Իսկ հետո էլ քնել. . . »

— Իսկույն քնել. . . Իսկույն քնել. . . — գոռաց Փինը:

— Կամաց, — ասաց Ֆրոդոն: — Կարծես թե նորից սմբակների ձայն է լսվում:

Երեքն էլ ստվերների պես քարացան: Հովտից սմբակների կտկտոց էր լսվում, առայժմ դեռ հեռավոր, բայց ավելի ու ավելի մոտեցող, քամահար կողմից: Նրանք իրենց նետեցին անտառի խորքը, մռայլ ծառերի թանձր ստվերի մեջ:

— Չենք փախչի, — ասաց Ֆրոդոն: — Մենք չենք երևում, իսկ ես ուզում եմ տեսնել՝ մի՞թե ևս մեկը:

Կտկտոցը մոտենում էր: Ինչպես հարկն է թաքնվելու ժամանակ արդեն չունեին, և Սամն ու Փինը մտան կոճղի հետևը, իսկ Ֆրոդոն պառկեց արահետից ոչ հեռու: Սրա բաց մոխրագույն շերտը հատում էր անտառային մթնշաղը: Երկինքն աստղոտվում էր, բայց դեռ լուսինը դուրս չէր եկել:

Սմբակները լռեցին: Ֆրոդոյի աչքին ծառերի արանքում մի սևություն ցոլաց՝ և երկու ստվերը, ասես մեկը ձիու սանձից բռնած տանում էր, ձուլվեցին մթությանը: Հետո սև կերպարանքը հայտնվեց այնտեղ, որտեղ իրենք արահետից դուրս էին եկել, ճիշտ նույն տեղում: Ստվերը երերաց, ու Ֆրոդոն ցածր, տհաճ ֆսֆսոց լսեց, իսկ հետո ստվերն ասես սողաց դեպի նա:

Ֆրոդոն նորից մտածեց, որ հարկավոր է հագնել Մատանին: Եվ կարծես թե ինչ-որ մեկի հրամանին ենթարկվելով, առանց հասկանալու, թե ինչ է անում, փնտրեց գրպանում: Սարսափելի լռություն իջավ, բայց հանկարծ մի զրնգուն երգ լսվեց ու ծիծաղ տարածվեց: Ձինջ ձայներն ուրախ զանգակների պես ալեկոծեցին գիշերային զով օդը: Սև ստվերը բարձրացավ, հետ-հետ գնաց ու ձիու ստվերին ձուլվելով, արահետի մյուս կողմում սուզվեց մթնշաղի մեջ: Ֆրոդոն շունչ քաշեց:

— Էլֆե՛րն են, — բացականչեց Սամը խռպոտ ձայնով, ասես քնից էր վեր կացել: — Տեր իմ, էլֆե՛րը. . .

Նա ուզում էր նետվել ձայների կողմը, բայց Ֆրոդոն ու Փինը հետ պահեցին նրան:

— Այո, էլֆերն են, — ասաց Ֆրոդոն: — Չէ՞ որ սա Անտառեզրն է, նրանք համարյա ամեն գարնան ու աշնան անցնում են այստեղով: Ա՛յ թե ժամանակին եկան. . . Ախր դուք ոչինչ չտեսաք, իսկ Սև Հեծյալը իջավ ձիուց ու սողաց ուղիղ դեպի մեզ: Եվ կսողար, եթե նրանց երգը չլիներ: Դա վախեցրեց նրան:

— Դե, իսկ էլֆերի մոտ գնո՞ւմ ենք, թե չենք գնում, — շտապեցրեց Սամը: Հեծյալի մասին արդեն չէր էլ հիշում:

— Լսում ես, չէ՞, իրենք են մեզ մոտ գալիս, — ասաց Ֆրոդոն: — Հարկավոր է միայն սպասել:

Երգը մոտենում էր: Մի զիլ ձայն բոլորից բարձր էր երգում: Հրաշալի հնամյա բառեր էին, միայն Ֆրոդոն էր հասկանում, այն էլ դժվարությամբ: Բայց և ուշադիր լսել էլ առանձնապես պետք չէր: Ֆրոդոն այսպես հասկացավ երգը.

Հեռո՛ւ հեռավոր ծովերից այն կողմ
Անվերջ շողացող հուր արշալույսի,
Տարածվի՛ր դու մեր լեռների վրա
Ու անմար պահիր կրակը հույսի:

Օ, դու Էլբերեթ, Գիլթոնիել,
Դու հեռավոր լույս՝ հույսի, հավատի,
Աղջամուղջային մեր հեռուներից
Քեզ խոնարհ ողջո՛ւյն, հարգանք ու պատիվ:

Դու մութ երկնքից քշեցիր հավետ
Մշուշները չար, մշուշները սև,
Եվ գիշերային քո տերության մեջ

Փայլատակեցին աստղերը լուսե:

Օ՜, դու Էլբերե՜թ, Գիլթոնիե՜լ,
Կապույտ տաճարում ճառագող դու շող,
Հեռո՜ւ հեռավոր ծովերից անդին
Մենք հիշում ենք լույսը հավերժող:

Եվ երգը վերջացավ:

— Ախր սրանք անդրծովյան էլֆերն են: Երգն էլ Էլբերեթի մասին է, — զարմացավ Ֆրոդոն: — Հեռուներից հազվադեպ են նրանք հասնում մեզ մոտ՝ Հոբիթստան, նրանցից Միջերկրում էլ համարյա չկան: Շատ տարօրինակ է. . .

Հոբիթները նստած էին արահետից ոչ հեռու ու սպասում էին: Շուտով էլֆերը երևացին: Նրանց աչքերը փայլում էին աստղային փայլով, մազերը ծփում էին մեղմիկ, և արահետը արծաթավուն էր նրանց ոտքերի տակ: Նրանց լուռ անցան, և միայն վերջին էլֆը շրջվեց, նայեց հոբիթներին ու ծիծաղեց:

— Մի՞թե Ֆրոդոն է, — զրնգուն բացականչեց նա: — Այս ուշ ժամին. . Մոլորվե՞լ եք, ինչ է: — Նա կանչեց մյուսներին, և էլֆերը շրջապատեցին նստածներին:

— Հրաշք է, որ կա. . . — ասացին նրանք: — Երեք հոբիթ գիշերով անտառում: Այսպիսի բան չի եղել Բիլբոյի ժամանակներից. . . Ի՞նչ է պատահել. . .

— Ոչինչ էլ չի պատահել, ով Զարմանահրաշ ժողովուրդ, — ասաց Ֆրոդոն: — Պարզապես մեր ճանապարհները համընկան: Ես սիրում եմ աստղալից երեկոյան զբոսնել և ուրախ կլինեի ձեզ ուղեկցելու համար:

— Առանց ձեզ էլ մենք լավ ենք զգում, ձանձրալի հոբիթներ. . . — ծիծաղեցին էլֆերը: — Որտեղի՞ց գիտեք, թե մեր ճանապարհները համընկնում են՝ չէ՞ որ մեր ուղին ձեզ հայտնի չէ:

— Իսկ դուք որտեղի՞ց գիտեք ես ով եմ, — ի պատասխան հարցրեց Ֆրոդոն:

— Այստեղ իմանալու բան էլ չկա, պատասխանեցին նրանք: — Մենք քեզ Բիլբոյի հետ շատ ենք տեսել: Այդ դու մեզ չես տեսել:

— Ո՞ւր եք գնում և ո՞վ է ձեր առաջնորդը, — հարցրեց Ֆրոդոն:

— Ես եմ, Գարալդը, — պատասխանեց հոբիթներին առաջինը նկատած էլֆը: — Գարալդը Փառավորաց զարմից: Մենք տարագիրներ ենք, մեր ազգուտակը վաղուց ի վեր հեռացել է, և Ծովը մեզ է սպասում: Ճիշտ է, մերոնցից դեռևս կան Ազատքում: Մի խոսքով, ավելի լավ է քո մասին պատմիր, Ֆրոդո: Երևում է, ինչ-որ բան կարգին չէ՞. . .

— Ո՜վ ամենահմաց ժողովուրդ, — միջամտեց Փինը, — ասացեք մեզ, ովքե՞ր են Սև Հեծյալները:

— Սև Հեծյալնե՞ր, — կամաց արձագանքեցին նրանք: — Ի՞նչ գործ ունեք Սև Հեծյալների հետ:

— Մեր հետևից երկուսը գալիս էին. . . գուցեև մեկը, — ասաց Փինը, — հենց հիմա հետ մնաց, երբ դուք երևացիք:

Էլֆերն իսկույն չպատասխանեցին: Նրանք իրենց լեզվով խորհրդակցեցին, հետո Գարալդը շրջվեց դեպի հոբիթները:

— Մենք դեռևս կսպասենք, այդ մասին չենք խոսի, — ասաց նա: — Իսկ դուք իսկապես որ պետք է գաք մեզ հետ: Դա մեր սովորություններից դուրս է, բայց ոչինչ, թող այդպես լինի, եկեք: Մեզ հետ էլ կգիշերեք:

— Զարմանահրա՜շ, զարմանահրա՜շ ժողովուրդ. . . Ես հուսալ անգամ չէի համարձակվում, — ասաց Փինը, իսկ Սամը պարզապես պապանձվել էր ուրախությունից:

— Շնորհակալություն, ով Գարալդ Փառավորաց զարմից, — ասաց Ֆրոդոն և խոնարհվեց: — Էլեն սեյլա լյումենն օմենթիէյլվո, աստղդ լուսավորեց մեր հանդիպումը, — ավելացրեց նա հին էլֆերեն լեզվով:

— Օհո՛, բարեկամներ, — ծիծաղելով զգուշացրեց յուրայիններին Գարալդը, — բարձրաձայն գաղտնի խոսակցություններ չվարեք, մեզ հետ Հին Բարբառի գիտակ կա: Բիլբոն, պարզվում է, հրաշալի ուսուցիչ է: Ողջույն քեզ, ո՛վ էլֆերի բարեկամ. . . — ասաց նա, Ֆրոդոյին խոնարհվելով: — Մենք ուրախ ենք, որ ուղեկիցներ ենք: Գնանք, բայց քայլիր մեջտեղով, որ հետ չընկնես ու մոլորվես՝ առջևում երկար ճանապարհ է:

— Երկա՞ր է, իսկ դուք ո՞ւր եք գնում, — նորից հարցրեց Ֆրոդոն:

— Անտառեզրի ամենախորքը: Հեռու պետք է գնանք, բայց այնտեղ կհանգստանաս և քո վաղվա ճամփան կկարճանա:

— Նրանք գնում էին լուր ու ստվերների պես, քանի որ էլֆերը հոբիթներից էլ անաղմուկ էին քայլում: Փինը սկսել էր ննջել ու սայթաքել, բայց կողքից էլֆ էր քայլում՝ թևից բռնած, ու չէր թողնում, որ ընկնի: Իսկ Սամը քայլում էր Ֆրոդոյի կողքից և քայլում էր ասես սարսափելի, բայց հիասքանչ երազում:

Արահետի երկու կողմերում անտառը գնալով խտանում էր. իրար խառնվող ծառերը մատղաշ էին, իսկ դրանց բները՝ հաստ, հետո արահետը խորացավ լեռնահովտի մեջ, աջից ու ձախից մթնում էին կաղնուտները: Վերջապես էլֆերը շրջվեցին խոր թավուտը, որտեղ ասես հրաշքով մի կանաչ նեղ կածան բացվեց. ավելի ու ավելի խիտ էին պարփակվում ծառերի բարձր պատերը, բայց հանկարծ դրանք նահանջեցին և, գիշերվա լույսի պես, առջևում տարածվեց փայլատ մոխրագույն մարգագետինը: Երեք կողմից այն շրջապատված էր անտառով, իսկ արևելքից հատվում էր զառիթափով, և ծառերի հսկայական սաղարթները նրանց ոտքերին էին հասնում ինչ-որ տեղ ներքևից:

Էլֆերը նստեցին խոտերի վրա ու իրար մեջ մի ցածրաձայն խոսակցություն սկսեցին, ասես հոբիթներին դադարել էին նկատել: Իսկ վերջիններս ննջում էին թիկնոցների ու ծածկոցների մեջ փաթաթված: Գիշերը վրա հասավ, հովտում մարեցին հեռավոր գյուղական կրակները: Փինը պինդ քնեց՝ այտը ճիմակտորին դրած:

Արևելքում բարձր երկնքում վառվեց Աստղային Ցանցը, Ռեմիրաթը. մառախուղը ճեղքելով, բոցավառ սուտակի պես հուրհրաց Բորգիլը: Հետո հանկարծ, ասես կախարդանքով, երկինքը պարզվեց, իսկ աշխարհի ծայրին փայլփլեց Երկնային Սուսերակիր Մենալվաֆորը վառվռուն գոտիով: Էլֆերը նրան դիմավորեցին զրնգուն երգով, և ինչ-որ տեղ մոտակայքում բռնկվեց խարույկի բոսոր կրակը:

— Այդ ինչո՞ւ եք նստել, — հոբիթներին կանչեցին էլֆերը: — Եկեք մեզ մոտ. . . Հիմա զրույցի և զվարճության ժամանակն է:

Փինը նստեց, աչքերը տրորեց ու մրսելով կուչ եկավ:

— Բարի գալուստ, բարեկամներ. . . Խարույկը վառվում է, և ընթրիքը ձեզ է սպասում, — ասաց էլֆը՝ կռանալով քնատ Փինի վրա:

Կանաչ մարգագետինը մտնում էր անտառ ու դառնում անտառային շքասրահ, որին տանիք էին ծառայում ծառերի ճյուղերը: Հզոր բները սյունաշարերի էին նման: Շքասրահի կենտրոնում բոցավառվում էր խարույկը, իսկ ճյուղերից կախված փայլփլում էին ոսկե ու արծաթե լապտերները: Էլֆերը նստել էին կրակի շուրջը՝ խոտի ու կլոր քոթուկների վրա: Ավելի ճիշտ, ոմանք նստած էին, մյուսները բաժանում էին գավաթներն ու գինի լցնում, իսկ երրորդները ուտելիք էին բերում:

— Աղքատիկ հյուրասիրություն է, — ներողություն էին խնդրում նրանք հոբիթներից, — չէ՞ որ մենք մեր տանը չենք, սա դաշտային կանգառ է: Այ, կգաք մեզ մոտ, այն ժամանակ կհյուրասիրվեք ինչպես հարկն է:

— Ի՞նչ եք ասում, նույնիսկ ծննդյանս օրը ավելի համեղ չեն հյուրասիրել, — ասաց Ֆրոդոն:

Հետագայում Փինը այնքան էլ լավ չէր հիշում, թե ինչ է կերել ու խմել. ավելի շատ նայում էր էլֆերի պարզ դեմքերին և ունկնդրում նրանց ձայները, որ տարբեր էին ու զարմանահրաշ, և նրան թվում էր, թե հրաշալի երազ է տեսնում. միայն հիշում էր, որ հաց էին տալիս. սպիտակ ու այնքան համեղ, ասես դու սովից ուշաթափվում էիր, իսկ քեզ մսի մի չաղլիկ կտոր էին տալիս, հետո նա մի գավաթ ինչ-որ վճիտ հեղուկ խմեց, ասես աղբյուրից, ու ոսկեգույն, ինչպես ամառային երեկոն:

Իսկ Սամը նույնիսկ խոսքերով չէր կարող նկարագրել, թե ինչ էր եղել այնտեղ և առհասարակ ոչ մի կերպ չէր կարող պատկերել, թեպետ այդ երջանկությունը հիշում էր մինչև կյանքի վերջը: Նա, իհարկե, ասաց մի էլֆի. «Էհ, տեր իմ, թե իմ այգում էլ այդպիսի խնձորներ լինեին, այ նոր ես այգեպան կլինեի. . . Ճիշտն ասած, խնձորներն ինչ են որ, համա թե երգում եք, հա՛. . . »:

Ֆրոդոն ուտում էր, խմում ու խոսում ոչ առանց դժվարության բառերն ընտրելով: Նա էլֆերերն հազիվհազ էր հասկանում և համակ ուշադրություն դարձած լսում էր: Նրան հաճելի էր, որ կարող էր գոնե նրանց մայրենի լեզվով շնորհակալություն հայտնել իրեն հյուրասիրող էլֆերին: Իսկ նրանք ժպտում էին և ուրախանում. «Այ թե հոբիթ է. . . »:

Հետո Փինը քնեց և նրան զգուշությամբ պառկեցին խոտե փափուկ մահճում՝ ծառերի արմատների արանքում: Սամը գլուխը թափ էր տալիս ու չէր ուզում տիրոջից հեռանալ: Փինը արդեն յոթերորդ երազն էր տեսնում, իսկ Սամը դեռ նստած էր Ֆրոդոյի ոտքերի մոտ, պայքարում էր, պայքարում էր, վերջապես չդիմացավ ու նիրհեց: Դրա փոխարեն, Ֆրոդոյի քունը դեռ չէր տանում, և նա Գարալդի հետ խոսակցություն ունեցավ:

Եղածից-չեղածից, անցածից ու ներկայից էին խոսում նրանք, և Ֆրոդոն երկար հարցուփորձ էր անում նրան Հոբիթստանի սահմաններից այն կողմ տեղի ունեցած վերջին իրադարձությունների մասին: Վերջապես նա տվեց հարցը, որը վաղուց լեզվի ծայրին էր.

— Իսկ ասա, Գարալդ, այն ժամանակից ի վեր տեսե՞լ ես Բիլբոյին:

— Տեսել եմ, — ժպտաց Գարալդը: — Նույնիսկ երկու անգամ: Այս նույն տեղում նա մեզ հրաժեշտ տվեց: Իսկ մյուս անգամ՝ այստեղից հեռու:

Որտեղ՝ նա չասաց, իսկ Ֆրոդոն չհարցրեց:

— Քո մասին խոսենք, Ֆրոդո, — առաջարկեց Գարալդը: — Որոշ բաներ ես արդեն գիտեմ քո մասին. դեմքիցդ էլ կռահեցի, հարցերդ էլ հենց այնպես չէին: Հոբիթստանից հեռանում ես ծանր տարակուսանքներով՝ արդյո՞ք քո ուժերին համապատասխան գործ ես ձեռնարկել և կհաջողվի՞ քեզ մինչև վերջ հասցնել այն: Այդպե՞ս է:

— Այդպես է, — հաստատեց Ֆրոդոն: — Սակայն կարծում էի, թե իմ գործերի մասին միայն Գանդալֆը գիտի և մեկ էլ Սամը:

Նա նայեց Սամին, որը խաղաղ ֆսֆսացնում էր:

— Էլֆերից գաղտնիքների հոսք դեպի Թշնամին տեղի չի ունենում, — ասաց Գարալդը:

— Դեպի Թշնամի՞ն, — զարմացավ Ֆրոդոն: — Դու, երևում է, գիտես, թե ես ինչու եմ ընդմիշտ հեռանում Հոբիթստանից:

— Ես գիտեմ, որ Թշնամին կրնկակոխ հետևում է քեզ, — պատասխանեց Գարալդը, — բայց թե ինչո՞ւ, այդ չգիտեմ: Բայց հիշիր, Ֆրոդո, վտանգը առջևում է և հետևում, վտանգն ամեն տեղ է:

— Հեծյալների մասի՞ն ես ասում: Ես այդպես էլ գիտեի, որ դրանք Թշնամու կողմից են: Իսկ ովքե՞ր են դրանք:

— Գանդալֆը քեզ ոչինչ չի՞ ասել նրանց մասին:

— Նրանց մասի՞ն՝ ո՛չ, չի ասել:

— Այդ դեպքում պետք էլ չէ՝ քանի որ վախը թուլացնում է: Իմ կարծիքով, դու հասցրել ես վերջին ժամին դուրս գալ, հուսով եմ, որ չես ուշացել: Մի դանդաղիր և հետ մի նայիր, որքան հնարավոր է շուտ գնա Հոբիթստանից:

— Քո ակնարկներն ու խոսքերը կտուր գցելն ինձ ավելի են վախեցնում, քան առճակատ խոսակցությունը, — ասաց Ֆրոդոն: — Ես գիտեի, որ առջևում վտանգներ կան, բայց մտածում էի, որ գոնե մեր Հոբիթստանից դուրս կգանք առանց չարաբաստիկ արկածների:

— Հոբիթստանը ձերը չէ, — առարկեց Գարալդը: — Այնտեղ ապրում էին մինչև ձեր ապրելը, հետո էլ կապրեն, երբ հոբիթները հեքիաթ կդառնան: Դուք հո ձեզ ու ձեզ չե՞ք ապրում, իսկ եթե նույնիսկ պատնեշվել եք աշխարհից, բայց հո աշխարհը ձեզնից չի՞ պատնեշվել. . .

— Ըստ երևույթին, այդպես է. միայն թե մեզ մոտ միշտ խաղաղ, հանգիստ ու հարմարավետ է եղել: Իսկ հիմա ի՞նչ անեմ: Ես որոշել եմ կամաց-կամաց հասնել Բրենդիդուիմք, իսկ այնտեղից՝ Ազատք: Եվ ահա հետևել են, հետքներս գտել, ի՞նչ պետք է անեմ. . .

— Գնա, ուր որ մտադրվել ես: Իմ կարծիքով, արիություն կբավականացնի: Իսկ իմաստուն խորհուրդ տալը՝ դա արդեն Գանդալֆի գործն է: Չէ՞ որ ես չգիտեմ, թե ինչու ես ճանապարհ ընկել և Թշնամու ինչի՞ն ես պետք: Իսկ Գանդալֆը երևի գիտի, և ո՛չ միայն այդ: Դու նրա հետ տեսնվելու ես, չէ՞

— Հուսով եմ. . . Ես նրան սպասեցի մինչև վերջին րոպեն. նա պետք է գար ամենաուշը երկու օր առաջ՝ չեկավ: Ի՞նչ ես կարծում, ի՞նչ կարող է պատահած լինել: Գուցե սպասե՞մ նրան:

Գարալդը մռայլվեց ու մտքերի մեջ ընկավ:

— Վատ լուրեր են, — վերջապես խոսեց նա: — Գանդալֆը երբեք չի ուշանում: Սակայն մի ասացվածք կա. իմաստունների գործերին խառնվես՝ գլուխդ կկորցնես: Քանի որ այդպիսի խոսակցություն ես ունեցել նրա հետ, ինքդ էլ որոշիր՝ սպասե՞ս նրան, թե չսպասես:

— Մի ուրիշ ասացված էլ կա, — նկատեց Ֆրոդոն: — «Էլֆից ու քամուց մի հարցրու խորհուրդ, ոչ հա՛ կասեն, ոչ չէ»:

— Ձեզ մոտ այդպե՞ս են ասում, — ծիծաղեց Գարալդը: — Իզուր, ամեն մի խորհուրդ լավ բան ունի իր մեջ, իսկ ամեն տեսակ ճամփա կարող է փորձանք դառնալ: Դրա համար էլ մենք խորհուրդը քամուն չենք տալիս: Իսկ քո փոխարեն ինձ համար դժվար է ընտրություն կատարել՝ ախր դու քո գործերի մասին լռում ես: Բայց և այնպես կասեմ, հանուն բարեկամության: Արագորեն հեռացիր. եթե Գանդալֆը չերևա, անպայման ուրիշ ուղեկից գտիր, մենակ մի գնա: Լավ քննիր բարեկամներիդ ու ընտրիր ամենահուսալի մեկին: Եվ չմոռանաս շնորհակալություն հայտնել ինձ խորհուրդ տալուս համար՝ ես հաճույքով չեմ անում այդ բանը: Էլֆերն էլ իրենց հոգսերն ու ցավերն ունեն, բոլորովին տարբեր, քան մնացածներինը: Մեր ուղիները հազվադեպ են հատվում, բայց այժմ դրանք խաչվել են, իհարկե, ոչ անտեղի, և գուցե այնպես ստացվի, որ ո՛չ վերջին անգամ: Ի դեպ, այդ մասին ավելի լավ է լռենք. վախենում եմ ավելորդ բաներ ասել:

— Հասկանալի է, ես քեզ շատ եմ շնորհակալ, — ասաց Ֆրոդոն, — բայց Սև Հեծյալների մասին իզուր ինձ ոչինչ չբացատրեցիր: Ըստ քեզ ստացվում է, որ ես դեռ երկար պետք է մնամ առանց Գանդալֆի, իսկ ես չեմ հասկանում, թե դրանք ովքեր են:

— Այստեղ հասկանալու ի՞նչ կա: Միայն իմացիր, որ դրանք Թշնամու կամակատարներն են, — ասաց Գարալդը, — փախիր դրանցից. . . Ոչ մի խոսք չփոխանակես դրանց հետ. . . Դրանք մահ են. . . Եվ ինձնից մի հարցրու, որովհետև ինքդ նրանց մասին կիմանաս ժամանակի ընթացքում, ավաղ, շատ ավելին կիմանաս, քան ես գիտեմ: Էլբերեթը քեզ պահապան, Ֆրոդո, որդի Դրոգոյի:

— Իսկ քաջություն որտեղի՞ց վերցնեմ, — հարցրեց Ֆրոդոն: — Շատ եմ վախենում, իսկ քաջությունս էլ ուր որ է կսպառվի:

— Դե, քաջությունը երբեմն հասկանալի էլ չէ, թե որտեղից է վերցվում, նկատեց Գարալդը: — Հուսա, որ քաջությունդ քեզ կհերիքի: Իսկ առայժմ քնիր: Առավոտյան մենք արդեն չենք լինի. բայց սուրհանդակներ կուղարկենք: Ում որ հարկավոր է, կիմանա քո մասին՝ առանց պահապանների ու օգնության չես մնա: Ես քեզ անվանել եմ Էլֆերի բարեկամ, այդ անունը ընդունիր որպես մաղթանք: Մենք հազվադեպ ենք խնամակալում օտարներին և հազվադեպ ենք նրանցից խոսք լսում մեր մայրենի լեզվով:

Ֆրոդոն հանկարծ զգաց, որ ննջում է:

— Երևի ես իսկապես էլ քնեմ, — քրթմնջաց նա:

Էլֆը տարավ նրան Փինի կողքը, պառկեցրեց խոտե անկողնում: Ֆրոդոն իսկույն մեռածի պես քնեց:

Գլուխ չորրորդ. Ուղիղ դեպի սնկերը

Ֆրոդոն արթնացավ զարմանալիորեն թարմ ու առույգ: Նա պառկած էր համարյա գետնին դիպչող ճյուղերի հովանու տակ, բուրավետ խոտերից ու պտերից պատրաստված անկողնում, որ փափուկ էր ու հարմարավետ: Արևը թափանցում էր թրթռացող, դեռ կանաչ տերևների միջով: Նա ձգվեց ու ճարպկորեն ցած թռավ իր կանաչ տերևների հոլիկից:

Սամը նստած էր խոտին, անտառի եզրին: Փինը զննում էր երկինքն ու գուշակում եղանակը: Էլֆերը գնացել էին:

— Նրանք մեզ միրգ, խմիչք ու հաց են թողել, — ասաց Փինը: — Արի նախաճաշիր, հացը դեռ շատ թարմ է: Ես առանց քեզ բոլորը հուպ կտայի, բայց Սամն ուղղակի բերանիցս խլում է:

Ֆրոդոն նստեց Սամի կողքին ու սկսեց ուտել:

— Դե, ի՞նչ ենք անելու այսօր, — հետաքրքրվեց Փինը:

— Դեպի Բրենդիդուիմք, այն էլ շատ արագ, — պատասխանեց Ֆրոդոն լիքը բերանով::

— Իսկ Հեծյալներն էլ մեր կողքից, հա՞, — ուրախ հարցրեց Փինը՝ առաջացնելով Ֆրոդոյի դժգոհությունը:

Առավոտյան արևի տակ Սև Հեծյալները Փինին թվում էին մի սարսափելի երազ, անհեթեթություն:

— Հազիվ թե հենց այդպես ստացվի, — չոր ասաց Ֆրոդոն: — Լավ կլիներ մինչև գետը հասնեինք այնպես, որ դրանք մեզ չնկատեին:

— Իսկ Գարալդը նրանց մասին որևէ բան բացատրե՞ց քեզ:

— Այնպես, որոշ բան, ակնարկներով ու հանելուկներով, — խուսափեց Ֆրոդոն:

— Դու հարցրի՞ր ինչու են նրանք հոտոտում:

— Մենք մանրամասների մեջ չմտանք, — ասաց Ֆրոդոն լիքը բերանով:

— Իսկ հարկավոր էր: Իմ կարծիքով, դա ամենակարևորն է:

— Եթե այդպես է, ապա Գարալդը քեզ մի ավելորդ բառ անգամ չէր ասի, — կտրեց Ֆրոդոն: — Եվ առհասարակ, հանգիստ թող ինձ: Գուցե ես հաց ուտելու ժամանակ բլբլալ չեմ սիրում, գուցե մտածել եմ ուզում:

— Ուտելու ժամանա՞կ ես մտածելու, — զարմացավ Փինը: — Հանկարծ շատ կմտածես::

Նա վեր կացավ ու գնաց մարզվելու:

Իսկ Ֆրոդոն իսկապես մտածում էր, որ պայծառ, նույնիսկ չափազանց պայծառ առավոտ է, հետապնդելու համար շատ հարմար: Եվ Գարալդի ասածները. . . Բայց նրա տխուր խոհերը ցրեց Փինի բարձր գոռոցը: Նա վազում էր բացատում և ուրախ գոռգոռում:

«Է՛հ, նրանց ինչին է պետք. . . — որոշեց Ֆրոդոն: — Մի բան է նրանց հետդ Հոբիթստանում ման տալը՝ քեզ համար կեր ու խմիր, ուրախ զբոսնիր: Իսկ օտարության մեջ սովահար լինել ու տանջվել՝ ոչ, ես նրանց չեմ վերցնի, եթե նույնիսկ իրենք ցանկանան էլ: Ինձ է վիճակված, ես էլ պետք է պատասխան տամ: Սամին էլ չի կարելի. . . »:

Նա նայեց Սամ Համեստուկին, և նրանց հայացքները հանդիպեցին:

— Ի՞նչ է, Սամ, — հարցրեց, — ի՞նչ ես նայում: Չէ՞ որ ես գնում եմ Հոբիթստանից, հեռու եմ գնում: Ճագարի Գերանում, երևի, մեկ օր էլ չմնամ. . .

— Հետո ի՞նչ, տեր իմ. . .

— Իսկ դու ի՞նչ է, ինձ հե՞տ ես գալու:

— Իհարկե:

— Վտանգավոր գործ է, Սամ, շատ վտանգավոր: Կենդանի վերադառնալու հույս համարյա չկա:

— Էդ ժամանակ ես էլ ձեզ հետ չեմ գա, տեր իմ, էդտեղ ինչ կա, — ասաց Սամը: — Նրանց ինձ, թե՝ «Տես, հա, չլքես նրան»: Իսկ ես էլ նրանց ասում եմ. «Բա ոնց, հենց հիմա կլքեմ, սպասեք,

որ տեսնեք, բա չէ: Ախր ես նրա հետ լուսին էլ կգնամ, և թող մի հատ էդ, ոնց էր անունը, Սև Հեծյալները ճամփիս կանգնեն. Սամ Համեստուկի հետ գործ կունենան, կզղջան»: Իսկ նրանք ծիծաղում են:

— Իսկ ովքե՞ր են նրանք, ո՞ւմ մասին են խոսում:

— Նրա՞նք, էլֆերը, էլ ո՞վ . . . Գիշերն էր խոսակցությունը, նրանք ձեր մասին ամեն ինչ գիտեն՝ ո՞ւր, ինչի՞ համար և ինչու: Դե ես էլ չվիճեցի: Ախ, տեր իմ, ի՜նչ ժողովուրդ . . . Ա՛յ քեզ բա՛ն. . .

— Այո, զարմանալի ժողովուրդ է, — համաձայնեց Ֆրոդոն: — Դե հիմա դու նրանց տեսար՝ դո՞ւր եկան քեզ. . .

— Դե ոնց ասեմ, տեր իմ, — մտածկոտ պատասխանեց Սամը: — Ես ի՞նչ, նրանք ինձ պատմածներով էլ էին դուր գալիս: Բայց դե մտածում էի, թե ինչպիսի՞ն են: Իսկ նրանք շատ ուրիշ են, ինչպես որ կան՝ կան. . . Հնադարյան ժողովուրդ է, բայց բոլորովին ջահել, ուրախ, և կարծես թե տխուր՝ գնա ու հասկացիր:

Ֆրոդոն զարմանքով նայում էր Սամին, կարծես նրա մեջ էլ էր տարօրինակ փոփոխություններ տեսնում: Խոսում էր ոչ այն Սամ Համեստուկը, որին գիտեր ինքը, տեսքից նույնն էր, միայն թե դեմքը արտասովոր խոհուն էր:

— Ուրեմն էլ ինչո՞ւ գնաս Հոբիթստանից, քանի որ նրանց տեսել ես, — հարցրեց Ֆրոդոն:

— Ախր, հասկանո՞ւմ ես, տեր իմ, այս գիշերվանից ես ինչ-որ ուրիշ եմ: Գիտեմ չէ՝ ճամփան երկար է, տանում է դեպի խավար. . . Իսկ հետ գնալ չի կարելի: Էլֆեր, վիշապներ, լեռներ, այդ բոլորն, իհարկե, շատ լավ է. . . Բայց ես հո դրա համար չպիտի գամ ձեզ հետ: Էստեղ ուրիշ բան կա: Ես, ախր, անպայման ձեզ պետք կգամ, և ոչ թե էստեղ՝ Հոբիթստանում. . . Եթե հասկանում եք, թե ինչի մասին եմ խոսում:

— Ոչ, չեմ հասկանում, Սամ: Բայց Գանդալֆը, կարծես, լավ ուղեկից է ընտրել ինձ համար: Դե լավ, առայժմ միասին կգնանք:

Ֆրոդոն լուռ վերջացրեց նախաճաշը: Հետո վեր կացավ, շուրջը նայեց ու կանչեց Փինին: Վերջինս իսկույն վազելով եկավ:

— Գնալու ժամանակն է, — հայտարարեց Ֆրոդոն: — Քնեցինք մնացինք, իսկ ճանապարհը երկար է:

— Այդ դու ես քնել-մնացել, — ասաց Փինը: — Ես հո վաղուց եմ արթնացել, մենք միայն սպասում էինք, թե երբ պիտի դու վերջացնես ուտելն ու մտածելը:

— Ահա և վերջացրի: Մենք պետք է որքան կարելի է շուտ հասնենք Ձայգորդյան լաստանավին: Միայն ոչ թե սովորական, այլ կարճ ճանապարհով:

— Կարճ ճանապարհով հարկավոր է թռչել, — արձագանքեց Փինը: — Ոտքի ճանապարհ չկա:

— Կգտնենք, — ասաց Ֆրոդոն, — մի կերպ դուրս կգանք: Լաստանավը գտնվում է Անտառեզրից դեպի արևելք, իսկ ճանապարհը թեքվում է դեպի ձախ, այ այնտեղ, տեսնո՞ւմ եք: Այնպես որ, եթե ուղիղ գնանք, քառորդ չափով կկրճատենք ճանապարհը:

— Ուշ լինի, նուշ լինի, — առարկեց Փինը: — Դժվար տեղանք է. ճահիճ, ճանապարհ չկա, ես հո այնտեղ եղել եմ: Իսկ եթե դու Սև Հեծյալների վերաբերյալ ես ասում, ապա նրանց հետ ճանապարհին հանդիպես, անտառում, թե դաշտում, միևնույնն է, տարբերություն չկա:

— Անտառում ու դաշտում թաքնվելը շատ հեշտ է, — նկատեց Ֆրոդոն: — Մեզ ճանապարհին են սպասում, իսկ ճանապարհից դուրս մեկ էլ տեսար իսկի չփնտրեցին էլ:

— Լավ, — համաձայնեց Փինը: — Գնանք, թռչկոտենք ճիմերի վրայով՝ առջևից դու, քո հետևից՝ մենք: Միայն թե ափսո՛ս: Կարող էինք մինչև փակվելը հասնել «Ոսկի թառ», այնտեղ հրաշալի գարեջուր կա, այս տեղերում ամենալավը: Վաղուց չեմ խմել:

— Այդ դեպքում՝ վիճելու բան չկա, — որոշեց Ֆրոդոն: — Ուշ լինի, նուշ լինի: Իսկ պանդոկում դու կմնայիր և կմնայիր: Սրան տես, «Ոսկի թառի» վրա է նշան բռնել: Ոչ, մեզ հարկավոր է մինչև արևի մայր մտնելը հասնել Ճագարի Գերան: Իսկ դու ի՞նչ կարծիքի ես, Սամ:

— Ես ի՞նչ, ոնց որ դուք կասեք, — հառաչեց Սամը՝ մտածելով Հոբիթստանի ամենալավ գարեջրի մասին:

— Ուրեմն պայմանավորվեցինք, գնացինք դեպի ճահիճներն ու փշերը, — եզրափակեց Փինը:

Շոգ էր, համարյա ինչպես երեկ. արևմուտքի ամպերը ամպրոպ էին խոստանում: Հոբիթներն իջան խոտածածկ զառիթափ լանջով և սուզվեցին մացառների մեջ: Մոտիկից դրանք ավելի խիտ դուրս եկան, քան երևում էին հեռվից: Ոչ մի կածան չկար, և ճանապարհորդները գնում էին իրենց հանձնած բախտի քմահաճույքին: Գետ հասնելով նրանք տեսան կավահող զառիթափեր՝ ծածկված փշոտ թփուտներով: Գետը պատնեշում էր ճանապարհը՝ այն անցնելու համար հարկավոր էր ցեխոտվել, քերծվել ու թրջվել:

— Առայժմ վատ չէ, — մռայլ նկատեց Փինը:

Սամը հետ նայեց՝ թփուտի արանքներից դեռ երևում էր անտառի բլրի կանաչ կատարը:

— Նայեք, — շշնջաց նա՝ Ֆրոդոյի ձեռքը բռնելով: Ճամփորդները շրջվեցին ու կատարին տեսան սև ձին, իսկ կողքը՝ սև, կորացած կերպարանքը:

Դեպի հետ ճանապարհ չկար: Ֆրոդոն առաջինը կավահողով իջավ ցած, դեպի առափնյա թփուտները:

— Ահա այսպես, — ասաց Փինին: — Թե՛ դու, թե՛ ես, երկուսս էլ իրավացի ենք: Կարճ ճանապարհով գուցեև դժվար է ու շատ ժամանակ կկորցնենք, բայց ի՞նչ կլիներ, եթե ճանապարհին դանդաղեինք: Աղվեսի ականջներ ունես, Սամ, որևէ մեկը ծածուկ չի՞ հետևում մեզ:

Նրանք քարացան ու շունչները պահեցին. հետապնդման ձայն չկար:

— Ձին այդպիսի վայրէջքը չի հաղթահարի, — հայտարարեց Սամը: — Բայց թե նա, երևում է, գիտի, որ մենք իջել ենք այստեղ: Գնանք, շուտ:

Ծանծաղ մասում նրանք գետն անցան ու համարյա թե լրիվ տեսանելի դարձան՝ նրանց ծածկում էին միայն սեզի մացառուտներն ու հատուկենտ ծառերը: Սակայն առջևում մթին էր տալիս խիտ անտառը: Քամին օդ բարձրացրեց չոր տերևներն ու հանդարտվեց, իսկ հետո անձրև տեղաց: Հոբիթներն անընդհատ թաքնվելով արագ-արագ հասան անտառ:

Մոտավորապես կես ժամ հետո Փինը ասաց.

— Մենք, երևի, շատ ենք աջ վերցրել, վաղուց պետք է դաշտ դուրս եկած լինեինք:

— Չէ, այդ մեկն արդեն՝ չէ, — ասաց Ֆրոդոն, — ոլոր-մոլոր չենք գնա, թե չէ բոլորովին կխճճվենք: Բացի այդ, վախենում եմ բաց տեղ դուրս գալուց:

Մի կես ժամ ևս անցավ: Ծվեն-ծվեն ամպերի տակից արևը դուրս եկավ, ու անձրևը թուլացավ: Կեսօրն անցել էր, ու քաղցն իրեն զգալ էր տալիս: Նրանք տեղավորվեցին ճյուղածածկ ծփենու տակ, որի դեղնած տերևները դեռ չէին թափվել, իսկ արմատների մոտ բոլորովին չոր էր: Էլֆերը նրանց տափաշշերը լցրել էին ոսկեգույն, վճիտ և մեղրաբույր հյութով: Շուտով նրանք ծիծաղում էին մաղող անձրևի վրա, միաժամանակ և Սև Հեծյալի վրա: Շատ քիչ ճանապարհ էր մնում:

Ֆրոդոն մեջքով ընկավ ծառի բնին ու աչքերը փակեց: Սամն ու Փինը, մոտը նստած, կիսաձայն ձգեցին.

Այս լռությունը կցրե՞մ հիմա,
Նախնիներիս պես կերգեմ ազա՛տ,
Թող քամին ոռնա՛ լուսնյակի վրա,
Ու թող խավարի երկինքն աստղազարդ:

Թող քամին ոռնա՛, անձրևը զարկի՛,
Մե՛կ է, անվարան առաջ կգնամ,
Գինի կխմեմ իմ տափաշշից,
Որ ահ ու չարից ես հեռու մնամ:

— Գինի կխմեմ իմ տափաշշից, — քիչ ավելի բարձր երգեցին նրանք ու սկսվեցին:

Ֆրոդոն ոտքի թռավ: Քամու հետ մի երկարաձիգ ոռնոց լսվեց՝ սահմռկեցնող ու չարագույժ: Այն գլորվում էր՝ դաշտ ու ձոր լցնելով սառը, գիշատիչ կատաղությամբ և բութ գայլիկոնի պես ծակում ականջները: Նրանք քարացած լսում էին: Իսկ ոռնոցին, որը չէր հասցրել ընդհատվել, պատասխանեց հեռավոր մի կաղկանձ, նույնքան կատաղի ու զզվելի: Ապա իջավ մեռելային լռություն:

— Ի՞նչ տարօրինակ ճիչ էր, չէ՞, — ասաց Փինը շինծու կայտառ, բայց բեկբեկուն ձայնով: — Թռչուն է, երևի, ճիշտ է, մեր Հոբիթստանում նման թռչունի ձայն ես չեմ լսել:

— Ոչ գազան է, ոչ թռչուն, — առարկեց Ֆրոդոն: — Մեկը կանչեց, մյուսը պատասխանեց, և նույնիսկ բառեր կային այդ կանչի մեջ, միայն թե զզվելի ու անհասկանալի: Օտար լեզվով:

Չքննարկեցին: Բոլորի գլխում Սև Հեծյալներն էին, իսկ նրանց մասին ավելի լավ է լռել, նրանք արդեն դա հասկացել էին: Գնալը վտանգավոր է, թաքնվելն՝ առավել, բայց թե ուր կորչես, եթե հարկավոր է ամեն կերպ ու հնարավորին չափ արագ հասնել լաստանավին քանի դեռ լույս է: Նրանք պարկերը գցեցին ուսներին ու արագ առաջ շարժվեցին:

Շուտով անտառը վերջացավ, հետո տարածվեցին մարգագետինները: Երևում է, նրանք իսկապես շատ են դեպի հարավ գնացել, հարթավայրից այն կողմ, հեռվում, ձախից աղոտ երևում էր Թեք լեռը: Նրանք գաղտագողի դուրս եկան ծառերի տակից ու մարգագետնով վազեցին:

Սկզբում առանց անտառի ծածկույթի սարսափելի էր: Հեռվում էր մնացել անտառապատ բլուրը, որտեղ նրանք նախաճաշել էին: Ֆրոդոն հետ նայեց, այնտեղ չի՞ երևում արդյոք փոքրիկ սև կետը՝ Սև Հեծյալը: Հեծյալ չկար: Արևը բոցավառել էր ամպերը և իջել հեռավոր բլուրների հետևը, մայրամուտի վառ բռնկումներով լուսավորելով հարթավայրը: Վախն անցել էր, բայց տրտմաշունչ անվստահությունն աճում էր: Սակայն հողն արդեն վայրի չէր՝ խոտհարքներ, արոտավայրեր: Ապա ձգվեցին դռնակներով ցանկապատերը, մշակված դաշտերը, ոռոգող առուները: Ամեն ինչ ծանոթ էր, հուսալի ու խաղաղ. սովորական Հոբիթստան: Ճամփորդներն ամեն քայլը գցելու հետ հանդարտվում էին: Դե գետն էլ արդեն մոտիկ էր, իսկ Սև Հեծյալները մնացին ինչ-որ տեղ թիկունքում՝ որպես անտառային ուրվականներ:

Խնամքով մշակված շաղգամի դաշտի եզրով նրանք մոտեցան մի ցանկապատի: Լայն դռնակից մի ուղիղ ճամփա էր ձգվում, ոչ հեռվում պուրակ էր երևում, իսկ դրանից հետո՝ կալվածքը: Փինը կանգ առավ:

— Ես գիտեմ սա ում տունն է, — բացականչեց նա: — Ախր սա Անգեղի ագարակն է. . .

— Անձրևից փախանք, ջուրն ընկանք, — ասաց Ֆրոդոն հետ ընկնելով, ասես վիշապի որջն էր ընկել:

Սամն ու Փինը զարմացած նրան նայեցին:

— Իսկ ծեր Անգեղը ինչո՞վ քո սրտով չէ, — զարմացավ Փինը: — Նա բոլոր Բրենդիզայքների մոտիկ բարեկամն է: Թափաշրջիկներ չի սիրում, կատաղի գամփռներ ունի՝ բայց դե տեղն էլ մի տեղ չի, համարյա սահման է, գիտես, էստեղ քնածի տեղ չի:

— Այդ բոլորը ճիշտ է, — ասաց Ֆրոդոն և շփոթված ծիծաղեց: — Արի տես, որ վախենում եմ Անգեղից ու շներից, հնուց եկող հիշողությամբ եմ վախենում: Փոքր տղա էի, երբեմն ցանկապատներից թռչում էի սունկ գողանալու և հաճախ էլ բռնվում էի: Իսկ վերջին անգամ նա ինձ մի լավ դնքստեց, օձիքիցս բռնեց ու տարավ շներին ցույց տվեց. «Տեսնո՞ւմ եք, այս վնասակար արարածին, — ասում է, — հենց որ նորից մեզ մոտ բարեհաճի, կերեք սրան, որ հետքն էլ չմնա, թույլ եմ տալիս: Իսկ հիմա՝ սրան մի ճամփա դրեք»: Եվ նրանք իմ հետևից եկան մինչև լաստանավ, պատկերացնո՞ւմ եք: Վախից սիրտս փորումս ձիավոր էր դարձել, թեպետ շները գիտեին, թե ինչ են անում՝ հետևիցս գալիս էին, գռմռում, բայց ձեռք չէին տալիս, քանի որ հրաման չկար:

Փինը ծիծաղեց:

— Այ հիմա ամեն ինչ կպարզենք, — ասաց նա: — Կարծես թե ուզում էիր այստեղ բնակվել: Անգեղը քո ուզած մարդն է, մենակ թե սունկ գողանալու չգնաս: Դռնակից ուղիղ գնանք դեպի

տուն, որ երևա, թե մենք ինչ-որ թափառաշրջիկներ չենք: Իսկ որ իրեն հանդիպենք, ես կխոսեմ, դուք գործ չունեք: Նա և Մերին լավ բարեկամներ են, դե ես էլ նրանց հետ միշտ լավ եմ եղել:

Ճամփորդներն իրար հետևից գնում էին աղուրի երկայնքով. շուտով երևացին ագարակի ագարակամերձ շինությունների եղեգե տանիքները: Հիմնավոր, բարետես աղյուսե տունը շրջափակված էր կաղնեփայտե բարձր պարսպով:

Դարպասի հետևից լսվեց բարձր, համերաշխ հաչոց, ապա մի ձայն.

— Ժանի՛ք, Գա՛յլ, Բռնի՛կ, ինձ մոտ. . .

Ֆրոդոն ու Սամը քարացան, իսկ Փինը մի քանի քայլ էլ գնաց: Դարպասը բացվեց, և երեք հսկայական գամփռ կատաղի հաչոցով նետվեցին դեպի ճամփորդները: Փինի վրա նրանք ուշադրություն էլ չդարձրին: Երկուսը նետվեցին Սամի վրա, նրան սեղմեցին պարսպին ու սկսեցին հոտոտել: Երրորդը՝ հսկայական ու տեսքից ամենակատաղին, կանգնեց Ֆրոդոյի առջև՝ հետևելով նրան ու խուլ գռմռալով:

Դարպասից դուրս եկավ մի գեր, թիկնեղ ու կարմիր դեմքով հոբիթ:

— Բարև՛ ձեզ: Ողջո՛ւյն: Թույլ տվեք իմանալ, ովքե՞ր եք դուք և այստեղ ձեզ ի՞նչ է պետք, — հարցրեց նա:

— Ձեզ էլ ողջույն, պարոն Անգեղ, — ասաց Փինը:

Տանտերը ուշադիր նայեց:

— Վա՛հ, էս հո Փինն է՝ ուզում էի ասել, պարոն Փերեգրին Ճագարակը: — Անգեղը քթի տակ լայն ժպտաց, — վաղուց ձեզ չեմ տեսել: Դե ձեր բախտը բերեց, որ մենք հին ծանոթներ ենք: Ես էլ արդեն ուզում էի շներին բաց թողնել: Թե չէ ով ասես թափառում է այստեղ, իսկ այսօր հատկապես: Օ՛ֆ, ախր գետը մոտիկ է, — ասաց նա գլուխը թափ տալով: — Իսկ դա որտեղի՞ց բարեհաճեց, ոնց որ հեքիաթի հրեշ: Մյուս անգամ դրան ներս թողնողը չեմ: Կմեռնեմ՝ չեմ թողնի:

— Այդ ո՞ւմ մասին եք ասում, — հարցրեց Փինը:

— Դե նա ձեզ ընդառաջ գնաց: Այդ ինչպե՞ս է չեք հանդիպել, — զարմացավ Անգեղը: — Ասում եմ, չէ՞, իսկը հրեշ, ու հարցերն էլ հրեշային. . . Դե մի տուն մտնենք, մի կարգին խոսենք: Ես էլ հենց նոր եմ գարեջուր սարքել:

Ըստ երևույթին, նա եկվորի մասին ուզում էր պատմել անշտապ ու մանրամասն:

— Իսկ շնե՞րը, — հարցրեց Ֆրոդոն:

— Շնե՞րը, քանի հրաման չեն տվել, ձեզ ձեռք չեն տա, — ծիծաղեց տանտերը: — Հեյ, Ժանի՛ք, Բռնի՛կ, պառկե՛լ, — գոռաց նա, — պառկել, Գա՛յլ:

— Միստր Ֆրոդո Պարկինսն է, — ներկայացրեց Փինը: — Երևի դուք նրան չեք հիշում, բայց ժամանակին նա այստեղ ապրել է:

«Պարկինս» անունը լսելով, Անգեղը զարմացավ ու սևեռուն նայեց Ֆրոդոյին: Վերջինս մտածեց, որ հիմա նա կհիշի գողացած սնկերը և շներին բաց կթողնի իր վրա: Բայց տանտերը նրան թևանցուկ արեց:

— Ա՛յ քեզ բան, — ասաց նա: — Ո՞ւմ մտքով կանցներ: Անունը տուր, սուփրան փռիր: Համեցեք, ներս համեցեք. . . Խոսելիք կա:

Բոլորը նստեցին լայն բուխարիկի առջև: Տանտիրուհին կճուճով գարեջուր բերեց և լցրեց չորս գավաթի մեջ: Գարեջուրն այնքան համեղ էր, որ ասելու չէ, այնպես որ Փինը նույնիսկ ամաչեց «Ոսկե թառի» մասին իր ասած խոսքերի համար: Սամն զգուշությամբ էր խմում. ի՞նչ իմանաս ինչ կարող են եփել այս կողմերում: Էլ չասած, որ իր տիրոջն էլ այստեղ նեղացրել են, ճիշտ է՝ վաղուց, բայց դա ի՞նչ նշանակություն ունի:

Խոսեցին եղանակի, բերքի մասին (առհասարակ, սովորականից վատ չէ), հետո Անգեղը գավաթը թմփացրեց սեղանին և նայեց հյուրերին:

— Դեհ, պարոն Փերեգրին, — հարցրեց նա, — որտեղի՞ց եք գալիս, ո՞ւր եք գնում: Եթե ինձ մոտ եք եկել՝ ապա քիչ էր մնում կողքովս անցնեիք: — Ձեզ մոտ ենք եկել, բայց ոչ լրիվ ձեզ մոտ, — պատասխանեց Փինը: — Ճիշտն ասած, քանի որ դուք արդեն գլխի եք ընկել, ուրեմն մենք ակամա ընկանք այստեղ: Լաստանավի ճամփին անտառում մոլորվեցինք:

— Որ շտապում էիք, ուրեմն ավելի լավ էր ճանապարհով գնայիք, — նկատեց տանտերը: — Չնայած բանն այդ չէ: Դե լավ, մնացեք ինձ մոտ, ման եկեք, ազատ, անարգել: Դուք նույնպես, պարոն Պարկինս. . . Թեպետ սունկի հարցում ո՞նց եք: Առաջվա նմա՞ն, — նա հռհռաց: — Այո, ա՛յ, տեսնո՞ւմ եք, հիշում եմ, հիշում եմ փոքրիկ Ֆրոդո Պարկինսին: Այ թե ավազակն էր, հա՛. . . Ձեր ազգանունը, ճիշտն ասած, մոռացել էի, բայց հիշեցրին: Էսօրվա եկողը, ձեր կարծիքով, ինչի՞ մասին էր հարցնում. . .

Նրանք սպասում էին անհամբերությունը զսպելով:

— Այո՛ս, — անշտապ ու հաճույքով ասաց Անգեղը, — սևուկի վրա մոտեցավ բաց դարպասին ու խցկվում է դռնից: Սև, ամբողջապես սևերի մեջ, դեպքը չի երևում, ասես վախենում է, որ կճանաչեմ: Ես էլ մտածում եմ. «Մի սրա՞ն տեսեք: Էս ի՞նչի է հասել մեր Հոբիթստան: Սահմանը մոտիկ է, ով ասես թրև է գալիս»: Ճիշտ է, օրումս դրա նմանը չէի տեսել: Դուրս եմ գալիս: «Դեհ, — ասում եմ, — բարով, ի՞նչ կա: Էդ դուք սխալ եք եկել, նորից հետ գնացեք, ճանապարհը դուրս կգաք»:

Նա ինձ դուր չեկավ. նույնը և Բռնիկին՝ դուրս վազեց, հոտոտեց, պոչը քաշեց տակն ու վնգստաց: Իսկ նա, սևը, նստել է ու չի շարժվում: «Ես հեռվից եմ, — խոսում է ցածր, խուլ, կարծես ձայն չունի, ու արևմուտքի կողմն է նայում, ուրեմն, իմ հողի միջով. . . — Պարկինսն այստե՞ղ է»: Իսկ ինքը շվշվոցով է խոսում, ֆսֆսացնում ու կռանում է վրաս:

Կռանում է, իսկ դեմք չկա, գլխաշորի տակից մի անցք է երևում: Էստեղ դող ընկավ մարմինս: Դեհ, դողը՝ դող, բայց ո՞ւր է խցկվում, երբ իրեն չեն խնդրո՞ւմ. . .

«Դե, քաշվիր էստեղից, — ասում եմ: — Էստեղ քեզ ինչ Պարկինս, ինչ բան: Սխալ տեղ ես մտել: Պարկինսները Նորգորդում են ապրում, շուռ արի ու գնա, մենակ թե ո՛չ իմ հողով, ասում եմ, այլ ճանապարհով»:

«Պարկինսն այնտեղ չէ, — շշնջում է, իսկ նրա շշնջոցը ֆսֆսոցով է: — Պարկինսն այստեղ է եկել: Նա այստեղ է, մոտիկ: Եթե նա հայտնվի ու դու ինձ ասես՝ ոսկի կբերեմ»:

«Բեր, բեր, — ասում եմ, — միայն թե ո՛չ ինձ: Իսկ հիմա չքվի՛ր, քանի ողջ առողջ ես, թե չէ որ շներին բաց եմ թողել. . . »:

Նա ֆշշացրեց, ասես ձեռ առավ ինձ ու ձին քշեց վրաս: Հազիվ հասցրի հետ թռչել, իսկ նա ձին ասպանդակեց ու դուրս եկավ ճանապարհ, և գնա ու իմացիր ով էր, ի՞նչ էր. . . Դեհ, իսկ դուք ո՞ւր եք գնում. . .

Ֆրոդոն նայում էր կրակին ու մտածում, թե հիմա ինչպե՞ս պետք է հասնեն լաստանավ:

— Չգիտեմ, թե ձեզ ինչ ասեմ, — ծիծաղեց նա:

— Չգիտե՞ս, ուրեմն լսիր ինչ որ կասեն, — խորհուրդ տվեց Անգեղը: Է՛հ, պարոն Ֆրո՛դո, պարոն Ֆրո՛դո, ախր ինչ կար էդ Նորգորդում: Էնտեղի ժողովուրդը վատն է (Սամը աթոռի վրա շարժվեց և խիստ նայեց Անգեղին): Այ միշտ էլ էդպես եք եղել, չի լինի, որ սկզբից մտածեք, մի բան էլ խորհրդակցեք: Հենց լսեցի, որ դուք հեռացել եք մոտիկ հարազատներից՝ Բրենդիզայքներից, ու կպել պապի եղբորը, դե ասում եմ, լավ բան չսպասես: Ծեր Բիլբոն ճաշն եփել է, իսկ պետք է ուտեք դուք: Նա հո հարստությունը արդար քրտինքով չի՞ ձեռք գցել հեռավոր երկրներում: Իսկ հիմա էլ մարդիկ են գտնվել, որոնց համար շատ հետաքրքիր է, թե էդ ո՞ւմ գանձերն են թաղված նրա մոտ, Նորգորդում:

Ֆրոդոն լռեց: Փնթփնթան Անգեղը ճիշտ նշանակետին էր խփում:

— Այ, էսպիսի բաներ, պարոն Ֆրոդո, — շարունակեց նա: — Լավ է, գոնե խելք եք արել, որ վերադառնում եք հարազատ վայրեր: Ականջ դրեք բարի խորհրդիս՝ վերադարձե՞լ եք, ուրեմն, սուսուփուս ապրեք ձեզ համար: Օտարների հետ գլուխ չդնեք: Ձեր այստեղ եղած բարեկամներն էլ ձեզ հերիք են, ճիշտ եմ ասում: Իսկ եթե էն սևը նորից երևա, արդեն ես նրա հաշիվը կմաքրեմ, ուզում եք կասեմ, որ դուք ընդմիշտ մեկնել եք Հոբիթստանից, կամ էլ թե չէ

մեռել եք: Դե նրանք երևի ոչ թե ձեզ են հետապնդում, այլ պարոն Բիլբոյին, դուք պետք է ձեր ազգանունը փոխեք:

— Թերևս, դուք ճիշտ եք, — համաձայնեց Ֆրոդոն, աչքը կրակից չկտրելով:

Անգեղը մտազբաղ նայեց նրան:

— Դուք, տեսնում եմ, ուզում եք ձեր խելքով ապրել, — նկատեց նա: — Այն էլ ասենք, որ արդեն ժամանակն է: Դե էդ սևի մասին էլ, երևում է, որ ինձնից էլ շատ գիտեք, հազիվ թե ես զարմացրի ձեզ: Գիտեք, ուրեմն, ձեր իմացածը ձեզ պահեք, ես հետաքրքրասեր չեմ: Բայց երևում է, որ ձեր սիրտն անհանգիստ է: Մտածում եք, ո՞նց սուսիկ-փուսիկ հասնեք լաստանավ, չէ՞:

— Մտածում եմ, — խոստովանեց Ֆրոդոն, — մենակ թե այստեղ մտածելու բան չկա, հարկավոր է գնալ և ինչ լինելու է թող լինի: Շնորհակալություն ձեր բարության համար: Ախր ես ձեզնից և ձեր շներից, չեք հավատա, երեսուն տարի վախեցել եմ: Հիմարություն է, իհարկե: Եթե մի հուսալի բարեկամ ունենայի. . . Էհ, ափսոսում եմ, որ ձեզնից բաժանվում եմ: Դե, գուցե դեռ կգամ այցի, այն ժամանակ էլ կնստենք, կզրուցենք:

— Միշտ համեցեք, — ասաց Անգեղը: — Իսկ առայժմ ինձ լսեք: Օրն իրիկնանում է, մեր ընթրելու ժամն է: Չէ՞ որ մենք պառկում ու վեր ենք կենում արևի հետ: Գուցե մեզ հետ կընթրե՞ք:

— Շատ շնորհակալ ենք, — ասաց Ֆրոդոն: — Միայն վախենում եմ, որ չուշանանք: Առանց այդ էլ գիշերվա կողմը հազիվհազ տեղ հասնենք:

— Տա՛, տա՛, տա՛, էհ, շտապելուց չեք թողնում մի խոսք ասեմ: Իսկ իմ ասածն ի՞նչ է. կընթրենք, ես ծածկասայլ ունեմ, դե դրանով էլ ձեզ կտանեմ: Էդպես արագ կհասնեք, և ապահով կլինի, թե չէ ի՞նչ իմանաս, ինչ կարող է պատահել:

Դա փոխում էր իրերի վիճակը, և Ֆրոդոն համաձայնեց հուրախություն իր ուղեկիցների: Արևը համարյա ծածկվել էր բլուրների հետևում, աղջամուղջը թանձրանում էր: Հայտնվեցին Անգեղի երկու որդիներն ու երեք աղջիկները. հսկայական սեղանը մի որոպեում բացեցին: Ուտելիքը մի դյուժին հյուրերի կբավականացներ: Մոմեր բերեցին, բուխարիկը վառեցին: Գարեջուր ինչքան ուզես կար: Գլխավոր ճաշը՝ խոզապուխտով տապակած սունկը, մի որոպեում կերան: Կրակի մոտ պառկած շները ոսկորներն էին կրծում:

Ընթրիքից հետո Անգեղն ու որդիները լապտերները ձեռքներին գնացին սայլը պատրաստելու: Երբ հյուրերը դուրս եկան, արդեն բոլորովին մութ էր: Նրանք պարկերը դրեցին սայլի մեջ և իրենք էլ տեղավորվեցին: Անգեղը սանձով խփեց երկու լավ կերակրված պոնիների կողերին: Նրա կինը կանգնած էր լուսավորված դռան մեջ:

— Զգույշ եղիր, — ձայն տվեց նա: — Օտարների հետ չկռվշտես, կհասցնես և՝ ուղիղ տուն:

— Լավ, — ասաց Անգեղը, և սայլը դարպասից դուրս եկավ:

Շատ խաղաղ, բոլորովին անքամի, բայց զով գիշեր էր: Գնում էին դանդաղ, առանց լապտերի, մինչև ամբարտակ՝ ճանապարհով, իսկ հետո՝ հողաթմբով: Ճամփաբաժանում Անգեղն իջավ, նայեց այս ու այն կողմ՝ անթափանցելի խավար և ոչ մի ձայն: Գետից մառախուղը քուլա-քուլա բարձրանում էր ջրպատնեշի վրա ու սողում դաշտերը:

— Ա՛յ թե մո՛ւթ է, — ասաց Անգեղը: — Դե հետ գնալիս լապտերը կվառեմ, իսկ հիմա գնանք:

Մինչև լաստանավ երկու-երեք լիգ էր մնում: Հոբիթները թիկնոցներով պինդ փաթաթված նստել էին. լսվում էր միայն անիվների ճռճռոցը և սմբակների կտկտոցը: Ֆրոդոյին թվում էր, թե սայլը չի գնում, այլ հազիվ սողում է: Փինը ննջում էր, Սամը զգուշավոր նայում էր մառախուղի մեջ:

Վերջապես, աջից աղոտ սպիտակին տվեցին երկու բարձր սյուն՝ շրջադարձ դեպի լաստանավը: Անգեղը ձգեց սանձափոկերը, սայլը մի պահ կանգ առավ ու սկսեց իջնել ստորոտը: Նորից լռության վայրկյան. . . Իսկ հետո բոլոր լսեցին այն ձայնը, որ վախենում էին լսել՝ սմբակների ընդհատ թխկթխկոցը: Այն մոտենում էր գետի կողմից:

Անգեղը թռավ ցած, գրկեց ձիերի վզերը, որ պոնիները չֆռթկացնեն, և հայացքը սևեռեց մշուշոտ խավարին: Թրխկ-թրխկ-թրխկ, թխկթխկում էին սմբակները, և այդ ձայնը խուլ արձագանք էր տալիս գիշերվա խաղաղ օդում:

— Ավելի լավ է, դուք թաքնվեք, տեր իմ, — շտապով տիրոջը խորհուրդ տվեց Սամը: — Պառկեք սայլի հատակին և ծածկվեք ճյուղերով, իսկ մենք այդ ձիավորին մի կերպ ճանապարհ կդնենք: — Նա թռավ սայլից ու կանգնեց Անգեղի կողքին՝ հեծյալ է, թող հեծյալ լինի, միայն թե սկզբում թող իրեն տրորեն:

Թրխկ-թրխկ-թրխկ. . . Հիմա կհասնի:

— Հեյ, ո՞վ է, — գոռաց Անգեղը:

Սմբակների թխկթխկոցը լռեց: Մի քանի քայլի վրա գծագրվեց թիկնոցավոր ձիավորի ուրվագիծը:

— Հապա մի կանգ առ, — հրամայեց Անգեղը: Նա սանձափոկերը նետեց Սամին և քայլեց առաջ: — Կանգնիր, որտեղ որ կանգնած ես: Քեզ ի՞նչ է պետք, ո՞ւր ես գնում:

— Ես պարոն Պարկինսի հետևից եմ գնում: Ձեզ այդպիսի մեկը չի՞ հանդիպել, — խուլ հարցրեց մեկի ձայնը, շատ ծանոթ. . . Դե, իհարկե, Մերի Բրենդիզայքն է: Թիկնոցի տակից երևաց լապտերը և լուսավորեց Անգեղի զարմացած դեմքը:

— Պարոն Մերի՛, — բացականչեց նա:

— Նույն ինքը: Իսկ դուք կարծում էիք ո՞վ է, — հարցրեց Մերին՝ հայտնվելով մառախուղի միջից ու սանձը թափահարելով:

Վախն իսկույն անցավ. նրանց առջև ընդամենը մի հեծյալ հոբիթ էր իր պոնիով, բայց ականջները շարֆով փաթաթված:

— Ֆրոդոն սայլից թռավ նրա մոտ:

— Գտնվեցի՞ք, կորածնե՛ր, — ուրախ ասաց Մերին: — Իսկ ես արդեն մտածում էի, որ ինչ-որ տեղ նստել մնացել եք և ընթրիքին չեք հասցնի: Մառախուն էլ մի կողմից պատեց: Ես էլ գնացի ձորերն ստուգելու, թե չէ մեկ էլ տեսար մի տեղ ընկաք, ձեզ ազատողն ո՞վ է: Եվ ահա, պատահում է, չէ՞, իրար չենք հանդիպել: Իսկ դուք նրանց որտե՞ղ գտաք, պարոն Անգեղ:

— Պարզապես նրանք ճամփով չեն եկել, — պատասխանեց նա: — Քիչ էր մնում շները բաց թողնեի նրանց վրա, համբերեք, իրենք ձեզ կպատմեն: Իսկ հիմա, ուրեմն, ներող եղեք, պարոն Մերի, պարոն Ֆրոդո և մյուսներ, ես տուն պիտի գնամ: Դե մեր տիկինը, ինքներդ էլ հասկանում եք, գիշերն էլ վրա տվեց. . .

Նա սայլը հետ շրջեց եկած ճանապարհի կողմը:

— Ուրեմն, բոլորին բարի գիշեր, — ասաց նա: — Ա՛յ թե օր էր էսօրվա օրը, պատմես՝ չեն հավատա: Լավ, ամեն ինչ լավ է, երբ լավ է վերջանում, դուք դեռ պետք է, իհարկե, տեղ հասնեք. . . Դե կտեսնենք էլի. . .

Նա լապտերները վառեց ու ամբողջ հասակով կանգնեց: Իսկ հետո հանկարծ մի հսկայական զամբյուղ հանեց նստարանի տակից:

— Էն է հա՛ մոռանում էի, — ավելացրեց նա: — Էս կնոջս կոմից, մեջը մի քիչ բան կա, գուցե պետք գա՝ հատուկ ողջույններով պարոն Պարկինսին:

Նրանք հայացքով ուղեկցում էին աղոտ լապտերները, որ արագ անհետացան մթին գիշերվա մեջ: Հանկարծ Ֆրոդոն ծիծաղեց. նա պինդ փակված զամբյուղից զգաց տապակած սունկի գրգռիչ հոտը:

Գլուխ հինգերորդ. Դավադրության բացահայտումը

— Ինչ արած, մենք էլ կշտապենք, — ասաց Մերին: — Ես արդեն տեսնում եմ, դուք կատակի ժամանակ չունեք, հետո կխոսենք:

Եվ հոբիթները ցած իջան ուղիղ ճանապարհով, որը հարթ էր, տափակած և մեծ-մեծ սպիտակ քարերով սալարկված: Հարյուր, երկու հարյուր քայլից նրանք հասան գետի լայն նավամատույցը, որի կողքին օրորվում էր ծանրաքաշ գերանակապ լաստանավը: Նավամատույցի հենացցերը սպիտակին էին տալիս երկու բարձր լապտերների տակ: Դեպի ափ էր սողում սպիտակավուն մեգը, բայց ջուրն առջևում սև էր, եղեգների արանքում մառախուղի կաթնագույն խոպոպներ կային: Գետից այն կողմ մառախուղը նոսրանում էր:

Մերին պոնիներին տարավ լաստանավի կամրջակներով, նրանց հետևից իջան մնացած ճամփորդները: Նա անշտապ հետ հրվեց երկար ձողով, և լաստանավի ու նավամատույցի արանքով սահեցին Բրենդիդուիմի հզոր, դանդաղահոս ջրերը: Արևելյան ափը զառիվայր էր. նավամատույցից սկիզբ էր առնում լապտերների առկայծող շղթայով ուրվագծվող ոլոր-մոլոր ճանապարհը: Լեռան վրա, մառախուղի մեջ իրար աչքով էին անում կարմիր ու դեղին կրակները: Այդ Բրենդիդուիմի Փայտաշենի պատուհանների լույսն էր, Բրենդիզայքների հինավուրց կալվածքի, որի կից շինությունները ժամանակի ընթացքում գրավել էին Լեռան լանջերը: Փայտաշենի հիմնադրումով սկսվեց Բրենդիդուիմքի՝ Հոբիթստանի խիտ բնակեցված և համարյա անկախ մարզի, գետի և Հավերժական Անտառի միջև ընկած տարածքի պատմությունը: Այստեղի գլխավոր գյուղը, որ հիմնվել էր Փայտաշենի հետևի բլուրների վրա, կոչվում էր Ձայգորդ:

Արևելքից սկզբում ոչ մի պատնեշ չկար, բայց հետո Բրենդիզայքները բարձր ցանկապատ դրեցին և անվանեցին Դիմադրության Պատնեշ: Ցանկապատը շատ վաղուց է դրված եղել և այդ ժամանակվանից բարձրացել է վեր ու աճել լայնությամբ. ամեն տարի մի քիչ ուղղում էին այն: Սա աղեղնաձև ճկվում էր Բրենդիդուիմյան կամրջից ընդհուպ մինչև Գալարի գետաբերանը, այսպես մի քսան լիգ, եթե ոչ ավելի: Պաշտպանելը՝ պաշտպանում էր, բայց, ցավոք սրտի, ոչ այնքան: Անտառն էլ անընդհատ ջանում էր հասնել Պատնեշին, և Բրենդիդուիմքում դարպասը գիշերը կողպում էին, մի բան, որին Հոբիթստանում հավատալ չէին ուզում:

Լաստանավը կամաց լողում էր դեպի օտար ափ: Գետանցումը միայն Սամի համար էր նորություն, և նրան թվում էր, որ ջրի շիթերը բաժանում են նրան անցյալ, մառախուղի մեջ մնացած կյանքից, առջևում սևին էր տալիս մթին անհայտությունը: Նա ծոծրակը քորեց ու մտածեց՝ տիտիկ անեիր էլի, քեզ ինչ էր եղել. . .

Հոբիթները լաստանավից ցած թռան: Մերին լաստանավն էր ամրացնում, իսկ Փինն արդեն պոնիներն էր տանում ճանապարհով: Սամը վերջին անգամ նայեց Հոբիթստանին և խռպոտ շշնջոցով ասաց.

— Հապա մի նայեք, տեր իմ. . . Աչքի՞ս է երևում, թե՞. . .

Հեռավոր նավամատույցում, լապտերների աղոտ լույսի մեջ հայտնվեց ինչ-որ մեկը, թե ինչ-որ բան, սև, կենդանի մի պարկ, որ օրորվում էր կառանարանի մոտ: Սկզբում նա սողում էր ու ասես հոտոտում նավամատույցը, իսկ հետո հետ-հետ գնաց և լապտերների հետևում կորավ մառախուղի մեջ:

— Այս ինչ նորություններ են Հոբիթստանում, — աչքերը չռեց Մերին:

— Դա մեզ է կրկնակոխ հետևում, — ասաց Ֆրոդոն, — և առայժմ ավելին մի հարցնիր. . Արա՛գ. . .

Նրանք ճանապարհով վազեցին վեր, հետ նայեցին մառախլապատ ափին և ոչինչ չտեսան:

— Շնորհակալություն, գոնե արևմտյան ափին նավակներ չկան, — ասաց Ֆրոդոն: — Իսկ ձիով կարելի՞ է գետն անցնել:

— Մինչև Բրենդիդուիմյան կամուրջ քսան լիգ է, երևի գետը կանցնի լողալով, — ասաց Մերին: — Միայն թե կյանքումս չեմ լսել, որ այստեղ ձիերով գետն անցնեն: Իսկ ո՞վ է այդ ձիավորը. . .

— Հետո կասեմ, երբ դուռը կողպենք:

— Հետո է, թող հետո լինի: Դու և Փինը ճանապարհը գիտեք, իսկ ես պոնիով գնամ Գիրուկի մոտ, ախր ձեզ դեռ ընթրիք էլ պետք է տրվի:

— Ճիշտն ասած, Անգեղի մոտ ընթրել ենք, — ասաց Ֆրոդոն, — բայց կարող ենք մեկ անգամ էլ:

— Ա՛յ թե շատակերն եք, տվեք զամբյուղը, — պահանջեց Մերին և անհետացավ մթության մեջ:

Մինչև Ճագարի Գերանը այնքան էլ մոտիկ չէր: Նրանք ձախ կողմը թողեցին Թեք Լեռը Փայտաշենի հետ միասին և դուրս եկան ճանապարհ, որը Բրենդիդուիմյան կամրջից ձգվում էր դեպի հարավ: Կես լիգ գնալուց հետո թեքվեցին աջ, երկու լիգ ևս սայլուղով, ու մոտեցան խիտ ցանկապատի մեջ երևացող նեղ դարպասին: Տունը մյուսներից առանձնացած էր, որի համար և ընտրվել էր՝ երկար, գետնամած, ճիմածածկ, դուրս պրծած լուսամուտներով և մեծ, կլոր դռնով:

Դարպասից ներս մտնելով, մթության մեջ գնացին փափուկ, կանաչ կածանով: Պատուհանների փեղկերից լույսի նշույլ անգամ չէր թափանցում: Ֆրոդոն բախեց. բացեց Գիրուկ Կուղբոնցը, և տան ներսի լույսը լուսավորեց շեմը: Նրանք արագ ներս մտան, փակեցին բոլոր սողնակներն ու հայտնվեցին մի ընդարձակ նախասենյակում, որը երկու կողմից դռներ ուներ: Դիմացի միջանցքը գնում էր դեպի տան խորքը: Միջանցքում երևաց Մերին:

— Դեհ, ի՞նչ կասեք, — հարցրեց նա, — մենք, ճիշտ է, շատ հապճեպ, բայց աշխատել ենք այնպես անել, որ ամեն ինչ լինի ինչպես տանը: Չէ՞ որ ընդամենը երեկ երեկոյան ենք եկել՝ այնպիսի թոհուբոհ էր այստեղ:

Ֆրոդոն նայեց շուրջը: Իսկապես, նման էր իրենց տանը: Նրա սիրած իրերը՝ Բիլբոյի սիրած իրերը (եթե ճշգրտենք), բոլոր գտել էին իրենց տեղերը, ասես Պարկուտում լինեին: Հաճելի, հարմարավետ, խաղաղ, և նա ցավ զգալու աստիճան ուզեց մնալ այստեղ ու ապրել մինչև իր կյանքի վերջին օրերը: Բարեկամներն այնքան ջանք են թափել իր համար, իսկ ինքը. . . Ֆրոդոն նորից վախեցած մտածեց. ինչպես նրանց բացատրել, որ ինքը շուտով գնալու է, շատ շուտով, հիմա, ոչ՝ վաղը: Բացատրությունն էլ չարժե հետաձգել:

— Զարմանալի՛ է, — բացականչեց նա, կոկորդին դեմ առած գունդը մի կերպ կուլ տալով: — Ասես ոչ մի տեղ էլ չեմ գնացել:

Նրանք ուղեպարկերն իջացրին մեջքներից ու թիկնոցները կախեցին: Մերին առաջնորդեց նրանց և միջանցքի վերջում մի դուռ բաց արեց: Այնտեղ կրակ փայլեց և գոլորշու հոտ եկավ:

— Մի՞թե բաղնիք է, — հիացավ Փինը: — Ա՛յ թե Մերի եմ ասել:

— Ո՞ւմ հերթն է, — հարցրեց Ֆրոդոն: — Ավագի՞ց սկսենք, թե արագաշարժից: Դուք այսպես թե այնպես երկրորդն եք, տեր իմ Փերեգրին:

— Հապա մի վերջ տվեք, — զգաստացրեց նրանց Մերին: — Մի սրանց տեսեք, որոշել են նոր կյանքը գզվռտոցով սկսել: Իմացած եղեք, որ այնտեղ երեք լողաթաս կա և մի կաթսա եռացրած ջուր: Ի դեպ, գուցե պետք կգա՝ սրբիչ, օճառ և այլն: Դեհ, մե՛կ, երկո՛ւ, երե՛ք:

Կես ժամ հետո նա մոտեցավ դռանը:

— Հե՛յ, — կանչեց նա, — ընթրիքի և գարեջրի մասին ի՞նչ կասեք. . .

Ֆրոդոն սանրվելով դուրս եկավ: Մերին քիթը դռնից ներս մտցրեց:

— Իհարկե, ձեզ համար ինչ կա որ, — բացականչեց նա: — Հատակին կարելի է լող տալ: Այդ դուք եք, Փերեգրին, աղավնյակս, ծով կապել: Մաքուր կչորացնեք, իսկ եթե ընթրիքին չհասնեք, ուրեմն ձեր ճակատին այդ է գրված:

Ընթրեցին խոհանոցում, մեծ բուխարիկի կողքը գտնվող սեղանի շուրջ:

— Դեհ, սունկ արդեն կուշտ կերա՞ք, — հարցրեց Գիրուկը, առանձնապես հույս չտածելով:

— Կուշտ կերանք և էլի կուտենք, — գոռաց Փինը:

— Սունկն իմն է, — հայտարարեց Ֆրոդոն: — Սունկն եփել է աշխարհից ամենալավ տնտեսուհին, տիկին Անգեղուհին: Թաթներդ քաշեք, ես ինքս ձեզ համար կդնեմ:

Հոբիթները սունկ շատ են սիրում, նույնիսկ մեզնից էլ շատ: Դրա համար էլ պատանի Ֆրոդոն ժամանակին շատ էր սիրում բանջարանոց մտնել: Իսկ հիմա սունկը շատ էր, հոբիթավարի: Եվ բացի սունկից բավական կերակուր կար, այնպես որ նույնիսկ Գիրուկ Կուղբոնցը վերջապես կուշտ տնքաց: Նրանք սեղանի մոտից վեր կացան և տեղավորվեցին բազկաթոռներում՝ կրակին մոտիկ:

— Հետո կհավաքենք, — ասաց Մերին, — հիմա պատմե՛ք: Սրա՞նց նայեք, իրենց արկածների մեջ լինեն, իսկ մենք այստեղ աշխատենք: Հապա մի տեսնեմ, սկզբից մինչև վերջ, հատկապես Անգեղի մասին՝ ինչ է, նա ցնորվե՞լ է: Ի՞նչ է պատահել, ախր: Ես քիչ էր մնում խելքս թռցնեի՝ նա որևէ բանից վախենա՞:

— Դու էլ լինես՝ կվախենաս, — ճնշող լռությունը խզեց Փինը: — Մի քեզ տեսնեինք՝ ուր գնում ես, նրանք հետևիցդ՝ այդ Սև Հեծյալները:

— Այդ ի՞նչ Հեծյալներ են:

— Սև՝ սև ձիերով, — բացատրեց Փինը: — Երևում է, Ֆրոդոն խոսել չի ուզում, ուրեմն ես ձեզ կպատմեմ:

Եվ նա պատմես իրենց ճանապարհորդության մասին՝ սկսած Նորգորդից. Սամը գլխով էր անում, հազում ու հաստատում: Ֆրոդոն լռում էր:

— Ես հաստատ կմտածեի, որ բոլորը հնարում ես, — ասաց Մերին, — եթե աչքովս չտեսնեի այդ նողկանքը նավամատույցում: Եվ եթե Անգեղի ձայնը չլսեի: Դու ի՞նչ կասես, Ֆրոդո:

— Նրանից ամբողջ ճանապարհին աքցանով խոսք չէիր քաշի, — գանգատվեց Փինը: — Խուլուհամր է խաղում, իսկ օգո՞ւտն ինչ, նույնիսկ Անգեղը գլխի ընկավ, որ բոլոր փորձանքների պատճառը քեռի Բիլբոյի գանձերն են:

— Թող գուշակի իր համար, — փնթփնթաց Ֆրոդոն: — Ճիշտը հո չգիտի:

— Հաստատ ասել չես կարող, — առարկեց Մերին: — Տեսա՛ծ ծերուկ է, նրա գլխում ավելի շատ կա, քան լեզվի վրա: Ասում են, նա իր ժամանակին Հավերժական Անտառում էլ է թափառել, և առհասարակ ի՞նչ ասես չգիտի. . . Գոնե ասա, Ֆրոդո, նա ճի՞շտ է կռահել:

— Դեհ. . . — Ֆրոդոն հապաղեց: — Որոշ բաներ ճիշտ է հասկացել: Այդ բոլորը կապված է Բիլբոյի այն ժամանակվա արկածների հետ, և Հեծյալներն էլ որսում են, իսկ ավելի ճիշտ՝ որոնում են նրան կամ ինձ:

Ասեմ նաև, որ դա բոլորովին կատակ բան չէ և շատ վտանգավոր է: Այստեղ պատսպարան չէ, և ես թաքնվելու տեղ չունեմ: — Նա այնպես նայեց պատուհաններին ու պատերին, ասես ուր որ է դրանք կվերանան: Երեք երիտասարդ հոբիթները բազմանշանակալից հայացքներ փոխանակեցին:

— Վերջապե՛ս, — շշնջաց Փինը:

— Այո, — ասաց Ֆրոդոն և վճռականորեն ուղղվեց: — Ժամանակն է, բավական է հետաձգել: Ձեզ համար մի տխուր նորություն ունեմ, միայն չգիտեմ, թե ինչից սկսեմ:

— Թող այդպես լինի, — հանգիստ առաջարկեց Մերին, — եկ քո փոխարեն ես սկսեմ:

— Դո՞ւ՝ իմ փոխարե՞ն, — աչքերը նրա վրա հառեց Ֆրոդոն:

— Ճիշտ այդպես, իսկ դու լսիր: Սիրտդ հիմա շատ նեղված է, դժվար է միանգամից հրաժեշտ տալը: Իհարկե, վաղուց էիր պատրաստվում հեռանալ Հոբիթստանից, բայց շարունակ հետաձգում էիր. բայց ահա ծածուկ մոտեցավ մեծ դժբախտությունը և խորհելու ժամանակ չմնաց: Հեռանալը հեռացար, բայց բոլորովին չես ուզում ճանապարհ գնալ: Մենք քեզ շատ ենք խղճում:

Ֆրոդոն ուզում էր բերանը բաց անել, հետո փակեց և նայում էր այնպես զարմացած, որ բոլորը ծիծաղեցին:

— Ֆրոդո՛, ծերուկ, — բացականչեց Փինը: — Ի՞նչ է, իսկապե՞ս կարծել ես, թե բոլորիս մոլորեցրել ես: Որտեղի՞ց: Չէ մի, ոչ կարգին ջանք ես թափել, ոչ էլ խելքդ է այդքան հերիքել: Դու արդեն ապրիլից ճանապարհի պատրաստություն ես տեսնում: Ման ես գալիս ու

քրթմնջում. «Երբևէ նորից կտեսնե՞մ այս հովիտը» և նման բաներ: Եվ դեռ ձևացնում ես, թե իբր փողդ վերջանում է, իսկ ո՞ւմ ես վաճառել Պարկուտը՝ Քսակներին. . .

— Ա՛յ քեզ բան, — ծոր տվեց Ֆրոդոն: — Իսկ ես կարծում էի, թե շա՛տ զգուշավորն ու ծածկամիտն եմ: Հետաքրքիր է, թե սրան ի՞նչ կասեր Գանդալֆը: Դուրս է գալիս, ամբողջ Նորգորդը միայն իմ մեկնման մասի՞ն է խոսում:

— Ախր մենք քեզ հինգ մատի պես գիտենք, հասկացիր: Դու որ մի բանի մասին մտածում ես, դեմքիդ գրվում է: Ճիշտն ասած, ես շատ ուշադիր էի քեզ հետևում Բիլբոյի գնալուց հետո, որովհետև հասկացա. սա էլ կգնա, միայն ժամանակ տուր: Մենք շատ էինք վախենում, որ սուսուփուս կծլկես: Գարնանն ու ամռանը աչքներս չէինք կտրում քեզանից, ամեն ինչ չափել, կշռել ու որոշել ենք: Մեզնից դու հենց այնպես չես փախչի, հույս չունենաս. . .

— Ի՜նչ արած, իմ թանկագին բարեկամներ, — ասաց Ֆրոդոն: — Ձեզ համար ծանր է, ինձ համար առավել, բայց ինձ համոզել պետք չէ: Քանի որ դուք կռահել եք, ուրեմն ավելի լավ է օգնեք, կամ գոնե մի խանգարեք:

— Դե դու չհասկացար, — գոռաց Փինը: — Ո՞վ է քեզ բռնում՝ գնա, իսկ մենք էլ քեզնից հետ չենք մնա՝ ես ու Մերին: Սամը հիանալի երիտասարդ է, նա քեզ համար վիշապի կոկորդը կպատռի, եթե ձեռքը հասնի: Միայն թե մեկ ուղեկիցը քեզ քիչ կլինի, ախր ճանապարհորդությունը վտանգավոր է:

— Իմ սիրելի՜, իմ լա՜վ հոբիթներ, — դողացող ձայնով բացականչեց Ֆրոդոն: — Մի՞թե կարող եմ համաձայնել դրան: Ես էլ վաղուց ամեն ինչ մտածել ու որոշել եմ: Ասում եք, վտանգավո՞ր ճանապարհորդություն է. . . Առավել վատ. . . Դա ձեզ համար արշավ չէ գանձեր ձեռք բերելու համար, զբոսանք չէ՝ «Գնալն ու գալը»: Մահ՝ բոլոր կողմերից ու ամեն անկյունից:

— Շնորհակալ ենք, որ բացատրեցիր, — հեգնական պատասխանեց Մերին և հանկարծ հատ-հատ ասաց. — Հենց այդ պատճառով էլ քեզ հետ կգանք: Մենք գիտենք, թե դա ինչ սարսափելի Մատանի է, ահա և ցանկանում ենք օգնել քեզ Թշնամու դեմ:

— Մատանի՞. . . — վերջապես խոսեց ապշահար Ֆրոդոն:

— Այո, Մատանի, — ասաց Մերին: — Այ Ֆրոդո, դու ըստ երևույթին մտածում ես, որ բարեկամներդ բացարձակ դմբլո են: Ախր ես այդ Մատանու մասին արդեն քանի՜ տարի գիտեմ, դեռ Բիլբոյի ժամանակ, բայց քանի որ նրան հարմար էր գաղտնի պահել, ես էլ բացբերանություն չէի անում: Բիլբոյին ավելի վատ գիտեի, քան քեզ, ինքս էլ ավելի երիտասարդ էի, իսկ նա քեզնից խորամանկ էր: Բայց նա էլ սխալական էր՝ ուզո՞ւմ ես պատմեմ:

— Պատմիր, — մեղմ արձագանքեց Ֆրոդոն:

— Սխալմունքի մեջ ընկավ նա Քսակների պատճառով: Մի անգամ, Հյուրասիրությունից մեկ տարի առաջ ես գնում էի ճանապարհով և տեսա Բիլբոյին: Գնում եմ նրա հետևից, մեկ էլ տեսնեմ հեռվում երևացին Քսակները, գալիս են ընդառաջ: Բիլբոն հետ-հետ եկավ, ձեռքը մտցրեց գրպանը և հանկարծ՝ այ քեզ բա՜ն, չքացավ: Ես սկզբում ապշեցի, հետո ուշքի եկա, թռա ցանկապատի վրայով ու՝ թրըմփ խոտի մեջ: Քսակներն անցան, իսկ դատարկ ճանապարհին հանգիստ ծլեց Բիլբոն ու գրպանը մտցրեց մի ինչ-որ փայլփլուն ոսկե բան:

Ինձ, իհարկե, հետաքրքրեց դա: Դե ինչ եմ ասում, ուղղակի սկսեցի լրտեսել նրան: Ինչքան կուզեք դատապարտեք՝ բայց ինչ անեմ, այդպիսի հետաքրքրասերն էի տասնութ տարեկանում: Ավաղ, Ֆրոդո, հարկավոր է նաև խոստովանել, որ Հոբիթստանում միայն ես եմ, բացի քեզնից, տեսել Բիլբոյի հուշագրությունները:

— Հուշագրությունն՞ե՞րն էլ, — ճչաց Ֆրոդոն: — Իսկապես սա ի՞նչ բան է: Մի՞թե ոչինչ չի կարելի գաղտնի պահել:

— Ինչո՞ւ, կարելի է, բայց ո՛չ բոլորից, — ասաց Մերին: — Ես, ճիշտ է, միայն մի աչքով եմ ծիկրակել, բայց դե ի՜նչ ճարպկություն բանացրի. . . Նա իր հուշագրությունները աչքի լույսի պես էր պահպանում: Հետաքրքիր է, ի՞նչ եղան դրանք, ես էն մյուս աչքովս էլ կնայեի: Նրանք քեզ մո՞տ են, հո հետդ չե՞ս վերցրել:

— Ոչ: Հուշագրությունները Պարկուտում չէին: Երևում է, Բիլբոն դրանք տարել է:

— Այո ուրեմն, — շարունակեց Մերին: — Ես ինչ որ գիտեի, պահում էի իմ մեջ, մինչև այս գարուն: Իսկ երբ փորձանքի հոտն եկավ, մենք կազմեցինք մեր դավադրությունը, և մեզնից յուրաքանչյուրը հայտնեց իր իմացածը: Դե դու չխոսկան ես, Գանդալֆի նման, ճիշտ է, նա քեզնից ավելի վատն է: Սակայն քեզանից չեմ թաքցնի, մենք նաև մի գլխավոր աչքուականջ ունենք, չեմ թաքցնի, դե լավ, ցույց կտամ:

— Ցույց տուր, ո՞ւր է նա, — ասաց Ֆրոդոն, խայթվածի պես շուրջը նայելով, ասես սպասում էր, որ հիմա պահարանի դուրս կգա սև լրտեսը՝ սև դիմակով:

— Արի, Սամ, մի՛ ամաչիր, — կանչեց Մերին, և Սամը վեր կացավ մեղավոր տեսքով, ձեռքերը ցած թողած ու մինչև ականջները կարմրած: — Ահա թե ով է մեր գլխավոր տեղեկություններ հայթայթողը: Եվ ես քեզ պետք է ասեմ, որ նա քիչ տեղեկություններ չի հաղորդել, մինչև նրան ճանկեցին: Իսկ այդ ժամանակվանից կարծես բերանը ջուր է հավաքել՝ ազնվությունը, տեսե՛ք, տեսե՛ք, թույլ չի տալիս:

— Սա՛մ, — միայն կարողացավ բացականչել Ֆրոդոն: Նա նույնիսկ չգիտեր՝ ծիծաղեր, զայրանա՞ր, թե թեթևացած շունչ քաշեր: Միևնույն է, հիմար վիճակում էր գտնվում:

— Ես, տեր իմ, — վախեցած հայտարարեց Սամը: — Ձեր թույլտվությամբ, տեր իմ. . . Ես ձեր պատճառով, տեր իմ, Գանդալֆին էլ, ազնիվ խոսք, չեմ հակառակվել: Դե նա անտեղի ոչինչ չի ասի, իսկ նա ի՞նչ ասաց. . . Դուք նրան թե՝ մենակ կգնամ, իսկ նա ձեզ՝ ո՛չ ասում է, վերցրու քեզ հետ նրանց, ում վստահում ես. . .

— Էլ հիմա ո՞ւմ վրա հույս դնես, — փնթփնթաց Ֆրոդոն, իսկ Սամը վշտահար նայեց ներքև:

— Նայած թե ինչ նկատի ունես, — առարկեց Մերին: — Կարող ես հուսալ, որ մենք քո հետևից կրակի ու ջրի մեջ էլ կթռչենք, որ կկործանվենք, եթե հարկ լինի, միասին: Եվ քո՛ գաղտնիքները, համոզված եղիր, քեզնից վատ չենք պահի: Բայց բնավ հույս չունենաս, որ քեզ կլքենք ու դու մենակ կգնաս: Հիմար ես դու, Ֆրոդո, չէ՞ որ մենք քո բարեկամներն ենք. . . Եվ ճանապարհի պատրաստվել ենք ո՛չ կուրորեն: Մենք գիտենք համարյա ամեն ինչ, որ քեզ պատմել է Գանդալֆը, գիտենք Մատանու մասին:

Շատ սարսափելի է, բայց կգանք քեզ հետ, իսկ եթե չցանկանաս՝ միևնույն է, կգանք:

— Դուք էլ ներող եղեք, տեր իմ, — ավելացրեց Սամը, — մենակ թե էլֆերն ի՞նչ խորհուրդ տվին ձեզ: Չէ որ Գանդալֆը ձեզ ասաց. վերցրու ով կուզի քեզ հետ գալ, էդպես չէ՞

— Այդպեսն այդպես է, — Սամին նայելով ասաց Ֆրոդոն, — միայն թե աչքերիս ու ականջներիս ես այլևս չեմ հավատալու. . . Նայում եմ՝ իբրև թե քնած է, լսում եմ՝ կարծես խռմփացնում է: Ես քեզ սրանից հետո ոտքով կստուգեմ՝ խորամանկությունից ես խռմփացնո՞ւմ, թե իսկականից. . . Դե դուք մեկդ մյուսից լավն եք, — ավելացրեց նա, շրջվելով դեպի դավադիրները: — Դեհ, ավազակներ, — նա ակամա փռթկացրեց և ձեռքերը տարածեց: — Ի՜նչ արած, լավ, հանձնվում եմ: Ընդունում եմ Գանդալֆի խորհուրդը: Եթե այսքան սարսափելի չլիներ, գուցե և ուրախությունից պար գայի, իմ հրաշալի անպիտաններ: Դե էլ ի՞նչ թաքցնեմ. մահվան չափ վախենում էի այս երեկոյից, բայց այսպիսի ուրախություն ունեցա:

— Ասվածը՝ արած է: Կեցցե խմբապետ Ֆրոդոն և նրա խումբը, — գոռացին հոբիթներն ու պարեցին Ֆրոդոյի չորսբոլորը: Իսկ Մերին ու Փինը պարից դուրս եկան և սկսեցին երգել՝ հիարկե, նախապես հորինվածը, այն երգի նման, որ երգում էին թզուկները Բիլբոյի հետ ճանապարհ ընկնելուց առաջ.

Ուռռ՛ա, ընկերներ, երգենք երեքով,
Դու մնաս բարով, հայրենի օջախ,
Ինչ էլ որ լինի՝ կհասնենք Ազատք,
Մեզ չեն խանգարի մրրիկները չար:

Կհասնենք այնտեղ, ուր վաղուց, վաղուց
Էլֆերն են ապրում մուժում լեռների,
Կհասնենք՝ թեկուզ տուն ու տեղ թողած,
Ի հեճուկս մեր թշնամիների:

Հետո կիմանանք անելիքը մեր,
Երբ հանգստանանք դեպքերից խառնակ,
Մեր պարտքը մեծ է, մեր ճամփան՝ երկար,
Բայց մենք անպայման կվերադառնանք:

Մոտ են լուսայգի շողերը անմար,
Ժամն է գնալու ու ժամն է հարմար. . .

— Վատ չեք երգում, — նկատեց Ֆրոդոն: — Բայց որ արդեն այդպես է, մենք բավական գործ ունենք, եկեք սկսենք, քանի տանիք կա գլխներիս վերև, չէ՞ որ հետո տանիք չի լինի:

— Տանիքը՝ տանիք, իսկ երգը՝ երգ, — ասաց Փինը: — Դու ի՞նչ է, իսկապե՞ս մտածում ես մինչև լուսաբաց ճամփա ընկնել. . .

— Առայժմ չեմ որոշել, — պատասխանեց Ֆրոդոն: — Ես վախենում եմ Սև Հեծյալներից և վախենում եմ մնալուց այն տանը, որի մասին նրանց հայտնի է, որ ես այնտեղ եմ տեղափոխվել: Գարալդը նույնպես ինձ խորհուրդ տվեց չձգձգել մեկնումը: Ուղղակի շատ կուզենայի տեսնել Գանդալֆին: Ահա Գարալդն էլ զարմացավ, որ Գանդալֆը խոստացել է ու չի եկել: Հետո հարց կա, մի ուրիշ հարց էլ կա: Առաջինը. երբ Հեծյալները կհասնեն Զայգորդ. . . Երկրորդ. մենք երկա՞ր ենք հավաքվելու. . . Ճանապարհը, հո ինքներդ գիտեք. . .

— Երկրորդ հարցի պատասխանը պատրաստ է, — ասաց Մերին, — թեկուզ մի ժամից: Ես ամեն ինչ հավաքել եմ արդեն: Վեց ձիուկ արածում են, պարկերը լիքը լցված են, էլի բան ավելացնե՞մ չմրսելու և փոր լցնելու համար:

— Այո, դուք, տեսնում եմ, փորձված դավադիրներ եք, — հիացավ Ֆրոդոն: — Բայց գուցե մի օր սպասե՞նք Գանդալֆին:

— Մեզ ինչ կա, կսպասենք, միայն թե քո Հեծյալները վրա չտան հանկարծ, — ասաց Մերին: — Նրանք արդեն մեզ հասած կլինեին, բայց, հավանաբար, դեմ են առել Հյուսիսային մուտքի մոտ, այնտեղ Պատնեշը երեք սաժեն է ու հասնում է մինչև գետը: Եվ պահակներն էլ՝ խնդրես չխնդրես, գիշեր ժամանակ ոչ ոքի չեն թողնի: Թերևս, ուժով ներխուժեն, բայց, իմ կարծիքով, այնտեղ հազիվ թե կարողանան: Այնտեղ իսկի ցերեկը ներս չեն թողնի, մանավանդ ինչ-որ սև ու կասկածելիների: Թողնելը՝ չեն թողնի, բայց Բրենդիդուիմն ամրոց չէ, ինքդ էլ ես հասկանում:

Ֆրոդոն մտքերի մեջ ընկավ:

— Մենք այսպես կանենք, — վերջապես ասաց նա: — Վաղ լուսամութին դուրս ենք գալիս: Միայն թե ոչ ճանապարհով, դա ամենավտանգավորն է: Գուցե մեզ բոլոր կողմերից պաշարել են, ես հո չգիտեմ քանի՞ Հեծյալ է, կարող է՝ երկուսն են, կարող է՝ շատ: Մենք պիտի գետնի տակ մտածների պես գնանք:

— Էդ ուրեմն դուք մենակ Հավերժական Անտառով պիտի գնաք, — սարսափով բացականչեց Գիրուկը: — Զգուշացեք, էնտեղ ամենավատն է: Էլ ո՞նց կլիներ, ինչ-որ Սև Հեծյալներ. . .

— Այ հենց դու էլ մտածիր ազատ ժամանակ, — խորհուրդ տվեց նրան Մերին: — Անտառը, իհարկե, ահավոր է, բայց այնուամենայնիվ Ֆրոդոն իրավացի է: Այնտեղ մեզ չեն հետապնդի, բախտներս որ բերի, ուրեմն մեր հետքը կկորցնեն ու ամեն տեսակ հետապնդումից կազատվենք:

— Էդ ձեր բախտը Հավերժական Անտառո՞ւմ է բերելու, — ծղրտաց Գիրուկը: — Այնտեղ դեռ ոչ ոքի բախտը չի բերել: Հետապնդողները կկորցնեն ձեզ, ո՞նց չէ. . . Ինքներդ հավիտյան կկորչեք. . . Էնտեղ ոչ ոք չի գնում:

— Ոնց թե ոչ ոք չի գնում, — ասաց Մերին: — Բրենդիզայքներն են գնում՝ իհարկե ոչ ամեն օր, երբ պետք է լինում: Եվ մեր կածանն ունենք այնտեղ: Ֆրոդոն այնտեղ եղել է, ճիշտ է, շատ վաղուց: Ես էլ եմ գնացել, նույնիսկ մի քանի անգամ, ցերեկով, երբ ծառերը քնած են եղել:

— Ձեր գործն է, ձեր գործն է, — ձեռքը թափ տվեց Ֆրեդեգարը: — Ինձ որ հարցնեք, ուրեմն աշխարհումս Հավերժական Անտառից սարսափելի բան չկա, իսկ թե ինչե՞ր են պատմում դրա մասին, նույնիսկ ավելի լավ է չլսես: Դե ինձ ինչ, ես հո ձեզ հետ չեմ գալիս: Եվ հիմա, ազնիվ

խոսք, շատ ուրախ եմ, որ մնում եմ, ա՛յ Գանդալֆը էս երկու օրը կերևա, ու ես ձեր մասին ամեն ինչ կպատմեմ նրան:

Գիրուկը սիրում էր Ֆրոդոյին, բայց Հոբիթստանից վախենում էր հեռանալ, ի՞նչ իմանաս ի՞նչ կլինի մի ուրիշ տեղում: Նա գետի այս կողմում էլ առաջին անգամ էր: Մի խոսքով, դավադիրները մտադիր չէին նրան իրենց հետ տանել. ըստ ծրագրվածի, նրա պարտականությունն էր պահպանել տունը և մոլորեցնել հետաքրքրասերներին՝ ձևացնելով, թե պարոն Պարկինսն այստեղ է, խնդրե՛մ, համեցե՛ք, միայն թե ոչ հիմա: Համենայնդեպս, նույնիսկ Պարկուտից հին զգեստներ էին բերել. Գիրուկը դրանք կհագնի ու ով գիտե՝ գուցեև նրան Ֆրոդոյի տեղը դնեն: Ոչ ոք չէր մտածում, որ դա ամենավտանգավոր դերն է:

— Հիանալի է, — ասաց Ֆրոդոն, քննելով դավադրական մտահղացումները: — Ուրիշ ի՞նչ կերպ կարող էինք լուր տալ Գանդալֆին: Հազիվ թե Հեծյալները կարդալ իմանան և, այնուամենայնիվ, ես չէի համարձակվի նամակ թողնել: Իսկ քանի որ Գիրուկը այստեղ է լինելու, էլ մտածելու բան չկա. ով-ով, բայց Գանդալֆը մեր հետևից կհասնի: Ուրեմն՝ առավոտից ճամփա ենք ընկնում դեպի Հավերժական Անտառ:

— Ինձ ի՞նչ կա, — ասաց Փինը, — անտառ է, թող անտառ լինի: Մենակ թե ես Գիրուկին չեմ նախանձում, որ պիտի տեսնի Սև Հեծյալներին:

— Իսկ ես քեզ չեմ նախանձում, — ասաց Ֆրեդեգարը: — Կմտնես անտառ՝ հետ գալ կուզես, բայց ուշ կլինի:

Ֆրոդոն վերջապես պառկեց, բայց ոչ մի կերպ քնել չկարողացավ: Ոտքերը նվվում էին, դեռ լավ է, որ գոնե վաղը ձիով կգնան: Կամաց-կամաց նա խորասուզվեց անհանգիստ քնի մեջ, ու նրան թվում էր, թե վերևից, պատուհանից նայում է անտառի մթության մեջ, և ծառերի արմատների մոտ գետինը հոտոտելով ինչ-որ սև արարածներ են սողում հիմա կհասնեն իրեն:

Հեռվից աղմուկ լսվեց. երևի քամին անցավ տերևների միջով: Ոչ, հասկացավ նա, դա քամի չէ, դա հեռավոր ծով է, իսկ ալիքների աղմուկը նա երբեք իրականում չի լսել՝ միայն երազում: Հետո պատուհանը վերացավ, միայն ընդարձակ տարածություն է: Եվ ոչ մի ծառ: Շուրջը շրշում է սև հավամրգին, աղի հոտը ռունգները խուտուտ է տալիս: Ֆրոդոն աչքերը բացեց և թեք ժայռի վրա մի բարձր սպիտակ աշտարակ տեսավ: Նա ցանկացավ բարձրանալ այնտեղ ծովին նայելու համար, սկսեց մագլցել լանջով, բայց հանկարծ երկինքը լուսավորվեց, և ճայթեց ամպրոպը:

Գլուխ վեցերորդ. Հավերժական անտառ

Ֆրոդոն խայթվածի պես վեր թռավ: Սենյակում մութ էր. Մերին մոմը ձեռքին կանգնած էր միջանցքում և ուժեղ թակում էր կիսաբաց դուռը:

— Կամաց. . . Ի՞նչ է պատահել, — քունը գլխին վախեցած կմկմաց Ֆրոդոն:

— Դեռ հարցնում է. . . — զարմացավ Մերին: — Վեր կենալու ժամանակն է, չորսն անց է կես: Դրսում անթափանց մառախուղ է: Վեր կաց, վեր կաց: Սամն արդեն նախաճաշ է պատրաստում: Փինը, որ Փին է, էլի ոտքի վրա է: Ես գնացի պոնիները թամբելու: Արթնացրու թամբալ Գիրուկին, գոնե թող ճանապարհի մեզ:

Ժամը յոթի մոտ հինգն էլ պատրաստ էին ճանապարհ ընկնելու: Գիրուկը բերանով մեկ հորանջում էր: Նրանք անաղմուկ դուրս եկան տնից և կածանով քայլեցին Մերիի հետևից, որը սանձից բռնած տանում էր ծանր բարձված պոնին: Խոնավ տերևները պսպղում էին, ճյուղերից կաթկթում էր, և սառը ցողը մոխրագույն շղարշի պես պարուրում էր խոտը: Անդորր էր, և հեռավոր ձայները բոլորովին մոտիկ էին լսվում. հավերը կռթկռթում էին, մեկի դուռը փակվեց, ցանկապատի մի դռնակ ճռռաց:

Պոնիները ախոռում էին, ամրակազմ, մեկը մյուսից սիրուն, դանդաղաշարժ, բայց դիմացկուն, իսկը հոբիթների պես: Փախստականները հարմար նստեցին, ձիերը խթանեցին և խորացան թանձր մառախուղի մեջ, որն ասես նահանջում էր նրանց առջև, իսկ հետո նորից փակվում: Մեկ ժամ կամ մոտ մեկ ժամ գնալուց հետո վերջապես մառախուղից անսպասելիորեն դուրս լողաց Պատնեշը՝ շղարշված բարձր արծաթե սարդոստայնով:

— Դեհ, ինչպե՞ս եք անցնելու դրա վրայից, — հարցրեց Ֆրեդեգարը:

— Իմ հետևից, — պատասխանեց Մերին: — Կտեսնես:

Նա շրջվեց ձախ ու գնաց Պատնեշի երկարությամբ, որը շուտով դեմ առավ ձորի բերանին: Դեպի ձորն իջնող լանջը հանկարծ դարձավ աղյուսե պատերով ստորգետնյա մուտք, որից սկիզբ առնող արահետը սուզվում էր Պատնեշի տակ և դուրս բերում ձորի մյուս կողմը:

Գիրուկ Կուղբոնցը կանգնեցրեց պոնին:

— Մնաս բարո՛վ, Ֆրոդո, բացականչեց նա: — Դու իզուր գնացիր Անտառ, դա կործանարար տեղ է, կարող է հենց այսօր էլ փորձանքի մեջ ընկնեք: Այնուամենայնիվ, ձեզ հաջողություն եմ ցանկանում՝ և՛ այսօր, և՛ վաղը, և՛ միշտ. . .

— Եթե իմ առջևում միայն Հավերժական Անտառը լիներ, ես բախտավոր կլինեի, — ձայնեց Ֆրոդոն: — Գանդալֆին հաղորդիր, որ շտապ գա Արևմտյան Ուղի՝ մենք էլ Անտառից կգնանք այնտեղ և այնտեղից կծլկենք: Մնաս բարո՛վ: — Այստեղ նրա ձայնը խլացավ արձագանքից, և Ֆրեդեգարը վերևում մենակ մնաց:

Մութ ու խոնավ անցուղու վերջում երկաթե դարպասն էր: Մերին իջավ ձիուց և բացեց այն, իսկ երբ բոլորն անցան, փակեց: Դարպասի դռները ծածկվեցին և փականը չարագուշակ չխկաց:

— Դե, վերադարձի ճանապարհը փակված է, — ասաց Մերին: — Մնաս բարով, Հոբիթստան, մեր առջև Հավերժական Անտառն է:

— Իսկ սրա մասին ճի՞շտ բաներ են պատմում, — հարցրեց Փինը:

— Նայած ի՞նչ են պատմում, — պատասխանեց Մերին: — Եթե դու նկատի ունես այն սարսափելի հեքիաթները, որոնցով վախեցրել են Գիրուկին մանկության տարիներին՝ անտառի ոգիների, գայլերի և ամեն տեսակ չարքերի մասին, ապա հազիվ թե: Ես այդ հեքիաթներին չեմ հավատում: Բայց Անտառն իսկապես սովորական չէ: Ամեն ինչ այստեղ զգուշավոր է, ոչ թե Հոբիթստանի պես: Ծառերն այստեղ օտարներին չեն սիրում և հետևում, հետևում, հետևում են նրանց իրենց բոլոր. . . երևի տերևներո՞վ, հո աչքեր չունե՞ն: Ցերեկը այնքան էլ սարսափելի չէ, թող հետևեն իրենց համար: Ճիշտ է, երբեմն նրանցից մեկը ճյուղ է վրադ գցում, մյուսը հանկարծ արմատն է ցցում, երրորդը բաղեղով է փաթաթվում քեզ: Դե դրանք դատարկ բաներ են, իսկ ա՛յ գիշերը, ինձ ասել են. . . Ես ինքս էլ գիշերն այստեղ եղել եմ մեկ կամ երկու անգամ, այն էլ բացատում: Ինձ թվում էր, ծառերը փսփսում են, չարախոսում անհասկանալի լեզվով և ինչ-որ չար բան են գուշակում. քամի չկար, բայց ճյուղերը օրորվում էին ու շրշում: Ասում են, ծառերը կարող են տեղաշարժվել ու պատի պես շրջապատել օտարներին: Ինչ-որ ժամանակ նրանք նույնիսկ Պատնեշին են մոտեցել. հայտնվել են պատնեշի կողքը, սկսել են ճեղքել ու սեղմել, վերևից թեքվել են պատնեշի վրա: Այդ ժամանակ հոբիթները դուրս են եկել, կտրել հարյուրավոր ծառեր, մեծ կրակ արել և Պատնեշի երկարությամբ մի լայն շերտ վառել: Անտառը նահանջել է, բայց վիրավորանքը չի մոռացել: Իսկ շերտը հիմա էլ դեռ երևում է:

— Միայն ծառերն ու վե՞րջ, — նորից հարցրեց Փինը:

— Դե չէ, իբրև թե նաև զանազան անտառային հրեշներ են բնակվում, — պատասխանեց Մերին, — միայն թե ոչ այստեղ, այլ Գալարի հովտում: Ինչ-որ մեկն անընդհատ տրորում է արահետները, անտառ ես մտնում, իսկ էստեղ նոր արահետ է բացվել, միայն անտառի ոգին գիտի, թե ուր է տանում և ամեն անգամ՝ տարբեր տեղեր: Էստեղ մոտերքում առաջ կար մեկը, թեպետ հիմա երևի ծածկվել է խոտով, այդ մեծ արահետը տանում էր դեպի Հրդեհի բացատը և հետո իջնում էր մոտավորապես մեզ հարկավոր կողմը՝ հյուսիս-արևելք: Թերևս, գտնեմ:

Անվերջանալի ձորից դեպի վեր, անտառ էր հասնում հազիվ նկատելի ճամփան, հասնում էր ու իսկույն էլ անհետանում: Ծառերի տակ դուրս գալով նրանք հետ նայեցին. հետևում սևին էր տալիս Պատնեշի աղոտ շերտը՝ ահա ուր որ է կծածկվի աչքից: Իսկ առջևում միայն բներ են ու բներ, ուղիղ ու խոտոր, սլացիկ ու ծուռումուռ, ողորկ ու խթոտ, ճյուղավոր ու ոստավոր, մոխրականաչ, մամռակալած ու քարաքոսապատ:

Միայն Մերին էր, որ չէր վհատվում:

— Դու փնտրի՛ր, փնտրի՛ր, քո մեծ արահետը, — մռայլ շտապեցրեց նրան Ֆրոդոն: — Մեկ էլ տեսար մեկս-մեկիս կորցրեցինք կամ բոլորս միասին մոլորվեցինք. . .

Պոնիները առաջ էին շարժվում ծառերի միջով, զգուշորեն անցնելով գալարուն, իրար հյուսված արմատների վրայով: Ձառիկող արահետը նրանց տանում էր սարն ի վեր, ու ծառերն ավելի ու ավելի բարձր, մութ ու խիտ էին կախվում նրանց վրա: Խուլ լռություն էր տիրում. երբեմն անշարժ սաղարթի վրայով գլորվում ու ցածր էր ճլմփում ուռճացած կաթիլը: Ճյուղերն ասես քարացել էին, ոչ մի տեղից շրշյուն անգամ չէր լսվում, բայց հոբիթները գիտեին, որ իրենց տեսնում են, որ իրենց զննում են՝ սառը, կասկածով, թշնամաբար: Ըստ որում, քանի գնում՝ ավելի թշնամաբար էին նայում՝ նրանք անընդհատ ջղաձգորեն շրջվում էին ու գլուխները ցնցում, ասես անսպասելի հարձակումից զգուշանալով:

Արահետը կորչում էր, ծառերը ճանապարհը խոչընդոտում էին, և Փինը հանկարծ զգաց, որ այլևս չի կարող առաջ գնալ:

— Վա՛յ, վա՛յ, վա՛յ, — աղեկտուր գոռաց նա: — Ես ոչ մի վատ բան չեմ անում, թողեք անցնե՛մ, խնդրո՛ւմ եմ. . .

Բոլորը վախից շունչները պահեցին, բայց ճիչը չթնդաց անտառում, այլ տեղնուտեղը խլացավ, ասես խեղդեցին: Ոչ արձագանք, ոչ կրկնահնչյուն, միայն անտառն ավելի խտացավ և ասես չարախնդորեն խշշաց:

— Ես քո տեղը լինեի՝ չէի գոռա, — ասաց Մերին: — Մի գրոշի օգուտ չկա, իսկ վնաս կգա:

Ֆրոդոն մտածեց, որ ճանապարհն էլ չեն գտնի և որ ինքն իզուր բարեկամներին բերեց այս չարագուշակ անտառը: Մերին հայացքով որոնում էր արահետը, սակայն՝ շատ անվստահ, և Փինն այդ նկատեց:

— Դե դու հենց սկզբից մոլորվել ես, — փնթփնթաց նա, իսկ Մերին ի պատասխան թեթևացած սուլեց ու մատով ցույց տվեց դեպի առաջ:

— Ա՛յ թե գործ է, հա՛, — մտածկոտ ասաց նա: — Ծառեր են, բայց ախր տեղում կանգնած չեն մնում: Հրեն, թե ուր է, էդ Հրդեհի Բացատը, իսկ այնտեղ տանող արահետն, ա՛խ, ո՞ւր է կորել. . .

Նրանց ճանապարհը լուսավորվեց, ծառերը նահանջում էին: Նրանք հանկարծ դուրս սահեցին ճյուղերի արանքից ու հայտնվեցին մի լայնարձակ բացատում: Նրանց գլխավերևում անսպասելի բացվեց կապույտ ու մաքուր երկրինքը: Արևը չէր հասցրել շատ բարձրանալ, բայց արդեն ցած էր հղում բարեհամբույր շողերը: Բացատը եզերող ծառերի սաղարթն ավելի խիտ ու ավելի կանաչ էր, ասես այն անջրպետում էր անտառից: Բացատում ոչ մի ծառ չկար. կոշտ խոտ, իսկ սրանց մեջ ցցված չորուկ գինազոխեր, գորշ մոլախոտ, թոռոմած մոլեխինդ ու ուղտափուշ: Ամեն ինչ քայքայվում էր ու թափվում, փոշի դառնում, բայց Հավերժական Անտառի մթին թավուտներից հետո այստեղ հրաշալի էր:

Հոբիթներն աշխուժացան. արևը բարձրացավ, երկինքը փայլեց նրանց գլխավերևում, և հորդեց ցերեկային լույսը: Բացատի հեռավոր ծայրին հանկարծ պարզ նշագծվեց ծառերի մեջ գտնվող արահետը: Այն լանջն ի վեր մտնում էր անտառ, դրա վրա կախվում էին խիտ ճյուղերը՝ մեկ կիպ մոտենալով, մեկ իրարից անջատվելով:

Բայց հիմա նրանք գնում էին առաջվանից շատ արագ, հուսալով, որ Անտառը բարիացել է իրենց նկատմամբ և թույլ կտա անցնել: Սակայն ո՞ւր էր թե. . . Շուտով գաղտնի չարակամությունը բացահայտ դարձավ: Հեղձուկ օդը շնչել չէր լինում: Ծառերը երկու կողմերից սեղմեցին նրանց և ճանապարհը փակեցին: Յուրաքանչյուր քայլը դժվարությամբ էր արվում, պոնիների սմբակները խրվում էին փտած տերևների կույտերի մեջ, խփվում չերևացող արմատներին, և լռության մեջ այդ հարվածը խուլ արձագանքում էր ականջներում: Ֆրոդոյին կրծում էր տագնապը և կեղեքում կսկիծը: Նա ինքն իրեն մեղադրում էր թեթևամտության համար և այն է, ուզում էր մտածել հետ վերադառնալու մասին (այսինքն՝ հայտնի չէ, թե ուր), երբ հանկարծ ծանր վերելքը վերջացավ, ծառերը բաժանվեցին և ճամփորդներին բաց թողեցին մի հարթ բացատ, իսկ արահետը վազեց ուղիղ դեպի կանաչ բլուրը, որը բարձրանում էր Անտառի վերևում՝ ոնց որ ցցված մազերի վերևից երևացող ճաղատ գագաթը: Վերջապես կարելի էր հանգիստ դիտել շուրջը: Արահետը ոլորապտույտ

բարձրանում էր լանջով, դրա համար էլ հոբիթները շուտ չհայտնվեցին բարձունքում՝ կապտավուն արևավառ մշուշի մեջ, որ փակում էր տեսադաշտը:

— Ա՛յ այնտեղ, — ասաց Մերին, — Բլուրներից Գալար գետը հոսում է դեպի հարավ-արևմուտք, Անտառի խորքը, կտրում-անցնում է ու թափվում Բրենդիդուիմ: Ահա թե որ կողմից ավելի շատ պետք է խուսափենք: Ասում են, հենց գետից է գալիս անտառի գլխավոր կախարդանքը:

Արդեն տասնմեկին մոտ էր, արևը վառում էր, և աշնանային շղարշը ավելի ու ավելի թանձր էր փռվում: Արևմուտքը չէր երևում, ոչ Պատնեշը, ոչ էլ նրա հետևում ընկած գետահովիտը: Եվ որքան նրանք նայում էին հյուսիս, հայացքով չէին կարողանում գտնել Արևմտյան Մեծ Ուղին: Չորս կողմից անշարժ ալիքներով նրանց շրջապատում էր Անտառը: Ամենախելոք բանն էր՝ նստել ու կեսօրյա հացն ուտել: Այդպես էլ արեցին:

Ուժերը թարմացնելով ու սրտապնդված նրանք իջան ներքև: Արահետը, որով բարձրացել էին բլուրը, ստորոտից ձգվում էր դեպի հյուսիս: Սակայն չհասցրին ուրախանալ, երբ զգացին՝ ինչ-որ բան իրենց դանդաղ, բայց հաստատապես տանում է աջ, հարավ-արևելք: Շուտով արահետը թեքվեց, երևի դեպի Գալարի հովիտը, այսինքն՝ բոլորին ոչ հարկավոր ուղղությամբ: Խորհրդակցելով, նրանք որոշեցին շրջվել-մտնել անտառի խորքը ու գնալ դեպի հյուսիս, դեպի անտեսանելի Ուղին. այնտեղ հողն ավելի չոր է, ծառերը նոսր են, սովորական եղևնիներ ու սոճիներ, ոչ թե այստեղի նման՝ կաղնի, հաճարի, բոխի ու էլի ինչ-որ հանելուկային, հինավուրց տեսակներ:

Սկզբում թվում էր, որ ճիշտ են վճռել, նույնիսկ սկսեցին ավելի արագ գնալ, թեպետ երբ արևը թափանցում էր սաղարթից, շատ թույլ էր լուսավորում: Նորից իրար սկսեցին միանալ ծառերը, որոնք հեռվից թվում էին իրարից շատ հեռու: Խոր խանդակները և կոծոծապատ փոսերը փակում էին ճանապարհը: Եվ բոլորը, չգիտես ինչու, աջ կողմից, շրջանցելու հնարավորություն չկար, հարկավոր էր անցնել դրանց միջով, իսկ ներքևում թավ խոտ էր և խիտ փշաթփեր: Դեպի աջ շարժվել հնարավոր չէր, իսկ ձախ՝ փշերը նահանջում էին: Հազիվհազ հասան վերև, իսկ այստեղ ծառերը խտացան որպես մի մութ պատ: Դեպի ձախ և սարն ի վեր թույլ չէին տալիս, այնպես որ հոբիթներն ակամա գնում էին դեպի աջ և սարն ի վար:

Մեկ-երկու ժամ հետո նրանք ուղղությունը կորցրին՝ միայն գիտեին, որ դեպի հյուսիս չեն գնում: Ինչ-որ մեկը նրանց տանում էր, և նրանք հնազանդորեն գնում էին Անտառի խորքը՝ ամենախորքը:

Արևը թեքվում էր դեպի արևմուտք, երբ նրանք մտան իրեն բոլոր տեսածներից շատ ավելի լայն ու խոր մի խանդակ: Դեպի ձախ և վեր ճանապարհ չկար, հո չէի՞ն թողնելու պոնիներն ու բեռները. . . Ձիերից իջնելով, նրանք գնացին աջ ու ցած, հողը մի տեսակ փափկեց, երբեմն նույնիսկ ճլմփում էր, այսուայնտեղ առվակներ էին հոսում, և շուտով ճամփորդները հայտնաբերեցին, որ գնում են լայն առվի երկայնքով, ոտքի տակ զսպանակի պես ելնող-իջնող ճահիճ արահետով: Խիստ ճյուղերի վերևում երկինքն անհետացավ:

Հանկարծ առջևում նորից փայլեց արևի լույսը, նրանք շտապեցին դուրս գալ տոթ մեգից և հասան գետին. եղեգ, սեզ, ջրի մուգ շիթեր, իսկ հետո մյուս ափն է՝ զառիվեր ու սայթաքուն: Արևը լուսավորում էր, հովտում տաքանում էր աշնանային քնաբեր կեսօրը: Եղեգը խշշում էր, սեզը շրշում, ուռենու ճյուղերը փսփսում էին:

— Դեհ, հիմա հասկանալի է, թե մեզ ուր են քշել, — ասաց Մերին: — Բոլորովին ո՛չ մեր ուզած կողմը: Սա Գալարն է: Մի գնամ հետախուզեմ: Նա վազեց արևավառ բացատով ու կորավ բարձր խոտի մեջ: Հետո վերադարձավ, ասես գետնի տակից ծլեց, ու հայտարարեց, որ զառիթափի տակ, ափին շատ մոտիկ, բոլորովին էլ խրուտ չէ ու հրաշալի արահետ կա:

— Դրանով գնանք ձախ, մեկ էլ տեսար, դուրս եկանք արևելյան բացատը, — ասաց նա:

Հոբիթներն իջան գետը ու գնացին կածանով, որը զիգզագներ էր անում, պտույտներ գործում, մեկ աջ էր գնում, մեկ ձախ, մշտապես վերադառնում էր Գալարի մոտ և բացահայտորեն մտադրվել էր ճամփորդներին ինչ-որ տեղ դուրս բերել: Արևն այրում էր նրանց մեջքերը: Ինչ-որ բարալիկ, ցանցառ տերևներով ճյուղերի մոխրագույն, սորուն ստվերը վերջապես փակեց

կածանը: Հետզհետե տոթն ուժգնանում էր ու քայլելն ավելի էր դժվարանում: Հողն ասես քնկոտություն էր արձակում:

Ֆրոդոյի գլուխը կախվեց կրծքին, բայց նա իսկույն էլ վեր թռավ:

— Սթափվե՛ք, — գոռաց նա: — Քնելու ժամանակը չէ. . . Հարկավոր է մի կերպ դուրս գալ անտառից:

Սակայն նրա ուղեկիցներին ընդարմացնում էր ծանր նինջը: Սամը հորանջում էր ու քնկոտ աչքերը թարթում: Ֆրոդոն հանկարծ զգաց, որ քնում է՝ նրա աչքին ամեն ինչ շաղվեց, և զզվելի ճանճերի անդադար դզզոցը հանկարծ լռեց: Միայն թեթև շշունջ էր, մեղմ քչքչոց, հեռավոր շրշյուն՝ տերևնե՞րն են, ինչ է: Իհարկե, տերևներն են: Նա բարձրացրեց հոգնած աչքերն ու գլխավերևում տեսավ մի հսկայական ծփի՝ դարավոր ու մամռակալած: Ծփին նրանց վրա այնպես էր տարածել ճյուղերը, ասես անհամար ձեռքերն էր բաց արել՝ երկար, գորշ: Նրա անընդգրկելի, ծուռումուռ բունը հատված էր սև ճեղքերով, որոնք կամաց ճռռում էին թորշոմած սաղարթի շշնջոցի տակ: Ֆրոդոն երկար հորանջեց ու ընկավ խոտին:

Մերին ու Փինը հազիվհազ հասան մինչև հզոր բունը, նստեցին ու սևին տվող ճեղքերի մոտ հենվեցին իրար: Սամը բոլորից հետո էր գալիս: Վերևում սահուն օրորվում էր դեղնա-մոխրագույն սաղարթի հոծ ծածկույթը: Ճամփորդները հոգնած փակեցին աչքերը և ասես քնի միջից լսեցին. ջուրը ծփու մոտ է, ջուրը կկապի, ջուրը կքաշի և քունը կտանի. . . Նրանք գետի քչքչոցի օրորի տակ, գորշ ծփու բնին կպած քնեցին: Ֆրոդոն ամեն կերպ ճգնում էր քունը փախցնել, նրան նույնիսկ հաջողվեց ոտքի կանգնել: Ջուրը անհաղթահարելիորեն ձգում էր նրան:

— Հապա սպասի՛ր, Սամ, — քրթմնջաց նա: — Լավ կլիներ ոտքերս թրջեի. . .

Սամը նստել ու ննջում էր, երբեմն-երբեմն ծոծրակը քորելով. . . սա ինչ-որ անհասկանալի բան է: Տարօրինակ է ինչ-որ: Արևը դեռ մայր չի մտել, իսկ իրենք քնում են, հա քնում: Ինչի՞ց կլինի դա:

— Պա՛հ, ի՜նչ անենք, ուժասպառ ենք եղել, դատարկ բան է, — մտածեց նա: — Իսկ այս ծառը չափազանց մեծ է, դրա՞ն մի տեսեք, խշխշում է: Ջուրը, իբր թե, կձգի, կտանի, կքնացնի ու քունդ կառնես. . .

Նա թափ տվեց իրեն, վեր կացավ ու տեսավ, որ Ֆրոդոն խոնարհվել է ջրի վրա, իսկ երկար կառչուն արմատը կամացուկ կռացնում է նրան, Ֆրոդոն նույնիսկ չի էլ դիմադրում:

Սամը արագ բռնեց տիրոջ բաճկոնից ու դուրս քաշեց արմատի տակից, իսկ հետո էլ մի կերպ չոր տեղ հանեց: Ֆրոդոն սթափվեց ու խեղդվելով հազաց՝ քթից ջուր հորդեց:

— Պատկերացնո՞ւմ ես, Սամ, — վերջապես ասաց նա, — էդ ծառը հո ինձ ջուրը մտցրեց. . . Արմատներով բռնեց ու սուզեց. . .

— Էլ ինչ ասեմ, քնով եք ընկել, տեր իմ, — ասաց Սամը, — գոնե ջրից հեռու գնայիք, եթե այդքան արդեն ձեր քունը տանում էր:

— Իսկ մերոնք ո՞ւր են, — հարցրեց Ֆրոդոն: — Հանկարծ նրանք էլ չքնե՞ն. . .

Սամն ու Ֆրոդոն պտտվեցին ծառի շուրջը: Փինն անհետացել էր: Ճեղքը, որի մոտ նա թիկնել էր, փակվել էր, կարծես չէր էլ եղել: Իսկ Մերիի ոտքերը ցցված էին մեկ ուրիշ ճեղքից:

Սկզբում Ֆրոդոն ու Սամը բռունցքներով խփում էին ծառի բնին այն տեղում, որտեղ թիկնել էր Փինը: Հետո փորձեցին ճեղքը մեծացնել ու Մերիին հանել, բայց՝ անօգուտ:

— Ես այդպես էլ գիտեի, — բացականչեց Ֆրոդոն: — Ախր ինչը մեզ բերեց այս երիցս անիծյալ Անտառը: Ավելի լավ էր մնայինք այնտեղ, Գերանում. . . — Նա ամբողջ ուժով աքացի տվեց ծառին: Հազիվ նկատելի դող անցավ տերևներով ու ճյուղերով. տերևները շրշացին ու շշնջացին, ասես քմծիծաղում էին:

— Դուք, տեր իմ, կացին չե՞ք վերցրել, — հարցրեց Սամը:

— Կարծե՞ս թե մի փոքրիկ կացին ունենք ճյուղեր կտրելու համար, — հիշեց Ֆրոդոն: — Բայց աստեղ դա՞ է պետք որ:

— Սպասեք, մի սպասե՞ք, — ճչաց Սամը, կարծես միտք փայլատակեց, — իսկ եթե կրակ վառե՞նք: Հանկարծ ու օգնի:

— Կօգնի, բա ի՞նչ կանի, — վարանելով արձագանքեց Ֆրոդոն: — Փինին կխորովենք և ուրիշ ոչինչ:

— Եկեք այնուամենայնիվ վառենք դրա կաշին, երևի վախենա, — Սամն ատելությամբ նայեց լայնատարած Ծփուն: — Եթե սա նրանց բաց չթողնի, ես միևնույնն է՝ կտապալեմ դրան, ատամներով կկրծոտեմ: — Նա նետվեց ձիերի մոտ ու արագ-արագ փնտրեց կացինը, աբեթամանն ու կրակվառիչը:

Նրանք ծփու մոտ քարշ տվին մի կույտ ցախ, չոր տերևներ ու տաշեղ, իհարկե, ոչ այն կողմը, որտեղ Փինն ու Մերին էին: Հենց առաջին կայծից կրակը բռնկվեց, ջախը ճտճտաց, ու բոցի մանրիկ լեզուները մխրճվեցին մամռոտ կեղևի մեջ: Հինավուրց հսկան ցնցվեց, ցավի ու չարության խշշոցով պատասխանեց սաղարթը: Բարձր ճչաց Մերին, ներսից լսվեց Փինի խեղդված աղաղակը:

— Հանգցրե՞ք, հանգցրե՞ք, — ոչ իր ձայնով գոռաց Փինը, — թե չէ նա սպառնում է ինձ երկու պատառ անել և կանի. . .

— Ո՞վ է սպառնում. . . Ի՞նչ է եղել, — Ֆրոդոն նետվեց դեպի ճեղքը:

— Հանգցրե՞ք. . . Շուտ հանգցրե՞ք, — աղաչում էր Մերին:

Ծփու ճյուղերը կատաղորեն երերացին: Կարծես փոթորիկը հուզեց շրջապատի բոլոր ծառերը, ասես քարը վրդովեց քնած գետը: Կատաղի չարությունից տակնուվրա եղավ Անտառը: Սամը արագորեն հանգցրեց փոքրիկ խարույկը և տրորեց կայծերը: Իսկ Ֆրոդոն գլուխը կորցրած վազեց արահետով, չիմանալով, թե ուր՝ աղեկտուր ճչալով. «Օգնեցե՞ք. . . օգնեցե՞ք. . . Օգ-նե-ցե-ե՞ք». . . Նրա ձայնը ճչալուց խզվում էր, բայց ինքն իրեն համարյա չէր լսում: Ծփու բարձրացրած փոթորիկն ընդհատում էր ձայները, տերևների կատաղի աղմուկը խցանում էր այն: Բայց Ֆրոդոն շարունակում էր հուսահատ գոռալ՝ սարսափից ու ինչ անել չիմանալուց:

Իսկ հետո միանգամից լռեց՝ նրա ճիչերին պատասխանեցին: Թե՞ նրան թվաց: Ո՛չ, պատասխանեցին հեռվից, անտառի խորքից: Նա շուռ եկավ, ականջ դրեց՝ այո, ինչ-որ մեկը զիլ ձայնով երգում էր անհոգ ու ուրախ, բայց երգում էր սատանան գիտե, թե ինչ.

Թաց-ձոր, Թացաձոր, ձորի գլխին՝ սարեր,
Մամուռ-չոր, խոնավ-պուրակ, Թաց-ձոր ու հովիտներ:

Օգնություն հուսալով և նոր վտանգից վախենալով, Ֆրոդոն ու Սամը քար կտրեցին: Հանկարծ ձայնն ավելի մոտեցավ ու հստակ հնչեց:

Անտառ է խիտ ու դարավոր, խոր անդորր է անտառում,
Տե՛ս, սարյակն էլ հովի նման թևին տվեց ու թռավ,
Արևն անցավ, ու երեկոն ծանրանում է մութով իր,
Ոսկեհատիկն սպասո՛ւմ է, սպասում իր Թոմին:
Սակայն Թոմը ուշանում է. . . Էլ չի կարող համբերել
Ոսկեհաղիկ գեղեցկուհին՝ գետի դուստրը և փերին:
Նունուֆար է բերում նրան՝ Թոմն անտառում երգելով,
Եվ անտառը Թոմին կարծես ձայնակցում է երգելով:
Ամռան օրը՝ կապույտ հրաշք, գարնան օրը՝ զովասուն,
Գարնան թոնը՝ հրաշագործ, իսկ ամռանը՝ ջանք է զուր:
Դե շո՛ւտ ճամփա տվեք Թոմին, ծառեր, խոտեր ու թփեր,
Նա ժամանակ չունի հիմա, շտապում է անհամբեր:
Դու էլ կտրիր քո խշշոցը, փտած, նեխած եղեգնուտ,
Թոմն շտապում է, գնում է իր Ոսկեհատիկ փերու մոտ:

Նրանք կանգնել էին հմայվածի պես: Փոթորիկն ասես շնչասպառ եղավ: Տերևները կախ ընկան հնազանդ ճյուղերից: Նորից լսվեց նույն երգը, եղեգներից դուրս սողաց մի ճմռթված լայնեզր գլխարկ, որի ժապավենի տակ խրված էր մի երկար կապույտ փետուր: Գլխարկի հետ միասին հայտնվեց նաև մարդը, իսկ գուցե ոչ մարդ՝ թեպետ բոյը հասկաներից ցածր էր, բայց դեղին ոտնամաններով նրա հաստ ոտքերը եզան կճղակների պես փոցխում էին տերևները: Նա կապույտ կապա էր հագած և երկար, խիտ ու գանգուր մորուքը ծածկում էր կապայի կուրծքը: Դեմքը՝ կարմիր, ասես հյութեղ խնձոր, ակոսված ծիծաղի կնճիռներով: Ձեռքին մեծ տերև-սկուտեղ էր, իսկ դրա մեջ լողում էին նունուֆարներ:

— Օգնեցե՛ք. . . — նրան ընդառաջ նետվեցին Ֆրոդոն ու Սամը:

— Դե, դե, մի քիչ կամաց էդտեղ. . . Էլ գոռալ, ճվալն ի՞նչ է, — խոսեց անծանոթը, ձեռքն առաջ մեկնելով, և նրանք կանգ առան, ասես տեղում մեխվեցին: — Էդ ո՞ւր եք վազում. . . Վայրկենապես պատասխանեք. . . Ես Թոմ Բոմբադիլն եմ, այս տեղերի տերն ու տիրակալը: Ո՞վ է համարձակվել նեղացնել ձեզ, անմեղ մժեղներին. . .

— Իմ ընկերներին բռնել է Ծփին. . . — շունչը կտրվելով, հազիվհազ խոսեց Ֆրոդոն:

— Հասկանո՞ւմ եք, տեր իմ, նրանց քնած տեղը ճանկել են, Ծփին նրանց բռնել է ու չի թողնում, — բացատրեց Սամը:

— Անկարգություններ է անում Ծփին. . . Միայն այդքա՞նը, — գոռաց Թոմ Բոմբադիլը ուրախ ցատկոտելով: — Ես հիմա կերգեմ նրա համար՝ քնակապ կանեմ: Երգելով տերևաթափ կանեմ, որ իմանա ավազակը: Ձմեռվա ցրտի երգ կերգեմ, արմատները կսառցակալեմ. . .

Նա նունուֆարներով սկուտեղը խնամքով դրեց խոտի վրա և ցատկեց ծառի մոտ, այնտեղ, որտեղ դուրս ցցված էին մնացել Մերիի միայն ոտքերը: Շրթունքները հպեց ճեղքին և կամաց ինչ-որ անհասկանալի բան երգեց: Մերին ուրախացած ոտքերը թափահարեց, բայց Ծփին մնաց անշարժ: Թոմը հետ ընկրկեց, կոտրեց ներքևի ծանր ճյուղն ու դրանով դաղեց բունը:

— Հե՛յ, Ծեր Ծփի. . . Լսի՛ր Բոմբադիլին, — հրամայեց նա: Քացր-քաղցր խմիր հողի հյութը, ուժ հավաքիր: Իսկ հետո քնիր, արդեն լրիվ դեղնել ես: Դուրս թող փոքրիկներին: Բռնողի՛ս նայեք:

Նա Մերիի ոտքերից բռնեց ու ակնթարթորեն դուրս քաշեց բացվող ճեղքից:

Հետո ծանր ճռռալով, լայն բացվեց մյուս ճեղքը և այնտեղից դուրս թռավ Փինը, ասես նրան աքացի տվեցին: Ծերունական չար կրճտոցով երկու ճեղքերն էլ փակվեցին, դող անցավ ծառով մեկ, ու ամեն ինչ լռեց:

— Շնորհակալություն, — չորս ձայնով ասացին հոբիթները:

Թոմը քրքջաց:

— Դեհ, իսկ դուք, ճստիկներ, անտիտիկ նապաստակներ, — ասաց նա, — ինձ մոտ հանգիստ կառնեք, ինչպես հարկն է կկերակրեմ: Բոլոր հարցերը թողեք հետոյի համար: Արևը մարում է, իսկ Ոսկեհատիկն էլ սպասում է, երևի աչքը ջուր կտրեց: Սեղանին դնեմ հաց ու մեղր, կաթ ու կարագ. . . Հապա, ճստլիկներ, վազքով. . . Թոմը սովածացել է, — նա գետնից վերցրեց նունուֆարները, ձեռքը թափ տվեց՝ հրավիրելով իր հետևից, և թռչկոտելով սուրաց արևելյան արահետով, ամբողջ լայնքով անկապ մի բան երգելով:

Խոսելու ժամանակ չկար, զարմանալու՝ նույնպես, և հոբիթները շտապեցին նրա հետևից:

Միայն թե նրանք դանդաղ էին շտապում: Թոմը աչքերից ծածկվեց, և ձայնն էլ ավելի ու ավելի թույլ էր լսվում: Իսկ հետո հանկարծ նորից հնչեց բարձր, կարծես ինչ-որ տեղից հորդեց .

Շուտով կիջնի մութ երեկոն, դե շո՛ւտ, փոքրեր մեր բարի,
Թոմն առջևից կգնա, ճամփին լույսեր կվառի,
Մութը կիջնի, ու սև քամին կփչի, բայց փույթ չէ դա,
Պատուհանից եկող լույսը մեզ ճանապարհ ցույց կտա:
Չվախենա՛ք սև ծառերից, սև ճյուղերի սև դավից,

Առանց ահի ու համարձակ քայլեցե՛ք իմ հետևից:
Մենք կփակենք, պինդ կփակենք ամեն դուռ ու լուսամուտ,
Որ դարավոր, մութ անտառը չթափանցի էլ մեզ մոտ:

Եվ էլի նույն անդորրը, իսկ արևը ծածկվել էր ծառերի հետևում: Հոբիթները հանկարծ հիշեցին երեկոն Բրենդիդուիմում և Փայտաշենի փայլփլուն պատուհանները: Առջևում ցցապատնեշի անհավասար ատամների պես մեկը մյուսի հետևից բարձրանում էին ստվերները՝ անընդգրկելի բներ, հսկայական ճյուղեր, մուգ, խիտ սաղարթներ: Գետից սպիտակ մշուշ բարձրացավ ու քուլա-քուլա փաթաթվեց ոտքերին:

Քայլելը դժվար էր, հոբիթները շատ էին հոգնել, ոտքները ծանրացել էին, ասես արճիճով լցված լինեին: Նրանց թիկունքում, եղեգների ու թփերի միջից տարօրինակ հնչյուններ էին լսվում, իսկ ծառերը ծամածռություններով էին դիմավորում նրանց հայացքները: Չորսին էլ թվում էր, թե իրենք մի սարսափելի երազի մեջ են, որից չեն արթնանալու:

Բայց հանկարծ գետը դադարեց գռմռալուց ու սկսեց մռռալ, իսկ խոտը ոտքերի տակ խոնարհ ու մետաքսանման դարձավ: Անտառը ոնց որ թե հետ գնաց ու դարձավ ցանկապատ, ու նրանց աչքերին հանկարծ զարկվեց լայն բացված դռան դեղին լույսը:

Նրանց առջև փայլում էր Թոմ Բոմբադիլի տունը՝ մնում էր միայն իջնել բլրից: Բոլորն շտապեցին ներքև՝ և՛ հոբիթները, և՛ պոնիները: Հոգնածությունն ասես ոչ եղել էր, ոչ էլ կար, վախի կեսն էր մնացել: Նրանց ընդառաջ երգը թնդաց.

Հե՛յ, քայլեցեք, դուք ուրախ, ոչնչից մի՛ վախեցեք,
Ոսկեհատիկն է կանչում ճստլիկներին իր մոտ հյուր,
Բոմբադիլի հետ արդեն նա սպասում է դռան մոտ,
Դե շո՛ւտ եկեք, ներս մտե՛ք, մենք կերգենք ձեզ համար:

Իսկ հետո հնչեց մեկ ուրիշ ձայն՝ վճիտ ու ջահել, ինչպես վաղ գարուն, բայց հինավուրց ու իմաստուն՝ իբրև հավերժական ամառ.

Դե շո՛ւտ եկեք, ներս մտե՛ք, մենք կերգենք ձեզ համար՝
Առուների, գետերի, ցողի, անձրևի մասին,
Չոր, մացառոտ դաշտերի, հովիտների, լեռների,
Ամռան բարձր երկնքի, անտառային լճերի,
Ձմեռների, ցրտերի, լուսնի, աստղերի մասին,
Այգաբացների մասին, մայրամուտների մասին,
Ինչի մասին որ ուզեք՝ մենք կերգենք միասին:

Եվ հոբիթները հայտնվեցին ջինջ լույսով ողողված շեմին:

Գլուխ յոթ. Թոմ Բոմբադիլի մոտ

Չորս հոբիթն անցան լայն քարե շեմը և, աչքները թարթելով, անշարժացան: Նրանք գտնվում էին կախովի կանթեղներով լուսավորված, ցածր, բայց ընդարձակ սենյակում: Իսկ սեղանի հեռավոր ծայրին նստած էր տանտիրուհին: Նրա երկար, խարտյաշ վարսերը թափվում էին ուսերին ու փափուկ իջնում ներքև, զգեստը վառվռուն-կանաչ էր, իսկ ոսկե գոտին ծածկված էր երկնագույն անմոռուկներով. նրա շուրջը կանաչ ու դարչնագույն սկուտեղներում նունուֆարներ էին լողում՝ «Իսկը ջրահարս լճի մեջ», — մտածեց Սամը:

— Ներս համեցեք, թանկագին հյուրեր, — երգեցիկ ասաց նա:

Երկյուղածությամբ նրանք մտան սենյակ, շփոթված ու խոր ողջունելով, ասես ճանապարհի եզրին մի սովորական տան դուռն էին ծեծում, որ ջուր խնդրեն, իսկ դուռը նրանց առջև բաց է արել հրաշագեղ, ծաղկազարդ դիցուհին: Նա ընդառաջ շտապեց հյուրերին՝ եթերային, ինչպես գետի զեփյուռը:

— Համարձակ, սիրելի բարեկամներ, — ժպտաց նա: — Ծիծաղեցեք, ուրախացեք. . . Ես Ոսկեհատիկն եմ, գետերի թագուհին:

Նրանց ներս թողնելով, տանտիրուհին դուռը ծածկեց ու նազելի ձեռքերի թեթև շարժումով ասես գիշերը տնից դուրս վանեց:

— Թող գիշերը մնա Անտառում, — ասաց Ոսկեհատիկը: — Դուք երևի դեռ սարսափում եք թանձր մառախուղից, մթին ծառերից, գետախորշերից, հորձանուտներից ու անտառային անծանոթ արարածներից: Բայց մի վախեցեք, պետք չէ: Այժմ դուք Թոմ Բոմբադիլի հուսալի հարկի տակ եք:

Նրանք դեռ շեմին տատանվում էին, երբ նորից հնչեց փաղաքուշ ձայնը.

— Բարի գալուստ. . . Ա՛յ թե ինչ վեհերոտ հոբիթներ են ապրում Հոբիթստանում: Գոնե դու, Էլֆերի բարեկամ, ինչո՞ւ ես քաշվում: Նստեք և սպասեք տանտիրոջը: Նա հիմա կգա, ձեր ձիերի հետ է, չէ՞ որ նրանք ձեզնից պակաս չեն հոգնել. . .

. . . Հոբիթները հնազանդ նստել էին եղեգե ցածրիկ աթոռակներին, իսկ Ոսկեհատիկը ճախրում էր սեղանի շուրջը: Վերջապես դուռը բացվեց, և ներս եկավ Թոմ Բոմբադիլը: Նա առանց գլխարկի էր, նրա փարթամ գանգուրները պսակված էին վառ դեղին տերևներից թագով: Թոմը ծիծաղեց, մոտեցավ Ոսկեհատիկին և թևանցուկ արեց նրան:

— Ահա նա, իմ արծաթե կանաչ, աստեղային կայծկլտուն, զմրուխտափայլ տիրուհին, — ասաց նա հոբիթներին: — Շատ մոմեր դիր սեղանին, տիրուհի՛. . . Կծածկենք վարագույրները և համեղ կերակուրներով տարված՝ գիշերն արագ կես կանենք: Ընթրիքը պատրաստ է՝ կաթ ու կարագ, սպիտակ հաց ու մեղր դեղին, ուրեմն՝ ամեն ինչ հրաշալի է. . .

— Սեղանը զցած է, — ասաց Ոսկեհատիկը, — իսկ այ հյուրերն ընթրիքի պատրա՞ստ են:

Թոմը զվարթ ծափ զարկեց և ուրախ-ուրախ զարմացավ.

— Ակ քեզ մտամոլոր. . . Շտապում է, ընթրիքի է հրավիրում,. . . Իսկ ճստիկները հազիվ են շնչում, նրանք պետք է լվացվեն: Հապա, սիրելիներս, եկեք: Թիկնոցներդ հանեք: Ե՛վ ջուր կա, և՛ օճառ՝ լվացվե՛ք, ճստիկներս:

Նա սրահի խորքում մի աննշմարելի դուռ բաց արեց, և հոբիթները շարանով ձգվեցին նրա հետևից՝ ներքև, հետո թեքվեցին անկյունից ու մտան բաղնիքի բուրավետ ջերմության մեջ: Լվացված ու թարմացած նրանք սեղան նստեցին, իսկ հետո ուրախ ու երկար ընթրեցին:

Երբ հոբիթները սրտներն ուզածի չափ կերան, Ոսկեհատիկն ու Թոմը արագ սեղանը հավաքեցին: Հյուրերին հրամայված էր նստել, ինչպես որ նստած էին. նրանք հնազանդվեցին և, ոտքները փոքրիկ աթոռակներին մեկնած, հանգստանում էին ճոխ հացկերույթից հետո:

Դատարկ սեղաններին մոմեր էին վառվում, և մոմը ձեռքին նրանց առջև կանգնեց Ոսկեհատիկը:

— Արդեն գիշեր է, քնելու ժամանակն է, քնեք, — ասաց նա: — Անկողինները ձեզ են սպասում: Անտառի թնդյունից ու խշշոցից մի վախեցեք: Մեր պատուհաններից ներս կարող է թափանցել միայն լուսնի և աստղերի լույսը:

Եվ քնաթաթախ հոբիթները նույնիսկ չնկատեցին, թե ինչպես նա հեռացավ՝ կարծես թե փոքրիկ առվակը կամացուկ քչքչաց:

Ծանր քունը պատել էր Ֆրոդոյին: Երազում նա տեսնում էր նորալուսնի գունատ շողերի միջից բարձրացող մռայլ ժայռը, որի մեջ ասես կամար էր փորված: Հետո նրան կարծես բարձրացնում են վերև, և նա տեսնում է ոչ թե ժայռ, այլ ժայռերի կույտ, մի մութ հարթավայր, ատամնավոր պարիսպ, սև աշտարակ, որի վրա կանգնած է ինչ-որ մեկը: Նորալուսինն անհամարձակ էր լուսավորում. միայն մութ-մութ աշտարակը և լուսավոր կերպարանքն էր երևում վերևում: Ներքևից լսվում էին վայրենի ձայն ու չարագույժ մռնչում էին գայլերը: Լուսնի հետևից հանկարծ մի խոշոր ստվեր դուրս եկավ, աշտարակի վերևում կանգնածը ձեռքերը պարզեց, ու նրա գավազանից կուրացուցիչ շող ցայտեց: Վերևում արծվի թևերի ճողփյուն էր, իսկ ներքևում ոռնում էին, ժանիքներն էին կրճտացնում գայլերը: Քամին սմբակների կատաղի դոփյուն էր բերում արևելքից, արևելքից, արևելքից: «Սև Հեծյալներն» են հասկացավ Ֆրոդոն ու արթնացավ սառը քրտինքով պատված, արյունը քունքերում զարկում էր մուրճի պես: «Մի՞թե ես, — մտածեց նա, — քաջություն կունենամ այս

պատերից դուրս գալու»: Նա պառկած էր շունչը պահած, բայց շուրջը ամեն ինչ խաղաղ էր: Վերջապես գունդուկծիկ կուչ եկավ ու խորասուզվեց քնի մեջ:

Առավոտը չորս հոբիթին միանգամից արթնացրեց: Թոմը սենյակում ման էր գալիս ու սարյակի նման ճռթճռթացնում: Լսելով, որ հոբիթներն արթնացել են, նա ծափ տվեց ու բացականչեց. «Հե՛յ, երգի՛ր, ուրախացի՛ր. . . Ամբողջ ձայնով երգի՛ր»: Հետո հետ քաշեց դեղին վարագույրները, ու լույսը արևմտյան և արևելյան լայն պատուհաններից ներս հորդեց: Լույսը պայծառ չէր. պատուհաններից երևացող ցածր ամպերն անձրևով էին լցված, իսկ այգում կարմրին էին տալիս բակլայի ծաղկաշղթաները:

— Արթնացե՛ք, ճստիկնե՛ր, — գոռաց Թոմը: — Հիմա արև չկա. ամպերը արևմուտքից եկան, երկինքը ծածկեցին: Շուտով կայտառ անձրև կթափվի, որը Ոսկեհատիկին հարկավոր կլինի աշնանային մաքրություն անելու համար: Լույսը չբացված ուրախ երգով արթնացրել եմ նրան: Ծույլերին հաջողություն չկա՝ հիշեք ասացվածքը. «Շուտ վեր կացողի մայրը տղա կբերի»: Հո մինչև վաղը չե՞ք քնելու. . . Վե՛ր կացեք, քնկոտներ. . .

Հոբիթներն այնքան էլ չհավատացին տղա բերելուն, բայց իսկույն վեր կացան և լրիվ մաքրազարդեցին սեղանը: Թոմը տան գործ էր անում. խոհանոցից լսվում էր ամանեղենի զրնգոցը, աստիճաններից՝ նրա կոշիկների թրմփոցը, բաց պատուհաններից հանկարծ ներս էին թռչում երգի պատառիկներ: Խիտ բաղեղը անձրևը ամբարում էր իր մեջ երբեմն ջրի բարակ շիթեր թափում հողին: Քիչ-քիչ ամպերը պատեցին ողջ երկինքը, ու անտառի սև պատը անհետացավ թափվող անձրևի վարագույրի հետևում:

Եվ անձրևի միալար աղմուկի մեջ վերևից, ինչ-որ տեղից, երևի մոտակա բլրից լսվեց Ոսկեհատիկի ձայնը՝ զուլալ ու զրնգուն: Բառերը լսողությունից փախչում էին, բայց հասկանալի է, որ նրա երգը հորդում էր ամենահաղթ կյանքով՝ լեռնային ակունքներից մինչև հեռավոր ծովամերձ գետաբերանը: Պատուհանին մոտենալով, Ֆրոդոն հմայված ունկնդրում էր ծորացող երգը և ուրախանում անձրևային օրվա, անսպասելի դադարի համար: Հարկավոր էր շարունակել ճանապարհը, հարկավոր էր շտապել, բայց. . . ո՛չ այսօր:

Տան առջևի արահետը վերածվել էր կաթնագույն առվի, որ փրփրալով խառնվում էր ջրերին: Վազելով գալիս էր Թոմը, ձեռքերով ասես մի կողմ էր քշում անձրևը, և իրոք, նա բոլորովին չէր թրջվել, միայն կոշիկները հանեց ու դրեց բուխարու ճաղերի վրա: Հետո ընկղմվեց մեծ բազկաթոռի մեջ ու մոտ կանչեց հոբիթներին:

— Ոսկեհատիկը հավաքել-մաքրելով է զբաղված, — հայտարարեց նա: — Ամենուրեք ջուր է ճողփում, շուրջն ամեն ինչ թրջվել է: Հոբիթներին հիմա գնալ չի կարելի, հանկարծ կխեղդվեք: Մի օր սպասեք, բարեկամներ, Թոմի հետ նստեք: Աշունը՝ վատ եղանակների ժամանակը, խոսք ու զրույցների, հարցուփորձի ժամանակն է նաև. . . Թոմը շատ բան գիտի. . . Թոմը ձեզ համար պատմություն կսկսի մաղող անձրևի մեղմ խշշոցի տակ, խոսքը հեռվից կգա, իսկ հարցերը՝ հետո:

Եվ նա մի երկար ու զարմանահրաշ պատմություն արեց, մեկ ասես ինքն իր հետ խոսելով, մեկ հանկարծ խուճուճ հոնքերի տակից նրանց հառելով իր կապույտ աչքերը: Երբեմն նրա խոսքը հնչում էր որպես միալար երգ, իսկ երբեմն Թոմը վեր էր թռչում ու մոլեգին պար գալիս: Նա պատմում էր մեղուների ու մեղրաբույր ծաղիկների, խոտերի ու երկինքը փակող հաստաբուն ծառերի մասին, պատմում էր թավուտների ու անանցանելի փշոտ մացառների գաղտնիքների, չտեսնված թռչունների ու չլսված հողեղեն արարածների, չար ու բարի, մութ ու լուսավոր ուժերի մասին:

Նրանք լսում էին, և Անտառը նրանց բոլորովին այլ կերպ պատկերացավ, քան առաջ, իսկ իրենք իրենց այնտեղ զգում էին պնդերես ու անկոչ օտարականներ: Ստեպ-ստեպ, ուղղակիորեն կամ զարտուղի հիշատակվում էր Ծեր Ծփին՝ իշխող, հզոր ու չարադավ: Եվ Ֆրոդոն նորից ու նորից շնորհակալ էր ճակատագրին իրենց փրկության համար:

Հավերժական Անտառն իզուր չէր այդպես կոչվում. նա հինավուրց երկրի մի ժամանակվա համատարած ծածկույթի վերջին պատառիկն էր: Ներկայիս ծառերի ապուպապերը ուժ են ամբարել նրա մեջ՝ լեռների պես ծերանալով նրանք դեռ հիշում էին Երկրի վրա իրենց միահեծան իշխանության ժամանակները: Անհամար տարիները նրանց սնուցել էին գոռոզությամբ, իմաստնությամբ ու չարությամբ: Եվ նրանց մեջ Ծեր Ծփուց վտանգավորը չկար՝ իր փտած միջուկով, բայց դյուցազնական հզորությամբ, նա դաժան էր ու խորամանկ,

նրան էին ենթարկվում քամիներն ու գետի երկու ափերը: Ծեր Ծփին ահագնորեն մխրճվել էր բերրի հողի մեջ, քաշել նրա բոլոր հյութերը, այնտեղ տարածել մոխրագույն ձեռքերը ամեն կողմ ու իրեն ենթարկել Անտառը՝ Պատնեշից մինչև Հարավային Լեռնաշխարհ. . .

Բայց ահա Անտառը մոռացության է տրված, և Թոմի պատմությունը ցատկոտելով սլացավ վարար, փրփրաշատ վտակի երկարությամբ, գահավիժող ջրվեժների մոտով, ժայռերի շերտավոր հատվածքներով, գիրթ քարակույտերով, մութ ու խոնավ կիրճերով և գլորվեց մինչև Լեռնաշխարհ:

Հոբիթները լսեցին մեծ Գերեզմանոցների ու կանաչ դամբանաթմբերի, քարացցերի, ատամնավոր սպիտակ թագերով պսակված բլուրների և բլուրների մեջ գտնվող անձավների մասին: Մայում էին ոչխարները: Բարձրանում էին հզոր պարիսպները ու վիթխարի բազմաշտարակ ամրոցները: Դրանց տերերը կատաղի կռվում էին մեկմեկու հետ, և ջահել արևը բոսոր փայլում էր արյունատենչ դաշույններին: Հաղթանակները փոխվում էին ջախջախումով, թնդյունով ավերվում էին աշտարակները, վառվում էին խրոխտ ամրոցները, և կրակը երկինք էր խոյանում: Ոսկին սփռվում էր մեռած արքաների դամբարաններում, քարե կամարները փլվում էին, ծածկվում էին հողով, իսկ կործանված թագավորության աճյունի վրա փարթամ խոտ էր աճում: Արևելքից գալիս էին քոչվորները, նորից ոչխարները մայում էին դամբարանների վրա ու նորից ամեն ինչ ամայանում էր: Հեռավոր հեռվից մոտենում էր Անհաղթահարելի Խավարը և գերեզմաններում ոսկորները ճտճտում էին:

Հոգեառ-ուրվականները թափառում էին քարանձավներում, թանկարժեք մատանիները զրնգոցներով ու ոսկի մանյակների մեռյալ ողողանջներով կրկնելով քամու կանչերը: Իսկ համր բլուրների քարե թագերը ջարդված սպիտակ ատամների պես ցոլցլում էին լուսնի լույսի տակ:

Հոբիթները սարսափի մեջ էին: Գերեզմանոցների ու Հոգեառների մասին մռայլ պատմությունները հասնում էին նույնիսկ Հոբիթստան: Թեպետ նրանք այդպիսի բաներ իսկի չէին էլ ուզում լսել:

Չորսն էլ միանգամից հիշեցին տան խաղաղ բուխարիկը. ա՛յ Թոմինն էլ է այդպիսին, միայն թե ավելի ամուր, հուսալի: Նրանք նույնիսկ դադարեցին լսելուց և նստած տեղերում մեկը մյուսին նայելով երկչոտ շարժվեցին:

Նրանց վախեցած լսողությունը բոլորովին ուրիշ ասք էր լսում անհիշելի ու անհասկանալի ժամանակների մասին, երբ աշխարհն ավելի լայնարձակ էր, և Ծովը խայտում էր արևմտյան ափերի մոտ, կարծես հենց կողքիդ, իսկ Թոմը ավելի ու ավելի էր հեռանում դեպի անցյալը, հնադարյան աստղերի տակ հնչում էր նրա մեղեդին՝ այն ժամանակ կային միայն էլֆերը և էլ ոչ ոք չկար: Հանկարծ նա լռեց ու գլուխը կախ գցեց, ասես ննջեց: Հոբիթները նստած էին կախարդվածի պես. նրա խոսքերից քամին դադարեց. ամպերը վերացան, ցերեկը հալվեց ու սպիտակ աստղերի կրակոց իջավ մութ գիշերը:

Առավոտն անցե՞լ է արդյոք, երեկո՞ն է իջել, մե՞կ օր է անցել, թե շատ օրեր՝ դա Ֆրոդոն չէր հասկանում. հոգնածությունն ու սովը կարծես տեղի էին տվել զարմանքի առջև: Հսկայական սպիտակ աստղերը պատուհանից ներս էին նայում. անտագնապ լռություն էր իջել: Զարմանքը հանկարծ փոխվեց աղոտ վախի, և Ֆրոդոն թոթովեց.

— Ո՞վ ես դու, Տեր. . .

— Ե՞ս, — հարցրեց Թոմը ուղղվելով, և նրա աչքերը կիսախավարում ավելի կապտեցին: — Չէ՞ որ ես արդեն ասել եմ. . . Թոմը հին աշխարհից է, Թոմը, հողն ու երկինքը այստեղ եղել են հնուց: Գետերից, անտառներից ու խոտերից առաջ, նախքան առաջին հորդառատ անձրևները, առաջին աղետներից ու երաշտներից, սարսափներից ու բռնություններից առաջ այստեղ եղել է Թոմ Բոմբադիլը՝ և միշտ է այստեղ եղել նա: Ամեն ինչ կա Թոմի հիշողության մեջ. Զարմանահրաշների հայտնությունը, Մահկանացուների հայտնությունը, պատերազմների, տնքոցները գերեզմանոցներում. . . Ի միջի այլոց այդ բոլորը երեկ էր՝ մահերն ու հոգեառները, Մթին սարսափը և Սև Խավարը. . . Իսկ այսօր խավարեց միայն այնտեղ, հեռվում, Մշուշապատից այն կողմ, Հրամեջ լեռան գլխին:

Կարծես սև ալիքը շրմփաց պատուհաններին, հոբիթները ցնցվեցին, շրջվեցին, բայց դռան շեմին արդեն կանգնած էր Ոսկեհատիկը, պայծառ մոմը բարձրացրած ու ձեռքով միջանցիկ քամուց ծածկվելով, և ձեռքը փայլփլում էր սադափե խեցու նման:

— Անձրևը դադարեց, — ասաց նա, — ջինջ առվակները աստղերի շողերի ներքո վազում են բլուրներից: Դե՛հ, ուրախանալու ենք ու ծիծաղելու. . .

— Ուրախանա՛լ, ուտե՛լ, խմե՛լ, — ուրախ ձայնարկեց Թոմը, — պատմությունը կոկորդը չորացնում է: Թոմն առավոտից խոսում էր, իսկ ճստիկները լսում էին: Հոգնել եք, չէ՞ . . . Ուրեմն, հիմա ընթրելու ենք. . .

Նա աշխուժորեն թռավ բուխարիկի մոտ, մոմ վերցրեց, վառեց Ոսկեհատիկի ձեռքի մոմից, պարեց սեղանի շուրջը, վայրկենապես անհետացավ դռնից, վեյրկենապես վերադարձավ ուտելիքով բեռնված մի հսկայական սկուտեղ ձեռքին ու սկսեց Ոսկեհատիկի հետ մասին սեղան գցել: Հոբիթները նստել ու վեհերոտ հիանում էին՝ այնքան զարմանահրաշ գեղեցիկ էր Ոսկեհատիկը և այնքան ծիծաղելի էր թռչկոտում Թոմը: Ու թվում էր, թե նրանք միասին պարում են՝ մեկը մյուսի հետ սեղանի մոտ, դռնից դուրս և հետ: Շուտով մեծ սեղանը լցվեց մոմերով և ուտելիքներով: Դեղնասպիտակ փայլով ճառագայթում էին կանթեղները: Թոմը խոնարհվեց հյուրերի առջև:

— Ընթրելու ժամն է, — ասաց Ոսկեհատիկը, և հոբիթները նկատեցին, որ նա արծաթավուն նուրբ շոր է հագել, սպիտակ գոտիով, իսկ Թոմը՝ բաց կապույտ, միայն գուլպաներն էին կանաչ:

Ընթրիքը երեկվանից ավելի առատ էր: Հոբիթները Թոմի պատմություններով տարված, ուտելու մասին նույնիսկ մոռացել էին, և այժմ լրացնում էին պակասը, ասես մի շաբաթ սոված էին եղել: Նրանք իրենց ուշադրությունը չէին շեղում երգելով ու խոսակցությամբ. ախր շատ համեղ բաներ էին հյուրասիրում: Ուտելիքի ու խմիչքի լիություն էր: Կուշտ կերան, խմեցին, և նրանց ձայները ուրախ ծիծաղով զրնգացին:

Իսկ Ոսկեհատիկը երգում էր ու երգում նրանց համար՝ ուրախ ու մեղմիկ. նրանք լսեցին, թե ինչպես են խոխոջում գետերն ու ծփում լճակները՝ մեծ ու լուսավոր, տեսան դրանց մեջ երկնքի պատկերն ու աստղերի ցոլքը: Հետո նա հյուրերին բարի գիշեր մաղթեց ու, թողնելով բուխարու մոտ, գնաց: Իսկ Թոմն ասես նիրհից սթափվեց ու սկսեց հարցուփորձ անել:

Զարմանալի էր. նա հոբիթների մասին ամեն ինչ գիտեր և նույնիսկ հիշում էր նրանց նախնիներին, գիտեր, թե ինչ էր կատարվել Հոբիթստանում Սկզբնական ժամանակներից սկսած, որոնց մասին ներկայիս հոբիթներին ոչինչ չի հասել: Շուտով նրանք դադարեցին զարմանալուց. . . միայն շատ տարօրինակ էր, որ Թոմը մյուսներից հաճախ հիշում էր Անգեղին, իսկ իրենք. . .

— Անգեղի ձեռքերը հողը լավ են զգում, նա լավ աշխատող է ու շատ զգույշ: Նա երկու ոտքով ամուր կանգնած է հողին, թեպետ երերուն քայլվածք ունի, բայց դե ոչ մի անգամ չի սայթաքել, — Թոմին այսպես հասկացան հոբիթները:

Թոմը երևի էլֆերի հետ էլ է ծանոթություն պահպանում. արդյոք Գարա՞լդն է պատմել Ֆրոդոյի մասին վերջին տեղեկությունները:

Նա այնքան շատ գիտեր, ու այնպես խորամանկորեն էր հարցնում, որ Ֆրոդոն, ինքն էլ չնկատելով, պատմեց նրան Բիլբոյի մասին, իր հույսերի ու ահի մասին, պատմեց ավելի քան, քան պատմել էր Գանդալֆին: Իսկ Թոմը միայն լուռ գլխով էր անում, բայց երբ նա լսեց Սև Հեծյալների մասին, աչքերը խորամանակ փայլեցին:

— Ցույց տուր ինձ ձեր Սքանչելին, — կարգադրեց նա, զրույցն ընդհատելով: Եվ Ֆրոդոն ինքն էլ իր վրա զարմանալով, հանկարծ հանգիստ հանեց Մատանին ու մեկնեց Թոմին:

Այս ասես տափակեց, հետո հալվեց նրա ձեռքի թուխ ափի մեջ: Թոմը ծիծաղելով նայեց Մատանու միջից:

Հոբիթների առջև տարօրինակ տեսարան բացվեց, տագնապալի ու ծիծաղելի. վճիտ կապույտ աչքը ոսկե շրջանակի մեջ: Թոմը Մատանին հագավ ճկույթին ու մոտեցրեց մոմին: Դե մոտեցրեց, մոտեցրեց, բայց հանկարծ նրանք ապշած ա՛խ արեցին: Այդ ինչպե՞ս է, որ Թոմը անտեսանելի չդարձավ: Իսկ Թոմը ծիծաղեց ու Մատանին նետեց դեպի առաստաղ. այն չարագույժ սուլոցով անհետացավ:

Ֆրոդոն իրեն կորցրած ճչաց՝ իսկ Թոմը սեղանի մյուս կողմից ժպտալով կռացավ դեպի նա և հանձնեց ինչ-որ տեղից հայտնված Մատանին: Ֆրոդոն խիստ ու կասկածով զննեց Մատանին, ասես այն տվել էր աճպարարի:

Մատանին առաջվա պես ծանր էր: Ֆրոդոն միշտ զարմանում էր, թե ինչպես է այն գրպանը ցած քաշում: Բայց նրա համար վիրավորական էր, որ Թոմի համար Մատանին ոչինչ չարժեր, Գանդալֆը հո իզուր չէր այն սարսափելի կարևոր բան համարում: Նա մի քիչ սպասեց և, երբ Թոմը պատմում էր, թե ինչ խորամանակն են փորսուղները, կամացուկ Մատանին հագավ մատին:

Մերին ինչ-որ բանի համար շրջվեց նրա կողմը և հազիվ զսպեց վախի բացականչությունը՝ որտե՞ղ, ինչպե՞ս: Ֆրոդոն ուրախացավ. ամեն ինչ կարգին է, Մատանին նույնն է, թե չէ Մերին այդպես զարմացած աչքերը չէր չռի իր աթոռին: Նա վեր թռավ ու անաղմուկ հասավ դռանը:

— Հե՛յ, Ֆրո՛դո, — կանչեց Թոմը, փայլեցնելով ջինջ, հանգիստ, ամենատես աչքերը: — Չարաճճիություն մի արա. . . Դրա՞ն տեսեք, գունաթափվել է, իսկը ցեց. . . Հապա մի վերադարձի՛ր. . . Ու հանիր այդ խաղալիքդ, առանց դրան ավելի լավն ես: Սուս նստեք, ճստիկներ: Վաղը ճանապարհ եք ընկնում: Թոմը ձեզ կբացատրի, թե ինչպես արագ հասնեք Ուղի: Ուշադիր լսեք, որ հետո չմոլորվեք:

Ֆրոդոն բռնազբոսիկ ծիծաղեց, հանեց Մատանին և նստեց իր տեղը:

Թոմը վաղվա համար արևոտ օր գուշակեց և ասաց, որ հարկավոր է առավոտ շուտ դուրս գալ, որովհետև այստեղի եղանակը նույնիսկ Թոմը չի կարող կանխատեսել: Այն ավելի հաճախ ու քմահաճորեն է փոփոխվում, քան Ոսկեհատիկի շորերը:

Նրա խորհրդով հոբիթները որոշեցին գնալ դեպի հյուսիս, Լեռնաշխարհի արևմտյան եզրով, շրջանցելով Գերեզմանոցները: Եթե հաջողություն լինի, մեկ օրում կարելի է հասնել Արևմտյան Մեծ Ուղուն: Թոմը նրանց պատվիրեց ոչ մի բանից չվախենալ և ոչ մի տեղ չխցկվել:

— Կանաչ խոտի վրայով, Լեռնաշխարհի եզրով, հեռու, Թացաձորից, որտեղ մեգ է, և Խաբսաքարերից և նողկալի Հոգեառների հողերից, — Թոմը դա մի քանի անգամ կրկնեց ու կարգադրեց որքան կարելի է ուղղությունը դեպի արևմուտք պահել: Հետո նրանք բոլորն անգիր սովորեցին կանչի երգը՝ մեկ էլ տեսար փորձանքի մեջ ընկան ու պետք եկավ:

Մեր հնչուն երգ, դե՛, թռի՛ր դու Բոմբադիլ Թոմի մոտ,
Գտի՛ր նրան՝ որտեղ էլ, որ ճամփին էլ նա լինի,
Գտի՛ր նրան, բեր մեզ մոտ՝ հեռուներից անծանոթ,
Դժբախության մեջ ենք մենք, արի՛, օգնի՛ր, Բոմբադի՛լ:

Նրանք երգեցին այդ երգը Թոմի հետ միասին, վերջինս ծիծաղելով թփթփացրեց յուրաքանչյուրի ուսին և, մոմերը բարձր պահած, տարավ նրանց ննջարան:

Գլուխ ութ. Մառախլապատ գերեզմանոցում

Ֆրոդոն քնեց ու երազներ չտեսավ: Բայց առավոտյան կողմ նրա ականջին հասավ (քնի մե՞ջ էր, թե՞ իրականում) մի քնքուշ մեղեդի, որն ասես ներսից լուսավորվում էր անձրևի մոխրագույն վարագույրը, վարագույրը արծաթավուն ապակենման դարձավ, դանդաղ բացվեց ու նրա առջև հառնեց արևով լուսավորված կանաչ հեռուն:

Այստեղ էլ նա արթնացավ, իսկ Թոմն արդեն ման էր գալիս ու շվշվացնում, ասես թռչունների բներով պատված մի ծառ լիներ, արևն էլ բլուրի հետևից դուրս եկավ ու շողերը բաց պատուհաններից ներս ցանեց: Դրսում ամեն ինչ կանաչ էր ու ոսկու պես փայլփլում էր:

Նրանք նորից մենակ էին նախաճաշում, բլբլացնելով ինչ որ խելքներին փչեր, պատրաստվելով հրաժեշտի, իսկ սրտները ծանր էր, չնայած պարզ, փափուկ, երկնագույն առավոտը ճանապարհի էր կանչում: Պոնիները առույգ էին ու կայտառ: Թոմը դուրս եկավ պատշգամբ, գլխարկը թափահարեց ու պար եկավ, որ նշանակում էր, թե ժամանակն անցնում է: Հոբիթները հառաչելով ճանապարհ ընկան, շարժվեցին ոլոր-մոլոր արահետով և զառիվեր լանջին իջան ձիերից, բայց Ֆրոդոն հանկարծ վարանումով կանգ առավ:

— Ոսկեհատի՛կը, — բացականչեց նա: — Չէ՞ որ նրան հրաժեշտ չենք տվել, երեկոյից հետո նրան չենք տեսել. . .

Նա երևի նույնիսկ հետ շրջվեր, բայց բլրի կատարին հանկարծ երևաց ինքը՝ Ոսկեհատիկը և զրնգուն գետակի պես երգելով վազեց լանջն ի վար: Քամին նրա մազերը ծածանում էր ու արևը՝ ոսկեզօծում: Շաղոտ խոտի վրա, նրա ոտքերի տակ պարում էին արևի շողքերը:

Նրանք հրաժեշտի խոսքեր էին փնտրում, բայց դրա հարկը չեղավ՝ Ոսկեհատիկն ինքը խոսեց .

— Շտապեցե՛ք, սիրելի բարեկամնե՛ր, — ասաց նա: — Մտքներումդ դրածից մի նահանջեք, համառ եղեք. . . — Եվ դիմեց Ֆրոդոյին: — Մնա՛ս բարով, Էլֆերի Բարեկամ, մենք ուրախությամբ հանդիպեցինք և ուրախությամբ էլ բաժանվում ենք. . .

Իսկ Ֆրոդոն լուռ էր: Նա միայն խոր խոնարհվեց ու պոնին առաջ մղեց, նրա հետևից շարժվեցին մյուսները: Թոմ Բոմբադիլի հյուրընկալ օջախը, հովիտը և Անտառը տեսադաշտից ծածկվեցին: Ձորակում գոլ խոնավություն էր և քաղցր բուրում էր թառամող խոտը: Ներքևից նրանք հետ նայեցին և նորից տեսան Ոսկեհատիկին՝ հեռավոր, փոքրիկ, գեղեցիկ՝ ասես արևով ողողված ծաղիկ լիներ: Նա կանգնած էր ձեռքերը դեպի հոբիթները պարզած, նրա հրաժեշտը արձագանք տվեց ձորակում, հետո նա ձեռքերը թափահարեց, շուռ եկավ ու անհետացավ բլրի գագաթի հետևում:

Արահետը գալարվեց բլրի կանաչ ստորոտում, և նրանց դուրս բերեց մի ուրիշ ձորակ՝ ավելի լայն ու խոր, իսկ հետո սկսեց վերև-ներքև ոլորվել լանջերով. բլուր բլրի հետևից, ձորակ ձորակի հետևից: Ոչ ծառ կար, ոչ առու՝ միայն խոտ ու լռություն, զեփյուռի շշունջ ու թռչունների հեռավոր կանչեր: Արևն ավելի ու ավելի էր բարձրանում և ավելի ու ավելի ուժեղ էր տաքացնում:

Կեսօրին մոտ նրանք բարձրացան լայնարձակ ու տափակ գագաթով բլուրը, որը մեծ պնակի նման էր: Այստեղ քամի չկար, իսկ երկինքը իջնում էր ու ճնշում: Նրանք մոտեցան եզրին ու նայեցին հյուսիս՝ ի՜նչ ճանապարհ են անցել. . . Ճիշտ է, թանձր օդը ծածկում էր տեսանելիքը, բայց հասկանալի էր, որ Ձորը վերջանում է: Առջևում նրանց դիմաց խոր հովիտ էր ընկած, որը վերջանում էր երկու զառիկող լանջերով: Իսկ հետո բլուրներ չէին երևում, միայն աղոտ մութ շերտ էր:

— Դրանք ծառեր են, — բացատրեց Մերին: — Երևի Ուղու մոտ է, ճանապարհի եզրերին: Ասում են, հայտնի չէ, թե երբ են տնկել:

— Հիանալի է, — ասաց Ֆրոդոն: — Եթե մենք այդքան էլ գնանք մինչև երեկո, ապա դուրս կգանք ձորից, իսկ գիշերելու մի տեղ կգտնենք:

Այս խոսքերով նա նայեց արևելք և տեսավ տափակ կանաչ դամբանաթմբեր՝ մի քանիսի գագաթները լերկ էին, իսկ մյուսների վրա ջարդված ատամների նման սպիտակ քարեր էին ցցված:

Այդ տեսարանը բարին չէր խոստանում, ի դեպ, դրանց խորածածկ պնակի մեջտեղում էլ նույնպիսի քար կար: Կեսօր էր, քարը ստվեր չէր գցում, բայց հաճելիորեն հովացնում էր ուտելու նստած հոբիթների մեջքերը: Կերան, խմեցին, ուրախացան՝ ի՜նչ համեղ էր ամեն ինչ. . . Դե Թոմը ջանք չէր խնայել: Իսկ թամբերից ազատ պոնիները թափառում էին մոտակայքում:

Դժվար ճանապարհ, համեղ նախաճաշ, տաք արև ու խոտի բույր: Հոբիթները ոտքերը մեկնեցին, աչքերը երկնքին հառեցին, ավելի երկար պառկեցին, քան պետք էր, ու դրանից էլ պատահեց այն ամենը, ինչ պատահեց: Արթնացան նրանք վախով, ախր բոլորովին չէին էլ մտածում քնել: Քարը սառել էր ու երկար, դժգույն ստվեր գցել դեպի արևելք: Դեղին արևը մառախուղի միջից հազիվհազ փայլում էր, իսկ թանձր ու սպիտակ մառախուղը բարձրանում էր բոլոր կողմերից: Լռություն էր ու պաղ խոնավություն: Պոնիներն իրար գլխի էին հավաքվել ու գլուխները կախել:

Անմիջապես վեր թռչելով, հոբիթները վազքով նետվեցին դամբանաթմբի արևմտյան եզրը՝ նրանք պղտոր մառախուղի մեջ գտնվող կղզու վրա էին: Նույնիսկ արևը թաղվում էր ճերմակ

մեգի մեջ, իսկ արևելեքից սողեսող գալիս էր սառը, գորշ մշուշը: Մշուշ, մշուշ ու մշուշ. այն տանիքի պես կուտակվել էր նրանց վերևում:

Ամեն ինչից դատելով, նրանք թակարդն էին ընկել, բայց առայժմ ոգու արիությունը չէին կորցնում: Դեռ ճանապարհը տեսնում էին, դեռ գիտեին, թե ինչպես հասնեն այնտեղ, իսկ մնալ, այստեղ սպասել մշուշի ցրվելուն՝ նրանց մտքով չէր անցնում:

Հոբիթները պոնիները մեկը մյուսի հետևից բլուրի հյուսիսային թեք լանջով իջեցրին մառախուղի ծովը: Իսկ տամուկ մշուշը այնքան խոնավ էր, որ նույնիսկ նրանց մազերը թաց ու կպչուն դարձան: Ստորոտում կանգ առան ու հագան թիկնոցները, որոնք մի ակնթարթում խոնավացան ու ծանրացան: Պոնիները խարխափելով առաջ էին գնում: Միայն թե ձորահովտից դուրս գային, իսկ հետո արդեն պետք էր ուղիղ գնալ, այնտեղ ճանապարհից չես շեղվի մինչև Ուղի: Նրանք հույս ունեին, որ Թացաձորից հետո մշուշը կնոսրանա կամ կցրվի:

Շատ դանդաղ էին առաջ շարժվում և, որպեսզի չմոլորվեն ու չկորչեն՝ իրար հետևից: Գլխավորում էր Ֆրոդոն, նրանից հետո՝ Սամը, Փինը և Մերին: Թվում էր, արահետը վերջ չի ունենալու, բայց հանկարծ Ֆրոդոն նկատեց, որ երկու կողմից խավարը թանձրացավ: Ուրեմն, հիմա հյուսիսային կիրճը կլինի, Թացաձորն անցել են:

— Արագ, իմ հետևից, — գլուխը շրջելով գոռաց նա ու առաջ շտապեց: Բայց հույսն իսկույն տագնապի փոխվեց՝ ավելի ու ավելի էր նեղանում ու փակվում սև կապանը: Հետո հանկարծ խավարը ցրվեց ու նրա առջև ծառացան երկու վիթխարի քարե ցցեր: Երևի անցատեղ է, միայն հասկանալի չէ, թե որտեղից դրանք հայտնվեցին՝ վերևից դրանք չէին երևում: Ֆրոդոն թափով անցավ երկու ցցերի արանքով, և նրա վրա ասես խավարը փլվեց: Պոնին վրնջաց, ծառս եղավ, ու Ֆրոդոն ցած ընկավ, իսկ վեր կենալով՝ տեսավ, որ ինքը մենակ է. ընկերներն անհետացել են:

— Սա՛մ, — գոռաց նա, — Փի՛ն, Մե՛րի. . . Այստեղ, հետ մի մնացեք. . .

Ի պատասխան՝ ոչ մի ձայն: Նրան սարսափ պատեց, նա հետ վազեց, անցավ քարե դարպասը, կանչելով՝ «Սա՛մ, Սա-ա՛-ամ, Փին, Մերի, որտե՞ղ եք»: Պոնին սուզվեց գորշ մառախուղի մեջ: Ինչ-որ տեղից՝ կարծես թե ձախից, արևելքից հասավ հազիվ լսելի պատասխան կանչը՝ «Հե՛յ, Ֆրոդո, Ֆրոդո՛, հե՛յ»: Նա նետվեց դեպի ճիչը և, մագլցելով քարքարոտ լանջով, նորից ձայն տվեց ընկերներին: «Ֆրոդո՛, հե՛յ»: Վերջապես վերևից մշուշի միջից պատասխանեցին նվազ ձայներն ու խեղդվեցին աղաղակելով. «Օգնեցե՛ք, օգնեցե՛ք, օգնությո՛ւն»: Ֆրոդոն մթին խավարում ամբողջ ուժով մագլցեց վեր ու վեր:

Ոտքի տակ հանկարծ հարթ դարձավ, և նա հասկացավ, որ հասել է դամբանաթմբի կատարը: Ոտքերը ծալվում էին, ամբողջովին թրջվել էր և ցրտից դողում էր: Այստեղ ոչ ոք չկար: Լռություն ու անթափանց խավար:

— Որտե՞ղ ե՛ք, — աղեկտուր գոռաց նա:

Պատասխան չեղավ: Նա մի անգամ էլ գոռաց և տագնապահույզ ականջ դրեց: Ականջներում սուլեց ցուրտ քամին: Ֆրոդոն նկատեց, որ բերանից սպիտակ գոլորշի է դուրս գալիս: Եղանակը փոխվում էր, մշուշը լողում էր ծվեն-ծվեն դարձած, խավարը նոսրանում էր: Ֆրոդոն աչքերը բարձրացրեց ու ամպերի պատռվածքներում աղոտ աստղեր տեսավ: Նորից քամի փչեց, ու խոտը խշշաց:

Նրա ականջին խեղդված ճիչ հասավ, ու նա վազեց այնտեղ, որտեղ գոռում էին, իսկ մշուշը կտրատվում էր ու հալվում, բացելով աստղալի երկինքը: Արևելյան քամին թափանցում էր ոսկորները: Աջից սև ստվեր դարձած բարձրանում էր Գերեզմանոցը:

— Դե, որտե՞ղ եք, — նորից ճչաց նա վախեցած ու ջղայնացած:

— Այստե՛ղ, — գետնի տակից արձագանքեց սարսռեցնող ձայնը: — Այստեղ, սպասում եմ քե՛զ:

— Ո՛չ-ո՛չ-ո՛չ, — շշնջաց Ֆրոդոն, բայց տեղից շարժվել չկարողացավ:

Նրա ծնկները ծալվեցին, և նա փուլ եկավ գետնին: Լռություն: Ոչ ոք չկա, գուցե թվացե՞լ է: Նա դողալով աչքերը բարձրացրեց ու տեսավ, որ իր վրա կռանում է մի սև կերպարանք, որը սառցե հայացքով, ասես երկու մահացու ճառագայթներով իրեն մեխում է գետնին: Սառը

պողպատե բռնիչը ճզմեց Ֆրոդոյին՝ նա մի ակնթարթում ոտքից գլուխ ոսկրացավ ու գիտակցությունը կորցրեց:

Երբ Ֆրոդոն ուշքի եկավ, ամեն ինչ մոռացված էր, բացի սարսափից: Հետո հանկարծ նրա մտքով անցավ՝ վերջ, բռնվեց, գերեզմանոցում է: Հոգեառը բռնել է իրեն, կախարդել և հիմա ինքը չար ուժերի ձեռքին է:

Դրանց մասին Հոբիթստանում շշուկով անգամ վախենում էին խոսել: Նա քարե հատակին փռված, ձեռքերը կրծքին խաչած չէր համարձակվում շարժվել:

Մթության մեջ, մահվան սարսուռով շղթայված, նա մտածում էր, չգիտես ինչու, բոլորովին էլ ոչ մահվան մասին, այլ հիշում էր Բիլբոյին ու նրա պատմությունները, հիշում էր, ինչպես էին իրենք երկուսով թափառում Հոբիթստանի արևավառ դաշտերում՝ ճանապարհորդությունների ու արկածների մասին զրուցելով: Ամենաճարպակալած, ամենաերկչոտ հոբիթի հոգում անգամ թաքնված է (երբեմն շատ խորն է թաքնված) կարծես պահուստ սև օրվա համար, մի կատաղի խիզախություն: Իսկ Ֆրոդոն բոլորին էլ ճարպակալած չէր և բոլորովին էլ երկչոտ չէր, թեպետ նա այդ մասին չգիտեր էլ, դրա համար էլ Բիլբոն, դեհ Գանդալֆը նույնպես, նրան համարում էին ամբողջ Հոբիթստանի լավագույն հոբիթը: Ֆրոդոն հասկացավ, որ իր դեգերումները վերջացան և ահավոր վերջ ունեցան: Հատկապես այս միտքը նրան արիություն ներշնչեց: Ֆրոդոն լարվեց մահվանից առաջ գոտեմարտելու համար, նա արդեն հնազանդ զոհ չէր:

Ուժերը հավաքելով, նա անսպասելի նկատեց, որ մթությունը ներքևից, քարե սալիկների տակից հորդող կանաչավուն լույսից հուշիկ-հուշիկ նահանջում է: Լույսը պաղ ալիքով ողողեց նրա դեմքն ու մարմինը, իսկ պատերն ու կամարակապ առաստաղը առաջվա պես մնում էին խավարի մեջ: Ֆրոդոն գլուխը շրջեց և տեսավ, որ իր կողքը փռված են Սամը, Փինը և Մերին: Նրանք պառկած էին մեջքի վրա, փաթաթված սպիտակ սավանների մեջ և մեռելի պես գունատ էին: Նրանց շուրջը գանձերի կույտեր էին բարձրանում, և եղկելիորեն խավար ոսկին մեռելի ոսկորների էր նմանվում: Մարգարտե թագեր կային նրանց գլխներին, դաստակներին՝ ոսկե ապարանջաններ, իսկ մատներին՝ մատանիներ: Յուրաքանչյուրի կողքին՝ սուր, յուրաքանչյուրի ոտքերի տակ՝ վահան: Եվս մեկ սուր՝ մերկացված, երեքի կոկորդի վրա:

Հնչեց մեղեդին՝ հանդարտ, աղոտ, անդրշիրիմյան: Հեռու հեռավոր, անտանելի մելամաղձոտ ձայնը ասես գետնի տակից էր դուրս ծորում: Բայց սգո հնչյունները սարսափելի բառեր դարձան՝ դաժան, մահաշունչ, անկասելի: Եվ տնքացող, աղիողորմ: Կարծես գիշերը առավոտվա կարոտից զայրացած գանգատվում էր նրանից, ասես ցուրտը տաքության կարոտից անիծում էր նրան: Ֆրոդոն քարացավ: Երգը գնալով ավելի հստակ էր լսվում, և ահը սրտում նա վերջապես զանազանեց նզովքի խոսքերը.

Ոսկրացե՛ք. . . գետնի տակ մնացե՛ք,
Մինչև այն պահը այնտեղ կմնաք,
Երբ որ խավարը այգաբացի տեղ
Տարածվի ամբողջ երկնքում անանթեղ
Եվ մարեն, ածուխ դառնան մինչև վերջ
Արև ու լուսին, աստղերը լուսե,
Որ թագավորի, աշխարհում մնա
Ինքը՝ մեն-մենակ, Տիրակալը Սև:

Նրա գլխավերևում ինչ-որ բան ճռռաց ու քերվեց: Նա բարձրացավ արմունկների վրա ու տեսավ, որ իրենք պառկած են անցումի մեջտեղում, իսկ անկյունից մի երկար ձեռք մատներով քայլելով մոտենում է Սամին, նրա կոկորդին դրված սրի կոթին:

Գարշելի նզովքը քարի պես ծանրացել էր Ֆրոդոյի վրա, հետո նա անտանելիորեն փախչել ուզեց, փախչել առանց հետ նայելու: Նա Մատանին կհագնի, անտեսանելի դարձած խույս կտա հոգեառից, և լույս աշխարհ դուրս կգա: Նա պատկերացրեց, թե ինչպես է փախչում առավոտյան խոտի միջով արցունքից կուրանալով, դառը սգալով Սամի, Փինի և Մերիի կորուստը, բայց ինքը կենդանի ու փրկված: Նույնիսկ Գանդալֆը, նույնիսկ նա իրեն չի դատապարտի. ուրիշ ի՞նչ է մնում իրեն:

Բայց արիությունը նրան բոլորովին այլ բան էր հուշում: Ոչ, հոբիթները բարեկամներին չեն լքում փորձանքի մեջ: Եվ այնուամենայնիվ նա գրպանում շոշափեց մատանին... իսկ հոգեառի

ձեռքը ավելի էր մոտենում Սամի կոկորդին: Հանկարծ նրա վճռականությունն ամրապնդվեց, նա հափռեց կողքին դրված կարճ սուրը, վեր կացավ, ծնկների վրա հենված ձգվեց ընկերների մարմինների վրայով և ինչքան ուժ ուներ խփեց ճանկռտող ձեռքի դաստակին ու կտրեց այն: Կատաղի մի վայնասուն տարածվեց, ու լույսը խավարեց: Խավարը ցնցվում էր չարագույժ մռնչոցից:

Ֆրոդոն ընկավ Մերիի վրա, այտը նրա սառը երեսին: Եվ անսպասելի հիշեց այն ամենը ինչ ծածկվել էր մառախուղի քուլաներով. տունը բլրի մոտ, Ոսկեհատիկին, Թոմի երգերը, և կերկերուն ձայնով սկսեց. «Մեր հնչյուն երգ, դե՛, թռի՛ր դու Բոմբանդիլ Թոմի մոտ»: Այդ անունից նրա ձայնն ամրացավ, հնչեց ամբողջ ուժով, ասես խավար դամբարանում փողը երգեց.

Մեր հնչյուն երգ, դե թռի՛ր դու Բոմբանդիլ Թոմի մոտ,
Գտի՛ր նրան՝ որտեղ էլ, որ ճամփին էլ նա լինի,
Գտի՛ր նրան՝ բե՛ր մեզ մոտ հեռուներից անծանոթ,
Դժբախտության մեջ ենք մենք, արի՛, օգնի՛ր, Բոմբանդի՛լ:

Արձագանքը լռեց, և իջավ մեռյալ լռություն: Միայն Ֆրոդոյի սիրտն էր դղրդալով խփում: Երկար լռություն: Իսկ հետո, ասես հաստ պատի հետևից, բլուրների այն կողմից, հեռվից, ավելի ու ավելի մոտենալով հնչեց պատասխան մեղեդին.

Ահա և ես՝ Բոմբանդիլը, չէի՞ք տեսել, դե տեսե՛ք,
Սլանում է ոնց քամի, նրան ոչ ոք չի հասել,
Կոշիկը դեղնից դեղին, բաճկոնը վառ քան երկինք,
Երգեր ունի կախարդող, որ չես լսել դու կյանքում:

Դղրդացին տեղաշարժված քարերը, դամբարան հորդեց կենդանի ու պայծառ լույսը: Քանդված պատի տեղը փայլեց և այնտեղ երևաց Թոմի գլուխը՝ փետրավոր գլխարկով, իսկ նրա թիկունքում բարձրանում էր բոսոր արևը: Լույսն անցավ երեք անշարժ հոբիթների դեմքերով, նրանց վրայից սրբելով դիակային դալկությունը Հիմա թվում էր, որ նրանք պինդ քնած են:

Թոմը կռացավ, գլխարկը հանեց և երգելով մտավ մութ դամբարանը.

Վառ արև է երկնքում, Խարսաքարն է հանգչում լուռ,
Թռի՛ր, գնա ու մեռի՛ր Խլուտաշխարհում մութ ու կույր,
Մուժոտ լեռներից անդին ծածկվիր թանձր մշուշով,
Որ շիրիմները հավետ չծածկվեն սև փոշով:
Քնի՛ր, քանի աշխարհը կատաղի է ու անսեր
Ու գիշերվա մութից էլ այգաբացի մութն է սև:

Սրտաճմլիկ ու երկարատև գոռոցը եղավ նրա երգի պատասխանը, փլվեցին գերեզմանոցի խորքի կամարները, և լռություն տիրեց:

— Հապա մի արագ դուրս արի գերեզմանի թացությունից,– կարգադրեց Թոմը: — Դեռ պետք է ընկերներիդ արևի տակ դուրս բերենք:

Նրանք դուրս հանեցին Մերիին, Փինին, հետո Սամին: Աչքի պոչով Ֆրոդոն հողակույտի մեջ տեսավ կտրված թաթը, որը խլվլում էր կիսասատկած սարդի նման: Թոմը վերադարձավ դատարկ դամբարանը, ու այդտեղից թնդյուն ու ոտնաձայն լսվեց: Դուրս եկավ մի կապ զենք և ոսկե ու արծաթե, պղնձե ու բրոնզե, գույնզգույն քարերով դրվագված հին իրեր ձեռքին, բարձրացավ կանաչ գերեզմանաթումբն ու ավարը թափեց արևավառ խոտերի վրա:

Նա լուռ կանգնեց գլխարկը ձեռքին պահած, նայելով Գերեզմանոցի ստորոտում անշարժ պառկած երեք հոբիթներին: Հետո աջ ձեռքը վերև բարձրացնելով, հնչեղ ու հրամայական ասաց.

Խաբսաքարն է խոր քնել, դե, շլդիկնե՛ր, արթնացե՛ք,
Բոմբանդիլը եկել է ձեր հետևից, տաքացե՛ք,
Սև դարպասը բացվել է, հոգեառ ձեռքն էլ չկա,
Չար մշուշը քամու հետ չքացել է, էլ չի՛ գա:

Եվ ի անասելի ուրախություն Ֆրոդոյի, երեքն էլ վեր կացան, ձգվեցին, աչքերը տրորեցին ու ոտքի թռան: Նրանք զարմացած նայում էին Ֆրոդոյին ու Թոմին, որ ամբողջ հասակով

կանգնել էին նրանց գլխավերևում ու նայում էին իրենց կեղտոտ-սպիտակ քրջերին ու ոսկե զարդերին:

— Էս ի՞նչ նորություններ են,— ուզում էր սկսել Մերին, թափահարելով թեք դրված թագով գլուխը: Հանկարծ նա սսկվեց ու աչքերը փակեց: — Այո, հիշում եմ, ինչ եղավ,— խուլ փսփսաց նա: — Գիշերը նրանք հյուսիսից վրա տվեցին, նրանց թիվ ու համար չկար: Նիզակը խրվեց իմ սիրտը,— նա կուրծքը բռնեց: — Դե չէ, սա ի՞նչ բան է,— գոռաց նա դժվարությամբ գլուխը բարձրացնելով: — Ոնց որ երազ լինի... Ուր էիր կորել, Ֆրոդո...

— Երևի ճանապարհից շեղվել եմ,— պատասխանեց Ֆրոդոն: — Բայց ավելի լավ է այդ մասին չհիշենք: Եղածն անցած է: Իսկ հիմա՝ ճանապարհ ընկնենք:

— Ի՞նչ ճանապարհ, տեր իմ,— բացականչեց Սամը,— ես ինչ է, տկլո՞ր եմ գնալու: — Նա գլխից գցեց թագը, գոտին, մատանիները, վրայից պոկեց սավանը և սկսեց խոտերի մեջ աչքերով փնտրել, ասես սպասելով ինչ-որ մոտիկ տեղ տեսնել իր հոբիթական հագուստը՝ բաճկոնը, տաբատը, թիկնոցը:

— Իզուր մի փնտրեք ձեր հագուստը, միևնույնն է, չեք գտնի,— ասաց Թոմը դամբանաբլուրից վայրկենապես ցած թռչելով և հոբիթների շուրջը պար գալով, ասես ոչինչ չէր եղել:

— Էդ ինչո՞ւ չփնտրեմ,— զարմացավ Փինը ուրախ տարակուսանքով, նայելով պար եկող Բոմբանդիլին: — Բա ո՞նց:

Թոմը միայն գլուխն օրորեց:

— Ավելի լավ է՝ ուրախացեք, որ այս աշխարհ եք դուրս եկել անդառնալի խորքերից. մոլեգին հոգեառներից փրկություն չկա: Գերեզմանների խավար փոսերում թոթափեք ձեր վրայից գերեզմանային փոշին և խոտերի մեջ մերկ մնացեք... Իսկ ես գնացի որսի:

Նրանք կատարեցին թոմի ասածը: Թոմը ցատկոտելով սուրաց ինչ որ տեղ և վերադարձավ բավական ուշ (նրանք հասցրեցին քրտնելու աստիճան տաքանալ և մեռնելու աստիճան սոված մնալ), բայց հինգ բեռնավորված պոնի հետը բերելով: Նրանց հետևից վարգում էր վեցերորդը՝ մյուսներից գեր ու ամրակազմ:

— Հապա վերցրեք ձեր ձիերը,— ասաց Թոմը: — Այս խեղճերը ահաբեկվել են և ձեզնց փախել են՝ տերերին լքել են: Ձիերի քիթը քամուն է, հենց հոգեառների հոտն առան՝ վայրկենապես կչքվեն: Բայց նրանց հայհոյել չի կարելի... Ո՞վ է տեսել, որ ճամփորդն ինքն իրեն գցի գերեզմանոց: Գուցե հոբիթները պետք է ձիերից սովորե՞ն: Տեսնո՞ւմ ես, սրանց բեռն ու բարձը տեղն է: Կեցցեք, ձիուկներ... Լավ էլ հոտառություն ունեն՝ փախել են հոգեառներից, ստորգետնյա անողոք մահից... Ոչ, նրանց հայհոյել չի կարելի:

— Իսկ վեցերորդն ո՞ւմ համար է,— հարցրեց Ֆրոդոն:

— Ինձ համար,— պատասխանեց Թոմը: — Նա իմ ընկերն է: Թափառում է, որտեղ սիրտն ուզում է: Բայց հենց ձայն եմ տալիս, իսկույն վազում է: Թոմը հոբիթներին կտանի ամենակարճ ճանապարհով, որպեսզի նրանք հենց այսօր ևեթ հասնեն Ուղի:

Հոբիթները հրճվանքի մեջ էին և նրանց շնորհակալություններին վերջ չկար, իսկ Թոմը ծիծաղեց ու ասաց.

— Թոմին Ոսկեհատիկն է սպասում և հոգսերի մեջ խրված է մինչև ծոծրակը: Թոմը կուղեկցի հոբիթներին, որպեսզի անհանգիստ չլինի: Ախր նրանք ի՞նչ տեսակ ժողովուրդ են: Անթիվ անհամար հոգսեր են պատճառում: Հազիվհազ ազատում ես Ծփուց, գետնի տակ են մտնում: Եթե մինչև ուղի չհասնեն, ապա վաղը ի՞նչ կանեն... Ոչ, ավելի լավ է ուղեկցել նրանց ու ազատվել:

Դեռ ժամը տասը չկար, բայց հոբիթները հաճույքով կճաշեին, եթե ուտեստ ունենային: Եղածը միայն նախաճաշի համար բավականացրեց: Նրանք կերան բոլորը, ինչ պահել էին նախօրյակից և համարյա բոլորը, ինչ բերել էր Թոմը: Թեպետ հոբիթների համար եղածը քիչ էր, սակայն նրանց հոգին կարգին թեթևացավ: Մինչ նրանք նախաճաշում էին, Թոմը շրջում էր բլրի վրա ու գանձերը հավաքում: Դրանց մեծ մասը նա մի կայծկլտուն կույտ արեց՝ «Թող գտնի, ով գտնի ու հանգիստ վայելի. թռչուն լինի, գազան, մարդ, թե էլֆ»: — Այսպես հանվեց գերեզմանային նզովքը, որպեսզի հոգեառները նորից չհայտնվեին այստեղ: Իրեն վերցրեց մի

շափյուղա ու կրծքազարդ՝ թավիշ ու փայլփլուն, ասես թիթեռի թևեր: Թոմը երկար նայեց դրան, ասես ինչ-որ բան հիշելով: Հետո գլուխն օրորեց ու ասաց.

— Նա, ով մի ժամանակ սա իր ուսին էր կրում, շափյուղայից արևավառ էր... Ուրեմն, թող այս կրծքազարդը կրի Ոսկեհատիկը. մեզ համար անցյալից հիշատակ կլինի՝ կենդանի աստղիկ:

Յուրաքանչյուր հոբիթի մեկ դաշույն հասավ՝ երկար, ուղիղ, շեղբի վրա ոսկեկարմիր օձապատկեր նախշով: Մերկացված՝ դրանք շողշողում էին սառն ու դաժան, իսկ պատյանները սև էին, թեթև ու ամուր, գույնզգույն քարերով պատված, անծանոթ մետաղից: Թե՛ դրանք պահել էին հիանալի պատյանները, Թե՛ գերեզմանոցային հմայախոսն էր պահպանել, բայց մաքուր շեղբերի վրա ժանգի բիծ անգամ չկար:

— Ճստիկներին դաշույնները շատ պետք կգան,— ասաց Թոմը: — Շատ անգամ կպատահի, որ նրանց վրա գիշերը կհարձակվեն Տիրակալի (որը ավազակի պես թաքնված է Հրամեջ լեռան մոտ) չար ծառաները: Բայց սրանից հետո ձեզ հանկարծակիի բերել հնարավոր չէ: Հոբիթները զինված են Արնորյան դաշույններով, որոնց հարվածները մահացու են խոցում թշնամուն...

Նա հոբիթներին բացատրեց, որ դաշույնները կռել հազար հինգ հարյուր տարի առաջ Արնոր թագավորության զինագործները: Թագավորությունն ընկել է հյուսիսից եկածների գրոհից: Ձենքի ուժով նրան երևի թե տապալել հնարավոր չէր լինի, բայց տապալեց չար կախարդանքը, որովհետև կախարդներն այն ժամանակ տիրել էին հյուսիսային Անգմարյան երկրամասը:

— Այն ամենը, ինչ եղել է, վաղուց մոռացել են,— ասես ինքն իրեն խոսում էր Թոմը: — Աշխարհում միայն մենավոր ճամփորդները, հին տիրակալի սերունդներն են պահպանում անհոգ ժողովուրդների հանգիստը: Բայց այդ ճամփորդները շատ քիչ են: Ռազմիկներ քիչ են մնացել...

Հոբիթներն այնքան էլ չէին հասկանում, թե ինչ է փնթփնթում նա, բայց նրանց աչքերի առջև հանկարծ հառնեցին անհամար տարիները որպես անծայրածիր դաշտավայր, որտեղ թափառում էին մարդիկ, ասես հատուկենտ ստվերներ, բարձրահասակ ու մռայլադեմ, երկար սրերով գոտևորված, իսկ վերջինը՝ խավար աստղը ճակատին: Հետո տեսիլքը խավարեց և նրանց աչքերին խփեց արևի լույսը: Դանդաղելու պատճառ չկար: Արագորեն պարկերը կապելով (Մերին, Փինը և Սամը վաղուց արդեն հագել էին հետևները վերցրած հագուստները), բարձեցին դրանք պոնիներին: Նվեր ստացած զենքը կախ էր ընկած գոտիներից ու ոտքի տակ էր ընկնում՝ այ սա արդեն պետք չէր, մտածում էին նրանք: Իհարկե, ի՜նչ իմանաս, ինչ կպատահի, բայց դե որ մարտի բռնվեն, այն էլ սրերո՞վ...

Ստիպված եղան գնալ ավելի հեռու, քան իրենք կարծում էին: Եթե նույնիսկ երեկ նրանք Քարի մոտ չքնեին, միևնույնն է, երեկոյան նպատակակետին չէին հասնի: Մուգ շերտը, որը երևում էր դամբանաբլրից, պարզվեց, որ ոչ թե Ուղին է, այլ խոր խանդակի եզրին աճած թփուտը:

— Դա հին թագավորության սահմանն է,— ասաց Թոմն ու խոժոռվեց, հիշելով ինչ որ բան, որի մասին պատմել չէր ուզում: Խանդակի մյուս եզրով խուլ ու բարձր պատ էր ձգվում:

Թոմը նրանց տարավ ցածրով, պատի ճեղքվածքի միջով անցնող խոտածածկ արահետով, և նրանք վարգով իջան լայն դաշտավայր: Մեկ-երկու ժամ հետո բարձունքից նրանց երևաց հին Ուղին՝ ամայի, ու անծայրածիր:

— Վերջապես հասանք,— ասաց Ֆրոդոն: — Իմ կարճ ճանապարհից մենք մի երկու օր ենք հետ ընկել, ոչ ավելի: Եվ գուցե ոչ իզուր՝ նրանց մեր հետքից շեղել ենք:

Երեք ճամփորդները նրան նայեցին: Բոլորը միանգամից հիշեցին Սև Հեծյալներին ու կիսամոռացված վախը: Նրանք նայեցին մայր մտնող արևին և մի հայացքով ստուգեցին Ուղին՝ ոչ ոք չկար, դատարկություն էր:

— Իսկ դու կարծում ես,— ասաց Փինը,— որ հիմա էլ, այս երեկոյա՞ն էլ մեզ կհետապնդեն:

— Ոչ,— Ֆրոդոյի փոխարեն անսպասելի պատասխանեց Թոմ Բոմբանդիլը: — Վաղն էլ հազիվ թե լինի՝ ինչ-որ տեղ մոլորվել են: Ի դեպ, ես ճշգրիտ չգիտեմ, այստեղ օտար հողեր են: Ու չեմ էլ ուզում իմանալ այդ ավազակներին...

Հոբիթները շատ էին ուզում, որ նա էլի գար իրենց հետ: Ախր նա Սև Հեծյալների հետ էլ հաշվեհարդար կտեսներ. ու նրանք այնպես ցանկացան տուն գնալ, և այնպե՛ս անիմաստ էր մութ, հրաբորբ, անհասկանալի հեռուն... Նրանք լուռ կանգնել էին ու չէին շտապում հրաժեշտ տալ, նույնիսկ երբ Թոմն արդեն հրաժեշտի խոսքեր էր ասում.

— Ահա ձեզ իմ վերջին խորհուրդը. այսօր երեկո կհասնեք մի գյուղ, որի անունն է Լեռնամոտ: Լեռնամոտում մի հին պանդոկ կա, որի տերը Նարկիսն է՝ դատարկ, բայց հավատարիմ մի մարդ՝ ձեզ ավազակներին չի մատնի: Նրա տունը շատ պատուհաններ ունի և սիգարշավող պոնիով մեծ ցուցանակը հեշտ է գտնելը: Կգիշերեք պանդոկում, լավ է քուններդ կառնեք՝ և առավոտյան նորից առաջ: Ձեր ճանապարհը կարճ չէ... Իսկ հիմա, համարձակ, ճստիկներս... Ճամփա ընկեք, ճակատագրին ընդառաջ: Հիմա գլխավորն այն է, որ մենք մինչև երեկո հասնեք Լեռնամոտ:

Նրանք խնդրեցին Թոմին, որ ուղեկցի իրենց մինչև պանդոկ ու հրաժեշտի թաս խմի իրենց հետ, բայց նա ծիծաղելով հրաժարվեց, ասելով.

Այստեղ վերջանում են երկրներն հավատարիմ ինձ հավետ,
Հրաժեշտ տանք իրար, բարեկամներ առհավետ...

Նա շրջեց պոնին, գլխարկը դրեց ու ընդմիշտ անհետացավ հողաթմբի հետևում:

— Շատ ափսոս, որ հիմա առանց պարոն Բոմբանդիլի մնացինք,— տխուր ասաց Սամը: — Այ, ով լավ գիտեր, թե ինչն ինչոց է: Ինչքան էլ գնանք, էլ նրա նմանին չենք հանդիպի... Իսկապես հրաշալի պարոն էր... Իսկ «Պոնիի» մասին ոնց էր ասում, ոնց որ «Կանաչ վիշապի» մասին խոսեր: Էդ ո՞վ է ապրում էդ Լեռնամոտում:

— Եվ հոբիթներ, և հսկաներ,— ասաց Մերին,— իսկ ընհանրապես՝ ինչպես մեզ մոտ է: Բրենդիզայքներն այնտեղ եղել են, ասում են՝ ոչինչ:

— Գուցե և ոչինչ,— նկատեց Ֆրոդոն,— բայց Հոբիթստանը վերջացավ: Եվ դուք արդեն, խնդրում եմ, ձեզ չզգաք «ինչպես տանը»: Ու միաժամանակ հիշեք, որ ես հիմա բոլորովին էլ Պարկինս չեմ: Որ հարցնեն, ուրեմն Զառիթափցի եմ:

Նրանք գնում էին աղջամուղջին, մութը թանձրանում էր հետևում ու առջևում, բայց շուտով հեռվում լույսեր առկայծեցին: Զառիվեր բլրալանջը ծածկում էր խավար երկինքը, իսկ ներքևում փռված էր մեծ գյուղը: Դեպի այնտեղ էլ նրանք շտապեցին՝ հուսալով տաք կրակ, դուռ ու տանիք գիշերելու համար:

Գլուխ ինը. «Սիգարշավող Պոնի»

Արդեն մթնել էր ու երկնքում հայտնվել էին աստղերը, երբ Ֆրոդոն ու նրա ուղեկիցներն անցան մամռոտ ճամփաբաժանը և դեմ առան փակ Արևմտյան Դարպասին: Ի դեպ, Դարպասի հետևում պահակախուց կար և պահակախցում մարդ կար նստած: Նա զարմացած վեր թռավ ու լապտերը ձեռքին շտապեց դիմավորելու:

— Ո՞վ եք, որտեղի՞ց եք գալիս,— անբարեհամբույր հարցրեց նա:

— Ուզում ենք օթևանել ձեր պանդոկում,— պատասխանեց Ֆրոդոն: — Գնում ենք արևելք, իսկ առայժմ այստեղ ենք եկել:

— Հոբիթնե՛ր: Այն էլ չորս հոբիթ... Ձեր խոսելուց երևում է, որ բուն Հոբիթստանից եք, ա՛յ քեզ բան,— քրթմնջաց դռնապանը:

Հետո նա անշտապ բաց արեց դարպասը և ներս թողեց ճամփորդներին:

— Մեզ մոտ հազվադեպ են գիշերը հյուր գալիս Հոբիթստանից,— շարունակեց նա, երբ ճամփորդները ներս մտան դարպասից: — Իսկ, ներեցեք, ձեր ինչի՞ն է պետք գնալ արևելք, և դեռ Լեռնամոտից էլ այն կողմ: Ու ինչպե՞ս կհրամայեք ձեզ մեծարել, հետաքրքրասիրություն չհամարեք...

— Թե մեզ ոնց են մեծարում և թե ի՞նչ գործ ունենք՝ հիմա այստեղ այդ մասին խոսելու տեղը չէ,— կտրեց Ֆրոդոն: Նրան դուր չեկավ չափազանց հետաքրքրասեր դռնապանը:

— Չէ որ ինձնից հարցնելու են, թե ում եմ ներս թողել գիշերով,— սկսեց արդարանալ վերջինս:

— Մենք Բրենդիդուիմքի հոբիթներ ենք, ամեն մեկս իր գործն ունի, դե ահա հասել ենք այստեղ,— ասաց Մերին: — Ես, օրինակ, Բրենդիզայքն եմ: Էլ ինչ ասեմ: Իսկ մեզ ասել են, որ Լեռնամոտցիները միշտ ուրախ են հյուր ընդունելու համար:

— Այո, ուրախ ենք, ոնց չէ, ինչի ուրախ չենք որ,— հավատացրեց նրանց դռնապանը: — Ես դեռ ոչ մի էնպես բան չեմ ասել, իսկ դուք սպասեք, թե ձեզ ո՞նց հարցախեղդ կանեն: Էլ ո՞նց կլիներ, ծեր Գորրին հետաքրքրվեց մի քիչ... Ով ասես հիմա չի գալիս մեզ մոտ: Կմտնեք «Պոնի», ինքներդ կզարմանաք:

Դռնապանը բարի գիշեր մաղթեց, նրանք գլխով արեցին և անցան, սակայն Ֆրոդոն նկատեց, որ նա բարձրացրեց լապտերն ու նայեց իրենց հետևից: Դարպասի դռները ճռռացին. թեպետ լավ է՝ փակում են: Ինչո՞ւ է դռնապանը այդքան հետաքրքրվում հոբիթստանցի հոբիթներով: Գուցե Գանդալֆն է իրենց մասին հարցրել: Շատ պարզ է. իրենք եկել են անտառով ու գերեզմանոցներով, իսկ նա արդեն այստեղ է... Միևնույնն է, ինչ-որ կասկածելի էր նայում դռնապանն ու տհաճ էր խոսում:

Իսկ դռնապանը հոբիթների հետևից նայեց-նայեց ու գնաց իր պահակախուցը: Բայց հազիվ էր մեջքով շրջվել դեպի դարպասը, երբ ինչ-որ մարդ անցավ դարպասն ու իսկույն անհետացավ փողոցի մթության մեջ:

Հոբիթները գնում էին փողոցով ու զարմանքով նայում անսովոր մեծ տներին: Երբ Սամը տեսավ երեքհարկանի, բազմաթիվ պատուհաններով պանդոկը, նրա սիրտը նույնիսկ մարեց. ծառերից բարձր հսկաներ ու այլ հրաշքներ՝ լսել էինք, իսկ այստեղ չորսկողմը մարդ հսկաներ են ու վիթխարի տներ՝ ազնիվ խոսք, բավական է, այսօր էլ չեմ դիմանում: Գուցե սև թամբած ձիերը կանգնա՞ծ են պանդոկի բակում, իսկ Սև Հեծյալները պատուհաններից նայում են մոտեցողների՞ն:

— Մի՞թե, տեր իմ, հենց այստեղ էլ կանգ կառնենք,— հարցրեց նա Ֆրոդոյին: — Լավ կլիներ հարցուփորձ անեինք, գուցե մի ուրիշ բան կլինի մեզ՝ հոբիթներիս հարմար:

— Իսկ պանդոկն ինչո՞վ դուրդ չի գալիս,— արձագանքեց Ֆրոդոն: —Թոմ Բոմբանդիլն էլ մեզ ասաց, որ այստեղ գանք: Համբերիր, թերևս ներսն ավելի հարմարավետ է:

Պանդոկը, ուշադիր նայելիս, կանգնած էր Ուղուն շատ մոտիկ, երկու թևը հենվում էին բլրի լանջին, այնպես որ երկրորդ հարկի պատուհանները պետք է որ գետնի հետ հավասար լինեին: Լայն դարպասը տանում էր բակ. մուտքը ձախից էր, վեց լայն աստիճանների վերևում: Դուռը զարդարում էր հպարտ ցուցանակը.

«ՍԻԳԱՐՇԱՎՈՂ ՊՈՆԻ: ՏԵՐՆ Է ԼԱՎՐ ՆԱՐԿԻՍԸ»

Առաջին հարկի պատուհանների հաստ վարագույրների հետևից աղոտ լույս էր թափանցում:

Նրանք բակում թողեցին պոնիներին, առանց թամբերը հանելու, և աստիճաններով բարձրացան: Ֆրոդոն առաջինը մտավ ներս և քիչ էր մնում ընդհարվեր ճաղատ, կարմիր դեպքով ու սպիտակ գոգնոցով մի գիրուկ մարդու հետ: Նա գարեջրի փրփրագլուխ գավաթներով սկուտեղը պահած՝ հանդիպակաց ուղղությամբ մի դռնից մյուսն էր վազում:

— Ձեզ մոտ կարելի՞ է... — սկսեց Ֆրոդոն:

— Էս վայրկյանիս, էս վայրկյանիս... — գոռաց նա ուսի վրայից և սուզվեց ծխախոտի ծխի ու ձայների ժխորի մեջ:

Իսկապես Ֆրոդոն չհասցրեց ուշքի գալ, երբ նա նորից կանգնած էր իր դիմաց:

— Բարի երեկո, փոքրիկ տեր իմ,— ասաց նա: — Ի՞նչ եք կամենում:

— Չորս անկողին և մարագ հինգ պոնիի համար: Իսկ դուք պարոն Նարկի՞սն եք:

— Հենց ինքը,— ուրախացավ գիրուկը: — Իսկ անունս է Լավր: Լավր Նարկիսն ինչո՞վ կարող է ծառայել: Հոբիթստանի՞ց եք,— հարցրեց նա և հանկարծ ձեռքի ափով խփեց ճակատին, ասես ինչ-որ բան հիշելով: — Հոբիթնե՛ր... — բացականչեց նա: — Ախ, այո, ախր հոբիթներ... Ձեր անունիկը շնորհ արեք:

— Պարոն Ճագարակ, պարոն Բրենդիզայք,— ճամփորդներին ներկայացրեց Ֆրոդոն: — Իսկ սա Սամ Համեստուկն է: Անձամբ ես՝ Ձառիթափցի:

— Ինչ կարող եմ անել, հը՞,— բացականչեց Լավր Նարկիսը, մատները ճտճտացնելով: Մոռացել եմ, վերջացավ գնաց... Ոչինչ, կվերհիշեմ, կհասցնենք: Ես այստեղ ուղղակի ոտքից-ձեռից ընկել եմ, իսկ ձեր մասին, ուրեմն՝ այսպես: Հոբիթստանից թանկագին հյուրեր մեզ մոտ հազվադեպ են բարեհաճում՝ կտեղավորենք, ինչպե՞ս չենք տեղավորի: Ճիշտ է, այսօր լեփ-լեցուն է, ազատ տեղ չկա, ասեղ գցելու տեղ չկա: Դարպասի շեմից հետդարձ չկա, ինչպես ասում են մեզ մոտ, լեռնամոտում: Հե՛յ Նոբ,— գոռաց նա,— ախ դու, դանդաղաշարժ, բրդոտ: Նո՛բ...

— Գալիս եմ, պարոն, այստեղ եմ... — ճարպիկ, կլորադեմ մի հոբիթ դուրս թռավ ինչ-որ դռնից և տեսնելով ազգակիցներին, բերանը բաց մնաց:

— Իսկ Բոբն ո՞ւր է,— գոռաց պանդոկպանը:— Ա՛խ չգիտես, ուրեմն գտիր... երկու ոտքդ էլ փոխ առ: Հո ես չեմ ձեզ հետևելու, ծոծրակիս աչքեր չունեմ: Բոբին ասա բակում հինգ պոնի կա, թող ինչպես ուզում է տեղավորի:

Նոբը քթի տակ ծիծաղեց, աչքով արեց ու դուրս վազեց:

— Դեհ, ուրեմն, ինչի՞ մասին էի ասում,— հիշեց պանդոկպանը ափով զարկելով իր ճակատին: — Ինչպես ասում են, հիշողությունս ծակվել է, կարելու ժամանակ չկա: Եվ ինչ էլ երեկո սկսվեց՝ ոչ շունչ քաշես, ոչ շունչ փչես: Գլուխս պտտվում է: Էստեղ անցած գիշեր մի տարօրինակ խումբ լցվեց հարավից: Մամռոտ ճամփով: Հետո թզուկներ՝ արևելքից, պարզ բան է՝ արևմուտք: Իսկ հիմա դուք: Որ դուք հոբիթ չլինեիք, ուրեմն անելիք էլ չկար. տեղ չկա, ուզում ես՝ խեղդիր, չկա: Բայց քանի որ դուք հոբիթ եք, ապա ես ձեզ շիտակ կասեմ. ձեզ համար տեղեր կան... Դեռ էն ժամանակ, որ պանդոկը կառուցում էին, դիտմամբ հյուսիսային թևում ջոկեցին մեկ երկու սենյակ՝ հանկարծ հոբիթներ կգան: Էնտեղ, իհարկե, ցածր է, քան էստեղ. ամեն ինչ ոնց որ դուք եք սիրում՝ պատուհանները կլոր, առաստաղները՝ ցածր: Ընթրիք եք ուզում, ինքնըստինքյան պարզ է, բա էլ ինչպես, դա հիմա: Գնացինք...

Նա հոբիթներին տարավ թեք միջանցքով և բացեց կլոր դուռը:

— Այ թե սենյակ է, հա՛,— ասաց նա: — Հը՞, ձեր սրտո՞վ է... Դե ես վազեցի, ներեցեք, մի բառ ասելու ժամանակ չկա: Երկու ոտք է, երկու ձեռք, էստեղ վեցն էլ չէր հերիքի, զանգեք, Նոբն ամեն ինչ կանի, ամեն ինչ կբերի: Իսկ եթե չլսի էդ դանդալոշը, զանգեք, ոտքերով խփեք հատակին ու գոռացեք:

Վերջապես պանդոկպանը վազեց ու նրանց շունչ քաշելու հնարավորություն տվեց: Ինչպես երևում է, իսկապես էլ նա մինչև ականջները թաղված է գործերի մեջ, բայց շատախոսել հաջողացնում էր: Նրանք շուրջները նայեցին. ոչ մեծ սենյակը շատ հարմարավետ տեսք ուներ: Բուխարիկում բոցկլտում էր կրակը, բուխարիկի առջև ցածրիկ բազկաթոռներ էին դրված: Կլոր սեղանը ծածկված էր թարմ սփռոցով, սեղանին՝ զանգակ: Զանգը խփել, սակայն, հարկ չեղավ: Նոբը ինքը հայտնվեց. մի ձեռքում մոմակալ, մյուսում՝ պնակներով սկուտեղը:

Ընթրիքը մի ակնթարթում մատուցվեց. տաք արգանակ, դոնդողածածկ միս, մոշի ջեմ, նոր թխած հաց, մեծ առատությամբ կարագ և կես գլուխ պանիր: Մի խոսքով, համարյա ոնց որ Հոբիթստանում: Նույնիսկ Սամը դադարեց անվստահությամբ շուրջը զննել: Ի դեպ, նա դադարեց շուրջը նայել, հենց որ թարմ գարեջուր բերեցին:

Հասցրեց երևալ պանդոկպանը, ման եկավ սեղանների շուրջը և, ներողություն խնդրելով, ասաց.

— Այ կընթրեք, կցանկանաք հասարակության մեջ լինել,— ասաց նա դռան շեմքից,— իսկ գուցե չեք ցանկանա, գուցե իսկույն անկողին կմտնեք, բարի գիշեր, հանգիստ քուն, բայց եթե կցանկանաք, եկեք դահլիճ, բոլորը շատ կզարմանան ձեզ տեսնելով, բա ո՞նց, հյուրեր Հոբիթստանից, այն էլ, անտարակույս, նորություններով... Գուցե կպատմեք քիչ-միչ, գուցե կերգեք. մի խոսքով՝ կուզեք կգաք, չեք ուզի, ինչպես կուզեք: Որևէ բան պետք կլինի, զանգը խփեք:

Հոբիթները կուշտ կերան, կուշտ խմեցին ու աշխուժացան: Ֆրոդոն ու Փինը, նրանց հետ էլ արդեն Սամը, որոշեցին գնալ նայել ժողովրդին ու իրենց էլ ցույց տալ: Մերին ասաց, որ ինքը նրանց չի միանա՝ դահլիճները բոլոր պանդոկներում նույնն են. ծուխ, աղմուկ, ժխոր:

— Ավելի լավ է հանգիստ նստեմ կրակի մոտ, հետո, գուցե կգնամ զբոսնելու: Մենակ թե դուք էնտեղ լեզուներիդ կապերը բաց չթողնեք, հիշեք, որ մենք գաղտնի փախստականներ ենք, իսկ Հոբիթստանը կողքին է, ցանկացած շուն մեր հոտը կառնի, եթե հոտոտի...

— Լավ, լավ... — ասաց Փինը: — Դու ինքդ չկորչես՝ և հաշվի առ, որ դրսում լավ է, իսկ ներսում՝ ավելի լավ:

Դահլիճում ամենազանազան ու խայտաբղետ ժողովուրդ էր հավաքված: Ֆրոդոն զննեց նրանց, երբ աչքերը վարժվեցին այստեղի լույսին, եթե չասենք կիսախավարին: Հսկայական բուխարիկը կարմրավուն շողեր էր սփռում, իսկ երեք բազմամոմ աշտանակ կորչում էին ծխախոտի ծխի մեջ: Լավը Նարկիսը կրակի մոտ կանգնած խոսում էր միաժամանակ երկու թզուկի և երեք տարօրինակ տեսքով մարդկանց հետ: Նստարաններին խառը նստած էին լեռնամոտցիներ, տեղական հոբիթներ, թզուկներ և էլի ով ասես, ծխի մեջ լավ չէր զանազանվում:

Հոբիթստանի հոբիթներին տեսնելով դահլիճի լեռնամոտցիները ծափ տվեցին և ուրախ խժդժոց բարձրացավ: Օտարականները, հատկապես նրանք, որ Մամռոտ Ճամփից էին, նրանց ոտքից գլուխ չափեցին: Պանդոկպանի համբերությունը չէր տանում, որ լեռնամոտցիներին ներկայացնի նոր ժամանած հյուրերին, իսկ նրանց էլ՝ սրանց. այնքան չէր համբերում, որ հոբիթների գլխին ուղղակի անունների տարափ տեղաց: Լեռնամոտցիների ազգանունները մեծամասամբ բուսական էին՝ Եղեգնյակ, Հավամրգուն, Ուղտափուշիկ, Կաղամախունկ և նման այլ անուններ: Տեղական ամենահաճախ հանդիպող անունը Հինկաղնին էր: Բնունիները, Ավազունները, Փոսփորիկները, Երկարառտքները, անկասկած ազգակիցներ կունենային Հոբիթստանում: Երևան եկան նաև իսկական Զառիթափցիներ, նրանք արագորեն ըմբռնեցին, որ Ֆրոդոն ոչ այլ ոք է, քան իրենց նորահայտ հորեղբայրը:

Այստեղի հոբիթների բարյացակամությունը խառնվեց հետաքրքրասիրության հետ, և Ֆրոդոն հասկացավ, որ առանց բացատրությունների նրանցից չես ազատվի: Նա ասաց, որ հետաքրքրվում է պատմությամբ ու աշխարհագրությամբ (բոլորը գլխով էին անում, թեպետ բառերը արտասովոր էին), որ պատրաստվում է գիրք գրել (զարմանք կտրած լռությունը եղավ նրա պատասխանը), որ նա ու իր ընկերները տեղեկություններ են հավաքում Հոբիթստանի սահմաններից դուրս ապրող, հատկապես արևելյան հոբիթների մասին:

Բոլորն իրար խանգարելով աղմկեցին. եթե Ֆրոդոն իսկապես մտադիր է գիրք գրել և, եթե հարյուրավոր ականջներ ունենար, մի քանի րոպեի ընթացքում տասը գրքի նյութ կհավաքեր: Դեռ ավելին, նրան խորհուրդ տվեցին դիմել այսինչներին, այնինչներին և այսինչներին, սկսելով թեկուզ հենց նրանից. Նարկիսից: Հետո պարզ դարձավ, որ Ֆրոդոն այս պահին ոչինչ չի գրելու. այդ ժամանակ հոբիթները նորից սկսեցին հարցնել հոբիթական գործերից: Ֆրոդոն, ինչպես միշտ, ժամը մեկ բառ էր ասում և շուտով մենակ մնաց՝ նստեց անկյունում, նայում էր ու լսում:

Մարդիկ ու թզուկները քննարկում էին արևելքի իրադարձություններն ու նորությունները էին փոխանակում՝ վերջին հաշվով բոլորին հայտնի: Այնտեղ, որտեղից եկել էին Մամռոտի մարդիկ, հողը վառվում էր նրանց ոտքերի տակ և նոր հողեր էին փնտրում: Լեռնամոտցիները կարեկցեցին, բայց, երևում է, հույս ունեին, որ այդ որոնումները կշրջանցեին իրենց: Եկվորներից մեկը, մի շիլաչք ու այլանդակ, արշավանք գուշակեց հարավ-արևելքից մոտ ապագայում:

— Եվ թող նրանց համար նախապես տեղ պատրաստեն, թե չէ նրանք իրենք կգտնեն իրենց համար: Ապրել հո հարկավոր է, և ոչ միայն որոշ-որոշներին:

Դա դիտմամբ բարձր էր ասված, և տեղացիները տագնապալի հայացքներ փոխանակեցին:

Հոբիթները զրուցում էին մի կողմ քաշված, մարդկային հոգսերը նրանց այնքան էլ չէին անհանգստացնում: Հոբիթների գետնատները, կամ նույնիսկ տնակները խոշոր ժողովրդին պետք չեն: Բոլորը կուտակվել էին Սամի ու Փինի շուրջը, իսկ սրանք սոխակների պես գեղգեղում էին, հատկապես Փինը՝ նրա ամեն մի նախադասությանը հետևում էր ծիծաղի պոռթկումը:

Հանկարծ Ֆրոդոն նկատեց, որ նույնիսկ այս տեղերի համար տարօրինակ, դաժան, քամահարված դեմքով մի մարդ կիսամութի մեջ պատի տակ նստած՝ մի բաժակ գարեջուր առջևը, ուշադիր ունկնդրում էր հոբիթների անհոգ շաղակրատանքը: նա երկար ծխամորճ էր

ծխում, հոգնած, որսորդական երկարաճիտք, ցեխակոլոլ կոշիկներով ոտքերը սեղանի տակ մեկնած: Հին, բծավոր մուգ կանաչ թիկնոցը չէր հանել և, չնայած տոթին, նույնիսկ կնգուղը չէր հանել: կնգուղի տակից նրա աչքերը խիստ փայլում էին, ու երևում էր, որ նա նայում էր հոբիթներին:

— Ո՞վ է նա,— հարցրեց Ֆրոդոն պանդոկապետի հետ փսփսալու հարմար պահը որսալով: — Կարծես թե նրան չեք ներկայացրել:

— Նա՞,— նույն փսփոցով պատասխանեց պանդոկպանը աչքերը շլելով և առանց գլուխը թեքելու: — Դե ոնց ասեմ ձեզ: Անհասկանալի ժողովուրդ է, քարշ են գալիս այստեղից այնտեղ... Մենք նրա անունը Հետքագետ ենք դրել: Նա հազվադեպ մի խոսք կասի, բայց առհասարակ պատմելու շատ բան ունի: կորչում է մի ամսով, եթե ոչ մեկ տարով, իսկ հետո հայտնվում է, նստում, գարեջուր է խմում: Անցած գարնանը հաճախ էր այստեղ լինում, հետո կորավ և ահա նորից է եկել: Չգիտեմ, թե իրականում ինչպես են նրան կոչում, իսկ մեզ մոտ կոչում են Պանդուխտ: Սակայն տարօրինակ է, որ դուք եք նրա մասին հարցնում: — Բայց այստեղ Լավրին կանչեցին, ինչ-որ տեղ գարեջուրը վերջացել էր, ու նրա վերջին խոսքերը մնացին առանց բացատրության:

Ֆրոդոն նկատեց, որ պանդուխտ ուղիղ իրեն է նայում, ասես կռահել էր, որ խոսքն իր մասին էր: Հետո նա գլխով ու ձեռքով նշան արեց, հրավիրելով Ֆրոդոյին իր մոտ: Ֆրոդոն մոտեցավ, և Պանդուխտը կնգուղը հետ գցեց. ճերմակն արդեն դիպել էր նրա սև, խիտ մազերին, իսկ երկարուկ, շեշտված այտոսկրերով դեմքին դաժանորեն փայլում էին խաժ աչքերը:

— Իմ անունը Պանդուխտ է,— ցածր ասաց նա: — իսկ դուք, կարծեմ, պարոն Զառիթափցին եք, եթե Լավրը չի շփոթել:

— Նա չի շփոթել,— չոր պատասխանեց Ֆրոդոն: — Ինչ որ չափազանց անքթիթ էին նայում ու զննում նրան:

— Հասկանալի է, որ՝ ոչ: Ուրեմն, ահա, պարոն իմ Զառիթափցի,— ասաց Պանդուխտը,— ես ձեր տեղը լինեի, մի քիչ խելքի կբերեի իմ երիտասարդ բարեկամներին: Տաքանալ, խմել, շաղակրատել՝ այդ բոլորը, իհարկե, հիանալի է, բայց սա ձեզ համար Հոբիթստան չէ. ի՞նչ իմանաս, ով կլսի նրանց շաղակրատանքը: Իհարկե, իմ գործը չէ,— ավելացրեց նա բերանի անկյունով ժպտալով և աչքը Ֆրոդոյից չկտրելով,— բայց Լեռնամոտում, գիտե՞ք, հիմա ամենազանազան մարդիկ են լինում:

Ֆրոդոն դիմացավ նրա սևեռուն հայացքին ու լռեց, իսկ հայացքը դարձրեց դեպի Փինը, որը համընդհանուր ծիծաղի տակ պատմում էր Հյուրասիրության մասին: Եվս մի քիչ՝ ու կպատմի, թե ինչպես Բիլբոն անհետացավ, հեքիաթային Պարկինսի մասին ախր բոլորին է հետաքրքիր, իսկ ոմանց՝ հատկապես:

Ֆրոդոն զայրացավ: Հիմարություն է, իհարկե, այստեղի հոբիթները ոչինչ չեն հասկանա, կծիծաղեն ու կմոռանան, թե ինչ է կատարվում այնտեղ, Գետի մյուս կողմում: Բայց կան այնպիսիները, որ կլսեն երկու ականջ էլ փոխ առած (նույն ինքը Լավր Նարկիսը), ոմանց էլ Բիլբոյի մասին որոշ բան հայտնի է:

Նա շրթունքը կծեց, մտածելով թե ինչ կարելի է անել: Փինը հաճույք էր պատճառում ունկնդիրներին և, երևում է, ինքնամոռացության մեջ էր ընկել: Գոնե մատանու մասին հանկարծ չհիշատակի, դա այնքան էլ հեռու չէ նրանից, իսկ ժամանակն արդեն...

— Արա՛գ, ընդհատել,— նրա ականջին շշնջաց Պանդուխտը:

Ֆրոդոն թռավ աթոռին ու սկսեց բարձր խոսել: Փինից շրջվեցին. հոբիթները որոշեցին, որ վերջապես պարոն Զառիթափցին գարեջուր է կոնծել ու լեզուն բացվել է:

Ֆրոդոն իրեն կատարյալ խրտվիլակ զգաց և սկսեց, ինչպես սովորություն ուներ, երբ գործը հասնում էր ճառելուն, գրպանը քրքրել: նա շղթան շոշափեց, Մատանի՝ ու հանկարծ անհետանալու մի ուժգին ցանկություն առաջացավ, ճիշտ է, կարծես թե այդ ցանկությունը ինչ-որ մեկը հուշեց նրան: Բայց նա դիմացավ գայթակղությանը և Մատանին սեղմեց բռում, ասես նրա համար, որ չսահի ու անկարգություններ չանի: Համենայն դեպս, կարծես թե մատանին ոչինչ չհուշեց, փորձեց, բայց չստացվեց:

Մատանին նրան անհետանալու սարսափելի ցանկություն տվեց... Նա իր ճառն սկսեց «բարեկամական խոսքով», ինչպես կասեին Հոբիթստանում.

— Մենք բոլորս շատ զգացված ենք ձեր ջերմ ընդունելությունից, և համարձակվում եմ հուսալ, որ իմ կարճատև այցը կթարմացնի Հոբիթստանի ու Լեռնամոտի բարեկամական կապերը,— հետո շփոթված հազաց:

Այժմ դահլիճում բոլորը նրան էին նայում: «Մի ե՛րգ»,— գոռաց հոբիթներից մեկը: «Ե՛րգ, ե՛րգ»,— ձայնակցեցին ուրիշները: — «Որևէ նոր բան, կամ հներից, որ ոչ ոք չի լսել...»:

Ֆրոդոն մի պահ իրեն կորցրեց: Հետո մի ծիծաղելի երգ հիշեց, որը շատ էր սիրում Բիլբոն (և շատ էր դրանով պարծենում, երևի այն պատճառով, որ հենց ինքն էր հորինել): Ահա այն ամբողջությամբ, թե չէ հիմա դրանից միայն առանձին տողեր են հիշում.

Մի պանդոկ կա սարի լանջին.
Սակայն դա չէ զարմանալին.
Մի օր, իսկ դա վաղուց էր շատ,
Լուսնեմարդը լուսնից իջավ,
Որ գարեջուր անուշ անի:

Լուսնեմարդը պանդոկ մտավ.
Այդ մասին չէ խոսքս սակայն,
Այնտեղ մի շուն նայեց նրան
Ու քրքջաց նրա վրա՝
Հավանաբար պատճառը կար:

Լուսնեմարդը խմել ուզեց,
Բայց դա՝ ոչինչ, Է՛հ ի՞նչ կա որ.
Մի կատու կար, շվին առել,
Նվագում էր ուրախ, գավոտ:

Իսկ մի կով էլ հենց դռան մոտ
Տեսք ընդունած հերոսական,
Պարահանդես մտել հոժար
Հա պարում էր մի ամբողջ ժամ.
Կարևորը դա չէ սակայն:

Եվ ոչինչ որ խելակորույս
Պարում էին ափսե, գդալ,
Շողշողալով լույսերի տակ,
Ճակծկելով դուռ ու հատակ
Սուր դանակն էլ պարմեջ մտավ:

Կովն ընդունեց մարտական տեսք,
Առաջ պարզեց պոզերը սուր,
Խենթություն էր նրան պատել
Հարու տվեց դուռ ու պատեր,
Բայց բոլորն այս խաղեր են զուր:

Լուսնեմարդը շատ էր խմել,
Այ թե որն է չարիք ու ցավ,
Նա գլորվեց սեղանի տակ,
Ամբողջ գիշեր այնտեղ քնեց,
Լույսը բացվեց, բայց չարթնացավ:

Կատուն դարձյալ շվի փչեց.
Սակայն այդ չեմ ուզում ասել,
Ձայնը զիլ ու բարձր էր այնքան,
Որ կարթնանար մեռածն անգամ,
Լուսնեմարդը քար էր ասես...

Քնած էր նա՝ և ոչ մի ձայն,

Կարծես իրենց տանն էր քնած,
Բայց քաշեցին նրա ուսից,
Շպրտեցին դեպի լուսին...
Ժամանակին թռավ գնաց:

Շարունակեց կատուն փչել
Իր սրինգը՝ զի՛լ ու անփույթ,
Այնքան փչեց, որ կոտրվեց.
Այս ի՞նչ դժբախտ բան կատարվեց.
Հավերժ ոչինչ չկա կյանքում:

Այստեղ կովը թռչունի պես
Երկինք թռավ մեկ էլ հանկարծ,
Թռավ երկինք, հասավ լուսին,
Ներքև նայեց լուսնի լույսից.
Ավաղ, էլ հետ ճամփա չկար:

Նա այնտեղ է ապրում հիմա,
Սակայն դա չէ զվարճալին,
Այգաբացից հետո անվերջ
Ծիծաղում է շունը, շան մեջ
Կատաղել է ծիծաղն էլի:

Իսկ երկնքում լուսին չկա,
Հեռացել է՝ արդեն հոգնած,
Այնքան սպասեց իր դյուցազնին՝
Հարբեցողին իր անազնիվ,
Որ արևը ելավ հանկարծ:

Երկինքը՝ պարզ ու կապուտակ,
Այգաբաց է սովորական,
Սակայն մարդիկ պանդոկում տաք
Նոր են պառկում, որ նոր քնեն,
Զարմանում ես, ի՞նչ բան է դա...

Բարձր ու երկար ծափահարեցին: Ֆրոդոյի ձայնը վատը չէր, երգն էլ դուր եկավ: Էլի գարեջուր պահանջեցին, և երգը նորից լսելու ցանկություն հայտնեցին: Գոռում–գոչում բարձրացավ. «մեկ անգա՛մ էլ, խնդրո՛ւմ ենք»: Ֆրոդոն ստիպված եղավ մեկ երկու գավաթ գարեջուր խմել և նորից երգը սկզբից սկսել: Նրան ձայնակցում էին. ծանոթ մեղեդի էր, բառերը ընթացքում կռահում էին: Հիմա արդեն Ֆրոդոն էր քեֆ անում: Նա անհոգ թռչկոտում էր սեղանի վրա, իսկ երբ հասավ. «Այստեղ կովը երկինք խոյացավ» բառերին, ինքն էլ թռավ վերև, միայն թե չափազանց բարձր, այնպես որ այնտեղից շնորհ արեց ուղիղ գարեջրի գավաթներով սկուտեղի մեջ, սայթաքեց և սեղանից թրմփաց ցած: Ունկնդիրները պատրաստվում էին կոկորդով մեկ միահամուռ քրքջալ՝ բայց բերանները բաց քարացան. երգիչն անհետացել էր: Ոնց որ հատակի տակն անցավ և նույնիսկ մի անցք չէր թողել...

Վերջապես տեղական հոբիթները բերանները փակեցին, ոտքի թռան և ամբողջ ձայնով Լավրին կանչեցին պատասխան տալու: Փինի ու Սամի շուրջը վայրկենապես ամայություն առաջացավ. նրանց նայում էին մռայլ ատելությամբ: Խրախճասեր տղաներից նրանք վերածվեցին անառակ կախարդի մեղսակիցների, որը չգիտես, թե ինչու է բարեհաճել Լեռնամոտ: Մի թուխ լեռնամոտցի այնպիսի հասկացող չարախնդությամբ էր աչքերը կկոցել նրանց վրա, որ Փինն ու Սամը բոլորովին իրենց կորցրին: Իսկ նա գլխով արեց շիլաչք հարավցուն, և նրանք դուրս եկան (Սամը հիշեց, որ ամբողջ երեկո հոբիթներին նայելով շշուկով խոսում էին): Նրանց հետևից շտապեց նաև դռնապան Գորրին:

Ֆրոդոն աշխարհիս երեսին գոյություն ունեցող բոլոր անեծքներով իրեն անիծում էր: Մտածելով, թե ինչպես հարթի այդ սայթաքումը, սեղանների տակով սողաց մութ անկյունը, Պանդուխտի մոտ, որը հանգիստ նստած էր, ասես ոչինչ չէր եղել: Ֆրոդոն կպավ պատին ու մատանին հանեց: Ինչպես էր այն իր մատը մտել, հանելուկ էր: Թերևս երգելիս նա ձեռքը

գրպանն է տարել, իսկ երբ ընկել է, ձեռքը թափ է տվել և պատահաբար հագել այն, թերևս այդպես... Արդյոք մատանին ինքը չէ՞ այս կատակը խաղում իր գլխին, մտածում էր նա, և իրեն բերում ինչ-որ մեկի ցանկությամբ կամ կարգադրությամբ՝ բայց ինչո՞ւ... Այն երկուսը, որ նոր գնացին, շատ կասկածելի են...

— Այսպես,— ասաց Պանդուխտը, նրան նկատելով, բայց առանց գլուխը շրջելու: — Ախր դա ձեր ինչի՞ն էր հարկավոր... Նույնիսկ ջահելներին ավելի մեծ վնաս չէին կարող տալ: Ուղղակի երկու ոտքով թակարդն ընկնել է սա: Ոտքով կամ գուցե մատո՞վ...

— Չեմ հասկանում, ինչի՞ մասին եք խոսում,— գրգռված ասաց Ֆրոդոն:

— Հասկանում եք, լավից էլ լավ եք հասկանում,— քմծիծաղեց Պանդուխտը,— թող միայն աղմուկը դադարի: Այն ժամանակ, եթե թույլ կտաք, պարոն Պարկինս, ես ձեզ հետ իսկապես կուզեի խոսել:

— Այդ ինչի՞ մասին պետք է իրար հետ խոսենք,— հարցրեց Ֆրոդոն, ասես չնկատելով, որ իրեն իսկական անունով կոչեցին:

— Բավական կարևոր գործերի մասին, և ձեզ համար, և ինձ համար,— պատասխանեց Պանդուխտը Ֆրոդոյի հայացքը որսալով: — Ի դեպ, մի՛ վախեցեք, սարսափելի ոչինչ չկա:

— Դեհ, ի՞նչ արած, կլսենք,— ասաց Ֆրոդոն, ջանալով խոսակցին չենթարկվել: — Հետո, քիչ ուշ:

Իսկ բուխարիկի մոտ տաք-տաք վիճում էին: Խոհանոց գնացած Լավր Նարկիսը լսում էր ընդհատ և իրար հակասող պատմությունները տարօրինակ իրադարձությունների մասին:

— Ես իմ աչքով տես, պարոն Նարկիս,— պնդում էր, մի հոբիթ: — Ես իմ աչքով տեսա, թե ոնց անտեսանելի դարձավ, հալվեց օդում ու վերջացավ գնաց:

— Այդպես մի խոսեք, պարոն Հինկաղնի,— զգուշացնում էր պանդոկպանը:

— Ու պիտի ասեմ,— պնդում էր պարոն Հինկաղնին: — Ու ինչ ասում եմ, էն էլ հաստատում եմ...

— Չէ՛, էստեղ ինչ-որ բան տեղը չէ,— ասաց պանդոկպանը կասկածանքով գլուխն օրորելով: —Որպեսզի պարոն Զառիթափցին իր կազմվածքով օդում ցնդի՞: Էն էլ ես օդում, սա ի՞նչ օդ է...

— Էդ դեպքում ո՞ւր է նա,— գոռացին մի քանի ձայներ:

— Ես ինչ իմանամ, դա նրա գործն է, մենակ թե վաղը առավոտ չմոռանա վճարել: Իսկ ո՞ւր պետք է կորչի, եթե պարոն Զառիթափցին ոչ մի տեղ էլ չի ցնդել:

— Դե, իսկ ես ինքս տեսա, որ նա անտեսանելի դարձավ,— համառում էր պարոն Հինկաղնին:

— Ինչ-որ սխալ է եղել,— չէր հանձնվում պարոն Լավր Նարկիսը, կոտրատված ամանեղենը սկուտեղի վրա հավաքելով:

— Իհարկե սխալ է,— ասաց Ֆրոդոն: — Ես ոչ մի տեղ էլ չեմ անհետացել: Ահա ես... Ուղղակի Պանդուխտի հետ մի երկու խոսք ունեի փոխանակելու:

Նա քայլ արեց առաջ ու նրան լուսավորեց բուխարիկի կրակը, բայց նրանից ընկրկեցին, ինչպես ուրվականից: Իզուր էր նա բացատրում, թե պարզապես արագորեն սողացել է սեղանների տակով: Մնացած հոբիթներին ու լեռնամոտցիներին ասես քամին քշեց՝ ոչ գարեջուր, ոչ խոսակցություններ նրանք էլ չէին ուզում, իսկ ոմանք դռնից շրջվում էին ու խոժոռ նայում Ֆրոդոյին: Ոտքները կախ գցեցին միայն թզուկներն ու երկու կամ երեք օտարական մարդ՝ նրանք հրաժեշտ էին տալիս պանդոկպանին, նույնիսկ Ֆրոդոյի կամ նրա բարեկամների կողմը մի շեղ հայացք անգամ չգցելով: Շուտով դահլիճում մնաց միայն Պանդուխտը՝ պատի տակ, համարյա աննկատ: Սակայն պանդոկպանը շատ չվշտացավ. գիտեր, որ դեռ շատ երեկոներ կհավաքվի նույն ժողովուրդը՝ կդնի ու կվերցնի, կտա ու կառնի զարմանահրաշ դեպքը:

— Էս ինչե՞ր եք սարքում, պարոն Զառիթափցի,— ուրախ հանդիմանանքով հարցրեց նա: — Իմ մշտական հաճախորդներին վախեցրիք, ամանեղենը ջարդեցիք...

— Ներողություն եմ խնդրում, որ այդքան հոգսեր պատճառեցի,— ասաց Ֆրոդոն: — Հավատացնում եմ ձեզ, դա բացարձակապես առանց դիտավորության ստացվեց: Ցավալի դեպք է:

— Լինում է, լինում է, պարոն Ձառիթափցի... Սակայն առաջիկայում, եթե խելքներիդ փչի անհետանալ կամ թե կախարդել, դուք արդեն նախօրոք ասեք՝ և ոչ թե ինչ-որ մեկի, այլ ինձ: Մենք էստեղ, գիտե՞ք, սովոր չենք ամեն տեսակ կախարդական բաների. ժողովրդին պետք է նախապատրաստել:

— Այլևս ոչ մի բան ու ման, պարոն Նարկիս, ես ձեզ հաստատ խոսք եմ տալիս: Ընդհանրապես, վաղուց արդեն մեր քնելու ժամանակն է. չէ որ առավոտ վաղ շարժվում ենք: Դուք գոնե աչք պահեք, որ մեր պոնիները ժամը ութի կողմերը պատրաստ լինեն, լա՞վ:

— լավ, պատրաստ կլինեն... Միայն թե քնելուց առաջ անձամբ ինձ հարկավոր է ձեզ հետ խոսել: Մի կարևոր բան է միտս ընկել, հուսով եմ, ոչ մի տխրելու բան չի լինի: Հիմա գործերս վերջացնեմ ու ուղիղ ձեզ մոտ, ձեր թույտվությամբ:

— Այո, խնդրեմ,— ուսերը թոթվեց Ֆրոդոն ընկճված ձայնով և մտածեց՝ տեսնես ինչքան պետք է կարևոր բաների մասին խոսի քնելուց առաջ: Մի՞թե բոլորն այստեղ իր դեմ են: — նույնիսկ Լավր Նարկիսի կլորիկ, բարեհոգի դեմքը նրան չարագուշակ թվաց:

Գլուխ տասը. Պանդուխտը

Ֆրոդոն, Փինը և Սամը մեկը մյուսի հետևից մտան իրենց մութ սենյակը: Մերին չկար, կրակը բուխարիկում հազիվ մարմրում էր: Միայն ածուխները բորբոքելով ու մի քանի կտոր ցախ գցելուց հետո նրանք նկատեցին, որ Պանդուխտն իրենցից հետ չի մնացել. նա, պարզվում է, արդեն նստել էր դռան մոտ դրված բազկաթոռին:

— Օհո՛... — ասաց Փինը: — Էս ո՞վ է, ի՞նչ է ուզում:

— Իմ անունը Պանդուխտ է,— պատասխանեց նա,— ձեր ընկերը խոստացավ օգնել ինձ և հուսով եմ, որ նա այդ մասին չի մոռացել:

— Այո, դուք ուզում էիք խոսել «բավական կարևոր գործերի» մասին,— հիշեց Ֆրոդոն: — Այդ ի՞նչ գործեր են:

— Հենց բավական կարևոր,— պատասխանեց Պանդուխտը: — Եվ գնի մասին պայմանավորվենք նախապես:

— Այդ ո՞ր գնի մասին:

— Մի ձևացեք... Եկեք ձեզ ասեմ, ինչ որ գիտեմ, բարի խորհուրդ կտամ ու կսպասեմ շնորհակալությանը:

— Իսկ մեզ վրա թա՞նկ է նստելու,— հարցրեց Ֆրոդոն:

Նա որոշեց, որ կողոպտիչի է հանդիպել ու մտովի հաշվեց հետը վերցրած դրամը: Քիչ է, դե և ափսոս է տալը:

— Գրպանիդ հարմար,— քթի տակ անուրախ ծիծաղեց Պանդուխտը, ասես կռահելով Ֆրոդոյի հաշիվները: — Ընդամենը ինձ վերցնում եք որպես ձեզ ուղեկից, իսկ ես գալիս եմ ձեզ հետ, քանի դա հարկավոր է ինձ:

— Ա՛յդ էր պակաս,— կտրեց Ֆրոդոն զարմացած ու առաջվանից ավելի տագնապահար: — Մեզ ուղեկից պետք չէ, իսկ եթե պետք լիներ, ես նրա մասին ամեն ինչ սկզբից կպարզեի՝ ով է նա ու ինչո՞վ է զբաղվում:

— Այդպես էլ պետք է,— հավանություն տվեց Պանդուխտը, ոտքը ոտին գցելով ու ավելի հարմար նստելով բազկաթոռում: — Կարծես թե դուք ուշքի եք գալիս, և դա ակնհայտորեն լավ է: Բավական է խենթություն անել: Ուրեմն ես ինչ որ գիտեմ, ձեզ կասեմ, իսկ շնորհակալությունը կմնա ձեզ վրա՝ թերևս չուշանա:

— Այդ դեպքում արտահայտվեք, տեսնենք ի՞նչ գիտեք,— համբերությունից դուրս եկավ Ֆրոդոն:

— Չափազանց շատ այնպիսի բաներ, ինչ մասին դուք ավելի լավ է չիմանաք,— նախկին հեգնանքով ասաց Պանդուխտը: — Ինչ վերաբերվում է ձեզ... — նա վեր կացավ, մոտեցավ դռանը, արագ բաց արեց և դանդաղ ծածկեց: Հետո նորից նստեց բազկաթոռի մեջ: — Ես նուրբ լսողություն ունեմ,— ասաց նա, ձայնը ցածրացնելով: — Ճիշտ է, անհետանալու ընդունակություն չունեմ, բայց առիթ ունեցել եմ դարանամուտ լինելու և ամենավախկոտ թռչունն իսկ որսալու: Այսօր երեկոյան ես դարանամտում էի Ուղին Արևմտյան Դարպասից մի երկու լիգ այն կողմ: Մեկ էլ տեսնեմ չորս հոբիթ են գալիս Թացածորի ճանապարհով: Նորից չեմ պատմի, թե ինչի մասին էին խոսում իրար մեջ և ինչպես հրաժեշտ տվեցին ծերուկ Բոմբանդիլին: Գլխավորը՝ մի հոբիթը մյուսին ասում է. «Տեսեք հա, ես հիմա ոչ մի Պարկինս էլ չեմ: Եթե հարցնեն՝ ուրեմն Ձառիթափցի եմ»: Այստեղ իմ հետաքրքրությունը շարժվեց. ես հոբիթներին ուղեկցեցի Ուղիով մինչև դարպասը և դրանից հետո «Սիգարշավող պոնի»: Երևի պարոն Պարկինսն իզուր չի թաքցնում իր իսկական ազգանունը, բայց ես նրան խորհուրդ կտայի ավելի զգույշ լինել:

— Չեմ հասկանում, թե ինչու է իմ ազգանունն այստեղ հետաքրքրում ինչ-որ մեկի,— զայրացած պատասխանեց Ֆրոդոն: — Եվ արդեն բոլորովին չեմ հասկանում, թե ձե՛զ ինչու է հետաքրքրում: հավանաբար պարոն Պանդուխտը անտեղի չէ դարանամտում և թաքուն լսում, բայց ես խորհուրդ կտայի նրան հանելուկներով չխոսել:

— Խոսքի դիմաց խոսք,— ծիծաղեց Պանդուխտը: — Սակայն հանելուկներ չկան. ես սպասում եմ Ֆրոդո Պարկինս անունով մի հոբիթի և իմ ժամանակը սպառվում է: Ես գիտեմ, որ նա դուրս է եկել Հոբիթստանից, թաքցնելով գաղտնիքը, որը շատ կարևոր է իմ և իմ բարեկամների համար... Միայն թե դաշույններդ չհանեք,— զգուշացրեց նա հոբիթներին, երբ Ֆրոդոն տեղից վեր թռավ, իսկ Սամը մարտահրավեր հայացքով չափեց նրան: — Ես ձեր գաղտնիքը ձեզանից վատ չեմ պահի: Իսկ պահել՝ հարկավոր է... — Նա խոնարհվեց դեպի առաջ ու կասկածանքով նայեց նրանց: — Ձգոն եղեք, հետևեցեք ամեն մի ստվերի,— ցածր ու հաստատ ասաց նա: — Սև Հեծյալներն արդեն եղել են Լեռնամոտում: Մեկը, ասում են, երեկ եկել է Մամռոտով, իսկ երեկոյան կողմ և երկրորդը: Մեկը՝ հարավից, մեկը՝ հյուսիսից:

Նրանք լուռ նստել էին: Վերջապես Ֆրոդոն Փինին ու Սամին ասաց.

— Ես պետք է իսկույն գլխի ընկնեի՝ դռնապանն էլ էր հարցաքննում, պանդոկպանն էլ էր թարս նայում՝ երևում է, ինչ-որ բան լսել են: Ախր իզուր չէր, որ մեզ դահլիճ քարշ տվեց: իհարկե, մենք էլ պակաս չենք՝ հարկավոր էր նստել մեր սենյակում, վերջացավ գնաց:

— Պետք էր,— հաստատեց Պանդուխտը: — Ես ձեզ դա կբացատրեի, բայց Լավը խանգարեց՝ հո կռիվ չէի անելու:

— Իսկ դուք կարծում եք նա... — ուզում էր սկսել Ֆրոդոն:

— Ոչ, ես այդպես չեմ կարծում,— հարցը կանխեց Պանդուխտը: — Ուղղակի Լավը չի սիրում, երբ զանազան թափառաշրջիկներ վրդովում են հարգարժան հյուրերին:

Ֆրոդոն շփոթված նայեց նրան:

— Այդ էլ ասենք, տեսքով ես շրջմոլիկից ինչո՞վ եմ լավ,— ասաց Պանդուխտը աչքերը Ֆրոդոյի վրա գցելով և շարունակելով նույն ձևով ժպտալ: — Սակայն հուսով եմ, որ մենք դեռ ինչպես հարկն է կծանոթանանք, այն ժամանակ էլ դու ինձ կբացատրես, թե ինչ կարիք կար առանց երգը վերջացնելու անհետանալ: Այդ արարքը...

— Դա արարք չէր, այլ պատահաբար ստացվեց,— առարկեց նրան Ֆրոդոն:

— Ենթադրենք պատահաբար,— համաձայնեց Պանդուխտը: — Այսինքն, քո կամքից անկախ: Բայց այդ հանկարծադիպության պատճառով դուք բոլորդ սպառնալիքի տակ եք: Ի դեպ, ներիր ինձ «դու»-ի համար, բայց դա վստահության նշան է, մեզ մոտ այլ կերպ չեն ասում:

— Ինչպես սովոր ես, այնպես էլ խոսիր,— ասաց Ֆրոդոն: — Իսկ որ վտանգը գլխներս կախված է, դա նորություն չէ: Հեծյալները վաղուց են հետապնդում ինձ. ընդհակառակը, լավ է, որ մենք Լեռնամոտում իրար կորցրինք:

— Իզուր ես այդպես մտածում,— խստությամբ առարկեց Պանդուխտը: — Նրանք կվերադառնան, կամ ուրիշները կհայտնվեն, չէ՞ որ ուրիշներն էլ կան: Նրանց քանակն ինձ հայտնի է, քանի որ ես գիտեմ, թե նրանք ովքեր են: — Նա լռեց և նրա աչքերը անողորմ փայլեցին: — Այստեղ, լեռնամոտում, ինչպես և ամեն տեղ, իմիջայլոց, քիչ չեն անպետք

մարդիկ: Օրինակ Բիթ Կաղամախը, այսօր տեսա՞ք նրան: Նա վատ համբավ ունի՝ ով ասես նրա մոտ չի հյուրընկալվում... Անպայման նկատել եք՝ սև-սև, հեգնալի քմծիծաղով: Կպավ մի հարավցու և նրա հետ դուրս եկավ՝ քո անսպասելի արարքից հետո: Հարավցիների վրա ես շատ եմ կասկածում, իսկ Բիթ Կաղամախը ում ասես մի կոպեկով կմատնի, նույնիսկ ոչ թե կոպեկի, այլ պարզապես զվարճության համար:

— Նա այդ ո՞ւմ պետք է մատնի, և ի՞նչ գործ ունի այստեղ իմ, ինչպես դու ես ասում, արարքը,— հարցրեց Ֆրոդոն, առաջվա նման իբր չնկատելով Պանդուխտի ակնարկները:

— Նա ձեզ կծախի և լավ գնով,— պատասխանեց Պանդուխտը: — Այսօրվա երեկոյի մասին մատնությունը շատ թանկ արժե: կեղծ անունով հիմ ոչ ոքի չես խաբի. ամեն ինչ պարզից էլ պարզ է: Դեռ լույսը չբացված ձեզ կճանաչեն: Բացատրությունները բավարա՞ր են: Ինձ ուղեկցող վերցրեք, կամ մի վերցրեք, ձեր գործն է: Հոբիթստանի և Մշուշապատ լեռնաշղթայի միջև ընկած հողերը ես չափչփել եմ լայնքով ու երկայնքով: Ես ավելի մեծ եմ, քան ձեզ թվում է, իմ փորձը ճանապարհին ձեզ պետք կգա: Դուրս գալ Ուղի ձեզ չի կարելի, Հեծյալները օր ու գիշեր կիսկեն այն: Թավուտները՝ նույնպես չի կարելի: Լեռնամոտից դուք գուցեև դուրս գաք, կանցնեք ցերեկով մի ժամ, երկու, իսկ հետ ի՞նչ: Կհասնեն ձեր հետևից ճանապարհից հեռու, որտեղ ոչ ոք չկա, որ գոնե օգնություն կանչեք: Դուք գիտե՞ք ինչ կլինի ձեզ հետ, եթե նրանք հասնեն ձեզ: Զգուշացեք...

Պանդուխտի ձայնը փոխվեց: Հոբիթները զարմանքով տեսան, որ նրա խաղաղ դեմքը մթնեց, իսկ ձեռքերով նա պինդ սեղմում էր բազկաթոռի արմնակալները: Սենյակում լռություն էր ու կիսախավար, բուխարիկը հազիվ էր տաքացնում: Պանդուխտը նայում էր չտեսնող աչքերով, հիշելով ինչ-որ վաղեմի եղելություն, ասես ականջ էր դնում գիշերվան:

— Ուրեմն, ահա թե ինչ,— ասաց նա, ձեռքը ճակատին քսելով: — Ես ձեզ հետապնդողների մասին ավելի շատ գիտեմ, քան դուք: Դուք նրանցից վախենում եք, և ճիշտ եք անում, միայն ամենասարսափելին չեք հասկանում: Հարկավոր է, որ վաղը ձեր հետքն անգամ չլինի այստեղ: Պանդուխտը կտանի ձեզ անհայտ արահետներով՝ եթե նա պիտանի է ձեզ որպես ուղեկցող:

Նորից լռություն իջավ: Վախն ու կասկածը պատել էր Ֆրոդոյին, և նա ուշացնում էր պատասխանը: Սամը խոժոռվեց, նայեց տիրոջը, վեր թռավ ու կարկուտի պես թափեց.

— Ձեր թույլտվությամբ, տեր իմ, ես կասեմ. ոչ, պիտանի չէ... Պանդուխտն անընդհատ վախեցնում է՝ զգուշացե՛ք, էստեղ ես նրա հետ համաձայն եմ: Միայն թե սկզբից հենց իրենից չզգուշանա՞նք: Չէ՞ որ նա Խլուտից է, իսկ էնտեղ, լսել ենք, բարի մարդիկ չեն ապրում: Մեր մասին մի թեթև իմացել է, էդ պարզ է: Դրա՞ համար պիտի նրան ուղեկցող վերցնենք: մեկ էլ տեսար տարավ մեզ, ոնց ինքն է ասում, էնտեղ, որտեղ իսկի օգնություն էլ չես կանչի: Ո՛չ, տեր իմ, դուք գիտեք, իհարկե, իսկ իմ սրտովը չի էդ մարդը:

Փինը ուզում էր աթոռին նստած շարժում անել, բայց լռեց: Պանդուխտը Սամին չպատասխանելով, հարցական նայեց Ֆրոդոյին: Վերջինս հայացքը փախցրեց:

— Ո՛չ, Սամ, դու, երևի, ճիշտ չես,— դանդաղ ասաց նա: — Իսկ դու,— նա դիմեց Պանդուխտին,— բոլորովին այնպիսին չես, ինչպիսին երևում ես արտաքնապես, իսկ ինչո՞ւ ես ձևանում... Սկսեցիր խոսել, թվաց լեռնամոտցի ես, իսկ հիմա ձայնդ էլ է ուրիշ: Սամն իրավացի է՝ ինչպես ես մեզ խորհուրդ տալիս զգուշանալ ամեն մի ստվերից, իսկ ինքդ սպասում ես, որ մենք իսկույն ու անպայման վստահենք քեզ: Իրականում ո՞վ ես դու: Դու իմ մասին, իմ գործերի մասին ի՞նչ գիտես: Ինչպե՞ս իմացար:

— Տեսնում եմ, դուք առանց իմ խորհուրդների էլ զգույշ եք,— քմծիծաղեց Պանդուխտը: — Բայց զգուշավորությունը մի բան է, անվճռականությունը՝ մի ուրիշ բան: Առանց ինձ դուք մինչև Ազատք չեք հասնի, այնպես որ ուզած-չուզած պետք է ինձ հավատաք: Իսկ ես ձեզանից ոչ այնքան վստահություն եմ սպասում, որքան վճռականություն: Քո հարցերին, ճիշտ է, ոչ բոլորին, գործի օգտի համար պատրաստ եմ պատասխանել: Միայն թե դրանից ի՞նչ օգուտ, եթե դուք չեք վստահում: Ես կպատասխանեմ, դուք էլի կհարցնեք: Այսպես մինչև լույս կարելի է խոսել: Ահա թե ինչ, ի դեպ...

Դուռը ծեծեցին և շեմին հայտնվեց պարոն Նարկիսը մոմերով, իսկ նրա թիկունքում երևաց Նոբը՝ եռացրած ջրով դույլերով: Պանդուխտը աննկատելի վեր կացավ և գնաց մութ անկյունը:

— Եկա ձեզ բարի գիշեր մաղթեմ,— ասաց պանդոկպանը, մոմակալները սեղանին դնելով: — Նոբ, ջուրը ոչ թե այստեղ, այլ ննջարանները տար,— և դուռը նրա հետևից փակեց: — Ահա թե ինչ կուզեի ասել,— շարունակեց պանդոկպանը շփոթված ու անվճռական: — Եթե իմ պատճառով ինչ-որ տհաճություն է եղել, մեծահոգաբար ներեք: Ինքներդ էլ գիտեք, ախր, մեկը մյուսի վրա է թափվում, իսկ ես գործի մեջ խեղդված մարդ եմ: Գիտեք ինչ կա, ինձ կարգադրված էր Հոբիթստանից Ֆրոդո Պարկինս անունով մի հոբիթի սպասել:

— Դե, իսկ ես ի՞նչ կապ ունեմ դրա հետ,— հարցրեց Ֆրոդոն:

— Դե ինչ ասեմ,— գլխով արեց պանդոկպանը: — Դուք, ուրեմն, միայն տեղյակ եղեք: Ինձ ասված էր, որ նա կգա Զառիթափցի անվան տակ և նույնիսկ տրված են, կներեք, նշանները:

— Այո՞, և ի՞նչ նշաններ են,— հապճեպ ընդհատեց նրան Ֆրոդոն:

— Սովորական հոբիթից բոյով, ամրակազմ, կարմրաթուշ,— հաղթանակած, անգիր շարեց Լավրը:

Փինը «հըմ» արեց, Սամը հոնքերը կիտեց:

— «Չնայած, Լավրիկ, դա քեզ համար նշաններ չեն,— ասաց ինձ նա այդ ժամանակ: — Հոբիթները իրար նման ժողովուրդ են, բոլորն ամրակազմ են, բոլորը կարմրաթուշ: Բայց նկատի ունեցիր, այնուամենայնիվ, մյուսներից բարձրահասակ, շիկավուն և փոսիկավոր կզակով: Հայացքը մտածկոտ է, աչքերը փայլուն, նայում են ուղիղ:» Ներող կլինեք, բայց ես նրա խոսքերի համար պատասխանատու չեմ, եթե որևէ բան այնպես չէ:

— Նրա խոսքերի համա՞ր, իսկ ո՞վ է նա,— հուզված հարցրեց Ֆրոդոն:

— Ախ, աստված իմ, մոռացել եմ ասել, դե իմ բարեկամը, Գանդալֆը: Առհասարակ նա հրաշագործ է, բայց մենք միշտ բարեկամություն ենք արել: Իսկ հիմա, ա՜խ, իսկի չգիտեմ էլ, թե ինչ սպասեմ. կամ իմ ամբողջ գարեջուրը կթթվեցնի, կամ ինձ քոթուկ կդարձնի, նրա համար դա վայրկյանի գործ է: Պատիժ տալիս հո ճապուկ է: Գուցեև հետո զղջա, բայց կոտրածը չես կպցնի:

— Իսկ դուք ի՞նչ վատ բան եք արել,— անհամբեր հարցրեց Ֆրոդոն:

— Հա, ինչի՞ մասին էի,— մտածմունքի մեջ ընկավ պանդոկպանը, մատները ճրթացնելով: — Ախ, դե այո, ծերուկ Գանդալֆը: Երեք ամիս առաջ նա կանգ առավ իմ պանդոկում: Եվ ահա մի անգամ գիշերը ներս է ընկնում իմ սենյակը, մոռանալով նույնիսկ դուռը թակել, և ասում է. «Առավոտյան, Լավրիկ, մենք արդեն չենք տեսնվի, մինչև լուսանալը գնալու եմ: Մի հանձնարարություն ունեմ քեզ»: — «Լսում եմ,— ասում եմ,— թեկուզ՝ տասը»: Իսկ նա ինձ. «Դու կարո՞ղ ես հարմար առիթը ներկայանալու դեպքում նամակ ուղարկել Հոբիթստան: Կարո՞ղ ես փոխանցել հուսալի մեկի հետ»: — «Դե, մեկն ու մեկին կգտնեմ,— պատասխանում եմ,— վաղը կամ մյուս օրը»: — «Մյուս օրվան,— ասում է,— մի հետաձգիր»: Եվ նամակը տվեց ինձ: Գրված է լույսի պես պարզ,— ասաց Լավր Նարկիսը:

Նա գրպանից հանեց նամակը, շատ լուրջ տեսք ընդունեց (քանի որ շատ էր պարծենում իր գրագիտությամբ) և վանկերով կարդաց.

«Հոբիթստան, Զառիթափի Պարկուտ, Ֆրոդո Պարկինսին»:

— Նամակ, ի՜նձ Գանդալֆի՜ց,— բացականչեց Ֆրոդոն:

— Ուրեմն ձեր իսկական ազգանունը Պարկի՞նս է,— հարցրեց պանդոկպանը:

— Ինքներդ գիտեք,— ասաց Ֆրոդոն: — Այդ նամակը տվեք ինձ և բացատրեք խնդրեմ, ինչո՞ւ ժամանակին չեք ուղարկել: Դրա համար էլ երևի եկել եք... Սակայն շատ դանդաղ եք տեղից շարժվել...

— Դուք ճիշտ եք, տեր իմ,— մեղավոր տեսքով խոստովանեց խեղճ Լավրը: — Ու նորից ենք ներողություն խնդրում: Թե Գանդալֆն ինձ ի՞նչ կանի՝ ուղղակի սարսափելի է մտածել: Մենակ թե, ես ախր, առանց հետին մտքերի. դե մի լավ տեղ պահեցի, մինչև հարմար առիթ լինի, իսկ առիթ չկա ու չկա՝ դե օրվա հոգսերի մեջ գլխիցս թռել է: Դրա փոխարեն հիմա արդեն կաշվիցս դուրս կգամ՝ ես եմ սխալմունք թույլ տվել, ես էլ պիտի տեղը հանեմ ինչով կարող եմ, միայն ասեք, իսկույն կանեմ: Դե և բացի նամակից ահա, ինչ պայման ենք ունեցել ես ու Գանդալֆը: Նա ինձ ասաց. «Լավր, էստեղ քեզ մոտ կանցնի իմ բարեկամներից մեկը,

Հոբիթստանից, գուցեև ոչ մենակ, անունը կլինի Զառիթափցի: Ավելորդ հարցեր չտաս նրան: Փորձանքի մեջ կընկնի, կօգնես, ոչ ուժ կխնայես, ոչ փող, ինքդ էլ գիտես, պարտքի տակ չեմ մնա»: Ուրեմն, ահա և դուք, իսկ փորձանքն էլ կողքներիդ ֆռֆռում է:

— Ինչի՞ մասին եք խոսում,— հարցրեց Ֆրոդոն:

— Դե այդ Սևերի մասին,— բացատրեց պանդոկպանը, ձայնը ցածրացնելով: — Ախր նրանք Պարկինսին էին հարցնում, և հոբիթ լինեմ, թե բարի նպատակով էին հարցնում: Երկուշաբթի ժամանեցին՝ շները վնգստում էին ու ոռնում, սագերը ղռվռում էին ու կռնչում: Մի սարսափելի բան, ազնիվ խոսք: Երկուսը դռնից ներս խցկվեցին ու ֆսֆսացնում են Պարկինս պահանջում... Նոճի մազերը բիզ-բիզ էին կանգնել: Դե դրանց մի կերպ ճամփու դրի. իբր շարունակեք ճամփան, էնտեղ էլ կգտնեք ձեր Պարկինսին էլ, ու էլ ինչ կուզեք: Իսկ նրանք գնալը գնացին, բայց լսվում էր՝ մինչև ոլորանը ձեզ էին հարցնում: Իսկ էդ, ինչ էր անունը, էդ հետքագետներից, դե էդ Պանդուխտը՝ նա էլ էր ամբողջ ժամանակ ձեզանից հարցնում և ուղղակի իրեն կոտորում էր այստեղ գալու համար՝ չէր համբերում, որ ընթրեիք ու հանգստանայիք:

— Ճիշտ ես ասում, ինձ կոտորում էի,— հանկարծ խոսեց Պանդուխտը մթությունից դուրս գալով: — Եվ իզուր դու, Լավր, ինձ չէիր թողնում՝ քո հոգսերն ավելի քիչ կլինեին...

— Իսկ դու, ուրեմն, արդեն էստեղ ես,— գնդակի պես վեր թռավ պանդոկպանը,— խցկվել ես, էլի... Հիմա՞ ինչ ես ուզում, շնորհ արա, ասա...

— Հիմա իմ գիտությամբ է այստեղ,— հայտարարեց Ֆրոդոն: — Նա եկել է իր օգնությունն առաջարկելու:

— Դե, ինչպես ասում են, դուք գիտեք,— ուսերը թեքվեց պարոն Նարկիսը, կասկածանքով Պանդուխտի չափելով: — Միայն թե ես ձեր տեղը լինեի, Խլուտցիների հետ, գիտեք, գործ չէի բռնի:

— Իսկ ո՞ւմ հետ կհրամայես նրան գործ բռնել,— ատամների արանքից շպրտեց Պանդուխտը: — Ճարպակալած միկիտանի հե՞տ, որը իր անունն է հազիվ հիշում, չնայած ամբողջ որը ձայն են տալիս ու հիշեցնում: Հո չեն կարող հավիտյանս փակվել քո «Պոնիում», իսկ տուն վերադառնալ չեն կարող: Նրանց հարկավոր է ձիերով կամ ոտքով գնալ առաջ, շա՛տ հեռու: Կամ՝ գուցե ինքդ նրանց հետ կգնաս, կպաշտպանես Սև Հեծյալներից...

— Էդ ե՞ս... Որ ես Լեռնամոտից դո՞ւրս գամ... Որ միլիոն տան... — մահվան չափ վախեցավ գիրուկը, կարծես իսկապես իրեն առաջարկեցին: — Դե, իսկ եթե պարոն Զառիթափցի, իսկապես էլ մնաք ինձ մոտ: Ինչո՞ւ շտապեք: Առհասարակ սա ի՞նչ իրարանցում է այդ սև հրեշների պատճառով: Դրանք որտեղի՞ց հայտնվեցին:

— Նրանք Մորդորից են, Լավր, հասկանո՞ւմ ես, Մորդորից,— շշնջաց Պանդուխտը:

— Դրա՞նց տես,— վախից սփրթնեց Լավր Նարկիսը: Երևում է, Մորդոր բառը խորն էր մեխված նրա հիշողության մեջ: — Վաղուց մեզ մոտ Լեռնամոտում ավելի վատ բան չէինք լսել:

— Դեռ կլսեք,— ասաց Ֆրոդոն:— Իսկ օգնել ինձ, այնուամենայնիվ համաձա՞յն եք:

— Ախր էդ ոնց չեմ օգնի, կօգնեմ,— արագ շշնջալով վստահեցրեց պարոն Նարկիսը: — Չնայած չգիտեմ, թե ինչ օգուտ ինձանից ու ինձ նմաններից, այդպիսի... — նա կարկամեց:

— Այդ Արևելքի Խավարի դեմ,— վճռականորեն ասաց Պանդուխտը,— օգուտը քիչ է, Լավր, ինչ էլ որ կա, կա: Օրինակ, դու կարող ես առանց վախենալու գիշերը քեզ մոտ թողնել պարոն Զառիթափցուն և նրա ազգանունը չհիշատակել:

— Իհարկե՛, իհարկե՛,— տեսանելի վախով, բայց և վճռականությամբ գլխով էր անում պանդոկպանը: — Բայց այդ Սևերը, ախր նրանք հո գիտեն, որ ես ձեզ օգնական չեմ: Ա՛խ, ինչ ափսոս էր, որ պարոն Պարկինսը այդպես իրեն ջրի երես հանեց: Բիլբոյի մասին էստեղ վաղուց են լսել ու կշտացած են: Նոբը որ Նոբ է, էլի տեսա՞ք, հասկացավ, բայց չէ՞ որ մենք ավելի շուտ գլխի ընկնողներ էլ ունենք:

— Դե ինչ, հարկավոր է հուսալ, որ Հեծյալներն առայժմ չեն համարձակվի,— ասաց Ֆրոդոն:

— Իհարկե՛, իհարկե՛, հարկավոր է հուսալ,— շտապեց հաստատել Լավրը: — Մանավանդ որ եթե հազար անգամ էլ ուրվական դառնան՝ մեկ է, «Պոնի» չեն մտնի: Մինչև առավոտ հանգիստ քնեք: Նոբը ձեր մասին մի ավելորդ բառ անգամ չի ասի, իսկ մենք էլ ամբողջ տնով աչքներս չորս կանենք, որ հազարումի ստահակներ այստեղ թրև չգան:

— Որպեսզի լուսադեմին մեզ արթնացնեն,— պատվիրեց Ֆրոդոն: — Հարկավոր է առավոտ կանուխ դուրս գալ: Վաղը, բարի եղեք, ժամը վեցն անց կեսին:

— Եղավ: Պատվերը՝ պատվեր է,— ուրախացավ պանդոկպանը: — Բարի գիշեր, պարոն Պարկինս, այսինքն՝ ներեցեք, Զառիթափցի... Ա՛, այո, միայն թե ո՞ւր է պարոն Բրենդիզայքը:

— Չգիտեմ,— վայրկենապես անհանգստանալով արձագանքեց Ֆրոդոն: Մերիի մասին նրանք ինչ-որ մոռացել էին, իսկ արդեն շատ ուշ էր: — Զբոսնում է երևի, ասաց, որ գնում է մաքուր օդ շնչելու:

— Հա, ձեր հետևից հարյուր աչք է պետք,— հարյուր աչք է պետք,— հառաչելով նկատեց պարոն Նարկիսը: — Մի գնամ կարգադրեմ բոլոր դռները փակեն, երբ, իհարկե, ձեր բարեկամը վերադառնա: Թող Նոբը հսկի:

Վերջապես պանդոկպանը գնաց, նորից մի թռուցիկ հայացք գցելով Պանդուխտի վրա ու գլուխն օրորելով: Միջանցքում նրա քայլերը հեռացան ու մարեցին:

— Դեհ ինչ, նամակը կարդալո՞ւ ես,— հարցրեց Պանդուխտը:

Ֆրոդոն ուշադիր զննեց կնիքը՝ այո, Գանդալֆի կնիքն էր, անվիճելի է, հետո պոկեց այն: Նամակը գրված էր արագ ու պարզ ձեռագրով:

«Սիգարշավող պոնի», Լեռնամոտ: Գիշերահավասար: Հոբիթստանի թվարկության 1414-րդ տարի»:

Իմ բարեկամ Ֆրոդո...

Ինձ վատ լուրեր են հասել: Շտապում եմ, ժամանակ բոլորովին չկա, իսկ դու Պարկուտից արագ դուրս արի հուլիսի վերջին, ամենաուշը, որպեսզի Հոբիթստանում հետքդ անգամ չլինի... Հենց կարողանամ՝ կվերադառնամ, կուշանամ՝ հետևներիցդ կհասնեմ: Եթե անցնեք Լեռնամոտով, ինձ համար տեղեկություն թողեք: Պանդոկպանին (Նարկիսին) կարելի է վստահել: Հուսով եմ, ճանապարհին կհանդիպեք իմ ընկերոջը. բարձրահասակ, թխահեր, կոչում են Պանդուխտ: Նա ամեն ինչ գիտե և կօգնի: Գնացեք Ազատք՝ այնտեղ արդեն անպայման կտեսնվենք, իսկ եթե չհասցնեմ, Էլրոնդը ձեր մասին հոգ կտանի և կասի ինչ անել հետագայում: Գանդալֆ:

Հա, իդեպ, չհագնես այն, ոչ մի դեպքում չհագնես... Գնացեք ցերեկը, գիշերը թաքնվեք...

Դարձյալ ի դեպ, երբ հանդիպեք Պանդուխտին, զգույշ եղեք՝ ո՞վ գիտե, էլ ով կարող է այդպես կոչվել: Նրա իսկական անունը Արագորն է:

Ուրիշ է փայլը հնագույն ոսկու,
Հին սրի շեղբին դեռ ժանգ չի պատել,
Մարտադաշտ կելնի հետքագետ արքան,
Հասուն լինելը ծեր լինել չէ դեռ:
Կանցնե՞ն, կգնան չարիք ու փորձանք,
Եվ սուրը նորից կշողա, կայրի,
Արքային արքա կկոչեն դարձյալ՝
Ի պատիվ անցած մի այլ արքայի:

Դարձյալ, հուսով եմ, Լավրը նամակը ուղարկելը չի ուշացնի: Նա կարգին մարդ է, բայց հիշողությունը ծակ մաղի նման է: Որ մոռանա՝ մեծ կտորն ականջն եմ թողնելու:

Հաջողություն:

Ֆրոդոն նամակը կարդաց մտքում, հետո տվեց Փինին և գլխով արեց Սամի կողմը՝ իբր կարդա և տուր նրան:

— Այո՜... այ թե գործ է արել մեր աղավնյակ Նարկիսը... — ասաց նա: — Տես հա՛, որ Գանդալֆն իսկապես նրա մեծ կտորն ականջը չթողնի ու վերջ: Էհ, նամակը ժամանակին ստացած լինեի, հիմա վաղուց արդեն Ազատքում կլինեինք: Բայց ինչ է տեղի ունեցել Գանդալֆի հետ: Նա այնպես է գրում, ասես պատրաստվելիս է եղել կրակի մեջ թռչել:

— Իսկ նա արդեն երկար տարիներ է կրակի միջով քայլում,— ասաց Պանդուխտը: — Ուղիղ և առանց տատանվելու:

Ֆրոդոն շրջվեց ու մտածկոտ նայեց նրան՝ հիշելով Գանդալֆի «դարձյալը, ի դեպը»:

— Ինչու ինձ չասացիր, որ նրա բարեկամն ես,— հարցրեց նա: — Ու հարցը կփակվեր:

— Կարծո՞ւմ ես: Ենթադրենք ասել էի, բայց, միևնույնն է, իմ խոսքին կհավատայի՞ք,— առարկեց Պանդուխտը: — Նամակի մասին ես չգիտեի: Եվ հետո, ինչու պետք է իմ մասին ասեմ ձեզ. դեռ սկզբից ձեր հարցերն է պետք լուծել: Թշնամին շարունակ իմ դեմ թակարդներ է լարում: Ես պարզեցի՝ և պատրաստ էի ձեզ որոշ բաներ բացատրել, սակայն հույս ունեի,— ասաց նա տարօրինակ ժպիտով,— որ դուք ինձ կվստահեք և առանց հատուկ բացատրությունների: Երբեմն ուղղակի հոգնում ես թշնամանքից ու անվստահությունից: Ասենք, իմ տեսքն էլ բարյացակամություն չի տրամադրում:

— Դա այդպես է,— թեթևացած ծիծաղեց Փինը, նամակի ընթեցումն ավարտելով: — Բայց մեզ մոտ, Հոբիթստանում ասում են՝ փետուրն արծվի է, ներսը՝ ագռավի: Իսկ դու ի՞նչ տեսք պիտի ունենաս, եթե մեկ-երկու շաբաթ դարան մտած ես եղել:

— Դարան մտնելը դատարկ բան է: Երկար տարիներ պետք է Խլուտով մեկ թափառես Հետքագետի նման դառնալու համար,— ասաց Պանդուխտը: — Դուք այդպիսի փորձություններ չեք տեսել... և լավ է, որ չեք տեսել:

Փինը հավատաց, բայց Սամը դեռ տարակուսանքով զննում էր Պանդուխտին:

— Իսկ մենք ո՞նց իմանայինք, թե դու էն Պանդուխտն ես, որի մասին գրում է Գանդալֆը,— հարցրեց նա կասկածանքով: — Չէ որ դու Գանդալֆի անունն էլ չէիր տալու, եթե նամակը չլիներ: Կարող է պատահել, դու առհասարակ փոխված ես՝ ծեծել ես իսկականին, որ մեզ չգիտես թե ուր տանես: Սրան ի՞նչ կասես:

— Կասեմ, որ փորձված ճնճղուկին մղեղով չես խաբի,— պատասխանեց Պանդուխտը: — Եվ էլի կասեմ քեզ, Սամ Համեստուկ, որ եթե ես սպանեի իսկական Պանդուխտին, ապա քեզ կվերացնեի առանց տեղիցս վեր կենալու: Եթե մատանուն տիրելու միտք ունենայի, այն արդեն իմը կլիներ...

Նա վեր կացավ և ասես աճեց: Նրա աչքերում փայլեց դաժան ու տիրական կրակը: Նա թիկնոցը արձակեց և ձեռքը դրեց մինչ այդ չնկատված թրի դաստապանին: Հոբիթները վախենում էին շարժում անգամ անել: Սամը բերանը բաց նայում էր Պանդուխտին:

— Մի՛ վախեցեք, ես նույն ինքը Պանդուխտն եմ,— ասաց նա անսպասելի ժպիտով: Ես Արագորնն եմ, Արաթհորնի որդին և ձեր կյանքի գրավականն է իմ կյանքը կամ մահը:

Լռությունը երկար տևեց: Վերջապես Ֆրոդոն խոսեց:

— Ես այդպես էլ գիտեի, որ դու բարեկամ ես, դեռ նամակից առաջ,— ասաց նա: — Դե, գուցե հաստատ չգիտեի, բայց այնուամենայնիվ հույս ունեի: Այսօր երեկոյան վախեցրիր ինձ և ո՛չ մեկ անգամ, բայց դա այն սահմռկեցնող վախը չէ: Եթե նրանցից լինեիր, դուրսը քահանա, ներսը սատանա կլինեիր:

— Դե, այո,— ծիծաղեց Պանդուխտը: — Իսկ ես հայտնի չէ, թե ներսից ինչ եմ, բայց դրսից քահանայություն չսպասեք: Ի դեպ, «Ուրիշ է փայլը հնագույն ոսկու»:

— Ուրեմն բանաստեղծությունը ձե՞ր մասին է,— հարցրեց Ֆրոդոն: — Ախր ես չէի կարողանում հասկանալ, թե ինչ կապ կա... Իսկ որտեղի՞ց գիտես, որ Գանդալֆը հիշատակում է քո մասին, չէ՞ որ նամակը չես կարդացել:

— Դե ես չգիտեմ էլ,— պատասխանեց նա: — Միայն թե ես Արագորնն եմ, որ կամ, ուրեմն բանաստեղծությունն էլ իմ մասին է:

Պանդուխտը թուրը հանեց պատյանից, և նրանք տեսան, որ համարյա կոթի մոտ շեղբը կոտրված է:

— Սրանից օգուտ չկա, ճի՞շտ է, Սամ,— ժպտալով ասաց նա: — բայց մոտենում է ժամանակը, երբ այն նորից կկռեն:

Սամը լռեց:

— Դե ինչ,— ասաց Պանդուխտը,— ուրեմն, Սամի թույլտվությամբ հարցը որոշված է: Պանդուխտը ձեր ուղեկիցն է: Վաղը մեզ շատ դժվար ճանապարհ է սպասվում: Եթե նույնիսկ մենք առանց խոչընդոտի դուրս գանք Լեռնամոտից, միևնույնն է, դժվար թե առհասարակ աննկատ դուրս գանք: Գոնե պետք է աշխատենք, որ մեզ աչքից կորցնեն. այստեղից դուրս գալու մեկ-երկու անհայտ արահետ կա: Հենց հետապնդողներին մոլորեցնենք՝ կգնանք ուղիղ դեպի Զավերտ:

— Դեպի Զավե՞րտ,— անվստահությամբ հարցրեց Սամը: — Էդ Զավերտս ո՞րն է:

— Այդ անունով մի սար է, Ուղուց հյուսիս, Ազատքի ճանապարհի կեսին: Սարի գլխից ամեն ինչ երևում է, ա՛յ թե շուրջներս կնայենք: Եթե Գանդալֆը գա մեր հետքերով, նա էլ այնտեղ կգա: Իսկ Զավերտից հետո ավելի դժվար է, ավելի վտանգավոր:

— Վերջին անգամ ե՞րբ ես տեսել Գանդալֆին,— հարցրեց Ֆրոդոն: — Դու գիտե՞ս որտեղ է, ինչպես է:

— Ոչ, չգիտեմ,— մռայլ պատասխանեց Պանդուխտը: — Գարնանը մենք միասին եկանք Արևմուտքից: Երկար տարիներ ես պահպանում էի Հոբիթստանի սահմանները, քանի նա ուրիշ գործերով էր զբաղված... Ձեր սահմանագծերը համարյա երբեք առանց պահակի չէր թողնում: Վերջին անգամ նրան տեսել եմ մայիսի սկզբին. նա ասաց, որ ձեր գործը պարզվել է, և որ դուք սեպտեմբերի վերջերին կշարժվեք դեպի Ազատք: Ես կարծում էի, թե նա ձեզ հետ է և մեկնեցի իմ գործերով, բայց իզուր, պետք եկած կլինեի: Այն ժամանակից ի վեր, ինչ մենք ծանոթ ենք, առաջին անգամ եմ տագնապ ապրում: Նրա անձամբ այստեղ չլինելը շատ պատճառներ կարող է ունենալ, բայց ինչ-որ լուր պետք է անպայման ուղարկած լիներ: Իսկ տեղեկատվություն չկար: Վերջապես ինձ լուրեր հասան, որ Գանդալֆը կորել է, իսկ Հոբիթստանում վարգում են Սև Հեծյալները: Դա ինձ Գարալդի էլֆերը պատմեցին: Նրանցից էլ իմացա, որ դուք Բրենդիդուիմքի ճանապարհին եք և որոշեցի սպասել ձեզ Արևմտյան Ուղու մոտ:

— Ուրեմն, քո կարծիքով Սև Հեծյալնե՞րն են բռնել Գանդալֆին,— հարցրեց Ֆրոդոն:

— Եթե ոչ նրանք, ապա թերևս Թշնամին ինքը, թե չէ նրան բռնելը ուրիշ ոչ մեկի ուժի բանը չէ,— ասաց Պանդուխտը: — Բայց մի՛ հուսահատվիր, գլուխդ վեր... Դուք ձեր Հոբիթստանում կարգին չգիտեք, թե Գանդալֆն ով է, ինչացու է, դուք միայն նրա կատակներին և ուրախ խաղերին եք տեղյակ: Ճիշտ է, այս անգամ նրա խնդիրը սովորականից առավել վտանգավոր է:

— Օ՛հ, ներեցե՛ք,— հանկարծ հորանջեց Փինը,— բայց ես սարսափելի հոգնել եմ: Տագնապներն ու հոգսերը թող մնան վաղը, իսկ հիմա պառկեմ, թե չէ մեկ էլ տեսար նստած քնեցի: Ո՞ւր է այդ դդում Մերին: Եթե ստիպված լինենք գիշերով նրան փնտրել՝ ես հետո դրա գլուխը կթռցնեմ:

Նրա այդ խոսքերի վրա մուտքի դուռը շրխկաց, միջանցքում տարածվեց արագ քայլերի թխկթխկոցը և սենյակ ներխուժեց Մերին, իսկ նրա հետևից՝ իրեն կորցրած Նոբը: Մերին դժվարությամբ շունչ առավ ու գնդացրի նման շարեց.

— Ես տեսա նրանց, Ֆրոդո, տեսա, նրանք էնտեղ են՝ Սև Հեծյալները:

— Սև Հեծյալնե՞րը,— Ֆրոդոն վեր թռավ: — Որտե՞ղ:

— Էստեղ, հենց էստեղ, գյուղամիջում: Ես մոտ մի ժամ նստեցի կրակի մոտ, դուք չեկաք ու գնացի ման գալու: Կանգնել էի լապտերի մոտ ու նայում էի աստղերին: Հանկարծ վրաս դող եկավ. ինչ-որ զզվելի բան զգացի, սև ստվերը ծակեց խավարը լապտերներից քիչ հեռու: Երևաց ու սողաց թանձր խավարի մեջ ինչ-որ տեղ: Ձի չկար:

— Ո՞ւր սողաց,— կտրուկ հարցրեց Պանդուխտը:

Մերին օտար մարդ նկատելով, սարսռաց:

— Խոսիր,— ասաց Ֆրոդոն,— նա Գանդալֆի բարեկամն է, հետո կբացատրեմ:

— կարծես թե Ուղու կողմը,— շարունակեց Մերին: — Ես էլ որոշեցի հետևել, բայց չգիտեի ինչին կամ ում, թեքվեցի մյուս տների արանքներով գնացող նեղլիկ փողոցն ու հասա վերջին տանը:

— Կարգին քա՛ջն ես,— նկատեց Պանդուխտը, ոչ առանց զարմանքի նայելով Մերիին: — Սակայն դա մեծ անխելքություն է:

— Ոչ քաջություն, ոչ էլ խենթություն ինձանից չէր պահանջվում,— առարկեց Մերին: — Ես գնում էի ասես ինձնից անկախ. ինչ-որ բան ձգում էր ու վերջ: Թե ուր՝ չգտեմ: Բայց հանկարծ կարծես ուշքի եկա՝ և համարյա կողքիս երկու ձայն լսեցի: մեկը ֆսֆսում էր, իսկ նրան ի պատասխան անհասկանալի մրթմրթոց էր հնչում: Ես ոչինչ չհասկացա, մոտենալ չէի համարձակվում, իսկ փախչել՝ ոտքերս չէին ենթարկվում: Կանգնել, դողում եմ, մի կերպ շուռ եկա մեջքով նրանց կողմը, արդեն ուզում էի ծլկել, հանկարծ թիկունքից վրա հասավ երկյուղը, և ես... երևի ընկել եմ:

— Տեր իմ, ես նրան գտա,— բացատրեց Նոբը: — Պարոն Նարկիսն ինձ ուղարկեց լապտերով, որ նրան փնտրեմ: Դե ես սկզբում գնացի Արևմտյան Դարպասի մոտերքը, հետո Հարավայինի՝ ինչ տեսնեմ՝ Բիթ Կաղամախի տան ցանկապատի մոտ ինչ-որ բան էն չի: Կարծես թե երկու հոգի կռացել են երրորդի վրա, ուզում են քարշ տալով տանել: Ես գոռացի՝ «Պահա՛կ» ու՝ էդտեղ: Վազելով եկա՝ մարդ չկա, մենակ պարոն Բրեդիզայքն է պառկած, կարծես ճանապարհի վրա քնել է: Ես նրան ցնցում եմ, հա ցնցում, վերջը զոռով ուշքը տեղն եկավ ու հազիվ փսփսում է. «Ես,— ասում է,— խեղդվել եմ ու պառկած եմ ջրի հատակին»,— ու չի էլ շարժվում: Ես՝ դեսուդեն, ի՞նչ անեմ: Իսկ նա մեկ էլ հանկարծ նետի պես վեր թռավ դեպի պոնին, արի ու հասիր հետևից:

— Երևի հենց այդպես էլ եղել է ամեն ինչ,— ասաց Մերին: — Ճիշտ է, չեմ հիշում, թե ինչեր եմ դուրս տվել, թեպետ այդ քունն ավելի սարսափելի էր, քան մահը, ճիշտն ասած, քունն էլ չեմ հիշում, այդքանից էլ շնորհակալ եմ: Ասես ինձ ինչ-որ բանի խորքը քաշեցին:

— Քիչ է մնացած եղել, որ քաշեն,— ճշտեց Պանդուխտը,— անդրշիրիմյան խավար: Ըստ երևույթին, Հեծյալներն իրենց ձիերը թողել են ինչ-որ տեղ և Հարավային Դարպասով հասել Լեռնամոտ: Կաղամախից էլ հենց իմացել են վերջին նորությունները, շիլաչք հարավցին էլ անկասկած լրտես է: Զվարճալի գիշեր է լինելու:

— Իսկ ի՞նչ է,— հարցրեց Մերին,— կհարձակվեն պանդոկի վրա՞:

— Հազիվ թե,— ասաց Պանդուխտը,— դեռ բոլորն իրար գլխի չեն հավաքվել, և հետո էլ, նրանք այդպես չեն գործում: Նրանց ամայություն ու խավար է հարկավոր, իսկ մեծ տուն, իրարանցում, կրակներ, շատ ժողովուրդ՝ ոչ, դա նրանց ինչի՞ն է պետք, միևնույնն է, մեր ճանապարհը երկար է, ժամանակ կա: Իրենք չեն հարձակվի, բայց կամակատարներ այստեղ շատ ունեն՝ ոմանք սիրով կօգնեն, մյուսները՝ վախից:

— Հենց ա՛յ նրանք՝ Կաղամախը, հարավցիների հնգյակը, նաև դռնապան Գորրին: Հեծյալները երկուշաբթի օրը նրա հետ խոսեցին իմ աչքի առաջ, երբ հեռացան, նա քաթանի գույն էր ստացել, ու ծնկներն էլ դողում էին:

— Նշանակում է շուրջբոլորը թշնամիներ են,— ասաց Ֆրոդոն: — Ի՞նչ անենք:

— Քնել այստեղ, ննջարանները չգնալ... Նրանք հավանորեն արդեն պարզել են, թե որտեղ են մեր ննջարանները, հյուսիսային կլոր պատուհանները համարյա գետնամած են: Կմնանք այստեղ, պատուհանները կրկնափեղկերով կփակենք, դուռը բոլոր կողպեքներով ու սողնակներով կկողպենք: Հիմա ես ու Նոբը կգնանք ձեր եղած-չեղածը կբերենք:

— Նա հեռացավ, և Ֆրոդոն արագորեն Մերիին պատմեց այն ամենը, ինչ եղել էր այդ երեկո: Երբ Պանդուխտն ու Նոբը վերադարձան, Մերին խորհում էր Գանդալֆի նամակի շուրջը:

— Ուրեմն այսպես, պարոն հյուրեր,— ասաց Նոբը: — Ես էնտեղ խառնշտեցի ձեր անկողինները և ամեն մեկի մեջ մի երկարուկ բարձ դրեցի, ձեր թույլտվությամբ: Բրդե ծածկոցն էլ ծալծլեցի, ձեր գլխին շատ նման ստացվեց, պարոն Պար... Զառիթափցի,— քթի տակ ժպտալով ավելացրեց նա:

— Մթության մեջ սկզբում չեն տարբերի,— ծիծաղեց Փինը,— իսկ երբ հասկանան...

— Այն ժամանակ կերևա,— ասաց Պանդուխտը: — Գուցե մինչև առավոտ մի կերպ կդիմանանք:

Նրանք պարկերը շարեցին հատակին, բազկաթոռը կպցրին փակ դռանը և պատուհանը կողպեցին: Կողպում էր Ֆրոդոն ու աչքի տակով նայում ջինջ աստղերին: Լեռնամոտի մութ լանջերի հետևում վառ փայլփլում էր Մուրճը՝ հոբիթներն այդպես էին անվանում Մեծ Արջի համաստեղությունը: Նա հառաչեց, փակեց ներսի ծանր կրկնափեղկերն ու վարագույները ծածկեց: Պանդուխտը բուխարիկում թեժ կրակ արեց ու մոմերը հանգցրեց:

Հոբիթները պառկեցին հատակին, ոտքները կրակի կողմը, իսկ Պանդուխտը նստեց դռան մոտի բազկաթոռին: Համարյա չէին խոսում. միայն Մերին էր հարցուփորձով անհանգստացնում:

—«Այստեղ կովը թռչունի պես երկինք թռավ մեկ էլ հանկարծ...», հի՛, հի՛,— ծիծաղեց նա վերմակի մեջ փաթաթվելով: — Է՛հ, Ֆրոդո, մի բան, որ հնարում ես, էլ չափը պահել չկա: Ափսոս, ես այնտեղ չեմ եղել... Ոչի՛նչ, տեղացիները մի հարյուր տարի քո կատակը չեն մոռանա:

— Դրանում համոզված եղիր,— ասաց Պանդուխտը:

Ապա բոլորը լռեցին, ու հոբիթները մեկը մյուսի հետևից քուն մտան:

Գլուխ տասնմեկ. Գիշերային հարձակում

Մինչ նրանք պատրաստվում էին քնելու Լեռնամոտի պանդոկում, Բրենդիդուիմքի վրա չարագուշակ ստվեր էր իջնում. խավարի հետ սառը մառախուղ: Ճագարի Գերանում քար լռություն էր: Գիրուկ Կուղբնոցը դուռը կիսաբաց արեց ու զգուշությամբ քիթը դուրս հանեց: Ամբողջ օրը նա սարսափի մեջ էր, իսկ երեկոյան նույնիսկ պառկել չէր համարձակվում: Քարացած օդում անորոշ սպառնալիք էր կախված: Նա նայեց մութ մառախուղի մեջ և տեսավ, որ ցանկապատի դռնակն ինքն իրեն անձայն բացվեց, իսկ հետո անաղմուկ փակվեց: Նրան այնպիսի սարսափ պատեց, որ կյանքում չէր զգացել: Նա դողալով ընկրկեց և սաստիկ ուժ գործադրելով, թոթափեց ծանր կարկամածությունը: Հետո դուռը փակեց բոլոր փակաղակներով ու սողնակներով կողպեց:

Գիշերը ավելի ու ավելի էր մթնում: Սմբակների խուլ դոփյուն լսվեց. մարգագետնով ձիեր էին արշավում: Դարպասի մոտ դոփյունը լռեց, ու երեք ստվեր ճեղքեցին խավարը: Մեկը մոտենում էր դռանը, մյուս երկուսը տան անկյուններն էին հսկում: Ստվերները թաքնվեցին ու լռությունն ավելի խորացավ, իսկ գիշերը վերջ չուներ: Տան մոտակայքի ծառերն ասես քարացել էին համր լռության մեջ:

Բայց թեթև քամի անցավ տերևների միջով ու ինչ-որ տեղ կանչեց առաջին աքաղաղը: Վաղորդյան սահմռկելի ժամն անցավ: Դռան մոտի ստվերը շարժվեց: Անաստղ ու անլուսին մառախուղի մեջ փայլեց մերկացված շեղբը: Փափուկ, բայց ծանր հարվածը ցնցեց դուռը:

— Բաց անել, Մորդորի անունից,— հրամայեց չարագույժ, ուրվականային ձայնը: Երկրորդ հարվածից դուռը պոկվեց ու տապալվեց՝ շղթաների, կեռերի ու սողնակների հետ միասին: Սև ստվերները ներս խուժեցին: Եվ իսկույն էլ մոտակա անտառակում զիլ հնչեց եղջերափողը: Այն կայծակի նման ճեղքեց գիշերը.

Ելի՛ր... Հարձակում... Հրդեհ ... Թշնամին...

Գիրուկ Կուղբնոցը տանը չէր նստել: Տեսնելով, թե ինչպես են սև ստվերները սողում դեպի դուռը, նա հասկացավ, որ ինքը պետք է փախչի կամ կործանվի: Եվ փախել էր հետնամուտքից, այգու, դաշտերի միջով: Հազիվ մի լիգ էր վազել մինչև մոտիկ տունը և ընկել շեմին: «Ոչ, ոչ... — տնքում էր նա: — Ես կապ չունեմ... Այն ինձ մոտ չէ...»: Ինչի՞ մասին էր նա քրթմնջում՝ չհասկացան, բայց ըմբռնեցին գլխավորը՝ Բրենդիդուիմքում թշնամիներ են, Արշավանք է Հավերժական Անտառից: Եվ թնդաց կոչը.

Հարձակո՛ւմ... Հրդե՛հ... Թշնամի՛... Այրվո՛ւմ ենք...

Բրենդիզայքները փչում էին հին եղջերափողը՝ ազդարարելով տագնապ, որ չէր հնչել արդեն մի ամբողջ հարյուր տարի, այն ժամանակից ի վեր, ինչ դաժան ձմռանը սառցակալած գետի սառույցի վրայով հյուսիսից սպիտակ գայլեր էին եկել:

Ելի՛ր... Թշնամիները...

Ինչ-որ տեղից արձագանք լսվեց՝ տագնապ: Սև ստվերները դուրս սողացին տնից: Աստիճաններին ընկավ հոբիթական ծակծկված թիկնոցը: Մարգագետնի փափկությունից ձիերի սմբակների ձայնը խլացավ, հետո լսվեց քառատրոփն ու հեռացավ մառախուղի խորքը: Ամեն տեղ հնչում էին եղջերափողերը, ձայն տալիս իրար, վազվզում էին հոբիթները: Բայց Սև Հեծյալները փոթորկի պես նետվեցին հյուսիս: Թող իր համար աղմկի փոքրաչափիկ ժողովուրդը... Ժամանակին Սաուրոնը նրանց հարցը կլուծի: Իսկ առայժմ իրենց այլ գործեր են սպասում, Մատանին չկա, առա՛ջ... Նրանք տրորեցին դարպասի պահակներին ու հավիտյանս անհետացան Հոբիթստանից:

Լուսաբացից առաջ Ֆրոդոն հանկարծ արթնացավ, ասես ինչ-որ մեկը նրան արթնացրեց: Եվ տեսավ. Պանդուխտը զգույշ ականջ է դնում, աչքերը փայլում են բուխարիկի վառ կրակից, իսկ ինքը նստած է լարված ու անշարժ: Հետո Ֆրոդոն նորից քնեց, բայց նրա քնի մեջ ներխուժեց քամու թնդյունը և սմբակների կատաղի դոփյունը: Քամին ցնցում էր հյուրանոցը, իսկ ինչ-որ հեռու մի տեղում եղջերափող էր հնչում: Ֆրոդոն գլուխը թափ տվեց քնից, աչքերը բացեց ու լսեց աքաղաղի զիլ կանչը բակում: Պանդուխտը հետ քաշեց վարագույրներն ու թափով բացեց կրկնափեղկերը, իսկ հետո՝ պատուհանը: Մոխրագույն լուսաբացը հորդեց սենյակ ու առավոտյան զովը մտավ վերմակի տակ:

Պանդուխտի հետևից նրանք անցան միջանցքով ու մտան իրենց ննջարանները և հասկացան, որ նրա խորհուրդը փրկել է իրենց կյանքը: Պատուհանները ջարդված էին ու փեղկերը ծխնիներից կախված օրորվում էին, քամին ծածանում էր քրքրված վարագույրները, բազմոցի մորթոտված երկարուկ բարձերն ընկած էին հատակին՝ անկողնու թափթփված սպիտակեղենի մեջ, գորշ ծածկոցը ծվեն-ծվեն էր արված: Պանդուխտն իսկույն գնաց պանդոկպանին կանչելու: Խեղճ Լավրը վախեցած թարթում էր քնկոտ աչքերը, որոնք, ինչպես ինքն էր հավատացնում, մի վայրկյան անգամ չի կպցրել և որ ամեն ինչ խաղաղ է եղել:

— Այսինքն կյանքումս այսպիսի բան չեմ տեսել... — բացականչեց նա, սարսափահար ձեռքերը դեպի առաստաղը պարզելով: — Որպեսզի հյուրերի համար վտանգավոր լինի իրենց անկողիններում քնելը, որպեսզի փչացնեն համարյա բոլորովին նոր բարձերը, բա հետո ի՞նչ է լինելու:

— Ոչ մի լավ բան,— գուշակեց Պանդուխտը: — Բայց քեզ համար ավելի հանգիստ կլինի, եթե մեզնից ազատվես: Մենք հիմա գնում ենք: Նախաճաշ պետք չէ, ոտքի վրա մի բան կուտենք:

Նարկիսը վազեց կարգադրություն անելու, որ թամբեն ու դուրս բերեն պոնիները և ուտելիք պատրաստեն: Վերադարձավ իրեն լրիվ կորցրած. պոնիներն անհետացել են... Ախոռի դռները կրնկի վրա բաց են, իսկ ներսը դատարկ է: Տարել են ոչ միայն հոբիթների պոնիները, այլև բոլոր ձիերը, մինչև վերջինը:

Ֆրոդոն չափազանց հուզվեց: Ոտքով ինչպե՞ս կհասնեն Ազատք, եթե նրանց հետևում են ձիավոր թշնամիները: Պանդուխտը լռելյայն դիտում էր հոբիթներին, ասես գնահատելով նրանց ուժն ու վճռականությունը:

— Միևնույնն է, չէ՞ որ պոնիներն էլ Հեծյալներից չէին փրկի,— ասաց նա, կարծես Ֆրոդոյի մտքերը կարդալով: — Եվ այն արահետով, որով ես ձեզ տանելու եմ, ավելի լավ է ոտքով գնալ, քան պոնիով: Մթերքի հա՞ցը: Այստեղից մինչև Ազատք հասնելը ոչինչ չենք գտնի, հարկավոր է ուտելիք շատ վերցնել: Չէ՞ որ կարող ենք ուշանալ, կարող ենք ոլորապտույտ ուղիով գնալ: Կարող եք շալակել...

— Ինչքան որ պետք լինի,— կտրիճավարի ասաց Փինը,— չնայած վախից սիրտը փորն ընկավ: — Մեռնել-մեռնել է, գոնե կուշտ փորով կմեռնենք:

— Ես երկու հոգու չափ կտանեմ,— մռայլ հայտնեց Սամը:

— Իսկ գործին ինչպե՞ս կարելի է օգնել, պարոն Նարկիս,— հարցրեց Ֆրոդոն: — Հնարավոր չէ՞ որևէ կերպ մի զույգ պոնի ճարել, դե գոնե մեկը բեռի համար: Ես հասկանում եմ, վարձով

հազիվ թե... Գուցե գնե՞նք: Իսկ մտքում նա վախվորած հաշվում էր իրենց ունեցած ողջ դրամը...

— Կասկածում եմ,— վիատ ասաց պանդոկպանը: — Լեռնամոտի բոլոր պոնիները՝ երկու, թե երեք հատ, իմ ախոռում էին: Մեզ մոտ ընդամենը մեկ-երկու ձի կա ու վերջ, իսկ մնացածը՝ վաճառքի համար չէ: Բայց դե կաշխատենք: Հիմա կգտնեմ այդ անբան Բոբին, թող գնա հարցուփորձ անի:

— Այո, հավանորեն,— ասես ծանրութեթև անելով խոսեց Պանդուխտը,— թող հարցնի: Մեկ պոնի մեզ այնուամենայնիվ հարկավոր է: Դե հիմա մտածել անգամ չենք կարող արագ ու աննկատ դուրս գալու մասին: Պոնի փնտրելը նույնն է, թե արշավի դուրս գալիս շեփոր փչես: Նրանք հենց դա էլ հաշվի են առել:

— Մխիթարության մի փոքր նշույլ կա,— ասաց Մերին: — Իսկ եթե սթափ դատենք, ապա ոչ փոքր է, ոչ էլ նշույլ: Քանի որ այսպես է ստացվել, եկեք ինչպես հարկն է նախաճաշենք: Ո՞ւր է դանդալոշ Նոբը:

Երեք ժամից ավելի նրանք սպասեցին: Բոբը եկավ և լուր բերեց, որ ոչ մի ձի կամ պոնի չի վաճառվում, միայն Բիթ Կաղամախը համաձայն է զիջել մի քոսոտ պոնի:

— Ոսկորն ու կաշին է,— ասաց Բոբը,— այդ պոնին վաղուց սպանդանոց հանձնելու ժամանակն է, իսկ Կաղամախը նրա համար, համոզված եղեք, եռակին է ուզելու՝ շահի հոտ է առել կաշի քերթողը:

— Կաղամա՞խը,— զգուշացավ Ֆրոդոն: — Գուցե այստեղ որևէ խարդախություն կա: Գուցե այդ պոնին հետ վազի նրա մոտ՝ մեր բեռն էլ հետը, կամ նրա միջոցով կհետևեն մեզ, ինչ իմանաս:

— Կարող է պատահել, կարող է,— ասաց Պանդուխտը,— չնայած, հազիվ թե: Կաղամախի մոտ ոչ մի կենդանի արարած չի վերադառնա, եթե մեկ անգամ կարողացել է ազատվել նրա ձեռքից: Երևի պարզապես որոշել է հրաժեշտից առաջ մի համեղ կտոր էլ փախցնել, այդ պոնին, հաստատ գիտեմ, շունչը փչելու վրա է: Ինչ արած, ընտրություն չունենք: Ինչքա՞ն է ուզում դրա համար:

Բիթ Խաղամախը տասներկու արծաթ էր պահանջել, իսկապես, մի ամրակազմ պոնիի գնից երեք անգամ ավելի: Գնված փոքրիկ կենդանին ոսկրոտ էր, հյուծված, ծեծված, բայց դեռ սատկելու միտք չուներ: Լավը Նարկիսը իր գրպանից վճարեց պոնիի համար և դեռ տասնութ արծաթ էլ առաջարկեց Մերիին՝ ի հատուցում կորած պոնիների: Նա ազնիվ մարդ էր և բավական ունևոր, բայց երեսուն արծաթի համար ափսոսանքից լացը գալիս էր, մանավանդ, որ կեսը ստիպված եղավ հրամցնել գարշելի ու ժլատ Կաղամախին:

Սակայն նա չէր տուժել: Հետագայում պարզվեց, որ տարել են միայն մի ձի: Մնացածներին ուղղակի վախեցրել էին, և նրանք գտնվեցին Լեռնամոտի մարգագետիններից: Ճիշտ է, Մերի Բրենդիզայքի պոնիները փախել էին Թոմ Բոմբադիլի մոտ, որտեղ արածում էին ու ճարպակալում, ասես ոչինչ չէր եղել, բայց երբ Թոմն իմացավ, թե ինչ է պատահել Լեռնամոտում, նրանց հետ ուղարկեց Նարկիսին և վերջինս կարծես երկնքից ընկած հինգ ձի ստացավ: Ճիշտ է, Լեռնամոտում ձիերն այնքան էլ ազատ չէին, բայց այնուամենայնիվ Բոբը փառավորապես խնամում էր նրանց, բացի այդ խուսափեցին սարսափելի ճանապարհորդությունից: Թեպետ Ազատքում էլ չեղան:

Նախաճաշից հետո հոբիթներն ստիպված եղան նորից դասավորել իրենց ուղեպարկերը, որ շալակած տանեն: Մոտավորապես ժամը տասին մոտ նրանք դուրս եկան: Լեռնամոտն արդեն վաղուց արթնացել ու գվվում էր, ինչպես տագնապահար փեթակ: Հապա ինչպե՞ս՝ Սև Հեծյալների երևալը, Ֆրոդոյի անհետանալը, իսկ հիմա էլ ձիերի գողությունը և վերջին ցնցող նորությունը՝ պարզվում է, Պանդուխտ-Հետքագետը հոբիթստանցի հոբիթներին ուղեկցող է վարձվել: Պանդոկի մոտ շատ ժողովուրդ էր հավաքվել՝ գալիս էին մոտակա գյուղերից, մի քանի խոսք փոխանակում ու համբերությամբ սպասում ճամփորդների դուրս գալուն:

Պանդուխտը պլանը փոխեց. որոշված էր Լեռնամոտից շարժվել ուղիղ Ուղիով: Իսկույն թեքվելն իմաստ չուներ՝ նրանց հետևից մի երկար պոչ կկապվեր. կնայեին, թե ուր են գնում, ու կհետևեին, որ ոչ մեկի հողերը չմտնեին: Հրաժեշտ տվեցին Նոբին ու Բոբին, բաժանվեցին Լավը Նարկիսից, նրան բազում շնորհակալություններ հայտնելով:

— Ցտեսություն, հուսով եմ, մինչև լավ ժամանակների գալը,— ասաց Ֆրոդոն: — Կուզենայի ձեր հյուրանոցում ապրել ինչպես հարկն է. գուցե երբևէ հաջողվի:

Ճանապարհ ընկան տագնապահար ու ընկճված, ամբոխի անբարյացակամ հայացքների ուղեկցությամբ: Այնուամենայնիվ ինչ-որ մեկը նրանց հաջողություն ցանկացավ, բայց ավելի շատ վատ խոսքեր էին լսվում: Ճիշտ է, լեռնամոտցիները գիտեին, որ Պանդուխտը կատակ անել չի սիրում, և երբ նա աչքերը բարձրացնում էր մեկնումեկի վրա, իսկույն լռում էին: Նա գնում էր առջևից, Ֆրոդոյի կողքից, նրանցից հետո Փինը և Մերին, իսկ վերջում Սամը պոնին էր տանում, որը ճիշտ է, բարձված էր իր ուժերին համապատասխան, բայց՝ բավականաչափ: Ի դեպ, չնայած բեռին, նա արդեն ավելի ուրախ աչքեր ուներ, ըստ երևույթին ճակատագրի փոփոխություն էր զգում: Սամը մտածկոտ խնձոր էր կրծում: Խնձորներով լի էին նրա գրպանները, Բոբն ու Նոբը այդ մասին հոգ էին տարել:

— Խնձորը ձեռքիդ գնում ես, ծխամորճը ձեռքիդ նստում ես, դե լավ է, էլի,— մռթմռթում էր Սամը: — Բայց ամբողջ ճանապարհի համար կարո՞ղ ես խնձոր վերցնել:

Աստիճանաբար նրանք դադարեցին ուշադրություն դարձնել հետաքրքրասերների վրա, որոնց գլուխները, մեկ էլ տեսար, բուսնում էին ցանկապատի կամ դռան հետևից: Վերջին տունը՝ խարխլված ու թեքված, սակայն ամուր, գերանակապ ցանկապատ ուներ: Պատուհանում ցոլաց դեղնավուն ու շիլաչք դեմքը:

«Այ քեզ բա՜ն,— մտածեց Ֆրոդոն: — Ուրեմն այստեղ է թաքնվում այն հարավցին... Տեսքով իսկը օձ է, ինչպես որ Բիլբոն էր նկարագրում»:

Քթի տակ ծիծաղելով, ցանկապատի վրա հենվեց մի հաղթանդամ երիտասարդ՝ հանդուգն քիթմռութով, հաստ հոնքերով, աչքերը՝ մուգ ու պղտոր: Երբ ճամփորդները մոտեցան, նա բերանից հանեց ծխամորճն ու գունդ թքեց.

— Ողջույն, երկարոտ... Ի՞նչ է, ընկերնե՞ր ես ճարել,— ասաց նա: Պանդուխտը չպատասխանեց:

— Ձեզ էլ ողջույն, անխելք մժղունք,— դիմեց նա հոբիթներին: — Գոնե գիտե՞ք, թե ում հետ եք գործ բռնել: Ախր դա Պանդուխտ Տիպտկլորն է, հասկանալի՞ է: Նրան մի ուրիշ տեսակ էլ են կանչում, հավես չկա ասելու: Դե, գիշերը ինքներդ կտեսնեք ինչն ինչոց է... Իսկ դու, Սամիկ, տես հա՛, իմ սատկած պոնիին չնեղացնես: Թո՜ւ... — ու նորից մի չաղլիկ գունդ թքեց:

Սամը շրջվեց.

— Իսկ դու, Կաղամախ,— ասաց նա,— ավելի լավ կանես քո զզվելի մռութը պահես, թե չէ գիտես չէ՞ ինչեր են լինում... — Մեծ խնձորի կեսը թափով իջավ Բիթի քթին. նա վայրկենապես անհետացավ ու ցանկապատի տակից ուշացած հայհոյանք թափեց:

— Համով խնձոր էր,— հառաչելով նկատեց Սամը:

Գյուղը վերջացավ: Նրանց ուղեկցող երեխաներն ու պարապ-սարապները ետ մնացին ու վերադարձան Հարավային Դարպաս: Երկու-երեք լիգ ճամփորդները գնացին մեկ աջ, մեկ ձախ ոլորվող Ուղիով. հետո ճանապարհը թեքվեց ցած՝ կտրելով խիտ անտառը: Գորշ Լեռնամոտը բարձրանում էր հետևում. նրանք թեքվեցին դեպի հյուսիս, նեղ, հազիվ նկատելի կածանով:

— Այստեղ էլ մենք կծածկվենք կողմնակի աչքերից,— ասաց Պանդուխտը:

— Միայն թե կարճ ճանապարհով չգնանք,— կասկած հայտնեց Փինը: — Թե չէ մի անգամ գնացինք անտառի միջով ու հետո հազիվ դուրս եկանք:

— Այն ժամանակ ես ձեզ հետ չեմ եղել,— քմծիծաղեց Պանդուխտը: — Իմ բոլոր զարտուղի ճանապարհները տանում են այնտեղ, ուր պետք է:

Նա մեկ անգամ էլ աչքի անցկացրեց դատարկ Ուղին և խորացավ թփուտաշատ անտառակը:

— Իհարկե, Կաղամախը կհետևի, թե մենք որտեղ ճանապարհից թեքվեցինք,— ասաց նա,— սակայն մեր հետևից չի գա, պարզապես ոմանց կհուշի: Նա այստեղի բոլոր կածանները լավ գիտի, թեպետ ինձանից ո՛չ լավ: Իսկ նրանց, ում կհայտնի, հաստատ հեռու չեն այստեղից:

Թե Պանդուխտն էր նրանց այդպես առաջնորդում, թե էլի ինչ-որ այլ պատճառով, բայց նրանց հետապնդող չկար: Ճամփորդներին նկատում էին միայն թռչունները, աղվեսները, մեկ էլ

կայտառ սկյուռիկները: Նրանք գիշերեցին անտառում, իսկ առավոտյան սուսուփուս շարունակեցին ճանապարհը: Անտառից դուրս եկան միայն երրորդ օրը, դուրս եկան ու իսկույն թաքնվեցին: Լեռնամոտի ագարակներից անցել էին, այժմ սկսվում էին Մոծակի Ճահճուտները:

Ոտքերի տակ ճլփում էր, ոտնահետքերի մեջ պղտոր ջուր էր լցվում: Սեզերի ու եղեգների միջից փոքրիկ թռչնակներ էին թռչում: Սկզբում հոբիթները գնում էին աշխույժ ու վստահ, հետո սկսեցին ցատկոտել հողակոշտից հողակոշտ: Այստեղ նույնիսկ հետքագետները ճանապարհը չգիտեին՝ ով ոնց կարողանար: Նրանց վրա էին թափվել մժեղները, բզզում էին գլխավերևում, մտնում մազերի, տաբատների մեջ և կպչում, կծում, խայթում:

— Է՛. Էսպես հո ինձ կուտեն,— չդիմացավ Փինը: — Սա արդեն ոչ թե Մոծակների Ճահճուտ է, այլ մոծակների բուծարան:

— Իսկ որ հոբիթները մոտերքում չկան, այս զզվելիները ո՞ւմ արյունն են խմում,— հետաքրքրվեց Սամը, կատաղորեն իր վզին շփշփացնելով:

Այդ խուլ վայրում հազվագյուտ գարշելի օր եղավ: Գիշերատեղն էլ սառն էր, խոնավ, անհարմար. այդ բզզան արյունախումները թույլ չէին տալիս աչք կպցնել: Եղեգների ու սեզերի մեջ վխտում էին ճռճռացնող արարածները, ծղրիդի վատ ազգակիցները: Ամբողջ գիշեր ականջները սղոցում էր. «Արյո՛ւն... Արրյո՛ւն»: Մինչև առավոտ հոբիթներն ուղղակի խելագարվեցին:

Դրանից քիչ ավելի լավ էր չորրորդ օրը. քիչ ավելի թեթև չորրորդ գիշերը: «Արյունախնդիրները», ինչպես նրանց անվանեց Սամը, չէին ճռճռում, բայց մոծակների անկուշտ վնգացող ամպերը առաջվա պես ալիքվում էին ճամփորդների գլխավերևում:

Երբ Ֆրոդոն անասելի հոգնած, համարյա քնելու հույս չունենալով պառկեց, հանկարծ արևելքում լույսի հեռավոր ցոլք նկատեց. բռնկվում էր ու հանգչում: Իսկ մինչև լուսաբաց դեռ մի քանի ժամ կար:

— Այդ ի՞նչ բռնկումներ են,— հարցրեց նա Պանդուխտին, որը կանգնել ու նայում էր դեպի խոնավ մթությունը:

— Չափազանց հեռու է, անհասկանալի է,— պատասխանեց նա: — Շատ տարօրինակ է, կարծես բլրի գլխին կայծակ է խփում:

Ֆրոդոն պառկեց, բայց դեռ երկար տեսնում էր վառ բռնկումներն ու Պանդուխտի մութ կերպարանքը: Վերջապես ծանր քունը հաղթեց նրան:

Հինգերորդ օրը նրանք հետևում թողեցին խրուտ ճահիճներն ու շամբուտները: Սկսվեց հազիվ նկատելի, բայց երկար ու տառապալից վերելքը: Արևելքից սկսվում էին զառիկող լերկ բլուրները: Աջ կողմում ամենաբարձրն ու քարքարոտը մյուսներից վեր էր խոյանում և տափակ գագաթ ուներ:

— Դա Զավերտն է,— ասաց Պանդուխտը: — Հին ճանապարհը՝ մենք այն շրջանցեցինք աջից, ձգվում է լեռան ստորոտով: Վաղը կեսօրին կհասնենք այնտեղ, իսկ հետո գագաթը կբարձրանանք: Այո, գագաթից խուսափել չենք կարող:

— Ինչի՞ մասին ես խոսում,— հարցրեց Ֆրոդոն:

— Այն մասին, որ մեր ճանապարհը բացահայտված է, ոչինչ անել չես կարող... Հայտնի չէ, թե մեզ ինչ է սպասվում այնտեղ: Սարից, սակայն, լավ է երևում Ուղին:

— Չէ որ հույս ունեիր այնտեղ Գանդալֆին գտնելու:

— Հույս ունեի, բայց հիմա հույսը փոքր է: Եթե նա նույնիսկ գնա այս ճանապարհով, ապա կարող է պատահել, որ շրջանցի Լեռնամոտը և մեր մասին չի իմանա: Հազիվ թե այնտեղ հասնենք նույն ժամանակ, իսկ եթե չհասնենք, իրար կկորցնենք՝ ոչ մենք կարող ենք նրան սպասել, ոչ նա՝ մեզ: Եթե հեծյալները անտառում մեզ չբռնեցին, ուրեմն անպայման կգնան դեպի Զավերտ՝ այնտեղից ամեն-ամեն ինչ երևում է: Եվ հիմա էլ մենք կանգնած ենք, իսկ մեզ տեսնում են զանազան գազաններ ու թռչուններ...

Հոբիթները տագնապալի նայեցին հեռավոր բլուրներին, իսկ Սամը հայացքն ուղղեց դժգույն երկնքին, ասես այնտեղ սպասում էր տեսնել գորշ արծիվ կամ դժնդակ անգղ:

— Դե դու էլ հո հույս չե՞ս տալիս, Պանդուխտ,— գլուխն օրորելով մռթմռթաց նա:

— Ուրե՞մն,— հարցրեց Ֆրոդոն:

— Ուրեմն այսպես,— մտածկոտ ու կարծես դժկամորեն խոսեց Պանդուխտը: — Հիմա կգնանք անտառով ուղիղ Հողմակործ ծառերի Լեռնաստորոտը և կմոտենանք Զավերտին: Այնտեղ, հյուսիսից մի արահետ կա: Ինչ լինելու է՝ կլինի:

Նրանք գնում էին ու գնում, իրիկնային սառնությունը պարուրում էր խոնավությամբ: Ոտքերի տակ սակայն, մի քիչ չորացավ. հետևում թանձրանում էր մառախուղը: Արևի կարմիր սկավառակից բաժանվելով տնքում ու հեծեծում էին անտեսանելի թռչունները: Ապա մեռելային լռություն իջավ: Հոբիթները թախիծով հիշեցին մեղմ, անխռով մայրամուտները, որ դիտում էին Պարկուտի կլոր պատուհաններից:

Այդ գիշեր նրանք հերթով հերթապահեցին, իսկ Պանդուխտն առհասարակ չքնեց: Առավոտյան վեր կացան արևի առաջին ճառագայթներից: օդը սառն էր, երկինքը՝ բաց կապույտ: հոբիթները զգում էին, որ չնայած կիսաքուն գիշերին հանգստացել են, նրանք արդեն վարժվել էին երկար քայլելուն և սուղ օրապահիկին: Հոբիթստանում ուղղակի չէին հավատա, որ կարելի է համարյա առանց ուտելու ապրել: Իսկ Փինն ասաց, որ, միևնույնն է, Ֆրոդոն համարյա երկու անգամ գիրացել է:

— Ի՞նչ գիրանալու մասին է խոսքը,— հառաչեց Ֆրոդոն, գոտու մեջ նոր անցք բացելով,— ինձանից առհասարակ բան չի մնացել: Այսպես որ գնա, մեկ էլ տեսար ուրվական դարձա:

— Պետք չէ այդպիսի բաներ խոսել,— անսպասելիորեն կոպիտ նրանց խոսքը կտրեց Պանդուխտը:

Երեկոյան կողմ նրանք մոտեցան Լեռնաստորոտին: Քարքարոտ լեռնալանջերը բարձրանում էին նրանց վերևում, տեղ-տեղ երևում էին մթին հովիտներ: Գիշերեցին Լեռնաստորոտի արևմտյան կողմում, իսկ առավոտյան Պանդուխտը գտավ հարկավոր արահետը: Այն բարձրանում էր արևմտյան լանջով և շատ խորամանկ ձևով. սուզվում էր զանազան ձորեր, թաքնվում գահավանդի տակ, գալարվում ժայռերի միջով կամ ձգվում քարերի ծածկույթի տակով, որոնք ճամփորդներին էլ էին թաքցնում բարձր, հուսալի պատերի նման:

— հետաքրքիր է, ո՞վ է բացել այս արահետը,— հարցրեց Մերին, երբ նրանք խորացան հերթական քարե անցուղու մեջ: — Սա ինձ այնքան էլ դուր չի գալիս. Թացաձորն է հիշեցնում: Զավերտում գերեզմանոցներ կա՞ն:

— Չկան,— պատասխանեց Պանդուխտը: — Դունադանցիները Հողմակործ ծառերի Լեռնաստորոտում չեն ապրել, այլ միայն պաշտպանվել են Անգմարի կախարդների հարձակումներից: Դրա համար էլ գցել են այս գաղտնի արահետը: Ինչ-որ ժամանակ Զավերտի վրա բարձրանում էր Ամոն Սուլ, Ընդհանուրի լեզվով՝ Քամուսար կոչվող դիտաշտարակը: Թշնամիներն այրեցին ու հիմնահատակ ավերեցին այն, մնացել է միայն քարաշեն մի անկանոն շրջան, ասես պսակ լինի հինավուրց լեռան գագաթին: Մինչդեռ աշտարակը բարձր էր ու վեհ. Վերջին դաշինքի օրերին այնտեղ կանգնել էր Էլենդիլն ինքը՝ սպասելով Գիլ-Գալադին:

Հոբիթները խեթ նայում էին Պանդուխտին: Ըստ երևույթին, նրան հայտնի էին ոչ միայն գաղտնի ճանապարհները, այլև հին-հին եղելություններ:

— Իսկ Գիլ-Գալադն ո՞վ է,— հարցրեց Մերին,— բայց Պանդուխտը չպատասխանեց. նա մտածմունքի մեջ էր:

Պատասխանեց մի ցածր ձայն.

Գիլ- Գալադ արքան, լուսավոր արքան,
Ու վերջին արքան բոլոր էլֆերի.
Ուզում էր ցրել մութը դարավոր,
Որ աշխարհ հասնեն շողերը վերին:

Խավարում փայլեց վահանը նրա,
Ու սև սրերը ջարդվեցին անվերջ,
Նրա հաղթ թուրը կայծակ էր, կրակ,
Շողում, շանթում էր սև ժայռերի մեջ:

Սակայն Խավարը նահանջեց միայն,
Հավետ չցրվեց Մութը դարավոր
Եվ նրա աստղը գլորվեց, մարեց
Երկնի խորքերում հեռու հեռավոր:

Բոլորը զարմացած շրջվեցին դեպի Սամը:

— Իսկ շարունակությո՞ւնը,— հարցրեց Մերին:

— Շարունակությունն արդեն չեմ հիշում,— խոստովանեց Սամը: — Ես լսել եմ պարոն Բիլբոյից, երբ դեռ փոքր տղա էի. նա գիտեր, որ էլֆերի համար գժվում եմ և նրանց մասին ամեն ինչ ինձ պատմում էր: Նա ինձ գրագիտություն էլ է սովորեցրել, իսկ ինչքա՜ն է իր հորինած ոտանավորներից արտասանել՝ թիվ ու համար չկա:

— Դա ինքը չի հորինել,— ասաց Պանդուխտը: — Դա «Գիլ-Գալադի մահը» հին երգի սկիզբն է, միայն Բիլբոն էլֆերենից թարգմանել է համընդհանուր լեզվի:

— Էնտեղ դեռ շատ կար, երգը երկար էր ու անընդհատ Մորդորի մասին,— ասաց Սամը: — Հիշում եմ, վախից շարունակությունը միտս չպահեցի: Ի՞նչ գիտենայի էն ժամանակ, որ ինձ բաժին կընկնի գնալ էնտեղ:

— Դե, առայժմ դեռ ո՛չ Մորդոր,— ասաց Փինը:

— Կամաց,— նրա թևքը քաշեց Պանդուխտը,— այդ բառի հետ զգույշ եղեք:

Ձավերտի գագաթին, ինչպես գուշակում էր Պանդուխտը, նրանք խիտ խոտով ծածկված հինավուրց ավերակներ տեսան: Բայց տափակ կատարի կենտրոնում քարերի մեջ կրակի թարմ հետքեր կային: Իսկ շուրջը մռայլ ու չարագույժ լռություն էր:

— Ահա քեզ, խնդրե՛մ,— ասաց Մերին: — Արժեր շտապել այստեղ՝ ոչ քեզ ծառ ու թուփ, ոչ առվակ, ոչ թաքստոց: Իհարկե, Գանդալֆն էլ չկա՝ և, իհարկե, ի՞նչ պետք է աներ այստեղ:

— Այո, նա այստեղ ոչինչ չունի անելու,— մտածկոտ համաձայնեց Պանդուխտը: — Չնայած, եթե նա մեզնից երկու օր հետո լիներ Լեռնամոտում, ուրեմն կարող էր ավելի շուտ հասնել այստեղ և սպասել:

Հանկարծ նա կտրուկ կռացավ ու սկսեց զննել մրոտ գլաքարերի կույտի հարթ ու սպիտակ վերին քարը, որին կրակ չէր դիպել: Հետո բարձրացրեց ու մատներով շուռումուռ տվեց:

— Հապա նայիր,— առաջարկեց նա Ֆրոդոյին,— քո կարծիքով, սա ի՞նչ է...

Քարի մյուս երեսին Ֆրոդոն մի քանի քերծվածքներ նկատեց:

— Չորս փայտիկ և երկու կետ,— ասաց նա:

— Դու ճիշտ չես,— ժպտաց Պանդուխտը: — Ձախից դրված նշանը նման է ռուներեն Գ-ի: Գուցե դա լուր է Գանդալֆից՝ քերծվածքները թարմ են: Սակայն պարտադիր չէ, քանի որ Հետքագետներն էլ են ռուներեն գրում և հաճախ են լինում այս տեղերում:

— Դե, իսկ եթե Գանդալֆից է, դա ի՞նչ է նշանակում,— հարցրեց Մերին:

— Հ-երեք,— պատասխանեց Պանդուխտը: — «Հոկտեմբերի երեքին այստեղ է եղել Գանդալֆը», ուրեմն՝ երեք օր առաջ: Եվ հետո, դա նշանակում է, որ նա շտապել է, վերահաս վտանգի պայմաններում է գրել. ավելի երկար ու պարզ գրել չի հասցրել: Այդ դեպքում մեր գործերն այնքան էլ լավ չեն:

— Թող այդպես լինի, բայց լավ է, որ այնուամենայնիվ նա եղած լինի,— ասաց Ֆրոդոն: — Գոնե ավելի հանգիստ կլինենք, երբ գիտենք, որ նա ինչ-որ մոտիկ տեղ է, առջևում կամ թեկուզ հետևում:

— Թերևս,— համաձայնեց Պանդուխտը: — Ես համոզված եմ, որ նա եղել է այստեղ և նրա վրա ինչ-որ հարձակում է եղել. հրեն, կրակն ինչպես է անցել քարերի վրայով: Հիշո՞ւմ ես, Ֆրոդո, այն բռնկումներն արևելքում: Մենք էլ հենց երեք օր առաջ ենք դրանք տեսել: Երեկ նրան այստեղ շրջապատել են և հանկարծակիի բերել. միայն հայտնի չէ, թե դա ինչով է վերջացել: կարճ ասած, նա չկա, դրա համար էլ մեզ հարկավոր է Ազատք հասնել՝ հույսներս մեզ վրա դրած:

— իսկ մինչև Ազատք դեռ հեռո՞ւ է,— հարցրեց Մերին՝ հոգնած աչքերով նայելով անծայրածիր հեռուները:

Ձավերտի բարձունքներից աշխարհը հոբիթներին խենթացնելու չափ ահռելի էր թվում: Ինչ-որ տեղ հեռվում, ներքևում, ձգվում էր ամայի Ուղու նեղ, անվերջանալի ժապավենը:

— Լիգով չի չափված,— արձագանքեց Պանդուխտը: — Ես գիտեմ որքան պետք է գնալ. լավ եղանակին այստեղից մինչև Բրուինենյան կամ Կատաղած գետի ծանծաղուտը իմ քայլով ութ օրվա ճանապարհ է, ձերով՝ տասնչորս, և գնալու ենք ոչ Ուղիով:

— Երկու շաբաթ,— ասաց Ֆրոդոն: — Ամեն ինչ կարող է պատահել:

— Ամեն ինչ,— հաստատեց Պանդուխտը:

Նրանք կանգնած էին բարձունքի հարավային եզրին, և Ֆրոդոն առաջին անգամ ամբողջ ուժով զգաց դառը, անտերունչ վախը: Ախր սա ինչ բան է, ինչո՞ւ չէր կարելի մնալ սիրելի, ուրախ, խաղաղ Հոբիթստանում: Նա հայացքն ուղղեց ատելի Ուղիով դեպի հարավ, տան կողմը: Եվ տեսավ, որ ճանապարհով երկու կետ են դանդաղ սողում, ևս երեքն էլ արևելքից նրանց ընդառաջ են գնում:

— Հապա նայե՛ք,— բացականչեց նա, ներքև ցույց տալով:

Պանդուխտն իսկույն ընկավ գետնին, ատամնավոր քարերի հետևում, խոտերի մեջ ու Ֆրոդոյին քաշեց իր հետ: Կողքին շրմփաց Մերին:

— Ի՞նչ է պատահել,— շշնջաց նա:

— Առայժմ չգիտեմ, բայց սպասեք ամենավատին,— պատասխանեց Պանդուխտը: Նրանք շարժվեցին դեպի եզրը ու քարերի հետևից նորից նայեցին: Առավոտյան լույսը խավարել էր՝ արևելքից ամպեր էին գալիս: Հինգ փոքրիկ, հազիվ նկատելի սև կետ. թվում է սարսափելի ոչինչ չկա, բայց Ֆրոդոն ու Մերին իսկույն զգացին, որ այնտեղ, ճանապարհին, Ձավերտի ստորոտից ոչ հեռու, հավաքվել են նրանք՝ Սև Հեծյալները:

— Այո, նրանք են,— ասաց Պանդուխտը, որի աչքերն ավելի սուր էին: — Թշնամին մեր կողքն է:

Այդ ժամանակ Սամն ու Փինը հետախուզում էին մոտակա հովիտն ու լանջը. աղբյուրի մոտ տրորված է գետինը, խարույկի տեղն է մնացել, խոտը տրորված է՝ ինչ-որ մեկի հապճեպ սարքված օթևան: Ժայռաբեկորների հետևում հովտի ծայրին Սամը չոր ոստերի կույտ տեսավ:

— Սա, երևի ծերուկ Գանդալֆն է հավաքել,— ասաց Փինին: — Իհարկե, գուցեև նա չէ, բայց ինչ-որ մեկը մտածել է, որ կվերադառնա այստեղ:

— Ես այս ի՞նչ եմ անում,— սթափվեց Պանդուխտը նրանց հայտնագործության մասին իմանալով,— ինքս պետք է առաջին հերթին այստեղ ամեն ինչ ստուգեի,— և շտապեց դեպի աղբյուրը:

— Ձեռքիցս բաց թողեցի,— վերադառնալով ասաց նա: — Սամն ու Փինը հասցրել են ամեն ինչ տրորել: Վառելիքը Հետքագետները բավական վաղուց են պատրաստել, բայց այստեղ թարմ ոտնահետքեր էլ կան, մի քանի զույգ... — նա մտքերի մեջ ընկավ, ասես ինչ-որ բան որոշելով: Հոբիթները շոշափելիորեն պարզ հիշեցին երկար թիկնոցներով ու հսկայական ճտքավոր կոշիկներով Սև Հեծյալներին: Եթե նրանց այս տեղը հայտնի է, ապա ավելի լավ է այստեղից արագորեն հեռանալ:

Սամն անհանգիստ շուրջը նայեց. ուրեմն թշնամին մոտիկ է, երևի այստեղից մի երկու լիգ է հեռու, իսկ ես ու Փինը վազվզում ենք...

— Բերեք այստեղից փախչենք, պարոն Պանդուխտ,— խնդրեց նա: — Համ ուշ ժամ է, համ էլ էս ձորակը կասկածելի է...

— Այո, լեռնագոգն անհուսալի տեղ է,— պատասխանեց Պանդուխտը՝ աչքերը երկնքին հառելով ու ժամը որոշելով: — Գիտե՞ս, Սամ, այնուամենայնիվ մնալն ավելի ճիշտ կլինի, թեպետ այս տեղն ինձ էլ դուր չի գալիս: բայց մինչև գիշեր ավելի հարմար ոչինչ չենք գտնի: Ծայրահեղ դեպքում գոնե թաքնվել ենք, չէ՞ որ նրանք ամեն տեղ լրտեսներ ունեն: մեզ հարկավոր է Ուղին հատել, իսկ այն հսկողության տակ է: Իսկ Ուղուց այն կողմ անապատ է:

— Բայց չէ՞ որ Հեծյալների աչքերը չեն տեսնում,— նկատեց Մերին,— ցերեկը նրանք հոտոտելով (կամ ինչպես դա ճիշտ անվանել, չգիտեմ) են շարժվում, դու մեզ գագաթին վայրկենապես գետնին փռեցիր, իսկ հիմա էլ ասում ես՝ «կտեսնեն», ինչ-որ անհասկանալի է:

— Գագաթին շատ անզգույշ էի,— պատասխանեց Պանդուխտը,— շարունակ փնտրում էի, թե Գանդալֆից տեղեկատու նշաններ չկա՞ն և մենք երեքով երկար տնկված էինք ի տես: Հեծյալները ցերեկը չեն տեսնում, դա ճիշտ է, իսկ Սև ձիերը տեսնում են, և մեր շուրջն էլ՝ գետնի վրա, օդում, վխտում են թշնամու լրտեսները, մանր-մունր կամակատարներն ու լրատուները: Ինչքա՞ն կային դրանցից Լեռնամոտում, հիշո՞ւմ եք: Հեծյալները յուրովի են տեսնում աշխարհը. ցերեկը նրանց համար նշմարելի են մեր ստվերները, իսկ մթության մեջ նրանք զանազանում են բնության՝ մեզ համար անիմանալի սև գաղտնագիրը: Իսկ տաք արյունը նրանք զգում են անդադար, անհագ ու վրեժխնդիր չարությամբ: Չէ որ բացի հոտոտելիքից ու տեսողությունից, մի ուրիշ զգայություն էլ կա: Եթե մենք զգում ենք, որ նրանք այստեղ են, ապա նրանք մեզ տասնապատիկ ավելի սուր են զգում: Եվ մի բան էլ,— նա ձայնը ցածրացրեց,— նրանց ձգում է Մատանին:

— Մի՞թե ոչ մի փրկություն չկա,— սարսափած հետ նայելով, բացականչեց Ֆրոդոն: — Տեղիցդ շարժվես՝ կտեսնեն ու կբռնեն... Տեղումդ մնաս՝ հոտը կառնեն ու կգտնեն...

— Սպասիր, հուսահատվել պետք չէ,— ասաց Պանդուխտը՝ ձեռքը նրա ուսին դնելով: — Դու մենակ չես: Սկզբում օջախ վառենք. կրակը մեզ պահապան ու պաշտպան կլինի: Սաուրոնը կրակը իր ձեռքի տակ է պահում, նա ամեն ինչ իր ձեռքն է հավաքում՝ բայց Հեծյալներն առայժմ կրակից վախենում են, և կրակը մեր բարեկամն է:

— Լավ բարեկամ է,— մռթմռթաց Սամը: — Այ հիմա խարույկը կվառենք, ու՝ ուրեմն մենք էստեղ ենք, մենակ մնում է, որ գոռանք, թե էստեղ ենք, հանկարծ չլինի չնկատեն:

Լեռնագոգի խորքում, աչքից հեռու մի բացատ ընտրելով, նրանք խարույկ վառեցին ու հապշտապ ուտելիք պատրաստեցին: Երեկոյան ստվերները բարձրացան, ցուրտն ընկավ:

— Մեր մթերքը չի բավականացնի,— ասաց Ֆրոդոն: — Չնայած վերջին երկու օրը շատ խնայողաբար ենք կերել, թեպետ այսօրվա ընթրիքն էլ ճոխ չէր, բայց դե կերանք, մանավանդ, որ երկու շաբաթ ունենք, եթե ոչ ավելի:

— Անտառը կկերակրի,— հուսադրեց նրան Պանդուխտը: — Հատապտուղներ, արմատներ, մեկ էլ տեսար մի բան որսացի: Ձմեռ չէ, ուտելիք կգտնվի: Պինդ ձգեք գոտիներդ ու հույսներդ դրեք Էլրոնդի ապագա ճաշկերույթների վրա:

Մթնշաղը լցվում էր ահավոր մթությամբ: Սամն ու Մերին կծկվեցին, վեր կացան ու գնացին վառելիք բերելու: Կարծես թե խաղաղ ու լուռ էր, բայց Ֆրոդոյին հանկարծ սարսռեցնող վախ պատեց, և նա շուտափույթ տեղափոխվեց կրակին մոտիկ: Վերևներից վազելով եկավ Սամը:

— Կարծես թե ոչ ոք չկա,— ասաց նա,— բայց թե ես վախեցա: Այստեղից ոչ մի տեղ չեմ գնա: Ոնց որ գաղտագողի գալիս են...

— Դու որևէ մեկին տեսա՞ր,— հարցրեց Ֆրոդոն, ոտքի թռչելով:

— Ոչ, տեր իմ, ոչ ոքի չեմ տեսել, նույնիսկ չեմ էլ նայել:

— Իսկ ես ոնց որ տեսա,— ասաց Մերին: — Ինձ թվաց երկու կամ երեք ստվեր եմ տեսնում: Գոնե այս կողմը չսողային:

— Խարույկին մոտիկ, մեջքով կրակին,— հրամայեց Պանդուխտը: — Ավելի լավ է չոր ու երկար ճյուղեր ընտրեք:

Ձգուշավոր ու լուռ նստեցին՝ նայելով համր մթության մեջ: Ոչ մի շրշյուն: Ֆրոդոն ուզում էր ամբողջ ձայնով գոռալ՝ այդ կեղեքող լռությունից փրկվելու համար...

— Սո՛ւս,— շշնջաց Պանդուխտը, և այդ նույն պահին էլ Փինը խեղդվողի ձայնով բացականչեց.

— Այն ի՞նչ է, ի՞նչ է այնտեղ:

Նրանք ավելի շատ զգացին, քան տեսան, թե ինչպես լեռնագոգի եզրին ստվեր բուսնեց. մեկը, երկրորդը, երրորդը... Երեք, ոչ, արդեն չորս աղոտ կերպարանք քարացել էին նրանց վերևում,

ձորակի լանջին՝ սև, ասես մթության մեջ խոռոչներ լինեին: Օձի ֆշշոց լսվեց, գերեզմանային սառնություն փչեց: Ապա ստվերներն օրորվեցին ու սկսեցին մոտենալ:

Փինն ու Մերին սարսափահար փռվեցին խոտերին: Սամն անճարակ նստեց տիրոջ կողքին: Իսկ Ֆրոդոյին պատել էր անտանելի, սահմռկեցնող վախը... Եվ հանկարծ հասկացավ, որ հարկավոր է ընդամենը Մատանին հագնել: Նա դամբարանները չէր մոռացել, չէր մոռացել նաև Գանդալֆի նախազգուշացումները, բայց դիմադրելու ուժ չուներ: Լեզուն էլ պապանձվել էր: Սամը վախեցած նայում էր նրան. տերը վտանգի մեջ է և նրան ոչ մի կերպ չես օգնի, ոչ մի կերպ: Ֆրոդոն աչքերը փակեց ու փորձեց դիմադրել, հաղթահարել... Ոչ, ուժերից վեր է: Նա շղթան ձգեց, շոշափեց Մատանին և՝ դանդաղորեն հագավ ձախ ձեռքի ցուցամատին:

Ամեն ինչ մնաց նույնը, ինչպես որ կար աղոտ մառախուղում, միայն սև ստվերները հանկարծ մոտ եկան ու որոշակի դարձան: Նրա առջև ծառացան մոխրագույն թիկնոցներով հինգ բարձրահասակ զինվոր. երկուսը կանգնել էին բլրի կատարին, երեքը մոտենում էին: Նրանց փոս ընկած ակնախոռոչները փայլում էին սուր, դաժան նայվածքով, ճերմակ մազերին՝ արծաթե սաղավարտներ, ձեռքներին՝ պողպատե թրեր: Նրանք նորից քայլեցին դեպի առաջ, սառցե աչքերը նրա վրա սևեռելով: Ֆրոդոն իրեն կորցրած մերկացրեց դաշույնը՝ և դաշույնը բոսոր դարձավ, ասես շիկացած խանձող: Երկուսը քարացան: Երրորդը բոլորից բարձրահասակ էր, նրա սաղավարտը թագով էր պսակված: Մի ձեռքում երկար թուր ուներ պահած, մյուսում՝ դաշույն. շեղբերը մեռելային լույս էին արձակում: Նա նետվեց դեպի Ֆրոդոն:

Իսկ Ֆրոդոն ընկավ գետնին ու ինքն էլ չիմանալով, թե ինչու, հանկարծ գոռաց. «Ով, Էլբերեթ... Գիլթոնիել...» և դաշույնով հարվածեց մոտեցող թշնամու ոտքին: Կատաղի ոռնոցը սասանեց մթությունը, և սառցե մահաբեր շեղբը խրվեց Ֆրոդոյի ուսը: Գիտակցությունը կորցնելու պահին նա տեսավ, թե ինչպես մառախուղից դուրս նետվեց Պանդուխտը՝ երկու ջահ ձեռքին: Վերջին ճիգերով Ֆրոդոն Մատանին պոկեց մատից, դաշույնը ձեռքից ընկավ, ու նա երեսի վրա փռվեց գետնին:

Գլուխ տասներկու. Գետանցում

Երբ Ֆրոդոն ուշքի եկավ՝ Մատանին սեղմված ձեռքի մեջ էր: Նա պառկած էր պայծառ, բոցկլտացող խարույկի մոտ, իսկ նրա վրա խոնարհված էին Սամը, Փինը և Մերին:

—Ի՞նչ է պատահել... Ո՞ւր է այն գունատ թագավորը,— հազիվհազ ուշքի գալով, ասաց նա:

Նրան պատասխանող չեղավ՝ երեքի շունչն էլ ուրախությունից կտրվում էր, նույնիսկ հարցն էլ չհասկացան: Հետո Սամը պատմեց, որ տեսել է, թե ինչպես մոտեցան մռայլ ստվերներն, ու Ֆրոդով չքացավ, իսկ իր՝ Սամի ոտքերը գետնից կտրվեցին: Նա լսեց տիրոջ ձայնը՝ ոչ այն է հեռվից, ոչ այն է՝ գետնի տակից, իսկ բառերը տարօրինակ էին ու անհասկանալի: Հետո նրանք փնտրում էին ու դիպան Ֆրոդոյին. նա անշունչ ընկած էր բերանքսիվայր, թուրը տակին: Պանդուխտն իրենց կարգադրեց Ֆրոդոյին պառկեցնել կրակի մոտ, իսկ ինքն անհետացավ, և արդեն ահագին ժամանակ է չկա:

Սամն, ըստ երևույթին, նորից սկսեց կասկածել Պանդուխտին, և, երբ նա հայտնվեց, Ֆրոդոյին պատսպարեց՝ թուրը պատյանից հանելով: Բայց Պանդուխտը հանգիստ ու հոգնած նրա կողքին ծնկի եկավ:

— Ոչ, Սամ, ես Հեծյալ չեմ,— մեղմ ասաց նա,— և ոչ էլ նրանց կամակատարը: Ես ուզում էի իմանալ, թե ո՞ւր են նրանք պահ մտել և ինչո՞ւ: Նրանք պետք է, որ նորից հարձակվեին, այնինչ նահանջել են: Մոտակայքում նրանց հետքն էլ չկա:

Լսելով այն մասին, թե ինչ է պատահել Ֆրոդոյին, նա մտահոգ գլուխն օրորեց ու խոր հառաչեց: Հետո Մերիին ու Փինին կարգադրեց կաթսայիկներով ջուր եռացնել և վերքն անդադար լվանալ::

— Կրակն ավելացրեք, Ֆրոդոյին պետք է տաք պահել,— կարգադրեց նա, խարույկից հեռացավ ու Սամին կանչեց: — Հիմա որոշ բաներ պարզ են,— շշուկով ասաց նա: — Ինչպես երևում է, հարձակվող թշնամին միայն հինգ հոգի է եղել, երևում է, բոլորը չեն հավաքվել, դիմադրության չէին սպասում: Վախենում եմ, որ հեռու չեն գնացել և վաղը գիշերվա կողմ նորից կերևան: Նրանք շտապելու բան չունեն: Նրանց հաշվումներով գործը համարյա արված

է: Մատանին հեռու գնալ չի կարող: Այո, Սամ, քո տերը մահվան շեմին է, և քանի գնա, այնքան նրա իշխանության տակ կլինի: Գուցե և այդպես է, բայց... դեռ կտեսնենք, թե ով ում...

Արցունքները խեղդեցին Սամին:

— Մի հուսահատվիր,— ասաց Պանդուխտը,— և հույսդ ինձ վրա դիր: Ֆրոդոն ավելի դիմացկուն դուրս եկավ, քան ես կարծում էի. ճիշտ է, Գանդալֆն էլ հենց դա էր ակնարկում: Հրաշք է, որ նա չի սպանվել և, երևակայիր, ավելի երկար կդիմանա, քան նրանք են կարծում: Իսկ ես կաշխատեմ մի քիչ բուժել նրան: Տաք պահեք և հսկեք, եթե որևէ բան կլինի, ինչքան ուժներդ կպատի, գոռացեք ու չորս կողմը կրակ տվեք: Ես շուտով կգամ:

Այս խոսքերով նա սուզվեց մթության մեջ:

Ֆրոդոն քնում էր ու սուր ցավերից վեր թռչում: Աստիճանաբար թմրում էր ուսը, ձեռքը, ամբողջ կողքը: Բարեկամներն անդադրում լվանում էին վերքն ու աշխատում տաքացնել նրան: Վաղորդյան մոխրագույն լույսն արդեն ողողել էր ձորակը, երբ վերջապես Պանդուխտը վերադարձավ:

— Հապա մի նայե՛ք,— բացականչեց նա, գետնից բարձրացնելով մինչ այդ չնկատված սև թիկնոցը: — Մեր Ֆրոդոյի հարվածն է... Պանդուխտը նորից կռացավ և բարձրացրեց երկար, նեղ, լուսաբացի մառախուղի մեջ փայլող դաշույնը: Ատամնավոր շեղբի ծայրը կոտրված էր, և դաշույնը աչքի առաջ ցնդեց թափանցիկ ծխի պես, միայն կոթը մնաց: — Գործերը վատ են... — նկատեց Պանդուխտը: — Հիմա այդպիսի վերքեր բուժողներ համարյա չկան: Կանեմ ինչ կարող եմ, բայց քիչ բան կարող եմ:

Նա նայեց գետնին, սև կոթը դրեց ծնկներին և դանդաղ, հոբիթների համար անհասկանալի մի երգ երգելով, սկսեց հմայել: Հետո կոթը դրեց մի կողմ, թեքվեց Ֆրոդոյի կողմը և, գոտուն կապած պայուսակից երկար տերևներ հանելով ականջին ինչ-որ տարօրինակ բառեր ասաց:

— Սա բալասան է,— բացականչեց նա,— կամ, ինչպես անվանում էին հնում՝ ացելաս է: Այս քարքարոտ ձորակում չի աճում, ես սա հոտով գտել եմ այստեղից շատ հեռու, Ուղուց հարավ ընկած թավուտում: Հյուսիսում քչերը գիտեն բալասանի մասին, թերևս մի քիչ հետքագետները: Զարմանալի բույս է, բայց եթե նույնիսկ օգնի, ապա ոչ երկար ժամանակով...

Նա տերևները խաշեց ու սուր, բուրավետ եփուկով լվաց Ֆրոդոյի ուսի վերքը: Ցավը մի քիչ հանգստացավ, բայց սառած, կախ ընկած թևն ասես փայտացել էր, կպել կողքից, ու Ֆրոդոն սկսեց հանդիմանել ինքն իրեն, որ թշնամու հրամանով հագավ մատանին: «Հատուցեցի, լավ,— մտածում էր նա,— ամբողջ կյանքում հաշմանդամ կմնամ, իսկ հիմա ի՞նչ անեմ... ախր շարժվելու ուժ չկա»:

Մինչդեռ քննարկվում էր հենց այդ հարցը՝ ի՞նչ անել հետո: Որոշված էր անհապաղ հեռանալ Զավերտից:

— Հավանաբար,— ասաց Պանդուխտը,— այս վայրը վաղուց արդեն թշնամու աչքի տակ է: Եթե նույնիսկ Գանդալֆը եղել է այստեղ, ապա եղել է ու գնացել՝ թշնամու հարձակումը հետ մղելուց հետո: Մի գիշեր էլ որ մնանք՝ կորած ենք: Ամեն տեղ լավ է, բացի այստեղից:

Ծածուկ ու զգուշավոր նրանք շրջանցեցին Զավերտի հարավ-արևմտյան լանջը, հասան Ուղուն, վազելով հատեցին այն, և նրանց գլխավերևում իրար կանչեցին երկու մռայլ ձայն: Նրանք հապշտապ մտան խիտ թփուտը: Սկսվեց տաղտկալի, երկարատև ու դժվար երթ անճանապարհ վայրերով: Երեկոյան հոբիթները հազիվ էին ոտքի վրա կանգնում: Ֆրոդոն, որ գնում էր պոնիին հեծած, տխուր զննում էր ընկերներին. նույնիսկ Պանդուխտը հոգնած ու մռայլ էր երևում:

Ուսը լցվում էր սուր ցավերով, բայց Ֆրոդոն ատամները սեղմած դիմանում էր՝ տրտնջալ չէր կարելի: Մեկը մյուսի հետևից չորս ծանր օր անցան: Զավերտը մնում էր հետևում, իսկ հեռավոր բլուրները մոտենում էին: Ուղու մոտ չարագուշակ ճիչեր արձակելուց հետո թշնամիները չէին երևում, ասես չքացել էին: Գիշերները ճամփորդները զույգ-զույգ պահակություն էին անում, դողալով սպասելով, որ ուր որ է սև կետերը կճեղքեն լուսնի կաթնագույն մառախուղը: Բայց ոչ ոք չկար, և միայն թոշնած խոտի չոր շրշյունն էր լսվում: Սակայն չարը թաքնված էր ինչ-որ տեղ մոտակայքում, նրանք զգում էին այդ: Հազիվ թե Հեծյալները հետքը կորցրած լինեին: Անկասկած դարան մտած սպասում են, նոր ծուղակ պատրաստում:

Յոթերորդ օրը առավոտ վաղ ճամփորդները ստիպված եղան նորից վերադառնալ ճանապարհ, գետամերձ ճահճապատ հարթավայրով անցնել հնարավոր չէր: Պանդուխտն ու Սամը հետախուզության դուրս եկան՝ ոչ մի շունչ: Ճանապարհն ամայի էր, ձիերի հետքեր էլ չկային, երկու օր առաջ այստեղ անձրև էր եկել, գուցե հետքերը ողողել է, իսկ դրանից հետո նրանք չեն անցել այստեղով: Ճամփորդները քայլերն արագացրին և, վերջապես հեռվում, սարի տակ, երևաց Վերջին Կամուրջը: Մեկ էլ տեսար սև կերպարանքները հայտնվեցին: Բայց ոչ, Կամուրջը կարծես թե ազատ էր: Պանդուխտը նրանց պատվիրեց թաքնվել թփերի մեջ, իսկ ինքը առաջ գնաց՝ ու շուտով էլ հետ եկավ:

— Կամրջի մոտ թշնամիներ չկան ու չեն էլ եղել,— ասաց նա: — Կուզեի իմանալ, թե ո՞ւր են կորել նրանք: Փոխարենը տեսե՛ք, թե ինչ եմ գտել: — Նա պարզեց ձեռքը, որի ափում բաց կանաչ քար կար: — Ընկած էր ճանապարհի մեջտեղում, ցեխի մեջ,— բացատրեց նա: — Սա էլֆական բյուրեղ է: Միայն թե չգիտեմ՝ դրվա՞ծ է, թե մեկի մոտից է ընկել, բայց միևնույն է, հուսադրում է: Այնպես որ եկեք չվախենանք, անցնենք Կամրջով, իսկ հետո... հետո կտեսնենք, բայց ճանապարհով չենք գնա. բյուրեղն ինչ էլ որ նշանակի, անվտանգություն չի խոստանում:

Կամուրջն անցան արագ ու բարեհաջող: Լռություն էր տիրում, միայն ջուրն էր խոխոջում երեք հսկայական կամարների տակ: Մի կես լիգ անցնելուց հետո Պանդուխտը թեքվեց ձախ՝ նեղ ձորահովիտն ու քայլեց բլուրների ստորոտի նոսր անտառում հազիվ նկատելի արահետով: Հոբիթները առաջ էին շարժվում մթնշաղոտ ծառերի արանքով և ուրախանում էին, որ տաղտկալի հարթավայրն ու սարսափելի Ուղին մնացել էին հետևում. թեպետ այստեղ էլ տեղանքը վայրի էր, խուլ, չարագույժ: Լեռների ելուստների վրա ու գագաթներին երևում էին հինավուրց պարիսպների, աշտարակների ավերակներ՝ դրանք ասես ինչ-որ անհասկանալի սպառնալիք էին թաքցնում իրենց մեջ: Ֆրոդոն հիշեց Բիլբոյի գրքում եղած նկարագրությունները՝ չլինի արդեն այդ մռայլ վայրերում են, Թրոլների երկրում...

— Ո՞վ է ապրում այստեղ,— հարցրեց նա: — Եվ ո՞վ է կառուցել այս աշտարակները: Դա ի՞նչ է, Թրոլյան սարահա՞ղթն է:

— Այո, ասաց Պանդուխտը: — Միայն թե նրանք չեն կառուցել: Թրոլները կառուցել չգիտեն: Այստեղ ոչ ոք չի ապրում, մարդիկ էին ապրում, հիմա նրանք չկան: Ասում են, նրանց ստրկացրել է Անգմարի կախարդ-արքան, և նրանք հանձնվել են չարին, իսկ Մեծ Պատերազմի ժամանակ կործանվել են իրենց տիրակալի հետ միասին: Նրանց նույնիսկ լեռներն են վաղուց մոռացել, իսկ չարագործության ստվերը, տեսնո՞ւմ եք, չի վերացել:

— Իսկ դու որտեղի՞ց գիտես այդ բոլորը, եթե մարդիկ վաղուց չկան,— հարցրեց Փինը: — Եթե նույնիսկ լեռներն են մոռացել, հո գազաններն ու թռչուններն այդպիսի բան չեն պատմի:

— Էլենդիլի ժառանգները պահպանում են հիշողությունները եղելությունների մասին,— պատասխանեց Պանդուխտը,— Ազատքում էլ շատ բան են հիշում:

— Իսկ դու Ազատքում հաճա՞խ էիր լինում,— հետաքրքրվեց Ֆրոդոն:

— Լինում էի,— արձագանքեց Պանդուխտը: — Մի ժամանակ այնտեղ եմ ապրել ու ամեն անգամ առիթ ներկայանալիս՝ վերադառնում եմ: Բայց, երևում է, բախտ չի վիճակված այնտեղ մնալ:

Երեք օր նրանք անձրևի տակ մագլցում էին քարքարոտ լանջերով: Ֆրոդոն ստիպված էր իջնել ձիուց և շուտով ուժասպառ եղավ: նրա ձախ ձեռքը անկյանք կախված էր մարմնի երկայնքով: Սուր ցավի ճիրանները սեղմում էին կուրծքն ու ուսը: Ծառերն ու քարերը աղոտ ստվերներ էին երևում աչքին:

— Այլևս չի կարելի գնալ,— Պանդուխտին ասաց Մերին: — Ֆրոդոն ոտքի վրա կանգնել չի կարողանում: Շատ եմ վախենում նրա համար: Ի՞նչ ես կարծում Ազատքում կարո՞ղ են նրան բուժել, եթե մենք հասնենք այնտեղ:

— Կտեսնենք,— պատասխանեց Պանդուխտը: — Ես ոչինչ ավելի անել չեմ կարող: Նրա վերքի պատճառով եմ ձեզ այսպես վազքով տանում: բայց այսօր, ճիշտ է, շարունակել չի կարելի:

— Իսկ ի՞նչ է կատարվում տիրոջ հետ,— ցածր հարցրեց Սամը, աղաչական հայացքով Պանդուխտին նայելով: Վերքը մի պստլիկ էր և արդեն կպել է, միայն սպիտակ սպի է մնացել ուսին:

— Ֆրոդոյին թշնամու զենքն է կպել,— ասաց Պանդուխտը,— թունավոր, կործանիչ, կախարդված զենքը: Այդ սև հմայանքն իմ ուժերից դուրս է: Ուրիշ ի՞նչ կարող եմ ասել քեզ: Դիմացիր, Սամ:

Բացվում էր ցուրտ ու պայծառ, թեպետ և անարև առավոտը: Նրանք գիշերել էին բարձր ժայռի վրա, և հիմա Պանդուխտը կարող էր ինչպես հարկն է դիտել շրջապատը:

— Շատ հեռու և ձախ ենք գնացել,— ասաց նա,— և չենք էլ կարողանա անցնել, չորս կողմը փլվածքներ են: Հարկավոր է գնալ ներքև, դեպի Ուղին, որն այնքան էլ հեռու չէ: Այլապես մենք մի շաբաթվա ընթացքում էլ չենք հասնի Գետանցումին, իսկ այդ շաբաթը չունենք:

... Ուղի դուրս եկան երեկոյան կողմ: Այն առաջվա պես դատարկ էր, ու հոբիթները վազում էին, որքան ոտքներում ուժ ունեին: Պոնին աշխուժորեն առաջ էր վարգում, ասես հեծյալին չէր էլ զգում: Ցածրացած արևը շուտով ծածկվեց բլուրների հետևում, և փչեց սառը քամին: Նրանք արդեն տեղ էին որոնում գիշերելու համար, երբ հեռվից լսվեց զզվելի, հստակ ու վաղուց սպասվող սմբակների դոփյունը: Բոլորը միանգամից հետ նայեցին, բայց իզուր. ճանապարհը հենց նոր էր կտրուկ ոլորան արել: Նրանք նետվեցին մի կողմ, լանջն ի վեր և թաքնվեցին ընկուզենու թավուտում: Ուղին երևում էր ներքևում՝ մթնշաղում պղտոր-մոխրագույն էր: Սմբակները դոփում էին ավելի ու ավելի մոտիկ, հստակ ու հատ-հատ, լսվեց բոժոժների զնգզնգոցը:

— Ինչ-որ նման չէ Սև Հեծյալներին,— ասաց Ֆրոդոն, ականջ դնելով:

Հոբիթները համաձայնեցին՝ նման չէ, բայց բազմօրյա հետապնդումից հետո ամեն մի ձայն վտանգավոր ու սպառնալից էր թվում: Սակայն Պանդուխտն առաջ մղվեց, ձեռքի ափերը դրեց ականջի մոտ ու պայծառացավ:

Մթնում էր, թփերը մեղմ խշշում էին: Իսկ բոժոժներն ավելի ու ավելի հնչեղ էին տարածվում, սմբակների ձայնը մոտենում էր: Եվ հանկարծ ոլորանից սրընթաց դուրս թռավ մի սպիտակ ձի, շողշողալով մթնշաղում ինչպես մի ճերմակ թռչուն: Սանձը հուրհրում էր կիսաթանկարժեք քարերով, որ աստղերի կրակների էին նման: Հեծյալի թիկունքում ծածանվում էր թիկնոցը, կնգուղը հետ էր ընկած, և քամին խաղում էր ոսկեգույն մազերի հետ:

Ֆրոդոյին թվաց, թե հեծյալը արծաթավուն լույս է ճառագում:

Պանդուխտը դուրս թռավ թփուտից և ուրախ բացականչություններով նետվեց դեպի Ուղին, բայց ավելի շուտ, քան նա դուրս թռավ ու ճչաց, հեծյալը հայացքը բարձրացրեց ու զսպեց ձիուն: Պանդուխտին տեսնելով նա ձիուց իջավ ու վազեց ընդառաջ:

— *Ամ նա վեդուն Դունադան... Մաէ գվերիննիէն*,— բացականչեց նա: Անծանոթի և խոսքը և ջինջ ձայնը կասկածի տեղ չէին թողնում. նրանց առջև էլֆ էր: Բայց նրա ձայնում տագնապ էր հնչում, նա Պանդուխտի հետ խոսում էր արագ ու մտահոգ: Հետո Պանդուխտը ձեռքով կանչեց նրանց, հոբիթները թաքստոցից դուրս եկան ու շտապեցին ներքև, դեպի ճանապարհը:

— Սա Փառքաշատն է, Էլրոնդի դղյակից,— ասաց Պանդուխտը:

— Ողջույն քեզ, երկար սպասված հյուր... — դիմեց Ֆրոդոյին էլֆ ռազմիկը,— ինձ ուղարկել են քեզ դիմավորելու, մենք քեզ համար անհանգստանում էինք:

— Ուրեմն Գանդալֆը Ազատքո՞ւմ է,— ճչաց Ֆրոդոն:

— Երբ ես մեկնում էի, նա դեռ այնտեղ չէր,— պատասխանեց Փառքաշատը,— բայց ես մեկնել եմ ինը օր առաջ: Էլրոնդին վատ լուրեր էին հասել. իմ ազգականները ձեր կողմերով անցնելիս իմացել են և իսկույն մեզ տեղյակ պահել, որ Ինը Մատանեկիրները շրջում են արևմտյան հողերում, իսկ դուք վտանգավոր ճանապարհ եք դուրս եկել առանց ուղեկցողի, չսպասելով Գանդալֆին: Նույնիսկ մեզ մոտ, Ազատքում, շատ քչերի ուժը կպատի դիմակայել Ինևին երես առ երես: Բայց Էլրոնդը, այնուամենայնիվ, հավաքեց ու սուրհանդակներ ուղարկեց հյուսիս, արևմուտք ու հարավ՝ չէ՞ որ դուք հետապնդումից խուսափելով կարող էիք թավուտներում մոլորվել: Ես պետք է հսկեի Ուղին. յոթ օր առաջ հասա Միթեյթիլի (Դիվոտի) կամրջին և ձեզ համար նշան թողեցի՝ մի բյուրեղ: Կամրջի հետևում թաքնվել էին Սաուրոնի երեք կամակատար: Ինձ տեսնելով, նրանք նահանջեցին և գնացին արևմուտք: Հետո ևս երկուսը հանդիպեցին՝ սրանք շրջվեցին հարավ: Այն ժամանակ ես սկսեցի որոնել ձեր հետքերը, գտա

երկու օր առաջ, իսկ այսօր նշմարեցի, թե որտեղ եք իջել սարից: Սակայն բավական է, հիմա պատմությունների ժամանակը չէ: Դուք ստիպված կլինեք դիմանալ բաց ճանապարհի վտանգավորությանը՝ երեկոյան և գիշերը: Մեզ հետևում են հինգը: Եթե նրանք գտնեն ձեր հետքը, քամուց արագ կսուրան: Թե ուր են մնացածները, չգիտեմ, պետք է որ ծանծաղուտը հսկելուց լինեն: Այդ մասին ավելի լավ է հիմա չմտածենք:

Այդ ընթացքում իրիկնային ստվերները թանձրացան, և Ֆրոդոյին մի անհաղթահարելի հոգնածություն պատեց: Դեռ մայրամուտից առաջ նրա աչքերի առջև մթնում էր. հիմա ընկերների դեմքերը համարյա չէին երևում: Ցավից ամբողջ մարմնով սարսռում էր: Օրորվելով, նա ընկավ Սամի ուսին:

— իմ տերը վիրավոր է, վիճակը վատ է,— զայրույթով ասաց Սամը: — Եթե նա չհանգստանա, չի կարող ճանապարհը շարունակել:

Փառքաշատը պահեց ընկնող Ֆրոդոյին, գրկեց նրան ու տագնապահար նայեց դեմքին:

Պանդուխտը համառոտ պատմեց Զավերտի գագաթին տեղի ունեցած գրոհի, մահաբեր դաշույնի մասին: Կոթը նա պահել էր, ու հիմա հանեց ու մեկնեց էլֆին: Վերջինս զզվանքով այն վերցրեց ձեռքը, բայց ուշադիր զննեց:

— Այս կոթի վրա չարագործների լեզվով բառեր են գրված,— ասաց նա,— թեպետ դրանք դուք չեք տեսնում: Պահիր սա, Արագորն, Էլրոնդի մոտ պետք կգա: Միայն թե խորը թաքցրու և ձեռք մի տուր: Ոչ, այսպիսի վերքը ես բուժել չեմ կարող: Գուցե ցավը կմեղմեմ... Բայց հանգստանալ մեզ ոչ մի կերպ չի կարելի:

Զգայուն մատներով նա շոշափեց Ֆրոդոյի ուսը և դեմքը խոժոռեց: Իսկ Ֆրոդոն հանկարծ զգաց, որ կաշկանդող սառնությունը ասես ճիրանները բաց թողեց, թևը մի քիչ տաքացավ ու ցավը կարծես հանգստացավ: Աչքերի առջևի վարագույրն անհետացավ: Ֆրոդոն նորից տեսավ ընկերներին, և դրանից ասես ուժ ու հույս ստացավ:

— Իմ ձիով կգնաս,— ասաց Փառքաշատը: — Ասպանդակները կձգեմ, իսկ դու պինդ պահիր քեզ: Ի դեպ, չվախենաս, եթե նույնիսկ ընկնես, իմ ձին քեզ չի թողնի ընկած: Ձին թեթև վարգում է և վտանգից հեռու կտանի՝ նույնիսկ թշնամու նժույգները նրա համար մրցակից չեն:

— Չեմ գնա,— վճռական հայտարարեց Ֆրոդոն: — Ես, ուրեմն, թաքնվեմ էլֆերի մոտ ու ընկերներիս թողնեմ վտանգի մեջ... Ոչ մի դեպքում:

— Առանց քեզ նրանց ոչ մի վտանգ չի սպառնում,— ժպտաց Փառքաշատը,— քեզ են հետապնդում, ոչ թե նրանց: Դու և քո բեռը՝ ահա գլխավոր վտանգը քո բարեկամների համար:

Դա իրոք այդպես էր, և Ֆրոդոն համաձայնեց նստել սպիտակ ձին: Փոխարենը՝ պարկերը բարձեցին պոնիին և արագ քայլեցին, թեպետ էլֆի հետևից երբեք չես հասնի... Նա առաջ էր տանում հոբիթներին. սկզբում՝ երեկոյան դժգույն մթնշաղով, հետո՝ անձրևային գիշերվա մթության միջով. ոչ աստղ կար, ոչ լուսին: Փառքաշատը կանգ առավ առավոտյան: Փինը, Մերին ու Սամը հազիվ էին ոտքի վրա կանգնում, նույնիսկ Պանդուխտն էլ էր ինչ-որ կուզիկացել, Ֆրոդոն կպել էր ձիու պարանոցին՝ ծանր քուն էր մտել:

Նրանք Ուղուց իջան հավամրգու մացառուտը, ընկան գետնին ու տեղնուտեղը քնեցին: Սակայն, ինչպես նրանց թվաց, պահակության կանգնած Փառքաշատը իսկույն էլ արթնացրեց իրենց: Առավոտյան արևը խփում էր ուղիղ աչքերի մեջ, պղտոր մեգը ցրվել էր:

— Հապա մի խմե՛ք,— ասաց Փառքաշատը իր արծաթե տափաշշից նրանց գավաթների մեջ ինչ-որ հեղուկ լցնելով:

Նրանք մեկը մյուսի հետևից խմեցին՝ ջո՞ւր էր, թե ջուր չէր, ոչ տաք էր, ոչ սառը, անհամ, բայց մարմնով մեկ ուժ էր հորդում և աշխուժություն ներարկում: Դրանից հետո կերած խնձորի չիրն ու հնացած հացը քաղցն ավելի հագեցրին:

Ճամփորդները քնեցին հինգ ժամից պակաս, իսկ հետո գնում էին Ուղու անվերջանալի ժապավենով: Գլորֆինելը միայն երկու անգամ թույլ տվեց նրանց հանգստանալ: Երեկոյան կողմ նրանք հաղթահարել էին համարյա քսան լիգ: Ճանապարհը թեքվում էր աջ, դեպի

Բրուիկենյան ծանծաղուտները. Փառքաշատը հաճախ էր նայում հետ ու ավելի էր տագնապում: Երկու անգամ Պանդուխտի հետ խոսեց Էլֆերեն:

Հոբիթներն արդեն ուժասպառ էին եղել: Նրանք օրորվում էին ու սայթաքում՝ երազելով միայն հանգստի մասին: Ֆրոդոյի ցավն ավելի էր ուժգնացել:

Հաջորդ առավոտյան, լուսաբացից առաջ, հոբիթներն առաջ էին գնում քնատ ու հոգնած: Իսկ Գետանցումը դեռ հեռու էր, և նրանք մի կերպ իրենց պահելով, որ չընկնեն, ինչ-որ հրաշքով հասնում էին ուղեկցի հետևից:

— Գնում ենք գլխավոր վտանգին ընդառաջ,— ասաց Փառքաշատը,— սիրտս զգում է, որ կրնկակոխ հետապնդում են մեզ, իսկ Գետանցման մոտ դարան են մտել:

Լեռան ստորոտ էին իջնում խոտածածկ լանջերով, և հոբիթները քայլում էին խոտի վրայով, որպեսզի ոտքերը հանգստանան: Երեկոյան երկու կողմից սոճուտ սկսվեց, իսկ հետո ճանապարհը մտավ կիրճը, գրանիտե ուղղաձիգ ժայռերի արանքը: Արձագանքը հետևում էր ճամփորդներին: Հետո ճանապարհը նեղ կիրճից դուրս թռավ բաց տարածք. նրանց առջև փռված էր դեպի ծանծաղուտ իջնող թեք վայրեջքը, իսկ մյուս ափին արահետը գալարվում էր վեր, դեպի հսկա լեռները:

Փառքաշատը շրջվեց, ականջ դրեց ու սրընթաց նետվեց դեպի ճամփորդները:

— Արա՛գ,— ճչաց նա Ֆրոդոյին,— թշնամին այստեղ է:

Սպիտակ ձին առաջ սուրաց. հոբիթները լանջով ներքև վազեցին, Փառքաշատն ու Պանդուխտը՝ նրանց հետևից: Կիրճից դուրս եկան երեք Սև Հեծյալ:

— Առա՛ջ սլացիր,— նորից գոռաց Փառքաշատը:

Բայց Ֆրոդոյին տարօրինակ թուլություն էր պատել: Ձին քայլքի անցավ, և նա շրջվեց: Հեծյալները սև արձանների պես կանգնած էին բլրի գագաթին: Հանկարծ հոբիթի մեջ վախ ու ցասում արթնացավ: Նա ձեռքից բաց թողեց սանձն ու թուրը մերկացրեց:

— Առա՛ջ, վարգի՛ր, ասում եմ,— գոռաց Փառքաշատն ու Էլֆերեն հրամայեց ձիուն. «*Նորո լի՛մ, նորո լի՛մ, Ասֆալո՛թ...*»: Ձին սուրաց: Այդ նույն պահին բլրից սլացան սև ձիերը: Ֆրոդոն սահմռկեցուցիչ ոռնոց լսեց, այն նույն ոռնոցը, որ վերջերս տարածվում էր Հոբիթստանի Հարավային նահանգում: Պատասխան ոռնոցը չուշացավ, իսկ ժայռերի ու ծառերի հետևից հայտնվեցին ևս չորս Հեծյալ. երկուսը սլացան դեպի Ֆրոդոն, իսկ մյուս երկուսը ճանապարհը կտրելով՝ դեպի Գետանցում:

Ֆրոդոն հետ նայեց՝ ընկերներն արդեն չէին երևում: Հեծյալները հետ էին մնացել. սև ձիերը չէին կարողանում մրցել ճերմակ նժույգի հետ: Բայց հետո նա նայեց առաջ և վերջին հույսն էլ կորցրեց. իրեն կբռնեն: Հիմա նա Հեծյալներին հստակ տեսնում էր. թրերն առկայծում էին ոսկրոտ ձեռքերում, աչքերը պսպղում էին սաղավարտների տակից, իսկ ոռնոցը չէր դադարում:

Ֆրոդոն մեկ անգամ էլ հետ նայեց՝ ընկերներն արդեն չէին երևում: Հեծյալները մի քիչ հետ էին մնացել, նույնիսկ նրանց սև նժույգները չէին կարողանում մրցել Փառքաշատի ճերմակ ձիու հետ: Բայց հետո նա նայեց առաջ և վերջին հույսն էլ կորցրեց: Ինքը Գետանցումին չի հասնի, այն երկուսը իրեն կբռնեն:

Սարսափը պատեց Ֆրոդոյին: Նորից նրան խոցեց մահացու սառնությունը, բայց էլֆական ձին ծառացավ ու սլացավ դեպի գետը՝ ուղիղ առաջապահ Հեծյալի քթի տակով:

Ջուրը ճողփաց, փրփրեց ոտքերի մոտ, հետո ասես մեկը նրան բարձրացրեց, և նա աչքերը բացեց: Ձին բարձրանում էր քարքարոտ արահետով, Ծանծաղուտը հեռու էր մնացել:

Հետապնդողները հետ չէին մնում: Ձառիկող լանջին Ֆրոդոյի ձին կանգ առավ: Մյուս ափին, ջրի մոտ սև շարքով կանգնած էին Ինը Հեծյալը, և Ֆրոդոյին հուսահատություն տիրեց: Վայրկենապես գետը կանցնեն, ինքը չի փրկվի: Եվ սարսափելիորեն հստակ հնչեց լռին հրամանը՝ տեղիցդ չշարժվես: Դիմադրելու ոչ մի ուժ չկար:

Առաջին Հեծյալը ձին քշեց՝ այն վախեցած ծառացավ ջրի մոտ: Անհավատալի ճիգով Ֆրոդոն մեջքն ուղղեց ու թուրը բարձրացրեց.

— Հեռացե՛ք,— գոռաց նա սուր ու զրնգուն ձայնով: — Հեռացե՛ք ձեր Մորդորը, ես ձեզ չե՞մ հանձնվի՛...

Հեծյալները կանգ առան ու չարախինդ քրքջացին.

— Արի՛ այստեղ, արի՛ այստեղ... — խմբով կանչեցին նրանք: — Մերն ես դու, քո տեղը Մորդորն է...

— Հեռացե՛ք,— կիսաձայն կրկնեց Ֆրոդոն:

— Մատանի՛ն, տուր Մատանի՛ն,— պատասխանեցին անդրշիրիմյան ձայները:

— Էլբերեթի և հրաշագեղ Լութիենի անունով եմ երդվում,— ասաց Ֆրոդոն թուրը բարձրացնելով,— մատանին չե՛ք ստանա: Ես էլ ձերը չեմ:

Պարագլուխն արդեն գետի մեջտեղում էր: Նա կանգնեց ասպանդակների վրա, ձեռքն ահեղ բարձրացրեց ու՝ Ֆրոդոն քարացավ, թուրը կոտրվեց ու դողացող ձեռքից վայր ընկավ:

Էլֆական ձին խռխռոցով ծառացավ. թվում էր, առաջին Հեծյալը ուր որ է կհասնի ափ:

Հանկարծ խլացուցիչ դղրդոց լսվեց: Հորդացող հորձանքը դղրդացող գլաքարեր էր բերում: Գետը բարձրացավ ու փոթորկվող ալիքները սառս եղան: Ֆրոդոյի աչքին ճերմակ հեծյալներ, ճերմակ նժույգներ, շքեղ բաշեր երևացին: Ջրի զանգվածը փլվեց երեք Սևերի վրա ու տապալեց նրանց: Մնացած վեցը ընկրկեցին:

ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ

Գլուխ առաջին. Անսպասելի հանդիպումներ

Ֆրոդոն արթնացավ, բաց արեց աչքերն ու իսկույն հասկացավ, որ մահճակալի վրա է պառկած: Սկզբում մտածեց, որ արթնացել է երկար ու տհաճ երազից հետո. նա հիմա էլ դեռ լրիվ ուշքի չէր եկել: Այսպես, ուրեմն նա տանն է, և ճանապարհորդությունը երազո՞ւմ է տեսել: Կամ, գուցե, նա երկար ժամանակ հիվանդ է եղել: Բայց նրա վերևում անսովոր ու տարօրինակ առաստաղ էր. բարձր, տափակ, վարպետորեն փորագրանախշված գերաններով: Ֆրոդոն բոլորովին չէր ուզում վեր կենալ. փափուկ անկողնում հանգիստ պառկած, նա դիտում էր պատերին ընկած արևի ցոլքերը և լսում հեռավոր ջրվեժի աղմուկը:

— Այս որտե՞ղ եմ... Հիմա ժամը քանի՞սն է,— բարձրաձայն հարցրեց նա, առաստաղին նայելով:

— Էլրոնդի դղյակում,— լսվեց պատասխանը: — Իսկ հիմա մեզ մոտ առավոտ է, ժամը տասը: Հոկտեմբերի քսանչորսի առավոտը, եթե դու այդ էլ ես ուզում իմանալ:

— Գանդա՛լֆ,— տեղից քիչ բարձրանալով, բացականչեց Ֆրոդոն:

Այդպես էլ կար. բաց պատուհանի մոտ, հարմարավետ բազկաթոռում նստած էր հրաշագործը:

— Այո՛, ես այստեղ եմ,— արձագանքեց նա: — Բայց ամենազարմանալին այն է, որ դու նույնպես այստեղ ես՝ ճանապարհին քո արած բոլոր անհեթեթ հիմարություններից հետո:

Ֆրոդոն լռեց ու նորից պառկեց: Նա չափազանց հարմարավետ ու խաղաղ էր զգում իրեն և տրամադրություն չուներ վիճելու, իսկ ամենագլխավորը՝ քաջ գիտեր, որ Գանդալֆին վեճի մեջ հաղթել չի կարող: Նա վերջնականապես արթնացավ և աստիճանաբար վերհիշեց ճանապարհորդության ահավոր փուլերը: Կարճ ճանապարհը Հավերժական Անտառով, փախուստը «Սիգարշավող պոնի» պանդոկից և իր խելահեղ արարքը, երբ Ձավերտի լեռնագոգում մատին հագավ Մատանին: Մինչ նա խորհում էր այդ բոլոր իրադարձությունների մասին և ճգնում էր, սակայն ապարդյուն, հիշել, թե ինչպես է ընկել այստեղ՝ Ազատք, Գանդալֆը լռելյայն փստացնում էր ծխամորճը, պատուհանից դուրս փչելով ծխի քուլաները:

— Իսկ ո՞ւր է Սամը,— դադարից հետո հարցրեց Ֆրոդոն: — Եվ մյուսները... նրանց հո բան չի՞ պատահել...

— Հանգստացիր, նրանք բոլորը ողջ առողջ են,— պատուհանից շրջվելով, պատասխանեց Գանդալֆը: — Իսկ Սամը հերթապահում էր քո մահճի մոտ, մինչև ես չքշեցի նրան հանգստանալու: Կես ժամա առաջ նա գնաց քնելու:

— Բայց ի՞նչ տեղի ունեցավ Գետանցումի մոտ,— զգուշորեն Գանդալֆին հարցրեց Ֆրոդոն: — Երբ մենք թաքնվելով գնում էինք դեպի Ազատք, աշխարհն ինձ ինչ-որ տեսիլքային էր թվում, իսկ հիմա համարյա ոչինչ չեմ հիշում:

— Չէ, չէ՛ մի... Դու ախր արդեն կերպարանափոխվում էիր, ուրվական էիր դառնում՝ ուսիդ վերքի պատճառով: Այդ վերքը քիչ էր մնում քո վերջը տար: Մի երկու ժամ էլ ուշ հայտնվեիր Գետանցումի մոտ, քեզ արդեն ոչ ոք փրկել չէր կարողանա: Եվ այնուամենայնիվ դու զարմանալի դիմացկուն դուրս եկար՝ փա՛ռք ու պատի՛վ քեզ, իմ թանկագին հոբի՛թ... Գերեզմանոցում դու քեզ ուղղակի քաջի պես ես պահել: Ափսոս, որ Ձավերտի մոտ ենթարկվել ես թշնամուն:

— Ես տեսնում եմ, որ քեզ շատ բան է հայտնի: — Ֆրոդոն զարմացած նայեց Գանդալֆին: — Գերեզմանոցի մասին դեռ ոչ ոքի չեմ պատմել, սկզբում վախենում էի դրա մասին հիշել, իսկ հետո մենք բոլորս պատմություններով զբաղվելու ժամանակ չունեինք: Եվ հանկարծ, պարզվում է, որ դու ամեն ինչ գիտես...

— Դու քնիդ մեջ խոսում էիր,— բացատրեց նրան Գանդալֆը,— ես էլ առանց դժվարության հետազոտեցի քո հիշողությունը: Դրա փոխարեն դու հիմա անհանգստանալու ոչինչ չունես: Դուք ձեզ հրաշալի եք պահել. և՛ դու, և՛ քո բարեկամները՝ չնայած երբեմն այնքան էլ խելամիտ չեք եղել: Բայց դուք բավականին խիզախություն եք ցուցաբերել, ձեռնարկելով այդ հեռավոր ու վտանգավոր ճանապարհորդությունը Մատանիով, որը քեզնից խլելու համար ոտքի է ելել Թշնամին:

— Առանց Պանդուխտի մենք այստեղ չէինք հասնի,— խոստովանեց Ֆրոդոն: — Բայց որտե՞ղ էիր դու: Առանց քեզ ես չգիտեի ինչ որոշել:

— Ինձ ուշացրին,— պատասխանեց Գանդալֆը: — Եվ դա կարող էր բոլորիս կործանել: Բայց դե ոչ մի բանում հաստատ համոզված չեմ, հնարավոր է, որ ամեն ինչ դեպի լավն է շուռ եկել:

— Իսկ քեզ ի՞նչը ուշացրեց...

— Մի շտապիր, կիմանաս: Այսօր քեզ շատ խոսել չի կարելի... և շատ լսել՝ որպեսզի չհոգնես: Էլրոնդն այդ կարծիքին է,— եզրափակեց հրաշագործը:

— Բայց ախր խոսելն ու լսելն ավելի հեշտ է, քան մտածելը: Մտածելն, ախր, հոգնեցուցիչ է,— առարկեց Ֆրոդոն: — Ես արդեն, ինչպես տեսնում ես, ուշքի եմ եկել և բազմաթիվ անհասկանալի իրադարձություններ եմ վերհիշում: Քեզ ի՞նչը ուշացրեց, գոնե այդ ինձ բացատրիր:

— Ամեն ինչ իր ժամանակն ունի,— պատասխանեց Գանդալֆը: — Երբ առողջանաս, մենք Խորհուրդը կհավաքենք և այնտեղ բացարձակապես ամեն ինչ կիմանաս: Իսկ այժմ քեզ միայն մի բան կասեմ. ինձ դավադրաբար թակարդն էին քաշում:

— Քե՞զ,— անվստահությամբ հարցրեց Ֆրոդոն:

— Այո, ինձ, Գանդալֆ Մոխրագույնին, թակարդն էին ուզում գցել,— հաստատեց հրաշագործը: — Աշխարհում շատ հզոր ուժեր կան, որոնցից մի քանիսի առջև նույնիսկ ես ստիպված եմ լինում նահանջել: Ոմանց հետ նախկինում հանդիպելու առիթ չէի ունեցել: Բայց այժմ մեծ ճակատամարտից չես խուսափի: Սև Հեծյալները անցել են Անդուինը: Իսկ դա նշանակում է՝ պատերազմ է սպասվում:

— Ստացվում է, որ դու Հեծյալների մասին ավելի շուտ գիտեիր, մինչև իմ նրանց հետ հանդիպելը:

— Գիտեի՛ և մի անգամ քեզ ասել եմ նրանց մասին, որ Սև Հեծյալները Մատանու Ուրվականներն են, Սև Տիրակալի ինը սպասավորները: Բայց ես չգիտեի, որ նրանք նորից հայտնվել են, այլապես քեզ Հոբիթստանից դուրս կտանեի: Թշնամու սպասավորների մասին ինձ հայտնի դարձավ հունիսին, քեզանից բաժանվելուց հետո... բայց այդ մասին կիմանաս քիչ հետո: Ինձ ուշացրին հեռու հարավում, և կործանարար դժբախտություններից մեզ ազատեց Արագորնը:

— Այո՛,— ասաց Ֆրոդոն,— առանց նրա մենք կկործանվեինք: Բայց երբ նա հայտնվեց, մենք սկզբում վախեցանք: Իսկ Սամը այդպես էլ չհավատաց նրան, համենայնդեպս մինչև Փառքաշատի հետ հանդիպումը:

— Այդ մասին էլ եմ լսել,— Գանդալֆը ժպտաց: — Դեհ, իսկ հիմա արդեն Սամը հավատում է նրան:

— Այ դա հիանալի՛ է,— բացականչեց Ֆրոդոն: — Որովհետև Պանդուխտն ինձ դուր է գալիս: Նույնիսկ ավելին՝ ես նրան անկեղծ սիրեցի... Թեպետ նա, իհարկե, տարօրինակ մարդ է, իսկ երբեմն մեզ պարզապես չարագույժ էր թվում: Բայց գիտես, նա հաճախ էր քեզ հիշեցնում: Ասա, մի՞թե մեծ ժողովրդի մեջ այնպիսի մարդիկ, ինչպիսին Պանդուխտն է, հազվագյուտ չեն: Ես էլ կարծում էի, որ նրանք ուղղակի մեծ են՝ վիթխարի, կոպտ են ու ոչ շատ խելոք, բարի են, բայց անխելք, Լավը Նարկիսի նման, կամ հիմար, բայց վտանգավոր՝ Բիթ Կաղամախի նման: Չէ՞ որ մեզ մոտ, Հոբիթստանում, համարյա մարդիկ չկան, և մենք նրանց միայն Լեռնամոտում ենք հանդիպում:

— Դուք Լեռնամոտցիներին էլ լավ չեք ճանաչում, եթե Լավրին անխելք ես համարում,— քմծիծաղով նկատեց Գանդալֆը: — Նրա լեզուն ավելի ճկուն է աշխատում, քան գլուխը, բայց նա յուրովի շատ խելացի է, չկասկածես: Նրան սեփական օգուտները տեսանելի են նույնիսկ երեք տակ աղյուսե պատի միջից՝ այդպիսի ասացվածք ունեն լեռնամոտցիները: Բայց Միջերկրում Արագորնի, Արաթհորնի որդու պես մարդիկ հազվադեպ են հանդիպում, Անդրծովի Ասպետներից համարյա չեն մնացել:

— Ուզում ես ասել, որ Պանդուխտի նախնիները դրանք նույն Անդրծովի Ասպետնե՞րն են,— սեփական ականջներին չհավատալով բացականչեց Ֆրոդոն: — Նշանակում է նրանց տոհմը մինչև հիմա չի՞ մարել: Իսկ ես նրան պարզապես թափառականի մեկն էի համարում:

— Թափառակա՞ն,— զայրալից հարցրեց Գանդալֆը: — Դե ուրեմն իմացիր՝ դունադանցիները Արևմտյան Ասպետների մեծ ցեղի հյուսիսային սերունդներն են: Անցյալում նրանք ինձ երբեմն օգնում էին, իսկ ապագայում մեզ բոլորիս հարկավոր կլինի նրանց օգնությունը՝ մենք բարեհաջող հասանք Ազատք, բայց մատանուն վիճակված չէ այստեղ հանգչել:

— Ըստ երևույթին այդպես է,— համաձայնեց Ֆրոդոն: — Իսկ ես էլ մտածում էի՝ միայն թե ընկնենք այստեղ... և հույս ունեի, թե այլևս ինձ հարկ չի լինի ճանապահը շարունակել: Մի ամբողջ ամիս անցկացրել եմ օտարության մեջ, ճամփաներին, և հիմա լրիվ կշտացած եմ դրանից: Այժմ ուզում եմ ինչպես հարկն է հանգստանալ: — Ֆրոդոն լռեց և աչքերը փակեց: Բայց մի քիչ լռելուց հետո նորից խոսեց: — Ես մտքում հաշվեցի և ըստ իս ստացվեց, որ այսօր միայն հոկտեմբերի քսանմեկն է: Որովհետև մենք Գետանցումի մոտ եկանք քսանին:

— Բավական է,— ասաց Գանդալֆը,— քեզ հոգնել չի կարելի: Էլրոնդը ճիշտ էր... Իսկ ուսդ ինչպե՞ս է...

— Չգիտեմ,— պատասխանեց Ֆրոդոն: — Ոնց որ թե լավ է... — Նա շարժվեց: — Կարծես թե ձեռքս էլ է շարժվում: Երևի ես լրիվ առողջացել եմ: Ձեռս էլ արդեն սառը չէ,— ավելացրեց հոբիթը՝ աջ ձեռքով ձախը շոշափելով:

— Հոյակա՛պ է,— ասաց Գանդալֆը: — Դու արագորեն ապաքինվում ես: Շուտով Էլրոնդը թույլ կտա քեզ վեր կենալ՝ այս բոլոր օրերին նա բուժել է քո վերքը...

— Օրերի՞ն,— զարմացած ընդհատեց նրան Ֆրոդոն:

— Դու այստեղ պառկած ես երեք օր ու չորս գիշեր: Էլֆերը քեզ բերեցին քսանին, երեկոյան կողմ, իսկ դու այդպես էլ առանց գիտակցության գալու քնեցիր: Դե դրա համար էլ քեզ հիմա բնականաբար թվում է, թե այսօր միայն քսանմեկն է: Մենք բոլորս շատ էինք անհանգստացած, իսկ քո հավատարիմ Սամը քեզնից չի հեռացել ոչ գիշերը, ոչ ցերեկը, թերևս միայն Էլրոնդի հանձնարարությունները կատարելու համար: Էլրոնդը հմուտ ու փորձված բուժակ է, բայց Թշնամու զենքը անողոք է ու մահաբեր: Ես կասկածում էի, որ դաշույնի կտորը մնացել է քո սպիացած վերքի մեջ և, ճիշտն ասած, այնքան էլ հույս չունեի, թե կհաջողվի այն հայտնաբերել ու հանել: Էլրոնդն այդ կտորը միայն երեկ կարողացավ շոշափել՝ շատ խորն էր գնացել և դաժան անդառնալիությամբ մոտենում էր սրտիդ:

Ֆրոդոն հիշեց Պանդուխտի ձեռքում անհետացող ատամնավոր դանակը և սարսռաց:

— Մի վախեցիր,— ասաց Գանդալֆը: — Հենց Էլրոնդը հանեց ջարդոնը քո ուսից, այն հավիտյան անհետացավ: Իսկ դու կարողացար ապացուցել մեզ, որ հոբիթներն ամուր են կառչած այս աշխարհից: Մեծ ժողովրդի շատ հզոր ու խիզախ ռազմիկներ, որոնց ես գիտեի, մի շաբաթից էլ պակաս ժամանակում Մորգուլյան դաշույնի հասցրած վերքից ուրվական դարձած կլինեին, իսկ դու արդեն տասնյոթ օր է դիմադրում ես:

— Բացատրի՛ր ինձ, Սև Հեծյալներն ինչո՞ւ են այդքան վտանգավոր,— հարցրեց Ֆրոդոն: — Եվ նրանք ի՞նչ էին ուզում անել ինձ:

— Նրանք ուզում էին քո սիրտը խոցել Մորգուլյան դաշույնով,— պատասխանեց Գանդալֆը: — Դաշույնի կտորը մնում է վերքի մեջ և հետո անշեղորեն շարժվում դեպի սիրտը: Եթե Հեծյալները հասնեին իրենց նպատակին, դու էլ նրանց նման ուրվականակերպ կդառնայիր, միայն թե ավելի թույլ ֆիզիկապես՝ և կընկնեիր նրանց տիրապետության տակ: Դու կդառնայիր Խավարի Թագավորության ուրվական և Սև Տիրակալը քեզ հավետ կտանջեր Մատանին յուրացնելու համար... Թեպետ հազիվ թե առավել մեծ տանջանք գոյություն ունենա, քան Մատանին նրա մատին տեսնելը և հիշելը, որ ինչ-որ ժամանակ դու ես եղել այդ Մատանու տերը:

— Լավ է, որ ես այդ վտանգի մասին չեմ իմացել,— կրկին սարսռալով շշնջաց Ֆրոդոն: — Առանց այդ էլ մահվան չափ սարսափեցի, բայց եթե այն ժամանակ իմանայի, թե ինչ վտանգի եմ դիմում, իմ ուժերը չէին բավականացնի շարժվելու համար: Չեմ հասկանում, ինչպե՞ս հաջողվեց ինձ փրկվել:

— Ըստ երևույթին, դու յուրօրինակ ճակատագիր... կամ բախտ ունես,— ցածրաձայն նկատեց Գանդալֆը: — Ես արդեն չեմ խոսում քո քաջության ու դիմացկունության մասին... Քո քաջության շնորհիվ Սև Հեծյալին չհաջողվեց դաշույնը սիրտդ խրել, և դու միայն ուսից վիրավորվեցիր: Բայց նույնիսկ վիրավոր վիճակում հազվագյուտ տոկունությամբ դիմադրում էիր՝ ահա թե ինչու դաշույնի կտորը տասնյոթ օրվա ընթացքում չհասավ սրտիդ: Եվ այնուամենայնիվ քեզ մազ էր մնում մինչև կործանումը: Թշնամին հրամայեց քեզ հագնել Մատանին և, հագնելով, դու մտար Ուրվականների աշխարհը: Դու Հեծյալներին տեսար, նրանք էլ՝ քեզ: Դու ասես ինքդ քեզ հանձնեցիր նրանց ձեռքը:

— Ես գիտեմ,— ասաց Ֆրոդոն,— և ամբողջ կյանքում կհիշեմ, թե ինչ սարսափելին են նրանք, հատկապես գիշերը... Իսկ ինչո՞ւ ենք մենք նրանց սև ձիերը տեսնում:

— Որովհետև նրանք կենդանի են, միս ու արյունից: Հեծյալների թիկնոցները ևս շատ սովորական են՝ դրանք միայն քողարկում են նրանց անմարմին ուրվականությունը:

— Հապա ինչո՞ւ այդ կենդանի ձիերը բոլորովին չեն վախենում իրենց ուրվական հեծյալներից: Մյուս կենդանիներին սարսափ է պատում, երբ նրանց Սև Հեծյալ է մոտենում: Շները կաղկանձում են, սագերը ահաբեկված ղժղժում են... նույնիսկ Փառքաշատի ձին, որ Փառքաշատի ձին է, էլի վախեցավ...

— Որովհետև նրանց ձիերը բուծված են Մորդորում՝ Սև Տիրակալի վասալներին ծառայելու համար: Նրա բոլոր հպատակները չէ, որ անմարմին ուրվականներ են: Այլ արարածներ էլ են նրա իշխանությանը ենթակա՝ օրքերն ու թրոլները, վարգերն ու գայլդարձյակները (գայլ դարձորյակները), նույնիսկ մարդկանցից շատերը՝ թագավորներ ու զորականներ, կատարում են նրա չարամետ կամքը: Եվ նա նորանոր հողեր է զավթում:

— Իսկ Ազա՞տքը... իսկ էլֆե՞րը: Նրանց վրա էլ հո իշխանություն չունի՞...

— Հիմա՝ ոչ: Բայց եթե նրան հաջողվի նվաճել ողջ աշխարհը, ապա էլֆերն էլ չեն դիմանա: Էլֆերից շատերը, թեպետ բոլորովին էլ ոչ բոլորը, սարսափում են Սև Տիրակալի զորքերից, ստիպված են լինում նահանջել նրա հզորության առջև: Սակայն նա այլևս երբեք չի կարողանա էլֆերին ստիպել ենթարկվել իրեն կամ դաշն կնքել իր հետ: Դեռ ավելին, այստեղ, Ազատքում, մինչև հիմա էլ ապրում են նրա գլխավոր հակառակորդները, համարյա նույնքան հզոր, ինչպիսին նա է: Ես խոսում եմ կերպարանափոխվող էլֆերի՝ Էլդար-Անդրծովյան հնադարյան տերերի մասին: Նրանք Մատանու ուրվականներից չեն վախենում, քանի որ ծնվել են օրհնյալ երկրում, դրա համար էլ նրանց մատչելի է նաև Ուրվականների Աշխարհը: Այդ զորականներն անցյալում բազմիցս պարտության են մատնել տեսանելի և անտեսանելի ուրվական-թշնամիներին:

— Գետանցումի մոտ, երբ հետ նայեցի,— ոչ շատ վստահ հիշեց Ֆրոդոն,— ինձ թվաց, թե Սև Հեծյալների կողքին սպիտակ շողշողուն կերպարանք տեսա: Ուրեմն ես Փառքաշատի՞ն տեսա, այո՞:

— Այո՛,— ասաց հրաշագործը: Եվ լռելուց հետո ավելացրեց. — Փառքաշատը քեզ համար միավորել է երկու աշխարհ, իրական և ուրվականային, անտեսանելին՝ կենդանու հետ, որովհետև նա Կերպարանափոխվող էլֆ է, մեծ դյուցազն Առաջնածիններից: Մի խոսքով, Ազատքում ուժեր կգտնվեն, որոնք ընդունակ կլինեն ժամանակավորապես դիմադրել Թշնամուն, ուրիշ վայրերում էլ այդպիսի ուժեր կան, նույնիսկ ձեզ մոտ, Հոբիթստանում: Բայց եթե իրադարձությունների ընթացքը չփոխվի, ազատ հողերը կվերածվեն Սև զորքերի (որ հավաքում է Մորդորի Տիրակալը) ծովերով շրջապատված կղզյակների... Իսկ առայժմ,— նա ընդհատեց ինքն իրեն, վեր կացավ, և նրա մորուքը խրոխտ տնկվեց,— մենք պետք է խաղաղ արիություն պահպանենք: Մի քանի օր հետո դու լրիվ կապաքինվես, եթե ես այսօր իմ խոսակցություններով քեզ մահվան դուռը չհասցնեմ: Այստեղ, Ազատքում, ձեզ ոչինչ չի սպառնում... առժամանակ: Այնպես որ մի անհանգստացիր:

— Ոչ արիություն ունեմ, ոչ էլ խաղաղ լինեմ,— արձագանքեց Ֆրոդոն,— բայց և չեմ վախենում: Պատմիր ինձ, խնդրեմ, իմ բարեկամների մասին, և այն ժամանակ արդեն իսկապես կխաղաղվեմ: Չգիտեմ ինչու, քունս տանում է, բայց մինչև չպատմես, թե նրանց ինչ է եղել, չեմ կարողանա քնել:

Գանդալֆը բազկաթոռը մոտեցրեց մահճակալին և Ֆրոդոյի վրա մի քննախույզ հայացք գցեց: Հոբիթի այտերի վարդագույնը վերադարձել էր, իսկ աչքերը հստակ էին ու խաղաղ: Նա ժպտում էր ու առողջ տեսք ուներ: Բայց այնուամենայնիվ հրաշագործը տագնապով՝ որոշ, համարյա անորսալի փոփոխություններ նկատեց. բանն այն էր, որ հոբիթի վերմակի վրա անշարժ ընկած ձախ ձեռքը գունատ ու տարօրինակ կերպով ոչ մարմնեղեն էր թվում:

«Դժբախտաբար, դրանից խուսափել հնարավոր չէ,— քթի տակ ցածր քրթմնջաց Գանդալֆը: — Իսկ նա, ախր ճանապարհի կեսն էլ դեռ չի անցել... իսկ թե ինչ կպատահի, երբ նա ավարտի այն, հավանաբար չի կարող կանխագուշակել անգամ Էլրոնդն ինքը: Ինչ արած, ապրենք լավի հույսով: Հնարավոր է, նա կիսաթափանցիկ դառնա, ինչպես ներսից լուսավորվող բյուրեղապակյա անոթ՝ նրանց համար, ում աչքերը ունակ են զանազանելու ներքին իսկական լույսը տեսիլայինից»:

— Դու առողջ տեսք ունես,— բարձրաձայն ասաց նա: — Կարծում եմ, որ քո բարեկամների մասին ճշմարտությունը լսելն էլ քեզ չի խանգարի: Ես Էլրոնդից թույլտվություն չեմ խնդրում, բայց շատ համառոտ կպատմեմ, իսկ հետո կգնամ, ու չխանգարեմ քեզ նորից քնել: Ահա թե ինչ է պատահել Գետանցումի մոտ՝ որքան ինձ հաջողվեց պարզաբանել:

Հենց դու վարգեցիր դեպի գետը, Սև Հեծյալները սուրացին քո հետևից: Ձավերտ սարի մոտ դու մուտք էիր գործել նրանց աշխարհը, դրա համար էլ նրանք քեզ պարզ տեսնում էին և հարկ չունեին իրենց ձիերի տեսողությանը ապավինել: Բացի դրանից, նրանց ձգում էր Մատանին: Նրանց ձիերը կկոխկրտեին քո բարեկամներին, և վերջիններս ստիպված եղան ճանապարհը զիջել Հեծյալներին: Հեծյալներին կասեցնել նրանք չէին կարող. ախր քեզ հետևում էին ինը Հեծյալ, այնպես որ նույնիսկ Արագորնն ու Փառքաշատը նրանց ջոկատին չէին դիմանա:

Հետո, երբ Մատանու Ուրվականները սուրացին, քո բարեկամները վազեցին դեպի գետը: Գետանցումից ոչ հեռու, ճանապարհի կիպ եզրին ծառերով կիսաքողարկված մի հովիտ կա, իջնելով այնտեղ, քո բարեկամներն ու Փառքաշատը արագորեն մի փոքրիկ խարույկ վառեցին, քանի որ Փառքաշատին հայտնի էր, որ եթե Հեծյալները մտնեն գետը, ապա Էլրոնդը փոթորկելու է գետը կատաղի ջրերի ալեբախությամբ, և նրանք չեն կարողանա հասնել քո հետևից, բայց ցամաքում մնացածների հետ ստիպված պետք է լինեն մարտի բռնվել: Հենց որ գետի ալիքները կատաղորեն փրփրեցին, Փառքաշատը, նրա հետևից էլ Արագորնն ու մյուսները բոցավառ խանձողներով դուրս թռան ճանապարհ: Հեծյալները գտնվում էին ջրի և հրի արանքում, հանձին Փառքաշատի ճանաչեցին կերպարանափոխվող էլֆին և կորցրեցին իրեն դիվային արիությունը, իսկ նրանց ձիերը վախից վայրկենապես գժվեցին: Երեք Հեծյալ քո հետքով գալով, փորձեցին ձիերով անցնել գետը՝ փոթորկալի առաջին իսկ ալիքը քշեց նրանց: Մնացած վեցին կատաղած ձիերը մի քիչ հետո քաշեցին գետը, և բոլորն էլ մնացին փրփրաբաշ ալիքների տակ:

— Այդպես էլ նրանք կործանվեցի՞ն,—ուրախացավ Ֆրոդոն:

— Ավա՜ղ, ո՜չ,— պատասխանեց Գանդալֆը,— հեղեղում կործանվեցին միայն նրան ձիերը... բայց առանց ձիերի, նրանք էլ ի՞նչ Հեծյալ են: Նրանք ստիպված եղան շտապ կարգով կորչել իրենց որջերը: Չնայած նրանց ոչնչացնելն այնքան էլ հեշտ բան չէ, սակայն նրանք, իմ կարծիքով, երկար ժամանակով շարքից դուրս են եկել... Երբ հեղեղը դադարեց, քո բարեկամները գետն անցան ու գտան քեզ այս ափին՝ պառկած էիր բերանքսիվայր, սառն ու գունատ, իսկ տակդ ընկած էր ջարդված սուրդ: Փառքաշատի ճերմակ նժույգը կանգնած էր կողքիդ: Արագորնը վախենում էր, որ սպանված ես՝ ավելի վատթարի մասին մտածել անգամ չէր ցանկանում: Քեզ բարձրացրին ու բերեցին Ազատք, և կես ճանապարհին ձեզ էլֆեր հանդիպեցին:

— Իսկ գետն ինչո՞ւ էր զայրացել Հեծյալների վրա:

— Նրանք էլֆերի վաղնջական թշնամիներն են, իսկ Էլրոնդը այս երկրամասի տեր ու տիրականն է: Երբ թշնամի է մոտենում Ազատքին, Էլրոնդի կարգադրությամբ գետը հորդանում է ու թշնամական զորքերը խորտակվում են ալիքների մեջ: Հենց որ Մատանու Ուրվականների առաջապահը իջավ դեպի ջուրը, գետը վարարեց: Դե, և եթե կարելի է այդպես արտահայտվել, ես մի քիչ բորբոքեցի նրա զայրույթը: Չգիտեմ, հասցրեցի՞ր նկատել, թե ոչ, որ առաջին ամենակատաղի ալիքները փրփրում էին հզոր սպիտակ հեծյալների կերպարանքով, իսկ հեծելազորից հետո դղրդոցով գլորվում էին հսկայական մոխրագույն գլաքարեր: Երբ ես տեսա հեղեղի ուժը, ինձ թվաց, որ մենք մեր գերջանքերով չափն անցել ենք և չենք կարողանա սանձել ջրե զորքը: Բայց ամեն ինչ հաջող անցավ՝ գետը ձեզ ձեռք չտվեց:

— Աա-յոո՜, ինչ-որ հիշում եմ,— ասաց Ֆրոդոն,— ես լսեցի սարսափելի դղրդացող մռնչյուն և որոշեցի, որ բոլորիս վիճակված է խեղդվել՝ և՛ ինձ, և՛ Հեծյալներին, և՛ իմ բարեկամներին: Փոխարենը հիմա մեզ ոչինչ չի սպառնում...

— Գանդալֆը սուր նայեց Ֆրոդոյին, բայց վերջինս արդեն լռել էր ու աչքերը փակել:

— Դու ճիշտ ես,— ասաց հրաշագործը,— մեզ ոչինչ չի սպառնում... առայժմ: Հենց որ ոտքի կանգնես, մենք շքեղ կտոնենք Գետանցումի ձեր հաղթանակը և տոնը նվիրված կլինի ձեզ՝ քեզ, Արագորնին և քո ուղեկիցներին:

— Մի՞թե մեզ,— զարմացավ Ֆրոդոն: — Գիտե՞ս, մինչև հիմա ինձ զարմացնում է, որ մեր մասին հոգ տարան Փառքաշատն ու Էլրոնդը, ըստ որում, ինչպես երևում է, առանց որևէ պատճառի:

— Դե, ասենք պատճառ նրանք ունեին, և, ճիշտն ասած, նույնիսկ ո՛չ մեկ պատճառ,— թեթևակի ժպտալով, առարկեց Գանդալֆը: — Առաջինը, ես եմ նրանց խնդրել այդ մասին: Երկրորդ, քեզ է վստահված Մատանին: Երրորդը, դու Բիլբոյի ազգականն ես ու ժառանգը, իսկ Մատանին նա է լույս աշխարհ հանել:

— Սիրելի Բիլբո... Տեսնես որտե՞ղ է հիմա... — քնկոտ ձայնով քրթմնջաց Ֆրոդոն: — Ա՜յ մի պատմեինք նրան մեր գլխին եկածը, կզվարճացներ նրան...

Այս խոսքերն ասելով, Ֆրոդոն լռեց:

Եվ այսպես, Ֆրոդոն բարեհաջող հասավ մինչև Վերջին պայծառ հանգրվանը արևելքում: Այդ Հանգրվանում, ինչպես հաճախ ասում էր Բիլբոն, ընդունված էր և՛ ուտել, և՛ քնել, և՛ իրենց վերջին արկածների մասին պատմել, և երգեր լսել ու բանաստեղծություններ կարդալ կամ բուխարու մոտ նստած խորհել, և կամ բոլորովին ոչինչ չանել: Եթե մեկն ընկնում է այնտեղ, պատմում էր Բիլբոն բարեկամներին Հոբիթստանում, ապա վայրկենապես բուժվում է հոգնածությունից ու ձանձրույթից, հոգսերից, վախից ու բոլոր հիվանդություններից:

Երեկոյան, երբ Ֆրոդոն նորից արթնացավ, իրեն բոլորովին առողջացած զգաց ու հասկացավ, որ շատ է ուզում ուտել, իսկ գուցեև մի գավաթ գինի խմել՝ բանաստեղծություններ կարդալու, կամ ուրախ երգեր երգելու, կամ սեփական ճանապարհորդության մասին պատմելու համար: Նա վերմակը նետեց վրայից, թռավ հատակին և ուրախությամբ զգաց, որ ձախ ձեռքն աշխատում է նույնքան լավ, որքան առաջ: Մահճակալի մոտ աթոռին դրված էր նրա հագուստը՝ ըստ երևույթին այն կարել էին, երբ ինքը քնած էր եղել՝ իսկ և իսկ վրայովն էր: Հագնվելիս հայելու մեջ նայեց իրեն և զարմանքով հայտնաբերեց, որ շատ է նիհարել. նա

նորից հիշեցրեց այն պատանի Ֆրոդոյին, որին մի օր ապաստան տվեց Բիլբոն: Բայց հայելու միջից նայող նրա աչքերը հասուն հոբիթի աչքեր էին:

— Այո՛, այն ժամանակվանից ի վեր, ինչ հայելուց ինձ նայեցիր Հոբիթստանում, որոշ բան տեսար,— ասաց Ֆրոդոն իր կրկնակին: — Իսկ այժմ հապա մի տեսնենք ի՞նչ տոն է այստեղ... — Նա ձեռքերը տարածեց ու հաճույքով ձգվեց:

Այդ ժամանակ մեկը դուռը ծեծեց, և սենյակի շեմին հայտնվեց Սամը: Ուրախ ժպիտով նա մոտեցավ Ֆրոդոյին, խնամքով շոյեց նրա ձախ ձեռքը, իսկ հետո շփոթված շրջվեց մի կողմ:

— Բարև, Սամ,— խոսեց Ֆրոդոն:

— Տեսա՞ր դու՝ տաք է,— բացականչեց Սամը: — Ես ձեր ձախ ձեռքից եմ խոսում: Ախր նա սառ-սառույց էր, քիչ էր, որ սառն էր, դեռ մի բան էլ թափանցիկ էր: Դե, հիմա արդեն ամեն ինչ անցած է... Գանդալֆն ինձ ուղարկել է, որ հագցնեմ ձեզ, դուք պատրա՞ստ եք այսօրվա տոնին... Իմ մտքով անցավ, թե ինձ ձեռք է առնում:

— Լիովին պատրաստ եմ,— ասաց Ֆրոդոն,— և անհամբեր եմ բարեկամներիս հանդիպելու համար:

— Ես ձեզ կտանեմ,— առաջարկեց Սամը: Ախր էս դղյակը շատ մեծ է ու զարմանալի: Թվում է, էստեղ ամեն ծակուծուկ արդեն գիտես, բայց շուռ ես գալիս մի որևէ անկյուն ու դեմ առնում անսպասելի նորությունների: Իսկ էլֆերը, էդ էլֆերը... Ախր էստեղ նրանք են տերերը, ուր գնում ես, ամեն տեղ նրանք են... Ոմանք ոնց որ թագավոր լինեն, գեղեցիկ են ու խիստ, էնպես որ վախենում ես նայես: Իսկ մյուսները՝ ինչ ասեմ, իսկական եղեք... Ու ամեն տեղ երաժշտություն, ամեն տեղ երգ... Ես էս տեղերը, իհարկե, դեռ էնքան էլ լավ չգիտեմ՝ համ ժամանակն է քիչ եղել, համ էլ քաջությունս, ճիշտը որ ասեմ, չէր հերիքում...

— Գիտեմ, ինչու ժամանակ չունեիր,— երախտագիտությամբ ընդհատեց նրան Ֆրոդոն: — Դրա փոխարեն այսօր արդեն լիուլի կզվարճանանք... Գնանք, ցույց տուր այստեղի «ծակուծուկերը»:

Նրանք անցան բազում միջանցքներով, իջան թեք աստիճաններով և դուրս եկան մի հսկայական ստվերաշատ զբոսայգի, որ գտնվում էր գետի բարձր ափին: Եվ այստեղ, շենքի արևելյան ճակատի մոտ, դեպի արևելք նայող ընդարձակ ապակեպատ պատշգամբում Ֆրոդոն տեսավ բարեկամներին: Գետից այն կողմ գտնվող հովտում արդեն մթնշաղը թանձրանում էր, բայց արևելյան լեռների բարձր գագաթները դեռևս լուսավորված էին մայր մտնող արևի շողերով: Իրիկնային մթնշաղը թափանցիկ էր ու տաք, զրնգուն աղմկում էր հեռավոր ջրվեժը, իսկ օդը լի էր ծաղիկների բույրով, խոտի ու նորաբույս տերևների հոտով, կարծես թե այստեղ, Էլրոնդի այգում նահանջող ամառը կանգ էր առել հանգստանալու:

— Ուռ-ռա՛-ա՛ա,— տեղից ոստնելով գոռաց Փինը: — Ահա նա՝ մեր ազնվածին արյունակիցը... Կեցցե՛ Ֆրոդոն՝ Մատանու տիրակա՛լը...

— Ձսպի՛ր քեզ, կոպտորեն նրան ընդհատեց Գանդալֆը, որ նստած էր ստվերաշատ պատշգամբի խորքում, այնպես որ Ֆրոդոն անմիջապես չնկատեց նրան: — Այս հովիտը չարի համար մատչելի չէ, և, այնուամենայնիվ, նրան այստեղ կոչելու հարկ չկա: Որպես Մատանիների Տիրակալ մեծարում են ոչ թե Ֆրոդոյին, այլ Մորդորում գտնվող Սև Դղյակի տիրոջը՝ նրա ստվերը նորից տարածվել է աշխարհի վրա: Հիմա մենք ապաստանել ենք հուսալի ամրոցում: Բայց և նրա շուրջն արդեն թանձրանում է խավարը:

— Դե, սկսվեց,— փնթփնթաց Փինը: Ապա Ֆրոդոյին դիմելով, ավելացրեց: — Իսկ նա մեզ անդադար մխիթարում է: Ես գիտեմ, որ մենք պետք է զգոն լինենք: Բայց այս տանը համարյա հնարավոր չէ մտածել որևէ մռայլ կամ տխուր բանի մասին: Այստեղ ամբողջ օրը երգել եմ ուզում, միայն թե կարգին երգ չգիտեմ:

— Ես էլ երգելու տրամադրություն ունեմ,— ուրախ ծիծաղելով նկատեց Ֆրոդոն: — Բայց սկզբում դեռ ուզում եմ ուտել ու խմել:

— Դա այստեղ հեշտ գործ է,— նրան ասաց Փինը,— առավել ևս, որ քո հոտառությունը քեզ չի խաբել՝ կարողացել ես արթնանալ հենց ճաշի ժամին:

— Ոչ թե ճաշի, այլ խրախճանքի,— ուղղեց նրան Մերին: — Հազիվ էր Գանդալֆը հանդիսավորությամբ հայտարարել, որ դու առողջանում ես, երբ սկսվեց

նախապատրաստությունը. ես կարծում եմ, մեզ ճոխ խրախճանք է սպասում: — Նա չհասցրեց խոսքն ավարտել, երբ հնչեցին զանգակները՝ հյուրերին հրավիրելով տոնական սեղանին:

Հյուրերը հավաքվեցին ճաշադահլիճ, որտեղ երկար սեղաններ էին դրված: Էլրոնդը նստեց մյուսներից առանձին, բարձր տեղում դրված սեղանի գլուխը, իսկ տանտիրոջ մոտ, իրար դիմաց տեղավորվեցին Փառքաշատն ու Գանդալֆը:

Ֆրոդոն նայում էր նրանց ու չէր կարողանում հագենալ. չէ՞ որ Էլրոնդին՝ անհամար առասպելների հերոսին, տեսնում էր առաջին անգամ, իսկ Փառքաշատն ու Գանդալֆը, նույնիսկ Գանդալֆը, որին նա կարծես թե ճանաչում էր, Էլրոնդի կողքին վերստացել էին իրենց սեփական, իսկական կերպարը՝ անպարտելի ու փառաբանված դյուցազունների կերպարը:

Գանդալֆը էլֆերից ցածրահասակ էր, բայց սպիտակ մորուքը, արծաթավուն մազերը, լայն թիկունքն ու ազնվազարմ կեցվածքը նրան թագավորական տեսք էին տալիս, իսկ ձյունաթույր հոնքերի տակից նայող աչքերը ժամանակի ընթացքում հանգած ածուխներ էին հիշեցնում, որոնք ցանկացած պահի կարող էին բռնկվել կուրացուցիչ, եթե ոչ մոխրացնող կրակով:

Փառքաշատը՝ հզոր, բարձրահասակ ու բարեկազմ, ոսկեհուր վարսերով, թվում էր պատանի, սակայն խաղաղ իմաստնությամբ ներհուն, իսկ աչքերը ճառագում էին վճռական խիզախությամբ:

Էլրոնդի դեմքից տարիքը չէր կռահվում. նա երևի շատ ավելի երիտասարդ կերևար, եթե դեմքին գրված չլիներ անհամար՝ և՛ ուրախ, և՛ տխուր իրադարձությունների փորձը: Նրա ալեհեր մազերի վրա առկայծում էր արծաթե թագը, իսկ խաժ, ասես պայծառ աղջամուղջ, աչքերում ցոլցլում էին անորսալի, պսպղուն կայծեր: Նա տեսքով իմաստուն էր, ինչպես հնամյա տիրակալ և հզոր, ինչպես հասուն, փորձված ռազմիկ: Եվ այդպես էլ կար, նա զորական-տիրակալ էր, Ազատքի այդ իսկական տերը:

Էլրոնդի դիմաց, ամպահովանու տակի բազկաթոռում նստած էր փերու պես հրաշագեղ մի հյուր, բայց նրա կանացի քնքուշ դիմագծերից երևում էր կամ, ավելի ճիշտ, կռահվում էր, որ նա հյուր չէ, այլ Էլրոնդի ազգականուհին: Դեռատի՞ էր նա... Եվ այո՛, և ո՛չ: Ճերմակի շաղը չէր արծաթապատել նրա մազերը, իսկ մատաղ դեմքը ասես հենց նոր էր լվացվել ցողով, և նրա վճիտ խաժ աչքերը ճառագում էին վաղորդյան աստղերի ջինջ փայլով... Սակայն այնտեղ թաքնված էր հասուն իմաստնություն, որը միայն կյանքի փորձն է տալիս, ապրած տարիների փորձը: Նրա արծաթե թագաձև վարսակալի վրա մեղմորեն փայլում էին կլոր մարգարիտները, իսկ համեստ զգեստի օձիքի երկարությամբ ձգվում էր արծաթե նուրբ թելով ասեղնագործված տերևների հազիվ նշմարելի պսակը:

Նա Էլրոնդի աղջիկն էր՝ Արվենը, որին շատ քիչ մահկանացուներ էին տեսել. հանձին նրա, ինչպես տարածված էր ժողովրդի մեջ, աշխարհ էր վերադարձել Լութիենի գեղեցկությունը, իսկ էլֆերը նրան տվել էին Անդոմիել անունը, նրանց համար նա իրիկնային աստղն էր: Անդոմիելը վերջերս էր վերադարձել Լորիենից՝ այնտեղ, լեռներից այն կողմ, անտառապատ հովտում ապրում էին նրա մոր հարազատները: Իսկ Էլրոնդի տղաները՝ Էլադանը և Էլրոհիրը, ճամփորդում էին ինչ-որ տեղ հեռավոր Հյուսիսում, որովհետև նրանք երդվել էին վրեժ լուծել իրենց մորը տանջողներից՝ հյուսիսային օրքերից:

Անդոմիելի գեղեցկությունը ապշեցրել էր Ֆրոդոյին՝ նա դժվարությամբ էր հավատում, որ կենդանի արարածը կարող է այդպիսի շլացուցիչ գեղեցկության տեր լինել: Իսկ երբ իմացավ, որ իր համար տեղ է պատրաստված Էլրոնդի սեղանին, համարյա վախեցավ՝ նրան շփոթեցրեց այդքան մեծ պատիվը: Մի քանի բարձերով հատուկ բազկաթոռին նստած՝ նա մյուսներից ցածր չէր, բայց ինքն իրեն թվում էր պստլիկ ու իր նշանավոր սեղանակիցներին ոչ արժանի: Սակայն շուտով այդ զգացումն անցավ: Սեղանին տիրում էր անկաշկանդ ուրախություն, իսկ առատ ու զարմանալի համեղ ուտեստները նրա ախորժակին ներդաշնակ էին, այնպես որ նա գլխավորապես ափսեին էր նայում:

Բայց սովը քիչ մարելով, նա գլուխը բարձրացրեց՝ հայացքով բարեկամներին փնտրելով: նրանք նստած էին հարևան սեղանին՝ և՛ նրա հավատարիմ Սամը, և՛ Փինը, և՛ Մերին: Ֆրոդոն հիշեց, թե ինչպես էին Սամին համոզում, որ նա այստեղ ոչ թե ծառա է, այլ պատվավոր հյուր՝ նա ուզում էր Ֆրոդոյին սպասարկել սեղանի շուրջ: Սակայն Պանդուխտին Ֆրոդոն չտեսավ:

Ֆրոդոյից աջ մի թզուկ էր բազմած՝ արտակարգ երևելի ու շքեղ հագնված: Նրա երկսայր ճերմակ մորուքն իջնում էր կուրացուցիչ սպիտակություն ունեցող բաճկոնակի վրա՝ ծածկելով արծաթե գոտու ճարմանդը: Պարանոցից կախված հաստ ոսկե շղթայի մեջ շողշողում էին ադամանդները: Նկատելով, ու Ֆրոդոն իրեն է նայում, թզուկը շրջվեց դեպի նա ու ասաց.

— Ողջ լինես ու զորանաս, հարգելի հոբիթ: — Նա բազկաթոռից վեր կացավ և խոնարհվելով ավելացրեց. — թզուկ Գլոին: Պատրաստ եմ ծառայելու,— իսկ հետո մի անգամ էլ խոնարհվեց:

Ֆրոդոն զարմացավ, բայց իրեն չկորցրեց: Նա վեր կացավ և, ամենափոքր ուշադրություն անգամ չդարձնելով բազկաթոռից թափվող բարձերին, պատասխանեց.

— Ֆրոդո Պարկինս: Պատրաստ ծառայելու և՛ քեզ, և՛ քո հարգելի ազգականներին: — Նա խոնարհվեց թզուկի առջև ու հետաքրքրությամբ հարցրեց. — Ասա, խնդրեմ, դու այն նույն Գլոինն ե՞ս, նշանավոր Թորին Կաղնեվահանի ուղեկի՞ցը:

— Միանգամայն ճիշտ է,— հաստատեց թզուկը: Նա հատակից բարձրացրեց ընկած բարձերն ու Ֆրոդոյին օգնեց բազկաթոռին նստելու: — Ես քեզ նման հարց չեմ տալիս,— քաղաքավարի նկատեց նա,— ինձ արդեն հաղորդել են, որ դու բոլորի կողմից հարգված Բիլբո Պարկինսի ազգականն ու ժառանգորդն ես: Շնորհավորում եմ քեզ Ազատք ժամանելուդ առթիվ:

— Շնորհակալ եմ,— անկեղծ ասաց Ֆրոդոն:

— Ես լսել եմ, որ քեզ ու քո բոլոր ուղեկիցներին ճանապարհին տարօրինակ փորձություններ են հանդիպել... Տարօրինակ և սարսափելի,— ինքն իրեն ուղղեց թզուկը: — Կուզեի իմանալ, ի՞նչը կարող էր ստիպել չորս հոբիթի, ոչ թե մեկ, ինչպես ժամանակին Բիլբոն, այլ չորս հոբիթի, ճանապարհորդության դուրս գալ... Ի դեպ, գուցե ես շատ եմ պնդերես: Էլրոնդն ու Գանդալֆը ինձ հասկանալ տվեցին, որ չեն ցանկանում այդ մասին ընդարձակվել:

— Նրանց իմաստնությունն ինձ մոտ կասկած չի հարուցում,— զգույշ, բայց քաղաքավարի պատասխանեց Ֆրոդոն: Նա վճռեց, որ նույնիսկ Էլրոնդի մոտ հյուրընկալվելիս Մատանու մասին հարկավոր է զգույշ խոսել. դե ինքն իսկի չէր էլ ուզում այդ մասին խոսել: — Պետք է խոստովանեմ,— ավելացրեց նա,— որ ես էլ իմ հերթին կուզեի իմանալ, թե ինչո՞ւ բոլորի կողմից հարգված թզուկը այդպիսի երկար ու վտանգավոր ճանապարհորդություն է ձեռնարկել՝ լքելով Սարամիջի Թագավորության իր դղյակը:

— Էլրոնդի ու Գանդալֆի իմաստուն լինելը կասկածից դուրս է,— քթի տակ ծիծաղելով ասաց Գլոինը: — Նրանք մտադիր են Խորհուրդ հրավիրել, և այնտեղ, ես այդպես եմ կարծում, մենք շատ բան կիմանանք: Իսկ հիմա... — Գլոինը նորից քթի տակ ծիծաղեց,— ավելի լավ չի՞ լինի որևէ ուրիշ բանի մասին խոսենք:

Նրանք փոխըմբռնման հայացքներ փոխանակեցին և խոսակցություն սկսեցին իրենց հարազատ վայրերի մասին, որ չսպառվեց մինչև խնջույքի վերջը: Ավելի ճիշտ, հիմնականում խոսում էր Գլոինը, որովհետև լուրջ իրադարձությունները, ինչպես գտնում էր Ֆրոդոն, շրջանցում էին Հոբիթստանը (նա հաստատ որոշել էր Մատանու մասին չհիշատակել), իսկ թզուկը բավական բան ուներ պատմելու Խլուտի հյուսիսում տեղի ունեցած վերջին իրադարձությունների մասին: Նա Ֆրոդոյին տեղեկացրեց, որ Մշուշապատ Լեռների և Չարքանտառի միջև ընկած հողերի տերն է դարձել այժմ Գրիմբեորնը՝ Բեորնի որդին, և նրա լայնատարած տիրույթների սահմանները չեն կարող խախտել ոչ օրքերը, ոչ գայլդարձյակները:

— Ես համոզված եմ,— աշխուժորեն պատմում էր Գլոինը,— որ Դոլից Ազատք հին ճանապարհով կարելի է ապահով ճանապարհորդել միայն Գրիմբեորնի ռազմիկների շնորհիվ: Նրանք պահպանում են Լեռնանցքը և Ծանծաղուտը՝ Զառիվայրի մոտ: Բայց նրանց մաքսերը բարձր են և նրանք, առաջվա նման, թզուկներին չեն խնայում,— գլուխն օրորելով ավելացրեց Գլոինը: — Դրա փոխարեն նրանց մեջ դույզն իսկ նենգություն չկա, իսկ դա այսօր շատ արժե: Բայց բոլորից լավ մեզ վերաբերվում են Դոլում, Լճափի թագավորությունը հիմնադրած մարդիկ: Այժմ այնտեղ կառավարում է Բարդ Նետաձիգի թոռը, Բեյնի ավագ որդին՝ Բրանդ թագավորը: Նա հմուտ կառավար է, և նրա թագավորությունը տարածվում է Երկար լճի Էսգարոթ քաղաքից մինչև հեռավոր հարավ ու արևելք:

— Իսկ ինչպե՞ս է քո ժողովուրդը,— նրան հարցրեց Ֆրոդոն:

— Մեզ մոտ բազում իրադարձություններ են տեղի ունեցել,— պատասխանեց Գլոինը,— և՛ լավ, և՛ վատ: Բայց լավը, պատկերացրեք, այնուամենայնիվ ավելի շատ է. մինչև այժմ մշտապես մեր բախտը բերել է: Թեպետ մենք էլ, հասկանալի է, զգում ենք չարագուշակ ամպի սև շունչը, որ կախվել է ողջ Միջերկրի վրա: Եթե ուզում ես, մեր մասին ավելի մանրամասն կպատմեմ քեզ: Բայց հենց հոգնես, իսկույն ընդհատիր ինձ: Թզուկին, ասում են, չես զսպի, երբ խոսում է իր դարբնոցից:

Եվ Գլոինը մանրամասն սկսեց պատմել թզուկների Սարամիջի Թագավորության ճակատագրի մասին: Նա ուշադիր ու զգայուն ունկնդրի էր հանդիպել. Ֆրոդոն նրան չընդհատեց, ցույց չտվեց, որ հոգնել է, ոչ մի անգամ խոսելու փորձ չարեց, չնայած արդեն քառորդ ժամ հետո դադարեց լսածի իմաստը հասկանալ՝ խճճվելով տարօրինակ շատ երկրների ու անունների մեջ, որոնց մասին կյանքում չէր լսել: Նրան ուրախացրեց Դաինի մասին լուրը, որն առաջվա պես կառավարում էր Սարամիջի Թագավորությունը: Նա երկու հարյուր հիսունմեկ տարեկան էր, համընդհանուր հարգանք ու սեր էր վայելում, իսկ թզուկների հարստությունը մշտապես բազմապատկվում էր: Նրա արշավանքի տասը մասնակիցներից յոթը, որ կռվել էին Հինգ Զորաց ճակատամարտում, ապրում էին Սարամիջի Թագավորությունում: Դրանք էին Դվալինը, Գլոինը, Դորին, Նորին, Բիֆուրը, Բոֆուրը և գիրուկ Բոմբուրը: Բոմբուրն այժմ այնքան է չաղացել, որ չի կարող բազմոցից տեղափոխվել սեղանի մոտ՝ ճաշկերույթից առաջ վեց երիտասարդ թզուկ գրկում են նրան ու տանում սեղանի մոտ:

— Իսկ ի՞նչ է պատահել մնացած երեքին՝ Օինին, Օրիին և Բալինին,— հարցրեց Ֆրոդոն:

— Նահատակվեցին,— Գլոինի դեմքը մռայլվեց: — Բայց այդ մասին չեմ ուզում հիշել: Բերեք որևէ ուրախ բանի մասին խոսենք... — Եվ Գլոինն սկսեց նկարագրել արհեստները, որոնցով իրավացիորեն հպարտանում են թզուկները,— մենք հազվագյուտ ոսկեձեռիկ վարպետներ ունենք, բայց մեր զինագործները զիջում են հներին: Շատ հին գաղտնիքներ կորել են: Թզուկների պատրաստած զենքուզրահը մինչև հիմա փառաբանվում է ողջ Միջերկրում, սակայն մինչև վիշապի լեռը գրավելը թզուկների վահաններն ու օղազրահներն ավելի ամուր էին ստացվում, իսկ թրերն ու դաշույններն՝ ավելի սուր, քան հիմա: Իսկ այ հողի պարգևների հանույթի ու շինարարության մեջ մեր նախնիներին գերազանցել ենք: Այ որ տեսնեիր մեր ջրանքներն ու գունավոր սալիկներով սալարկված ճանապարհները, քարե ծառերով թունել-փողոցները, որ բացել ենք Մենավոր Լեռան ընդերքում, կամ պահակակետերն ու դիտաշտարակները, որ կանգնեցրել ենք նրա լանջերին... Այն ժամանակ ակնառու կհամոզվեիր, որ Սարամիջի Թագավորությունում ժամանակն իզուր չեն վատնել:

— Ես անպայման կայցելեմ ձեզ... Եթե ինձ հաջողվի,— խոստացավ Ֆրոդոն: — Պատկերացնում եմ, ինչպես կզարմանար Բիլբոն, եթե տեսներ այդ բոլոր փոփոխությունները...

— Երևի նրան շատ էիր սիրում,— ասաց Գլոինը և, Ֆրոդոյին նայելով, չարաճճիորեն ժպտաց:

— Ա՛յն էլ ինչպես,— կրակոտ բացականչեց հոբիթը: — Ախ նույնիսկ մեկ վայրկյան նրան տեսնելու համար աշխարհի բոլոր հրաշքները կտայի...

Մինչդեռ ճաշկերույթն ավարտին էր մոտենում: Էլրոնդն ու Արվենը սեղանից վեր կենալով, ուղղվեցին դեպի Խրախճանքի դահլիճի ելքը, իսկ հյուրերը բարեպաշտորեն հետևեցին նրանց: Նրանք անցան լայնարձակ միջանցքը և տանտերերի հետևից մտան հաջորդ դահլիճը, որը լուսավորված էր հուրհրատող բուխարու լույսով: Ֆրոդոն նայեց շուրջն ու մոտեցավ Գանդալֆին:

— Էլֆերն այս դահլիճն անվանում են Բուխարու դահլիճ,— ցածր ասաց նրան հրաշագործը: — Այժմ դու բազմաթիվ երգեր ու հետաքրքիր պատմություններ կլսես... Եթե չքնես՝ այստեղ տիրող մթնոլորտը լավ օրոր է ասում: Այստեղ բուխարիկում կրակը միշտ վառ են պահում, այն և՛ տաքացնում է, և՛ լուսավորում է դահլիճը, բայց սովորական օրերին դահլիճը մշտապես դատարկ է, շատ քչերն են գալիս՝ հանգստանալու և լռության մեջ խորհելու համար:

Երբ Էլրոնդը գրավեց իր սովորական տեղը, Էլֆ գուսաններն սկսեցին երգել ու վին հնչեցնել: Դահլիճն աստիճանաբար լցվեց հյուրերով, և Ֆրոդոն, ուրախ-ուրախ շուրջը նայելով, տեսնում էր զարմանալիորեն իրարից տարբեր, բայց միատեսակ ուրախ ու աշխույժ դեմքեր, որոնց վրա ոսկեգույն արտացոլվում էր հսկայական բուխարիկում պարող վառ կրակը: Բուխարու կողքի փորագրանախշ սյան մոտ Ֆրոդոն մի միայնակ կերպարանք նկատեց և

կարեկցանքով մտածեց, որ հիվանդ է տեսնում. նա նստած էր գլուխը կրծքին կախած, այնպես որ դեմքը չէր երևում, իսկ կողքը դրված էր մի ջրի գավաթ և մի կտոր կծած հաց: Խեղճ, չի կարողացել գնալ խրախճանքի,— մտածեց Ֆրոդոն... — բայց մի՞թե այստեղ հիվանդանում են...

Շուտով երգասացների վիները լռեցին, իսկ Էլրոնդը վեր կացավ ու մոտեցավ բուխարուն:

— Արթնացիր, իմ փոքրիկ բարեկամ,— ասաց նա: Ապա շրջվեց դեպի Ֆրոդոն ու ավելացրեց. — Պատրաստվիր: Ինձ թվում է մոտենում է պահը, որի մասին վաղուց ես երազում:

Նա, ով նստած էր բուխարու մոտ, շարժվեց ու գլուխը բարձրացնելով, նայեց հյուրերին:

— Բիլբո՛,— ուրախ գոռաց Ֆրոդոն:

— Բարև, փոքրի՛կս,— արձագանքեց Բիլբոն: — Ես գիտեի, որ դու կկարողանաս հասնել Ազատք: Այսօրվա տոնը քեզ է նվիրված, և դու լիովին վաստակել ես այդ պատիվը: Հուսով եմ, ճաշը քեզ դո՞ւր եկավ:

— Իհարկե դուր եկավ... — բացականչեց Ֆրոդոն: — Բայց ասա՛, իսկ դու ինչո՞ւ չեկար... Եվ ինչո՞ւ մինչև հիմա ես քեզ չեմ տեսել...

— Որովհետև դու քնած էիր,— պատասխանեց Բիլբոն: — Իսկ ես ամեն օր այցելում էի քեզ ու Սամի հետ նստում մահճակալիդ մոտ: Ինչ վերաբերվում է տոնին, ապա ես վերջին ժամանակներս հազվադեպ եմ մասնակցում քեֆերին՝ ես բազում ավելի կարևոր գործեր ունեմ:

— Իսկ ի՞նչ ես անում...

— Նստում ու խորհում եմ: Դա արտակարգ կարևոր գործ է: Ես վաղուց եմ նկատել, որ Բուխարու դահլիճը աշխարհի ամենալավագույն տեղն է խոհերի համար... Եթե որևէ մեկը քեզ դրանից չի կտրում,— ավելացրեց նա Էլրոնդին խեթ նայելով, և նրա աչքերը բոլորովին էլ քնկոտ չէին: — «Արթնացիր...»: Ես քնած չէի, հարգելի Էլրոնդ: Դուք չափազանց արագ վերջացրիք խնջույքն ու կտրեցիք ինձ իմ կարևորագույն խոհերից: Երբ դուք եկաք, ես երգ էի հորինում և լարված մտածում էի վերջին տողերը՝ դրանք չգիտես ինչու, չեն համընկնում: Իսկ հիմա, հավանաբար, էլ երբեք չեն համընկնի: Էլֆերն այնպիսի հրաշալի երգեր ունեն, որ սեփական երգերիս մասին մոռանում եմ: Ինձ մի հույս է մնացել՝ Դունադանի օգնությունը: Ի դեպ, ո՞ւր է նա...

— Մենք անպայման նրան կգտնենք,— ժպտալով հոբիթին, խոստացավ Էլրոնդը: — Դուք կառանձնանաք որևէ տեղ, մի անկյունում, ու դու կավարտես քո կարևոր խոհերը, իսկ հետո մեզ համար նոր երգ կերգես, որպեսզի կարողանանք համեմատել մեր երգերի հետ:

Ֆրոդոն նստեց իր ավագ ընկերոջ մոտ, իսկ նրանց կողքին տեղավորվեց Սամը: Սկսեցին աշխուժորեն զրուցել՝ ուշադրություն չդարձնելով տոնական աղմուկին ու էլֆերի զարմանալիորեն մեղեդիկ երգերին: Բայց Բիլբոն քիչ նորություններ ուներ: Նա Հոբիթստանից դուրս էր եկել ու գնացել ուր աչքը կտրեր, և պարզվել էր, որ աչքը հենց Ազատք է բերել նրան, ու նա ցանկացել էր ապրել էլֆերի մոտ:

— Ես այստեղ հասա առանց արկածի,— պատմում էր նա,— և մի քիչ հանգստանալուց հետո ճանապարհվեցի իմ բարեկամ թզուկների մոտ: Դա իմ վերջին ճանապարհորդությունն էր: Ծերուկ Բալինը չկար, ու ես զղջացի, որ եկել եմ թզուկների մոտ: Ինձ նորից ձգեց Ազատքը և, վերադառնալով, հաստատվեցի այստեղ: Չէ՞ որ ես պետք է ավարտեի գիրքս: Դե երբեմն էլ երգեր եմ հորինում, իսկ էլֆերն էլ շատ հազվադեպ են դրանք երգում՝ միայն ինձ հաճույք պատճառելու համար. էլֆերի երգերն անհամեմատ լավն են: Ես հաճախ նստում եմ բուխարու դահլիճում և խորհում աշխարհի, մեր ժամանակի մասին... Բայց գիտես, ժամանակն այստեղ կարծես թե չի էլ անցնում, ասես էլֆերի վրա ոչ մի իշխանություն չունի...

Ազատք են հասնում բոլոր կարևոր նորությունները, բայց ես ոչինչ չեմ լսել Հոբիթստանի մասին: Գանդալֆը հաճախ էր լինում Ազատքում, սակայն նրանից շատ բան չես իմանա. նա նույնիսկ ավելի ծածկամիտ է դարձել, քան առաջ: Ճիշտ է, որոշ տեղեկություններ ինձ Դունադանը հայտնեց: Դժվար է հավատալ, որ իմ Մատանին այդքան տագնապ է պատճառել Միջերկրին... Եվ Գանդալֆն էլ այդքան ուշ է գաղտնիքը բացել... Ախր ես կարող էի Մատանին էլֆերի մոտ բերել շատ տարիներ առաջ, առանց որևէ դժվարության: Երբ ինձ ասացին, թե որքան վտանգավոր է այդ Մատանին, ես որոշեցի, որ պետք է ճանապարհվեմ տուն, այն

քեզանից վերցնեմ բերեմ Ազատք, բայց ոչ ոք այդ մասին լսել չցանկացավ: Էլրոնդն ու Գանդալֆը հաստատ համոզված են, որ թշնամին ինձ ամեն տեղ փնտրել է: Ես հիշում եմ, Գանդալֆն ինձ մի անգամ ասաց. «Մատանին այժմ նոր պահապան ունի, Բիլբո: Եվ եթե վերադառնա քեզ մոտ, մենք ահռելի աղետներից խուսափել չենք կարողանա»: Գանդալֆը հաճախ է հանելուկներով խոսում: Բայց նա խոստացել է հոգ տանել քո մասին, և ես էլ վստահեցի նրա խոստմանը: Եվ ահա դու այստեղ ես, ողջ ու առողջ... — Բիլբոն հանկարծ տարօրինակ նայեց Ֆրոդոյին:

— Քեզ մո՞տ է,— շշուկով հարցրեց նա: — Գիտե՞ս, այսքան շշմեցուցիչ իրադարձություններից հետո ես ուզում եմ մեկ անգամ էլ տեսնել այն:

— Ինձ մոտ է,— դանդաղ պատասխանեց Ֆրոդոն: Նա ինքն էլ չէր հասկանում, թե ինչու բոլորովին չէր ուզում Մատանին հանել գրպանից: — Այնպես էլ մնացել է, ինչպես որ կար,— բարեկամից շրջվելով, ավելացրեց նա:

— Իսկ ես այնուամենայնիվ ուզում եմ տեսնել:

Ցերեկը, երբ Ֆրոդոն վերջնականապես արթնացավ, Մատանին շոշափեց կրծքի վրա՝ ըստ երևույթին ինչ-որ մեկը իր քնած ժամանակ Մատանին գրպանից հանել էր ու շղթայով գցել էր վիզը: Շղթան շատ բարակ էր, բայց դիմացկուն... Ֆրոդոն դժկամությամբ հանեց Մատանին: Հենց որ Բիլբոն ձեռքը մեկնեց Մատանուն, Ֆրոդոն վախեցած ու զայրացած ընկրկեց: Տհաճ զարմանքով նա հանկարծ նկատեց, որ իր բարեկամ Բիլբոն չքացավ ինչ-որ տեղ. նրա առջև նստած էր կնճռապատ մի գաճաճ, որի աչքերը ընչաքաղց փայլում էին, իսկ ոսկրոտ ձեռքերը ագահությունից դողում էին: Նա ցանկություն ունեցավ խփել ինքնակոչին:

Քաղցրածոր երաժշտությունը հանկարծ ծվծվաց ու մարեց՝ Ֆրոդոյի ականջներում արյունը խշշում էր: Բիլբոն սարսուռով նայեց նրան ու ձեռքով տենդագին ծածկեց աչքերը:

— Այժմ ես հասկանում եմ,— շշնջաց նա: — Պահիր Մատանին և, եթե կարող ես, ներիր ինձ: Ներիր այդ ծանր բեռան համար: Ներիր այն ամենի համար, որ դեռ սպասում է քեզ... Մի՞թե արկածները երբեք վերջ չեն ունենալու: Մի՞թե երբևէ սկսված ամեն մի պատմություն անպայման ինչ-որ մեկը պետք է շարունակի... Ըստ երևույթին, այդպես է: Իսկ իմ գի՞րքը: Հազիվ թե ինձ վիճակված է ավարտել այն... Բայց եկ մեկս մյուսիս չտանջենք: Խնդրում եմ, ինձ պատմիր մեր Հոբիթստանի մասին՝ ուրիշ ոչնչի մասին մտածել չեմ ուզում...

Ֆրոդոն թեթևացած պահեց Մատանին: Նրա առջև նորից նստած էր հին բարեկամը, զրնգուն ու մեղեդիկ հնչում էին բամբիռները, իսկ հաճելի ու սիրելի հյուրերի դեմքերին խաղում էին կրակի ուրախ ցոլքերը: Բիլբոն կախարդված լսում էր Ֆրոդոյին. Հոբիթստանից ամեն տեսակ լուր, տեղեկություն, լիներ դա տնկված ծառի, թե ինչ-որ մի երեխայի չարաճճիությունների մասին, նրան չտեսնված հաճույք էին պատճառում: Չորս նահանգների կյանքով տարված հոբիթները չնկատեցին լայն կանաչ թիկնոցով մարդուն, որն անաղմուկ մոտեցել էր նրանց ու բարի ժպիտով նայում էր: Վերջապես Բիլբոն տեսավ նրան:

— Ահա և Դունադանը:

— Պանդո՛ւխտ,— զարմացած բացականչեց Ֆրոդոն: — Պարզվում է, որ դու շատ անուններ ունես:

— Այդ անունը ես չէի լսել,— միջամտեց Բիլբոն: — Ինչո՞ւ Պանդուխտ:

— Որովհետև ինձ այդպես են անվանել լեռնամոտցիները,— քիչ տխուր քմծիծաղով պատասխանեց Արագորնը: — Չէ՞ որ ես ու Ֆրոդոն ծանոթացել ենք Լեռնամոտում:

— Իսկ ինչո՞ւ Դունադան,— հարցրեց Ֆրոդոն:

— Արագորնին այդպես մեծարում են էլֆերը,— բացատրեց նրան Բիլբոն: — Դու նրանց լեզուն մոռացե՞լ ես: Հապա, վերհիշիր իմ դասերը՝ դուն-դուն-ադան — Արևմտյան Ասպետ: Ի դեպ, հիմա դասերի ժամանակը չէ: — Բիլբոն նայեց Արագորնին: — Որտե՞ղ էիր, Դունադան,— հարցրեց նա: — Եվ այդ ինչո՞ւ խրախճանքին չկայիր:

— Մեզ հաճախ ժամանակը չի բավականացնում ուրախության համար,— լուրջ պատասխանեց Արագորնը: — Անսպասելիորեն վերադարձան Էլլադանը և Էլրոհիրը: Պետք է նրանց հետ զրուցեի, կարևոր լուրեր են բերել:

— Այո-ոո, հասկանում եմ, բարեկամս,— ասաց Բիլբոն: — Բայց հիմա, երբ դու գիտես նրանց նորությունները, մի քիչ ժամանակ կգտնե՞ս մեզ համար: Արանց քո օգնության գործը գլուխ չի գա: Էլրոնդն ասաց, որ տոնախմբության ավարտին ուզում է մի նոր երգ լսել, իսկ ես վերջին տողերը չեմ կարողանում գլուխ բերել: Եկ գնանք մի խաղաղ անկյուն ու փորձենք երկուսով ավարտել իմ երգը:

— Գնանք,— ժպտալով համաձայնեց Արագորնը:

Բիլբոն ու Արագորնը գնացին ինչ-որ տեղ, և Ֆրոդոն բոլորովին մենակ մնաց, որովհետև Սամն այդ ժամանակ քնած էր: Նա իրեն մենակ ու լքված զգաց, չնայած շուրջը շատ էլֆեր կային: բայց նրանք, Ֆրոդոյի վրա ուշադրություն չդարձնելով, ինքնամոռաց լսում էին գուսանների երգը: Շուտով երաժշտությունը կարճ ժամանակով լռեց, իսկ հետո նոր երգ հնչեց, և այն ժամանակ Ֆրոդոն էլ սկսեց ունկնդրել:

Սկզբում հնագույն մեղեդու գեղեցկությունը և կիսածանոթ լեզվի բառերի երաժշտությունը կախարդեցին նրան, բայց իմաստը չէր կարողանում որսալ, չնայած Բիլբոն Ազատք մեկնելուց առաջ զարմիկին սովորեցրել էր էլֆերի լեզուն: Նրան թվում էր, որ երաժշտությունն ու բառերը ձեռք էին բերում հեռավոր աշխարհների ուրվագծերը, բուխարու կրակի կայծկլտուն անդրադարձումներից թանձրանում էր ոսկեզօծ մեգը Ծովի վրա, որը հառաչում էր ինչ-որ տեղ աշխարհի եզրին, և Ֆրոդոյի հմայվածությունը դարձավ քուն, և նրա շուրջը փրփրում էին դեռևս երբեք չտեսած երազների մեծաշուք ալիքները:

Իսկ հետո ալիքները հանկարծ ձայն ստացան, և բառերի հնչյուններում կռահելի դարձավ իմաստը, ու Ֆրոդոն հասկացավ, որ Բիլբոյին է լսում:

Հոբիթն աչքերը բաց արեց ու շուրջը նայեց: Դահլիճի կենտրոնում տեսավ Բիլբոյին: Ժպտացող էլֆերը միահամուռ ծափահարեցին: Երբ էլֆերի ծափահարությունները լռեցին, Բիլբոն մոտեցավ Ֆրոդոյին ու հարցրեց.

— Իսկ քեզ դո՞ւր եկավ իմ նոր երգը:

— Ես այն գնահատել չկարողացա,— խոստովանեց Ֆրոդոն: — Քո երգից առաջ քնեցի, ու ինձ թվում էր, թե դա ոչ թե երգ է, այլ ուղղակի իմ երազի շարունակությունը: Քո ձայնը միայն վերջում ճանաչեցի:

— Այո, հոբիթների համար էլֆերի երգերը չափազանց քաղցրալուր են,— համաձայնեց Բիլբոն: — Բայց, նրանց մեջ ապրելով, վարժվում ես դրան: Թեպետ պետք է ասեմ, որ էլֆերը երբեք երաժշտությունից չեն հագենում, ասես դա համեղ ուտելիք է: Գիտես ինչ, արի այստեղից գնանք, որ մեզ չխանգարեն հանգիստ խոսել:

— Իսկ դա նրանց չի՞ վիրավորի,— անհանգստացավ Ֆրոդոն:

— Բոլորովին,— զարմիկին հանգստացրեց Բիլբոն: — Այստեղ ոչ ոքի ուժով չեն պահում՝ արի և գնա, երբ ցանկանում ես, միայն ուրիշներին մի խանգարիր ուրախանալ:

Հոբիթները վեր կացան և աշխատելով չաղմկել, քայլեցին դեպի դահլիճի ելքը: Որոշեցին Սամին չարթնացնել՝ նա անխռով, ժպիտը դեմքին քնած էր: Դռան մոտ Ֆրոդոն թախծոտ հետ նայեց և, չնայած նրան ուրախացնում էր կայանալիք խոսակցությունը, հասկացավ, որ այստեղից հեռանալ չի ուզում՝ այստեղ զարմանալի խաղաղ էր և հարմարավետ: Այդ ժամանակ մի նոր երգ հնչեց.

— Ա Էլբերեթ Գիլթոնիել
Սերեվյեն րէննա միրիէլ
Ա մերէլ էգլեր էլլենաս...
Նա — կէարդ ռալլան դիրիէլ
Ա գալանդրեմմին էնոթաս,
Ֆարուլիոս, լե լիհնատոն
Նէֆ աէր, սի նէֆ օզարոն...

Շեմին Ֆրոդոն մեկ անգամ էլ հետ նայեց: Էլրոնդն անշարժ նստած էր բազկաթոռում, և կրակի ցոլքերը, արևի շողերի նման, ոսկեզօծում էին նրա դեմքը: Էլրոնդի կողքին նստած էր Արվենը, իսկ նրա կողքին կանգնած էր Արագորնը, և դա մի քիչ զարմացրեց Ֆրոդոյին: Արագորնի կրծքին բաց թիկնոցի տակից արծաթին էր տալիս աստղը, որն ընդգծվում էր խավարափայլ զրահի վրա: նա ինչ-որ բանի մասին զրուցում էր Արվենի հետ և այն պահին,

երբ Ֆրոդոն շրջվում էր, վերջինս նայեց ուղիղ նրան: Այդ հայացքը հոբիթը հավերժ չի մոռանա:

Նա կանգնած էր Արվենի հայացքով հմայված, և երգի բառերը, երաժշտության հետ ձուլվելով, հնչում էին որպես աղբյուրի զրնգուն կարկաչ:

— Գնանք,— անհամբերությամբ նրան կանչեց Բիլբոն: — Նրանք դեռ երկար են երգելու, և Էլբերեթի մասին այս երգից հետո կերգեն իրենց Օրհնյալ Երկրի մասին:

Հոբիթներն զգուշությամբ դուռը բաց արեցին ու գնացին Բիլբոյի փոքրիկ սենյակը, որի դեպի հարավ նայող պատուհաններից երևում էր Բրուինեն գետը: Նրանք չցանկացան տրվել հիշողություններին, չցանկացան մտածել հարավ-արևելքից դանդաղ դեպի իրենց սողացող չարագույժ թուխպի մասին: Բաց պատուհանի մոտ նստած զրուցում էին այսօրվա ուրախությունների՝ Էլֆերի ու Ազատքի հրաշալի ծառաստանների, աստղերի, ծառերի, քնքուշ աշնան մասին...

— Ներողություն եմ խնդրում,— ընդհատեց նրանց Սամը՝ դուռը ծեծելով ու արանքից ներս նայելով: — Ես ուզում էի հարցնել, ձեզ ոչ մի բան պետք չէ՞...

— Իսկ գուցե ուզում էիր հիշեցնել ինձ ու Ֆրոդոյին, որ նրա քնելու ժամանա՞կն է,— արձագանքեց Բիլբոն:

— Հապա ի՞նչ, ոնց որ թե ժամանակն է,— շփոթված, բայց վճռական ասաց Սամը: — Չէ՞ որ վաղը հենց առավոտից Խորհուրդն է, իսկ վերքից հետո հո հեշտ չէ...

— Իրավացի ես,— քթի տակ ծիծաղելով նրան միացավ Բիլբոն: — Կարող ես գնալ և Գանդալֆին զեկուցել, որ Ֆրոդոն հլու հնազանդ գնաց քնելու: Բարի գիշեր,— ասաց նա զարմիկին,— որքան ուրախ եմ, որ նորից տեսնվեցինք... Ըստ իս, աշխարհիս երեսին ոչ մի արարած հաճելի զրույցն այդքան լավ չի կարող վարել, ինչպես հոբիթստանցի հոբիթը: Բայց շուտով մենք նորից երկար ժամանակով կբաժանվենք: Ես վախենում եմ, որ քո ճանապարհորդության մասին գլուխներն իմ գրքում կգրես անձամբ ինքդ՝ վերջին ժամանակներս ես շատ եմ ծերացել: Բարի երազներ, իմ սիրելի փոքրիկ... Իսկ ես մի քիչ զբոսնեմ այգում՝ ուզում եմ նայել Էլբերեթի համաստեղությանը:

Գլուխ երկրորդ. Խորհուրդ

Հաջորդ օրը, լուսաբացին արթնանալով, Ֆրոդոն հիանալի հանգստացած էր ու առույգ, և որոշեց Բրուինենի ափին զբոսնել: Երբ նա հագնվեց ու դուրս եկավ այգի, հեռավոր լեռնապարի հետևից բարձրանում էր հսկայական, բայց աղոտ արևը, օդում արծաթին էին տալիս աշնանային շղարշները, տերևների վրա շողշողում էին ցողի կաթիլները, իսկ գետի վրա հալվում էին վաղորդյան քուլաները: Սամը լուռ քայլում էր նար կողքից, ուրախ շնչում էր ցողոտ օդն ու զարմացած դիտում ձյունեղեն գլխարկներով փայլատակող հեռավոր լեռները:

Զիգզագ ճանապարհից թեքվելով նրանք տեսան Բիլբոյին ու Գանդալֆին, որոնք նստել էին ափամերձ ժայռի մեջ հմտորեն փորված քարե ցածրիկ նստարանին ու զրույց էին անում: Բիլբոն բարեհամբույր ժպտաց:

— Բարի լույս,— ասաց նա հոբիթներին: — Խորհուրդը, կարծում եմ, շուտով կսկսվի:

— Շուտո՞վ, վստա՞հ ես,— հարցրեց նրան Ֆրոդոն: — Իսկ ես մի քիչ զբոսնելու հույս ունեի: Ինձ ասես շարունակ ձգում է այն սոճու անտառը... — Ֆրոդոն գլխով արեց հյուսիսային լանջին սևին տվող անտառի կողմը:

— Կզբոսնես,— եթե Խորհուրդը մինչև մութն ընկնելը վերջանա,— ասաց նրան Գանդալֆը: — Բայց ես նախապես չէի տրամադրվի: Այսօր շատ բան է հարկավոր քննարկել:

Շուտով դղյակում հնչեց զանգը:

— Էլրոնդը կանչում է Խորհրդի մասնակիցներին,— նստարանից վեր կենալով ասաց Գանդալֆը: — Դուք երկուսդ էլ հրավիրված եք, և՛ Բիլբոն, և՛ Ֆրոդոն: Այստեղ ընդունված չէ ուշանալ, գնանք:

Հրաշագործը քայլեց դեպի տուն տանող ճանապարհով, Բիլբոն ու Ֆրոդոն գնացին նրա հետևից, իսկ մոռացված ու մի քիչ նեղացած Սամը, ինչ-որ բան քրթմնջալով, քարշ էր գալիս

վերջից: Գանդալֆը մոտեցավ այն նույն պատշգամբին, որտեղ նախօրեին Ֆրոդոն հանդիպեց բարեկամներին: Աստիճաններով բարձրանալով, Ֆրոդոն հետ նայեց: Արևավառ առավոտը օր էր դառնում, ափից ներքև հանդարտ աղմկում էր գետը, երկինքը զրնգում էր թռչունների դայլայլից, և Ֆրոդոյին թվաց, թե իր չարաբաստիկ արկածներն էլ՝ աշխարհի վրա կախվող ահարկու թուխպի մասին խոսակցությունների նման, երազում է տեսնել՝ չափազանց հանգիստ, հստակ ու մեղմ էր աշնանային առավոտը: Բայց Խորհրդի դահլիճի շեմից ներս մտնելով, հոբիթը տեսավ, որ հյուրերի դեմքերը, որոնց Էլրոնդը հրավիրել էր Խորհրդի, արտակարգ տագնապալի էին ու մռայլ:

Ֆրոդոն առաջինը Էլրոնդին տեսավ, ապա նկատեց Փառքաշատին և Գլոինին, իսկ անկյունում խոժոռ նստած էր Արագորնը, որը հագել էր իր խունացած ամենօրյա թիկնոցը: Հավաքվածներից մյուսներին Ֆրոդոն չէր ճանաչում: Էլրոնդը նրան նստեցրեց իր մոտ, մի հայացքով զննեց լուռ նստած հյուրերին ու ասաց.

— Թույլ տվեք ներկայացնել ձեզ հոբիթ Ֆրոդոյին՝ Բիլբոյի զարմիկին հեռավոր Հոբիթստանից: Նրա ճանապարհը դժվարին ու վտանգավոր է եղել, Իսկ Ազատք ստիպված է եղել մտնել ճակատամարտ մղելով:

Հետո Էլրոնդը տվեց մյուս հյուրերի անունները, որոնց Ֆրոդոն առաջին անգամ էր տեսնում: Դահլիճում նստած էր Գլոինի որդի Ձիմլին, Արծաթափայլ Նավահանգիստ բնակավայրից էլֆ Գելդորը, որին Ազատք էր ուղարկել Սերդան Քորաբելը, Հյուսիսային Չարքանտառի էլֆերի թագավորի՝ Թրանդուիլի որդի էլֆ Լեգոլասը, Էլրոնդի մի քանի էլֆ խորհրդականներ ավագ խորհրդական Էրեսթորի գլխավորությամբ: Իսկ բոլորից հեռու նստած էր բարձրահասակ, սևահեր մի տղամարդ՝ գեղեցիկ, ազնվածին ու առնական դեմքով և խաժ աչքերի խիստ հայացքով: Վաղուց մկրատ չտեսած նրա մազերը անկանոն խոպոպներով թափվում էին ուսերին՝ ծածկելով գունավոր քարերով արծաթե նուրբ մանյակը, ուսի վրայով գցված էր արծաթով դրվագված որսորդական փողով լանջափոկը, իսկ շքեղ հագուստը (նա հագնված էր հեծյալ ճամփորդի պես), որ փոշուց մոխրագույն էր դարձել, տեղ-տեղ ցեխոտված էր և ձիու քրտնքից տրորված, վկայում էր երկարատև ճամփորդությունների մասին: նա զարմանքով էր նայում Ֆրոդոյին ու Բիլբոյին:

— Բորոմիրն է,— նրան ներկայացրեց Էլրոնդը,— հարավում ապրող մարդկանց պատվիրակը: Նա այստեղ է ժամանել միայն այսօր առավոտյան, և ես թույլատրել եմ մասնակցել Խորհրդին, որովհետև նրա ժողովրդին վիճակված արհավիրքները կապված են Միջերկրի ընդհանուր աղետի հետ:

Էլրոնդի Խորհրդում քննարկված ամեն ինչ չէ, որ հարկ է վեր հանել մեր պատմության մեջ: Սկզբում քննարկվում էր ծայրամասային հողերի հարցը, որոնց մասին Ֆրոդոն ոչինչ չգիտեր, այդ պատճառով էլ ցրված էր լսում խոսողներին: Բայց երբ ձայնը տվեցին Գլոինին, հոբիթի համար իսկույն հետաքրքիր դարձավ. չէ՞ որ Դաինի հպատակների հետ Բիլբոն բարեկամական կապերի մեջ էր: Պարզվեց, որ Սարամիջի թագավորության թզուկները վաղուց արդեն անորոշ տագնապ են ապրում:

— Շատ տարիներ առաջ,— պատմում էր Գլոինը,— մեզ համակեց փոփոխություններ ապրելու ձգտումը: Ամեն ինչ սկսվեց աննկատելի, աստիճանաբար: Թզուկներից ոմանք, չգիտես ինչու, որոշեցին, որ Մենավոր Լեռան մեջ մեր տեղը նեղացել է, որ վատ չէր լինի ավելի ընդարձակ մի ապաստանատեղ գտնել: Խոսակցություններ գնացին մեր հայրերի քրտինքով ստեղծված Մորիա կամ, ինչպես ասում են թզուկների լեզվով՝ Քազադ-Դում թագավորության մասին: Շատերն էին պնդում, որ եկել է մեր պապենական տիրույթները վերադառնալու ժամանակը:

Մորիա... — Գլոինը տխուր հառաչեց,— Հյուսիսային աշխարհի թզուկների երազ... Մեր նախնիները ձգտել են հարստության ու փառքի, նրանք փորփրել-խրվել են լեռների ընդերքները՝ հանելով թանկագին քարեր ու մետաղներ, մինչև որ երկրի երես են բաց թողել հրե անդունդներում զմռսված սարսափը: Թզուկներն ստիպված եղան փախչել Մորիայից, բայց նրանք մշտապես հիշում էին նրա մասին՝ ահով ու այնտեղ վերադառնալու փայփայած հույսով: Սակայն սերունդը սերնդի հետևից փոխվում էր, և ոչ մի թզուկ, բացի Թրորից՝ իր ջոկատի հետ միասին, վճռականություն չէր ունենում պապերի հայրենիքը վերադառնալու, իսկ Թրորը հավերժ մնաց Քազադ-Դումում: Եվ ահա այնտեղ ճանապարհվեց Բալինը: Թագավոր հայր Դաինը չէր ուզում նրան բաց թողնել, բայց նա գնաց՝ համոզելով նաև Օրիին ու Օինին և այլ խիզախ թզուկների:

Դա երեսուն տարի առաջ էր: Սկզբում Բալինին ուղեկցում էր հաջողությունը՝ նրա ուղարկած սուրհանդակը պատմել էր, որ նրանք մտել են հնադարյան թագավորությունը և սկսել են վերականգնել լքված բնակատեղիները: Բայց այն ժամանակվանից ի վեր ոչ ոք Բալինի մասին այլևս չի լսել...

Դեհ իսկ հետո... համարյա մեկ տարի առաջ Դաինի մոտ եկավ ևս մի սուրհանդակ, բայց ոչ թե Բալինից, այլ հեռավոր Մորդորից: նա հայտնվեց գիշերը, սև ձիու վրա և, Դաինին կանչելով Պահակային Աշտարակի մոտ, ամբարտավանությամբ հայտնեց, որ Սաուրոն Մեծը՝ այդպես մեծարեց իր տիրոջը սուրհանդակը՝ ուզում է դաշն կնքել թզուկների հետ: Նա խոստանում էր մեզ վերադարձնել Մոգական Մատանիները, եթե մենք պատմեինք նրան հոբիթների մասին: «Սաուրոն Մեծին հայտնի է,— եզրափակել էր սուրհանդակը,— որ նրանցից մեկին մի ժամանակ դու լավ գիտեիր»:

Դաինը պատասխանն իսկույն չի գտել, և Սաուրոնի սուրհանդակը արհամարհական ավելացրել է. «Հզոր տիրակալ Սաուրոն Մեծը ենթադրում է, որ դու ի նշան բարեկամության, կգտնես այդ քոսոտ գողին,— հենց այդպես էլ արտահայտվել է սուրհանդակը,— և կխնդրես, իսկ եթե չի տա՝ կխլես Մատանին, որ նա մի ժամանակ գողացել է: Այդ Մատանի ոչինչ չարժե,— շարունակել է սուրհանդակը,— բայց Սաուրոն Մեծն ուզում է գործնականապես հավաստիանալ քո բարեկամությանը: Կատարիր Մեծ Տիրակալի հանձնարարությունը, և նա կտա քեզ երեք Մատանի, որ հին ժամանակներում պատկանել են թզուկներին... Մորիայի թագավորությունն էլ քոնը կդառնա, Մեծ Տիրակալն այդ մասին էլ կհոգա: իսկ եթե հոբիթին հաղթել չես կարող, ապա գոնե ասա, թե որտեղ է ապրում, և առատորեն կպարգևատրվես: Բայց վախեցիր Սաուրոն Մեծին խաբելուց...»:

Վերջին բառերը սուրհանդակը ֆշշացրել է, կարծես թե հանկարծ օձ է դարձել, այնպես որ Աշտարակը պահպանող զորականները սարսռացել են: Սակայն Դաինը հանգիստ ասել է.

— Ես չեմ կարող քեզ իսկույն պատասխանել: Ես պետք է մտածեմ քո ասածների մասին:

— Մտածիր, բայց շատ ժամանակ չծախսես,— բացահայտորեն սպառնացել է սուրհանդակը:

— Իսկ մի՞թե ես իմ ժամանակի տերը չեմ,— արժանապատվությունը չկորցնելով, հարցրել է Դաինը:

— Առայժմ տերն ես,— մռնչացել է սուրհանդակն ու առանց հրաժեշտ տալու կորել մթության մեջ:

Այդ ժամանակվանից մեզ կրծում է մութ տագնապը: Եթե նույնիսկ Սաուրոնի սուրհանդակի ձայնը մեղրի պես քաղցր լիներ, միևնույնն է, մենք կտագնապեինք՝ մեզ համար պարզ է, որ Սաուրոնի ամեն մի առաջարկության տակ սպառնալիք ու ստոր նենգություն է թաքնված: Մենք գիտենք, որ Մորդորի ամրապնդվող հզորությունը սնում են ժամանակին արմատախիլ չարված արմատները, բայց նրա էությունը նախկինն է մնում... Երկու անգամ վերադարձավ Սաուրոնի սուրհանդակը և երկու անգամ մեկնեց, առանց պատասխան ստանալու: Նա մեզ, իր խոսքերով ասած, վերջին ժամկետն է նշանակել և պատասխանի համար հայտնվելու է այս տարվա վերջին:

Ես եկել եմ Ազատք Բիլբոյին զգուշացնելու, որ թշնամին համառորեն որոնում է նրան և որպեսզի իմանամ, եթե իհարկե Բիլբոն դա գիտի, թե Թշնամու ինչի՞ն է պետք Մատանին, որն իբրև թե ոչինչ չարժե: Եվ մեկ էլ թագավոր Դաինը պատվիրեց մի խորհուրդ հարցնել Ազատքի տիրակալից, չէ՞ որ մեզ վրա է գալիս Սև Ստվերը: Բոլորովին վերջերս հայտնի դարձավ, որ Սաուրոնի սուրհանդակը գնացել է նաև Բրանդի՝ Լճափի թագավորության թագավորի մոտ: Իսկ Բրանդի վիճակը շատ ծանր է: Նրա արևելյան սահմաններում, մեկ էլ տեսար, պատերազմ բռնկվեց: Եթե սուրհանդակները պատասխան չստանան, Սաուրոնն իր Սև Զորագունդը կշարժի և՛ Դաինի դեմ, և՛ Բրանդի դեմ, իսկ Բրանդը վախենում է պատերազմից և կարող է ենթարկվել Սև Տիրակալին:

— Ճիշտ ժամանակին ես եկել,— ասաց Էլրոնդը: — Այսօրվա Խորհրդում քեզ պարզ կդառնա թե ինչ Մատանի է որոնում Թշնամին: Կհասկանաս, որ դուք ուրիշ ելք չունեք, բացի Թշնամու հետ կենաց մահու կռիվ մղելուց, նույնիսկ առանց այդ մարտում հաղթելու հույս ունենալու: Թշնամին ամբողջ Միջերկրի համար մեկն է: Իսկ Մատանին... Դուք ինքներդ եք կոչված այստեղ որոշելու, թե ինչ ենք անելու այդ Մատանին, որն իբրև թե ոչինչ չարժե...

— Ես ասացի կոչված ենք,— շարունակեց Էլրոնդը,— սակայն ես ձեզ չեմ կանչել Ազատք, դուք ինքներդ եք եկել, եկել եք միաժամանակ, և ձեր հանդիպումը պատահական համարել չի կարելի: Դուք կոչված եք լուծելու Մատանու հետ կապված շփոթը և վերջնականապես վճռելու Միջերկրի ճակատագիրը: Ուստի մենք կբացենք Մատանու գաղտնիքը, որը մինչև այժմ շատ քչերին է հայտնի: Եվ ամենից առաջ՝ Մատանու պատմությունը: Ես պատմությունը սկսում եմ՝ մյուսները կավարտեն այն:

Էլրոնդի հանգիստ ու հնչեղ ձայնը հստակորեն լսում էին բոլոր հրավիրվածները: Էլրոնդը պատմում էր Երկրորդ Դարաշրջանի մասին, երբ կռել էին Մոգական Մատանիները, և պատմում էր Մորդորի հնագույն տիրակալի՝ Սաուրոնի մասին: Այդ պատմության առանձին մասերը ծանոթ էին հյուրերից շատերին, իսկ ամբողջությամբ մինչ այդ ոչ ոք լրիվ չգիտեր, և հյուրերը շունչները պահած լսում էին Օստրանում ապրող էլֆ դարբինների, թզուկ-մորիացիների (այդպես էին անվանում Մորիայի թզուկներին) հետ նրանց սերտ բարեկամության մասին, Օստրանի էլֆերի իմացասիրության մասին և այն մասին, թե ինչպես Սաուրոնը բարեկամ ձևանալով, նրանց օգնություն առաջարկեց, նրանք էլ ընդունեցին ու արհեստներում անչափ հմտացան, իսկ Սաուրոնը իմացավ նրանց բոլոր գաղտնիքները և Մորդորում գտնվող Հրամեջ Լեռան գլխին կռեց Համիշխանության Մատանին, որ տիրանա մյուս Մատանիներին: Բայց էլֆ Սելեբրիմբերն իմացավ այդ մասին և թաքցրեց իր պատրաստած երեք Մատանիները, և ծայր առավ արյունահեղ, ավերիչ պատերազմը, ու Մորիայի թագավորության դարպասները փակվեցին:

Էլրոնդը հյուրերին համառոտ պատմեց, թե ինչպես է ինքը հետևել Համիշխանության Մատանուն, բայց այդ պատմությունը բոլորին հայտնի է, որովհետև իր ժամանակին նա կարգադրել է մանրամասնորեն այն գրել Եղելության Մատյանում, ուստի և հարկ չկա այն վերապատմելու: Հետո Էլրոնդը պատմեց Նումենորի մասին, այն մասին, թե ինչպես է կործանվել այդ պետությունը, այն մասին, թե ինչպես Մեծ Ժողովրդի թագավորները Ծովի կողմից վերադարձան Միջերկիր, պատմեց հզոր թագավոր Էլենդիլ Բարձրահասակի մասին, նրա որդիներ Իսիլդուրի և Անարիոնի մասին, որոնք երկու հզոր իշխանություն էին հիմնել. Արնորը՝ հյուսիսում, և Գոնդորը՝ հարավում: Սաուրոնը կռվի գնաց իշխանների վրա, իսկ նրանք դիմեցին էլֆերի օգնությանը և բանակցություններից հետո կնքվեց Մարդկանց ու էլֆերի Վերջին Դաշինքը:

Էլրոնդը հառաչեց և, մի քիչ լռելուց հետո, շարունակեց.

— Էլենդիլի և Գիլ-Գալադի միացյալ զորագունդը հավաքվեց Արնորում՝ Մորդոր արշավելու համար, և ես այն ժամանակ մտածեցի, որ նրա հզորությունն ու ուժը, նրա հպարտ դրոշներն ու հուժկու դյուցազուններն ինձ հիշեցնում են Առաջին Դարաշրջանը և Բելերիենդի էլֆերի Մեծ զորաբանակը, որը ջախջախեց մռայլ Թանգորոդրիմը, և էլֆերը որոշեցին, որ Թշնամու վերջը տվեցին, բայց շուտով հասկացան, որ չարաչար սխալվել են...

— Հիշեցնում են... Քե՞զ,— բարձրաձայն հարցրեց Ֆրոդոն՝ Էլրոնդի վերջին բառերից ապշահար: — Իսկ ես միշտ մտածում էի... — կմկմաց նա շփոթված այն բանից, որ Էլրոնդը լռեց: — Ես կարծում էի... Չէ՞ որ Առաջին Դարաշրջանը.. Չէ՞ որ այն վաղուց, շատ վաղուց է անցել...

— Իրավացի ես,— առանց ժպիտի նրան ասաց Էլրոնդը: — Սակայն ես այն հիանալի հիշում եմ: Իմ հայրը Էարենդիլն էր, ծնյալ էլֆական Գոնդոլին բնակատեղիում, իսկ մայրս Էլվինն էր, դուստրը Դիորի, որը Դորիաթցի Լյութիենի որդին էր: Ես Միջերկրի բոլոր երեք Դարաշրջանների վկան եմ և մասնակիցը Թշնամու հետ անհամար մարտերի, որոնք վերջանում էին մեզ համար սարսափելի պարտություններով կամ զարմանալի անպտուղ հաղթանակներով...

Ես մեծն Գիլ-Գալադի մունետիկն եմ եղել և մասնակցել եմ Մորդորի Դարպասի մոտ մղված ճակատամարտին, որն ավարտվեց Թշնամու ջախջախումով, որովհետև Գիլ-Գալադի Այգլոս նիզակի, ինչպես նաև Էլենդիլի Սրի հավասարը չգտնվեց Թշնամու զորաբանակում: Ես մարտնչել եմ նաև Օրոդրուինի՝ թարգմանաբար Հրամեջ Լեռան լանջերին, որտեղ նահատակվեց Գիլ-Գալադը և ընկավ Էլենդիլը՝ իր սուրը թշնամիների սաղավարտներին ջարդելով, բայց և Սաուրոնը նույնպես գետին տապալվեց Իսիլդուրի սրից, որը տիրեց Համիշխանության Մատանուն:

— Ա՛յ քեզ բան,— ճչաց Բորոմիրը,— ուրեմն Համիշխանության Մատանին պահպանվե՞լ է: Ըստ մեր ավանդությունների, այն անհետացել է, երբ ավարտվել է Երկրորդ Դարաշրջանը: Իսկ պարզվում է, որ դրան տիրացել է Իսիլդո՞ւրը:

— Այո, տիրացել է,— հաստատեց Էլրոնդը: — Թեև չպետք է այդպիսի բան աներ: Հարկավոր էր Մատանին ոչնչացնել հենց այն ժամանակ՝ Օրոդրուինի բոցերի մեջ, որտեղ որ ծնվել էր: Բայց Իսիլդուրը Մատանին վերցրեց: Դա միայն ես և Սիրդանը տեսանք՝ մյուս բոլոր ռազմիկները նահատակվել էին, և մենք փորձում էին նախազգուշացնել Իսիլդուրին, բայց նա մեր խորհուրդը չլսեց:

«Իմ եղբայրն ու հայրը սպանվել են,— ասաց նա մեզ,— իսկ Մատանին ավար եմ վերցրել արդար մենամարտում և կվերցնեմ որպես իմ արյունակիցների հիշատակ»: Սակայն երկար չտիրեց Մատանուն. այն դարձավ նզովք նրա համար և դեռ բախտը բերեց, որ ինքը պարզապես զոհվեց, այլ ոչ թե դարձավ Խավարի Թագավորության ուրվական: Այդ մասին գիտեինք միայն մենք՝ հյուսիսցիներս, այն էլ շատ քչերը,— շարունակում էր Էլրոնդը: — Հիրիկների հովտից, որտեղ զոհվել էր Իսիլդուրը, վերադարձան ընդամենը երեք մարդ և նրանց մեջ էր Օհթարը, նրա զինակիրը. նա պահպանել էր Էլենդիլի ջարդված սուրը, որով Իսիլդուրը նվաճեց Մատանին և վերադառնալով, կտորները տվեց Վալենդիլին, Իսիլդուրի որդուն, որը դաստիարակվել էր Ազատքում: Նարսիլը, ավելի ճիշտ՝ Նարսիլի երկու կտորը, որովհետև սուրը դեռևս վերաձուլված չէ, և նրա վաղեմի փառքը վերականգնված չէ, մինչև երեկ պահվում էր Ազատքում: Ես Թշնամու դեմ տարած հաղթանակներն անպտուղ անվանեցի... Վերջին հաղթանակը առավել լավ կլինի անվանել ապարդյուն: Սաուրոնը տապալվեց, բայց կենդանի մնաց, նա Մատանուց զրկվեց, բայց վերջինս պահպանվեց, Մորդորում Սև Ամրոցը հողին հավասարեցրին, բայց նրա հիմքը անվնաս մնաց, և քանի դեռ Համիշխանության Մատանին ոչնչացված չէ, քանի դեռ Չարի բունը արմատախիլ չի արված, Թշնամու լիակատար պարտությունը հնարավոր չէ: Շատ մարդիկ և շատ էլֆեր պատերազմի ժամանակ զոհվեցին՝ Իսիլդուրը, Անարիոնը, Էլենդիլը, Գիլ-Գալադը, վեհապանծ դյուցազուններն ու նրանց ռազմիկները: Մարդկանց ու էլֆերի այն ժամանակվա Դաշնը շքեղության համար չէ, որ Վերջին է կոչվել: Մահկանացուները Միջերկրում գնալով ավելանում են, բայց յուրաքանչյուր մարդու կյանքը կրճատվում է, իսկ Առաջնածինները գնալով պակասում են, չնայած ժամանակը նրանց վրա իշխանություն չունի: մեր ուղիները բաժանվում են, և մենք արդեն դժվարությամբ ենք հասկանում միմյանց:

Հիրիկների հարթավայրի ճակատամարտից քիչ անց Արնոր իշխանությունը անկում ապրեց, Էվենդիմ լճի մոտ գտնվեց Անումինոս քաղաքը ամայացավ և ժամանակը քայքայեց այն, իսկ Վալենդիլի սերունդները քոչեցին հյուսիսային բարձրավանդակի Ֆորնոսթ քաղաքը, բայց այդ քաղաքը նույնպես վաղուց լքված է: Այն անվանում են Մահացած Ֆորնոսթ, և մարդիկ խուսափում են այնտեղ գնալ, որովհետև թշնամիները արնորցիներին ցրել են և նրանց երբեմնի անմատչելի բերդերից մնացել են միայն օշինդրով ծածկված հողաթմբեր:

Գոնդորի իշխանությունը մինչև հիմա չի կործանվել, չնայած նրա տիրույթները խիստ նվազել են, իսկ սկզբում, հին Նումենորի նման, այն անշեղորեն աճում ու ամրապնդվում էր: Գոնդորի ասպետների գոռոզաշուք դղյակները, բերդերը՝ և ամրակառույց նավահանգիստները հռչակված էին իշխանության սահմաններից դուրս, հեռու հեռուներում: Գոնդորի մայրաքաղաքը, Աստղային Մինջնաբերդը կամ նումենորերեն Օսգիլիաթ քաղաքը կառուցված էր Անդուինի ոլորանում:

Այնտեղ, գետի բարձրադիր ափին Մեծ Իշխանի ընդարձակ այգում տնկեցին Սպիտակ Ծառի փոքրիկ սերմը, որը հասունացել էր դեռ Նախասկզբնական Դարաշրջանի օրերին Անդրծովյան Արևմուտքի հողերում: Ժամանակին Իսիլդուրն այդ սերմը բերել էր ծովի այն կողմից: Սերմն աճեց և մի քսան տարի հետո դարձավ հզոր, ճյուղառատ ծառ: Մայրաքաղաքից արևելք, Մթամած Լեռներում, բարձրանում էր Ծագող Լուսնի Բերդը, կամ նումենորերեն՝ Մինաս Իթիլը, իսկ դեպի արևմուտք, Սպիտակ Լեռներում՝ Մինաս Անորը կամ Արևմուտքի Բերդը:

Բայց ամենակարող ժամանակի սառը շունչը հանգցրեց Գոնդոր աշխարհի փառքը: Սպիտակ Ծառը ծերացավ ու չորացավ, իսկ արքա Մելենդիլը, Անարիոնի որդին, մահացավ առանց ժառանգ թողնելու, և նումենորցի արքաների տոհմը հանգավ: Հետո Մորդորը պահպանող պահակներին մի գիշեր նինջը հաղթեց, և Մութ Ուժերը, դուրս պրծնելով, թաքնվեցին Գորգորոթի բարձր պատերի հետևում, իսկ շուտով, նույնպես գիշերվա խավարին

ապաստանելով, գրավեցին Ծագող Լուսնի Բերդն ու կոտորեցին շրջապատի ողջ բնակչությանը, և Մինաս Իթիլը դարձավ Մինաս Մորգուլ կամ Մութ Ուժերի բերդ: Գոնդորի մարդիկ նահանջեցին արևմուտք և մնացին Արևմուտքի Բերդում՝ թախիծով անվանելով այն Մինաս Թիրիթ, որ նշանակում է Վերջին Հույսի Բերդ: Բերդերի միջև պատերազմ սկսվեց, Օսգիլիաթ քաղաքը հիմնովին ավերվեց ու նրա ավերակներում բնակվեցին ստվերներ՝ ուրվականներ գիշերը և թափանցիկ՝ ցերեկը:

Սերունդները գալիս փոխարինում էին իրար, և պատերազմը բազում կյանքեր էր խժռում, բայց Մինաս Թիրիթը շարունակում էր պատերազմել, և Թշնամին չկարողացավ ճեղքել-անցնել Անդուինից այն կողմ, ու ճանապարհը Քարե Հսկաներից մինչև ծով համեմատաբար անվտանգ է համարվում...

Այստեղ իմ պատմությունը մոտենում է ավարտին. իսիլդուրի զոհվելուց հետո համիշխանության Մատանին անհետ կորել է, և երեք Մատանին ազատություն են ստացել: Սակայն այժմ դրանք նորից վտանգի մեջ են, քանզի Համիշխանության Մատանին գտնվել է: Բայց այդ մասին ձեզ կտեղեկացնեն մյուս հյուրերը՝ վերջին իրադարձություններին ես չեմ մասնակցել:

Հենց որ Էլրոնդը լռեց, վեր կացավ բորոմիրը:

— Պատվարժան Էլրոնդ,— սկսեց նա,— թույլ տուր ինձ լրացնել Գոնդորի մասին քո պատմությունը, քանի որ ես Ազատք եմ ուղարկված գոնդորցիների կողմից և հյուրերին էլ, իհարկե, օգտակար կլինի իմանալ, թե ինչպիսի վտանգից ենք մենք նրանց պահպանում:

Հավատացեք, նումենորցի հարավցիները բնաջնջված չեն, և Գոնդոր աշխարհի փառքը չի մոռացվել, միայն մենք ենք պատնեշում Արևմուտքը Մորգուլից՝ հետ մղելով թշնամական զորքերի հարձակումները: Մտածեք, ինչ է սպասում արևմտյան հողերին, եթե թշնամիներն անցնեն Անդուինը...

Իսկ աղետը անխուսափելիորեն մոտենում է: Սև Ձորաց ուժերն աճում են: ճակատագրի Լեռը, իսկ ըստ ձեզ՝ Հրամեջ Լեռը՝ նզովյալ Օրոդրուինը, նորից ծխում է... Մեզ պարուրում է Խավարի Վարագույրը, որովհետև Մորդորի հզորությունը բազմապատիկ ավելացել է: Հենց որ Թշնամին վերադարձավ իր դղյակը, մենք կորցրինք Իթիլյան հողերը, որ գտնվում էին Անդուինի արևելյան ափերին իթիլ Բերդի պահպանության տակ: Իսկ սույն տարվա ամռանը, հունիսին մեզ վրա հարձակվեց մի հսկա զորաբանակ, որը Մորդորի սև դրոշների տակ միավորում էր վայրագ վայրենիներին և հորոդրիմցիներին, և մենք ստիպված եղանք նահանջել դեպի Գետը: Բայց Թշնամին մեզ համար սարսափելի է ոչ թե թվական գերակշռությամբ, այլ՝ որ նրան ծառայում են ինչ-որ Մութ Ուժեր: Նրանք հայտնվում են Սև Հեծյալների նման, որպես գիշերային հոծ ստվերներ, և երբ այդ Հեծյալները մարտի են բռնվում, նրանց դաշնակիցները մարտնչում են կատաղածի պես, իսկ մեր ռազմիկներին կաշկանդում է սարսափը, և նրանք չեն կարողանում ղեկավարել ձիերին, որոնք Սև Հեծյալների հայտնվելուն պես սրտապատառ փախչում են: Վերջին ճակատամարտում արևելյան ափին կենդանի էին մնացել միայն մի քանի հարյուր գոնդորցի և, նահանջելով Գետից այն կողմ, քանդել էին կամուրջը՝ ավերված Օսգիլիաթում միակ կամուրջը, իսկ ջոկատը, որ քողարկում էր նահանջը, սեղմվեց Գետին ու անխնա կոտորվեց:

Ընդամենը չորս հոգի փրկվելու երջանկություն ունեցան՝ իմ եղբայրը, ես (մենք կռվում էինք այդ ջոկատում) և երկու հազվագյուտ հուժկու ռազմիկ, որոնք կարողացան, ինչպես մենք, լողալով անցնել Անդուինը...

Հիմա մենք ամրացել ենք արևմտյան ափին, և թշնամիները չեն կարող անցնել Գետը, իսկ մեր արևմտյան և հյուսիսային հարևանները, նրանք որ գիտեն տեղի ունեցած թեժ մարտի մասին, մեզ շնորհակալության ջերմ խոսքեր են հղում... Բայց դեռ ոչ մի անգամ օժանդակ ուժ չեն ուղարկել, և երբ մեր Տիրակալը օգնություն է խնդրում՝ նրա կոչին արձագանքում են միայն Մուստանգրիմցիները:

Եվ ահա գոնդորցիների համար այս ծանր օրերին ես որոշեցի հասնել հեռավոր Ազատք: Ստիպված եղա բազում հարյուրավոր լիգեր հաղթահարել գաղտնի ու վաղուց լքված արահետներով՝ հարյուր տասնմեկ օր եղա ճանապարհին: Բայց ինձ մտահոգում է ոչ թե ռազմական դաշինքը՝ Էլրոնդի իմաստնությունը ասացվածք է դարձել, այլ մեզ իմաստուն խորհուրդ է հարկավոր... Խորհուրդ և անհասկանալի մարգարեությունների մեկնաբանում:

Բանն այն է, որ հունիսյան հարձակման (որից հետո մեզ մղեցին Գետի մյուս կողմը) նախօրեին ես ու եղբայրս, երկուսս էլ լուսադեմին, ճիշտ և ճիշտ նույն երազն ենք տեսել:

Երազում տեսել ենք, որ արևելյան երկինքը մթնեց և հորիզոնում ճարճատեց ամպրոպը, բայց արևմուտքում մայրամուտի հրացոլքում ավելի պայծառ փայլեց երկնագույնը, և մի զրնգուն ձայն ցածր խոսեց.

Կռվի մեջ կյանքը չխնայելով
Էլենդիլն իր հաղթ թուրը ջարդեց,
Իսկ Իսիլդուրը հենց այդ նույն կռվում
Անեծք վաստակեց:
Բայց Իմլադրիսում նորից են կռում
Թուրն առաջնորդի.
Սուր թուրը նրա,
Եվ կոլոտիկը վերցնել է ուզում
Նզովքն իր վրա:

Ես ու եղբայրս այդ տարօրինակ խոսքերը չհասկացանք և դիմելով մեր հորը՝ Դենեթորին, Մինաս Թրիրթ ամրոցի Գերագույն Տիրակալին և Միջերկրի հնագույն ավանդությունների լավատեղյակին, իմացանք, որ հին ժամանակներում Իմլադրիս անվանում էին էլֆերի բնակավայրը, որը առասպելական իմաստուն Տիրակալ Էլրոնդի օրոք հիմնվել է ինչ-որ տեղ հեռավոր հյուսիսում: Գոնդորի ժողովրդին կործանում է սպառնում, և մեզանից յուրաքանչյուրը հասկանում է դա: Եվ ահա իմ եղբայրը գլուխն է մտցրել, որ ես ու նա մարգարեական երազ ենք տեսել, դրա համար էլ պետք է գտնենք Էլրոնդին և պարզենք խորհրդավոր գուշակության իմաստը: Բայց ճանապարհը դեպի հյուսիս դժվարին է ու վտանգավոր, քանի որ վաղուց արդեն ոչ ոք ճանապարհից չի օգտվում, իսկ ինձ հայտնի են արահետներ, և եղբորս փոխարեն ես ուղևորվեցի այստեղ: Հայրս դժկամությամբ համաձայնեց իմ ճանապարհվելուն: Երկար դեգերելով հյուսիսային հողերում, որովհետև Էլրոնդ Իմաստունի մասին շատերն էին լսել, բայց քչերը գիտեին, թե նա որտեղ է ապրում, ինձ հաջողվեց գտնել ճանապարհը և բարեհաջող հասնել մինչև Իմլադրիս:

— Եվ այստեղ քեզ համար շատ գաղտնիքներ կբացվեն,— անշտապ վեր կենալով տեղից,— ասաց Արագորնը: Նա իր թուրը դրեց սեղանին, Էլրոնդի առջև, և հյուրերը տեսան, որ այն երկու կես է արված: — Նայիր, ահա առաջնորդի կոտրված Թուրը:

— Ո՞վ ես դու և ի՞նչն է քեզ կապում Գոնդորի հետ,— չափազանց զարմացած հարցրեց Բորոմիրը՝ նայելով խունացած թիկնոցին և դունադանի նիհարած դեմքին:

— Նա Արագորնն է, Արաթորնի որդին,— ցածր պատասխանեց Բորոմիրին Էլրոնդը,— Իսիլդուրի՝ Իթիլ ամրոցի տիրոջ հեռավոր, բայց միակ և անմիջական ժառանգը: Դունադանները՝ հյուսիսցիները, նումենորցիների սերունդները, Արագորնին իրենց առաջնորդն են համարում... բայց նրանք, դժբախտաբար, քիչ են մնացել:

— Ուրեմն այն քե՞զ է պատկանում,— տեղից թռչելով, բացականչեց Ֆրոդոն, ոչ այն է թեթևացած, ոչ այն է վախով:

— Այն ո՛չ քեզ է պատկանում, ո՛չ ինձ,— հանգիստ, բայց ծանրակշիռ ասաց Արագորնը: — իսկ հիմա, այդպես է վճռել ճակատագիրը, հատկապես դու ես նշանակված դրա Պահապանը...

— Ժամանակը եկել է, Մատանին ցույց տուր,— ասաց Գանդալֆը՝ Ֆրոդոյին դիմելով: — Թող Բորոմիրն ակնառու համոզվի, որ իր երազն իրականություն է...

Դահլիճում մեռյալ լռություն տիրեց, բոլորը լարված նայեցին Ֆրոդոյին, իսկ նա՝ իրեն կորցրած տարօրինակ կերպով սարսափահար, զգաց, որ չի ուզում Մատանին ցույց տալ, որ իր համար նույնիսկ դժվար է Մատանուն մատով դիպչելը: Բայց նա կարողացավ հաղթահարել ինքն իրեն և դողացող ձեռքով հանեց Մատանին: Վերջինս մերթ առկայծելով, մերթ վառ փայլատակելով, դահլիճում հավաքվածների հայացքներն իրեն գամեց:

— Ահա այն, Իսիլդուրի Նզովքը,— ասաց Էլրոնդը:

— Կոլոտիկ,— շշմած մրթմրթաց Բորոմիրը՝ փայլուն աչքերով նայելով Մատանին բարձր պահած Ֆրոդոյին: — Այդպես, ուրեմն, հասավ Գոնդորի ժողովրդի Վերջի Հույսի ժամը... Բայց այդ դեպքում մեր ինչի՞ն է պետք Կոտրված Թուրը:

— Դու չհասկացար. ասված է՝ եկել է ժամը, բայց չի ասված Մինաս Թիրիթի վերջին ժամը,— հանգիստ բացատրեց Բորոմիրին Արագորնը: — Բայց ճակատագրական ժամն իսկապես եկել է, և այն մեզ մեծ գործերի է կոչում: Կոտրված Թուրը պատկանում էր Էլենդիլին, և նրա սերունդները պահպանել են այդ թուրը, չնայած ուրիշ ոչինչ չեն պահպանել, քանի որ հնում արնորցիներին գուշակել էին, որ երբ գտնվի Իսիլդուրի Նզովքը, ապա նրա հոր Թուրը հնարավոր կլինի վերականգնել և այն կվերածնվի Նզովքի՝ ընդդեմ թշնամիների: Արդ ցանկանո՞ւմ ես արդյոք դու, որ Էլենդիլի ժառանգն օգնության շտապի Գոնդորի ռազմիկներին...

— Ես եկել եմ խորհուրդ հայցելու և ոչ թե օգնություն,— հպարտ պատասխանեց Բորոմիրը Արագորնին: — Բայց Գոնդորի գլխին ծանր փորձություններ են կախված, և մենք չպետք է հրաժարվենք Էլենդիլի սրից... Եթե այն, ինչը ժամանակին թաղվել է անցյալում, իսկապես կարող է վերադառնալ աշխարհ,— ակնհայտ անվստահությամբ ավելացրեց նա:

Ֆրոդոն զգաց, որ Բիլբոն զայրանում է. Բորոմիրի կասկածամտությունը վիրավորել էր նրան: Հանկարծ նա ոտքի թռավ ու կարկտի պես շարեց.

Ուրիշ է փայլը հնագույն ոսկու,
Հին սրի շեղբին դեռ ժանգ չի պատել,
Մարտադաշտ կելնի Հետքագետ արքան,
Հասուն լինելը ծեր լինել չէ դեռ:

կանցնեն, կգնան չարիք ու փորձանք,
Եվ սուրը նորից կշողա, կայրի,
Արքային արքա կկոչեն դարձյալ՝
Ի պատիվ անցած մի այլ արքայի:

Արագորնը ժպտալով լսեց Բիլբոյին մինչև վերջ (որն իր սեփական բանաստեղծությունն էր կարդում), իսկ հետո լրջանալով ասաց Բորոմիրին.

— Ես ներում եմ քո անվստահությունը: Միթե ես չգիտեմ, որ դույզն իսկ նման չեմ Իսիլդուրի և նրա հոր քանդակներին, որոնք տեսել ես Դենեթորի ապարանքում: Ես մեծն Իսիլդուրի ժառանգն եմ, բայց ընդամենը միայն ժառանգը և ո՛չ Իսիլդուրն ինքը: Ես երկար կյանք եմ ապրել: Եվ հավատա, այն մի քանի հարյուր լիգը, որ ընկած են Ազատքի և Գոնդորի միջև, միայն մի փոքր մասն է այն անհամար լիգերի, որ ես հաղթահարել եմ իմ կյանքում: Բազում գետեր ու լեռնաշղթաներ, ճահճոտ հարթավայրեր ու ամայի սարահարթեր եմ ոտքի տակ տվել, ես տեսել եմ բազում հեռավոր երկրներ, որտեղ փայլում են մեզ համար անծանոթ և օտար աստղեր...

Բայց ես հյուսիսն եմ համարում իմ հայրենիքը: Այստեղ արքա Վալենդիլի ժամանակներից ի վեր, ծնվել ու մահացել են իմ բոլոր նախնիները: Արնորցիների կյանքը դժվար է եղել, սակայն Թուրը փոխանցվել է սերնդե սերունդ (հորից որդուն)՝ հիշեցնելով մեր երբեմնի հզորության մասին... Չնայած մենք այն պահել ենք էլֆերի մոտ: Եվ ահա թե ինչ կասեմ քեզ, Բորոմիր: Մենք՝ դունադաններս, քիչ ենք մնացել և ստիպված ենք մշտապես դեգերել, որովհետև որպես սահմապահներ անխոնջ փնտրում ենք Թշնամու սպասավորներին, որոնք չափչփում են անծայրածիր Խլուտը, որը բաժանում է արևմտյան ու արևելյան հողերը, իսկ երբեմն էլ հասնում են բնակելի շրջաններ:

Դու ասացիր՝ մենք միայնակ պատնեշում ենք Արևմուտքը՝ ընդդիմանալով Թշնամու զորքերի ճնշմանը: Բայց հենց որ դուք հանդիպեցիք Սև Հեծյալներին, թշնամիները ձեզ մղեցին Անդուինից այն կողմ: Ուրեմն, Բորոմիր, աշխարհում շատ ուժեր կան, բացի Թշնամու կազմակերպված զորքից, որոնց հարկ է լինում հակահարված տալ: Դուք պաշտպանում եք ձեր սահմանները՝ հարևաններին անջրպետելով Մորգուլի զորաբանակներից և այլևս ոչ մի բանի մասին, բացի սեփական սահմաններից, հոգ չեք տանում, իսկ մենք՝ սահմանային Խլուտի պահակներս, պայքարում ենք բոլոր Մութ ուժերի դեմ: Ոչ թե Թշնամու զորաբանակը, այլ Անանուն Վախը հյուսիսի ու արևմուտքի բնակիչներին կցրեր, եթե արնորցիները չթափառեին վայրի Խլուտում՝ առանց դադարի կռվելով Մութ Ուժերի հետ: Ասա, ո՞վ իրեն հանգիստ կզգար՝ նույնիսկ իր բնակարանի պատերի ներսում, ամենահեռավոր ու խաղաղ երկրներում, եթե Մորդորի ուրվական հպատակները անարգել մուտք գործեին արևմտյան հողեր: Ո՞վ կխիզախեր ճանապարհ դուրս գալ: Բայց երբ անտառի սև թավուտներից, խրուտ

ճահիճներից կամ միգապատ կիրճերից դուրս են սողում Մորդորի մութ դաշնակիցները, նրանց մշտապես դիմավորում են արնորցիները, և նրանք նահանջում են լեռների հետև:

Իսկ մենք նույնիսկ շնորհակալական խոսք չենք պահանջում: Ճամփորդները կասկածանքով ու խեթ են նայում մեզ, Միջերկրի քաղաքացիներն ու գեղջուկները արհամարհալի կարեկցանքով թափառաշրջիկ են անվանում... Բոլորովին վերջերս մի գիրուկ, որն անգիտակցությամբ ապրում է այնպիսի արարածների հարևանությամբ, որոնց մասին եթե ճիշտն իմանար, վախից կմեռներ, ինձ անվանեց (բնավ չցանկանալով անպատվել) Պանդուխտ... Նա չգիտե, թե ինչու ենք մենք դեգերում և ներողամտորեն խղճում է անդադրում թափառականներին: Բայց մեզ հարկավոր չէ նրա շնորհակալությունը: Նա, իր բոլոր ազգակիցների ու հարևանների նման, ապրում է խաղաղ, հանգիստ ու երջանիկ՝ ահա թե ինչն են «թափառականները» պարգև համարում: Ավելի ճիշտ համարում էին...

Որովհետև այժմ աշխարհը նորից սկսվում է փոխվել: Իսիլդուրի Նզովքը՝ Համիշխանության Մատանին, երկարատև անգոյությունից հետո հայտնվել է: Մեզ մեծ ճակատամարտ է սպասում: Կոտրված Թուրը նորից են կռելու, և ես քեզ հետ միասին կուղևորվեմ Մինաս Թիրիթ:

— Իսիլդուրի Նզովքը հայտնվել է... — կրկնեց Բորոմիրը Արագորնի բառերը: — Իսկ ես տեսա փայլուն Մատանին, որ մեզ բոլորիս ցույց տվեց Կոլոտիկը: Բացատրիր ինձ, ինչո՞ւ եք այդպես հաստատ համոզված, որ դա հենց Իսիլդուրի Մատանին է: Նա մահացել է մեր Դարաշրջանից առաջ, և Մատանին, ասում են, անհետ կորել է: Որտե՞ղ է եղել այս բոլոր տարիներին... Ինչպե՞ս է ընկել այժմյան տիրոջ մոտ:

— Այդ մասին կիմանաս,— խոստացավ Էլրոնդը:

— Սակայն ո՛չ հիմա, չէ՞, հարգելի տանտեր,— անհանգստացած տեղեկացավ Բիլբոն: — Ես զգում եմ, որ ճաշի ժամանակն է, և ես անպայման պետք է ուժերս վերականգնեմ:

— Ես դեռ ոչինչ չեմ խնդրել քեզնից,— ժպիտը թաքցնելով ասաց նրան Էլրոնդը: — Բայց քանի որ ինքդ քո մասին հիշեցրիր մեզ, ապա խնդրում եմ, պատմիր քո պատմությունը: Եթե դրանից պոեմ չես ստեղծել, ապա, ինչ արած, արձակ շարադրիր մեզ: կարծում եմ, հարկավոր չէ բացատրել քեզ, որ ինչքան կարճ ստացվի պատմությունդ, այնքան շուտ կարող ես ուժերդ վերականգնել:

— Ի՜նչ արած, լա՛վ,— համաձայնեց Բիլբոն: — Այսօր ես կպատմեմ իրական պատմություն: Եվ եթե հյուրերից որևէ մեկը զարմանա,— Բիլբոն խեթ նայեց Գլոինին,— թող աշխատի անցյալը չփորփրել: Վերջին տարիներին ես շատ բան եմ հասկացել... Ուրեմն, թող ինձ էլ հասկանան ու ներեն... Ահա թե ինչ է պատահել իրականում...

Հյուրերը, որոնք նախկինում Բիլբոյին երբեք չէին հանդիպել, զարմացած լսում էին նրա արկածների մասին, և ծեր հոբիթը շատ ուրախ էր, որ կարող է պատմել Գոլլումի հետ հանդիպման մասին՝ հիշելով բացարձակապես բոլոր մանրամասները: Նա բոլորը կրկնեց, բոլոր հանելուկները մեկ առ մեկ: Նա հաճույքով կպատմեր նաև հրաժեշտի խնջույքի մասին, իր անհետանալու մասին, դեպի Ազատք ճանապարհի մասին... բայց Էլրոնդը ձեռքը բարձրացրեց ու ասաց.

— Հրաշալի է, բարեկամս, մեզ համար կարևոր էր իմանալ, որ դու մեկնելուց առաջ Մատանին հանձնել ես Ֆրոդոյին: Բեր լսենք քո փոխանորդին:

Ֆրոդոն պատմեց իր բոլոր չարաբաստիկ արկածների մասին՝ այն ժամանակից ի վեր, ինչ դարձել էր Մատանու Պահապանը, բայց ունկնդիրների ուշադրությունը նրան չէր ուրախացնում: Իսկ նրանց հետաքրքրում էր Ֆրոդոյի յուրաքանչյուր քայլը, Հեծյալների վարքագծի բոլոր մանրամասները: Հյուրերը շարունակ ընդհատում էին Ֆրոդոյին, որ քննարկեն անգամ չնչին մանրամասնությունները:

— Վատ չէ, բարեկամս,— ասաց Բիլբոն, երբ նա լռեց ու թեթևացած նստեց: — Ափսոս, որ շարունակ ընդհատում էին քեզ: Ես հասցրի որոշ բաներ գրի առնել, բայց ոչ բոլորը, և դեռ կվերադառնանք դրան: Դեպի Ազատք գնալու ճանապարհին քո արկածները մի քանի գլուխ կկազմեն գրքում, եթե կարողանամ ավարտել այն:

— Այո, երկար պատմություն ստացվեց,— ասես ջանք թափելով ասաց Ֆրոդոն: — Եվ այնուամենայնիվ այն, իմ կարծիքով, կիսատ է մնում, հատկապես առանց Գանդալֆի հանգամանալից պատմության:

Հոբիթներից քիչ հեռու նստած Գելդորը լսեց Ֆրոդոյի վերջին դիտողությունը:

— Կոլոտիկն իրավացի է,— Էլրոնդին դիմեց նա,— Մատանու պատմությունը կիսատ է թվում: Ես էլ եմ ուզում որոշ բաներ իմանալ: Դուք չպատասխանեցիք Բորոմիրի հարցին՝ այդ որտեղի՞ց է պարզ ձեզ համար, որ կոլոտիկների մատանին Մորդորի Սև Տիրակալն է կռել: Եվ այդ մասին ի՞նչ է մտածում Սարումանը: Նա Թշնամու սովորությունները լավ է ուսումնասիրել, բայց չգիտես ինչու, հիմա մեզ հետ չէ: Ի՞նչ խորհուրդ կտար մեզ Սարումանը, եթե իմանար այն, ինչ մենք գիտենք:

— Քո հարցերը,— պատասխանեց Էլրոնդը,— այնպես սերտ են միահյուսվում մեկը մյուսին, որ դրանք մեզ համար կպարզի միայն այն պատմությունը, որ կպատմի Գանդալֆը: Այն կավարտի Մատանու պատումը, քանի որ Գանդալֆը մեր բոլորից շատ գիտե այդ մասին:

— Գելդորն ուղղակի ի մի չբերեց այն ամենը, ինչ լսեց Խորհրդում,— սկսեց Գանդալֆը: — Ֆրոդոյին հետապնդում են Սև Հեծյալները, Դաինին խոստանում են վերադարձնել Մոգական Մատանիները... եթե նա տեղեկություն տա Բիլբոյի մասին... Մի՞թե պարզ չէ, որ Բիլբոյի գտածը Մորդորի Տիրակալին խիստ հարկավոր է: Իսկ Բիլբոն, ինչպես հայտնի է, Մատանին է գտել: Այժմ մտածենք մյուս Մատանիների մասին: Ինը Մատանիներին տիրում են Սև Հեծյալների կերպարանք ընդունած Նազգուլները. Յոթը կորած են, կամ ոչնչացված: — Այս խոսքերից Գլոինը ցնցվեց, բայց, ինքն իրեն տիրապետելով՝ լռեց: — Երեքի ճակատագիրը նույնպես մեզ հայտնի է: Ուրեմն ո՞ր Մատանին է փնտրում Թշնամին:

Բորոմիրն իրավացի է. գետի և անձավի միջև՝ Մատանու կորստի և գտնվելու միջև, բազմադարյա անդունդ է բացված, որը իմաստուններն անշտապ ուսումնասիրում են... չափազանց անշտապ և չափազանց երկար, նրանք մոռացել են Թշնամու իմաստնության մասին: Իսկ նա, իհարկե, անգործ չի նստել և բացահայտել է իսկությունը մեզանից քիչ ուշ, բարեբախտաբար ուշ՝ այս ամառ: Եվ այնուամենայնիվ, քիչ էր մնում իմաստուններն ուշանային:

Հավաքվածներից ոմանց հայտնի է, որ մեր Դարաշրջանի հենց սկզբին այցելեցի Դուլ Գուլդուրի կախարդին և, գաղտնի հետախուզելով, թե ինչով է զբաղվում, հասկացա, որ մեր կասկածները հաստատվում են՝ դա Սաուրոնն էր, նորից կենդանացած և ուժ հավաքող մեր դարավոր Թշնամին: Եվ ինչ-որ մեկը, իմ կարծիքով, դեռ հիշում է, որ Սարումանը այն ժամանակ Իմաստունների Խորհրդին համոզեց պատերազմ չսկսել, ու երկար տարիներ մենք միայն դիտում էինք: բայց երբ մռայլ Դուլ Գուլդուրի գլխին կուտակված չարագույժ ամպը դեպի հյուսիս սողաց, նույնիսկ Սարումանը հավանություն տվեց պատերազմին, և Իմաստունների Միացյալ Խորհուրդը Սև Տիրակալին դուրս քշեց Չարքանտառից: Նույն տարում գտնվեց Մատանին՝ տարօրինակ զուգադիպություն, եթե դա զուգադիպություն է:

Բայց Իմաստունները չափազանց ուշացրին, մեր հաղթանակն անպտուղ եղավ, ինչպես և գուշակում էր Ազատքի տերը: Սաուրոնը նույնպես հետևում էր մեզ և հասցրեց նախապատրաստվել մեր հարվածներին՝ թաքստոցավայրից կառավարելով Մորդորը Ինը Սպասավոր Ուրվականների օգնությամբ, որոնք գրավեցին Մորգուլի ամրոցը: Երբ մեր զորքը մոտեցավ Չարքանտառին, նա ձևացրեց, թե ընդունում է մարտը, իսկ ինքը սրընթաց նահանջելով հարավ, Մորդորի սահմանների վրա տապալեց պահակներին, ոչնչացրեց Սև Դղյակի պահապաններին և բացեիբաց իրեն Տիրակալ հռչակեց: իր տիրույթներում նա անխոցելի էր մեր հապշտապ հավաքված զորքի համար, և մենք նորից խորհուրդ գումարեցինք՝ հասկանալով, որ նա փնտրում է Համիշխանության Մատանին: Արդյո՞ք Թշնամին նոր բան չի իմացել համառորեն Մատանին փնտրելիս, ահա թե ինչ էր քննարկվում վերջին Խորհրդում: Բայց Սարումանը կարողացավ հանգստացնել Իմաստուններին՝ կրկնելով, ինչպես և անում էր հաճախ, որ Համիշխանության Մատանին ընդմիշտ չքվել է:

«Թշնամուն հայտնի է,— ասել էր Սարումանը,— որ մենք մինչև հիմա չենք գտել Մատանին, և հուսալով գտնել այն՝ նա ժամանակ է կորցնում: Նրա հույսերն իրականանալու բախտ չունեն՝ Մատանին կուլ է տվել Մեծ Անդուինը: Եվ մինչ Սաուրոնը անդեմ ուրվական էր, հոսանքը նրա գանձը տարավ Ծով, իսկ ծովի ընդերքից ոչինչ չի վերադառնում: Համիշխանության Մատանին հավետ չքվել է:»

Գանդալֆը լռեց ու նայեց պատուհանից դուրս, այնտեղ, որտեղ բարձրանում էին Մշուշապատ Լեռները, որոնց ստորոտում հոսում էր երկար ժամանակ Համիշխանության Մատանուն հանգրվան տված գետը:

— Իմ մեղքը ծանր է,— քիչ լռելուց հետո ասաց Գանդալֆը: — Ինձ հանգստացրին Սարումանի խոսքերը, և վտանգը ես շատ ուշ հայտնաբերեցի:

— Բոլորս էլ մեղավոր ենք,— խոսեց Էլրոնդը: — Բայց գուցեև միայն քո շնորհիվ է, որ Խավարի Վարագույրը դեռևս չի իջել Միջերկրի վրա:

— Ինձ համոզեցին Սարումանի փաստարկները,— խոր հառաչելով շարունակեց Գանդալֆը,— բայց հոգուս խորքում կանխազգում էի վտանգը, և այդ պատճառով էլ շատ էի ուզում իմանալ, թե որտեղ, ինչպես և երբ է Համիշխանության Մատանին ընկել այդ տարաբախտ չարագործ Գոլլումի ձեռքը: Նա պետք է դուրս սողար ստորգետնյա որջից, որպեսզի փնտրեր ու գտներ իր «սքանչելին», և ես որոշեցի հետևել նրան: Իհարկե, նա դուրս սողաց, բայց ճարպկորեն խույս տալով հետապնդողներից, նորից չքացավ՝ ասես գետնի տակն անցավ: Իսկ ես (երբեք այդ ինձ ներել չեմ կարող) հանգիստ հետևում էի Թշնամուն ու ոչինչ չէի անում:

Ժամանակը նորանոր հոգսեր էր ծնում և աստիճանաբար բթացնում իմ հին սարսափը... Բայց մի անգամ այն անսպասելիորեն ալեկոծվեց՝ վերածվելով խոր տագնապի: Ո՞վ է այդ Մատանու իսկական տերը, որ Բիլբոն փախցրեց Գոլլումից: Եվ ի՞նչ պետք է անեմ ես, եթե իմ կանխազգացումները հաստատվեն: Ահա թե ինչ էր հարկավոր ինձ որոշել: Բայց ես ոչ մեկի հետ այդ մասին չէի խոսում, որովհետև անզգուշորեն ասված խոսքերը կարող են լսել ոչ միայն բարեկամները: Թշնամու հետ մեր անհամար մարտերում շատախոսությունը երբեմն աղետի էր վերածվում, և մենք սովորեցինք վախենալ դավաճանությունից:

Ինձ Բիլբոյի Մատանին հետաքրքրեց մոտավորապես տասնյոթ տարի առաջ: Ես այն ժամանակ շատ արագ համոզվեցի, որ Հոբիթստանի շուրջը վխտում են հրեշները: Նույնիսկ որոշ գազաններ ու թռչուններ որպես լրտես էին ծառայում Սև Տիրակալին: Ես ստիպված եղա դիմել դունադանների օգնությանը, և նրանք բավական թվով լրտեսներ ոչնչացրեցին, իսկ երբ իմ կասկածները հայտնեցի Արագորնին, նա համոզեց ինձ գնալ Խլուտ՝ Գոլլումին փնտրելու:

— Ես Գանդալֆին համոզեցի,— միջամտեց Արագորնը,— որ հարկավոր է անպայման բռնել Գոլլումին, թեպետ նա կարծում էր, որ արդեն ուշացել ենք: Բայց ես, Իսիլդուրի ժառանգն ու սերունդը, ուզում էի քավել նրա մեղքը, և Գանդալֆի հետ մեկնեցի որոնումների:

Գանդալֆը Խորհրդին համառոտ պատմեց, թե ինչպես է Արագորնի հետ միասին դեգերել Խլուտի հողերում, հարավում նրանք հասել են մինչև Մթամած Լեռները, որոնց մյուս կողմում Թշնամու տիրապետությունն է, և այնտեղ առաջին անգամ լսեցին Գոլլումի մասին:

— Մենք կարծում էինք, թե նա թաքնվում է լեռներում ինչ-որ տեղ, խուզարկեցինք համարյա յուրաքանչյուր կիրճ, և այնուամենայնիվ չկարողացանք գտնել, և ինձ մռայլ հուսահատություն պատեց: Բայց հենց հուսահատությունը թարմացրեց իմ հիշողությունը, և ես հանկարծ հիշեցի Սարումանի խոսքերը, որ ականջի ծայրով լսել էի Խորհրդում: «Մոգական Մատանիները,— ասաց նա այն ժամանակ,— մեկը մյուսից տարբերվում են թանկագին քարերով: Իսկ իր Մատանին Սաուրոնը ձուլել է բոլորովին հարթ, սակայն վրան գաղտնագիր կա, և իմաստունը կարող է կարդալ այն»:

Սարումանն այլևս ոչինչ չասաց: Եվ ահա նրա խոսքերը հիշելով սկսեցի մտածել, թե ով կարող է իմանալ ինչպես է հայտածվում գաղտնագիրը: Գիտեր Մատանու ստեղծողը՝ Սաուրոնը: Իսկ Սարումա՞նը... Իր ողջ խոր իմաստությամբ հանդերձ, նա այդ գաղտնագիրը հասկանալ չէր կարող, քանզի երբևէ տեսած չկար Մատանին, ուրեմն և ինչ-որ չափով լուծումը գտել է: Բացի Սև Տիրակալից էլ ո՞վ է տեսել Մատանին մինչև դրա անհետանալը... Միայն մեկ մարդ՝ Իսիլդուրը: Ես հրաժարվեցի Գոլլումին գտնելու անհույս որոնումներից և, ժամանակ չկորցնելով, ուղևորվեցի Գոնդոր: Մի ժամանակ այնտեղ իմաստուններին պատվում էին, իսկ Սարումանի նկատմամբ հատուկ հարգանք էին տածում՝ նա երկար ժամանակ հյուրընկալվում էր Տիրակալի մոտ: Գերագույն տիրակալ Դենեթորն ինձ շատ ավելի զուսպ ընդունեց, քան առաջներում և բավական տհաճությամբ թույլ տվեց մտնել հնամյա ձեռագրերի և հնագույն գրքերի Մատենադարան:

«Եթե քեզ, ինչպես ինքդ ես ասում, հետաքրքրում են Գոնդորի հնամյա տարեգրությունները, ինչ կա որ, կարդա,— մռայլ ասաց նա: — Իսկ ինձ համար անցյալն ապագայից պարզ է... Դե դա արդեն իմ գործն է: Սակայն նույնիսկ Մեծ Իմաստուն Սարումանն այստեղ գտել է միայն այն, ինչ ես գիտեմ»:

Այդպես ասաց ինձ Դենեթորը: Եվ այնուամենայնիվ ես Մատենադարանում գտա հին ձեռագրեր, որոնք քչերն են ընդունակ հասկանալ, քանի որ հին ժողովուրդների բարբառները գիտեն միայն իմաստուններից իմաստունները: Այո, Բորոմիր, ես այնտեղ փնտրեցի և գտա անձամբ Իսիլդուրի ձեռքով գրվածը, հազիվ թե որևէ մեկն այն կարդացած լիներ՝ բացի ինձանից, և կարող է պատահել՝ նաև Սարումանից: Պարզվում է, որ Թշնամու դեմ տարած հաղթանակից հետո Իսիլդուրը վերադարձել է Գոնդոր, և ոչ թե հեռացել է, որպեսզի ինչ-որ տեղ անփառունակ շունչը փչի, ինչպես հաղորդում են հյուսիսային ավանդությունները:

— Հյուսիսայինները՝ հնարավոր է,— ասաց Բորոմիրը: — Բայց մենք՝ գոնդորցիներս, հնուց գիտենք, որ Իսիլդուրը իսկապես վերադարձել է Գոնդոր, որպեսզի իշխանությունը հանձնի Մենելդիլին, իր սպանված եղբոր որդուն, և հենց այդ ժամանակ էլ զոհված եղբոր հիշատակին նա Սպիտակ Ծառի վերջին սերմը տնկեց մեր իշխանության մայրաքաղաքում:

— Եվ այդ ժամանակ էլ կատարեց վերջին գրառումը,— Բորոմիրի պատմությունը լրացրեց Գանդալֆը,— որի մասին Գոնդորում հավանաբար մոռացել են: Այդ գրառումը վերաբերվում է Համիշխանության Մատանուն, որն Իսիլդուրը ձեռք է բերել Սաուրոնի հետ մենամարտում: Ահա թե ինչ հաջողվեց ինձ կարդալ.

«Այսուհետ Համիշխանության Մատանին կդառնա Արնորի մեծ Իշխանների սեփականությունը, սակայն սույն ձեռագիրը ես թողնում եմ Գոնդորում, քանզի այստեղ և՛ ապրում են Էլենդիլի սերունդները, որպեսզի հարավում էլ մոռացումի չմատնվեն զարմանալի գործերը մեր Դարաշրջանի:

Եվ իսկույն էլ տրվում է Մատանու նկարագրությունը.

Այն շիկացած էր, երբ ձեռքս վերցրի, ասես հենց նոր էր հանվել Ճակատագրի Լեռան ձագարի քուրայից, և ինձ թվաց, որ իմ այրվածքը երբեք չի դարմանվի: Սակայն ձեռքս լավացավ, և Մատանին պաղեց ու աչքիս փոքրացավ, բայց այնուամենայնիվ չկորցրեց նախկին գրավչությունը, ինչպես և Թշնամու կողմից նրան տրված ձևը: Եվ դժգունեցին վրայի մոգական նշաններն ու հազիվ էին երևում: Նշաններն էլ համակ Օստրանի Էլֆերի տառերն էին, սակայն մակագրության լեզուն ինձ անծանոթ էր: Սույն լեզուն հավանորեն Թշնամու լեզուն է... զի հնչում է այն, տառերն ընթերցելիս, անհաճո ու խորհրդավոր: Ինձ անհայտ ինչ չար միտք է թաքցնում Թշնամու մակագրությունը, բայց ես արտանկարում եմ այն, նպատակով, որ պահպանվի սերունդների հիշողության մեջ, եթե պատահի, որ արդեն հազիվ նշմարելի տառերն ամբողջովին անհետանան: Համիշխանության Մատանուն, ինչպես պատկերանում է ինձ, պակասում է Թշնամու ձեռքի ափի տապը, քանզի շիկացած վիճակում այն նմանում էր բոսոր բոցի, ընդ որում սև՝ որպես խավարն է գիշերվա, և Գիլ Գալադը սրի էր քաշված, և եթե Մատանին շիկացվի կրակով, ապա կպատահի, որ խորհրդավոր մակագրությունը նորեն երևան գա, սակայն ես սարսափում եմ նրան չարն անելուց, զի զգում եմ, որ Այն արդեն թանկ է ինձ համար և չափազանց թանկ են հատուցել Նրա համար նումենորցիք»:

Եվ այսպես, իմ ենթադրություններն արդարացան: Թշնամին օգտագործել էր էլֆերի տառերը, բայց մակագրությունն արել էր մորդորերեն լեզվով, և այդ մակագրությունը վաղուց հայտնի է, քանի որ երբ Թշնամին դարբնում էր Մատանին, էլֆ Սելեմրիմբերը կռահել էր նրա մտահղացումները և հստակ լսել մոգական բառերը, որ Սաուրոնը մտացի կրկնել էր մակագրությունը Համիշխանության Մատանու վրա դակելիս:

Ես հրաժեշտ տվեցի Դենեթորին և շտապեցի Հոբիթստան, բայց ճանապարհին էլֆերից լուր ստացա, որ Արագորնը այնուամենայնիվ բռնել է Գոլլումին, և որոշեցի սկզբում լինել Չարքանտառում: Արագորնը մահացու վտանգներ էր հաղթահարել Մորդորի սահմանների մոտ Գոլլումին հետապնդելիս: Բայց այդ մասին թող ինքը պատմի:

— Իսկ ի՞նչ կարելի է պատմել այդ մասին,— խոսեց Արագորնը: — Երբ շարժվում ես Սև Դոյակի մոտով կամ ճամփորդում ես Մորգուլյան դաշտավայրերով, ծաղկուն մարգագետիններում, ակամա ստիպված ես լինում վտանգներ հաղթահարել: Ինձ չհաջողվեց Գոլլումին գտնել և, հուսահատված արդեն շրջվել էի դեպի հյուսիս, բայց հանկարծ

հայտնաբերեցի այն, ինչ փնտրում էի. ափամերձ ավազի մեջ ծանծաղ լճակի մոտ երևում էին բոբիկ ոտքերի դրոշմներ, որոնց հետքը տանում էր ոչ թե դեպի հարավ՝ Մորդոր, այլ դեպի հյուսիս: Գոլլումը շարժվում էր Մեռյալ Ճահիճների երկարությամբ, և մի երկու օր հետո ես նրան բռնեցի: Նա ամբողջապես ծածկված էր կանաչավուն տիղմով և զզվելին ձեռքս կծեց, ես էլ քնքուշ չվերաբերվեցի իրեն: Այնպես որ հետագայում համառորեն լռում էր, իսկ բերանը բաց էր անում միայն ուտելու համար՝ ստիպված էի ճանապարհին նրա համար կեր ճարել, բայց իմ հարցերն անպատասխան էին մնում: Բռնված Գոլլումի հետ հյուսիս վերադառնալն ինձ համար ավելի ծանր էր, քան նրան որոնելը: Ամբողջ ճանապարհին նրան քշում էի իմ առջևից բերանը պարկի կտոր խցկած, իսկ վզին՝ պարանի օղ գցած: Եվ երբ մենք վերջապես հասանք Չարքանտառ, ու նրան հանձնեցի Թրանդուիլի էլֆերին, հոգնածությունից օրորվում էի անգամ քամուց: Հուսով եմ, մենք այլևս իրար չենք հանդիպի, ախր նա, իր բոլոր բարեմասնություններից բացի, նաև գարշահոտ է՝ սատկած գիշանգղի նման: Սակայն Գանդալֆը նրանից այնքան չզզվեց, ու նրանք բավական երկար զրուցեցին:

— Երկար և օգտակար,— հաստատեց Գանդալֆը՝ չցանկանալով նկատել Արագորնի ծաղրը: — Առաջինը՝ Գոլլումի պատմությունը համընկավ Բիլբոյի այսօրվա պատմածին: Բայց դա էական նշանակություն չունի, ես ինքս էլ կռահել էի, թե ինչն ինչպես է եղել: Առավել կարևոր է մեկ այլ բան. Գոլլումն ինձ ասաց, որ Մատանին գտել է Դարաշրջանի արշալույսին, Հիրիկների հարթավայրի մոտ գտնվող Մեծ Գետում: Նա մահկանացու է, և վաղուց պետք է մահացած լիներ, բայց ապրել է աներևակայելի երկար կյանք: Անկասկած, Մատանին է երկարացրել: Հայտնի է, որ միայն Համիշխանության Մատանին է երկարացնում իր տիրոջ կյանքը: Մյուս Մատանիների ուժերից վեր է այդ բանը: Եթե այդ էլ քեզ չի համոզում,— ավելացրեց հրաշագործը Գելդորին նայելով,— ապա գոյություն ունի ևս մեկ գլխավոր ստուգում: Բոլորդ տեսել եք կոլոտիկների Մատանին՝ ոսկե, կլոր և առանց որևէ փորագրության: Սակայն երբ այն մի քիչ պահում ես կրակի վրա, թեպետ ամեն ոք չի համարձակվի այդ անել, հստակորեն սկսվում է երևալ Թշնամու Հուռութագիրը: Մի անգամ ես Մատանին գցեցի բուխարիկի կրակի մեջ, և ահա թե ինչ հաջողվեց ինձ կարդալ.

«Էշ նազգ դուրբաթուլուգ, էշ նազգ գիմբոթուլ, էշ նազգ թիրուլթուլուկ, ագի վիբիզիմ-իշի քրիմփուլթուլ...»:

Հրաշագործի ձայնը հանկարծ դարձավ չարագույժ, մռայլ ու հզոր թնդաց դահլիճով մեկ, և ցնցվեցին դղյակի հաստ պատերը, մշուշով պարուրվեց պայծառ արևը:

— Դեռ երբեք այդ լեզուն չէր հնչել Իմլադրիսում,— խոսեց Էլրոնդը, երբ լռություն տիրեց, և Խորհրդի մասնակիցները շունչ քաշեցին:

— Եվ հուսով եմ, այլևս երբեք չի հնչի,— Ազատքի տիրակալին պատասխանեց Գանդալֆը: — Բայց քեզանից ներողություն չեմ խնդրում, քանի որ ինձանից՝ Գանդալֆ Մոխրագույնից, իմ իրավացիության ապացույցներ պահանջեցին: Եվ որպեսզի այդ լեզվի հնչյունները հավիտյանս չհեղեղեն հյուսիսային հողերը, հարկավոր է հիշել, որ կոլոտիկների Մատանին, ինչպես հնում բնորոշել են իմաստունները, Թշնամու խորհրդավոր հզորության գանձն է: Սև Տարիների խավարում Օստրանի էլֆերն առաջին անգամ լսեցին մռայլ նզովքը.

Իսկ այս մեկը՝ Ամենազորը, Տիրակալին Մորդորի,
Որ թշնամանք ցանի, կամազրկի մարդկանց,
Խառնամբոխվեն նրանք Չարչարանաց երկրում:

Եվ հասկացան, որ ընկել են դավաճանության ցանցը:

Այո, Գոլլումն ինձ շատ բան պատմեց, թեպետ հազիվհազ ու դժկամորեն էր խոսում: Նրան հաջողվել էր հասնել Մորդոր, որտեղ նրան բռնել էին Թշնամու սպասավորները և նրանից դուրս կորզել բացարձակապես ամեն ինչ, և Թշնամին գիտե, որ Մատանին գտնվել է: Երկար ժամանակ պահվել է Հոբիթստանում, իսկ հետո նորից անհետացել է ինչ-որ տեղ: Սակայն շուտով հայտնի կդառնա, իսկ գուցեև հիմա արդեն հայտնի է, որ հոբիթները Մատանին ուղարկել են էլֆերի մոտ, քանզի Ինը Ուրվական սպասավորները հետևել էին Ֆրոդոյին ընդհուպ մինչև Ազատք:

— Ուրեմն նա՞, այդ Գոլլումը, այդ պիղծ արարա՞ծը,— տիրող լռությունը խզեց Բորոմիրը: — Փոքրիկ արարած, բայց մեծ չարագո՞րծ: Եվ ի՞նչ ճակատագրի է նա դատապարտվե՞լ...

— Հյուսիսային Չարքանտառում կալանքի տակ է, ընդամենը միայն այդքան,— պատասխանեց Արագորնը: — Նա շատ է տառապել: Թշնամու մոտ, ըստ երևույթին, սոսկալի տանջել են, և մինչև այժմ սարսափից ուշքի չի գալիս: Սակայն ես ուրախ եմ, որ նրան հսկում են, և այն էլ ոչ այլ ոք, քան Չարքանտառի զգոն էլֆերը: Վհատությունն ու ատելությունը, ցավն ու ահը նրան սարսափելի վտանգավոր են դարձրել: Այնպես որ եթե ազատության մեջ լիներ, ապա ես այդ չարաբախտ էակից ամեն վատ բան կսպասեի: Եվ հազիվ թե նրան Մորդորից բաց թողնեին առանց Թշնամական սև մտահղացման: Իսկ նրան, արտաքինից զարմանալի թույլ արարածին, ատելությունն ահավոր ուժ է տալիս...

— Ինձ ցավալի լուր են ուղարկել,— հանկարծ բացականչեց Էլֆ Լեգոլասը,— բայց դրա խորապես ահավոր իմաստը ես միայն այսօրվա Խորհրդում հասկացա: Բանն այն է, որ Գոլլում կոչված Սմեագորլը կարողացել է ոչնչացնել պահակներին ու անհետանալ:

— Անհետացե՞լ է,— իրեն կորցրած բղավեց Արագորնը: — Դա իսկապես չարագույժ նորություն է: Ինչպե՞ս է պատահել, որ էլֆերն անփույթ են գտնվել:

— Մեր բարությունը անհոգություն դարձավ, և նա փախավ,— ասաց Լեգոլասը: — Բայց, ամենայն հավանականությամբ, բանտարկյալին օգնել են, իսկ դա նշանակում է, որ մեր գործերի մասին հայտնի է Չարքանտառի սահմաններից դուրս ինչ-որ մեկին: Մենք բարեխղճորեն հսկում էինք Գոլլումին, թեպետ պահակապետը մեզ դուր չէր գալիս: Բայց հեռանալիս Գանդալֆը խնդրեց Թրանդուիլին շատ չնեղել բանտարկյալին, և մենք նրան թույլ էինք տալիս դուրս գալ ման գալու, որ ամբողջ ժամանակ զնդանում չպահենք...

— Իմ նկատմամբ դուք ավելի դաժան էիք,— աչքերը փայլեցնելով ընդհատեց նրան Գլոինը: Նա հիշեց իր բանտարկությունը, էլֆերը ախր նրան ամբողջ ժամանակ զնդանում էին պահում:

— Հանգստացիր, բարեկամս,— ընդմիջեց Գանդալֆը,— անցած գնացած վեճերը հիշել հարկավոր չէ: Եթե մենք թույլ տանք, որ էլֆերն ու թզուկները սկսեն մաքրել իրենց հին հաշիվները, ապա Խորհուրդը երբեք չի ավարտվի:

Գլոինը վեր կացավ և լուռ խոնարհվեց, իսկ էլֆը շարունակեց ընդհատված պատմությունը.

— Լավ եղանակներին մենք բանտարկյալին բերում էինք դաշտ, որի մեջտեղում մի մեծ ծառ կար, և նա մագլցելով բարձրանում էր ծառի կատարն ու սաղարթով ծածկված երկար նստում այնտեղ, իսկ պահակներն սպասում էին ներքևում: Բայց մի անգամ նա հրաժարվեց իջնել, իսկ պահակները չուզեցին նրան ուժով քաշել ներքև. նա կարողանում էր ամուր կառչել ճյուղերից՝ բռնվելով և՛ ոտքերով, և՛ ձեռքերով, դրա համար էլ նրանք պարզապես նստել էին ծառի տակ՝ միևնույնն է, նա փախչելու տեղ չուներ: Եվ հենց այդ ամառային, անլուսին գիշերը հանկարծ մեզ վրա հարձակվեցին օրքերը: Մարտ սկսվեց, և միայն լուսադեմին մեզ հաջողվեց հետ մղել հարձակումը՝ օրքերի հորդաները կատաղորեն էին մարտնչում, բայց նրանք Անդրլեռնաստանի տափաստանների բնակիչներն են ու անտառում կռվելու սովոր չէին...

Ստացվում է, որ այդ անսպասելի հարձակումը կատարվել էր նրան ազատելու նպատակով, և այդ մասին նախապես նրան տեղեկացրել էին, բայց թե ինչ կերպ՝ մեզ անհայտ է: Գոլլումը շատ խորամանկ արարած է, իսկ Թշնամու լրտեսները գնալով ավելանում են: Երբ Բարդ Նետաձիգը ոչնչացրեց վիշապին, մենք Չարքանտառից վռնդեցինք Մութ ուժերին, սակայն այժմ նրանք նորից են ի հայտ եկել, և մեր բնակավայրը դարձել է բոլոր կողմերից շրջապատված մի կղզի: Փախստականի հետքերը հետագայում մենք գտանք, չնայած օրքերը համարյա տրորել էին դրանք, և այդ հետքերը տանում էին դեպի հարավ, դեպի Դուլ Գուլդուր՝ Չարքանտառի ամենավտանգավոր տեղը, որտեղ մտնել չենք համարձակվում...

— Կարճ ասած, նա թաքնվեց,— եզրակացրեց Գանդալֆը,— և հիմա նրան հետապնդելու ժամանակը չէ: Ուրեմն դա էլ նրա բախտն է: Եվ գուցե ո՛չ նա. ո՛չ էլ Մորդորի Տիրակալը չգիտեն, թե ապագայում նրան ինչ է վիճակված:

— Իսկ այժմ պատասխանում եմ Գելդորի հարցին,— քիչ լռելուց հետո շարունակեց Գանդալֆը: — Եվ այսպես, ինչո՞ւ մեզ հետ չէ Սարումանը, և նա ի՞նչ խորհուրդ կարող էր տալ մեզ: Դա բավական երկար պատմություն է և այդ մասին առայժմ միայն Էլրոնդը գիտե: Ի դեպ, նրան էլ համառոտ եմ պատմել, իսկ դա մանրամասն շարադրանք է պահանջում, քանի որ Միջերկրի նախորդ աղետներին ավելացել է ևս մեկը՝ մեծագույն աղետ, որն այսօր վերջակետ է դնում Մատանու պատմությանը:

Այս ամառ, երբ գտնվում էի Հոբիթստանում, սիրտս մշտապես կրծում էր տագնապը, և ես ուղևորվեցի այդ փոքրիկ, խաղաղ երկրի հարավային սահմանները, որովհետև զգում էի, որ վտանգն արագ մոտենում է, թեպետ որոշել չէի կարող, թե ինչ վտանգ է: Հարավում ինձ պատմեցին Գոնդորում ընթացող կռվի մասին և այն մասին, որ գոնդորցիները նահանջել են Գետից այն կողմ: Իսկ երբ լսեցի Սև Հեծյալների մասին, մոտեցող վտանգի զգացումն ավելի ուժեղացավ: Սակայն ասես նրանց ոչ ոք չէր տեսել՝ նույնիսկ մի քանի հոգնած փախստականները հարավից, որ ինձ հանդիպեցին ճանապարհին: Եվ այնուամենայնիվ իմ տագնապն աճում էր, քանի որ հարավի փախստականները խիստ ահաբեկված էին, իսկ վախի պատճառը, չգիտես ինչու, գաղտնի էին պահում: Այն ժամանակ ես թեքվեցի Կանաչ Ուղի և Լեռնամոտում ինձ հանդիպեց Ռադագասթ Թուխը, նա էլ ինձ պես Իմաստունի տիտղոս ունի: Մի ժամանակ Ռադագասթն ապրում էր Ռոսգոբելում՝ Չարքանտառի կողքը, բայց հիմա տեղափոխվել է ուրիշ տեղ: Ուրեմն, նա նստել էր ճանապարհի եզրին, իսկ մարգագետնում արածում էր նրա ձին:

— Գանդա՛լֆ,— ուրախացած գոռաց Ռադագասթը: — Ես էլ հենց քեզ էի փնտրում: Ինձ ասել էին, որ բնակվում ես արևմուտքում, անհեթեթ Հոբիթստան անունով մի երկրում, ես ախր այս տեղերին բնավ ծանոթ չեմ:

— Ճիշտ են ասել,— պատասխանեցի ես,— այստեղից Հոբիթստան երկու քայլ է: Այնպես որ անհեթեթ անվան մասին զգույշ՝ հոբիթները շատ նեղացկոտ ժողովուրդ են: Իսկ դու, հավանաբար, կարևոր նորություննե՞ր ունես... Ախր դու երբեք ճանապարհորդել չես սիրել և հազիվ թե քո սովորությունները փախված լինեն:

— Շատ կարևոր,— ասաց Ռադագասթը: Ապա, տագնապահար շուրջը նայելով, ավելացրեց. — շատ կարևոր ու շատ սոսկալի: Նազգուլները: Նրանք նորից հայտնվել են: Այս անգամ որպես Սև Հեծյալներ: Նրանց հաջողվել է Գետն անցնել և այժմ շարժվում են դեպի հյուսիս-արևմուտք:

Ահա թե ինչու էր տագնապն ինձ կրծում,— Ֆրոդոյին նայելով ասաց Գանդալֆը:

— Թշնամին այստեղ մի գաղտնի մտադրություն ունի,— ասաց Ռադագասթը:

— Ի՞նչը նկատի ունես,— հարցրի ես:

— Իսկ Ուրվական Հեծյալների ինչի՞ն է պետք Հոբիթստանը:

Այստեղ, խոստովանում եմ, ես ինձ կորցրի, որովհետև Նազգուլների ջոկատի հետ ճակատամարտելը Իմաստուններից ամենաքաջին անգամ կսարսափեցնի. նրանք բոլորը վաղեմի հմուտ ռազմիկներ են, իսկ նրանց առաջնորդը՝ կախարդ ու արքա, սարսափ էր սփռում թշնամիների վրա նույնիսկ այն ժամանակ, երբ դեռ ուրվական չէր:

— Ո՞վ է ուղարկել քեզ ինձ մոտ,— հարցրի ես:

— Սարուման Ճերմակը,— պատասխանեց Ռադագասթը: — Եվ խնդրեց հաղորդել քեզ, որ եթե օգնության կարիք ունես, մեկնիր Օրթհանք, նրա մոտ, սակայն չդանդաղես:

Այս խոսքերն ինձ ոգևորեցին, քանզի Սարումանը Իմաստուններից Իմաստուն է... Կամ այդպես էր թվում ինձ այն ժամանակ: Ռադագասթը նույնպես հզոր հրաշագործ է, բույսերի ու կենդանիների պապենական հրամանատուն (հատկապես եռանդագին են նրան ծառայում թռչունները), բայց Սարումանը հնուց ի վեր հետևում է Թշնամուն, լավ ուսումնասիրել է նրա սովորություններն ու հաճախ է մեզ օգնել նրանց ջախջախելու գործում:

Դուլ Գուլդուրից մենք Թշնամուն հեշտությամբ դուրս քշեցինք Սարումանի իմաստուն խորհուրդների շնորհիվ, միայն ափսոս, որ այն ժամանակ մեզ չզարմացրեց Թշնամու պատասխան հաղթանակը հարավում...

— Ես կգնամ Սարումանի մոտ,— ասացի ու մտածեցի, որ Սարումանը գիտի, թե ինչպես կարելի է Նազգուլներին քշել Անդուինից այն կողմ:

— Բայց մեկնիր հենց հիմա,— խորհուրդ տվեց Ռադագասթը,— քանի որ ես քեզ շատ երկար եմ փնտրել, իսկ Սարումանն ասում էր, որ վաղ աշնան կողմերը Նազգուլները կկարողանան հասնել Հոբիթստան, և այն ժամանակ քեզ օգնել չի կարող: Իսկ ես հիմա պիտի ճանապարհ ընկնեմ:

Ռադագասթը անձայն կանչեց ձիուն, թռավ թամբին և ուզում էր մեկնել:

— Սպասիր, Ռադագասթ... — նրա հետևից գոռացի ես,— լուր տուր քո հպատակներին, գազաններին, թռչուններին, որ հավանաբար մեզ հարկավոր կլինի նրանց օգնությունը:

— Համարիր, որ նրանք տեղեկացված են,— ասաց նա և, ձին խթանելով, արագորեն անհետացավ:

Ես չէի կարող հենց այդ ժամանակ էլ հետևել Թուխին: Իմ ձին էլ էր հոգնած. մենք այդ օրը հսկայական տարածություն էինք կտրել, իսկ գլխավորը՝ ուզում էի մտքերս ժողովել: Եվ ահա, վճիռս առավոտյան թողնելով, գիշերեցի Լեռնամոտի պանդոկում, իսկ քունս առնելուց հետո որոշեցի գնալ Սարումանի մոտ՝ երբեք այդ սխալն ինձ ներել չեմ կարող...

Ֆրոդոյին մանրամասն նամակ գրեցի, որտեղ բացատրեցի, որ կհանդիպենք Էլֆերի մոտ և հանձնարարեցի Լավր Նարկիսին նամակն ուղարկել (վերջինս պանդոկի տերն է, իմ վաղեմի ծանոթը), իսկ առավոտյան լուսամութին ճանապարհ ընկա: Սարումանն ապրում է հեռու հարավում, Իզենգարդ ամրոցում, Մուստանգրիմից դեպի հյուսիս: հարավից Մուստանգրիմի ընդարձակ հարթավայրը եզերում են Գոնդորի Սպիտակ Լեռները կամ նումենորերեն՝ Էրեդ Նիմրիսը, իսկ հյուսիսից այնտեղ է խրվում Մշուշապատ Լեռնաշղթան: Այնտեղ, անառիկ վիթխարի ժայռերով շրջապատված հովտում է գտնվում Սարումանի Օրթհանք ամրոցը: Այդ բարձր ամրոցը, որն ունի գաղտնի սրահներ, հնագույն ժամանակներում կառուցել են նումենորցիները, և այնտեղ ընկնել կարելի է միայն հովտի ժայռեղեն պատնեշը հատող կիրճում գտնվող դարպասով:

Ես մոտեցա դարպասին երեկոյան կողմ: Այն պահպանում էր բազմանդամ պահակախումբը, բայց Սարումանը, երևի, վաղուց էր ինձ սպասում. դարպասը բացվեց և իմ անցնելուց հետո անձայն փակվեց, ու ինձ հանկարծ անբացատրելի վախ պարուրեց: Սակայն ես այնուամենայնիվ մոտեցա ամրոցին, և Սարումանը, աստիճաններով անշտապ իջնելով, ինձ տարավ վերևի սենյակներից մեկը: Նրա ձեռքին ես մատանի նկատեցի:

— Ուրեմն, դու եկար,— դանդաղ ասաց նա, բայց ինձ թվաց, որ նրա աչքերում սառը քմծիծաղ բռնկվեց:

— Եկել եմ, ինչպես տեսնում ես,— պատասխանեցի: — Ինձ քո օգնությունն է պետք, Սարուման Ճերմակ...

Իր տիտղոսը լսելով, Սարումանը զայրացավ:

— Դո՞ւ ես օգնություն խնդրում, Գանդալֆ Մոխրագո՞ւյնդ... — ձայնի մեջ ծաղր հարցրեց նա: — Ուրեմն խորամանկամիտ ու ամենագո հրաշագործը, որը ահա երրորդ Դարաշրջանն է խառնված է Միջերկրի բոլոր գործերին, ընդ որում սովորաբար անկոչ ու անխնդիրք, նո՞ւյնպես կարող է օգնության կարիք ունենալ:

Ինձ զարմացրեց նրա չար տոնը:

— Դու չե՞ս արդյոք,— զարմացած հարցրի ես,— պատվիրել սուրհանդակ Ռադագասթ Թուխին հաղորդել ինձ, որ մեզ հարկավոր է միավորել մեր ուժերը:

— Ենթադրենք, որ ես այդ ասել եմ նրան,— պատասխանեց Սարումանը: — Իսկ հիմա բացատրիր ինձ, ինչո՞ւ ես այսքան ուշ հայտնվել: Դու երկար ժամանակ թաքցրել ես Իմաստունների Խորհրդից և ինձանից՝ Խորհրդի գերագույն Իմաստունից, իսկապես մեծագույն կարևորություն ունեցող մի իրադարձություն... Իսկ այժմ լքելով թաքստոցդ Հոբիթստանում, փութով եկել ես ինձ մոտ... Ինչո՞ւ...

— Այն պատճառով, որ Ինը սև Մատանեկիրները նորից սկսել են իրենց ուրվականային կյանքը: Այն պատճառով, որ նրանք Գետն անցել են: Ռադագասթն ասաց...

— Ռադագասթ Թո՞ւխը,— բարձր քրքջալով ընդհատեց ինձ Սարումանը, և նրա արհամարհանքը դուրս ժայթքեց: — Ռադագասթը՝ մժեղների Աիեղ Տիրակալը, Ռադագասթ Միամիտը, Ռադագասթ Հիմարը... Լավ է, որ նրա խելքը հերիքել է առանց դատողությունների խաղալ իր հիմար դերը... Նա վատ չի խաղացել և ահա դու այստեղ ես: Այստեղ էլ կմնաս: Գանդալֆ Մոխրագույն, դու հո պիտի հանգստանաս ճանապարհորդելուց: Քանզի այդ ես եմ ցանկանում, Սարումանս՝ Տերունական Տիրակալս Մատանիների և ծաղկեփթթության...

Նա կտրուկ վեր կացավ, և նրա սպիտակ հագուստը հանկարծ երփներանգ ծիածանագույն դարձավ, այնպես որ իմ աչքերի առջև կայծեր երևացին:

— Սպիտակ գույնին արժանանալը հեշտ չէ,— ասացի ես,— բայց առավել դժվար է նորեն սպիտակեցնել ինքն իրեն:

— Սպիտակեցնե՞լ... ինչո՞ւ... — Սարումանը ծիծաղեց: — Սպիտակ գույնը իմաստուններին հարկավոր է միայն սկզբում: Սպիտակեցված կամ պարզապես սպիտակ կտորը դյուրությամբ է ընդունում ամեն երանգ, սպիտակ թուղթը՝ ամեն իմաստնություն:

— Կորցրիր սպիտակությունը,— համառում էի ես,— իսկ իմաստունը մնում է իսկապես իմաստուն, քանի դեռ նա հավատարիմ է իր գույնին:

— Բավակա՛ն է,— կոպիտ ասաց Սարումանը: — Ես ժամանակ չունեմ քո քարոզները լսելու, քանզի կանչել եմ քեզ իմ դղյակը, որպեսզի դու վերջնական ընտրություն կատարես:

Սարումանը կեցվածք ընդունեց ու մի ճառ ասաց, որն իմ կարծիքով, նախապես էր պատրաստել.

— Հնագույն Դարաշրջանն անցել է, Գանդալֆ: Միջինն էլ մոտենում է ավարտին: Սկսվում է բոլորովին նոր Դարաշրջան: Էլֆերի տարիները երկրի վրա հաշվված են, սկսվում է Մեծ Ժողովրդի ժամանակը, և մենք կոչված ենք այն կառավարելու: Բայց մեզ անհրաժեշտ է համիշխանության ամբողջականություն, քանի ու միայն մեզ՝ Իմաստուններից Իմաստուններին է տրված գիտենալ, ինչպես կառուցել կյանքը, որ մարդիկ ապրեն խաղաղ ու երջանիկ:

Լսիր Գանդալֆ, իմ բարեկամ և օգնական,— շարունակեց Սարումանը շողոմաձայն ու սրտահույզ,— ես իմ ու քո մասին ասում եմ **մենք**՝ հույս ունենալով, որ դու կմիանաս ինձ: Աշխարհում հայտնվել է Նոր Ուժ: Նրա առջև անզոր են նախկին դաշնությունները: Նումենորցիների և էլֆերի ժամանակն անցավ: Ես ասացի՝ ընտրություն, բայց մենք այդ հնարավորությունը չունենք: Մենք պարտավոր ենք սատար լինել այդ Նոր Ուժին: Սա իմաստուն որոշում է, հավատա ինձ, Գանդալֆ: Սրա մեջ է մեր հույսը: Նոր Ուժի հաղթանակը մոտ է, և նրան սատար անողներին մեծ պարգև է սպասում: Քանզի Նոր Ուժի բարձրանալու հետ կբարձրանան նաև նրա դաշնակիցները, իսկ Իմաստունները, ինձ ու քեզ նմանները, աստիճանաբար կսովորեն կառավարել: Մեր ծրագրերի մասին ոչ ոք չի իմանա, մեզ հարկավոր է սպասել մեր ժամին, և սկզբում մենք նույնիսկ կդատապարտենք Նոր Ուժի դաժան մեթոդները՝ գաղտնի հավանություն տալով նրա վերջնական նպատակին՝ իմաստնություն, համընդհանուր բարօրություն և կարգուկանոն, այն, ինչին մենք երազում էինք հասնել, իսկ մեր թույլ կամ անբան բարեկամներն ավելի շատ խանգարում էին մեզ, քան օգնում: Մեզ հարկավոր չէ, և մենք չենք փոխի մեր նպատակները, մենք կփոխենք միայն միջոցները, որոնցով ձգտում էինք հասնել դրանց:

— Իսկ այժմ ինձ լսիր, Սարուման,— ասացի ես, երբ նա լռեց: — Մեկ անգամ չէ, որ այսպիսի ճառեր ենք լսել, բայց դրանք արտասանել են Թշնամու մունետիկները՝ հիմարացնելով դյուրահավատներին ու պարզամիտներին: Մի՞թե ինձ կանչել ես նրանց շաղակրատանքը կրկնելու նպատակով:

— Ուրեմն քեզ չի՞ հրապուրում ամենաիմաստունների ճանապարհը: Դեռևս չի հրապուրում: Դու հասկանալ չես ուզում, որ հին միջոցներն այլևս պիտանի չեն:

Սարումանը ձեռքը դրեց ուսիս և ցածրաձայն ասաց, համարյա շշուկով.

— Մենք պետք է տիրենք Համիշխանության Մատանուն: Ահա թե ինչու եմ քեզ կանչել: Ինձ շատ աչքեր ու ականջներ են ծառայում, և ես համոզված եմ՝ դու գիտես, թե որտեղ է պահվում Մատանին: Այլապես քո ինչի՞ն է պետք Հոբիթստանը և ինչո՞ւ հենց այնտեղ են շարժվում Նազգուլները: — Սարումանը սևեռուն նայեց ինձ ու նրա աչքերում ծփաց ագահությունը, որը անզոր էր ծածկել:

— Սարուման,— ընկրկելով ասացի նրան,— երկուսիս էլ հայտնի է, որ Համիշխանության Մատանին միայն մեկ տեր կարող է ունենալ, դրա համար էլ պետք չէ ասել **«մենք»**: Բայց հիմա, երբ իմացա քո մտադրությունները, ես քեզ ոչ մի խոսք չեմ ասի Մատանու մասին: Դու Խորհրդի Գերագույն Իմաստունն էիր, սակայն իմաստուն լինելը քո ուժերից վեր է: Դու, որքան ես հասկացա, ինձ ընտրություն առաջարկեցիր՝ ենթարկվել Սաուրոնին կամ Սարումանին: Ես չեմ ենթարկվում ո՛չ մեկին, ո՛չ մյուսին: Ուրիշ որևէ բան ևս կարո՞ղ ես առաջարկել:

Նա նայեց ինձ սառն ու սպառնալից.

— Ես հույս չունեի էլ,— ասաց նա,— որ դու Իմաստունի բարեմտություն հանդես կբերես, նույնիսկ քո օգտի համար, սակայն քեզ ընտրելու հնարավորություն տվեցի, և դու ընտրեցիր հիրավի համառագույն հիմարությունը: Ինչ արած, առայժմ մնա այստեղ:

— Առայժմ՝ ի՞նչ,— հարցրի ես:

— Առայժմ, քանի դեռ ինձ չես հայտնել քո գաղտնիքը, թե որտեղ է պահվում Մատանին,— պատասխանեց նա,— կամ քանի դեռ ի հեճուկս քո անխելք համառությանը, չի գտնվի այն: Այդ ժամանակ, հավանաբար, Տերունական Տիրակալը կկարողանա զբաղվել հասարակ գործերով: Օրինակ՝ նա կորոշի, թե ինչ պարգևի է արժանի Գանդալֆ Մոխրագույնը:

— Որոշելն ի՞նչ է, թերևս, դա նրա համար հեշտ կլինի,— ասացի ես,— իսկ ի կատար ածելը դյուրի՞ն կլինի... — Բայց Սարումանը միայն ծաղրական քրքջաց, քանի որ ինձանից ոչ պակաս գիտեր, որ ես դատարկ խոսքեր եմ արտասանում:

Ինձ տարան դիտահարթակ, որտեղից Սարումանը աստղերն է դիտում, այնտեղից վայրեջքը մի քանի հազար քարե աստիճաններով գալարապտույտ սանդուղք է, որը ներքևում հսկվում է պահակների ջոկատի կողմից, և այդ սանդուղքն էլ տանում է ներքին բակ: Մենակ մնալով՝ ես սկսեցի նայել երբեմնի ծաղկած մարգագետիններով ծածկված հովտին, ներկայումս մարգագետին համարյա չէր մնացել, ես տեսա հանքախորշերի սև փոսերը, զինագործական արհեստանոցների տափակ տանիքներն ու դարբնոցի քուրաների գորշ ծուխը: Ծխի քուլաները ուղիղ վեր էին բարձրանում, որովհետև հովիտը քամիներից պաշտպանված է ժայռերի գոտով: Ծխախառն մայրամուտի մեջ, որը պարուրում էր Օրթհանքի աշտարակը, ինձ երևում էին գայլդարձյակների ոհմակներն ու լավ զինված օրքերի ջոկատները՝ Սարումանը սեփական զորք է հավաքում, նշանակում է՝ Թշնամուն դեռևս չի ենթարկվել: Դիտահարթակը փոքրիկ էր՝ ես նույնիսկ քայլելով տաքանալ չէի կարող, իսկ հավերժական սառցադաշտերը ցուրտ էին հղում ներքև, և հովիտ էր սողում թաց մառախուղը: Բայց իզենգարդյան դարբնոցների ծխից դառը, ցրտից տանջալի և մենակությունից առավել ինձ կեղեքում էին ամբողջ թափով դեպի Հոբիթստան վարգող Հեծյալների մասին մտքերը: Ես հավատացած էի, որ դրանք Նազգուլներն են, չնայած հիմա Սարումանին չէի հավատում, սակայն Նազգուլների մասին նա չէր ստում, որովհետև ճանապարհին լսել էի նրա խոսքերը հաստատող լուրեր: Ես սոսկում էի Հոբիթստանի իմ բարեկամների համար, և այնուամենայնիվ հույս չէի կտրում, հույս ունեի, որ Ֆրոդոն նամակս ստանալուն պես անհապաղ մեկնել է Ազատք, և Սև Հեծյալները նրան չեն գտել: Սակայն կյանքում ամեն ինչ այլ կերպ եղավ: Ես վստահ էի պանդոկպանի պարտաճանաչության վրա և վախենում էի Մորդորի Տիրակալի հզորությունից: Բայց Լավը մոռացել էր նամակն ուղարկել, իսկ Սև Տիրակալի Ինը սպասավորներն ավելի թույլ դուրս եկան, քան ես կարծում էի: Վախի աչքերը, ինչպես հայտնի է, մեծ են, և ես, Սարումանի ծուղակն ընկած, միայնակ, բարեկամներիս համար ահաբեկված, գերագնահատել էի Թշնամու հզորությունն ու իմաստությունը:

— Ես քեզ տեսել եմ,— հանկարծ բացականչեց Ֆրոդոն: — Դու քայլում էիր, ասես բանտարկյալ լինեիր բանտում՝ երկու քայլ առաջ և երկու քայլ հետ, ու քեզ լուսավորում էր լուսինը...

Գանդալֆը զարմացած նայեց Ֆրոդոյին:

— Դա երազ էր,— բացատրեց նրան հոբիթը,— և ես հիմա շատ պարզ հիշեցի այն, թեպետ վաղուց եմ տեսել, երբ ես նոր էի տնից դուրս եկել:

— Այո, իմ բանտը լուսավոր էր,— ասաց Գանդալֆը,— բայց կյանքումս ոչ մի անգամ այդքան մռայլ մտքեր ինձ չէին պատել: Պատկերացրեք, ես՝ Գանդալֆս, ընկա դավաճան սարդոստայն: Սակայն ամենակատարելագործված սարդոստայնում էլ կարելի է բարակ թել գտնել:

Սկզբում կուլ գնացի մռայլ տրամադրությանը և դավաճանության մեջ կասկածեցի Ռադագասթ Թուխին՝ հենց դա էր ցանկանում Սարումանը: Սակայն վերհիշելով Ռադագասթի հետ խոսակցությունս, հասկացա, որ Սարումանը նրան էլ է խաբել՝ ես անխուսափելիորեն կեղծիքը կզգայի, քանի որ Ռադագասթը ձևացնել չի կարողանում: Այո, Ռադագասթն իմ առաջ մաքուր էր, հենց այդ պատճառով էլ որոգայթն ընկա, նրա խոսքերն ինձ համոզեցին:

Բայց և այդ պատճառով էլ հօդս ցնդեց Սարումանի մտահղացումը: Ռադագասթը կատարեց իր խոստումը: Ինձանից բաժանվելով, նա գնաց արևելք և լեռնային արծիվներին հանձնարարեց օգնել ինձ: Նրանց աչքից ոչինչ չէր կարող թաքնվել՝ ո՛չ Նազգուլները, ո՛չ գայլդարձյակների հսկայական ոհմակները, ո՛չ չարաբախտ Գոլլումին ազատելու նպատակով Չարքանտառ ներխուժած օրքերի հորդաները: Եվ արծիվներն ինձ մոտ սուրհանդակ ուղարկեցին:

Մի անգամ գիշերը, արդեն աշնան մոտ, լեռնային արծիվներից ամենասրընթացը՝ Քամիխեղդը, թռավ Իզենգարդ և իջնելով Օրթհանք, տեսավ ինձ դիտահարթակում:

— Քեզ կարևոր լուրեր եմ բերել,— ասաց նա: Երբ Քամիխեղդն ինձ հաղորդեց արծիվների ժողոված նորությունները, հարցրի նրան.

— Իսկ ինձ կարո՞ղ ես այստեղից տանել:

— Կարող եմ,— ասաց նա,— եթե մեր ճանապարհները համընկնում են: Ես այստեղ եմ ուղարկվել որպես սուրհանդակ, ոչ թե ձի: Իմիջայլոց, եթե քեզ ձի է պետք, քեզ կհասցնեմ Էդորաս, Մուստանգրիմցիների մոտ՝ այդպիսի տարածությունն ինձ համար շեղում չէ:

Դեհ ինչ, ավելի լավի մասին երազել անգամ չէր կարելի, որովհետև Մուստանգրիմում, որտեղ բնակվում էին վայրի ձիերի վաղեմի տերերը, ես կարող էի ստանալ այն, ինչ ինձ հարկավոր էր, իսկ ինձ հարկավոր էր արագոտն ձի, որ շուտ հասնեի Հոբիթստան:

— Դու կարծում ես, նրանք Թշնամուն չե՞ն հպատակվել... — համենայն դեպս հարցրի արծվին, որովհետև Սարուման Ճերմակի դավաճանությունը սասանել էր իմ հավատը Լուսավոր Ուժերի նկատմամբ:

— Մուստանգրիմցիները Մորդորին հարկ են վճարում՝ ամեն տարի այնտեղ ձիեր են ուղարկում, ես այդպես եմ լսել,— պատասխանեց արծիվը: — Դա հենց հարկ է, ոչ թե նվեր դաշնակիցներին: Բայց եթե Սարումանը, ինչպես դու ես ասում, նույնպես Մութ Ուժ է դարձել, ապա Իմաստունները չեն կարողանա իրենց անկախությունը պահպանել:

Քամիխեղդը թռավ Մուստանգրիմի հարթավայրի վրայով և վայրեջք կատարեց Սպիտակ Լեռների հյուսիս-արևմտյան ճյուղավորման մոտ, Էդորաս ամրոցից քիչ հեռու: Այստեղ արդեն զգացվում էր Սարումանի այլափոխվելը. նա տեղացիներին պարուրել էր ստի ցանցով, և Հերցոգը չհավատաց իմ խոսքերին, երբ ասացի, որ Սարումանը դավաճան է: Սակայն թույլ տվեց ինձ ձի ընտրել, պայմանով, որ իսկույն մեկնեմ Մուստանգրիմից: Իմ ընտրությունը նրա մեջ մեծ ափսոսանք առաջացրեց. ես զարմանալի առույգ ձի էի ընտրել. նա, ինչպես ցավով ինձ հայտնեց Հերցոգը, Մուստանգրիմի երամակներում լավագույնն էր համարվում:

— Ուրեմն դա իսկապես հոյակապ նժույգ է,— ասաց Արագորնը և, հառաչելով, ավելացրեց.— ինձ համար շատ ցավալի է, որ Մորդորի Տիրակալն ստանում է Միջերկրի լավագույն ձիերը, չնայած գիտակցում եմ, որ վերջին իրադարձություններում դա դեռևս ամենատխուրը չէ: Սակայն ընդամենը մի քանի տարի առաջ մուստանգրիմցիները ոչ մեկին հարկ չէին վճարում:

— Դե հիմա էլ չեն վճարում,— միջամտեց Բորոմիրը,— այդ բոլորը չար Թշնամու հնարածներն են: Ինչ է, ես չգիտե՞մ Մուստանգրիմի դյուցազուններին, մեր հավատարիմ ու անվախ դաշնակիցներին:

— Խավարի Վարագույրը,— խոսեց Արագորնը,— հարավային շատ հողեր է մթնեցրել: Նրա ստվերում այլափոխվել է Սարումանը: Հնարավոր է, Մուստանգրիմն էլ է խավարել: Չէ որ քեզ հայտնի չէ, թե ինչ կիմանաս, երբ վերադառնաս քո ազգականների մոտ:

— Միայն ոչ դա,— առարկեց Բորոմիրը,— Մուստանգրիմցիներն իրենց ձիերը ստրկության տալով չեն գնի անկախություն: Նրանք տերեր են, ոչ թե ստրկավաճառներ:

— Բայց իմ ընտրած նժույգը,— շարունակեց Գենդալֆը,— ուրիշների հետ համեմատել չի կարելի: Նա անխոնջ է ու քամու պես արագավազ: Նրան զիջում են նույնիսկ Նազգուլների ձիերը: Մուստանգրիմցիները նրան Լուսաչ են կոչում, ցերեկը նա նման է արծաթավուն ստվերի, իսկ գիշերը նրան հնարավոր չէ տեսնել՝ հատկապես երբ սուրում է ճանապարհին: Նրա քայլքը թեթև է, վազքը՝ սրընթաց, ինձանից առաջ հեծյալ չի ունեցել, բայց ես սանձահարեցի նրան ու սլացա հյուսիս, և երբ Ֆրոդոն հասել էր Գերեզմանոցներին, ես արդեն Հոբիթստանի սահմանն անցա, չէ՞ որ մենք միաժամանակ էինք ճանապարհ դուրս եկել. նա՝ Հոբիթստանից, ես՝ Էդորասից:

Լուսաչն անխոնջ վարգում էր դեպի հյուսիս, բայց ես ավելի ու ավելի էի անհանգստանում: Սև Հեծյալները սրընթաց մոտենում էին Հոբիթստանին, և չնայած մեր միջև եղած տարածությունը կրճատվում էր, նրանք դարձյալ գնում էին ինձանից առաջ:

Շուտով հասկացա, որ Հեծյալները խմբերի են բաժանվել՝ մի մասը մնացել է արևելյան սահմանի մոտ, այնտեղ, որտեղով անցնում է Կանաչ Ուղին, իսկ մյուսները հարավից մտել են Հոբիթստան: Ֆրոդոյին արդեն տանը չգտա և երկար հարցուփորձ արեցի այգեպան Համեստուկին, երկար հարցուփորձ արեցի և քիչ բան իմացա, քանի որ նա գլխավորապես խոսում էր իր մասին և մեկ էլ Պարկուտի նոր տերերի մասին:

«Փոփոխություններն ինձ վնասակար են,— գանգատվում էր նա: — Ես ծեր եմ և չեմ կարողանում գոհացնել զավթիչներին»,— այդպես էր նա անվանում իր նոր տերերին:

«Դու դեռ զավթիչներ չես տեսել և հուսանք, որ երբեք չես տեսնի»: Բայց ծերունական շատախոսությունից հասկացա, որ Ֆրոդոն մեկնել է մեկ շաբաթ առաջ, իսկ երեկոյան, նրա մեկնելուց հետո, տանն են մոտեցել Սև Հեծյալները:

Վերջնականապես հուսահատված, շարունակեցի ճանապարհս: Նապաստակի Բլուրների բնակիչներն իրար էին անցած, ասես քանդված մրջնանոցի մրջյուններ լինեին: Հասնելով Ճագարի Գերան, տեսա, որ այն ավերված է ու դատարկ, իսկ պատշգամբում ընկած է Ֆրոդոյի թիկնոցը: Թևաթափ ու վիատ գնացի Նազգուլների հետքերով, որոշեցի հարցուփորձ չանել շրջակա բնակիչներին և իզուր՝ նրանք ինձ կհանգստացնեին: Հետո Հեծյալները խմբերի բաժանվեցին, և ես գնացի նրանց հետքերով, ովքեր մեկնել էին Լեռնամոտի կողմը՝ ուզում էի մի կարգին հարցուփորձ անել Լավրին:

«Դե՛, Լավր,— մտածում էի ճանապարհին,— եթե նամակս ուղարկած չե՛ս եղել, քեզ եռման ապուրի մեջ կեփեմ դափնու տերևի պես»: Նա էլ նույն կարծիքին էր, որովհետև երբ իմ երեսը տեսավ, քամու բերանն ընկած չոր տերևի պես դողաց:

— Նրան ի՞նչ ես արել,— բացականչեց Ֆրոդոն: Նա խղճաց պանդոկի տիրոջը: — Նա մեզ մոտ բարեկամների պես ընդունեց և ամեն կերպ օգնեց:

— Մի վախեցիր,— ժպտալով պատասխանեց Գանդալֆը: — Ես նրան նույնիսկ վախեցնել չհասցրի, որովհետև երբ դադարեց ցնցվելուց ու ինձ ասաց, որ դուք մեկնել եք Արագորնի հետ, ուրախությունից ինձ կորցրի:

— Պանդուխտի հե՞տ,— ուրախացած հարցրի ես:

— Նրա հետ,— մեղավոր շշնջաց Նարկիսը՝ մտածելով, որ ինձ ավելի է զայրացնելու: — Ախր ես նրանց ասել եմ, որ նա Պանդուխտն է: Բայց նրանք իրենց շատ տարօրինակ պահեցին... կամ ես կասեի՝ յուրօրինակ:

— Իմ սիրելի հիմարի՛կ... Իմ թանկագին ավանակ... — անկարող ինձ զսպել, գոռացի ես: — Ախր ես ամառվանից այս կողմ այսքան հաճելի լուր չեմ լսել, իմ անխելք Լավր... Այս գիշեր հանգիստ կքնեմ, երևի թե այս մի քանի ամսվա մեջ առաջին անգամ:

Ես գիշերեցի Նարկիսի պանդոկում ու շարունակ մտածում էի. ո՞ւր էին անհետացել Նազգուլները, չէ՞ որ լեռնամոտցիները միայն երկուսին են տեսել: Սակայն գիշերը դրությունը պարզվեց: Հարավ-արևմուտքից ժամանեցին ևս հինգը: Նրանք տապալեցին արևմտյան դարպասն ու սուրացին գյուղի միջով, ճիշտ մրրկահողմի պես: Լեռնամոտցիները մինչև հիմա ահից ցնցվում են ու բոպե առ բոպե սպասում աշխարհի վերջին: Առավոտյան կողմ Հեծյալների հետևից ուղևորվեցի և ես:

Ես ժամանեցի Հոբիթստան ավելի ուշ, քան Նազգուլները, և իմ կարծիքով ահա թե ինչ էր տեղի ունեցել այնտեղ: Նազգուլների առաջնորդը երկու հեծյալների հետ մնացել էր հարավային սահմանի մոտի դարանում, երկուսը մեկնել էին Լեռնամոտ, իսկ չորսը սլացել էին Պարկուտ: Հետո, երբ ոչ ոքի չէին գտել ո՛չ Պարկուտում, ո՛չ Նապաստակի Բլուրներում, ստիպված էին եղել վերադառնալ հարավային սահման, և այդքան ժամանակ ճանապարհը չի հսկվել, ես չեմ խոսում Թշնամու լրտեսների մասին: Առաջնորդը հրամայել էր չորս Հեծյալներին կարճ ճանապարհով մեկնել հյուսիս-արևելք, իսկ ինքը սուրացել էր դեպի Արևմտյան Ուղի՝ հասկանալով, որ հոբիթները փախել են Հոբիթստանից:

Դե իսկ ես մեկնեցի դեպի Հողմակործ Ծառերի Լեռնաստորոտը, քանզի հասկացա, թե դեպի ուր կարող էր շարժվել Արագորնը, և երկրորդ օրն արդեն Զավերտի մոտ էի, բայց Թշնամու

սպասավորներն ինձ կանխել էին: Մարտ ընդունելու վճռականություն նրանք չունեցան, և ես անարգել բարձրացա Զավերտ, սակայն մութը նրանց համարձակություն տվեց (ես սարին մոտեցա օրվա վերջին) և ստիպված եղա բավական չարչարվել մոլեգնած Նազգուլներին հետ մղելու համար. ես կարծում եմ, որ նույնիսկ ամպրոպի ժամանակ, երբ Զավերտի գլխին կայծակներ են փայլատակում, այդպես լուսավոր չի լինում, ինչպես այդ գիշեր:

Առավոտյան որոշեցի ճեղքելով հասնել Ազատք, բայց ոչ թե կարճ ճանապարհով, այլ շրջանցելով հյուսիսից: Փնտրել Ֆրոդոյին Հողմակործ Ծառերի Լեռնաստորոտում գիշերները Թշնամու սպասավորների հետ կռվելով, անօգուտ էր և ուղղակի հիմարություն. չէ՞ որ եթե ես հոբիթներին գտնեի, ապա հետապնդող Թշնամու ողջ ջոկատը իմ հետևից այստեղ կբերեի: Դրա համար էլ ամբողջ հույս դրեցի Արագորնի վրա և բացահայտ կերպով շրջվեցի դեպի հյուսիս՝ ենթադրելով, որ գոնե մի քանի Նազգուլ անխուսափելիորեն կգան իմ հետքերով, իսկ ես մեծ շրջան գծելով նրանցից առաջ կանցնեմ, հյուսիսից կմտնեմ Ազատք և Էլֆերի մի ուժեղ ջոկատի գլուխ անցած Թշնամու ջոկատը կմասնատեմ: Սակայն մի քանի օր հետո հետապնդողներից չորսն անհետացան ինչ-որ տեղ: Ինչպես հետո պարզվեց, մեկնել էին Գետանցում: Եվ այնուամենայնիվ ես մի քիչ օգնել եմ Արագորնին. նրա վրա միայն հինգ Նազգուլ է հարձակվել:

Իսկ ես Կատաղի գետի երկայնքով բարձրացա դեպի Թրոլյան սարահարթ և այնտեղ ստիպված եղա բաժանվել Լուսաչից, քանի որ այդ քարակույտերի մեջ նա անխուսափելիորեն ոտքերը կկոտրեր: Լուսաչը վերադարձավ իր տերերի մոտ, բայց բավական է մտքումս կանչեմ նրան, և որտեղ էլ լինեմ կհայտնվի ինձ մոտ: Զավերտի մարտից տասնչորս օր հետո վերջապես հասա Էլրոնդի տիրույթները և իմացա, որ այստեղ արդեն սպասում են հոբիթներին, իսկ երեք օր հետո Մատանու Պահապանը Փառքաշատի օգնությամբ հասավ Ազատք:

Սրանով ավարտվում է իմ պատմությունը, թող ներեն ինձ հյուրերը և պատվարժան հյուրընկալը, որ այսքան երկար զբաղեցրի նրանց ուշադրությունը: Բայց, իմ կարծիքով, Մատանու Պահապանը պետք է բացարձակապես ստույգ իմանար, թե ինչու ժամանակին օգնություն չի ստացել, առավել ևս, որ օգնություն նրան խոստացել եմ ես՝ մեծ հրաշագործ Գանդալֆ Մոխրագույնս Իմաստուններից, որ առաջին անգամ դրժել է իր երդումը:

Եվ այսպես,— եզրափակեց իր խոսքը Գենդալֆը,— այժմ ձեզ հայտնի է Մատանու պատմությունը՝ ձուլելու օրվանից մինչև այս պահը: Բայց մենք դեռ ոչ մի քայլ չենք մոտեցել նպատակին: Քանզի մեզ հարկ է միասնաբար որոշել, թե ինչ ենք անելու Մատանին:

Հյուրերն անշարժ ու լուռ նստած էին: Վերջապես լռությունը խզեց Էլրոնդը:

— Դու մեզ վշտալի պատմություն պատմեցի, Գանդալֆ: Քանզի իմաստունները լիովին վստահում էին Սարումանին և նրան հայտնի են մեր բոլոր ծրագրերը: Քո պատմությունը մի ավելորդ անգամ հաստատեց, որ խորամուխ լինելով Թշնամու խարդախ մտահղացումների մեջ, ակամա ինքդ էլ համակվում ես նրա խարդախությամբ: Այդպիսի այլափոխումը, ավա՜ղ, նորություն չէ՝ հնում դա շատ անգամ է պատահել: Այնպես որ այսօրվա բոլոր պատմություններից ինձ հատկապես զարմացրեց կոլոտիկ Ֆրոդոյի քաջության ու տոկունության մասին պատմությունը: Ես մոտիկից գիտեմ միայն մեկ կոլոտիկի՝ Բիլբոյին, և այսօր ինձ պարզ դարձավ, որ նա այնքան էլ չի տարբերվում խաղաղ Հոբիթստանի իր համերկրացիներից: Ըստ երևույթին, այն ժամանակից ի վեր, ինչ ես գտնվել եմ Արևմուտքում, աշխարհում լուրջ փոփոխություններ են տեղի ունեցել:

Հոգեառներին մենք գիտենք շատ տարբեր անուններով, իսկ ներկա Հավերժական Անտառի մասին ավանդություններում անտառը հաճախ կոչվում է Անվերջ, քանզի դեռ վերջերս (վերջերս՝ իմ հասկացողությամբ), սկյուռը ծառից ծառ թռչկոտելով կարող էր այսօրվա Հոբիթստանից հասնել Մշուշապատ Լեռների մոտի Անտերունչ Հարթավայրը: Պատահել է, ճանապարհորդել եմ Հավերժական Անտառում և ի՜նչ սոսկալի բան ասես այնտեղ տեսել եմ: Իսկ Բոմբադիլին, եթե դա այն նույն տիրակալն է, ավելի ճիշտ Արգելյալ Երկրի Պահպանողը, որի հետ ճակատագիրը հանդիպեցրել է Էլֆերին, երբ Միջերկիր աշխարհը դեռ ջահել էր ու հրաշագեղ, իսկ նա թվում էր զառամյալ ինչպես Ծովը, այսպես, ուրեմն, մենք նրան գիտեինք որպես Յարվեն Բեն-Ադար՝ Արգելյալ Հողերի Անխորթ Հայր: Թզուկները Յարվենին մեծարելով անվանում էին Ֆրոն, իսկ նումենորցիների հետնորդները՝ Օրալդ... Բայց գուցե ես իզո՞ւր նրան Խորհուրդ չհրավիրեցի:

— Նա չէր գա,— խոսեց Գանդալֆը:

— Իսկ եթե, այնուամենայնիվ, նրան հրավեր ուղարկե՞նք կամ ուղղակի օգնություն խնդրե՞նք,— առաջարկեց Էրեսթորը: — Մանավանդ որ, որքան հասկացա, նա իշխանություն ունի նույնիսկ Թշնամու Մատանու վրա:

— Դու այնքան էլ ճիշտ չես հասկացել,— առարկեց Գանդալֆը: — Ավելի ճիշտ կլինի ասել այսպես. նրա վրա իշխանություն չունի Թշնամու Մատանին: Յարվենը ինքն է իր գլխի տերն ու տիրականը: Բայց նա չի կարող հրամայել Մատանուն և ոչ էլ կարող է ուրիշներին պաշտպանել Մատանուց: Նա մեկուսացել է իր Արգելյալ երկրում՝ գծելով միայն իրեն տեսանելի սահմաններ, և ինքն էլ հիմա երբեք այդ սահմաններից դուրս չի գալիս:

— Սակայն իր գծած սահմաններում նա առաջվա նման Երկրի Անսահման Տե՞րն է,— Գանդալֆին լսելուց հետո հարցրեց Էրեսթորը: — Ուրեմն, գուցե նա կվերցնի Մատանին պահպանելու:

— Իր սեփական ցանկությամբ չի վերցնի,— ասաց Գանդալֆը: — Իսկ եթե վերցնի էլ, իհարկե՝ Իմաստունների խնդրանքով, ապա դրան կվերաբերվի որպես մի անպետք խաղալիքի: Մի քանի օր հետո կմոռանա դրա մասին, իսկ հետո, որ ամենահավանականն է, ուղղակի դեն կնետի: Պատերազմի վախճանը նրան չի հետաքրքրում, և նա շատ անհուսալի պահապան կլիներ, ուրեմն նշանակում է Մատանին նրան վստահել չի կարելի:

— Բոլոր դեպքերում,— նկատեց Փառքաշատը,— դրանով մենք միայն կհետաձգեինք պարտության օրը: Յարվենը Ազատքից հեռու է ապրում: Մենք չենք կարող Մատանին հասցնել այնտեղ, առանց նկատվելու Սև Տիրակալի լրտեսների կողմից: Ի դեպ, եթե նույնիսկ կարողանանք էլ, Սաուրոնը կիմանա, եթե ոչ հիմա, ապա՝ ուշ, թե որտեղ ենք պահում Համիշխանության Մատանին և իր ողջ զորությունը կթափի Յարվենի վրա: Այդ մենամարտում Յարվենը կդիմանա՞ արդյոք: Կասկածում եմ: Կարծում եմ, վերջիվերջո, երբ Լուսավոր Ուժերը կջախջախվեն, Յարվենը նույնպես կընկնի պայքարում՝ կգնա այս աշխարհից վերջինը, ինչպես հայտնվել է այստեղ ինչ-որ ժամանակ առաջինը, և Խավարի Վարագույրը կիջնի Միջերկրի վրա:

— Ես Յարվենին չգիտեմ,— միջամտեց Գելդորը,— չնայած, իհարկե, նրա մասին լսել եմ, բայց, իմ կարծիքով, Փառքաշատը բացարձակապես իրավացի է: Ուժը, որ ի վիճակի է ընդդիմանալ Թշնամուն, եթե այն իրոք գոյություն ունի, Յարվենի Արգելյալ Հզորության մեջ չէ թաքնված, չէ՞ որ Թշնամին, ինչպես հաճախ համոզվել ենք, իշխում է նույնիսկ կուսական բնության վրա: Ես կարծում եմ միայն էլֆերը՝ Առաջնածինները, կարող են հակահարված տալ Սաուրոնին: Արդ նրանք ուժ կունենա՞ն դրա համար:

— Իմ ուժը չի բավականացնի,— պատասխանեց Էլրոնդը:

— Թրանդուիլին էլ չի բավականացնի,— ասաց Լեգոլասը:

— Ես Սիրդան Քորաբելի մունետիկը չեմ,— քիչ լռելուց հետո ասաց Գելդորը,— բայց վախենում եմ, որ մենք էլ Թշնամու հարձակմանը չենք դիմանա:

— Իսկ Սև Տիրակալը մեզ միավորվելու հնարավորություն չի տա, և մեր հողերը կվերածվեն Սև Զորաց ծովով շրջապատված կղզյակների,— այդ դառը խոստովանություններն ամփոփեց Էլրոնդը:

— Մենք չենք կարողանա Մատանին ուժով պահպանել Թշնամուց,— խոսակցության մեջ մտավ Փառքաշատը,— դրա համար էլ երկու ելք ունենք. ուղարկել Ծովից այն կողմ կամ ոչնչացնել:

— Գանդալֆը մեկնեց մեզ,— առարկեց Էլրոնդը,— որ Մատանին կարելի է ոչնչացնել միայն Մորդորում, իսկ անդրծովյան բնակիչներն այն չեն ստանա: Մատանին պատկանում է Միջերկիր աշխարհին և նրան վիճակված չէ մեր աշխարհից հեռանալ:

— Ուրեմն Մատանին թող հանգչի Ծովի խորքերում,— առաջարկեց Փառքաշատը,— որպեսզի Սարումանի սուտը ճշմարտություն դառնա: Քանի ու այժմ բացարձակապես պարզ է, որ նախորդ Խորհրդում նա ստել է. նրան արդեն տոչորելիս է եղել համիշխանության ծարավը և, գիտենալով, որ Թշնամու Մատանին գտնվել է, դիտավորյալ Իմաստուններին մոլորության մեջ է գցել, իսկ Ծովի խորքերը հուսալի գերեզման են, և այնտեղ Մատանին կհանգչի առհավետ:

— Ցավոք, ճիշտ չես,— նրան ընդհատեց Գանդալֆը: — Ծովի խորքերը նույնպես բնակեցված են, իսկ Թշնամու համար ամեն տեղ էլ սպասավորներ կգտնվեն: Բայց գլխավորը՝ այնտեղ, որտեղ ջուր է, ժամանակի ընթացքում կարող է ցամաք գոյանալ, իսկ մենք՝ Միջերկրի Իմաստուններս, կոչված ենք վերջնականապես կնքելու Մատանու ճակատագիրը, ոչ թե մեկ տարվա, ոչ թե մահկանացուների մի քանի սերունդների, ոչ թե նույնիսկ մի քանի Դարաշրջանների համար, այլ՝ հավիտյանս հավիտենից:

— Եվ եթե Արգելյալ Երկրի ճանապարհը վտանգավոր է համարվում,— միջամտեց Գելդորը,— ապա ճանապարհը դեպի Ծով ավելի վտանգավոր է: Քանզի իմ փորձն ինձ հուշում է, որ Թշնամին մեզ կսպասի Արևմտյան Ուղու վրա, հենց հասկանա, թե որտեղ է պահվում Մատանին: Իսկ դա նրան կբացատրեն Նազգուլները, որոնց ձիերից զրկել են, և նրանք հետիոտն վերադարձել են տուն, բայց Սաուրոնը նրանց նոր ձիեր կտա՝ առավել տոկուն ու արագավազ, քան նախորդները: իսկ երբ Թշնամու զորագնդի գլուխ անցնեն Ինը Նազգուլները, Գոնդորը վերջնականապես կջախջախվի և, Թշնամին, ծովափով դեպի հյուսիս շարժվելով, Էլֆերի արևմտյան բնակավայրերը կավերի...

— Չափազանց արագ լուծեցիք Գոնդորի հարցը,— զայրույթով առարկեց Գելդորին Բորոմիրը: — Այդքան էլ հեշտ չէ նրան ջախջախելը: Ես ասացի, որ մենք կռվում ենք մինչև վերջին ուժերը, սակայն նույնիսկ մեր վերջին ուժերը Թշնամու զորքերի ատամի բանը չեն:

— Ատամի բանը չեն առանց Նազգուլների,— ճշտեց Գելդորը: — Բայց Թշնամու համար պարտադիր չէ Գոնդորը նվաճելը. նա կարող է շրջանցող ուղիներ գտնել և, կտրելով ձեզ ամբողջ Միջերկրից, հիմնական ուժերը շարժել հյուսիս, իսկ մեր հյուսիս և արևմտյան սահմանների մոտ թողնել ուժեղ ջոկատներ:

— Բայց այդ դեպքում,— եզրափակեց Էրեսթորը,— մենք, ինչպես նոր ասաց Փառքաշատը, իսկապես միայն երկու ելք ունենք: Եվ երկուսն էլ փակուղու շատ նման: Ահա իսկապես անլուծելի խնդիր..

— Սակայն մենք պետք է լուծենք այն,— խոժոռ հանդարտությամբ խոսեց Էլրոնդը: — Ո՞ր ճանապարհն է մեզ ավելի անվտանգ թվում. արևմտյա՞նը՝ դեպի Ծով, թե՞ արևելյանը՝ դեպի Մորդոր: Արևմտյա՞նը: Բայց Թշնամին գերազանց գիտե, որ Էլֆերը միշտ դեպի արևմուտք են նահանջել և անխուսափելիորեն այդ ճանապարհը ծուղակի մեջ կառնի: Ուրեմն մեր միակ հույսը, եթե դեռ հույս է մնացել, Թշնամու համար անսպասելի որոշումն է: Ճանապարհ դեպի Օրոդրուին՝ ահա մեր ճանապարհը: Մատանին պետք է հուրը նետվի:

Խորհրդի դահլիճը թաղվեց լռության մեջ: Դրսում ուրախ փայլում էր արևը, ափից ցած խաղաղ խոխոջում էր գետակը, բայց Ֆրոդոն զգաց, թե ինչպես վախը սառցե ճիրաններով սեղմեց իր սիրտը: Նրան թվաց, որ Բորոմիրը շարժվեց, ու հույսով նայեց գոնդորցուն: Վերջինս ցրված խաղում էր եղջերափողով ու մռայլվում: Հետո վճռական ասաց.

— Չեմ հասկանում, ինչի՞ց եք վախենում: Այո, Սարումանը դավաճան դուրս եկավ, բայց ձեզանից ոչ ոք նրան հիմար չի անվանում: Ինչո՞ւ եք կարծում, որ Թշնամու Մատանին կարելի է միայն պահել կամ ոչնչացնել: Քանի որ այն հայտնվել է մեզ մոտ, հարկավոր է ուղղել տիրոջ դեմ: Ազատ Աշխարհի ազատ դյուցազուններին Մատանին կօգնի խորտակելու Թշնամուն: Հենց դրանից էլ վախենում է նա: Գոնդորի ժողովրդին նվաճել հնարավոր չէ, բայց մեզ գլխովին կոտորած է սպառնում: Խիզախը շտապում է լրջորեն զինվել, երբ նրան վճռական մարտ է սպասում: Թող Մատանին մեր զենքը լինի, եթե դրա մեջ այդքան ահազդու զորություն է թաքնված...

— Լուսավոր Ուժերը,— առարկեց Էլրոնդը,— չեն կարող օգտագործել Համիշխանության Մատանին: Մեզ դա շատ լավ հայտնի է: Այն կռել է Սև Տիրակալը, որպեսզի իրականացնի իր սև մտահղացումները: Նրա մեջ վիթխարի հզորություն է թաքնված, Բորոմիր, այնպես որ տիրել Մատանուն կարող է միայն նա, ով օժտված է իսկապես մեծ զորությամբ: Բայց հզորների համար Մատանին ավելի վտանգավոր է: Հիշիր, Սարուման Ճերմակը հենց որոշեց տիրել Մատանուն, այլափոխվեց: Մենք գիտենք, որ եթե Իմաստուններից որևէ մեկը հաղթի Սաուրոնին Մատանու օգնությամբ, ապա անխուսափելիորեն կնստի նրա գահին և ինքը կայլափոխվի Սև Տիրակալի: Դա ևս մեկ կարևոր պատճառ է, որի համար Մատանին անհրաժեշտ է ոչնչացնել, որովհետև քանի դեռ այն գոյություն ունի, համիշխանության ձգտելու վտանգը սպառնում է նույնիսկ Իմաստուններին: Այլափոխվելը միշտ աննկատելի է

սկսվում, Սաուրոն Սևը չարագործ չի ծնվել: Ես սարսափում եմ Թշնամու Մատանին պահպանության վերցնելուց: Եվ երբեք այն չեմ օգտագործի իմ մղած պայքարում:

— Ե՛ս էլ,— հաստատ ասաց Գանդալֆը:

Բորոմիրի աչքերում անվստահություն փայլեց, բայց հետո նա վշտամած գլուխը կախեց:

— Դե լավ,— խոսեց նա: — Ուրեմն մենք, գոնդորցի ռազմիկներս, պետք է հույսներս դնենք միայն սեփական զենքի վրա: Քանի դեռ Իմաստունները պահպանում են Մատանին, մենք կկասեցնենք Թշնամու զորքը: Եվ գուցե Էլենդիլի կոտրված սուրը Գոնդորի թշնամիների համար նզովք դառնա... Եթե նա, ով այն ժառանգել է, ժառանգել է ոչ միայն կոտրված սուրը:

— Կգա օրը,— ասաց Արագորնը,— երբ մենք դա կստուգենք մարտում:

— Հուսով եմ, այդ օրը շուտ կգա,— հոնքերը կիտելով նետեց Բորոմիրը: — Մենք օգնություն չենք խնդրում, բայց այն մեզ հարկավոր է: Եվս մեկ բան: Մեզ մեծ սատար կլինի այն համոզմունքը, որ Թշնամու դեմ կռվում ենք ո՛չ միայն մենք...

— Վստահ եղեք, որ դա այդպես է,— Բորոմիրին հանգիստ ասաց Էլրոնդը: — Միջերկրում շատ հզոր ուժեր կան, որոնց մասին Գոնդորի բնակիչները չգիտեն: Եվ նրանք բոլորը կռվում են ընդհանուր Թշնամու դեմ:

— Բայց լավ կլիներ,— միջամտեց Գլոինը,— եթե այդ տարանջատ ուժերը միավորվեին: Մյուս, ոչ այդքան վտանգավոր Մատանիները կարող էին օգնել մեզ Թշնամու դեմ կռվում: Դժբախտաբար, յոթը կորած են թզուկների համար... Չնայած Բալինը Քազադ-Դում գնալիս հույս ուներ, որ Թրորին պատկանող Մատանին կգտնի:

— Զո՛ւր հույսեր,— խոսեց Գանդալֆը: — Մատանին փոխանցվել է նրա որդի Թրեյնին, բայց Թրորի թոռը՝ Թորինը, Մատանին չի ստացել՝ այն Թրեյնից խլել են Դուլ Գուլդուրում, և ես կարծում եմ, որ նրան լավ տանջած կլինեն:

— Անիծյա՛լ կախարդներ,— բացականչեց Գլոինը,— ե՞րբ ենք դրանցից վրեժ լուծելու,— հետո, մի քիչ լռելով, ավելացրեց.— Բայց Թշնամին հո չտիրացա՞վ այդ Երեքին... Էլֆերի Երեք Մոգական Մատանիներին: Ասում են, դրանք շատ հզոր Մատանիներ են: Չէ՞ որ դրանք էլ է Սաուրոնը կռել, բայց Էլֆերի տիրակալները չեն վախենում դրանցից: Ուրեմն չի՞ կարելի դրանց օգնությամբ Թշնամուն սանձել:

— Մի՞թե չհասկացար,— թզուկ Գլոին,— երկար լռությունից հետո հարցրեց Էլրոնդը: — Թշնամին չի կռել Մատանիները: Նա դրանք նույնիսկ ոչ մի անգամ չի տեսել: Էլֆերի Մատանիները ենթարկյալ են միայն Էլֆերին: Բայց դրանք մարտի դաշտում անուժ են: Դրանց օգնությամբ չի կարելի սպանել կամ սանձել: Դրանք օգնում են աշխարհը ճանաչել, բարիք գործել և խափանել չարը, որ ծնվել է Միջերկրի բնակիչների սրտերում, երբ այստեղ սկսվել են պատերազմները իշխանության համար: Այն ժամանակից ի վեր, ինչ Թշնամին զրկվել է Մատանուց, մեզ հաջողվել է ընդդիմանալ Չարին, բայց եթե նորից տիրանա Մատանուն, նրան հայտնի կդառնան մեր մտքերը: Եվ մենք կկորցնենք մեր ազատ կամքը, իսկ Մութ Ուժերն անպարտելի կդառնան, ինչին էլ հենց ձգտում է Թշնամին:

— Բայց ասա,— Էլրոնդին դիմեց Գլոինը,— քեզ հայտնի՞ է ինչպես կփոխվի աշխարհը, երբ Համիշխանության Մատանին անհետանա:

— Անհայտ է,— տխրությամբ պատասխանեց Էլրոնդը: — Ոմանք հույս ունեն, որ Երեք Մատանին, որոնց երբեք չի դիպել Թշնամին, կօգնեն բուժելու պատերազմից աշխարհին հասած արյունածոր վերքերը... Բայց վախենում եմ, որ այդ հույսերը չեն արդարանա: Ես կարծում եմ, որ Համիշխանության Մատանին ոչնչացնելով, մենք կոչնչացնենք նաև մյուսների զորությունը, և այս աշխարհի հրաշքները կպահպանվեն միայն անցյալի մասին հեքիաթային ավանդություններում...

— Սակայն էլֆերը,— խոսեց Փառքաշատը,— այնուամենայնիվ պատրաստ են Մատանին ոչնչացնելու, որպեսզի առհավետ ոչնչացնեն Թշնամուն:

— Ուրեմն ստացվում է,— եզրակացրեց Էրեսթորը,— որ մենք միայն մի ճանապարհ ունենք, և այն ակնհայտորեն ոչ մի տեղ չի տանում: Հրամեջ Լեռ մենք չենք հասնի: Էլրոնդն իմաստուն է, բոլորս այդ գիտենք, և դեպի հաղթանակ տանող միակ ճանապարհը ոչ ոք չի անվանի

անխելամտության ճանապարհ... Բայց այդ ճանապարհին անհաղթահարելի է և մեզ անտարակույս պարտություն է սպասվում:

— Պարտությունն անխուսափելի է միայն նրա համար, ով վիատվել է նախապես,— առարկեց Գանդալֆը: — Ընդունել վտանգավոր ուղու անխուսափելիությունը, երբ մնացած բոլոր ճանապարհները փակ են՝ հենց սա է իսկական իմաստնությունը: Արշավանքը Մորդորի վրա խելացնորությո՞ւն է թվում... Ուրեմն թող խելացնորությունը մեզ ծառայի որպես քողարկում, Թշնամու աչքերը փակող քող: Իհարկե, նրա չարամիտ իմաստնությունը ժխտել չես կարող, նա գիտե գուշակել հակառակորդի արարքները, բայց նրան տապակում է համիշխանության ծարավը, և նա միայն իրենով է չափում ուրիշներին: Նրա մտքով երբեք չի անցնի, որ կարելի է արհամարհել աշխարհին տիրելու հնարավորությունը, և Մորդոր արշավելու ու Մատանին ոչնչացնելու որոշումը նրան կմոլորեցնի:

— Ես էլ եմ այդպես կարծում,— խոսեց Էլրոնդը,— որ սկզբում նա չի հասկանա, թե ինչն ինչից է: Մորդոր տանող ճանապարհը վտանգաշատ է, բայց հաղթանակ բերող միակ ուղին է: Իր տան մեջ Սաուրոնն ամենազոր է, այնպես որ նրան, ով ուղևորվում է Մորդոր, ո՛չ ուժը, ո՛չ իմաստնությունը առավելություն չեն տա: Գաղտնիքը՝ ահա թե այստեղ որն է ամենակարևորը, և գուցե այդ մեծ առաքելությունը տկարն ավելի լավ կատարի, քան ուժեղը, քանի որ ուժեղը սովոր չէ վտանգից թաքնվելու, և Թշնամու հետ մարտը նրան կործանման կհասցնի: Մեկ անգամ չէ, որ թույլերը վերափոխել են աշխարհը՝ արիաբար ու ազնվորեն իրենց պարտքը կատարելով, երբ ուժեղների ուժը չի բավականացրել:

— Ինձ համար ամեն ինչ հասկանալի է,— հանկարծ ասաց Բիլբոն,— կարող ես չշարունակել, պատվարժան Էլրոնդ: Ես եմ սկսել այդ չարաբաստիկ պատմությունը և իմ պարտքն ինձ կոչում է ավարտել այն: Ես շատ լավ էի ապրում Էլֆերի մոտ, իսկ իմ աշխատությունը, ինչպես ինձ թվում էր, արդեն մոտ էր ավարտին: Ինձ թվում էր, որ շուտով ես կարող եմ գրել. *«...Եվ այդ ժամանակվանից նա երջանիկ ապրեց մինչև իր կյանքի վերջը»:* Ըստ իս, դա հիանալի վերջաբան էր, թեպետ դժվար է արտասովոր անվանել: Բայց այժմ այն, հավանաբար, կփոխվի կամ, լավագույն դեպքում՝ կհետաձգվի, որովհետև գիրքը կերկարի: Ափսո՜ս... Այսպես ուրեմն, ես ե՞րբ պետք է գնամ...

— Բորոմիրը զարմացած նայեց Բիլբոյին, սակայն զսպեց ակամա քմծիծաղը՝ նկատելով, որ Խորհրդի մյուս մասնակիցները հոբիթին լսում էին լրջորեն ու հարգալիր:

— Այո, բարեկամս,— խոսեց Գանդալֆը,— եթե դու սկսած լինեիր այս պատմությունը, ապա դու էլ կավարտեիր: Սակայն տարեգրին պետք է հայտնի լինի, որ մեկուսի պատմություն սկսել հնարավոր չէ. նույնիսկ ամենահզոր ու մեծագույն հերոսը կարող է սոսկ չնչին ներդրում կատարել աշխարհը փոխող պատմության մեջ: Պետք չէ հուզվել: Բոլորս հասկանում ենք, որ կատակի տակ դու թաքցրիր խիզախության պոռթկումը: բայց այդպիսի առաքելությունը քո ուժերից վեր է: Դու չես կարող Հրամեջ Լեռ հասնել: Իսկ գլխավորը՝ Մատանին հիմա նոր Պահապան ունի: Այնպես որ գրքի վերջաբանը մի փոխիր: Եվ պատրաստ եղիր գրելու շարունակությունը, երբ քաջորդիները վերադառնան տուն:

— Մի բան, որ քեզնից երբեք չէի լսել, դա հանգիստ ապրելու խորհուրդն էր,— թեթևացած, բայց ափսոսանքով բացականչեց Բիլբոն: — Քո նախկին խորհուրդները միշտ իմաստուն են եղել, վախենում եմ՝ հանկարծ այսօրվանը հիմար դուրս գա... Իսկ եթե լուրջ խոսենք ու անկեղծ, ապա ես ո՛չ ուժ ունեմ, ո՛չ էլ հաջողականություն, որպեսզի Մատանին նորից պահպանության վերցնեմ: Նրա չարագործ հզորությունն աճել է, իսկ ես ինձ ծեր ու թույլ եմ զգում: Բայց ասա, դու ո՞ւմ քաջորդիներ անվանեցիր...

— Նրանց, ովքեր Մատանին վերցրած կճանապարհվեն Մորդոր:

— Երեխայի տեղ մի դիր ինձ: Հատկապես ո՞ւմ նկատի ունեիր: Ըստ իս, այդ և միայն այդ պետք է որոշել այսօրվա Խորհրդում: Ես գիտեմ, էլֆերին հաց ու ջուր չտաս, միայն թե թողնես ինչքան ուզում են խոսեն, իսկ թզուկները վարժվել են զրկանքների դիմանալուն և կարող են շաբաթներով առանց սնունդ մնալ, բայց ես ի՜նչ, ընդամենը մի տարեց հոբիթ եմ և գլուխս արդեն սովից պտտվում է: Ուրեմն ասեք հիմա քաջորդիների անունները կամ ճաշի ընդմիջում անենք:

Բիլբոն վերջացրեց, և լռություն տիրեց: Հյուրերից ոչ ոք խոսք անգամ չասաց: Ֆրոդոն նայեց հավաքվածներին, բայց ոչ ոք աչքերը նրա վրա չբարձրացրեց: Բոլորը լուռ, իրենց սեփական մռայլ խոհերով տարված, նայում էին հատակին: Նրան սահմռկեցնող վախ պատեց, ու

հանկարծ գիտակցեց, որ հիմա վեր կկենա ու ինքն իր համար դատավճիռ կկարդա: Մի՞թե իրեն հանգստանալ չի կարելի, չի՞ կարելի խաղաղ ապրել Ազատքում: Այստեղ է Բիլբոն, այստեղ այնպե՜ս խաղաղ է...

— Ես պատրաստ եմ Մատանին տանելու,— ասաց նա,— թեպետ չգիտեմ, Մորդոր կհասնե՞մ, թե ոչ:

Էլրոնդը ուշադիր նայեց Ֆրոդոյին:

— Որքան ես հասկանում եմ,— ասաց նա,— հենց քեզ է վիճակված այդ անել, ու եթե դու չհասնես Մորդոր, ապա Խավարի Վարագույրը կիջնի Միջերկրի վրա: Խաղաղ Հոբիթստանի թույլ կոլոտիկներից է կախված այժմ Միջերկիր աշխարհի ճակատագիրը՝ նրանց առջև կընկնեն հզոր ամրոցները, իսկ Մեծերը կգան նրանցից խորհուրդ հարցնելու... Եթե բեռը, որ դու վերցնում ես քո ուսերին, իրականում ուժերիցդ վեր չլինի:

Քանզի դա ծանր բեռ է, Ֆրոդո: Այնքան ծանր, որ ոչ ոք իրավունք չունի ուրիշի ուսերին դնելու: Բայց այժմ, երբ ինքդ ընտրեցիր քո ճակատագիրը, ես կասեմ, որ ճիշտ ընտրություն ես կատարել:

— Բայց դուք հո նրան մենակ չե՞ք ուղարկի, չէ՞, տեր իմ Էլրոնդ,— հանկարծ ճչաց Սամը և, անկարող լինելով ինքն իրեն զսպել, դուրս թռավ թաքստոցից, ուր մտել էր Խորհրդի սկսվելուց առաջ և մինչև հիմա սուսիկ-փուսիկ նստած էր:

— Իհարկե ո՛չ,— պատասխանեց Էլրոնդը՝ ժպտալով տագնապահար Սամին: — Դու անպայման նրան կուղեկցես: Մի՞թե կարող ենք քեզ Ֆրոդոյից բաժանել, եթե դու համարձակություն ես ունեցել նրա հետևից նույնիսկ Իմաստունների գաղտնի Խորհուրդ թափանցել:

Սամը կարմրեց:

— Է՜հ, պարոն Ֆրոդո,— քրթմնջաց նա,— պետք չէր մեզ խրվել էս գործի մեջ... — հետո վշտաբեկ գլուխն օրորեց ու նորից նստեց հատակին:

Գլուխ երրորդ. Ճանապարհ դեպի հարավ

Երեկոյան հոբիթները հավաքվեցին Բիլբոյի մոտ՝ առանձին գաղտնի խորհրդակցության: Մերին ու Փինը վրդովվեցին, երբ իմացան Սամի արարքի մասին:

— Որտե՞ղ է արդարությունը,— զայրանում էր Փինը: — Այդ խաբեբային դահլիճից չեն վռնդել, անպատկառ ինքնակոչության համար շղթայակապ չեն արել, այլ մի բան էլ պարգևատրել են, և նա Ֆրոդոյի հետ կճանապարհվի:

— Պարգևատրե՛լ են,— տխուր ծիծաղեց Ֆրոդոն: — Ավելի լավ է ասես՝ ահավոր պատժի են դատապարտել: Մտածի՛ր, կարելի՞ է արդյոք Մորդոր գնալը, այն էլ Մատանիով հանդերձ, պարգև համարել: Իսկ ես հույս ունեի, թե Մատանին իմ ձեռքից կվերցնեն ու կհաջողվի հանգստանալ Ազատքում:

— Այո, հյուրընկալվելն էլֆերի մոտ շատ ավելի հաճելի է, քան Մորդոր քարշ գալ,— համաձայնեց Մերին: — Բայց չէ՞ որ մենք նախանձում ենք ոչ թե քեզ, այլ Սամին: Քանի որ դու ձեռնամուխ ես եղել այդ գործին, մեզ համար սոսկալի պատիժ կլինի, եթե քեզ թույլ տանք մենակ գնալ այնտեղ: Ճանապարհի մի մասը միասին ենք անցել՝ հարկավոր է միասին էլ վերջացնել:

— Ես էլ եմ այդպես գտնում,— միջամտեց Փինը: — Մեզ՝ հոբիթներիս, իրարից բաժանվել չի կարելի: Եթե ինձ բանտում չփակեն, ես անպայման կգնամ Ֆրոդոյի հետ: Չէ՞ որ նա պետք է խելքը գլխին մի ուղեկից ունենա:

— Դրա համար դու բոլորովին հարմար չես,— խոսեց Գանդալֆը՝ պատուհանից դուրս նայելով (Բիլբոն առաջին հարկում էր ապրում): — Բայց դուք չափազանց վաղ սկսեցիք անհանգստանալ, քանի որ դեռևս ոչինչ որոշված չէ:

— Ոչինչ որոշվա՞ծ չէ,— հարցրեց Փինը,— հապա ի՞նչ էիք անում ձեր Խորհրդում:

— Խոսում էինք և լսում,— բացատրեց նրան Բիլբոն: — Յուրաքանչյուրը պատմում էր այն, ինչ գիտեր և իմանում այն, ինչ չգիտեր: Բոլորն իրար լսում էին բերանները բաց: Իմիջայլոց, նույնիսկ ամենագետ Գանդալֆն իր համար անսպասելի լուր լսեց՝ Գոլլումի փախուստի մասին, բայց ցույց չտվեց:

— Սխալվում ես,— առարկեց Գանդալֆը,— այդ նորությունն ինձ հայտնեց Քամիխեղդը: Եթե ուզում ես իմանալ, Խորհրդում բերանները բաց նստած էին Բիլբոն ու Ֆրոդոն, իսկ ես ոչ մի նորություն չլսեցի:

— Թող այդպես լինի,— համաձայնեց Բիլբոն՝ հասկանալով, որ Գանդալֆի հետ վիճելն անօգուտ է,— բայց Խորհրդում ամբողջ օրը խոսեցին ու լսեցին, իսկ որոշեցին միայն Ֆրոդոյի և Սամի մասին: Խեղճե՜ր, նրանց դաժան վիճակ ընկավ... Ի դեպ, նրանք իրենք այդ ընտրեցին: Ես կանխազգում էի, որ այդպես էլ պետք է լինի, եթե ինձ Մորդոր չթողնեն: Բայց կարող եմ որպես գաղտնիք ասել ձեզ, բարեկամներ, որ միայն նրանց չէ վիճակված այդ բախտը: Նրանց հետ մի մեծ խումբ է մեկնելու, հենց որ հետախույզները վերադառնան Ազատք: Նրանք արդեն գնացի՞ն հետախուզության, Գանդալֆ...

— Ոմանք գնացին,— պատասխանեց հրաշագործը: — Մի տասը պատրաստվում է և կմեկնի առավոտյան: Նրանց օգնելու պատրաստակամություն հայտնեցին հետքագետ հյուսիսցիները և հյուսիսային Չարքանտառից Թրանդուիլի էլֆերը: Դուք կուղևորվեք հետախույզների վերադառնալուց հետո, այնպես որ Ֆրոդոն կհասցնի հանգստանալ:

— Իհարկե, ու Մորդոր կհասնենք ձմռանը,— մռայլ ու դժգոհ փնթփնթաց Սամը:

— Ինչ արած,— նկատեց Բիլբոն,— չէ՞ որ այստեղ մասամբ Ֆրոդոն է մեղավոր. ինչո՞ւ էր սպասում իր ծննդյան օրվան: Իմիջայլոց, նա տարօրինակ ձևով է այն տոնել: Մի՞թե նա մտածում էր, թե ինձ կուրախացնի, երբ այդ օրը իմ տունը տվեց հիմար Քսակ Պարկինսներին: Բայց եղածը եղած է, իրավիճակը թույլ չի տալիս մինչև գարուն սպասել, իսկ մեկնել մինչև հետախույզների վերադառնալը՝ անմտություն է:

Երբ աշնան պղտոր արցունքների մեջ
Ցուրտն է խտանում և օդն է սառում,
Ու երբ ձյունաշունչ գիշեր է անվերջ,
Վտանգավոր է ճամփան անտառում:

Բայց չհետազոտված ճանապարհն ավելի վտանգավոր է:

— Վախենում եմ, որ Բիլբոն իրավացի է,— ասաց Գանդալֆը: — Մենք պետք է պարզենք, թե Հեծյալները հիմա որտե՞ղ են:

— Ուրեմն նրան ո՞ղջ են մնացել:

— Նրանց ոչնչացնել չես կարող,— պատասխանեց Գանդալֆը,— քանի դեռ նրանց տիրակալը ոչնչացված չէ: Հուսով եմ, նրանք ստիպված են եղել վերադառնալ իրենց տները. առանց ձիերի՝ նրանք մեր աշխարհում անզոր են, բայց դա անպայման պետք է ստուգել: Իսկ առայժմ մոռացիր քո սարսափները, Ֆրոդո: Ես արդեն չգիտեմ, ինձանից օգուտ կլինի՞ թե ոչ, սակայն մտածում եմ, որ քեզ հետ միասին կգամ Մորդոր, քանի որ, ինչպես այստեղ իրավացիորեն ասացին, քեզ խելամիտ ուղեկից է հարկավոր:

Ֆրոդոն չկարողացավ թաքցնել բուռն ուրախությունը, և գոհ Գանդալֆը հանեց գլխարկը, հանդիսավորությամբ խոնարհվեց, բայց միաժամանակ ավելացրեց.

— Նկատի ունեցիր, որ ես միայն մտածում եմ, թե կուղևորվեմ քեզ հետ: Վերջնականապես դեռ ոչինչ չենք որոշել: Հայտնի չէ, թե ինչ կասեն Էլրոնդն ու Արագորնը: Ի դեպ. պետք է Էլրոնդին տեսնեմ: — Գանդալֆը հագավ գլխարկն ու դուրս եկավ:

— Ի՞նչ ես կարծում,— Բիլբոյին հարցրեց Ֆրոդոն,— որքան ժամանակ պետք է սպասեմ:

— Չգիտեմ,— անկեղծորեն խոստովանեց Բիլբոն: — Այստեղ, ախր, ժամանակը համարյա չես զգում: Բայց հետախույզներին դժվար ճանապարհ է սպասում, այնպես որ հազիվ թե շուտ մեկնես: Մինչ այդ մենք կհասցնենք սրտներս ուզածին չափ զրուցել: Իսկ դու չե՞ս ուզում գրքի հարցում ինձ օգնել: Մենք այն կվերջացնենք և քոնը կսկսենք: Ասա, դեռ չե՞ս մտածել, թե քո գիրքն ինչպես պետք է ավարտվի:

— Մտածել եմ,— մռայլ պատասխանեց Ֆրոդոն: — Եվ ոչ մի լավ բան չեմ որոշել:

— Ի՞նչ ես ասում, բարեկամս... — բացականչեց Բիլբոն: — Գրքերը պարտավոր են լավ վերջանալ: Քեզ ինչպե՞ս է դուր գալիս ահա այսպիսի վերջը. դրանից հետո նրանք երբեք չեն բաժանվել և նրանցից երջանիկ աշխարհում ոչ ոք չկար:

— Այո, դա հրաշալի վերջ է,— համաձայնեց Ֆրոդոն: Եվ տխուր ավելացրեց. — Միայն թե ես արդեն դրան չեմ հավատում:

Հոբիթները քննարկեցին կայանալիք ճամփորդությունը ու փորձեցին կռահել, թե Մորդորի ճանապարհին Ֆրոդոյին ինչ փորձանքներ կհանդիպեն: Սակայն Ազատքի հոգեպարար անդորրը շուտով ցրեց նրանց տագնապալի մտքերը: Ապագան առաջվա պես նրանց մռայլ էր թվում և, այնուամենայնիվ, չէր մթագնում ներկան, իսկ կյանքի բերկրանքն ամրապնդում էր վտանգավոր արշավի երջանիկ ավարտի նկատմամբ հավատը: Հոբիթներն ուրախանում էին հյուրընկալ էլֆերի հետ անցկացրած յուրաքանչյուր օրվա, յուրաքանչյուր ճաշկերույթի և բուխարու շքեղ դահլիճում հնչող յուրաքանչյուր երգի համար:

Օրերն աննկատ գլորվում էին անցյալի գիրկը, և աշնանը փոխարինելու համար մոտենում էր ձմեռը: Մշուշապատ Լեռներից փչող քամին կամաց-կամաց լցվում էր պաղով, չոր շրշում էին թռչկոտող տերևները և դժգունում էր երկնքի արծաթափայլ լազուրը: Լիալուսնի ճերմակ շողերում գիշերները հազիվ նշմարելի առկայծում էին աստղերը, բայց հարավում, համարյա գետնին կպած, մինչև լուսաբաց փայլում էր Բոսոր աստղը, և լուսնի փայլը չէր կարողանում աղոտացնել այն: Բոսոր աստղը նայում էր Ֆրոդոյի սենյակին որպես մի արյունաման, ամենատես աչք:

Հոբիթները Ազատքում ապրեցին երկու ամիս: Նոյեմբերի վերջին, երբ աշունը վերջանում էր, հետախույզների խմբերն սկսեցին վերադառնալ: Նրանցից ոմանք հետազոտել էին հյուսիսային հողերը՝ Կատաղի գետի վերին հոսանքները, Թրոլյան սարահարթը և Անդուինի ակունքների մոտ գտնվող Մոխրագույն լեռները: Մյուսներն իջել էին Դիվոտ և Մոխրաջուր գետերով մինչև վաղուց ավերված Թարբադ ամրոցը՝ իմանալու համար Անտերունչ հարթավայրում տիրող վիճակը: Երրորդներն անցել էին Մշուշապատ Լեռնաշղթան, գնացել Անդուինի երկարությամբ մինչև Հիրիկների հարթավայրն ու վերադարձել Դիվոտ մի լեռնանցքով, որը կոչվում էր Սևգետյան Հեղեղ: Չորրորդներն անցել էին Արևելյան Ուղիով և հետո, զգուշորեն դեպի հարավ շարժվելով, հետազոտել էին Չարքանտառի արևմտյան եզրերը ընդհուպ մինչև Դուլ Գուլդուրի Հմայաթավուտքը: Վերջինը վերադարձան Էլրոնդի որդիները՝ նրանք գնացել էին Անդուինից արևելք, եղել Խլուտում և Գորշ դաշտավայրում, բայց իրենց ճանապարհորդության մասին միայն հորը պատմեցին:

Հետախույզները ոչ մի տեղ Հեծյալներ չէին հայտնաբերել, նույնիսկ ոչինչ չէին լսել նրանց մասին: Հեծյալներին չէին տեսել և Մեծ արծիվները, Ռադագասթ Թուխի հզոր դաշնակիցները: Գոլլումը նույնպես անհետ կորել էր, իսկ հյուսիսում վարգում էին գայլդարձյակների ոհմակները: Դիվոտ գետում Գետանցումի մոտ գտնվել էին երեք խեղդված սև ձիեր, և ևս հինգը՝ քիչ ներքև, ծանծաղուտներում. նույն տեղում, ջրի մեջ, լողում էին քրքրված թիկնոցներ:

— Համենայն դեպս, Դիվոտը ութ Մատանեկիրներին հետիոտն է դարձրել,— դատում էր Գանդալֆը: — Կարելի է հույս ունենալ, որ Ուրվական սպասավորներն ինչ-որ ժամանակով իրենց ուժը կորցրել են ու վերադարձել Մորդոր, որպես անձև ուրվականներ, բայց ես լրիվ համոզված չեմ: Եթե դա իսկապես այդպես է, ապա նրանք մեր արշավին չեն խանգարի, որովհետև դեռևս շուտ չեն հայտնվի նորից: Հասկանալի է, Թշնամին սպասավորներ շատ ունի, բայց նրանք որպեսզի իմանան, թե մենք ուր ենք գնացել, ստիպված կլինեն ծածուկ հասնել Ազատք, ծածուկ, որովհետև դունադանները քնած չեն, և այստեղ փնտրել մեր հետքերը, իսկ մենք կաշխատենք հետքեր չթողնել: Սակայն այլևս դանդաղել չի կարելի, ես գտնում եմ, որ հենց հիմա էլ հարկավոր է գործել:

Էլրոնդը հոբիթներին կանչեց իր մոտ:

— Ժամանակը եկել է,— հայտարարեց նա: — Մատանու Պահապանի գործելու ժամանակն է: Բայց այժմ նա պարտավոր է հիշել, որ ճանապարհին օգնություն չի ստանա՝ մենք շատ հեռու կլինենք նրանից: — Էլրոնդը ուշադիր նայեց Ֆրոդոյին և լուրջ հարցրեց.

— Դու միտքդ չե՞ս փոխել, քանզի ստիպելու իրավունք մենք չունենք:

— Ոչ,— ասաց Ֆրոդոն: — Ես կգնամ Սամի հետ:

— Ես նույնիսկ խորհուրդ չեմ կարող տալ քեզ,— քիչ լռելուց հետո ասաց Էլրոնդը: — Խավարի Վարագույրը օր օրի ծավալվում է, այն տարածվել է համարյա մինչև Մոխրաջուր գետը, իսկ Խավարամած հողերն ինձանից ծածկված են, ես անզոր եմ գուշակելու քո ապագա ուղին և չգիտեմ, թե դու ինչպես պետք է հասնես Մորդոր: Բազում թաքուն ու բացահայտ թշնամիներ կհանդիպեն քեզ ճանապարհին, բայց հիշիր. նույնիսկ Սաուրոնի տիրույթներում Մատանու Պահապանը կարող է բարեկամի հանդիպել: Մենք քո մասին լուր կուղարկենք Իմաստունների խորհրդի բոլոր դաշնակիցներին... Չնայած հայտնի չէ, կկարողանա՞ն անցնել սուրհանդակները այն երկրներով, որոնք պատերազմի մեջ են:

Մենք քեզ համար մի քանի հուսալի ուղեկից կգտնենք, բայց դրանց թիվը պետք է շատ փոքր լինի, քանզի քո արշավի հաջողությունը կախված է միայն արագությունից և գաղտնի լինելուց: Պահապաններն ընդամենը ինը կլինեն, ճիշտ այնքան, որքան Ուրվական-Նազգուլները: Բացի քո հավատարիմ Սամից, քեզ հետ կուղևորվեն Գանդալֆը և գուցե այդ դժվարագույն արշավում ավարտվեն նրա մեծագործությունները:

Մնացած ուղեկիցներին կներկայացնեն ազատ աշխարհի ազատ ժողովուրդները՝ էլֆերը, թզուկները և մարդիկ: Էլֆերից քեզ հետ գնալու ցանկություն է հայտնել Լեգոլասը, թզուկներից՝ Ջիմլին, իսկ մարդկանցից՝ Արագորնը:

— Պանդո՞ւխտը,— ուրախացած բացականչեց Ֆրոդոն:

— Նա ինքը,— ժպտալով արձագանքեց Արագորնը: — Չէ՞ որ դու իմ ընկերությունից չես հրաժարվի...

— Ես էլ մտածում էի,— որ դու գնում ես գոնդորցիներին օգնելու և չէի համարձակվում խնդրել մեզ հետ ուղևորվել:

— Գնում եմ,— հանգիստ հաստատեց Արագորնը: — Բայց մինչև հարավային հողեր հասնելը մեր ճանապարհը նույնն է, հարյուրավոր լիգեր կհաղթահարենք միասին: Բորոմիրն էլ է ուղևորվում մեզ հետ՝ նա փորձված ճանապարհորդ է և քաջ ռազմիկ:

— Հարկավոր են ևս երկուսը,— նկատեց Էլրոնդը: — Ազատքում բավական ցանկացողներ կգտնվեն...

— Իսկ մե՞նք,— դառնացած բացականչեց Փինը: — Ուրեմն ստացվում է, որ մեզ չեն վերցնելու: Մենք էլ ենք ուզում Ֆրոդոյին ուղեկցել...

— Դուք չեք հասկանում,— պատասխանեց Էլրոնդը,— ուղղակի չեք պատկերացնում, թե ինչպիսի ահավոր վտանգներ են սպառնում Ֆրոդոյին Մորդորի ճանապարհին:

— Դե և Ֆրոդոն էլ ավելին չգիտե, քան նրանք,— անսպասելիորեն հոբիթներին պաշտպանեց Գանդալֆը: — Մեզանից ոչ ոք ինչպես հարկն է չգիտե: Պարզ է, որ եթե մեր համերաշխ հոբիթները հասկանային, թե իրենց ինչ փորձություններ են սպասում, չէին վճռի ճանապարհ ընկնել: Բայց դառնացած կանիծեին իրենց անվճռականությունը, քանզի նրանք Ֆրոդոյի հավատարիմ ընկերներն են: Իսկ այս արշավում նրանց անդավաճան նվիրվածությունը զորեղությունից ու իմաստնությունից կարևոր կլինի: Հուսով եմ, ինձանից լավ գիտես, որ նույնիսկ մեծ դյուցազն Փառքաշատը չի կարող մենամարտում հաղթել Թշնամուն կամ ուժով հասնել Օրոդրուին:

— Ճիշտ ես,— դժկամությամբ համաձայնեց Էլրոնդը: — Բայց Հոբիթստանին նույնպես վտանգ է սպառնում, և ահա ես կուզեի, որ մեր հոբիթներն այդ մասին զգուշացնեն իրենց հայրենակիցներին: Եվ բոլոր դեպքերում Փերեգրին Ճագարակը չափազանց երիտասարդ է այդ ճանապարհորդության համար: Ես չեմ կարող նրան թույլ տալ Մորդոր գնալ:

— Այդ դեպքում հրամայիր կալանավորել ինձ, այլապես կփախչեմ,— ասաց Փինը:

Էլրոնդը նայեց նրան ու հառաչեց:

— Ի՜նչ արած, ստիպված ենք քեզ էլ թույլ տալ,— տխուր ժպիտով ասաց նա: — Ուրեմն, Պահապանների ջոկատը լրիվ է: Յոթ օր հետո դուք ճանապարհ կընկնեք:

Էլֆ դարբինները նորից կոփեցին Նարսիլը և նրա սայրին խորհրդանշան դակեցին՝ կիսալուսնի և արևի միջև յոթ աստղ, քանզի Արագորնը՝ Արաթհորնի որդին, Նումենորի թագավորների անմիջական ժառանգը, ճանապարհվում էր պաշտպանելու Գոնդոր տերությունը: Ահեղ տեսք ուներ նորոգված թուրը. ցերեկը, սև պատյանից հանված, արևի

տակ փայլատակում էր շիկացածի պես, իսկ լուսնի սառը լույսի տակ ցոլցլում էր մռայլ, սառցային փայլով: Արագորնը նրան նոր անուն տվեց. Անդրիլ, որը նշանակում է «Վերածնված կայծակ»:

Արագորնն ու Գանդալֆը արշավի պատրաստվելով, ուսումնասիրում էին Միջերկրի հին քարտեզները և Էլրոնդի դղյակում հնուց պահպանվող նախորդ Դարաշրջանների տարեգրությունները: Պատահում էր, Ֆրոդոն էլ էր միանում նրանց, բայց ժամանակի մեծ մասն անցկացնում էր Բիլբոյի հետ՝ վստահելով ուղեկիցների իմաստնությանը:

Երեկոները հոբիթները հավաքվում էին բոլորը միասին, նստում բուխարու հարմարավետ դահլիճում, ունկնդրում էլֆերի հին ավանդությունները, իսկ ցերեկը, քանի դեռ Մերին ու Փինը թափառում էին ձմեռային այգում, Ֆրոդոն ու Սամը նստում էին Բիլբոյի մոտ, ու նա կարդում էր իր բանաստեղծությունները կամ հատվածներ անավարտ գրքից:

Ճանապարհվելու նախորդ օրն առավոտյան Ֆրոդոն մենակ մտավ Բիլբոյի մոտ: Բիլբոն դուռը պինդ ծածկեց, մահճակալի տակից հանեց փայտե սնդուկը, կափարիչը բաց արեց և չափազանց ճմրթված կաշվե պատյանից մի թուր հանեց:

— Քո թուրը կոտրվել է,— ասաց ծեր հոբիթը,— ես պահել եմ, որ տամ նորից կոփելու, բայց ժամանակին չեմ տվել, իսկ հիմա արդեն ուշ է, մեկ օրում թուր չեն նորոգի նույնիսկ Ազատքի հմուտ դարբինները: Ուրեմն գուցե ա՞յս թուրը վերցնես... — Բիլբոն թուրը պատյանից դուրս քաշեց, և սրա ողորկ շեղբից սենյակը լուսավորվեց սառը փայլով: — Սա հաճախ է ինձ փրկել կործանումից, բայց այժմ քեզ ավելի է հարկավոր, քան ինձ:

Ֆրոդոն շնորհակալությամբ թուրն ընդունեց:

— Եվ ահա էլ ինչ եմ ուզում նվիրել քեզ: — Բիլբոն սնդուկից խնամքով հանեց ոչ մեծ, բայց ակնհայտորեն ծանր մի փաթեթ և, երբ նա քանդեց կապոցը, Ֆրոդոն տեսավ փայլատ արծաթե օղերից կռված զրահաշապիկը, բարակ, սակայն հոծ ու ամրապինդ, այն զարդարված էր թափանցիկ գունավոր քարերով, իսկ գոտին շողշողում էր մարգարիտներով:

— Գեղեցիկ է, չէ՞,— ասաց Բիլբոն՝ օղազրահը ձեռքին պատուհանին մոտենալով: — Եվ շատ օգտակար է, կարող ես չկասկածել: Դա ինձ մի ժամանակ Թորինն է նվիրել, դե հիմա հազիվ թե ինձ պետք գա՝ միայն որպես իմ ճանապարհորդության հիշատակ: Ձեռքումդ բավական ծանր է թվում, բայց որ հագնես՝ էլ կշիռը չես զգա:

— Բայց ախր ես... Իմ կարծիքով, դրա մեջ ես մի քիչ տարօրինակ տեսք կունենամ,— ասաց Ֆրոդոն:

— Ես էլ նույնը մտածեցի,— ասաց Բիլբոն,— երբ առաջին անգամ տեսա: Հագիր բաճկոնիդ տակից, և վերջ: Ոչ ոք մեզանից բացի՝ չի իմանա դրա մասին: Այո՛, այո՛ ոչ ոքի մի ասա... Հուսով եմ... — Բիլբոն շուրջը նայեց ու դեպի Ֆրոդոն թեքվելով շշնջաց,— որ այն ոչ մի զենքով խոցել չի լինի, նույնիսկ Սև Հեծյալի դաշույնով:

— Այդ դեպքում կվերցնեմ,— վճռեց Ֆրոդոն: Նա օղազրահը հագավ, ինչպես Բիլբոն խորհուրդ տվեց, բաճկոնի տակից, իսկ վրայից գցեց թիկնոցը, այնպես որ թուրն էլ չէր երևում:

— Ոչ ոք գլխի չի ընկնի,— նկատեց Բիլբոն,— որ դու հուսալի պաշտպանված ես և զինված: Մնում է քեզ բարի ճանապարհ մաղթել... — Նա կտրուկ շրջվեց, նայեց պատուհանից դուրս և ինչ-որ երգ երգեց: Բայց դրանով նա Ֆրոդոյին չխաբեց. Ֆրոդոն տեսավ, որ Բիլբոն խորապես վշտացած է իր հայրենակիցներից բաժանվելու համար:

— Չգիտեմ, քեզ ինչպես հայտնեմ շնորհակալությունս...

— Ա-ա՛, դատարկ բան է,— ասաց Բիլբոն և բարեհոգաբար թփթփացրեց նրա ուսին: — Այ թե ուսե՛ր են... — փնթփնթաց նա՝ օղազրահից ցաված ձեռքը թափահարելով: Փոքր ինչ լռելուց հետո լրջացած ավելացրեց. — Հոբիթները պետք է օգնեն միմյանց: Իսկ մենք նաև ազգականներ ենք: Այնպես որ ինձ շնորհակալություն հայտնելու հարկ չկա... Խոստացիր ինձ արշավի ժամանակ խելամիտ լինել և հիշել հեռավոր, օտար ժողովուրդների սովորությունները, իսկ ես կջանամ ավարտել գիրքը: Գուցեև իմ ժամանակը բավականացնի նաև քո արկածները նկարագրելու համար: — Նա նորից լռեց և մոտեցավ պատուհանին:

Դեկտեմբերյան օրը ցուրտ էր ու մռայլ: Այգու ծառերի մերկ ճյուղերը ճկվել էին արևելյան քամուց, իսկ հեռվում, դաշտավայրի հյուսիսային կողմում գտնվող լեռնալանջերին միալար աղմկում էր սոճու անտառը: Ցածր, գետնամած երկնքով հապշտապ սողում էին թանձր ամպերը:

Պահապանները պատրաստվում էին մեկնել առավոտյան, բայց Էլրոնդը խորհուրդ տվեց դուրս գալ երեկոյան և, գիշերային խավարով պաշտպանված, հեռանալ Ազատքից:

— Սաուրոնը,— ասաց նա,— շատ սպասավորներ ունի՝ չորքոտանի, երկոտանի և նույնիսկ թևավոր: Նազգուլները հաստատ արդեն վերադարձել են տիրոջ մոտ, այնպես որ նա գիտե իրենց պարտության մասին և հիմա կատաղությունից փրփրած իրեն ուտում է: Հյուսիս, իհարկե, լրտեսներ են ուղարկված: Թռչունները, ինչպես հայտնի է, արագ են թռչում, դրա համար էլ զգուշացեք պարզ երկնքից:

Պահապանները ճանապարհի համար միայն թեթև ռազմական հանդերձանք վերցրին՝ նրանց գլխավոր զենքը թաքնվելն էր: Արագորնի՝ սահմանամերձ Խլուտի թափառաշրջիկի կանաչավուն թիկնոցի տակ գոտուց կախված էր Անդրիլը, ուրիշ զենք նա չվերցրեց: Բորոմիրը Անդրիլի նման թուր ուներ, նույնպես Նումենորից, բայց ո՛չ այդքան փառաբանված, մի թեթև վահան ու փող՝ լանջափոկից կախված: Նա փողը փչեց, և հովտի անդորրում ալիք-ալիք տարածվեց թավշյա ուժգին արձագանքը՝ խլացնելով հեռավոր ջրվեժի դղրդյունը, զառիթափի գետի խոխոջյունը և մերկացած ճյուղերի մեջ քամու սուլոցը:

— Թո՛ղ ցրվեն անիծյալ Սաուրոնի դաշնակիցները,— բացականչեց գոնդորցին՝ փողն իջեցնելով:

— Իսկ հիմա եղջերափողդ պահիր, Բորոմիր, դեռ շուտ պետք չի գա քեզ,— ծանրակշիռ ասաց Էլրոնդը: — Հուսով եմ, ինքդ էլ ես հասկանում, թե ինչու:

— Իհարկե հասկանում եմ,— պատասխանեց Բորոմիրը: — Ճանապարհին ես էլ եմ թաքնվելու լրտեսներից: Բայց ռազմիկի հպարտությունս թույլ չի տալիս արշավն սկսել գողի նման թաքնվելով:

Ջիմլին, Պահապանների ջոկատից միակը բացեիբաց հագավ օղազրահը և գոտու մեջ խրեց ռազմական կացինը: Լեգոլասն աղեղ ուներ, նետերով լի կապարճ և գոտուն ամրացրած երկար դաշույն, Ֆրոդոն՝ Ջարդողը, Թորինի օղազրահի մասին որոշեց չասել ուղեկիցներին, մյուս հոբիթները զինված էին դամբանատան սրերով: Գանդալֆը վերցրել էր իր կախարդական գավազանը և էլֆերի կռած Մոլեգին թուրը:

Էլրոնդը նրանց տաք հագուստ տվեց՝ բաճկոններ և մորթե աստառներով թիկնոցներ: Մթերքը, տաք հագուստները և վերմակները կապերով բարձեցին պոնիին՝ դա այն նույն զառամյալ պոնին էր, որ Լեռնամոտից փախչելիս վերցրին իրենց հետ: Բայց հիմա դժվար էր նրան ճանաչել՝ մի տասնհինգ տարով ջահելացած էր երևում: Սամը պնդեց, որ նոր ճանապարհորդության համար վերցնեն իրենց հավատարիմ ծեր օգնականին՝ ասելով, որ Բիլը (նա այդպես էր կոչել պոնիին) կարոտից կսատկի, եթե մնա Ազատքում:

— Ախր դա զարմանալի կենդանի է: Մի երկու ամիս ավելի ապրեինք այստեղ, սա կխոսեր արդեն,— հայտարարեց Սամը: — Դե առանց խոսքի էլ նա ինձ բացատրեց (ո՛չ վատ, քան Փերեգրինը Ազատքի տիրակալին), որ եթե իրեն չբանտարկեն, նա, մեկ է, կվազի մեր հետևից:

Իրոք որ, ծանր բեռնված Բիլի գոհ տեսքից դատելով, թեթև սրտով էր գնում արշավի, ոչ թե Ֆրոդոյի մյուս ուղեկիցների նման, որոնց ընկճում էին ծանր կանխազգացումները, թեև անբեռ էին գնում:

Բուխարու դահլիճում էլֆերին հրաժեշտ տալով, Պահապանները դուրս եկան արևելյան պատշգամբ և այժմ սպասում էին ուշացած Գանդալֆին: Արևելքից լողում էր պաղ աղջամուղջը, բուխարու կրակի տաք ցոլքերը դղյակի պատուհանների ապակիները ոսկեգույն էին ներկել: Բիլբոն մրսում էր, թիկնոցի մեջ փաթաթված կանգնել էր Ֆրոդոյի կողքին ու տխուր լռում էր: Արագորնը գլուխը կախ նստած էր աստիճանների վրա, միայն Էլրոնդն էր կռահում, թե ինչ մտքեր են պաշարել Խլուտի անվախ թափառականին: Սամը, Բիլի ճակատը քորելով, նայում էր դատարկ մթությանը, այնտեղ, որտեղ զառիթափի քարե ալիքների տակ խուլ մռնչում էր մոլեգին Բրուինենը:

— Բիլ, բարեկամս,— մրմնջում էր Սամը,— ինձնով լինի, իզուր մեզ հետ կապվեցիր: Կապրեիր էստեղ քեզ համար ու ցավ չէիր քաշի... Կծամեիր Ազատքի անուշահոտ խոտը... Իսկ հետո էլ, մեկ էլ տեսար գարուն կգար...

Բայց Բիլը ոչինչ չէր պատասխանում հոբիթին...

Սամն ուղղեց պարկը և սկսեց հիշել, թե ամե՞ն ինչ է վերցրել արդյոք. կաթսայիկներ, որ դադարների ժամանակ ուտելիք պատրաստի (իմաստունները հո այդ մասին չե՞ն մտածելու), աղի տուփիկ, (Է՛հ, հոգեպահուստը քիչ է), մի քանի զույգ բրդե գուլպա (ճանապարհին գլխավորը ոտքերի տաք լինելն է) և զանազան այլ մանր-մունր բաներ, որ Ֆրոդոն մոռացել է, բայց տեղը տեղին հավաքել է հոգատար Սամը, որպեսզի երբ դրանք հանկարծ պետք գան, հանդիսավոր հպարտությամբ հանձնի տիրոջը(ո՞նց թե մոռացել եք, հապա Սամն ինչի՞ համար է): Դեհ, թվում է, ոչինչ չի մոռացել...

— Բա պարա՛նը,— հանկարծ հիշեց նա: — Էհ, ցրված, պարանը չես վերցրել... Ախր չէ՞ որ երեկ ինքս ինձ ասում էի. «Սամ, անպայման պարան վերցրու, հաստատ ճանապարհին պետք կգա»: Հաստա՛տ: Բա՛յց դե հիմա որտեղի՞ց ճարեմ...

Շուտով պատշգամբում հայտնվեց Գանդալֆը. նրան ուղեկցում էր Ազատքի տիրակալը:

— Այսօր, ոչ բարձր ասաց Էլրոնդը,— Մատանու Պահապանը ճանապարհ է ընկնում դեպի Ճակատագրի Լեռը: Լսեցեք իմ վերջին մաղթանքը: Նա մենակ է պատասխանատու Մատանու ճակատագրի համար և, կամավոր մտնելով այդ բեռի տակ, չպետք է Մատանին դեն նետի ճանապարհին կամ հանձնի Թշնամու սպասավորներին: Նա կարող է ժամանակավորապես վստահել միայն Իմաստունների Խորհրդից մի Իմաստունի կամ ուրիշ Պահապանի, միայն նրանց՝ այն էլ սոսկ ծայրահեղ անհրաժեշտության դեպքում: Սակայն Պահապանները երդմամբ չեն կապված իրար հետ, քանի որ ոչ ոք ի վիճակի չէ կանխապես կռահելու, թե ինչ փորձություններ են սպասում ճանապարհին և իրենք մինչև վերջ հասնելու ուժ կունենա՞ն: Հիշեցեք, որքան մոտենաք Մորդորին, այնքան դժվար կլինի նահանջել, այդ պատճառով...

— Ով որ դժվարություններից վախենալով նահանջում է, անվանվում է դավաճան,— նրան ընդհատեց Ջիմլին:

— Իսկ նա, ով երդվում է, առանց իր ուժերը փորձելու և հետո հրաժարվում սեփական երդումից, կոչվում է երդմնազանց,— ասաց Էլրոնդը: — Ավելի լավ է զերծ մնալ թեթևամիտ երդումներից:

— Երդումը թույլին կարող է ամրացնել...

— Բայց կարող է և կոտրել,— առարկեց Էլրոնդը: — Հարկավոր չէ գուշակել հեռավոր ապագան: Գնացեք և թող պահպանի ձեզ մեր երախտապարտությունը... Թող աստղերը պայծառ լուսավորեն ձեր ուղին...

— Բարին ընդ ձեզ, բարի՛ ճանապարհ,— գոռաց Բիլբոն՝ կարկամելով հուզմունքից ու սարսռալով: — Հազիվ թե կարողանաս օրագիր պահել, Ֆրոդո, բարեկամս... բայց երբ վերադառնաս... իսկ ես համոզված եմ, որ դու կվերադառնաս... կպատմես ինձ արկածներդ ու ես անպայման կավարտեմ գիրքը... Միայն թե շուտ վերադարձիր... Ցտեսություն... Ազատքի տիրակալի հպատակներից շատերը եկան բարի ճանապարհ մաղթելու Պահապաններին: Լսվում էին Ջոկատին բարի ճանապարհ մաղթող էլֆերի մեղմիկ ձայները, ու ոչ ոք չէր ծիծաղում, չէր երգում՝ բավական տխուր էր հրաժեշտը:

Ճամփորդները կամրջակով անցան Բրուինենը, այստեղ, ակունքի մոտ գետը նեղ էր, և սկսեցին բարձրանալ հարավից երկմասված հովիտը (որտեղ հնուց ապրում էին էլֆերը) եզրափակող լեռնալանջը: Բարձրանալով դեպի բլրապատ հովիտը, նրանք հրաժեշտի հայացք գցեցին ուրախ կրակներով փայլփլող Ազատքին՝ Ծովից դեպի արևելք ընկած Վերջին Հանգրվանին և խորացան գիշերային քամոտ խավարի մեջ: Պահապաններն Ուղիով հասան մինչև գետանցում և կտրուկ շրջվեցին հարավ: Նրանց առջև փռվեց ձորերով կտրտված, հավամրգու թփերով ծածկված քարքարոտ հարթավայրը, որը արևելքից եզերված էր Մշուշապատ Լեռնաշղթայով. եթե նրանք կտրեին-անցնեին լեռնաշղթան, իսկ հետո իջնեին Անդուինի հովիտը, ապա ավելի արագ կհասնեին հարավային հողերին, քանզի Մեծ Գետի հովիտը փառաբանված էր իր բերքառատությամբ և հարմար ճանապարհներով: Բայց հենց այդ պատճառով էլ Սաուրոնի լրտեսները անտարակույս հսկելիս կլինեին գետամերձ

ճամփաները, իսկ Անդուինից Մշուշապատ Լեռնաշղթայով անջատված արևմտյան հարթավայրով դեպի հարավ շարժվելով, ճամփորդները հույս ունեին աննկատ մնալ:

Ձոկատի առջևից գնում էր Գանդալֆ Մոխրագույնը, նրանից աջ՝ Արագորնը, որը հիանալի գիտեր արևմտյան հարթավայրերը, այնպես որ մութը նրա համար խանգարող հանգամանք չէր, նրա հետևից քայլում էին մնացած ճամփորդները, իսկ երթը եզրափակում էր Էլֆ Լեգոլասը, որը, ինչպես և Չարքանտառի բոլոր էլֆերը, գիշերով տեսնում էր ոչ պակաս, քան ցերեկը: Սկզբում ուղղակի ձանձրալի էր, և Ֆրոդոյի հիշողության մեջ գրեթե ոչինչ չմնաց, բացի արևելյան սառնաշունչ քամուց: Այդ խոնավ, մինչև ոսկորները թափանցող քամին անփոփոխ փչում էր Մշուշապատ Լեռների թիկունքից, այնպես որ Ֆրոդոն, չնայած տաք հագուստին, շարունակ իրեն սառած էր զգում՝ և՛ գիշերը, ճամփին, և՛ ցերեկը, հանգստի ժամանակ: Առավոտները, երբ անթափանցելի խավարը փոխվում էր մոխրագույն, անարև աղջամուղջի, ճամփորդները դադարի տեղ էին գտնում և մտնում փշարմավի փշոտ ճյուղերի տակ: Այդ գետնամած թփուտները, որպես կղզյակներ, սևին էին տալիս հարթավայրում, կամ թաքնվում էին որևէ ձորում: Երեկոյան, հերթական պահակի ձայնից արթնանալով, նրանք թմրած ուտում էին սառը ընթրիքը և քնատ, դողդողալով ճանապարհ ընկնում:

Հոբիթներն այդպիսի ճանապարհորդությունների սովոր չէին, և երբ լուսաբացը մոտենում էր, հոգնածությունից նրանց ոտքերը ծալվում էին. թվում էր, թե իրենք չեն շարժվում առաջ, այլ գիշերից գիշեր քայլում էին տեղում: Տաղտուկ, ձորերով կտրտված հարթավայրը փշարմավի ծակծկող թփերի կղզյակներով ձգվում էր հարյուրավոր լիգեր: Սակայն լեռներն ավելի ու ավելի էին մոտենում: Մառախլապատ Լեռնաշղթան թեքվում էր դեպի արևմուտք, և այժմ նրանք գնում էին սարահարթով, որը հատվում էր մթին կիրճերով և բարձր ժայռերի զառիկող պատերով: Ոլոր-մոլոր, վաղուց լքված արահետները հաճախ Պահապաններին փակուղի էին տանում՝ մերթ վարար, փրփրաշատ վտակի վրա կախված քարափ, մերթ դեպի չոր, բայց լայն ու խոր ծերպ, մերթ գահավեժ վայրեջք դեպի անհատակ ճահճուտ:

Տասնչորսերորդ գիշերը եղանակը փոխվեց: Արևելյան քամին կարճ ժամանակով դադարեց, իսկ հետո անփոփոխ փչում էր հյուսիսից: Թանձր ամպերը լուսադեմին ցրվեցին, թափանցիկ օդը սառն ու չոր դարձավ, իսկ Մշուշապատ Լեռների հետևից դուրս եկավ արևը՝ հսկայական, ձմեռային, աղոտ ու պաղ: Ճամփորդները մոտեցան հզոր կաղնիներով պատված բլրաշարին. թվում էր, թե կաղնիների սև բները հնում կերտել են գրանիտից:

Հարավում, Ձոկատի ճանապարհը փակելով, բարձրանում էր վիթխարի լեռնաշղթան հավերժական ձյան արծաթափայլ երեք գագաթներով:

Ֆրոդոն ուշադիր զննում էր լեռները: Անլսելի նրան մոտեցավ Գանդալֆը և, ձեռքը ճակատին հովար անելով, նայեց հեռավոր ձյունապատ լեռնաշղթային:

— Այստեղից սկսվում են Օստրանի կամ, ինչպես մարդիկ են ասում Հոլլինի հողերը,— ձեռքն իջեցնելով ասաց նա Ֆրոդոյին: — Օստրանում և՛ կլիման է ավելի լավ, և՛ հողերն են ավելի բերրի, քան հյուսիսային հարթավայրերում, բայց հիմա մենք ստիպված կլինենք կրկնապատկել զգուշությունը. այստեղ անպայման լրտեսներ կլինեն:

— Մի իսկական արևոտ օրվա համար համաձայն եմ նույնիսկ քառապատկել զգուշությունը... — կնգուղը հետ գցելով, բացականչեց Ֆրոդոն:

— Առջևում լեռներ են,— ասաց Փինը: — Երևի գիշերը թեքվել ենք արևելք:

— Այդպիսի բան չի եղել,— առարկեց Գանդալֆը: — Արևոտ եղանակին ուղղակի ավելի հեռուն է երևում, ահա թե ինչու ես լեռները տեսնում: Մշուշապատ Լեռնաշղթան Օստրանի սահմանների մոտ սահուն թեքվում է հարավ-արևմուտք: Դու, ինչ է, ոչ մի անգամ քարտեզ չե՞ս նայել Ազատքի տիրակալի մոտ հյուրընկալվելու ժամանակ:

— Ոնց չեմ նայել,— նեղացավ Փինը: — Նայել եմ, նույնիսկ կարելի է ասել՝ ուսումնասիրել եմ: Բայց տեսողական վատ հիշողություն ունեմ: Իսկ մեր Ֆրոդոն հաստատ բոլորը հիշում է:

— Մեզ ոչ մի քարտեզ հարկավոր չէ,— ասաց հոբիթներին մոտեցած Ձիմլին: Նա հուզված նայում էր հեռավոր լեռներին: — Չէ՞ որ դա իմ նախնիների տիրույթներն են: Ահա առասպելներով պսակված գագաթները՝ ձյունապատ Ձիրաքը, Բարազը և Շաթհուրը: Ես դրանք տեսել եմ միայն մեկ անգամ, այն էլ հեռվից, բայց ինձ լավ ծանոթ են: Դրանց բազում առասպելներ են նվիրված, իսկ մեր վարպետները մետաղի և քարի վրա դրանք շատ են պատկերել, այդ լեռները: Որովհետև դրանց ընդերքում, հսկայական անձավներում է գտնվում

թզուկների հինավուրց թագավորությունը՝ Քազադ-Դումը կամ Էլֆերեն՝ Մորիան, իսկ համընդհանուր լեզվով՝ Սև Անդունդը: Քիչ հեռու բարձրանում է Բարազինբարը, Էլֆերեն Քարադիրասը՝ Բոսոր Կոտոշը, իսկ դրա հետևում, դեպի աջ կան ևս երկու գագաթ՝ Զիրաք-Զիգիլը, Էլֆերեն Քելեբդիլը՝ արծաթագույն և Բունդուշաթիուրը, Էլֆերեն Ֆանուիդոլ՝ Խավարը: Այստեղ անառիկ Մշուշապատ Լեռնաշղթան գոգավորվում է նեղ լեռնանցքով, որտեղով կարելի է անցնել հովիտ, որը հայտնի է Միջերկրի բոլոր թզուկներին: Այդ հովիտը մի քանի անուն ունի. Թզուկների լեզվով՝ Ազանուլբիզար, Էլֆերեն՝ Նանդուրիոն, դե իսկ համընդհանուր լեզվով՝ Սևագետք:

— Մեզ հարկավոր է դուրս գալ Ազանուլբիզար,— հայտարարեց Գանդալֆը, երբ թզուկը լռեց: — Բոսորագույն Դարպասով, այդպես են անվանում նրա արևմտյան լանջը, բարձրանալով լեռնանցքը, մենք Սևագետքի ափով կիջնենք հովիտ: Այնտեղ դուք կտեսնեք Հայելու լիճը և նրանից սկիզբ առնող գետակը՝ Արծաթափայլը:

— Անթափանց է Քելեդ-Զարամի ջուրը,— ասաց Ջիմլին,— և սառույցի նման պաղ են Քիբել-Նալի աղբյուրները: Մի՞թե ես այդ երջանիկ բախտն ունեմ՝ տեսնել մեր նվիրական լիճը:

— Եթե ունես էլ, ապա միայն թռուցիկ, բարեկամս,— թզուկին նայելով, խոսեց Գանդալֆը: — Քանի որ մեր ճանապարհն անցնում է Հայելու լճի կողքով, Արծաթափայլով ներքև, Գաղտնի Թավուտի միջով դեպի Մեծ Գետը և հետո... — Նա լռեց:

— Եվ հետ ի՞նչ,— հարցրեց նրան Մերին:

— Եվ հետո՝ շարունակությունը,— պատասխանեց Գանդալֆը,— ճանապարհորդության վերջում... Շատ հեռու գալիքը չգուշակենք: Մեզ հաջողվեց հասնել Օստրան, բայց դա միայն առաջին քայլն է հաղթանակի ճանապարհին: Մենք այստեղ մեկ օր կանգ կառնենք: Օստրանը փառաբանված է իր կենարար կլիմայով, իսկ ուժ հավաքելը մեզ չի խանգարի: Այն երկիրը, ու երբևէ ապրել են էլֆերը, արտակարգ կենարար է մնում, չարությամբ այն թունավորելը հեշտ չէ:

— Ճիշտ է,— Գանդալֆին պաշտպանեց Լեգոլասը: — Բայց մեզ, անտառի պապենական բնակիչներիս համար, Օստրանի էլֆերը տարօրինակ ժողովուրդ էին, և արդեն այստեղ նրանց հետքերը չեմ զգում. ծառերն ու խոտերը մեռյալ լռություն են պահպանում: Չնայած... — Լեգոլասը վայրկենապես քարացավ: — Այո, քարերը դեռ հիշում են նրանց մասին: Լսո՞ւմ եք... Քարերի բողոքը, լսո՞ւմ եք... «Նրանք մեզ տաշեցին, հավետ պահպանեցին, մեզ շունչ տվեցին ու առմիշտ գնացին»: Նրանք առհավետ գնացին,— ասաց Լեգոլասը: — Վաղուց գտել են Հավերժ Նավահանգիստը:

Բայց ճամփորդները միայն քամու աղմուկն էին լսում:

Փշարմավի թփերով ծածկված հովտում Պահապանները փոքրիկ խարույկ վառեցին, և այս անգամ նախաճաշ-ընթրիքն այնքան էլ աղքատիկ, տաղտկալի ու անհամ չթվաց: Նրանք չէին շտապում պառկել, որովհետև ամբողջ օրը հանգստանալու էին և մի երկար գիշեր անվրդով քնելու էին, իսկ հետո մի խաղաղ ցերեկ էին վայելելու: Միայն Արագորնն իրեն չէր գտնում: Ուտելուց հետո բարձրացավ բլրի գագաթը, երկար նայեց հեռավոր լեռների կողմը ու շատ զգուշությամբ ինչ-որ բանի ականջ դրեց: Հետո իջնելով հովիտ, վարանումով նայեց ճամփորդներին, ասես զարմանալով նրանց ուրախության ու անհոգության վրա:

— Ի՞նչ է պատահել, Պանդուխտ,— հարցրեց նրան Մերին,— մի՞թե ինչ-որ բանի պակաս ես զգում: Գուցե արևելյան քամո՞ւն ես կարոտել:

— Առայժմ դեռ ոչ,— քմծիծաղեց Արագորնը: — Բայց ինչ-որ բան ինձ իսկապես չի գոհացնում: Ես Օստրանում եղել եմ և՛ ամռանը, և՛ ձմռանը: Այստեղ որսորդներ չկան, որովհետև բնակիչներ չկան: Դրա համար էլ այստեղ միշտ շատ թռչուններ և զանազան մանր գազանիկներ են եղել: Իսկ հիմա այս ամբողջ երկիրն ամայացել է: Ես զգում եմ, որ շուրջը՝ շատ մեծ տարածության վրա ոչ մի կենդանի արարած չկա: Եվ շատ կուզենայի հասկանալ, թե ինչու:

— Դա իրոք որ այնքան էլ հասկանալի չէ,— համաձայնեց Գանդալֆը: — Բայց հետո ավելացրեց: — Իսկ գուցե մենք խրտնեցրե՞լ ենք կենդանիներին:

— Մենք հո նրանց չե՞նք որսում,— առարկեց Արագորնը: — Եվ ես միշտ Օստրանում ինձ հանգիստ եմ զգացել, իսկ հիմա ինչ-որ տագնապ եմ ապրում:

— Ուրեմն մեզ հարկավոր է զգոն լինել,— իսկույն լրջանալով, նկատեց Գանդալֆը: — Եթե քեզ հետ ճամփորդում է հետքագետը, այն էլ ոչ թե պարզապես հետքագետը, այլ Արագորնն ինքը, ուրեմն պետք է հավատալ նրա զգացողությանը: Կամաց, բարեկամներ,— ասաց հոբիթներին: — Եվ հենց հիմա ժամապահներ նշանակենք:

Այդ օրն առաջին ժամապահը Սամն էր: Բոլորը հանգիստ քնեցին, բայց Արագորնը, ըստ երևույթին, միտք չուներ քնելու: Հենց որ ճամփորդների խոսակցությունները դադարեցին, ծանր, տագնապալի լռություն իջավ, որը նույնիսկ Սամը զգաց: Պարզ լսվում էր քնածների շնչառությունը, իսկ երբ պոնին ոտքը շարժեց, զարմանալի բարձր թխկոց լսվեց: Բավական էր Սամը մի քիչ շարժվեր և լսում էր սեփական հոդերի ճտճոցը: Երկնքում ոչ մի հատիկ ամպ չկար. արևը դանդաղ լողում էր դեպի վեր. մեռյալ լռությունը խորանում էր ու կայունանում: Հետո հարավում, անամպ երկնքում ինչ-որ մութ կետ հայտնվեց, փոքրիկ սև ամպի նման: Քամի չկար, բայց կետը մոտենում էր:

— Դա ի՞նչ է, կարծես ամպի նման չէ,— շշունջով Արագորնին ասաց Սամը: Արագորնն առանց պատասխանելու նայում էր երկնքին. կետը մոտենում էր, արագ մեծանում և շուտով առանձին մասերի բաժանվեց:

— Ախր դրանք թռչունն՞ր են,— բացականչեց Սամը:

Թռչունները թռչում էին ցածր, ու ոչ թե ուղիղ առաջ, այլ լայն զիգզագներ գծելով, ասես ինչ-որ բան էին փնտրում գետնին:

— Պառկի՛ր և լռի՛ր,— շշնջաց Արագորնը՝ Սամին թփի տակ քաշելով, որովհետև մի քանի հարյուր թռչուն հանկարծ առանձնացան հիմնական երամից ու սրընթաց թռան դեպի այն հովիտը, ուր ճամփորդները տեղավորվել էին հանգստանալու: Թռչունները ագռավների էին նման, բայց լրիվ սև էին ու շատ խոշոր: Երբ սուրում էին հովտի վրայով, նրանց ստվերը վայրկենապես ծածկեց արևը և լռությունը ճեղքեց բարձրահունչ կռկռոցը, որն իսկույն էլ խլացավ թևերի բախյունից:

Հենց թռչուններն աչքից ծածկվեցին, Արագորնը վեր կացավ ու արթնացրեց Գանդալֆին:

— Արևմտյան հարթավայրերում,— մռայլ ասաց նա,— թափառում են սև ագռավների երամները, և դրանցից մեկը հենց նոր անցավ մեր գլխավերևով: Օստրանում սև ագռավներ չեն ապրում, դրանց բները Անտերունչ հարթավայրում են: Չգիտեմ, ինչի համար բարեհաճեցին այստեղ, հնարավոր է, որ միայն սնունդ որոնելու, բայց, իմ կարծիքով, Թշնամին է նրանց այստեղ ուղարկել՝ լրտեսելու նպատակով: Իսկ երկնքում, էլ ավելի բարձրում, գիշակերներ են թռչում, դրանք արդեն հաստատ Սաուրոնին են ծառայում: Ինձ թվում է, պետք է հեռանանք այստեղից, իսկույնևեթ՝ Օստրանին հետևում են:

— Բայց այդ դեպքում,— արձագանքեց Գանդալֆը,— լրտեսները Բոսոր Դարպասն էլ են հսկում, իսկ դա նշանակում է լեռնանցք բարձրանալ չի կարելի: Հետաքրքիր է, ինչպե՞ս ենք մտնելու Սևագետք: Լավ, այդ մասին հետո կմտածենք: Հիմա գլխավորը Մշուշապատ հասնելն է: Դու ճիշտ ես, մենք հարկադրված ենք այսօր հեռանալ այստեղից, այնպես որ հանգստանալ չենք կարող:

— Մեր բախտից էր,— ասաց Արագորնը,— որ մեր փոքրիկ խարույկը մինչև ագռավների գալը հանգած էր: Խարույկից երկար ժամանակ պետք է հրաժարվել:

— Ա՛յ քեզ պատիժ,— բողոքեց Փինը՝ երեկոյան արթնանալով ու Սամից իմանալով, որ չեն գիշերելու, իսկ խարույկ վառելն էլ երկար ժամանակով արգելված է: — Ինչ-որ հիմար ագռավների պատճառով հիմա քուններս առնել էլ չենք կարող: Իսկ ես տաք ընթրիք էի երազում...

— Ինչքան ուզում ես երազիր,— խորհուրդ տվեց Գանդալֆը: — Իսկ ես, օրինակ, երազում եմ տաքանալ ու հանգիստ ծխամորճ ծխել: Բայց գոնե մի բան կարող եմ հաստատ խոստանալ՝ հարավում բոլորս անպայման կտաքանանք:

— Վախենում եմ մեզ համար նույնիսկ շոգ կլինի, ո՛չ միայն տաք: Էհ թող լինի, միայն թե հասնենք Ճակատագրի Լեռանն ու հետ դառնանք տուն: Ես որ ես եմ, մտածել եմ, թե Բոսոր Կոտոշը Ճակատագրի Լեռն է որ կա, մինչև Ջիմլին իր լեզվով տվեց անունը՝ Բարիզա... Բիրազի... Թշնամու լեզուն անգամ չի պտտվի ասի... Կարճ ասած, մենք դեռ չենք հասել: —

Սամը աշխարհագրական քարտեզներին չէր հավատում և այս կողմերում բոլոր տարածությունները նրան այնքան վիթխարի էին թվում, որ խճճվել էր:

Ցերեկը Պահապանները թաքնվում էին լեռնագոգում: Մի քանի անգամ նրանք տեսան ագռավներին, բայց վերջիններս կարծես թե նրանց չէին նկատում և երեկոյան չքվեցին: Մի քիչ սպասելով, Պահապաններն ընթրեցին, ճամբարը հավաքեցին ու շարժվեցին հարավ, այնտեղ, ուր մայր մտնող արևի ճառագայթների տակ բոսոր կայծկլտում էր Բարազինբարի գագաթը: Աղջամուղջն արդեն պարուրում էր սարահարթը, և մթնող երկնակամարում մեկը մյուսի հետևից վառվում էին գիշերային աստղերը:

Արագորնը նրանց դուրս բերեց լեռնային արահետ: Ավելի ճիշտ, դա ոչ թե արահետ էր, այլ Օստրանը լեռնանցքի հետ կապող հինավուրց, վաղուց լքված ուղին: Սարերի թիկունքից դուրս լողաց լիալուսինը, և նրա երկնագույն արծաթափայլ լույսի տակ երկու կողմերի վրա գտնվող ժայռերը սև ստվերներ էին գցում գետնին: Ֆրոդոն ավելի ուշադիր նայեց ժայռերին ու տեսավ, որ դրանք ոչ թե ժայռեր են, այլ քարից վարպետորեն կերտված ֆիգուրներ, որոնց արդեն քայքայել էր անողոք ժամանակը: Ձոկատն ամբողջ գիշեր շարժվում էր դեպի հարավ: Լուսադեմին, վաղորդյան մոխրագույն մթնշաղում Ֆրոդոն հանկարծ նայեց երկինք ու նկատեց, ավելի ճիշտ միայն աղոտ զգաց, որ իրենց վերևով անձայն ստվեր անցավ՝ երկնակամարից ընդամենը մի ակնթարթ ջնջելով աստղերի ուրախ կայծերը:

— Դու հիմա երկնքում ոչինչ չնկատեցի՞ր,— հազիվ լսելի հարցրեց նա Արագորնի հետ միասին Ձոկատի առջևից քայլող Գանդալֆին:

— Նկատելը՝ չնկատեցի, բայց զգացի,— ասաց Գանդալֆը: — Մի վայրկյան ասես ավելի մթնեց: Երևի մեր գլխավերևով ամպ անցավ:

— Չափից ավելի արագ անցավ,— ոչ ոքի չդիմելով քրթմնջաց Արագորնը: — Հատկապես այսպիսի անքամի եղանակի համար...

Գիշերն այլևս ոչինչ չպատահեց: Լուսաբացը հստակ էր ու արևոտ, բայց՝ սառը: Քամին նորից արևելքից փչեց:

Եվս երկու գիշեր Ձոկատը քայլեց դեպի Մշուշապատ. ոլոր-մոլոր ճանապարհը մեկ մագլցում էր վեր, մերթ գլորվում լեռնագոգ, բայց նկատելի էր, որ աստիճանաբար բարձրանում է ավելի ու ավելի վեր, և երբ վերջացավ երկրորդ գիշերը, Ձոկատն ընդհուպ մոտեցավ Բարազինբարին, կամ, ինչպես էլֆերն են ասում՝ Քարադիրասին, ձյունածածկ կատարով ու արևակարմիր քարքարոտ լանջերով հսկայական գագաթին, որի վրա ո՛չ անտառներ կային, ո՛չ մարգագետիններ:

Սկսվում էր ամպոտ ու պաղ լուսաբացը, մոխրագույն ամպերը ծածկում էին արևը, քամին փչում էր հյուսիս-արևելքից: Գանդալֆը դեմքով շրջվեց դեպի քամին, օդը հոտոտեց ու ասաց Արագորնին.

— Ձմեռը հասնում է մեր հետևից: Հյուսիսում լեռները համարյա մինչև ստորոտները ծածկված են ձյունով: Վաղը չէ մյուս օրը մենք կբարձրանանք դեպի Բոսոր Դարպասը, և այնտեղ հնարավոր է, որ մեզ նկատեն լրտեսները, բայց ամենավտանգավոր ու խարդախ թշնամին, թերևս, եղանակն է լինելու: Ուրեմն դու ինչ ճանապարհ կընտրեիր, Արագորն:

Ֆրոդոն սարսափահար որսալով այս խոսքերը, հասկացավ, որ վաղուց սկսված խոսակցության շարունակությունն է լսում:

— Ես կարծում եմ, դու ինձանից լավ գիտես, որ մութ աշխարհ տանող բոլոր ճանապարհներն էլ վտանգավոր են,— պատասխանեց Արագորնը: — Բայց մենք պետք է հաղթահարենք այդ ճանապարհը, նշանակում է՝ պետք է հասնենք մինչև Անդուին: Հարավում Մշուշապատն անցնել հնարավոր չէ՝ մինչև դուրս չգաս Մուստանգրիմի հարթավայրը: Դու ինքդ պատմեցիր Սարումանի դավաճանության մասին: Մենք չգիտենք, արդյոք Մուստանգրիմը չի՞ պարտվել: Ոչ, մուստանգրիմցիների մոտ գնալ չի կարելի, դրա համար ստիպված ենք լինելու գրոհել լեռնանցքը:

— Մոռացել ես,— նկատեց Գանդալֆը,— որ կա ևս մեկ ճանապարհ, չփորձված ու մութ, բայց, իմ կարծիքով, անցանելի. այն ճանապարհը, որի մասին արդեն խոսել ենք:

— Եվ այլևս այդ մասին խոսել չեմ ուզում,— կտրեց Արագորնը: Բայց, լռելուց հետո, ավելացրեց. — Եվ չեմ խոսի... մինչև վերջնականապես չհամոզվեմ, որ մյուս ճանապարհները բացարձակապես անանցանելի են:

— Մենք հենց այսօր պետք է որոշենք, թե ուր ենք գնում,— հիշեցրեց Գանդալֆն Արագորնին:

— Լավ, համաձայն եմ,— ասաց Արագորնը: — Բեր այդ բոլորը մեկ անգամ էլ քննենք, երբ դուրս գալու ժամանակը գա:

Երեկոյան, մինչ նրանց ուղեկիցներն ընթրում էին, Արագորնն ու Գանդալֆը մի կողմ քաշվեցին և սկսեցին շշուկով զրուցել, խորհրդակցել ինչ-որ բանի մասին՝ երբեմն-երբեմն Բոսոր Կոտոշի զանգվածին նայելով: Նրա լանջերը լերկ էին ու մռայլ, իսկ գագաթները կորչում էին ամպերի մեջ: Շատ անբարեհամբույր տեսք ուներ լեռնանցքը... Սակայն երբ Արագորնն ու Գանդալֆը վերադառնալով հայտարարեցին, որ այս գիշեր հարկավոր է հաղթահարել այն, Ֆրոդոն ուրախացավ: Իհարկե նա չգիտեր, թե ինչ «չփորձված ու մութ» ճանապարհի մասին էր առավոտյան ասում Գանդալֆը Արագորնին, բայց, չգիտես ինչու, նախապես դրանից վախենում էր:

— Կարող է պատահել, որ Բոսոր Դարպասը հսկում են Թշնամու լրտեսները,— ասաց Գանդալֆը: — Եղանակն էլ ինձ լուրջ տագնապ է ներշնչում: Մենք լեռնանցքում կարող ենք փոթորկի մեջ ընկնել: Ստիպված ենք շատ արագ քայլել: Նույնիսկ այդ դեպքում տեղ կհասնենք երկու գիշերվա ընթացքում: Այսօր երեկոյան մութը շուտ կընկնի, դրա համար էլ ճամբարը հավաքելու ժամանակն է, հազիվհազ հասցնենք...

— Թույլ տվեք ես էլ որոշ բան ավելացնեմ,— ասաց սովորաբար լռակյաց Բորոմիրը: — Ես մեծացել եմ Սպիտակ Լեռներից ոչ հեռու և մեկ անգամ չէ, որ եղել եմ մեծ բարձրություններում: Բարձր լեռներում ամառն էլ է ցուրտ, իսկ հիմա մեզ այնտեղ ճքճքան սառնամանք է սպասում: Առանց խարույկի լեռնանցքի մոտ ցրտից կմեռնենք, չէ՞ որ մենք, որքան ես հասկացա, այնտեղ օր պիտի անցկացնենք: Ուրեմն, քանի ներքևում ենք, ավելի շատ չոր խռիվ հավաքենք, որ ամեն մեկս իր հետ մի կապ ցախ վերցնի:

— Իսկ Բիլը երկուսը կվերցնի,— ասաց Սամը: — Դու մեզ հուսախաբ չես անի, ճի՞շտ է, բարեկամս,— հարցրեց նա Բիլին: Պոնին լռեց, բայց բավական տխուր նայեց Սամին:

— Վատ միտք չէ,— համաձայնեց Գանդալֆը,— սակայն պետք է հաստատ հիշենք, որ խարույկ վառում ենք ծայրահեղ անհրաժեշտության դեպքում, երբ իսկապես պետք է ընտրություն կատարել՝ կործանվե՞լ, թե կրակի մոտ տաքանալ:

Սկզբում Ջոկատն արագ էր առաջ ընթանում, բայց մի քանի լիգ հետո լանջը զառիկող դարձավ, իսկ ավերված ուղին վերածվեց ժայռերի սուր կտորներով ծածկված արահետի: Երկինքն ամբողջությամբ ծածկվեց ամպերով, և ճամփորդները պարուրվեցին սև խավարով: Դեմքերն այրում էր սառցի պես կտրող պաղ քամին: Կեսգիշերին հազիվ նկատելի զիգզագաձև արահետը ճամփորդներին դուրս բերեց մի նեղ քիվի վրա. նրանցից աջ, քամու պտույտից զգացվում էր խոր անդունդի դատարկությունը, իսկ ձախից խոյանում էր զառիկող պատը: Նրանք դեռ ճանապարհի քառորդն էլ չէին հաղթահարել:

Շուտով Ֆրոդոն դեմքին զգաց նոսր փաթիլների սառը ծակոցները, իսկ հետո խիտ փաթիլների տարափ սկսվեց: Հանկարծակի թխակապույտ-սպիտակ գույն ստացած մթությունը դարձավ նաև անթափանցելի՝ Արագորնի և Գանդալֆի կռացած կերպարանքները, որոնց Ֆրոդոն ձեռքը մեկներ՝ կհասներ կորան պղտոր մառախուղի մեջ:

— Ախ, իսկի դուրս չի գալիս էս խառնաշփոթությունը,— թիկունքում ֆսֆսում էր Սամը: — Ես սիրում եմ ձնահողմին նայել պատուհանից, առավոտյան, տաք վերմակի տակ պառկած: Թող գոնե Հոբիթստանում լիներ, ա՛յ թե կուրախանային հոբիթները: Իսկ էստեղ մեզ իսկի պետք չի:

Հոբիթստանում ձյան ուժեղ տեղումներ լինում են հազվադեպ, թերևս հյուսիսային սահմանի մոտ, և եթե մի քիչ էլ ձյուն է գալիս, հոբիթները մանուկների պես ուրախանում են: Կենդանի հոբիթներից ոչ ոք (բացի Բիլբոյից) 1311 թվականի հազվագյուտ դաժան ձմեռը չի տեսել, երբ ձյան տակ թաղված Հոբիթստանի վրա հարձակվեցին սպիտակ գայլերի ոհմակները, որոնք այնտեղ էին անցել Բրենդիդուիմ սառած գետի վրայով:

Գանդալֆը կանգ առավ: Ձյան հաստ շերտը ծածկել էր նրա ուսերն ու թիկնոցի գլխանոցը: Արահետի վրա ձյունն արդեն հասնում էր մինչև սրունքները:

— Հենց սրանից էլ ես վախենում էի,— ասաց նա: — Ճիշտ է, ավելի քիչ, քան մնացած բաներից: Հյուսիսցիները ձնահողմերին սովոր են: Բայց հարավային լեռներում ձնահողմերը հազվադեպ երևույթ են, այն էլ շատ բարձր տեղերում: Բայց մենք դեռ չենք հասցրել այդքան բարձրանալ:

— Ուրեմն, կարող է պատահել սա Թշնամու արա՞ծն է,— հարցրեց նրանց մոտեցած Բորոմիրը: — Մեզ մոտ խոսակցություններ են գնում, որ Սև լեռներում նա նույնիսկ եղանակն է տնօրինում: Ճիշտ է, այդ լեռները նրան են պատկանում, իսկ Մշուշապատ Լեռները Մորդորից հեռու են: Բայց Թշնամու հզորությունը գնալով աճում է:

— Այ թե երկար ձեռքեր է աճեցրել, եթե ընդունակ է ձնահողմը հյուսիսային երկրներից նետել հարավային,— ասաց Ջիմլին:

— Ավելի երկար չի էլ լինում,— փնթփնթաց Գանդալֆը:

Մինչ նրանք կանգնած էին, քամին հանդարտվեց, իսկ մի քանի րոպե հետո ձյունն էլ դադարեց: Այդ ժամանակ նրանք նորից առաջ շարժվեցին: Սակայն լռությունը խաբուսիկ դուրս եկավ: Կես քայլ էլ չէին հասցրել անել, երբ նրանց դեմքին փչեց ծակող քամին, հետո նորից հողմը սկսվեց, ձյունը թափվում էր հսկայական փաթիլներով, և շուտով մի կատաղի բուք գալարվեց: Այժմ արդեն հզոր Բորոմիրն էլ էր դժվարությամբ քայլում: Հոբիթները քարշ էին գալիս երթի վերջից, ու բոլորի համար պարզ էր, որ եթե բուքը շարունակվի, նրանք քայլել չեն կարողանա: Ֆրոդոն հազիվ էր ոտքերը փոխում: Սամն ախուվախ անելով, ոտերը քարշ էր տալիս նրանց հետևից: Փինն ու Մերին լուռ շարժվում էին: Ջիմլին էլ էր ուժասպառվել, թեպետ թզուկները հռչակված են իրենց դիմացկունությամբ:

Հանկարծ Ջոկատը տեղում քարացավ, կարծես ճանապարհորդները պայմանավորվել էին կանգ առնել, թեև ոչ ոք ոչ մի բառ չէր ասել: Շուրջը տարօրինակ ձայներ էին հնչում: Հնարավոր է, որ այդ քամին էր ոռնում, բայց նրա թնդուն բազմաձայն վայնասունի մեջ պարզ լսվում էին չար սպառնալիքներ, մոլեգին քրքիջ ու խռպոտ կաղկանձ... Ոչ, քամին չէր կարող այդպես կաղկանձել: Հանկարծ վերևից մի քար գլորվեց, հետո ևս մեկը, հետո էլի... Ճամփորդները սեղմվեցին զառիկող պատին, քարերը դրիսկոցով ընկնում էին քիվին, թռչկոտում ու ընկնում սև անդունդը, ժամանակ առ ժամանակ ուժեղ դղրդյուն էր լսվում և վերևից գահավիժում էին հսկայական ժայռաբեկորներ:

— Հարկավոր է վերադառնալ,— ասաց Բորոմիրը: — Ես շատ եմ ընկել լեռնային բքի մեջ և գիտեմ, թե կիրճերում ինչպես է ոռնում քամին... Բայց այժմ մենք բոլորովին էլ քամու ձայն չենք լսում... Դա արդեն թշնամական ուժերի ձայներն են... ու քարերն էլ այստեղ պատահաբար չսկսեցին թափվել:

— Կարծում եմ, ոռնոցը քամունն է,— նկատեց Արագորնը,— բայց Բորոմիրն իրավացի է. շարունակել իսկապես չի կարելի: Իմաստունների Խորհուրդը թշնամիներ շատ ունի, չնայած նրանցից ոչ բոլորն են Սաուրոնի դաշնակիցները:

— Էլֆերը Քարադիրասը Արնածարավ են անվանել Թշնամու հայտնվելուց դեռ շատ առաջ,— մրթմրթաց Ջիմլին:

— Կարևոր չէ, ով է մեզ համար խոչնդոտ ստեղծում,— ասաց Գանդալֆը: — Կարևորն այն է, որ խոչընդոտն այժմ անհաղթահարելի է:

— Ուրեմն, ի՞նչ ենք անելու,— ողբաձայն հարցրեց Փինը: Նա կանգնած էր սառը պատին հենված ու ամբողջ մարմնով դողում էր:

— Տեղում սպասել եղանակի փոխվելուն կամ վերադառնալ,— պատասխանեց Գանդալֆը: — Առաջ գնալն անիմաստ է ու վտանգավոր: Քիչ բարձր, եթե ճիշտ եմ հիշում, արահետը դուրս է գալիս բաց լանջ: այնտեղ քամուց ու քարերից կամ... որևէ նոր հարձակումից չես թաքնվի:

— Վերադառնալն էլ է անիմաստ,— ավելացրեց Արագորնը: — Սարի ստորոտից մինչև այս պատը ոչ մի թաքստոց չկա:

— Թաքստոցի՜ս նայեք,— մրթմրթաց Սամը: Բայց Ֆրոդոյից բացի ոչ ոք չլսեց:

Պահապանները կանգնած էին պատին սեղմված: Հարավային լանջը խրված քիվը զառիկող վեր բարձրանալով, ձգվում էր հարավ-արևելքից հյուսիս-արևմուտք և առջևում կտրուկ շուռ էր գալիս հարավ, այնպես որ պատը ճամփորդներին պաշտպանում էր հյուսիս-արևելյան սուր քամուց, բայց խելագար փոթորկվող սպիտակավուն բուքը (ձյունն ավելի ու ավելի առատ էր թափվում) մտրակում էր նրանց վերևից ու ներքևից:

Նրանք միմյանց էին հպվել ուսերով, իսկ Բիլ պոնին կանգնած էր հոբիթների առջև՝ պատնեշելով նրանց ձյան մրրիկից, բայց նրա շուրջն արդեն ձնաթումբ էր կուտակվել, ու եթե հոբիթների բարձրահասակ ուղեկիցները չլինեին, շատ արագ ձյունը նրանց գլխովին կծածկեր:

Ֆրոդոյին պարուրեց պաղ նինջը, հետո նա տաքացավ ձնե որջում, և քամու ոռնոցն աստիճանաբար խլացավ՝ փոխվելով բուխարու բոցի գվվոցի, իսկ հետո բուխարու մոտ հայտնվեց Բիլբոն, բայց նրա ձայնի մեջ պարսավանք հնչեց. *«Հասկանալ չեմ կարող, ինչո՞ւ վերադարձար... Ինչո՞ւ ընդհատեցիր կարևոր արշավը մի ամենասովորական ձնահողմի պատճառով»:*

«Ես ուզում էի հանգստանալ»,— շշնջաց Ֆրոդոն, բայց Բիլբոն արագորեն բուխարին հանգցնելով, զարմիկին դուրս քշեց տաք բազկաթոռից, և սենյակ սողոսկեց սառնաշունչ մեգը...

— ... Լսո՞ւմ ես, Գանդալֆ, նրանք ձյան տակ կմնան,— խոսում էր Բիլբոն Բորոմիրի ձայնով, և Ֆրոդոն զգաց, որ ինքը հանված է ձնե տաքուկ որջից ու կախված է օդում: Ու վերջնականապես արթնացավ: — Նրանք կքնեն ու ցրտահարությունից կմեռնեն,— Ֆրոդոյին իջեցնելով, ասաց Բորոմիրը: — Հարկավոր է անհապաղ որևէ միջոց ձեռք առնել:

— Իրավացի ես,— մտահոգ պատասխանեց Գանդալֆը և գրպանից հանեց կաշվե տափաշիշը: — Թող յուրաքանչյուրը մի կում խմի,— ասաց նա՝ տափաշիշը Բորոմիրին տալով: — Սա արտակարգ կենարար ըմպելիք է՝ զվարթեղ, Իմլադրիսի թանկագին պարգևը:

Բուրավետ, քիչ տտիպ հեղուկի կումը ոչ միայն տաքացրեց փայտացած Ֆրոդոյին, այլև վանեց նրան պատած վախը: Մնացած Պահապանները նույնպես աշխուժացան: Սակայն առաջվա պես մոլեգնում էր քամին, իսկ բորանը կարծես թե նույնիսկ ավելի էր ուժեղացել:

— Արդյոք խարույկ չվառե՞նք,— հարցրեց Բորոմիրը: — Երևում է, մենք արդեն երկընտրանքի առաջ ենք կանգնած՝ կամ կործանվել, կամ խարույկի մոտ տաքանալ:

— Ինչ կա որ, կարելի է,— պատասխանեց Գանդալֆը: — Եթե Սաուրոնի լրտեսներից այստեղ կան, ուրեմն միևնույնն է մեզ արդեն նկատել են:

Պահապանները և փայտ ունեին և կպչան (նրանք կատարել էին Բորոմիրի խորհուրդը), բայց ո՛չ էլֆը, ո՛չ թզուկը, որ դրա վարպետն էին, չկարողացան այնպիսի կայծ առաջացնել, որ վառեր խոնավացած ցախը: Գանդալֆն ստիպված եղավ գործի անցնել: Նա իր գավազանը դրեց ցախի կույտի վրա և հրամայեց. **նուր են ադրիատ ամմին**: Կանաչ-կապույտ կրակի խուրձը վառ լուսավորեց փոթորկալի մութը, ցախը բռնվեց ու արագ վառվեց: Այժմ կատաղի քամին միայն ավելի էր ուժեղացնում խարույկը:

— Եթե լեռնանցքը հսկում են լրտեսները, ապա ինձ նրանք հաստատ տեսել են,— մռայլ հպարտությամբ նկատեց հրաշագործը: — Ես նրանց ազդանշան տվեցի. «Գանդալֆն այստեղ է», այնպես հասկանալի, որ ոչ ոք չի սխալվի:

Բայց հազիվ թե Պահապանները Գանդալֆին լսեցին: Նրանք երեխաների պես ուրախանում էին կրակով: Այրվող փայտը ուրախ ճարճատում էր, և Պահապանները, ուշադրություն չդարձնելով բքին ու ոտքերի տակ հալվող ձյանը, բոլոր կողմերից շրջապատել էին խարույկը, որպեսզի տաքանան կենարար ջերմությամբ: Նրանց տանջահար, բայց կարմրատակած դեմքերին թռչկոտում էին կրակի ոսկեգույն ցոլքերը, իսկ շուրջը, ասես նրանց բանտարկելով զնդանում, խտանում էր կապտավուն փոթորկածուփ մութը:

Սակայն ցախը շատ արագ վառվեց:

Կրակը հանգչում էր, և մարմրող խարույկի մեջ գցեցին վերջին կապը:

— Ոչինչ, լուսաբացը մոտենում է, գիշերը վերջանում է,— ասաց Արագորնը:

— Գիշերը վերջանում է,— թնփթնփաց Ջիմլին,— այսքան վատ եղանակին լուսաբացն էլ չես նկատի:

Բորոմիրը մի քիչ հեռացավ խարույկից:

— Փոթորիկը կհանդարտվի,— հայտարարեց նա: — Քամին էլ ոնց որ շունչը փչում է:

Ֆրոդոն հոգնած նայում էր խարույկին: Սև մթության միջից ձյան փաթիլներ էին դուրս ճախրում, փայլատակում էին արծաթե աստղիկների պես ու իսկույն էլ կրակի վրա հանգչում, իսկ շուրջն անդադար սուլում էր քամին, ու կուտակվում էին մառախուղի անթափանց քուլաները: Ֆրոդոն քնկոտ փակեց աչքերը, օրորվեց, անջատեց իրար կպած ծանր կոպերն ու հանկարծ նկատեց, որ քամին հանդարտվել է ու ոսկեփայլ ածուխների վրա պտտվում են միայն մի քանի փաթիլ: Նա գլուխը բարձրացրեց ու տեսավ, որ արևելքում սև երկինքը թեթևակի շառագունել է:

Գորշ ամպերի միջից թափանցող արշալույսը տանջահար ճամփորդների առջև բացեց ձյան սավանով ծածկված համր լեռները: Ներքևում երևում էին բարձր ձյունաթմբերի սապատները և դրանց տակ ենթադրվում էր ոլորապտույտ արահետի գոյությունը, բայց ճամփորդներին նոր փոթորիկ սպառնացող ծանր ամպերը հոծ վարագույրով ծածկել էին լեռնանցքի թումբը:

— Բարազինբարը չի հանդարտվել,— խոսեց Ջիմլին: — Եթե մենք համարձակվենք առաջ գնալ, նորից բորանը մեզ վրա կտա: Հարկավոր է վերադառնալ և որքան կարելի է շուտ:

Բոլորը հասկանում էին, որ պետք է վերադառնալ: Բայց ինչպե՞ս: Քիվից մի քանի քայլ այն կողմ արահետի վրա այնպիսի ձնաթմբեր էին բարձրանում, որ հոբիթներն ամբողջ հասակով կթաղվեին դրանց մեջ: Նույնիսկ քիվի վրա, որտեղ կանգնած էին ճամփորդները, ձյան բլուրներ էին բարձրանում, մինչդեռ քիվը քամիներից պատով պաշտպանված էր:

— Գնադալֆը կոլոտիկների համար իր գավազանով ճանապարհ բաց կանի,— ասաց Լեգոլասը: Բորանը Էլֆին բոլորովին չէր անհանգստացնում, և նա ամբողջ ջոկատում միակն էր, որ մինչև առավոտ էլ լավ տրամադրության մեջ էր:

— Կամ Լեգոլասը կթռչի երկինք,— արձագանքեց Գանդալֆը,— կցրի ամպերը, որպեսզի արևը ձյունը հալեցնի Ջոկատի համար: Իմ գավազանը վառարան չէ,— ավելացրեց նա,— իսկ ձյունը փոշիացնել հնարավոր չէ:

— Խելոքը չի կարողացել, ուժեղը հաղթահարել է,— միջամտեց Բորոմիրը: — Մեզ մոտ այդպես են ասում: Երբ բուքն սկսվեց,— շարունակեց գոնդորցին,— մենք շրջանցել էինք ա՛յ այն ժայռը,— նա ցույց տվեց մի ժայռաբեկոր, որը ճամփորդներից ծածկում էր արահետը: — Այստեղից մինչև այնտեղ կես լիգ է, ոչ ավելի: Եվ ահա, եթե մեզնից ամենաուժեղը իր վրա վերցնի այդ դժվարությունը, այնտեղից բոլորս հեշտությամբ կիջնենք:

— Հարկավոր է փորձել,— ասաց Արագորնը: — Գոնե երկուսս մի կերպ կանցնենք կես լիգը:

Արագորնը ջոկատում ամենահաղթանդամն էր, բայց թիկնեղ Բորոմիրն ավելի ամուր էր երևում: Նրանք շարժվեցին՝ Բորոմիրն առջևից: Տեղ-տեղ ձյունը նրա ուսերին էր հասնում, և նա խրվում էր ձյան մեջ ինչպես խոփ կամ շատ հոգնած լողորդ:

Լեգոլասը ժպտալով նայեց մարդկանց, հետո շրջվեց դեպի հրաշագործն ու բացականչեց.

— Թող խելքին և ուժին ճարպկությունն օգնական եղիցի:

Իսկ հետո վարժ քայլեց ձյան վրայով, և Ֆրոդոն նկատեց (ասես առաջին անգամ, չնայած այդ մասին առաջ էլ գիտեր), որ էլֆը ծանր ոտնամաններ չուներ, ինչպիսիք հագցրել էին Պահապաններին Իմլադրիսում, իսկ Լեգոլասի թեթև էլֆական կոշիկները համարյա հետք չէին թողնում ձյան վրա:

— Ցտեսություն,— ուրախ գոռաց Գանդալֆին: — Ես կաշխատեմ ձեզ համար արև բերել... — Նա քայլերն արագացրեց և, ասես պարելով, առաջ անցավ դանդաղ մաքառող մարդկանցից. նրանց ձեռքով արեց, զրնգուն ծիծաղեց ու աչքից ծածկվեց արահետի շրջադարձի հետևում:

Մարդիկ դանդաղ առաջ էին շարժվում, Պահապանները լուռ նայում էին նրանց հետևից, մինչև նրանք էլ անհետացան շրջադարձի հետևում: Բարձունքի մոտ քուլայաձև ամպերը խտանում էին, ներքև էին լողում հատուկենտ փաթիլներ:

Անցավ երևի մոտավորապես մեկ ժամ, հոբիթներին թվաց, թե ավելի շատ, և ահա արահետի վրա երևաց էլֆը: Հետո Պահապանները տեսան դանդաղ, դժվարությամբ սարը բարձրացող մարդկանց:

— Ինձ չհաջողվեց արևին գայթակղել և այստեղ բերել,— հոբիթներին աչքով անելով, ասաց Լեգոլասը: — Երանություն է սփռում հարավային հողերին և նրան, ինչպես հասկացա, բոլորովին չի անհանգստացնում այս սարի վրա գտնվող մի քանի ամպիկը: Դրա փոխարեն լավ լուրեր եմ բերել նրանց, ովքեր դժվար են քայլում: Բորոմիրի ասած ժայռի հետևում քամին բավական մեծ ձնակույտ է լցրել, և մեր ռազմիկները՝ ուժեղների ցեղից, պատրաստվում էին խորտակվել այդ պատնեշի առջև, որովհետև արահետն էլ կիրճով է անցնում, իսկ կիրճի ելքը փակված է ձնաթմբով: Դե ես ստիպված եղա բացատրել ուժեղներին, որ նրանք վիատվել են տասը քայլից ոչ լայն ձնե ամրոցի առջև և որ դրա հետևում մեր արահետի վրա մինչև հոբիթների կոճերը հասնող բարձրությամբ ձյուն է նստած:

— Ես այդպես էլ կարծում էի,— փնթփնթաց Ջիմլին: — Իհարկե, Բարազինբարի չար կամքն է այդ անիծյալ բուք ու բորանը քշել մեզ վրա: Բարազինբարը թզուկներին ու էլֆերին չի խղճում...

— Բարեբախտաբար, Բարազինբարը հավանաբար մոռացել է, որ Պահապանների Ջոկատին հարում են նաև մարդիկ,— թզուկին ընդհատեց մոտեցող գոնդորցին: — Առանց պարծենկոտության կասեմ, ոչ թույլ մարդիկ... Մենք հաղթահարեցինք ձնակույտը, ձնաթմբի մեջ նեղ կածան բացեցինք՝ նրանց համար, ովքեր էլֆերի պես թևածել չգիտեն:

— Բայց ախր մենք ինչպե՞ս ենք այնտեղ հասնելու,— Բորոմիրին հարցրեց հուզված Փինը՝ արտահայտելով բոլոր հոբիթներին համակած տագնապալի հարցը:

— Մի՛ անհանգստացիր,— պատասխանեց նրան Բորոմիրը: — Ես հոգնել եմ, բայց դեռ ուժ ունեմ, Արագորնը՝ նույնպես: Մենք ձեզ կտանենք ձնակույտերի մոտ: Եվ դա կսկսենք, պատվելի Փերեգրին, ձեզնից:

Փինը մագլցեց Բորոմիրի մեջքին:

— Պի՛նդ բռնիր,— ասաց Բորոմիրը,— իմ ձեռքերը պետք է ազատ լինեն: — Նա արահետով ներքև իջավ: Նրա հետևից իջավ Արագորնը՝ Մերիին շալակած:

Ձյան մեջ տրորված արահետին նայելով, Փինը հիանում էր մարդկանց ուժով: Նույնիսկ հիմա, հոբիթին շալակած, Բորոմիրը ձեռքերով մեծացնում էր անցումը, որպեսզի մյուսների համար հեշտ լինի: Շուտով նրանք հասան վիթխարի ձնաթմբին, որ մարդու հասակից երկու անգամ բարձր էր և անջրպետում էր նեղ կիրճը: Ձնաթմբի գագաթը սուր էր ու պինդ, ու ձնաթումբն էլ մի ամբողջական զանգված էր թվում՝ մեջտեղից նեղ կածանով հատված: Ձնաթմբի հետևում Մերին, Փինը և Լեգոլասը մնացին մյուսներին սպասելու, իսկ մարդիկ նորից գնացին վերև:

Բորոմիրը կես ժամ հետո վերադարձավ՝ Սամին շալակած, նրանց հետևից քայլում էր Գանդալֆը՝ պոնիի սանձը բռնած, որի վրա նստած էր Ջիմլին, իսկ երթը փակում էր Ֆրոդոյին շալակած Արագորնը:

Հազիվ էր Արագորնը ձնաթումբն անցել, երբ ճամփորդներին խլացրեց որոտալի դղրդյունը և վերևից քարեր թափվեցին՝ ձյան փոշու մրրիկ առաջացնելով, հետո, երբ սպիտակ վարագույրը ցրվեց, Պահապանները տեսան, որ ձնաթմբի միջի իրենց անցումը քարերով խցանվել է:

— Բավական է, Բարազինբար, տեսնում ես՝ գնում ենք, հանգիստ թող մեզ,— աղաչեց Ջիմլին:

Բայց լեռը, թվում էր, ինքն էլ էր հանգստացել, ասես բավարարված եկվորների նահանջով. սկսվող քարավիժումը դադարեց, իսկ լեռնանցքը պատած ամպերը ցրվեցին: Ձյան շերտը ոտքերի տակ գնալով բարակում էր, և շուտով զառիվեր լանջով իջնող ճամփորդները դուրս եկան նույն այն հարթակը, որտեղ երեկ նրանց վրա թափվեցին առաջին փաթիլները:

Առավոտն արդեն դեպի կեսօր էր թեքվում: Հարթակից, որտեղ կանգնած էին հոգնած ճամփորդները, բացվում էին լայնարձակ հեռաստաններ՝ բլուրներ, լճակներ, ծուռումուռ ձորակներ, փշարմավի թփուտներ, անտառակների կղզյակներ... Իսկ ներքևում երևում էր խոր լեռնագոգը, որտեղ նրանք հանգստանում էին նախօրեին:

Ֆրոդոյի ոտքերն անասելի ցավում էին, նա մինչև ոսկորները սառել էր և ուտել էր ուզում, իսկ երբ հիշեց, որ ներքև տանող ճանապարհը տևելու է ևս կես օր, մի վայրկյան աչքերի առաջ մթնեց: Նա փակեց աչքերը, իսկ երբ բացեց՝ զարմանքով նկատեց, որ ինչ-որ սև կետեր է տեսնում: Նա աչքերը տրորեց, կետերը չվերացան. դրանք պտտվում էին թափանցիկ օդում, և Ֆրոդոն որոշեց, որ ինքն սկսել է կուրանալ...

— Նորից Թռչունները,— ասաց Արագորնը, որ նույնպես տեսել էր սև կետերը:

— Այժմ արդեն ոչինչ անել չես կարող,— թռչուններին նայելով, արձագանքեց Գանդալֆը: — Բարեկամնե՞ր են արդյոք, թե Թշնամու լրտեսներ, թե պարզապես անվնաս հավքեր, միևնույնն է, մենք ստիպված ենք իջնել՝ Քարադիրասը գիշերային հյուրեր չի սիրում:

Ճամփորդները սայթաքելով սկսեցին իջնել՝ նրանց հետևից փչում էր սառնաշունչ քամին: Պարզվեց, որ Բոսոր Դարպասը փակ է:

Գլուխ չորրորդ. Սև Անդունդ

Միայն երեկոյան կողմ, ամպամած աղջամուղջին, հոգնած ճամփորդները կանգ առան հանգստի: Բարազինբարի բոսոր զանգվածը ցուրտ էր արտաշնչում ներքև՝ սառը քամի էր փչում: Գանդալֆն իր տափաշիշը փոխանցեց բոլորին, և Պահապանները զվարթեղ ըմպեցին: Ընթրիքից հետո խորհուրդ գումարեցին:

— Այս գիշեր կհանգստանանք,— հայտարարեց Գանդալֆը,— որովհետև լեռնանցքի գրոհը մեզանից յուրաքանչյուրի վրա թանկ նստեց...

— Իսկ հետ ո՞ւր կգնանք,— հարցրեց Ֆրոդոն:

— Պահապանները միայն երկու ճանապարհ ունեն,— պատասխանեց Գանդալֆը,— հետ՝ Ազատք, կամ առաջ՝ դեպի Հրամեջ Լեռ:

Երբ Գանդալֆը հիշեցրեց վերադառնալու մասին, Փինի դեմքը պայծառացավ, իսկ Մերին ու Սամը ուրախությունից վեր թռան: Բայց Բորոմիրն ու Արագորնը անտարբեր մնացին, իսկ Ջիմլին ու Լեգոլասը սպասողական լռեցին: Ֆրոդոն հասկացավ, որ բոլոր ճամփորդներն ուզում են, որ առաջինն ինքն արտահայտվի:

— Վերադառնալ,— անվճռական սկսեց Ֆրոդոն, հետո հաղթահարեց անվճռականությունն ու ավելացրեց. — ... մենք կարող ենք, իմ կարծիքով, միայն հաղթանակով: Կամ խայտառակությամբ՝ ընդունելով սեփական պարտությունը: Ես առաջարկում եմ հաղթահարելով արգելքները, առաջ գնալ:

— Ես էլ եմ այդպես մտածում,— պաշտպանեց նրան Գանդալֆը: — Վերադառնալ, նշանակում է ընդունել սեփական պարտությունը, որն անխուսափելիորեն կդառնա Միջերկրի բոլոր ազատ ժողովուրդների կործանումը: Համիշխանության Մատանին կմնա Ազատքում, քանի որ ուրիշ ապաստարան չես գտնի: Թշնամին ժամանակի ընթացքում կիմանա այդ մասին, իր ամբողջ զորքը կշարժի Էլրոնդի դեմ, և վաղ թե ուշ Ազատքը կընկնի, իսկ Թշնամին կդառնա Ամենազոր տիրակալը և Խավարի Վարագույրը կիջնի Միջերկրի վրա: Սև Մատանեկիրներն ահազդու հակառակորդներ են, բայց երբ նրանց տերը Մատանին ձեռք բերի, նրանք ուղղակի անպարտելի կդառնան:

— Ես էլ ասում եմ, պետք է առաջ շարժվել,— ծանր հառաչելով կրկնեց Ֆրոդոն: Դու ուրիշ ճանապարհ գիտե՞ս լեռների միջով...

— Գիտեմ, բարեկամս,— պատասխանեց Գանդալֆը: — Բայց դա բավական ծանր ճանապարհ է: Արագորնը դրա մասին նույնիսկ լսել չէր ուզում, քանի դեռ հույս ուներ անցնել լեռնանցքով:

— Եթե դա լեռնանցքից վատն է, ապա իսկապես էլ բավական ծանր ճանապարհ է,— Արագորնին նայելով, բացականչեց Մերին: — Բայց այնուամենայնիվ գոնե մի քիչ պատմիր դրա մասին, որ իմանանք ամենավատթարը:

— Ճանապարհը, որի մասին խոսում եմ, անցնում է Մորիայի քարանձավներով,— ասաց Գանդալֆը:

Ջիմլին հուզված նայեց հրաշագործին, բայց նույնիսկ նրան պատեց սարսափը՝ Լայնարձակ Մորիայի կործանիչ քարանձավների մասին բավական շատ սարսափազդու լեգենդներ են հյուսել:

— Ոչ ոք չգիտե,— նկատեց Արագորնը,— պահպանվե՞լ է արդյոք անցուղին Մորիայի միջով:

— Դրա փոխարեն բոլորը գիտեն,— ավելացրեց Բորոմիրը,— որ Մորիան կոչվում է Սև Անդունդ: Ախր էլ ինչու իջնենք Մորիա... Ինչու գրոհենք անառիկ լեռնանցքները... Եկեք դուրս գանք Մուստանգրիմյան դաշտավայր. մուստանգրիմցիները գոնդորցիների վաղեմի դաշնակիցներն են, նրանք կօգնեն մեզ հասնել մինչև Անդուին: Կարելի է նաև Իզեն գետով իջնել, որպեսզի Մորդորի մոտ դուրս գանք հարավից՝ ծովափից:

— Խավարի Վարագույրը տարածվում է,— ասաց Գանդալֆը,— և հիմա մուստանգրիմցիների փոխարեն երաշխավորել չի կարելի: Չէ՞ որ նրանց մոտ դու վաղուց ես եղել: Իսկ գլխավորը. Մուստանգրիմյան հարթավայրի ճանապարհին Սարումանի տիրույթները ոչ մի կերպ չես կարող շրջանցել: Կգա ժամանակը, և ես հաշիվներս կմաքրեմ նրա հետ: Դե իսկ առայժմ Մատանու Պահապանին հարկավոր չէ մոտենալ Իզենգարդին. Սարումանին այրում է համիշխանության տենչը, և նա կփորձի տիրել Մատանուն: Այնպես որ Մուստանգրիմը մեզ համար փակ է:

Այժմ հեռավոր շրջանցող ուղու մասին: Առաջինը՝ այն չափազանց երկար կլինի՝ մենք կծախսենք առնվազն մեկ տարի: Երկրորդը՝ արևմտյան գետերի հովիտներին անպայման հետևելիս կլինեն Սարումանը և Սաուրոնը, իսկ այդ չբնակեցված հարթավայրերում թաքստարան չենք գտնի, քանի որ այնտեղ էլֆեր չկան: Հյուսիս՝ Ազատքի տիրակալի մոտ գնալիս, դու Թշնամու համար սոսկ պատահական ճամփորդ էիր, որի վրա նա ուշադրություն չդարձրեց: Իսկ հիմա դու Մատանու Պահապանների Ջոկատի ռազմիկ ես և քեզ սպառնում է նույն վտանգը, ինչ և Մատանու գլխավոր Պահապանին՝ Ֆրոդոյին: Խորտակիչ վտանգ, որովհետև եթե մեզ հայտնաբերեն... Ի դեպ, վախենում եմ, որ մեզ արդեն հայտնաբերել են Բոսոր Դարպասի մոտերքում: Անհրաժեշտ է թաքնվել լրտեսներից, որպեսզի Թշնամին նորից մեզ աչքից կորցնի. ոչ թե շրջանցել լեռները, ոչ թե գրոհել լեռնանցքները, այլ թաքնվել լեռների ընդերքում, Մորիայի քարանձավներում՝ ահա թե որն է ամենաբանականը: Թշնամին մեզանից այդ չի սպասում:

— Ի՞նչ իմանաս,— Գանդալֆին առարկեց Բորոմիրը: — Բայց մյուս կողմից, եթե նա կռահի, թե մենք որտեղ ենք, ապա այդ թակարդից այլևս դուրս չենք գա: Ասում են, Թշնամին Մորիայում տեր ու տնօրինություն է անում, ինչպես սեփական Սև Դղյակում: Չէ՞ որ Մորիան անվանում են Սև Անդունդ:

— Ամեն լուրի մի հավատա,— ասաց Գանդալֆը: — Մորիայում բոլորովին էլ Թշնամին չէ տեր ու տնօրենը: Ճիշտ է, այնտեղ կարող են օրքեր հանդիպել, սակայն, ես կարծում եմ, այդ չի պատահի. օրքերի հորդաները ջախջախված են Հինգ Զորաց Ճակատամարտում, Մենավոր Լեռան մոտ: Վերջերս լեռնային արծիվներն ինձ հաղորդեցին, որ օրքերը նորից հոսում են դեպի Մշուշապատ... Բայց հուսով եմ, որ Մորիա դեռ չեն թափանցել: Դրա փոխարեն հնարավոր է, որ մենք այնտեղ հանդիպենք Բալինին, իր փոքրաթիվ, բայց խիզախ ջոկատով, և այն ժամանակ օրքերից վախենալու բան չունենք: Ինչ էլ լինի՝ ճանապարհը Մորիայի միջով միակն է, այլ ճանապարհ չունենք:

— Ես քեզ հետ կգամ, Գանդալֆ,— բացականչեց Ջիմլին: — Հին ավանդույթներն ինձ չեն վախեցնում: Բայց սկզբում պետք է փնտրել դարպասը, որը շատ վաղուց կողպ է:

— Հիանալի է ասված, իմ սիրելի Ջիմլի,— թեթև ժպիտով պատասխանեց Գանդալֆը: — Ես կգտնեմ դարպասը և կկարողանամ բաց անել: Դե իսկ արդեն թզուկի հետ մենք հաստատ չենք մոլորվի: Ես մենակ եմ իջել Մորիա, երբ որոնում էի կորած Թրեինին և, ինչպես տեսնում ես, կենդանի եմ դուրս եկել այնտեղից: Ես այն ժամանակ Մորիան միջանցիկ անցումով անցա, Արագորն,— ավելացրեց հրաշագործը Պանդուխտին նայելով:

— Ես էլ մի անգամ իջա Մորիա,— ասաց Արագորնը,— Սևագետքի կողմից: Եվ նույնպես հաջողացրի կենդանի դուրս գալ: բայց երկրորդ անգամ խցկվել չեմ ուզում, չափազանց դառն էր իմ վիճակն այնտեղ:

— Ես առաջին անգամ էլ չեմ ուզում,— մրթմրթաց Փինը:

— Ե՛ս էլ չեմ ուզում,— քրթմնջաց Սամը:

— Դե՛ ոչ ոք էլ չի ուզում,— նկատեց Գանդալֆը: — Սակայն մեզ հարկավոր է ընկնել Սևագետք: Դրա համար էլ հարցնում եմ. Ո՞վ է համաձայն, ոչ թե կուզենա, այլ կհամաձայնվի՝ գնալ Մորիա, որ հետո հասնի Անդուին:

— Ես,— պատրաստակամությամբ բացականչեց Ջիմլին:

— Ե՛ս էլ,— մռայլ ասաց Արագորնը: — Դու լեռնանցքը գրոհելուց չհրաժարվեցիր, չնայած զգուշացրել էիր ինձ, որ կարող ենք կործանվել, և մենք քիչ էր մնում ցրտահարվեինք: Ես կգամ քեզ հետ Մորիա, Գանդալֆ: Բայց հիշիր, ոչ թե մեզ, այլ հատկապես քեզ է Մորիայում մահացու վտանգ սպառնում:

— Իսկ ես,— խոժոռ հայտարարեց Բորոմիրը,— կհամաձայնեմ մտնել այդ Սև Անդունդ միայն բոլոր Պահապանների հետ միասին: Երկու կոլոտիկ չեն ուզում մտնել այնտեղ: Մերին, գլխավոր Պահապան Ֆրոդոն և Էլֆ Լեգոլասը դեռ ոչինչ չեն ասել:

— Ես Մորիային դեմ եմ,— ասաց Էլֆը:

Բոլորը նայեցին Ֆրոդոյին և Մերիին: Երկու հոբիթը երկար ժամանակ լուռ էին: Լռությունը խզեց Ֆրոդոն:

— Ես վախենում եմ իջնել Մորիա,— ասաց նա: — Բայց և Գանդալֆի խորհուրդը չեմ ուզում մերժել: Բերեք որոշումը հետաձգենք մինչև առավոտ: Հիմա մութ է ու տխուր: Եվ սարսափելի: Լսեցեք, ինչպես է ոռնում քամին...

Ճամփորդները թաքնվեցին փշարմավի ճյուղերի տակ: Նրանք խոսակցությունն ընդհատեցին ու ականջ դրեցին: Քամին սուլում էր մերկ ճյուղերի մեջ և խշխշացնում հավամրգու չորացած ցողունները: բայց այդ խուլ, սուլոցախառն խշխշոցին միաձուլվում էր մի թախծոտ, բեկբեկուն ոռնոց, ասես քամին ոռնում էր լեռնային կիրճում:

Արագորնը երկար ականջ դնելու հարկ չունեցավ:

— Քամի՞ն է,— տեղից վեր թռչելով բացականչեց նա: — Քամին գայլի ձայնով չի ոռնում... Այդ գայլդարձյակներն են նորից անցել Մշուշապատով այս կողմ...

— Երևում է, որսն սկսվել է,— ասաց Գանդալֆը: — Ուրեմն արժե՞ արդյոք որոշումը հետաձգել վաղվան: Եթե մենք նույնիսկ ապրենք մինչև լուսաբաց, ապա, միևնույնն է, Մուստանգրիմ հասնել չենք կարողանա:

— Իսկ այդ Մորիան հեռո՞ւ է,— հարցրեց Բորոմիրը:

— Ուզո՞ւմ ես իմանալ,— հարցին հարցով պատասխանեց Գանդալֆը,— արդյոք հեռու է այստեղից Արևմտյան Դարպա՞սը... Իմ կարծիքով, մոտ մի տասը լիգ... արծվի համար: Իսկ վերգետնյա ամենակարճ արահետներով կլինի մոտավորապես տասնութ-քսան լիգ:

— Հարկավոր է թաքնվել Մորիայում,— ասաց Բորոմիրը: — Օրքից կվախենաս, իսկ գայլից չես փրկվի:

— Դա այդպես է որ կա,— համաձայնեց Արագորնը՝ ստուգելով, արդյոք թուրը հեշտությա՞մբ է դուրս գալիս պատյանից: — Բայց մյուս կողմից, որտեղ օրքը, այնտեղ էլ գայլը՝ կիրճերում գայլդարձյակներ են, իսկ քարանձավներում օրքերի հորդաներ են:

— Ես Էլրոնդին չլսեցի,— շշնջաց Փինը Սամին,— և՝ իզուր: Դե ինձանից ի՞նչ Պահապան: Այդ ոռնոցից ներսս քարանում է: Կյանքումս երբեք այդպես չեմ վախեցել, իսկի էլ չես ասի, որ Բանդոբրաս Եզան Մռունչը իմ նախնին է:

— Իսկ ես,— ի պատասխան շշնջաց նրան Սամը,— Պանդուխտը որ վեր թռավ, սիրտս փորս ընկավ, ու մինչև հիմա էլ էնտեղ թփրտում է: Դե, բան չկա, մեկ էլ տեսար դուրս պրծանք: Արագորնն ու Բորոմիրը շատ բան տեսած մարդիկ են, Ջիմլին ճարպիկ թզուկ է, դե Լեգոլասն էլ հանաք-մանաք էլֆերից չէ, իսկ ծերուկ Գանդալֆը, նրա մասին էլ խոսք չկա, ասա հրաշագործ ու թող: Չէ, ինձ որ մնա, գայլերը մեզ չեն ուտելու:

Ճամփորդներն ուզում էին գիշերել լեռնագոգում, բայց գայլդարձյակներից պաշտպանվելու նպատակով բարձրացան հարևան բլուրը, որտեղ երեք թե չորս ծուռումուռ կաղնի էին կանգնած՝ խոշոր, մոխրագույն գլաքարից շարված պարսպով շրջապատված: Տեղ-տեղ քարե պարիսպը քանդված էր, և Պահապանները գիտակցելով, որ գիշերային խավարում գայլդարձյակների ոհմակն իրենց կգտնի, հապճեպորեն մի ոչ մեծ խարույկ վառեցին:

Ճամփորդները նստել էին խարույկի շուրջն ու, բացի երկու ժամապահներից, ննջում էին, բայց դա ոչ թե քուն էր, այլ տագնապալի մոռացում: Բիլ պոնին վախից դողում էր, ու քրտինքը վրայից թափվում էր, ասես հենց նոր մի քսան լիգ վազել էր: Ոռնոցն այժմ լսվում էր բոլոր կողմերից, իսկ շուրջը գիշերային սև խավարում չարագույժ փայլում էին զույգ-զույգ կրակներ: Պարսպի քանդված մասում Պահապանները հանկարծ մի մեծ գայլդարձյակ տեսան՝ նա արձանացավ բացվածքում և խռպոտ կաղկանձեց, ասես հարձակման ազդանշան էր տալիս:

Առկայծող մոգական գավազանը բարձրացրած, Գանդալֆը քայլեց գազանին ընդառաջ:

— Է՛յ դու, Սաուրոնի քնձռոտ շուն,— դիտավորյալ ցածրաձայն խոսեց նա: — Քո առջև Գանդալֆն է: Կորիր այստեղից, եթե կաշիդ թանկ է քեզ համար:

Խուլ մռնչյունով գազանը թռավ առաջ. երգեցիկ սուլեց արձակված նետը, կարճ մի կաղկանձով գազանը փլվեց գետնին. նրա կոկորդից դուրս էր ցցվել նետը: Լեգոլասն իսկույն կապարճից հանեց երկրորդ նետը: Բայց չարագույժ կրակների օղակը քայքայվեց: Գանդալֆն ու Արագորնը մոտեցան պարսպին՝ բլրի լանջին արդեն գայլդարձյակներ չկային. առաջնորդին կորցրած ոհմակը նահանջել էր: Ճամփորդների շուրջը լռին մթություն էր:

Կեսգիշերն անցել էր, լուսաբացը մոտենում էր. արևմուտքում, համարյա գետնին կպած, մերթ ծվեն-ծվեն ամպերի մեջ սուզվելով հանգչում, մերթ դժգույն փայլում էր լուսինը: Այդ թույլ, ջղաձիգ բռնկումները անզոր գունատվում էին վաղորդյան մթնշաղում: Հանկարծ բարձր, բազմաձայն ոռնոցը ընդհատեց Ֆրոդոյի անհանգիստ քունը. բլուրն անձայն շրջապատած գայլդարձյակները բոլոր կողմերից գրոհի նետվեցին:

— Ցա՛խ լցրեք խարույկը,— գոռաց Գանդալֆը հոբիթներին: — Սրերը մեկացնե՛լ: Կանգնե՛լ մեջք մեջքի տված:

Թեժացող խարույկի վետվետուն լույսով Ֆրոդոն տեսավ, թե ինչպես մոխրագույն ստվերները անցնում են քարե ցածր ցանկապատից: Արագորնը կայծակնային արագությամբ ցատկեց և մի հսկայական գազան խեղդված կաղկանձով տապալվեց գետնին, սառը փայլեց Բորոմիրի թուրը և թռավ երկրորդ գայլդարձյակի գլուխը, թզուկը տապարով ճեղքեց երրորդին, Լեգոլասին ենտը գետին տապալեց չորրորդին, սակայն նորանոր մոխրագույն ստվերներ, ալիք առ ալիք հորձանք տալով, լցվում էին պարսպի վրա:

Ֆրոդոն հուսով նայեց Գանդալֆին: Հրաշագործը, ինչպես հոբիթին թվաց, հանկարծ աճեց մինչև երկինք, շլացուցիչ լույսով բռնկվեց կախարդական գավազանը և, ասես քարակերտ մի հսկա, Գանդալֆը մի վայրկյան անշարժացավ՝ Պահապաններին ծածկելով հարձակվող գայլդարձյակներից: Հետո նա թափով բարձրացրեց կախարդական գավազանը և բլրի վրա որոտաց նզովքը.

— *Նաուր էն ադրիատ ամմին*...

Կաղնին, դեպի որն ուղղված էր գավազանը, դարձավ կատաղորեն բոցավառվող ջահ, դրանից հետո բռնկվեցին մնացած կաղնիները և բլրի վրա, մարտի դաշտը վառ լուսավորելով, մի վիթխարի կրակե ծաղիկ բացվեց: Կուրացած գայլդարձյակները սարսափահար ընկրկեցին, Պահապանների թրերը կայծեր սփռելով, ասես դրանք քուրայից նոր էին հանել, կոտորում էին շշմած, կարկամած գազաններին, Լեգոլասի բոցկլտուն նետը խոցեց սև գայլդարձյակի սիրտը՝ նա խլացուցիչ ոռնաց ու անշնչացած ընկավ: Նրա մահով ավարտվեց գիշերային մարտը, ողջ մնացած գազանները փախուստի դիմեցին:

Դանդաղ այրվում էին դարավոր կաղնիները, բլրի վրա ծխի քուլաների ամպ էր բարձրանում, դալուկ արևաածագի առաջին ճառագայթների հետ մարեցին կաղնիների ածխացած բների վրա խաղացող կրակների վերջին լեզվակները:

— Դե, ի՞նչ էի ասում,— ասաց Սամը Փինին՝ թուրը հոգնած դնելով պատյան: — Ծերուկ Գանդալֆին հում-հում չես ուտի, բկիդ կմնա: Հապա ասա՝ հրաշագոր՛ծ...

Ճամփորդները հայացքով ընդգրկեցին հարթավայրն ու տեսան, որ գայլդարձյակներն անհետացել են: Բայց բլրի լանջին դիակներ էլ չկային. Լեգոլասը լռելյայն հավաքում էր իր նետերը՝ սրանք ընկած էին պարսպից ոչ հեռու: Նա համոզված էր, որ ոչ մի անգամ չի վրիպել և, սակայն, բոլոր նետերը, բացի մեկից (դրա միայն ծայրակալն էր մնացել), անվնաս ընկած էին հավամրգու թփերի մեջ:

— Ես այդպես էլ կարծում էի,— նկատեց Գանդալֆը: — Դրանք գայլդարձյակներ են, ոչ թե սովորական գայլեր, դիակներ չկան, չէ՞... Եկեք շտապ նախաճաշենք և ճամփա ընկնենք:

Այդ օրը եղանակը նորից փոխվեց: Ասես մի հզոր ուժի հրամանով, որն այլևս փոթորկի կարիք չուներ, որովհետև ճամփորդները հրաժարվել էին լեռնանցքից, քամին արագորեն ամպերը ցրեց, իսկ հետո, երբ երկինքը մաքրվեց, դադարեց: Սարերի հետևից դանդաղ դուրս եկավ արևը: Պարզ եղանակին բաց հարթավայրում շարժվող ջոկատը հեռվից էլ երևում էր, իսկ նստել թաքստոցում ու սպասել՝ ճամփորդները չէին կարող:

— Մեզ հարկավոր է լույսով հասնել մինչև Մորիա,— մռայլ լրջությամբ հայտարարեց Գանդալֆը,— այլապես առհասարակ չենք հասնի այնտեղ: Քսան լիգը մեծ տարածություն չէ, բայց Արագորնը չգիտե այստեղի ճանապարհները, դե ես էլ ընդամենը մեկ անգամ եմ եղել այստեղ:

— Դարպասն ա՛յ այնտեղ է,— շարունակեց հրաշագործը՝ գավազանով ցույց տալով դեպի հարավ-արևմուտք, որտեղ վաղորդյան երկնագույն մշուշում երևում էին զառիթափ պատի պես հարթավայր իջնող Մշուշապատի ատամնավոր ուրվագծերը: — Երբ փոթորիկը մեզ լեռնանցքից քշեց, ես թեքվեցի հարավ ու գնացի լեռնաշղթայի երկարությամբ, որպեսզի գոնե մի քիչ մոտենամ Մորիային: Զգում էի, որ այն մեզ պետք կգա... Հուսով եմ, մենք շուտով կգտնենք դարպասը և կհասցնենք մինչև մութն ընկնելը խույս տալ գայլդարձյակներից:

Ջիմլիին առաջ էր մղում անհամբերությունը, և նա քայլում էր առջևից, նրա կողքից գնում էր Գանդալֆը: Մի ժամանակ Մորիայի դարպասի մոտ աղբյուր կար, որից սնվում էր Բարապան, կամ ինչպես էլֆերն էին անվանում՝ Սիրանոն գետը, և Գանդալֆը հույս ուներ գտնել այն, որպեսզի գետափնյա ճանապարհով դուրս գար դարպասի մոտ: Սակայն Բարապա՞նն էր չորացել, թե հրաշագո՞րծն էր սխալ ուղղություն վերցրել, բայց ճանապարհը գտնել չէր հաջողվում: Հրաշագործը շրջվում էր մերթ դեպի արևելք, մերթ դեպի արևմուտք, բայց գետը չկար ու չկար, և բոլորը հասկանում էին, որ եթե ճանապարհը չգտնեն, ապա մինչև երեկո դարպասին չեն հասնի: Անվերջ ձգվում էր ամայի հարթավայրը՝ գորշ, չորացած, ճաքճքած հող, կարմրագորշ գլաքարեր ու խիճ: Շուրջը ոչ թռչուն կար, ոչ գազան: Ճամփորդները հուսահատ քայլում էին Գանդալֆի հետևից և ջանում էին չմտածել, թե ինչ կպատահի իրենց, եթե գիշերը վրա հասնի հենց այս հարթավայրում:

Ջիմլին, որ քիչ հեռացել էր նրանցից, հանկարծ մագլցեց մի գլաքարի վրա ու Գանդալֆին մոտ կանչեց: Հրաշագործի հետևից գնացին բոլոր ճամփորդները: Թզուկը ձեռքով դեպի արևմուտք ցույց տվեց: Այդ կողմ նայելով՝ ճամփորդները տեսան գետի ցամաքած քարքարոտ հունը: Իսկ գետի ափով ձգվում էր ինչ-որ ժամանակ կարմիր քարերով սալարկված ճանապարհը:

— Ահա՛, վերջապե՛ս,— բացականչեց Գանդալֆը: — Հետաքրքիր է, գետի հետ ի՞նչ է տեղի ունեցել: Բայց ինչ էլ եղած լինի, Սա է Բարապանը, կամ էլֆերեն՝ Սիրանոնը: Առա՛ջ, ընկերներ, մեզ հարկավոր է շտապել...

Հոգնած ճամփորդներն արագացրին քայլերը. նրանց խթանում էր գայլդարձյակներից թաքնվելու հույսը:

Իսկ ժամանակը գնում էր. կեսօրն անցել էր, արևն սկսել էր դեպի մայրամուտ թեքվել: Ճամփորդները կարճատև հանգիստ առան, շուտափույթ կերան և շարունակեցին ճանապարհը: Նրանց դիմաց երևում էին Մշուշապատ Լեռները, բայց ճանապարհը սուզվեց մի խոր ձոր, և այժմ երևում էին միայն դեռևս արևով լուսավորված ձյունապատ պայծառ գագաթները:

Մի քանի ժամ հետո ճանապարհը թեքվեց: Առաջ Պահապանները գնում էին դեպի հարավ և նրանցից ձախ ձգվում էր սարահարթը, իսկ այժմ նրանք կտրուկ արևելք էին թեքվում: Շուտով հունը դեմ առավ տափակ գլխով և հիմքի մոտ փոս ունեցող մի ժայռի: Ժայռից մի ժամանակ ջրվեժ էր գահավիժել, իսկ հիմա հազիվ նկատելի մի առվակ էր օձագալար հոսում:

— Այո, Սիրանոնը ցամաքել է,— ասաց Գանդալֆը: — Բայց մենք, անկասկած, մոտենում ենք դարպասին: Սա մերձմորիական շեմքն է, և դրանից ձախ, եթե չեմ սխալվում, ժայռի մեջ պետք է աստիճաններ փորված լինեն, իսկ ճանապարհը, մի մեծ ոլորան անելուց հետո, դուրս է գալիս սիրանոնյան հովտի հյուսիսային լանջ՝ Շեմքի վերին հատվածքի մոտ: Հովիտը ձգվում է արևելքից դեպի արևմուտք (թզուկներն այն անվանել են Աղբյուրի), և սանդուղքը դուրս է

բերում նրա արևմտյան ծայրը, իսկ դիմացը, հովտի արևելյան ծայրին գտնվում է դարպասը և աղբյուր է բխում: Եկեք նայենք, սանդուղքը պահպանվե՞լ է արդյոք:

Նրանք հեշտությամբ գտան աստիճանները, և Ջիմլին, նրանից հետո էլ Գանդալֆն ու Ֆրոդոն, հապշտապ բարձրացան Աղբյուրի հովիտը: Հովտի տեղում սևին էր տալիս լիճը: Մայր մտնող արևը ոսկեզօծել էր երկինքը, բայց փայլատ-սև, ասես մեռած ջրի մեջ չէին արտացոլվում ո՛չ Պահապանները, ո՛չ սարերը, ո՛չ մայրամուտը: Ըստ երևույթին, փլուզումից գետի հունը փակվել էր և այն ջրասույզ էր արել հովիտը: Հովտի վերջում, սև ջրի հետևում, ծանրորեն իրար վրա էին կիտվել ուղղաբերձ ժայռերը՝ չարագույժ, սև, միակտոր: Ոչ թե դարպաս, նույնիսկ բարակ ճեղք չտեսավ Ֆրոդոն այդ ժայռերի մեջ:

— Ահա այդ Մորիական Պատ կոչվածը,— ասաց Գանդալֆը՝ նկատելով, որ Ֆրոդոն զննում է ժայռերը: — Ինչ-որ ժամանակ այդտեղ էր Արևմտյան կամ, ինչպես մարդիկ էին անվանում, Էլֆական Դարպասը, որովհետև ճանապարհը, որով եկանք, Աղբյուրի հովիտը կապում էր Օստրանի հետ: Բայց կարճ ճանապարհը, ինչպես տեսնում ես, ջրասույզ է եղել, և որքան ես հասկացա, մեզանից ոչ ոք չի ուզենա այդ մռայլ լիճն անցնել ծանծաղ տեղերով: Առավել ևս, որ լիճը հավանաբար խորն է:

— Եկեք հետ դառնանք,— առաջարկեց Ջիմլին,— և փորձենք բարձրանալ գլխավոր ճանապարհով: Այսպես թե այնպես ստիպված պետք է լինենք վերադառնալ, նույնիսկ եթե արահետը ջրասույզ եղած չլիներ. Բիլը աստիճաններով բարձրանալ չի կարող:

— Դե հո Բիլին Մորիա չես տանի,— ասաց Գանդալֆը: — Այնտեղ երբեմն այնպիսի նեղ անցումներ են, որ պոնին մտնել չի կարող:

— Բիլը մեղք է,— քրթմնջաց Ֆրոդոն: — Սամն էլ է մեղք: Իսկ նա ի՞նչ է ասելու... Ինչպե՞ս է բաժանվելու իր սիրելուց:

— Այո, մեղք է,— համաձայնեց Գանդալֆը: — Պոնին մեզ շատ նվիրված ու հավատարիմ ծառայել է, իսկ մենք նրան թողնելու ենք բախտի քմահաճույքին: Ախր ես ասում էի՝ մի վերցրեք Բիլին, առաջարկում էի անբեռ դուրս գալ արշավի: Որովհետև ամենասկզբից էլ կասկածում էի, որ ստիպված կլինենք գնալ Մորիայով:

Երեկոյան մայրամուտը հանգչելով դժգունում էր, և երկնքում աստղերը պսպղում էին սառցե փայլով, երբ տանջահար ճամփորդները գլխավոր ճանապարհով արագ բարձրանալով դուրս եկան հովտի հյուսիսային լանջը, Մորիական Պատից մոտավորապես երկու լիգ այն կողմ: Համարյա երկու լիգ լայնությամբ հովիտը ձգվում էր երեք կամ չորս լիգ երկարությամբ, իսկ ժայռերից գոյացած պատնեշի ու ջրի արանքում երևում էր հողի մի նեղ շերտ: Պահապանները լճի երկարությամբ գնացին հարավ՝ այնտեղ, ուր գտնվում էր Մորիայի դարպասը, ավելի ճիշտ, ոչ թե գնացին, այլ համարյա վազեցին, որպեսզի մինչև մութն ընկնելը գտնեն դարպասը:

Հովտի ծայրում, Պատին մոտենալու տեղում նրանց ճանապարհը կտրեց նեղուցը, որը հատում էր լճի ու ափամերձ ժայռերի միջև եղած ցամաքը: Նեղուցի ջուրը մուգ էր ու հոտած, պատված կանաչ ջրոսպով: Նեղուցը նմանվում էր խեղդվածի ձեռքի, որը մահվան հետ գոտեմարտելով կառչել էր ժայռերից: Ջիմլին խրոխտ քայլեց առաջ, ոչ ոք չհասցրեց կանգնեցնել նրան: Նեղուցը ծանծաղ էր, բայց լպրծուն: Սայթաքելով, Ջիմլին քիչ էր մնում ընկներ, սակայն կարողացավ հավասարակշռությունը պահել և շուտով դուրս եկավ չոր տեղ: Նրա հետևից գնացին մնացած ճամփորդները. մտնելով սառը, կանաչավուն ջրի մեջ, Ֆրոդոն նողկանքից ակամա սարսռաց:

Երթը եզրափակող Սամը ափ դուրս բերեց սրթսրթացող պոնիին, Պահապանները լսեցին խուլ ճողփյուն, ասես ջրից հանկարծ ձուկ դուրս թռավ և իսկույն էլ նորից չրմփաց ջրի մեջ: Շուռ գալով նրանք տեսան, որ լճի կենտրոնից շրջանաձև սև ալիքներ են տարածվում, հետո ինչ-որ բլթբլթոց լսվեց, և նորից լռություն տիրեց: Իրիկնային մայրամուտի ոսկեգույն փայլը ծածկվում էր ամպերի հետևում, մթնշաղը թանձրանում էր:

Գանդալֆը շտապ առաջ էր քայլում: Հոբիթները դժվարությամբ էին հասնում նրա հետևից. այժմ նրանք շարժվում էին Մորիական Պատի երկարությամբ՝ ցամաքի քարքարոտ ու նեղ շերտով, որը խճողված էր սուր ժայռաբեկորներով: Ճամփորդներն աշխատում էին չհեռանալ պատից, իրենց պահելու համար, նույնիսկ ձեռքերով կառչում էին պատից, որպեսզի փայլատ-սև, կանաչավուն ջուրը որքան կարելի է հեռու լինի: Երբ նրանք համարյա մեկ լիգ

հաղթահարեցին, մթնշաղում անսպասելի ծառեր ուրվագծվեցին: Պատի մոտ երկու հզոր կաղնի էին կանգնած, ծանծաղ ջրի վրա ընկած էին սևացած ճյուղերը, իսկ լճի մեջտեղում, երկու շարքով ձգվում էին կիսափտած բների կմախքները: Երկու կողմերում կաղնիների շարք ունեցող ճանապարհն այստեղ հավանաբար վերջանում էր: Պատի մոտ աճած ծառերը զարմանալի մեծ ու հին էին երևում: Շեմքի մոտից, Մշուշապատի զառիկող պատի տակ դրանք բարձր չէին թվում, բայց հիմա Ֆրոդոն զարմանքով գիտակցեց, որ երբեք ինքն այդպիսի հզոր ու վիթխարի կաղնիներ չի տեսել. դրանք բարձրանում էին Պահապանների գլխավերևում որպես վիթխարի պահակային աշտարակներ՝ պահպանելով Սարամիջի թագավորության մուտքը:

— Վերջապե՜ս,— ուրախացած բացականչեց Գանդալֆը: — Այստեղ վերջանում է Էլֆական ուղին: Թզուկները փորել ու կառուցել, բաց են արել Արևմտյան Դարպասը, որ անարգել առևտուր անեն Էլֆերի հետ, իսկ Էլֆերն էլ թզուկներին պատկանող Աղբյուրի հովտում տնկել են կաղնիների այս ծառուղին, որպեսզի հավերժացնեն իրենց սերտ բարեկամությունը... Կաղնին Օստրանի խորհրդանիշն է: Քանի որ այն երանելի ժամանակներում Միջերկրի ժողովուրդներն իրար հետ բարեկամություն էին անում, նույնիսկ Էլֆերն ու թզուկները կարողանում էին չկռվել:

— Ես երբեք լսած չկամ,— նկատեց Ջիմլին, որ այդ բարեկամությունը թզուկների պատճառով է ընդհատվել:

— Իսկ ես չեմ լսել,— ասաց Լեգոլասը,— որ այդ բարեկամությունն ընդհատվել է Էլֆերի պատճառով:

— Ես հաճախ եմ լսել և՛ մեկը, և՛ մյուսը,— սկսվող վեճը դադարեցրեց Գանդալֆը: — Հիմա ժամանակը չէ որոշելու, թե ով է իրավացի: Հուսով եմ, գոնե դուք բարեկամ կմնաք, քանի որ ինձ ձեր օգնությունը շատ է հարկավոր, իսկ միաբան գործել կարող են միայն բարեկամները: Մենք պետք է գտնենք և բացենք դարպասը, քանի դեռ մութը չի ընկել:

— Իսկ դուք,— մնացածներին դառնալով, ասաց նա,— պատրաստվեք անմիջապես մտնել Մորիա, հենց գտնենք ու բաց անենք դարպասը: Չէ որ մենք ստիպված ենք բաժանվել Բիլից, հետևաբար հարկավոր է նրան բեռնաթափել: Տաք հագուստը կարելի է չվերցնել, այն մեզ պետք չի լինելու ո՛չ Մորիայում, ո՛չ էլ հետո, երբ գնանք հարավ: Իսկ սնունդը, և գլխավորը, ջրով լի տափաշշերը, որ մինչև հիմա պոնին էր բերում, հարկավոր է բաժանել բոլոր Պահապաններին:

— Իսկ ինչպե՞ս վարվենք ծերուկ Բիլի հետ,— վախեցած ու վրդովված բացականչեց Սամը: — Առանց նրա ես տեղիցս չեմ շարժվի... Խեղճին բերինք հասցրեցինք չգիտես թե ուր, ու հիմա թողնենք, որ գայլդարձյակներն ուտե՞ն...

— Ախր ես էլ եմ խղճում նրան,— արձագանքեց Գանդալֆը: — Բայց դու, բարեկամս, ստիպված ես ընտրություն կատարել քո տիրոջ և Բիլի միջև: Հասկացիր, երբ մենք դարպասը բացենք, դու նրան չես էլ կարողանա Մորիա քարշ տալ, նա չի մտնի այդ Սև Անդունդը:

— Ինձ հետ կմտնի,— առարկեց Սամը,— ես չեմ թողնի, որ ձեր նզովված դարձյակները հոշոտեն նրան:

— Դե, պետք է ենթադրել, որ գործը հոշոտելուն չի հասնի,— խոսեց Գանդալֆը: Նա փաղաքշանքով շոյեց պոնիի գլուխը, խոնարհվեց նրա վրա ու ցածր ձայնով ասաց. — Դու Ազատքում շատ բան սովորեցիր, Բիլ: Պահպանի՛ր քեզ, երբ վերադառնալու լինես, իսկ պահպանվողին, ինչպես հայտնի է, ճակատագիրն էլ է պահպանում: Մեզանից ոչ ոք չգիտե ինչ է լինելու իր ճակատագիրը, բայց մենք միշտ լավի հույսով ենք ապրում... Ոչ ոք մեզանից չգիտե իր ճակատին գրածը,— կրկնեց հրաշագործը,— դեպի Սամը շրջվելով: — Հույս տածենք, որ Բիլը կենդանի կմնա:

Սամը Գանդալֆին ոչինչ չպատասխանեց: Նա կանգնած էր պոնիի կողքին ու լաց էր լինում: Իսկ պոնին կպավ նրան ու հառաչեց՝ ասես հասկանալով, թե ինչի մասին է խոսքը: Սամն սկսեց պոնիի վրայից իջեցնել բեռը, իսկ մյուս ճամփորդները դասավորում էին փաթեթները՝ իրենց ուսապարկերի մեջ տեղավորելով այն, ինչ հարկավոր էր հետները վերցնել:

Բեռը տեղավորելուց հետո Պահապանները հետ նայեցին՝ փորձելով հասկանալ, թե ինչ է անում Գանդալֆը: Իսկ նա, թվում էր, ոչինչ էլ չէր անում՝ կանգնել ու սևեռուն նայում էր Պատին, ասես ուզում էր հայացքով ծակել այն: Իսկ Լեգոլասը հպվել էր նրան՝ կարծես

ունկնդրելով և աչքերն էլ, չգիտես ինչու, փակ էին: Ջիմլին լուռ հետուառաջ էր քայլում Պատի երկարությամբ՝ տապարի պոչով թխկթխկացնելով այն:

— Դե ահա, մենք պատրաստ ենք Մորիա փախչելու,— ասաց Մերին,— բայց ո՞ւր է դարպասը:

— Եթե թզուկների սարքած դարպասը փակված է, ապա տեսնել այն հնարավոր չէ,— զսպված հպարտությամբ պատասխանեց Ջիմլին: — Նույնիսկ վարպետը, որը շինել է դարպասը, նույնիսկ նա չի կարող հետո գտնել, եթե չասի պայմանական խոսքը:

— Այո, բայց Մորիայի Արևմտյան Դարպասը գաղտնի չէր,— նկատեց Գանդալֆը: — Դարպասը սարքել են էլֆ բարեկամների համար, և եթե նրանք մեր ժամանակներում չեն վերափոխել, ապա ով դրա տեղը գիտե, պետք է առանց դժվարության հայտնաբերի ու բաց անի:

Գանդալֆը նորից նայեց պատին: Մեջտեղում, պահակ-կաղնիների արանքում այն անբնական ողորկ էր, և Գանդալֆը կիպ մոտենալով սկսեց ձեռքերով շոշափել ու ինչ-որ անհասկանալի բառեր մրմնջալ: Հետո հեռանալով, հարցրեց իր ուղեկիցներին.

— Իսկ հիմա՞... Հիմա որևէ բան տեսնո՞ւմ եք...

Պատը լուսավորեց դուրս եկող լուսինը, բայց Պահապանները ոչ մի փոփոխություն չնկատեցին: Իսկ հետո Պատի վրա բարակ, արծաթավուն գծեր նշմարվեցին, դրանք աստիճանաբար սկսեցին պայծառանալ, որոշակի ու հստակ դառնալ, և շուտով զարմացած ուղեկիցների առջև բացվեց մի գեղեցիկ նկար:

Վերևում էլֆերեն տառերից քմահաճորեն հյուսված կամարաձև մակագրությունն էր, որի տակ յոթաստղանի թագն էր, իսկ դրա տակ էլ մուրճ ու զնդան: Կամարաձև մակագրությունը հենվում էր կաղնիների վրա՝ հար և նման նրանց, որ աճել էին պատի մոտ, իսկ կաղնիների միջև փայլում էր ճաճանչափայլ աստղը:

— Դարինի՛ խորհրդանշանն է,— բացականչեց Ջիմլին՝ ցույց տալով մուրճ-զնդանն ու թագը:

— Եվ Օստրանի նշանը,— ասաց Լեգոլասը:

— Եվ Ֆեանորի աստղը,— ավելացրեց Գանդալֆը՝ դիտելով ճաճանչափայլ աստղը: — Մենք նկարը չէինք տեսնում, որովհետև հին գիշերագիրը, որով ծածկված է Արևմտյան Դարպասը, երևակվում է միայն լուսնի և աստղերի լույսով, Միջերկրի ժողովուրդների կողմից վաղուց մոռացված հին էլֆերեն լեզվի հնչյունների տակ: Ես ինքս էլ դժվարությամբ վերհիշեցի այդ բառերը, որոնք իմ մատների տակ կենդանացրին նկարը:

— Իսկ ի՞նչ է գրված այստեղ,— Գանդալֆին հարցրեց Ֆրոդոն: — Ես կարծես թե հասկանում եմ էլֆական գրերը, բայց այս մակագրությունը կարդալ չեմ կարողանում:

— Զարմանալի ոչինչ չկա,— պատասխանեց Գանդալֆը,— քանի որ դա հին էլֆերեն լեզու է, իսկ Բիլբոն քեզ սովորեցրել է նոր էլֆերենը: Ես հին էլֆերենը հասկանում եմ, բայց այստեղ գրված չէ ամենագլխավորը: Ահա թե ինչ է ասված այստեղ, թարգմանում եմ.

«Մորիական թագավոր Դարինի Արևմտյան Դարպասը բացում է գաղտնաբառը, բարեկամ: Ասա և ներս համեցիր»: Իսկ ներքևում, մանր տառերով գրված է. *«Ես՝ Նարվիս, ստեղծել եմ այս Դարպասը: Գաղտնաբառը փորագրել է օստրանցի Սելեբրիմբերը»*:

— Իսկ դա ի՞նչ է նշանակում. «Ասա և ներս համեցիր»,— հետաքրքրվեց Մերին, և Ջիմլին շարունակեց.

— Եթե բարեկամ ես, ասա գաղտնաբառը, և դարպասը կբացվի քո առաջ:

— Ես էլ եմ այդպես կարծում,— խոսեց Գանդալֆը,— որ այդ դարպասը գաղտնաբառին է ենթարկվում: Երբեմն թզուկների սարքած դարպասները բացվում են միայն հատուկ հանգամանքներում, իսկ երբեմն միայն ընտրյալները հատուկ հանգամանքներում կարող են բացել փակը, քանի որ դրանք փականքով են կողպվում: Սա, ինձ թվում է, կողպեք չունի: Սա սարքել են բարեկամների համար և գաղտնի չի համարվել: Դրանք սովորաբար բաց են եղել, և պահակները խաղաղ նստած են եղել ծառերի տակ: Իսկ եթե դարպասը երբեմն փակել են, ապա բացել են գաղտնաբառի հնչյունների տակ. դարպասը մեխանիկական փակ չի ունեցել: Ես այդ մակագրությունը ճի՞շտ եմ հասկացել, Ջիմլի:

— Բացարձակապես ճիշտ,— հաստատեց թզուկը: — Բայց, դժբախտաբար, գաղտնաբառերը մոռացված են: Քանզի Նարվի տոհմը վաղուց հանգել է:

— Մի՞թե դու էլ չգիտես գաղտնաբառը,— ապշահար Գանդալֆին հարցրեց Բորոմիրը:

— Ոչ, չգիտեմ,— պատասխանեց Գանդալֆը:

Պահապանները վախեցած նայեցին հրաշագործին՝ Միայն Արագորնը հանգիստ մնաց, քանի որ նա շատ էր ճանապարհորդել Գանդալֆի հետ և հավատում էր, որ նա կբացի դարպասը:

— Այդ դեպքում մենք ինչո՞ւ եկանք այստեղ,— տագնապալի ու զայրացած գոռաց Բորոմիրը: — Ասում էիր, որ իջել ես Մորիա, որ անցել ես այստեղով... Եվ չգիտե՞ս որտեղ է մուտքը:

— Ես գիտեմ որտեղ է մուտքը և ձեզ բերել եմ այստեղ,— սառնասիրտ պատասխանեց գոնդորցուն Գանդալֆը, բայց նրա աչքերը պսպղացին ոչ բարի փայլով: — Ես չգիտեմ գաղտնաբառը՝ առայժմ: Հարցնում ես. մենք ինչո՞ւ եկանք այստեղ: Պատասխանում եմ. որպեսզի մեզ գայլդարձյակները չխժռեն: Բայց դու ինձ մի հարց ևս տվեցիր: Եվ ի պատասխան ստիպված եմ քեզ հարցնել. իմ խոսքերին չե՞ս կասկածում արդյոք, Բորոմիր: — Վերջինս չպատասխանեց և Գանդալֆը մեղմացավ: — Ես Մորիա իջել եմ արևելքից՝ Սևագետքից, այլ ոչ թե այստեղից,— հանդարտ բացատրեց նա: — Արևելքից Արևմտյան Դարպասը բացվում է դեպի ներս, ներսից հարկավոր է թեթևակի սեղմել-հրել, և կբացվի ինչպես սովորական դուռ: Իսկ ով դրա առջև կանգնած է այստեղ, պետք է արտասանի գաղտնաբառը, այլապես Մորիա այստեղից չի մտնի:

— Ուրեմն ի՞նչ պետք է անենք,— հրաշագործին հարցրեց Փինը, ասես այդ լարված խոսակցությունն իսկի չէր էլ եղել:

— Դու՝ գլուխդ դարպասով տուր,— պատասխանեց Գանդալֆը,— մեկ էլ տեսար կոտրեցիր: Իսկ ես կհանգստանամ անմտածված հարցերից և կաշխատեմ հիշել խոսք-բանալին: Կար ժամանակ,— մրթմրթաց հրաշագործը,— երբ դրանք իրենք էին իմ միտը գալիս: Դե հիմա էլ կարծես թե չեմ մոռացել: Արևմտյան Դարպասը ստեղծել են բարեկամների համար, ուրեմն գաղտնաբառը պետք է որ շատ պարզ լինի: Իսկ ո՞ր լեզվով: Ավելի հավանական է՝ էլֆերենով...

Գանդալֆը նորից մոտեցավ պատին և գավազանով հպվեց Ֆեանորի աստղին.

Աննոն Էդելեն Էդրո դո ամմին,
Ֆէնեսաս նոգոտրիմ աստո լամմին...

Նա խոսում էր ցածր, բայց զրնգուն: Արծաթավուն նկարը մի քիչ խունացավ, բայց պատը մնաց անփոփոխ:

Հրաշագործն այդ նույն խոսքերը կրկնեց ուրիշ բառակապակցություններում, բայց ոչնչի չհասավ: Մի քանի գաղտնաբառ փորձեց, խոսում էր մեկ ցածր ու դանդաղ, երգեցիկ, մերթ բարձր ու հրամայական, կարգադրության տոնով, արտասանում էր առանձին էլֆերեն բառեր և երկար, տարօրինակ հնչողությամբ արտահայտություններ: Միևնույնն է, ուղղաբերձ ժայռերն անդրդվելի էին մնում, և միայն մութն էր նսեմացնում դրանց ուրվագծերը: Լճից խոնավ քամի էր փչում: Երկնքում նորանոր աստղեր էին փայլում, իսկ դարպասը առաջվա պես փակ էր:

Գանդալֆը կրկին հեռացավ պատից և մոտենալով խիստ հրամայեց.

— *Էդրո՛*...

Հետո նա կրկնեց այդ բառը՝ Բացվիր, առանց բացառության արևմտյան բոլոր լեզուներով, սակայն նորից ոչնչի չհասավ, զայրացած մի կողմ նետեց իր կախարդական գավազանն ու լուռ նստեց ժայռաբեկորի վրա:

Հենց այդ պահին էլ գիշերային սև լռության մեջ լսվեց գայլդարձյակների հեռավոր ոռնոցը: Տագնապալի խռխռացրեց վախեցած Բիլը, բայց Սամը մոտեցավ նրան, ինչ-որ բան շշնջաց, քորեց ականջի հետևը, և պոնիին հանդարտվեց:

— Տե՛ս, հանկարծ վախից չփախչի, պինդ պահիր դրան,— ասաց Բորոմիրը: — Երևում է, նա դեռ պետք է գալու... Եթե մեզ գայլդարձյակներն այստեղ չգտնեն: Անիծյալ ջրափոս... — Բորոմիրը կռացավ, մի քար վերցրեց և նետեց լիճը:

Ջուրը կուլ տվեց նետված քարը խուլ չփչփացնող ճողփյունով, իսկ լիճը ի պատասխան պղպջակներ բաց թողեց, բլթբլթաց և այնտեղ, որտեղ քարը սուզվեց, շրջանաձև ալեկոծվեց:

— Ի՞նչ ես անում, Բորոմիր,— իրար անցավ Ֆրոդոն: — Այստեղ առանց այդ էլ սարսափելի է: — Հոբիթը կծկվեց: — Սա սոսկալի լճակ է... Սա գայլդարձյակներից ահավոր է, Մորիայից զարզանդելի, իսկ դու վրդովվում ես...

— Այստեղից փախչել է պետք,— փնթփնթաց Մերին:

— Գանդալֆը ե՞րբ է բացելու դարպասը,— դողացող ձայնով հարցրեց Փինը:

Իսկ Գանդալֆը, թվում էր, իր ուղեկիցներին չէր նկատում: Նա նստած էր, արմունկները ծնկներին հենած ու գլուխը ձեռքերի ափերի մեջ առած՝ ոչ այն է մտքերի մեջ, ոչ այն է հուսահատության գիրկն ընկած: Նորից լսվեց գայլդարձյակների ոռնոցը: Լճակի երեսին տարածվող շրջանաձև ալեծածանքն ասես լիզում էր քարե ափը: Հանկարծ հրաշագործը ծիծաղելով վեր թռավ՝ վախեցնելով առանց այդ էլ սարսափահար ուղեկիցներին:

— Դե, իհարկե՛,— ուրախ բացականչեց նա: — Եվ ինչպես ես, հիմարս, իսկույն գլխի չընկա... Ի դեպ, բոլոր լուծված հանելուկներն էլ հետո զարմանալի հեշտ են թվում:

Նա վեր կացավ, վստահ մոտեցավ պատին, գավազանը ուղղեց Ֆեանորի աստղի վրա և զրնգուն ձայնով ասաց.

— *Մելլո՛ն*...

Աստղը բռնկվեց ու իսկույն հանգավ: Պատի մեջ երևացին դարպասի փեղկերը և դանդաղ, բայց անաղմուկ ու սահուն բացվեցին: Սև բացվածքի մեջ, մուտքի հարթակի հետևում աղոտ երևում էին երկու գիրթ սանդուղք՝ մեկը դեպի վեր, մյուսը՝ ներքև:

— Ես կամարի մակագրությունը ճիշտ չհասկացա,— բացատրեց հրաշագործը: — Եվ Ջիմլին էլ էր սխալվել: Այնտեղ բանալի բառը գրված է: Այ այսպես պետք է թարգմանվեր. «Մորիական թագավոր Դարինի Արևմտյան Դարպասը բացում է գաղտնաբառը՝ բարեկամ»: Երբ ես էլֆերեն ասացի՝ *մելլոն*, դարպասն իսկույն բացվեց: Մեր խառն ու տագնապալի ժամանակներում այդպիսի պարզությունը խելագարություն է թվում: Համընդհանուր ընկերասիրության օրերն անցան... Սակայն դարպասը բաց է, գնացինք:

Գանդալֆը ներս մտավ բաց դարպասից և այն է, ուզում էր բարձրանալ սանդուղքով՝ ոտքը դրեց առաջին աստիճանին, բայց այստեղ լեռներում պատահող փլուզումների նման, ճամփորդների վրա թափվեցին բազում իրադարձություններ: Ինչ-որ մեկը բռնեց Ֆրոդոյի ոտքը, և նա, ցավից ճչալով, ընկավ: Սարսափից խռխռացող Բիլը սլացավ Մորիական Պատի երկայնքով և վայրկենապես լուծվեց գիշերային մթության մեջ: Սամը նետվեց նրա հետևից, բայց լսելով տիրոջ ցավագին ճիչը, անիծելով, վազեց նրան օգնության: Մնացած ճամփորդները հետ նայեցին և տեսան, որ ջուրը ափի մոտ կատաղի փրփրում է, ասես նրա մեջ, փորձելով քանդվել, դեսուդեն է խփվում մոլեգնած օձերի հոծ կծիկը:

Մեկ օձ, ո՛չ, ո՛չ թե օձ, այլ օձանման լպրծուն, կանաչ մատներով շոշափուկ արդեն ափ էր դուրս եկել, թաքուն մոտեցել Ֆրոդոյին և, նրա ոտքը բռնելով, քարշ էր տալիս գարշահոտ պղպջակավոր ջուրը: Սամն առանց երկար մտածելու հանեց թուրը, զարկեց թույլ լուսարձակող շոշափուկին և այն, գունաթափվելով, անզոր քարացավ, իսկ Ֆրոդոն հապշտապ ոտքի կանգնեց ու, օրորվելով, մտավ բաց դարպասից ներս:

Սամը նույնպես հետ-հետ գնաց դեպի քարանձավը: Եռացող, պղպջակներով ծածկված ջրից դուրս սողացին քսան հատ մատնավոր հրեշներ, իսկ օդը թունավորվեց հեղձուցիչ գարշահոտությամբ:

— Դեպի քարանձա՛վ, սանդուղքով դեպի վե՛ր... արագ... — դեպի լիճը նետվելով գոռաց Գանդալֆը:

Պահապանները, որ մի վայրկյան ահից քարացել էին (Ֆրոդոյին ազատելու նետվել էր միայն Սամը), ուշքի եկան՝ և ճիշտ ժամանակին, երբ Սամն ու Ֆրոդոն, որ վերջից էին գնում, սկսեցին բարձրանալ, իսկ Գանդալֆը հետ-հետ գնալով, մոտեցավ աստիճաններին, գալարվող շոշափուկները սողալով հասան մինչև դարպաս, և մեկը խցկվեց քարանձավից ներս: Գանդալֆը չբարձրացավ վերև: Բայց եթե մտքում փնտրում էր բառը, որը կարող էր փակել դարպասը, ապա իսկույն էլ պարզվեց, որ դրա կարիքը չկա. որսի ծարավ հրեշների

բազմությունը ագահորեն կառչեց դարպասի փեղկերից և ահավոր ուժով քաշելով, դրանք փակեց: Քարանձավը սուզվեց սև լռության մեջ՝ միայն թույլ լուսավորվում էին (մգանալով ու անշարժանալով) դարպասի փեղկերի կտրած շոշափուկները, մեկ էլ դրսից խուլ հարվածներ էին լսվում:

Ֆրոդոյի կողքը կանգնած Սամը հեծկլտաց և ուժասպառ նստեց սառը աստիճանին:

— Խեղճ Բիլ,— փնթփնթաց նա: — Սև ագռավներ, բուք ու բորան, գայլդարձյակներ, մատնավոր շոշափուկներ՝ այդքանին ո՞վ կդիմանա: Ես էլ չկարողացա ոչնչով օգնել նրան, ախր ստիպված էի ընտրություն անել. կամ վազել խեղճ Բիլի հետևից, կամ տիրոջս հետ մտնել քարանձավ: Դե, ես էլ, իհարկե, գնացի տիրոջս հետ:

Այդ ընթացքում Գանդալֆը մոտեցավ դարպասին և մոգական գավազանով հարվածեց: Մի վայրկյան գավազանը կուրացուցիչ բռնկվեց, քարանձավը լցվեց դղրդացող թնդյունով, ճամփորդների տակ ցնցվեցին քարե աստիճանները, սակայն դարպասը փակ մնաց:

— Այդպես էլ կա,— ասաց Գանդալֆը: — Դարպասը չի բացվում: Այժմ մենք մեկ ճանապարհ ունենք՝ դեպի արևելք: Ինձ թվում է, որ այդ մոլագար ճանկերը պոկել են վերջին էլֆական կաղնիները՝ փորձելով դրանցով ջարդել դարպասը, որով փլուզում են առաջացրել և մեզ զմռսել Մորիայում: Ափսոս, կաղնիները շատ գեղեցիկ էին:

— Ես սարսափում էի,— խոսեց Ֆրոդոն,— երբ անցնում էինք նեղուցը: Ես հասկացա, որ փորձանքի մեջ ենք ընկնելու: Այդ ի՞նչ էր,— հարցրեց նա Գանդալֆին,— որ ինձ վրա հարձակվեց դարպասի մոտ: Թե՞, քո կարծիքով, դրանք շատ էին...

— Ես ոչ մի անգամ այդպիսի արարածների չեմ հանդիպել,— քիչ լռելուց հետո պատասխանեց Գանդալֆը: — Բայց այդ ձեռքերը, որքան ես հասկացա, մի չարագործ կամք էր դեպի մեզ ուղղում: Ինչ-որ մեկը դուրս սողաց կամ վռնդվեց ամենախոր ստորգետնյա ջրերից: Այնտեղ, անհայտ անդունդներում բազմաթիվ հրեշներ են բնակվում, ավելի ահավոր, քան օրքերը կամ գայլդարձյակները: — Հրաշագործը չավելացրեց, որ անդունդի հրեշը, ըստ երևույթին, հատկապես Ֆրոդոյին էր ուզում որսալ:

— Միայն հրեշներն էին մեզ պակաս,— քթի տակ խռպոտ փնթփնթաց Բորոմիրը: — Ախր ես Սև Անդունդ մտնելուն դեմ էի: Հիմա մեզ ո՞վ կհանի այստեղից: — Բորոմիրը չէր ուզում, որ իրեն լսեին, բայց թնդուն արձագանքն ուժեղացնում էր ձայնը...

— Ես,— արձագանքեց Գանդալֆը: — Եվ Ջիմլին: Ի դեպ, ճանապարհ ընկնելու ժամանակն է: — Նա վեր բարձրացրեց մոգական գավազանը, և այն լուսավորվեց երկնագույն լույսով:

Լուսարձակող գավազանը ձեռքում պահած Գանդալֆն սկսեց բարձրանալ աստիճաններով: Սանդուղքը թեք էր, բայց լայն: Ճանապարհորները երկու հարյուր աստիճան հաշվեցին, իսկ հետո կամարակապ միջանցք տեսան, որը գնում էր խորհրդավոր, մութ հեռուն:

— Եկեք ուտենք,— առաջարկեց Ֆրոդոն: — Հազիվ թե Մորիայում աթոռներ կգտնվեն, իսկ այստեղ կարելի է աստիճանների վրա նստած ուտել: — Նա ազատվել էր սահմռկեցնող սարսափից ու հանկարծ զգաց, որ շատ է սոված:

Ճամփորդներն աստիճանների վրա նստած կերան: Ուտելուց հետո Գանդալֆը հանեց տափաշիշը, և բոլորը երրորդ անգամ զվարթեղ խմեցին:

— Զվարթեղ քիչ է մնացել, բայց մեզ բոլորիս անհրաժեշտ է կազդուրվել,— տափաշիշը պահելով, նկատեց հրաշագործը: — Վախենում եմ, որ մենք այս շշի վերջին կաթիլը կդատարկենք, մինչև Մորիայից կկարողանանք դուրս գալ: Ջուրը նույնպես ստիպված ենք խնայողությամբ օգտագործել՝ Մորիայում շատ աղբյուրներ ու գետակներ կան, բայց քարանձավի ջուրը խմել չի կարելի: Տափաշշերը մեզ կհաջողվի լցնել միայն Մորիայի քարանձավներից դուրս գալուց հետո:

— Իսկ երկա՞ր ենք գնալու,— հարցրեց Ֆրոդոն:

— Երեք կա չորս օր,— ասաց հրաշագործը, եթե որևէ փորձանք չպատահի: Ուղիղ գծով Արևմտյան Դարպասից մինչև Արևելյան Դարպաս մի քառասուն լիգ կլինի: Բայց այստեղ ուղիղ ճանապարհ չկա:

Պահապանները հավաքեցին ուսապարկերն ու մութ միջանցքով գնացին Գանդալֆի հետևից: Նրանք բոլորն ուզում էին շուտ հասնել Սևագետք, բաց երկնքի տակ, և որոշեցին, որ չեն

հանգստանալու, թեպետ հոգնածությունից օրորվում էին: Գանդալֆն անփոփոխ գլխավորում էր երթը: Ձախ ձեռքում նա պահում էր իր գավազանը, որը միջանցքի սև մթությունը ցրում էր մինչև երեք քայլ դեպի առաջ, իսկ աջով պահում էր Մոլեգինը: Կողքից գնում էր անխոնջ Ջիմլին, իսկ նրա հետևից Ֆրոդոն՝ մերկացրած Ջարդողը ձեռքին: Ջարդողի և Մոլեգինի շեղբերը չէին լուսարձակում, ուրեմն մոտակայքում օրքեր չկային, որովհետև Նախասկզբնական Դարաշրջանում էլֆերի պատրաստած թրերը տագնապալի առկայծում էին, երբ մոտակայքում օրքեր էին հայտնվում: Ֆրոդոյի հետևից գնում էին հավատարիմ Սամը, Մերին ու Փինը, Լեգոլասն ու Բորոմիրը, իսկ երթը եզրափակում էր լռակյաց Արագորնը:

Երկու կամ երեք սահուն շրջադարձից հետո ճամփորդները նկատեցին, որ թեքությամբ են շարժվում: Շուտով շոգն սկսեց նեղել նրանց, սակայն տոթ չէին զգում, իսկ երբեմն նրանց դեմքին զով էր փչում, որովհետև ինչ-որ օդանցքներից լեռնային թարմ օդ էր թափանցում քարանձավ: Ժամանակ առ ժամանակ մոգական գավազանի լույսով Ֆրոդոն մերթ վեր, մերթ վար տանող սրահներ, սանդուղքներ, ճյուղավորումներ էր տեսնում և տագնապալի հետաքրքրասիրությամբ փորձում էր հասկանալ, թե ինչ ուղենիշներով է առաջնորդվում հրաշագործը:

Ջիմլին, եթե նույնիսկ օգնում էր Գանդալֆին, ապա գլխավորապես հաղթանակի նկատմամբ հավատ ներշնչելով: Նրան չէր ընկճում անթափանց մթությունը, բայց ուղղությունը հրաշագործն ինքն էր ընտրում՝ հազվադեպ խորհրդակցելով թզուկի հետ: Մորիական թագավորության քարանձավների հատակագիծը գլխում պահել չէր կարող նույնիսկ Ջիմլին, չնայած որ նա՝ Գլոինի որդին, Սարամիջի թզուկների ցեղին էր պատկանում: Հրաշագործն էլ ղեկավարվում էր միայն ներքին զգացողությամբ, որովհետև ժամանակին Թրեյնին որոնելիս Մորիան հատել էր արևելքից արևմուտք, իսկ հիմա նրանք գնում էին արևմուտքից արևելք, սակայն ուղղությունն անսխալ էր ընտրել. զգացողությունը ոչ մի անգամ չդավաճանեց նրան:

— Անհանգստանալ պետք չէ,— ասաց Արագորնը:

Միջանցքի ճյուղավորման տեղում կանգնած Գանդալֆը սովորականից երկար խորհրդակցեց Ջիմլիի հետ, և Պահապաններին մի անորոշ անհագստություն տիրեց:

— Անհանգստանալ պետք չէ,— կրկնեց Արագորնը: — Մենք մեկ անգամ չէ, որ միասին զազրելի փորձանքների մեջ ենք ընկել, և նա միշտ ելքը գտել է, իսկ էլֆերից ես լսել եմ նրա շատ ավելի վտանգավոր ու լուրջ ճանապարհորդությունների մասին: Մենք Գանդալֆի հետևից եկել ենք Մորիա, և նա մեզ դուրս կբերի այստեղից, դուրս կբերի, ինչ էլ որ պատահի: Հրաշագործը մթության մեջ ճանապարհն ավելի լավ է գտնում, քան Բերութիել թագուհու կատուները:

Այդպիսի ուղեկցորդը Ջոկատի համար փրկություն էր: Պահապանները չէին հասցրել ջահեր պատրաստել (Մորիայի դարպասի մոտ փախեփախի ժամանակ ոչ ոք այդ մասին, հասկանալի է, չէր մտածել), իսկ առանց լույսի նրանք հեռու գնալ չէին կարող: Նախ՝ միջանցքը ճյուղավորվում էր, երկրորդ՝ նրանց ճանապարհին հաճախակի էին գետակներ, խոր ջրհորներ ու լայն ծերպանցքեր հանդիպում. այդպիսի մի (մոտ երեք քայլ լայնությամբ, սև-անհատակ, թնդուն՝ միջով առու էր հոսում) ճեղքի վրայով Փինին հազիվ համոզցին, որ թռչի:

— Պարան չկա,— վհատ ինքն իրեն հանդիմանում էր Սամը: — Ախր ես հո գիտեի, որ պետք է գալու...

Ճեղքերը ճանապարհն ավելի ու ավելի հաճախ էին կտրում, և նրանք անասելի դանդաղ էին առաջ շարժվում: Թվում էր, վայրեջքը վերջ չի ունենալու: Հոգնածությունից նրանց ոտքերը ծալվում էին, բայց հանգստանալ ոչ ոք չէր ցանկանում: Ֆրոդոն նորից տագնապի մեջ էր: Սկզբում, շոշափուկներից ազատվելուց և զվարթեղ ջրի մի կումից հետո կարծես թե խաղաղվել էր, իսկ հիմա նորից էր վախով համակվում: Թեպետ լիովին բուժվել էր Ձավերտի մոտ Սև Հեծյալի հասցրած վերքից, բայց վիրավորվելն անհետևանք չէր անցել: Նա սկսել էր աշխարհն ավելի հստակ ընկալել. նրան հաճախ էր բացվում այն, ինչն ուրիշները սովորաբար չէին նկատում: Նա ուղեկիցներից լավ էր տեսնում մթության մեջ, նրանցից ավելի վստահորեն էր կանխատեսում վտանգը, նրանցից առաջ էր զգում անհաջողությունը: Հրաշագործը, իհարկե, Ֆրոդոյից հեռատես էր: Բայց հիմա Ֆրոդոն՝ Մատանու Պահապանը, շոշափելիորեն զգում էր, որ իրենց շրջապատում են թշնամիները. Մատանին կախված էր նրա վզից և լցվում

էր ահեղ, սառը ծանրությամբ՝ անտեսանելի թշնամիների մեծ ջոկատը դարանակալում էր նրանց ինչ-որ տեղ առջևում, իսկ մեկը գաղտնի գալիս էր իրենց հետևից: Սակայն Ֆրոդոն տագնապ չբարձրացրեց, քանզի իր փորձված ուղեկիցներին ավելի էր վստահում, քան ինքն իրեն: Նա ամուր սեղմում էր Ձարդոոի կոթը՝ աշխատելով հետ չմնալ Ձիմլիից և Գանդալֆից: Հետաքրքիր է, հրաշագործը գիտե՞ արդյոք թշնամիների մասին...

Պահապաններն իրար հետ համարյա չէին խոսում, իսկ թե նույնիսկ մի երկու բառ էլ փոխանակում էին, ապա ձայներն իջեցնում էին շշուկի: Լռությունը միայն խզվում էր քայլերի խշշոցից, իսկ երբ Գանդալֆը ճանապարհն էր ընտրում, և ճամփորդներն ստիպված կանգնում էին տեղում, համր միջանցքի սև լռության մեջ հնչում էր ջրի մեղմ քչքչոցը: Բայց ինչ-որ ժամանակից սկսած Ֆրոդոն կարծես լսում էր, թե՞ դա նրան թվում էր, հազիվ որսալի մի աղմուկ, որը նման չէր քարանձավային առվի քչքչոցին: Այդ աղմուկը բոբիկ ոտքերի զգույշ քստքստոց էր հիշեցնում: Քստքստոցն ընդհատվում էր, սակայն ոչ միանգամից և լսվում էր ավելի երկար, քան կլսվեր արձագանքը, երբ կանգ էին առնում Պահապաններն իրենք:

Կեսգիշերին մոտ ճամփորդները մտան երեք սև կիսակամար ունեցող դահլիճ, որից հետո երեք միջանցք էր սկսվում, և այստեղ Գանդալֆը լրջորեն մտատանջության մեջ ընկավ: Բոլոր միջանցքներն իրար կից ու զուգահեռ էին, և ընդհանրապես տանում էին դեպի արևելք, բայց ձախը՝ իջնում էր, աջը՝ բարձրանում, իսկ մեջտեղինը հորիզոնական ձգվում էր դեպի հեռուն ու մյուսներից ավելի նեղ էր ու ցածր:

— Ոչ, այս տեղը ես չեմ հիշում, բոլորովին չեմ հիշում,— խոստովանեց հրաշագործը: Նա լուսարձակող գավազանը բարձրացրեց վեր՝ հույս ունենալով կամարների վրա նշաններ հայտնաբերել, որոնք կօգնեին ընտրություն անելու: Պատերին ոչ մի մակագրություն չկար: — Ըստ երևույթին, ես շատ հոգնած եմ,— ասաց նա,— որ կարողանամ որոշել, թե հիմա ուր ենք գնալու: Դե, իմ կարծիքով, ձեզ էլ հանգստանալը չէր խանգարի: Հարկավոր է որոշումը հետաձգել առավոտվան: Չնայած առավոտյան այստեղ ավելի լուսավոր չի լինի: Եվ այնուամենայնիվ առավոտվա գործն աջ է գնում:

Հսկայական սրահի հյուսիսային պատի մեջ ճամփորդները քարե դուռ նկատեցին: Գանդալֆը մոտեցավ դռանը, մի քիչ կողքի կանգնած ձեռքով թեթև սեղմեց այն. կամացուկ ճռռոցով դուռը բացվեց:

— Հե՜տ դարձեք,— գոռաց հրաշագործը, երբ Մերին ու Փինը ուրախ բացականչություններով արագ ներս անցան՝ որոշելով, որ այստեղ ավելի լավ կհանգստանան, քան անդուր սրահի քարե հատակին: — Հետ դարձեք...

Հոբիթները վերադարձան սրահ:

— Մենք չգիտենք այս դուռն ուր է տանում,— բացատրեց նրանց Գանդալֆը: — Առաջինը ես կմտնեմ:

Նա ներս մտավ և, մոգական գավազանով լուսավորելով ցածր առաստաղով փոքր սենյակը, կանչեց դռան հետևում մնացած Պահապաններին:

— Տեսնո՞ւմ եք,— հարցրեց նա ներս մտած ճամփորդներին՝ գավազանով ցույց տալով կլոր անցքը, որը սևին էր տալիս անձավի կենտրոնում: Անցքի մոտ ընկած էին ժանգոտած շղթաներ և քարե կափարիչի կտորներ:

— Գանդալֆը ձեր փեշը չքաշեր,— հանդիմանալից ասաց Արագորնը Մերիին ու Փինին նայելով,— չլմփալու էիք, աղավնյակներս, ներքև, ու գուցե մինչև հիմա էլ հատակին հասած չլինեիք: Ի երջանկություն մեզ, փորձված ուղեկից ունենք՝ կարիք չկա անհարկի առաջ ընկնել:

— Սա պահականոցն է,— հայտարարեց Ձիմլին: — Այստեղ գիշեր ու ցերեկ ժամապահներ էին նստում ու պահպանում այն երեք միջանցքների մուտքը: Իսկ ջրհորը կափարիչով փակված էր: Ես կարծում եմ, այն շատ խորն է,— թզուկը հեգնանքով նայեց հոբիթներին:

Ջրհորն ասես ձգում էր Փինին: Մինչ Պահապաններն իրենց վերմակները փռում էին սև անցքից որքան կարելի է հեռու, Փինը սողաց ջրհորի եզրը ու, վախը զսպելով, նայեց ներքև: Նրա դեմքին խոնավ զով փչեց: Այնքան էլ չհասկանալով, թե ինչ է ուզում, նա մի քար շոշափեց, նետեց ցած, շունչը պահեց ու ականջ դրեց լռությանը: Սակայն մինչև քարն ընկնելը չկարողացավ շունչը պահել՝ այնքան երկար էր քարն ընկնում ջրհորը: Նա մի քանի

անգամ շունչ քաշեց և, վերջապես, լսեց հեռավոր ճողփյունը, որ բազմապատիկ արձագանքեց:

— Դա ի՞նչ էր,— իսկույն զգուշացավ Գանդալֆը: Փինը ստիպված եղավ ամեն ինչ խոստովանել: Հրաշագործը հանգստացավ, բայց Փինին հանդիմանեց: — Մենք խելապակաս հոբիթների զբոսանքի չենք դուրս եկել,— բարկացած խոժոռվելով ասաց Փինին: — Հաջորդ անգամ երբ ձանձրանաս, ավելի լավ է ինքդ թռչես ջրհորի մեջ, որ Ձոկատն ազատես ջահել անականջից: Իսկ այժմ քեզ հավաքիր ու սուս նստիր:

Գանդալֆն ականջ դրեց, ամեն ինչ լուռ էր: Եվ հանկարծ ջրհորի մութ խորքից դուրս թռավ արձագանքից ուժեղացած մի տկտկոց. տըկ-տըկ-տըկ, տըկ-տըկ-տըկ: Չափազանց կասկածելի տարօրինակ մի տկտկոց՝ ասես մեկը ազդանշան էր տալիս: Սակայն շուտով տկտկոցը լռեց, ու պահականոցը սուզվեց մութ լռության մեջ: Գանդալֆի գավազանը հազիվ էր լուսավորում:

— Մենք մուրճի ձայն էինք լսում, հայտարարեց թզուկը,— կամ էլ ես այդ գործից ոչինչ չեմ հասկանում:

— Երևակայիր, դու ճիշտ ես,— համաձայնեց Գանդալֆը: — Եվ ոչ մի լավ բան դա չի խոստանում մեզ: Հուսով եմ, որ Փինի քարն այստեղ ոչ մի գործ չունի. և այնուամենայնիվ նրա հիմար արարքը կարող է ահավոր փորձանք բերել մեր գլխին: Երբեք նման բաներ չանեք... Իսկ հիմա բոլորը, բացի Փինից, թող քնեն: Փինը որպես մեղքի քավություն՝ ժամապահ է նշանակվում: Բարի գիշեր:

Դժբախտ Փինը, առանց մի խոսք ասելու, գնաց դռան մոտ ու այնտեղ սկսվեց: Պահականոցը թաղվեց մթության մեջ՝ Գանդալֆի գավազանը վերջնականապես հանգավ: Փինը աչքերը ջրհորից չէր կտրում՝ նրան թվում էր, որ անցքից անպայման հրեշ է դուրս սողալու: Նա շատ էր ուզում ջրհորի բերանը փակել, ինչով ուզում է լինի, թեկուզ վերմակով, սակայն սիրտ չէր անում մոտենալ, հետո ինչ, որ Գանդալֆը քնած է...

Իսկ իրականում Գանդալֆը քնած չէր. նա ցավագին վերհիշում էր իր նախորդ ճանապարհորդությունը՝ փորձելով որոշել ուր պետք է գնան իրենք, քանի որ Մորիայում նույնիսկ ամենաչնչին սխալը կարող է վերջանալ Ձոկատի կործանումով: Մեկ ժամ անց հրաշագործը վեր կացավ ու մոտեցավ Փինին:

— Դե լավ, գնա հանգստացիր,— փնթփնթալով ասաց նա: — Միևնույնն է, ինձ քնել չի հաջողվի: Ես այստեղ կմտածեմ և միաժամանակ կհսկեմ: Վաղը մեզ դժվար օր է սպասվում:

— Ես գիտեմ ինչու է այսպես դժվար ինձ համար մտածելը,— դռան մոտ նստելով, քրթմնջաց հրաշագործը: — Ամբողջ հարցը նրանում է, որ ես վաղուց չեմ ծխել: Դե, իհարկե, վերջին ծխամորճը ծխել եմ Բոսոր Դարպասի գրոհի նախօրյակին:

Ննջելով, վերջինը՝ ինչ տեսավ Փինը, ձեռքի ափերի մեջ ծխամորճը թաքցնող հրաշագործն էր. կրակը մի ակնթարթ լուսավորեց նրա կոշտուկավոր մատներն ու կեռ քիթը:

Առավոտյան Պահապաններին արթնացրեց Գանդալֆը. նա այդպես էլ ամբողջ գիշեր նստել էր դռան մոտ, դրա փոխարեն՝ ուղեկիցները հիանալի քնել էին:

— Ես որոշել եմ ուր ենք գնալու,— ասաց հրաշագործը: — Մեջտեղի միջանցքը չափազանց նեղ է, դարպաս տանող ճանապարհը պետք է որ լայն լինի: Ձախ միջանցքը շոգ է ու տոթ՝ սա տանում է ներքև, դեպի մորիական հանքեր: Իսկ մեզ հարկավոր է բարձրանալ վերև, և մենք կգնանք աջ միջանցքով:

Ութ ժամ Պահապանները բարձրանում էին, միայն երկու կարճատև դադար տալով: Նրանք տագնապալի ոչինչ չէին լսում և տեսնում էին միայն գավազանի կրակը, որն ուղեցույց աստղի նման անշեղ հանում էր նրանց Սև Անդունդից: Միջանցքի պատերն աստիճանաբար հեռացան իրարից, մթության մեջ առաստաղը համարյա չէր երևում, իսկ հատակը ծածկում էին սալաքարերը: Ճամփորդները դուրս եկան մեծ ճանապարհ, որտեղ ոչ փոսեր կային, ոչ դավաճան ճեղքեր, և նրանք ավելի արագ էին շարժվում, քան երեկ, մանավանդ որ միջանցքը ոչ մի անգամ չճյուղավորվեց:

Ուղիղ գծով, Գանդալֆի կարծիքով, նրանք անցել էին տասնհինգ, իսկ գուցե և տասնյոթ լիգ, բայց ստիպված էին քայլել մոտավորապես ևս քսան-երեսուն լիգ: Միջանցքը թեք բարձրանում էր վեր, և Ֆրոդոյի տրամադրությունն էլ աստիճանաբար բարձրանում էր, սակայն նա դեռ

ընկճված էր և ժամանակ առ ժամանակ լսում էր կամ կարծում էր, որ լսում է բոբիկ ոտքերի քստքստոցը:

Պահապանները համառորեն առաջ էին շարժվում, մինչև հոբիթների ուժերն սպառվեցին. բոլորն արդեն սկսեցին գիշերելու տեղի մասին մտմտալ, երբ հանկարծ հայտնվեցին սև դատարկության մեջ: Նրանք չնկատեցին, թե ինչպես դուրս եկան միջանցքից և ընկան մի հսկայական զով քարանձավ: Ճամփորդները հուզված շրջապատեցին Գանդալֆին. նրանց մեջքին տաք զով էր փչում, իսկ քարանձավի օդը զարմանալի թարմ էր:

— Վերջապես,— ուրախացած բացականչեց Գանդալֆը: — Ինչպես երևում է, մենք հասել ենք բնակելի քարանձավներին: Ուրեմն, ես ճիշտ ճանապարհ եմ ընտրել: Եթե հիշողությունս ինձ չի դավաճանում, հիմա Արևելյան Դարպասից վերև ենք և այստեղ, խորքի հարկաշարքերից հեռու, կարելի է, ինձ թվում է, լույսի տակ հետ նայել:

Գանդալֆը բարձրացրեց մոգական գավազանը, և քարանձավը լուսավորվեց լույսի կուրացուցիչ բռնկումով: Սև մութը մի ակնթարթ նահանջեց, և ճամփորդները տեսան մի հսկայական դահլիճ՝ բարձր, գմբեթաձև առաստաղով, ողորկ, հայելանման սև պատերով և չորս սլաքաձև կամարով, որոնցից այն կողմ ենթադրվում էր չորս միջանցք՝ դեպի արևմուտք (որտեղից դուրս էին եկել ճամփորդները), դեպի արևելք, հարավ և հյուսիս: Ուրիշ ոչինչ չհաստատվեց տեսնել. կայծակի պես բռնկված գավազանը հանգավ:

— Այո, մենք հասանք բնակելի հարկաշարքերին,— գավազանը հանգցնելով, խոսեց հրաշագործը: — Կացարանները լուսավորելու համար ուղղաբերձ պատերում պատուհան-հորեր են փորված, բայց հիմա գիշեր է, և մենք դրանք չենք տեսնում: Այսօր առաջ գնալ չարժի. բոլորս էլ հոգնած ենք, իսկ խեղճ հոբիթներն ուղղակի ոտքի վրա կանգնել չեն կարողանում: Եթե ես ճիշտ եմ, ապա վաղն առավոտյան ստիպված չենք լինի մթության մեջ արթնանալ: Իսկ այժմ՝ քնել: Վաղվա համար պետք է ուժ հավաքենք: Առայժմ մեզ անշեղորեն ուղեկցում է հաջողությունը, իսկ Արևելյան Դարպասը դեռ հովտում է, ներքևում:

Պահապանները գնացին դեպի արևմտյան կամարը, որովհետև այնտեղից տաք էր գալիս, իսկ քարանձավում պաղ միջանցիկ քամիներ էին խաղում և, վերմակների մեջ փաթաթվելով, կուչ եկան պատերի տակ: Տարօրինակ տեսիլքներ էին հայտնվում հոբիթներին. նրանց թվում էր, որ իրենք անդառնալիորեն մոլորվել են սև միջանցքների լաբիրինթոսում և փորձելով դուրս գալ, հայտնվել են թշնամի խավարի անծայրածիր ծովում: Մորիայի մասին ամենասարսափելի լեգենդներն այնքան ահասարսուռ չէին, որքան իրականությունը: Բայց չէ՞ որ նրանց ոչ մի վատ բան չէր պատահել, և Գանդալֆը գտնում էր, որ իրենց բախտը բերել է...

— Այ քեզ թզուկներ... — քրթմնջում էր Սամը: — Շա՞տ էր պետք էս տեսակ անդունդ փորելը... Ո՞վ գիտե ինչքան թզուկ է աշխատել: Իսկ ինչի՞: Բա մթնում կապրե՞ն... Ուրեմն, դուրս է գալիս ոչ էլ ապրե՞լ են էստեղ...

— Ոնց թե չեն ապրել,— վիրավորվեց թզուկը: — Այստեղ Մորիական մեծ թագավորությունն էր: Ամեն տեղ վառ աստղեր էին փայլում, և Մորիան փառաբանված էր ողջ Միջերկրում՝ այդ մասին ասված է մեր ավանդություններում:

Ձիմլին թափով վրայից դեն նետեց վերմակը, ոտքի թռավ ու երգեցիկ արտասանեց՝ քարանձավի թնդուն արձագանքի նվագակցությամբ.

Դեռ զարթոնք չկար աշխարհիս վրա,
Երբ մեծ Դարինը՝ թզուկն առաջին,
Հեռու վանելով իր քունը վերջին,
Բարձրացավ, քայլեց թեթև ու ազատ,
Քնած ժայռերի թիկունքը հասավ,
Եվ լուսնի դեղին, աղոտ լույսի տակ
Տեսավ աշխարհը՝ անանուն ու նոր,
Տեսավ աշխարհը՝ նորելուկ ու տաք:

Նա հող ու ջրին անուններ տվեց,
Եվ գետի, լեռան, դաշտի ու ձորի,
Կիրճի ու լճի անունների մեջ
Մեծ լռությունը շունչ առավ, թևեց:
Բայց ահա ինչպես իրական երազ,

Ջրի հայելի տարածվեց անծայր,
Իսկ ջրի խորքից արտացոլվում էր
Երկնքի գահը՝ աստղերով պայծառ:
Եվ այգաբացը թագավոր օծեց
Այդ պատանյակին՝ ջրերի մոտ ջինջ,
Բայց նրա գահը ափին չէր արդեն,
Գահը շողում էր ջրերի միջից:
Եվ այդ ոսկեզօծ գահադահլիճում
Անմար լույսով էր շողում ամեն ջահ,
Ու չէին կարող թափանցել այնտեղ
Ոչ խավարը, ոչ մշուշները չար:

Ցոլցլուն լույս էր շուրջը ամենուր,
Ջահել լեռների լանջերի առջև,
Հնչում էր երգը միշտ ախորժալուր՝
Դոյակների մեջ լուսավոր ու ջերմ:
Եվ ժողովուրդը՝ Դարինի թզուկները,
Աշխատում էին անհոգ ու անահ,
Խոր ու անհատնում հանքերում բանում,
Մետաղ ու ալմաստ, մարմար են հանում:

Թզուկներն անտեղյակ, չէին հասկանում,
Թե ինչ չար ուժ է ընդերքում ննջում,
Ձենք էին կռում, պաշարներ անում,
Ու այնտեղ երգն էր անվտանգ հնչում:
Թանձր խավարը բարձրացավ մեկեն
Ջահել լեռների լանջերի առջև,
Եվ նրանց թանձր ստվերների տակ
Վաղուց է շքեղ պալատը ննջել:
Բայց ջրի խորքում հանգչում էր արդեն
Աստղազարդ թագը երկնակամարի,
Կարծես սպասում էր, թե երբ կարթնանա
Առաջին արքան՝ արդար ու բարի

— Չտեսնվա՛ծ է,— հիացած բացականչեց Սամը: — Ես պետք է սովորեմ ձեր ասքը: Բայց դրանից հետո այստեղի մթությունն ավելի սև է թվում, քան առաջ: Իսկ հետաքրքիր է, ալմաստներ մնացե՞լ են էստեղ...

Ջիմլին լռեց: Ասքը արտասանելուց հետո նա խոսակցությանը չէր ուզում մասնակցել:

— Ալմաստնե՞ր,— հոբիթին հարցրեց Գանդալֆը: — Ոչ, այստեղ թանկագին իրեր չեն մնացել, համենայն դեպս, գոնե բնակելի քարանձավներում. օրքերը վաղուց դրանք թալանել են: Բայց նույնիսկ ամենաագահ օրքերն այժմ չեն իջնում ստորին հարկաշարքեր, հանքահորերն ու նկուղները, քանի որ այստեղ տիրում է հինավուրց սարսափը:

— Իսկ Բալինն ինչո՞ւ վերադարձավ Մորիա,— հրաշագործին հարցրեց ուշիմ Սամը:

— Առասպելական Միթրիլի համար,— պատասխանեց Գանդալֆը: — Ոչ թե երկաթը՝ թզուկների աշխատանքային հումքը, ոչ էլ ոսկին ու ալմաստը՝ նրանց սիրելի խաղալիքները, թզուկներին փառք ու պատիվ բերեցին, այլ զտված կամ մորիական արծաթը, որն էլֆերը միթրիլ էին անվանում: Այն ժամանակներում մորիական արծաթը ոսկուց մի տասը անգամ թանկ արժեր, իսկ հիմա իսկապես անգին է դարձել, որովհետև պարզապես չկա Միջերկրում: Մորիական արծաթի շերտերը գտնվում են ամենախորունկ հարկաշարքերում, սարերի տակով ձգվում են մինչև Բոսոր Կոտոշ և այնտեղից իջնում անմատչելի անդունդներ: Միթրիլը հարստացրեց ու փառաբանեց թզուկներին, սակայն հենց դրանից էլ սկսվեցին նրանց բոլոր դժբախտությունները, քանի որ մետաղի հետևից ընկած՝ նրանք փորում էին երկրի ընդերքը, մինչև որ արթնացրին ընդերքի սարսափը կամ Դարինի մեծ չարքը: Երբ թզուկները Մորիայից փախան, միթրիլի հանույթին տիրեցին օրքերը, իսկ հետո, չիմանալով մետաղի բոլոր յուրահատկությունները, դրանով տուրք էին վճարում Սև Տիրակալին:

Միթրիլ... Միջերկրի ժողովուրդների երազանքը. կռելի, ինչպես պղինձը, ամուր, ինչպես պողպատը, հղկվելուց հետո փայլուն, ինչպես հայելին, երբեք չխամրող ու զարմանալի թեթև: Էլֆերը միթրիլը շատ բարձր էին գնահատում, նրանց հինավուրց խորհրդանշանը՝ Ֆեանորի աստղը, որի պատկերը տեսաք դարպասի վրա, պատրաստված է մորիական արծաթից՝ միթրիլից: Իմիջայլոց, Թորինը Բիլբոյին միթրիլից օղազրահ է նվիրել: Հետաքրքիր է, ո՞ւր է: Հավանաբար դրված է որևէ սնդուկում...

— Միթրիլե օղազրա՞հ,— զարմացավ Ջիմլին: — Այ քեզ իսկապե՜ս թագավորական ընծա...

— Իրավացի ես,— հանգիստ հաստատեց Գանդալֆը: — Այդ օղազրահն ավելի արժե, քան ողջ Հոբիթստանն իր բնակիչներով:

Ֆրոդոն ձեռքը մտցրեց վերնաշապկի տակ և շոյեց օղազրահի սառը օղերը: Նա իրեն զսպել էր և ուղեկիցներին ոչինչ չէր ասել, բայց Գանդալֆի խոսքերից շշմեց: Ուրեմն իր օղազրահի գինը վճարելու համար չէր բավականացնի Հոբիթստանի ողջ հարստությո՞ւնը... Բիլբոն գիտե՞ր արդյոք այդ մասին: Երևի հաստատ գիտեր: Այո, նա իրեն թագավորական ընծա է նվիրել: Բայց Բիլբոյին ու հեռավոր Հոբիթստանը հիշելով, Ֆրոդոն հիշեց այն օրերը, երբ ինքն իր համար ապրում էր Զառիթափի Պարկուտում ու ո՛չ գիտեր, ո՛չ տեսել, ո՛չ լսել էր Մորիայի, միթրիլի, իսկ գլխավորը՝ Մատանու մասին: Ինչպե՜ս կուզենար անցյալը հետ բերել...

Շուտով հոգնած ճամփորդները քնեցին, և Ֆրոդոն մեն-մենակ մնաց սև մթության հետ՝ նա ժամապահ էր:

Նա նստել էր արևմտյան կամարին սեղմված և ժամանակ առ ժամանակ ակամա նայում էր միջանցքի ներսը: Նրան թվում էր, որ այդ միջանցքով, Մորիայի խորքերից բարձրանալով, քարանձավ է սողոսկում քարացնող վախը. նրա ճակատը պատվում էր սառը քրտինքով, և ճակատը մաքրելիս Ֆրոդոն սարսափով զգաց, որ իր ձեռքը սառցակտոր է հիշեցնում: Ժամապահության երկու ժամվա ընթացքում, որ նրան տարիներ թվացին, ուշադիր լսում էր մեռյալ լռությունը, սակայն բացարձակապես ոչինչ, նույնիսկ բոբիկ ոտքերի քստքստոց չլսեց:

Միաժամանակ նինջը հաղթում էր նրան: Հերթապահության վերջում, երբ նորից միջանցք նայեց, նրան թվաց, որ քարանձավին են մոտենում երկու հազիվ նշմարելի առկայծող կրակներ: Նա սարսռաց, աչքերը փակեց, ու գլուխը թափահարեց: Հետո մի անգամ էլ նայեց միջանցք: Ոչ մի առկայծող կրակ այնտեղ չկար: «Խայտառակություն,— հանդիմանանքով ասաց նա ինքն իրեն,— երևի ուղղակի քնել եմ»:

Նա վեր կացավ ու այլևս չնստեց, մինչև նրան փոխարինեց Լեգոլասը:

Վերմակին հասնելով, նա անմիջապես քնեց և նորից նույն երազը տեսավ. իրեն թվում էր, որ ինքը քայլեր է լսում՝ բոբիկ ներբանների զգուշավոր քստքստոց, և տեսնում երկու առկայծող աչք, ու սրանք մոտենում են... Նա սարսափահար վեր թռավ՝ մոխրագույն լույսը լցվել էր քարանձավը, իսկ նրա ուղեկիցները ցածր ձայնով խոսում էին իրար հետ:

— Բարի լույս,— նրան ասաց Գանդալֆը: — Քանզի աշխարհի վրա լուսավառվում է առավոտը և մեզ բարի լույս է բերում: Մենք հատել ենք Մորիական Թագավորությունը և մինչև երեկո հարկավոր է իջնել դեպի դարպասը, որ վերջապես դուրս գանք Սևագետքի հովիտը:

— Այո, լավ կլիներ,— քրթմնջաց Ջիմլին: — Խավարի մեջ թաղված մեծ Մորիան ուզածդ քաջին կզարզանդեցնի: Եվ երևում է, Բալինը Մորիա չի մտել, թե չէ որևէ հետք կթողներ, չէ՞...

Գանդալֆը որոշեց ցերեկային հանգիստ չտալ:

— Բոլորիս հանգիստ է պետք,— ասաց նա Պահապաններին,— բայց մինչև Հայելու լիճը կեսօրվա ճանապարհ է: Եվ որքան հասկանում եմ, մեզանից ոչ ոք չի ուզում Մորիայում մի գիշեր ևս անցկացնել:

— Ինչը ճիշտ է՝ ճիշտ է,— մրթմրթաց Բորոմիրը: — Ո՞ւր ենք գնալու, արևե՞լք:

— Առայժմ չգիտեմ,— պատասխանեց Գանդալֆը: — Ըստ իս, մենք դարպասից բարձր ու հյուսիս ենք գտնվում, բայց այդ ճանապարհը գտնելն այնքան էլ հեշտ չէ: Սկզբում մեզ հարկավոր է հանգիստ շուրջն ուսումնասիրել: Հյուսիսային կամարն ամենալուսավորն է, եկեք նայենք հյուսիսային միջանցքը: Եթե կարողանանք հասնել մինչև պատուհան, ինձ

պարզ կդառնա, թե որտեղ ենք գտնվում, և ես կորոշեմ ուր գնալ: Բայց, ցավոք սրտի, մորիական քարանձավներում պատուհանները, որպես օրենք, շատ բարձր տեղերում են:

Պահապաններն արագ հավաքեցին ճամբարը, և Գանդալֆը նրանց տարավ հյուսիսային միջանցք: Միջանցքը աջից էր լուսավորվում: Հարյուր-հարյուր հիսուն քայլ անցնելով, նրանք տեսան կիսաբաց դուռ, որի միջով լույս էր ընկնում միջանցք: Դռան հետևում քառակուսի սենյակ հայտնաբերվեց, որի պատուհանը արևելյան պատի մեջ էր բացված: Մթին սովորած ճամփորդները, ակամա աչքները փակելով, կանգ առան շեմին: Հետո զգուշորեն մտան սենյակ: Մոխրասև փոշու գորգով ծածկված ինչ-որ փխրուն բեկորներ տրորելով, ճամփորդները մոտեցան երեք կամ չորս թիզ բարձրությամբ մի քառակուսի քարի, որ այնպես էր տեղադրված սենյակի կենտրոնում, որ առաստաղից կպած փոքրիկ պատուհանից ընկնող լույսը լուսավորում էր սպիտակ մարմարե սալը, որը դրված էր մեծ քարի վրա:

— Չլինի՞ գերեզման ենք գտել,— քրթմնջաց Ֆրոդոն և սոսկալի նախազգացումով կռացավ սալի վրա: Արագորեն նրան մոտեցավ Գանդալֆը:

Սալը ծածկված էր տարօրինակ գաղտնագրերով՝ ռուներով:

— Դա հին մորիերեն լեզվով է,— սալին նայելով, խոսեց հրաշագործը և ավելացրեց. — Սա շիրմաքար է և վրան փորագրված է.

ԲԱԼԻՆ, ՈՐԴԻ ՖՈՒՆԴԻՆԻ, ԹԱԳԱՎՈՐ ՄՈՐԻԱՅԻ

— Ուրեմն Բալինը նահատակվել է,— տխուր ասաց Ֆրոդոն:

Ջիմլին կնգուղը քաշեց աչքերին:

Գլուխ հինգերորդ. Մորիայի կամուրջը

Պահապանները լուռ կանգնած էին գերեզմանի մոտ: Ֆրոդոն վշտալի հիշեց Բալինին, նրա երկարամյա բարեկամությունը Բիլբոյի հետ և թզուկի վաղեմի այցը Հոբիթստան: Այստեղ՝ Մորիայի փոշոտ դամբարանի մոտ, այն հեռավոր ժամանակների խաղաղ կյանքը մի մոռացված կախարդական հեքիաթ էր թվում:

Վերջապես, վիատ կարկամածությունը հաղթահարելով, ճամփորդները ցրվեցին փոշոտ սենյակում՝ հույս ունենալով գտնել որևէ հետք, որը կբացատրեր Բալինի ու նրա խիզախ ջոկատի ճակատագիրը: Պատուհանի տակ, միջանցքի դիմաց, նրանք մի դուռ էլ տեսան: Այժմ, ցերեկային լույսին վարժվելով, նկատեցին, որ իրենց ոտքերի տակ շարունակ ճռճռացող այդ փխրուն բեկորները սպանված ռազմիկների ոսկորներն են, ջարդված սաղավարտներ, ճեղքված վահաններ ու արջնած շեղբերով ծուռ թրեր՝ լեռնային օրքերի սիրած զենքը:

Պատերի մեջ եղած խարաններում փակերը կոտրված կաղնե սնդուկներ կային, որոնք գոտևորված էին ժանգոտված երկաթե բարակ շերտերով: Դրանցից մեկի մոտ, կոտրված կափարիչի տակ Գանդալֆը մի պատռված գիրք տեսավ: Գրքի ստորին ծայրը վառված էր, այն ծակոտված էր թրերով կամ նետերով և ծածկված գորշ բծերով՝ արյունով: Գանդալֆը խնամքով բարձրացրեց գիրքը և զգուշությամբ դրեց Բալինի գերեզմանին: Ֆրոդոն և Ջիմլին մոտեցան հրաշագործին ու նայում էին, թե ինչպես է նա թերթում զանազան գրերով՝ էլֆերեն դեյլերեն և մորիերեն լեզվով խիտ գրված էջերը: Էջերը կոշտ էին ու փշրվող՝ ոսկրի բարակ, նուրբ շերտի նման:

— Որքան ես հասկանում եմ,— ասաց Գանդալֆը,— սա Բալինի արշավանքի տարեգրությունն է: Այն սկսված է երեսուն տարի առաջ, Բալինի ջոկատի Սևագետք մտնելու օրից: Տեսնո՞ւմ եք, այստեղ գրված է 1/3: Իմ կարծիքով, դա նշանակում է առաջին տարի, էջ երեք: Գրքի առաջին երկու էջը չկա: Եվ ահա թե ինչ հաջողվեց ինձ ընթերցել.

Մենք ոչնչացրինք օրքերի պահակներին դարպասի մոտ և պահ... շարունակությունը կարդալ հնարավոր չէ, էջը արյունոտված է, բայց այստեղ ամեն ինչ պարզ է. *Պահականոցում... Սակայն պահակները հասցրին տագնապ բարձրացնել, և բազմաթիվ օրքերի մենք...* երևի *սպանեցինք... Հայելու լճի ճակատամարտում Ֆլոյնը թշնամիների մի ամբողջ ջոկատ կոտորեց, բայց ինքն էլ մահացու վիրավորվեց թշնամու նետով...* Երկու տող չկարողացա կարդալ: Շարունակության մեջ ասվում է. *Օրքերին դուրս վռնդեցինք հյուսիսային թևի քսանմեկերորդ սրահից: Այստեղ...* չի հասկացվում, բայց հիշվում

է *հանքահոր* բառը: Եվ վերջապես... *Բալինն իր խորհրդականների հետ տեղավորվեց Տարեգրության սրահում...*

— Հենց սա է Տարեգրության սրահը,— նայելով սնդուկներին, նկատեց Ջիմլին:

— Շարունակության մեջ մի քանի էջ արյունոտված են, ես հասկացա միայն *ոսկի, Դարինի տապարը և սաղավարտ* բառերը: Հետո... *Բալինն իրեն հայտարարեց Մորիական կայսրության կայսր:* Այստեղ վերջանում է առաջին գրառումը և երեք աստղից հետո այլ ձեռագրով գրված է. *Մենք գտանք իսկական արծաթ...* Նորից ոչինչ չի հասկացվում, բացի նախավերջին տողից... *Օյնը ուղևորվեց երրորդ խորքային հարկաշարքի զինապահեստ...* Նորից արյան կաթիլ... *արևմուտք...* և նիզակով խոցած անցքից հետո՝ *դեպի էլֆական դարպասը:*

Գանդալֆը լուռ թերթում էր տարեգրությունը:

— Մի քանի էջ խիստ վնասված են, այս լույսի տակ դրանք չեն կարդացվի,— երկար լռությունից հետո ասաց նա ճամփորդներին,— բայց երևում է, որ սրանք հապճեպ են գրվել և ամենայն հավանականությամբ տարբեր տարեգիրների կողմից: Հետո մի քանի էջ պոկված է և նշված է V թվանշանը, արշավի սկզբից հինգերորդ տարին: V/1, V2, V/3, V/4... Ոչ, ոչինչ չեմ կարողանում հասկանալ: Իսկ այստե՞ղ... Ահա, սա արդեն ընթեռնելի ձեռագիր է, բայց գրառումը, չգիտես ինչու, էլֆերեն է:

Ջիմլին կիպ մոտեցավ շիրմաքարին և Գանդալֆի թևի տակից նայեց տարեգրությանը:

— Սա Օրիի ձեռագիրն է,— հայտարարեց նա,— որքան գիտեմ, կարևոր հաղորդումները էլֆերեն գրելու սովորություն ուներ:

— Վախենում եմ, այդ կարևոր հաղորդումը շատ ու շատ ողբալի կլինի,— ասաց Գանդալֆը տարեգրությունը զննելով: — Առաջին հստակ բառն այստեղ՝ *ողբ*: Հետո նորից դժվար է, հետո՝ ... *ոեկ*: Ըստ երևույթին՝ երեկ: Այո, այդպես էլ կա, լսեցեք... *Երեկ, նոյեմբերի 10-ին, զոհվեց Մորիայի թագավոր Բալինը: Նա իջել էր Հայելու լճի մոտ և նրան նետահարեց ժայռերի մեջ թաքնված օրքը: Թագավորական ջոկատի ռազմիկները ոչնչացրին օրքին, սակայն թշնամիների հսկայական ջոկատը...* Էջի վերջը պատռված է, իսկ հաջորդ էջն սկսվում է. ... *Արևելքից Արծաթաջուր գետով*... Այստեղ նորից չորացած արյան կաթիլ է և հետո՝ ... *հասցրին դարպասը փակել*... հետո պատռված է երևի նետից, բացված, և մի քանի բառ՝ ... *Դարպասը կպաշտպանեինք, եթե ոչ*... Իսկ ավելի ներքև էջը ածխացած է, այնպես որ մնացել է միայն մի բառ *հրեշավոր*: Ափսոս էր Բալինը, նա խիզախ մարտիկ էր և ժամանակի ընթացքում մեծ թագավոր կդառնար: Ընդամենը հինգ տարի տևեց նրա թագավորելը: Այստեղ, ինչպես տեսնում եք, տարեգրությունն ընդհատվում է, իսկ պոկված էջերը փնտրելու ժամանակ չկա, և մենք, երևի, երբեք չենք իմանա, թե ինչ պատահեց Բալինի ջոկատին:

— Այո, սա շատ մռայլ տարեգրություն է,— գիրքը թերթելով, եզրակացրեց հրաշագործը: — Ջոկատի ռազմիկներն անկասկած նույնպես զոհվել են տանջալի մահով... Լսեցեք... *Մենք նահանջելու տեղ չունենք, տեղ չկա... Նրանք գրավել են կամուրջն ու պահականոցը: Լոնին, Ֆրարն ու Նալին ընկան...* Այստեղ վեց թե յոթ էջ արյունից սոսնձվել են իրար, իսկ այնուհետև խոսքը գնում է Արևմտյան դարպասի մասին: *Բարապան գետը հեղեղել է հովիտը: Ջուրը բարձրացել է ընդհուպ մինչև դարպասը: Ընդերքի պահակը Օինին քաշեց ջուրը: Նահանջելու տեղ չունենք: Տեղ չկա*... Եվ վերջ, էջի ներքևի ծայրը պոկված է: — Հրաշագործը մտածկոտ գլուխն իջեցրեց: — Ահա, ահա ևս մեկ էջ,— դեպի խորանը քայլելով խոսեց նա և հատակից բարձրացրեց ճմրթված թերթիկը,— այն մինչև կեսն էր գրված: Երևում է սրանով էլ հենց ավարտվել է տարեգիրքը: Լսեք... *Մենք նահանջելու տեղ չունենք, տեղ չկա... Նրանք ընդերքից մահն են կոչել... Ինչ-որ տեղ խորքերում այնպիսի դղրդյուն է, որ մեկ էլ տեսար գետինն էլ փուլ եկավ: Նրանք մոտենում են*... Սրանք տարեգրության վերջին էջերն են... Այո, կուզենայի հասկանալ, ինչ մասին է խոսում վերջին տարեգիրը: — Հրաշագործը նորից մտքերի մեջ ընկավ և լռեց:

— Մենք նահանջելու տեղ չունենք,— քրթմնջաց Ջիմլին:

Եվ հանկարծ Պահապանների գիտակցությանը հստակորեն հասավ, որ իրենք մտել են դամբարան: Բոլորը, նույնիսկ Գանդալֆը, շփոթվեցին:

— Նրանք երկու ճակատով են մարտնչել,— լարված լռությունը խախտեց Գանդալֆը,— պաշտպանել են և՛ Արևելյան, և՛ Արևմտյան Դարպասները: Դե, Մորիայում էլ նրանց թշնամին

էր հսկում... Շատ բան կտայի իմանալու համար, թե ինչ թշնամի էր դա: Հերոսական, բայց խենթ փորձն անհաջող անցավ: Բալինը և նրա ջոկատը նահատակվել են... Իսկ մենք հիմա պետք է այստեղից հեռանանք: Ձիմլի, վերցրու Բալինի տարեգրությունը, այն հարկավոր է հանձնել Դաինին, չնայած դա շատ կվշտացնի նրան: Խաղաղ քուն քեզ, խիզախ Բալին, Մորիան ապաստանել է քեզ հավիտյանս... Գնացինք, մեզ դժվար ճանապարհ է սպասվում:

— Իսկ հիմա ո՞ւր,— հարցրեց Բորոմիրը:

— Սկզբում դեպի հետ,— պատասխանեց Գանդալֆը: Բայց մենք ժամանակն իզուր չենք կորցրել: Այս դամբարանը նախկինում տարեգրության շքասրահն էր, և այժմ ես գիտեմ, թե մենք որտեղ ենք գտնվում. հյուսիսային թևի յոթերորդ հարկաշարքում: Իսկ դարպասն առաջին հարկաշարքում է գտնվում, հարավային թևում: Հիմա մենք կվերադառնանք գմբեթավոր դահլիճ՝ թզուկների մոտ այն կոչվում է քսանմեկերորդ շքասրահ, արևելյան միջանցքով կիջնենք ներքև և թեքվելով հարավ, դուրս կգանք դարպասի մոտ: Ճանապարհ ընկանք... — Գանդալֆն առաջ անցավ...

... Եվ հենց այդ պահին Մորիայի խորքերից նրանց հասավ մի ճարճատուն որոտ՝ ռ՛-ռ՛-ռ՛-ռ՛-ո՛-գ, և նրանք ոտքերի տակ զգացին քարե հատակի դողը: Ճամփորդներն առանց պայմանավորվելու նետվեցին դեպի դուռը: Ռ-ռ-ռ-ռ-ո-գ դղրդացող որոտի ալիքը նորից գլորվեց Մորիայի քարանձավներում և հետո նորից, ու կրկին նորից՝ ռ-ռ-ռ-ռ-գ, ռ-ռ-ռ-ռ-ո-գ, ռ-ռ-ռ-ռ-գ, կարծես լայնարձակ Մորիայի ընդերքը ինչ-որ մեկը դարձրել էր մի հսկայական թմբուկ: Եվ ասես ի պատասխան դղրդոցին՝ ոչ հեռվում փչեց եղջերափողը, և Պահապանները լսեցին ծանր դոփյուն:

— Օրքե՛րն են,— բացականչեց Ձիմլին:

— Նրանք մոտենո՛ւմ են,— գոռաց Լեգոլասը:

— Ծուղա՛կ,— խռպոտ խոսեց հրաշագործը: — Մեզ բռնեցին, ինչպես մի ժամանակ Բալինի ջոկատի ռազմիկներին: Բայց նրանք առանց ինձ էին... Տեսնենք...

— Ռ-ռ-ռ-ռ-ո-գ, ռ-ռ-ռ-ռ-ո-գ,— թնդում էր Մորիան, և սենյակի պատերը ցնցվում էին:

— Աշխատեք արևելյան դու՛ռը կողպել,— թուրը մերկացնելով ճչաց Արագորնը: — Հարկավոր է դուրս գալ գմբեթավոր սրահ... Բորոմիրի հետ մենք կգնանք առջևից:

— Մի՛ շտապեք,— Արագորնին կասեցրեց Գանդալֆը: — Առայժմ մեզ հարկավոր չէ կռիվ սկսել: Եկեք արևելյան դռնով նահանջենք:

Նորից զիլ հնչեց փողը: Միաձույլ դոփյունն արագ մոտենում էր: Բոլոր Պահապանները սրերը հանեցին: Մոլեգինը երկնագույն լույս էր արձակում: Ծիածանագույն առկայծում էր փոքրիկ Ձարդողը: Բորոմիրը ծածկեց արևմտյան դուռը:

— Սպասիր,— Գանդալֆը մոտեցավ Բորոմիրին, դուռը կիսաբաց արեց ու բարձր գոռաց. — Ո՞վ է խանգարում Բալինի, Մորիական կայսրության տիրակալի հանգիստը...

Ի պատասխան հնչեցին կտրուկ հրամաններ և բարձր քրքիջ:

— Ռ-ռ-ռ-ռ-ո-գ, ռ-ռ-ռ-ռ-ո-գ,— թնդում էր խորքից:

Գանդալֆը քիչ կռացավ, դռնից դուրս նայեց, և մի ակնթարթ նրա գավազանը կուրացուցիչ բռնկվեց: Մինչև օրքերը կհասցնեին ուշքի գալ, հրաշագործն արդեն փակեց դուռը, և ոչ մի նետ նրան չդիպավ:

— Այնտեղ ոչ միայն օրքեր են,— ասաց նա ճամփորդներին: — Նրանց հետ են նաև Մորդորի սև օրքերը, որոնք առավել վտանգավոր են: Եվ մի վիթխարի քարանձավային թրոլ, իսկ գուցե և մի քանի, ես չզանազանեցի: Գմբեթավոր դահլիճի մեր ճանապարհը փակ է:

— Իմ կարծիքով, արևելքինն էլ է փակ,— մռայլ գուշակեց Բորոմիրը:

— Այստեղ առայժմ խաղաղ է,— առարկեց արևելյան դռանը մոտեցած Արագորնը: — Դռան հետևում ներքև իջնող սանդուղք կա, այնպես որ գմբեթավոր դահլիճը մեզ կարծես թե պետք էլ չէ, բայց ինձ թվում է, որ նահանջել, չիմանալով թե ուր, շատ վտանգավոր է: Մենք նույնիսկ դուռը փակել չենք կարող, սողնակն այնտեղ կոտրված է և դուռը դեպի ներս է բացվում: Սկզբում հարկավոր է թշնամիներին կանգնեցնել... Նրանք չեն մոռանա տարեգրության

շքասրահը,— հետ նայելով, ատամների արանքից նետեց նա,— իսկ նրանցից ոմանք հավիտյան կմնան այստեղ...

Միջանցքում ծանր քայլեր լսվեցին: Բորոմիրը շտապ դռան տակ մտցրեց հինգ կամ վեց կոտրված սրեր ու դրանք սեպերի պես խրեց: Քայլերը լռեցին, ու միջանցքից քարե դռան վրա մի խորտակիչ հարված իջավ, դուռը դիմացավ, բայց թեթև ցնցվեց. հաջորդ հարվածից մի փոքր բացվեց, շեղբ-սեպերը հետ-հետ գնալով, հատակին խոր ակոսներ գծեցին: Երրորդ հարվածն իջավ դռան վրա և արանքից կանաչասև թեփուկներով ծածկված մի հսկայական ձեռք ներս մտավ: Հետո դուռը մի անգամ էլ ցնցվեց, և Պահապանները տեսան սևականաչ մի վիթխարի ոտնաթաթ, որն առանց մատների էր: Սեպերը ճռռացնելով՝ դուռը դանդաղ բացվում էր:

Բորոմիրը սրով հասցրեց ձեռքին, բայց սուրը զրնգալով հետ թռավ (գոնդորցու դաստակը քիչ էր մնում կտրվեր) ու գնաց ընկավ քար կտրած Ֆրոդոյի ոտքերի տակ:

Իսկ Ֆրոդոն իր համար էլ անսպասելի մոլեգին ճչաց՝ «Զարկ», և նետվեց դեպի դուռն ու ամբողջ թափով Զարդողը խրեց թեփուկապատ ոտնաթաթի մեջ: Պահապաններին խլացրեց սուր ոռնոցը, և հսկայական ոտնաթաթը քաշվեց դռան մյուս կողմը՝ Ֆրոդոն Զարդողը հազիվ պահեց:

Զարդողից սալահատակին մի քանի կաթիլ սև արյուն կաթաց: Բորոմիրը նորից փակեց դուռը և դուրս թռած սեպերը խրեց ճեղքերը:

— Ա՛յ քեզ Հոբիթստան... — բացականչեց Արագորնը: — Հոբիթները, ինչպես տեսնում եմ, անխնա են ջարդում: Սքանչելի դաշույն ունես, բարեկամս...

Իսկ դուռն արդեն նորից էր ցնցվում հարվածներից: Եթե այն փայտից լիներ, ապա վաղուց տաշեղների վերածված կլիներ՝ հարձակվողները հարվածում էին մահակներով կամ մուրճերով: Հանկարծ նորից բացվեց: Օդը սղոցեցին նետերի սուլոցները, սակայն դուռը լրիվ չէր բացված, և նետերը, հյուսիսային պատին խփվելով, հազիվ լսելի շրշյունով թափվում էին գետնին: Շատ մոտիկ հնչեց եղջերափողը, և սկսեցին սենյակ խցկվել օրքերը: Ճեղքը նեղ էր, սեպը պահում էր դուռը, և թշնամիները մեկ-մեկ էին անցնում ներս:

Պահապանները չհասցրին թշնամիներին հաշվել՝ մարտը թեժ էր ու կատաղի, սակայն կարճատև: Օրքերը, որոնց համար այդպիսի դիմադրությունն անսպասելի էր, իրար խանգարելով, դոփում էին տեղում: Լեգոլասը երկու օրք նետահարեց: Բալինի գերեզմանի վրա թռած օրքի ոտքերը կտրեց վրա հասած Ջիմլին, երեք օրք Բորոմիրն սպանեց, երկուսին՝ Արագորնը, մեկին՝ Գանդալֆը: Օրքերը հետ-հետ գնացին դեպի դուռն ու ծվծվան ոռնոցներով փախան միջանցք:

Թշնամիները վիրավորել էին միայն Սամին, այն էլ, բարեբախտաբար, թեթև: Նա կարողացել էր ժամանակին հետ թռչել, և օրքի սուրը քերծել էր նրա ուսը, բայց դրանից հետո Սամը, հարձակվելով նրա վրա, խորունկ խոցել էր դամբարանից վերցրած սրով: Սամի շագանակագույն, նեղացած աչքերում մոլեգնում էր կռվատենչ կրակը: Ա՛յ թե կզարմանային նրա ծնողները, եթե հիմա տեսնեին իրենց որդուն:

— Իսկ այժմ նահանջում ենք,— կարգադրեց Գանդալֆը,— քանի դեռ նրանք թրոլին նորից չեն բերել:

Սակայն Պահապանները չհասցրին նահանջել. սենյակ խցկվեց թշնամիների առաջնորդ, Արագորնից քիչ ցածրահասակ մի հսկա օրք, թուխ, լայն ու տափակ դեմքով, ածուխի պես վառվող մանր աչքերով, կճատ քթով ու նեղ ճակատով: Նրա սև օղազրահից շապիկը հասնում էր մինչև ոտնամանների ճիտքերը, գլխին՝ արջնած ու արծաթով դրվագված սաղավարտ: Նա ձախ ձեռքում վահան ուներ, իսկ աջ ձեռքում՝ երկար ու ծանր նիզակ: Մյուս օրքերը հավաքվել էին դռան մոտ, բայց չէին շտապում սենյակ մտնել:

Առաջնորդ օրքը նետվեց դեպի Ֆրոդոն և, Արագորնի սրից վահանով պատսպարվելով, ճարպկորեն անցնելով Բորոմիրի սրի տակից, ահռելի ուժով նետեց նիզակը, որ տարաբախտ Ֆրոդոյին մեխի պատին: Իհարկե հոբիթը հասցրեց շրջվել ու նիզակը մտավ ոչ թե նրա կուծքը, այլ միթրիլե օղազրահի վրայով սահելով, մտավ կողի մեջ: Սամը մի հարվածով կտրեց թշնամու նիզակը, և Ֆրոդոն անշնչացած սահեց պատով ցած, իսկ օրքն արդեն հափռել էր սև յաթաղանը և ուզում էր դրանով սպանել անպաշտպան Ֆրոդոյին, բայց այդ վայրկյանին ծանր Անդրիլը փայլատակելով իջավ թշնամու սաղավարտին, և նա ջախջախված գլխով ընկավ:

Սաղավարտը նրան չփրկեց Վերածնված Կայծակից: Բորոմիրն ու Արագորնը մղվեցին դեպի դուռը, բայց մնացած օրքերը հապտապ նահանջեցին:

— Ռ՛-ռ՛-ռ՛-ռ՛-ռ-ռ,— ծանր հևաց Մորիան:

— Արա՛գ,— տիրական հրամայեց Գանդալֆը: — Բոլորը դեպի սանդուղքը, այլապես ուշ կլինի:

Արագորնը գրկեց Ֆրոդոյին, սենյակից դուրս հրեց Մերիին ու Փինին և արագորեն անցավ կիսաբաց դռնով: Նրա հետևից դուրս եկան մնացած Պահապանները: Վերջինը սանդուղք դուրս եկավ Լեգոլասը՝ իր հետևից քարշ տալով համառող Ջիմլիին. թզուկը, ասես վտանգը մոռացած, ոչ մի կերպ չէր ուզում գերեզմանից հեռանալ: Բորոմիրը որքան ուժ ուներ դուռը քաշեց, և այն դանդաղ, ճռռալով ծածկվեց, սակայն կողպելու համար ոչինչ չկար:

— Վիրավորված չեմ... Ինքս կգնամ... — շնչահեղձ լինելով, ասաց Ֆրոդոն Արագորնին:

Վերջինս քիչ մնաց հոբիթին գցեր ձեռքից:

— Ուրեմն դու կենդանի՞ ես,— զարմացավ նա:

— Մեռածները չեն խոսում,— փնթփնթաց Գանդալֆը: — Բայց մենք հիմա հրաշքների վրա զարմանալու ժամանակ չունենք: Իջեք և սպասեք ինձ ներքևում, իսկ ես շուտով կհայտնվեմ՝ գնացեք: Դարպասը մոտավորապես երկու լիգ հարավ է: Տեսեք հա՛, առաջին հարկաշարքից ներքև չիջնեք:

— Ես էլ կմնամ,— ասաց Արագորնը:

— Իջիր,— տիրական հրամայեց Գանդալֆը: — Այստեղ սրով ոչինչ չես անի:

Սանդուղքների մոտ պատուհան-հորեր չկային, և նրանք իջնում էին լիակատար մթության մեջ: Ֆրոդոն մեքենայորեն հաշվում էր աստիճանները՝ դրանք ութսունհինգն էին: Հետո աստիճանները վերջացան: Ճամփորդները գլուխները բարձրացրեցին վերև, բայց միայն գավազանի կրակը տեսան: Հավանաբար թշնամիները դեռ ուշքի չէին եկել, և հրաշագործն առաջվա պես կանգնած էր դռան մոտ: Ֆրոդոն դժվարությամբ շնչեց՝ խորը շնչել չէր կարողանում: Նա թուլացած հենվեց Սամի վրա, որը գրկեց տիրոջ ուսերը: Հանկարծակի լսվեց Գանդալֆի ձայնը, բայց Պահապանները խոսքերը զանազանել չկարողացան՝ թնդուն արձագանքը դրանք աղավաղում էր: Խուլ թնդաց ստորգետնյա որոտը, և ճամփորդների ոտքերի տակ հատակը երերաց: Հանկարծ հրաշագործի գավազանը կուրացուցիչ բռնկվեց, մի վայրկյանով ջնջեց մութը և հանգավ: Ռ-ռ-ռ-ռ-ռ-գ՝ հաղթականորեն որոտաց մութը, իսկ հետո ահարկու թնդունը ճայթեց ուղիղ նրանց գլխավերևում: Ռ-ռ-ռ-ռ-ռ-գ, Ռ-ռ-ռ-ռ-ռ-գ, Ռ-ռ-ռ-ռ-ռ-գ և լռեց: Սանդուղքով թավագլոր ցած նետվեց Գանդալֆը:

— Գնացի՛նք,— ոտքի կանգնելով գոռաց նա: — Սարսափազդու հակառակորդ դեմս ելավ, հազիվ դիմացա: Շտապեք, արագ: Սկզբում ստիպված կլինենք անլույս գնալ, ես ուժ չունեմ, որ գավազանը վառեմ: Ջիմլին ինձ հետ կգա, առջևից: Մեզնից ոչ մի քայլ հետ չմնաք: Առա՛ջ..

Գանդալֆի բացատրություններից ոչինչ չհասկանալով, իսկ նրան հարցուփորձ անել ոչ ոք չէր համարձակվում, Պահապանները հնազանդորեն հետևեցին նրան: Ռ-ռ-ռ-ռ-ռ-գ, ռ-ռ-ռ-ռ-ռ՛-գ՝ թնդում էր հեռվում. դղրդյունն այժմ խլացած էր թվում, սակայն լսվում էր ոչ թե ներքևից, այլ ասես գլորվում էր փախստականների հետևից: Հետապնդման ուրիշ ոչ մի նշան չկար՝ շտապող ոտնաձայն, բարձր ոռնոց կամ հատու հրամաններ ճամփորդները չէին լսում: Գանդալֆը քայլում էր ոչ մի կողմ չթեքվելով, թեպետ նրանց հանդիպում էին հատող սրահներ. միջանցքը, որով հիմա նրանք գնում էին, տանում էր դեպի հարկավոր՝ Արևելյան Դարպասի կողմը: Երբեմն նրանց հանդիպում էին գիրթ սանդուղքներ, և հրաշագործը, ներքև չգլորվելու նպատակով, մոգական գավազանով թփթփացնում էր հատակին՝ սովորաբար այդպես կույրերն են քայլում, իսկ գավազանը նա դեռևս վառել չէր կարողանում: Մեկ ժամում նրանք հաղթահարեցին մեկ լիգից ավելի և մի քանի անգամ իջան սանդուղքներով. շուրջը անծայր ու անծագ մթություն էր, բայց ամեն մի քայլն անելուց հետո նրանց մեջ ամրանում էր հավատը, որ իրենց հաջողվեց խուսափել հետապնդումից: Յոթերորդ, ամենաերկար սանդուղքից հետո, Գանդալֆը հոգնած կանգ առավ ու ասաց.

— Ըստ իս, մենք իջել ենք առաջին հարկաշարք: Եթե շարունակենք միջանցքով առաջ շարժվել, այն մեզ կտանի հարավային թև: Ժամանակն է դեպի ձախ, արևելք թեքվելու: Հուսով եմ, որ դարպասն արդեն հեռու չէ: Ես շատ եմ հոգնել: Ինձ հարկավոր է հանգստանալ:

Այլապես մինչև դարպաս չեմ հասնի: — Ջիմլին ուսը դեմ տվեց նրան և վերջինս ծանրորեն նստեց աստիճանին:

— Դու նրա՞ն էիր պահում, որ որոտում էր,— հարցրեց Ջիմլին: — Որ ընդերքի՞ց էր ելել:

— Չգիտեմ,— մտածկոտ պատասխանեց Գանդալֆը: — Ես առաջին անգամ էի այդպիսի հակառակորդի հանդիպում և ուրիշ ելք չունեի, քան դուռը չքանդվող նզովքով փակելը: Ես շատ չքանդվող նզովքներ գիտեմ, բայց դրանք գործի դնելու համար ժամանակ է հարկավոր, և դուռը դրանից չի ամրանում, բացել այն չի կարելի, իսկ կոտրել՝ կարելի է: Ես պատրաստվում էի օրքերի և թրոլների դիմավորել: Դռան հետևում լսվում էին դրանց ձայները, բայց թե ինչի մասին էին խոսում՝ չէի հասկանում. դրանց լեզուն շատ դժվար է հասկանալ: Իմիջայլոց, մի բառ հասկացա՝ նրանք ամբողջ ժամանակ կրկնում էին այդ՝ գխաշ կամ թարգմանաբար՝ կրակ: Իսկ հետո օգնության եկավ մի դաշնակից, որից իրենք իսկ խուճապահար վախենում են: Թե նա ով է կամ ինչ է իրենից ներկայացնում, ես չկարողացա հասկանալ, իսկ գլխավորը, չգիտեի՝ հնարավո՞ր է արդյոք հաղթել նրան մենամարտում: Չքանդվող նզովքը նա չեզոքացրեց. չնայած իմ կորովի դիմադրությանը, դուռ սկսեց քիչ-քիչ բացվել: Այն ժամանակ, վերջին ուժերս հավաքելով, ես ասացի արգելիչ հմայախոսքս: Բայց դուռն ընդդիմադիր ուժերի ճնշման տակ կտոր-կտոր եղավ, իսկ չէ՞ որ այն քարից էր: Ես ոչինչ զանազանել չկարողացա, քանի որ սրահում քուլա-քուլա ծուխ էր՝ շիկացած ու մութ, ինչպես քուրայի ծուխը: Ես, բարեբախտաբար, շպրտվեցի ցած, իսկ սենյակի պատերը դղրդոցով փուլ եկան: Մորիական կայսրության թագավոր Բալինի շիրմաքարի վրա դամբանաբլուր բարձրացավ: Հուսով եմ, որ իմ հակառակորդը մնաց փլատակների տակ... Չնայած համոզված չեմ: Այսպես, թե այնպես մենք ժամանակ շահեցինք. փլվածքը մեզ անջրպետեց հետապնդողներից: Այ թե քայքայեց ինձ այդ մենամարտը... Իսկ որ ճնշտն ասենք, դատարկ բան էր, արդեն լավ եմ զգում... Ուրեմն, ի՞նչ էր պատահել Ֆրոդոյին: Խոստովանում եմ, ականջներիս չէի հավատում, որ լսում էի նրա բարալիկ ձայնը: Ինձ էլ թվում էր, թե Արագորնը տանում էր խիզախ, բայց արդեմ մեռած հոբիթին...

— Ես կենդանի եմ, և, իմ կարծիքով, անվնաս: Իմ կրծքին երևի հսկայական կապտուկ կա... Դե դա ոչինչ, շուտով կանցնի:

— Հոբիթները կարողանում են անխնա ջարդել, իսկ իրենք, երևում է, միթրլից են պատրաստված,— փութանցիկ ժպիտով պատասխանեց Արագորնը: — Այժմ հասկանում եմ, թե ինչ վտանգի էի ենթարկում ինձ, երբ գիրուկ Նարկիսի պանդոկում իմ ընկերությունը ստիպմամբ նրանց վզին փաթաթեցի: Այդ օրքը եզանն անգամ երկու կես կաներ...

— Բարեբախտաբար չկարողացավ խոցել,— խոսեց Ֆրոդոն՝ կուրծքը շփելով: — Թեպետ, ինձ թվաց, որ մուրճի ու զնդանի արանքում եմ գտնվում,— ավելացրեց նա: Այլևս հոբիթը ոչինչ չասաց: Իսկապես դժվար էր շնչում:

— Դու հաճախ ես ինձ Բիլբոյին հիշեցնում,— Ֆրոդոյին նայելով, նկատեց Գանդալֆը: — Նա ևս մշտապես զարմացնում էր իր ուղեկիցներին:

Խորհելով Արագորնի ու Գանդալֆի ասածների շուրջը, Ֆրոդոն այդպես էլ չկարողացավ որոշել, նրանք ամեն ի՞նչ էին ասում, ինչ մտածում էին:

Ճամփորդները միջանցքով գնում էին դեպի հարավ: Հանկարծ Ջիմլին տագնապով հարցրեց.

— Դուք լույս տեսնո՞ւմ եք... Այնտեղ, առաջ նայեք... Իմ կարծիքով, դա հրդեհի արտացոլքեր են:

— Գխաշ,— ակամա քրթմնջաց հրաշագործը: — Հետաքրքիր է, նրանք ի՞նչ նկատի ունեին... Բայց մենք ուրիշ գնալու տեղ չունենք, հարկավոր է քայլել... — Նա առանց կանգ առնելու քայլեց առաջ:

Ջիմլին իրավացի էր: Երեսուն քայլ հետո միջանցքը կտրուկ թեքություն ընդունեց, և ճամփորդները մի ցածրիկ կամար տեսան, որը ներսից լուսավորված էր կրակի շողերով: Միջանցքը լուսավորվեց ու շոգելու աստիճան տաքացավ: Գանդալֆը կանգ առնելու նշան արեց, մտավ կամարից ներս և մի վայրկյան քարացավ՝ նրան լուսավորեցին վարդագույն ճաճանչները:

— Մեզ ճեխ ընդունելություն են պատրաստել,— ջոկատի մոտ վերադառնալով, ասաց նա,— բայց ես այժմ գիտեմ, թե որտեղ ենք գտնվում: Կամարից այն կողմ Բարապանի սրահն է, որի

միջով ձգվում է Արևելյան և Արևմտյան դարպասները միացնող գլխավոր ուղին: Կամարից անցնելով՝ կթեքվենք ձախ: Բարապանի սրահը մեզ դուրս կբերի կամրջի մոտ, կհատենք Մորիական խանդակը, կբարձրանանք սանդուղքով և դուրս կգանք Սևագետք... Մինչև դարպաս մնացել է մի կես լիգ, ոչ ավելի: Իսկ հիմա նայեցեք, թե ինչու է մեր բախտը բերել:

Ճամփորդները նայեցին Բարապանի սրահի ներսը: Այն ավելի ընդարձակ էր ու բարձր, քան քսանմեկերորդը: Այդ երկարուկ դահլիճի կենտրոնում երկու շարքով վեր էին ձգվում հզոր ծառերի նմանվող քարե սյուներ: Ծառերի ճյուղերը պահում էին մթնշաղի մեջ կորած առաստաղը: Աջ կողմում, կամարից ոչ հեռու, դահլիճը հատում էր մի լայն ճեղք, որի մեջ մոլեգին վետվետում էր կրակը և ծառասյուների սև բներին դողդողում էին արնակարմիր ցոլքերը: Երբեմն կրակի օձագալար լեզուները կատաղությամբ փաթաթվում էին սյուներին: Ճեղքի վրա ծխի ամպ էր կուտակված:

— Եթե գնաինք գլխավոր ուղիով, ապա մեզ կկոտորեին այդ ճեղքի մոտ,— գլուխն օրորելով, ասաց Գանդալֆը: — Հույս ունենանք, որ բախտներս բերել է, և այս ճեղքը մեր հետապնդողներին հետ կպահի: Սակայն միևնույնն է, ժամանակ կորցնել չի կարելի:

Գանդալֆը դեռ խոսքը չէր վերջացրել, երբ ճամփորդները լսեցին թնդյուն, սպառնացող ճիչեր ու փողի ձայն: Որոտից ցնցվեցին քարե սյուներն ու անզոր մարեցին կրակի լեզուները:

— Իմ հետևի՛ց,— տիրական հրամայեց Գանդալֆը: — Եթե այսօր արևոտ օր է, օրքերը քարանձավներից դուրս գալ չեն համարձակվի: Վերջին մի ճիգ, և մենք փրկված ենք:

Գանդալֆը հապշտապ դուրս եկավ կամարի տակից և վազեց Բարապանի սրահով դեպի արևելք: Դահլիճն ավելի երկար էր, քան կարծում էին Պահապանները, բայց հատակը հարթ էր և վազելը բոլորովին էլ դժվար չէր, եթե չլիներ նրանց հոգնածությունը: Ճեղքի մյուս կողմից սուր ոռնոցներ լսվեցին, օրքերը նկատել էին փախչող ճամփորդներին: Ֆրոդոյի գլխավերևում սուլեց նետը: Բորոմիրը հետ նայեց ու ծիծաղեց:

— Դրանց տես, կատաղե՛լ են,— գոռաց նա: — Ուրիշների համար թակարդ լարելը լա՞վ է:

— Վաղ ես ուրախանում,— նրա խոսքը կտրեց հրաշագործը,— առջևում վտանգավոր ու նեղ կամուրջն է:

Շուտով նրանց առջև բացվեց սև անդունդն ու նեղ, առանց բազրիքների կամրջի կամարը՝ մոտ հիսուն-վաթսուն քայլ երկարությամբ: Թզուկներն այդքան նեղ էին կառուցել, որ Մորիան պաշտպանեն թշնամիներից, եթե նրանք ջարդեն արտաքին դարպասը: Այդտեղով միայն ինքնաշարուկ կարելի էր գնալ: Վազելով կամրջի մոտ, Գանդալֆը կանգ առավ. նրան շրջապատեցին հևացող Պահապանները:

— Ձիմլին՝ առաջինը,— հրամայեց հրաշագործը: — Նրանից հետո՝ հոբիթները, Լեգոլասն ու մարդիկ:

Մի նետը դիպավ Ֆրոդոյի մեջքին և զրնգոցով հետ թռչելով՝ ընկավ գետնին: Մյուսը ցցվեց հրաշագործի գլխարկի մեջ սև փետուրի պես: Ֆրոդոն ահով հետ նայեց: Ճեղքի մյուս կողմում, կրակի արտացոլքով լուսավորված, իրար գլխի էին հավաքվել օրքերի սև ֆիգուրները՝ այնտեղ մի քանի հարյուր կլինեին: Նրանք թափահարում էին երկար նիզակներն ու սև, բոսոր, ցոլցլացող յաթաղանները: Ավելի ու ավելի բարձր էր ճայթում ընդերքից եկող որոտը՝ ռ-ռ՛-ռ՛-ռ՛-ռ-գ, ռ՛-ռ՛-ռ՛-ռ-ռ՛-գ, ռ-ռ-ռ-ռ-ռ՛-գ, ռ-ռ-ռ-ռ-ռ՛-գ:

Լեգոլասը կապարճից հանեց նետը, բայց հետ նայելով, վախեցած ճչաց ու ձեռքից գցեց: Ճեղքին էին մոտեցել երկու հսկա թրոլ՝ բերել էին երկար սալաքարեր, որ կամուրջ գցեն: Սակայն ոչ թե թրոլներից էր վախեցել էլֆը, այլ հանկարծ օրքերն իրենք սարսափով ընկրկեցին, և ճամփորդները տեսան մի ահռելի ստվեր, որը պարուրված էր գզուզ, քուլա-քուլա գալարվող ամպով: Զգացվում էր, որ այն կործանիչ զորություն ուներ:

Ամպը մի պահ քարացավ ճեղքի մոտ, և բոսոր կրակն իսկույն դժգունեց, ասես խեղդվեց ծխի ծածկոցից: Իսկ հետո օրքերի հրեշավոր դաշնակիցը հեշտությամբ թռավ կրակե ճեղքի վրայով, և կրակի դժգունող լեզուները ողջույնի գվվոցով վեր խոյացան՝ ծիածանագույն ներկելով խռիվ ամպը: Ամպի միջի սև գունդը խտացավ և վիթխարի մարդու կերպարանք ստացավ, որի աջ ձեռքում կրակե դաշույն էր, իսկ ձախում՝ կրակե խարազան:

— Փախե՛ք,— հուսահատ գոռաց Լեգոլասը,— դա Բալրոգն է... Նրան չես ոչնչացնի... Փախե՛ք...

Թզուկի աչքերը սարսափից սառել էին:

— Ահա թե որն է Դարինի Մեծ Չարքը,— շշնջաց նա, և տապարը ձեռքից գցելով, երկու ձեռքով երեսը ծածկեց:

— Բալրոգն է,— խռպոտ մրմնջաց Գանդալֆը: — Այժմ հասկանալի է: — Նա հենվեց գավազանին: — Առանց այդ էլ ես մահու չափ հոգնած եմ:

Բալրոգը սրընթաց մոտենում էր Պահապաններին: Թրոլները ճեղքը ծածկեցին սալերով, և օրքերը շարժվեցին Բալրոգի հետևից: Բորոմիրը հուժկու փչեց փողը, և Գոնդորի կանչը, արձագանքելով ուժեղացած, կանգնեցրեց հարձակվող օրքերի հորդաները, նույնիսկ Բալրոգը մի պահ հապաղեց: Բայց արձագանքի անդրադարձները շուտով խլացան, և թշնամիները նորից առաջ շարժվեցին:

— Փախե՛ք, արա՛գ,— հրամայեց Գանդալֆը: — Սանդուղքով բարձրացեք և գնացեք Հայելու լիճ: Այս թշնամին ձեր ուժի բանը չէ: Նույնիսկ ես էլ չեմ կարողանա նրան կանգնեցնել, եթե մարտի մեջ մտնեն օրքերն ու թրոլները: Ես պետք է կամրջի վրա դիմավորեմ նրան: Ճամփորդներն իրար հետևից անցան կամրջով ու կանգնեցին սանդուղքի մոտ՝ անկարող լինելով լքել Գանդալֆին: Իսկ Բորոմիրն ու Արագորնը քարացել էին խանդակի մոտ:

Բալրոգի սև կերպարանքը պարուրած կրակի ցոլքերով մութ ամպը դանդաղ մոտենում էր նեղ կամրջին: Կամրջի մեջտեղում գավազանին հենված, հոգնածությունից կորացած՝ կանգնած էր Գանդալֆը: Բալրոգը նույնպես մի պահ քարացավ, նրա գզուզ թիկնոցը թանձրացավ ու տարածվեց, ինչպես երկու թև, բազմաթիվ պոչերով կրակե խարազանը շուրջը կարմրագույն կայծեր ցրելով վզզաց. բոցավառ, բայց մուգ կրակի շեղբը կեռ թրի ձև ընդունեց: Սակայն Գանդալֆը տեղից չշարժվեց:

— Հեռացի՛ր,— ցածր ասաց նա: Օրքերը լուռ էին: Բարապանի սրահը սուզվել էր ամպրոպին նախորդող չարագույժ լռության մեջ: — Ես հավիտենական արևի սպասավորն եմ,— առաջվա պես ծանր շարունակեց Գանդալֆը,— և Ամոր պայծառ տոհմի տիրակալը: Բոսոր մութը քեզ չի օգնի: Ընդերքի հուրը գետնի վրա անզոր է: Դու կամուրջը չես անցնի: Հեռացի՛ր:

Բալրոգը Գանդալֆին ոչինչ չպատասխանեց: Նրա թևերի կրակի ցոլքերը հանգան, բայց յաթաղանը լցվեց բոսոր սևությամբ և խարազանի պոչերը աղոտ լուսավորվեցին: Նա այլեց առաջ և թևերը, հանկարծակի վիթխարի չափերով աճելով՝ խավարով վարագուրվեցին: Սակայն Բալրոգն իսկապես անզոր էր իր սև թևերով պարուրել Գանդալֆի արծաթամոխրավուն կերպարանքը:

Այդ ժամանակ նա իջեցրեց թուլացած թևերը և բարձրացրեց բոսորասև յաթաղանը:

Երկնագույն Մոլեգինը սառը փայլեց:

Ճամփորդներին կուրացրեց բոցի կապտավուն բռնկումը, զրնգոց լսվեց և բոսորագույն յաթաղանը փշուր-փշուր եղավ: Բալրոգը ցնցվեց, շփոթված ընկրկեց, հրաշագուրծն օրորվեց, բայց չնահանջեց:

— Դու չե՛ս անցնի,— խոսեց նա:

Բալրոգը լուռ մղվեց առաջ: Շառաչեց ու խլացուցիչ շրմփաց խարազանը:

— Նա մենակ չի դիմանա,— գոռաց Արագորնը և նեղ կամրջով վազեց հրաշագործի մոտ: — Էլենդի՛լ,— բարձր գոռաց նա: — Ես քեզ հետ եմ, Գանդալֆ, մենք նրան կխորտակե՛նք...

— Գոնդո՛ր,— ահարկու մռնչաց Բորոմիրը և կամրջով սլացավ Արագորնի հետևից:

Իսկ Գանդալֆը բարձրացրեց մոգական գավազանը և, երբ այն փայլատակեց, ինչպես մի փոքրիկ արև, կտրուկ իջեցրեց ցած, ասես գիծ քաշելով ու ջնջելով կամուրջը Բալրոգի առջև: Բռնկվեց արծաթավուն կրակի խուրց: Մոգական գավազանը մեջտեղից կիսվեց, իսկ կամուրջը Բալրոգի հետ միասին փլվեց անդունդը: Խռպոտ ոռնոցով ներքև ընկնելով, Բալրոգը գլխավերևում թափահարեց խարազանը, և խարազանը երկու տակ փաթաթվեց հրաշագործին: Գանդալֆը ձեռքերով կախվեց կամրջից, սակայն չկարողացավ կառչած մնալ և ճչալով «Փախե-ե՛ք», անհետացավ մորիական խորխորատի երախում: Քանդված կամրջի բեկորը, որը նման էր երախից դուրս ցցված լեզվի, թեթև ցնցվում էր առաջացող մթության մեջ:

Լռին մթությունը թավշյա էր դարձել: Սարսափահար ճամփորդներն անխոս կանգնած էին: Առաջինն ուշքի եկան Արագորնն ու Բորոմիրը: Հազիվ էին նրանք հետ եկել սանդուղքի մոտ, երբ կամրջի մնացորդները փլվեցին անդունդը: Մեռյալ լռությունը խախտեց Արագորնը:

— Հարկավոր է գնալ,— ասաց նա ուղեկիցներին: — Սա նրա վերջին կամքն էր: Այսուհետև Ջոկատը ես կառաջնորդեմ:

Չլուսավորված գիրթ սանդուղքի վրա սայթաքելով, ճամփորդները Արագորնի հետևից քարշ էին գալիս դեպի վեր, իսկ Բորոմիրը եզրափակում էր փախստականների երթը:

Սանդուղքը նրանց դուրս բերեց մի թնդուն միջանցք. Արագորնը, առանց հապաղելու, շարժվեց առաջ: Ֆրոդոյի կողքից հեծկլտալով քայլում էր Սամը, դե Ֆրոդոն ինքն էլ անձայն լալիս էր: Խուլ, աստիճանաբար մարող որոտը հազիվ զգալի ցնցում էր հատակը. ռ-ռ՛-ռ-ռ-ո՛գ, ռ-ռ՛-ռ-ո՛-ո-գ, ռ-ռ՛-ո՛-գ, ռ-ո՛-գ...

Առջևում երևաց լուսավորված դահլիճը: Պահապաններն ակամա արագացրին քայլերը: Դահլիճը լուսավորվում էր երկար ու նեղ, հրակնատի նման չորս լուսամուտներով: Միջանցքի դիմաց, որտեղից իրենք դուրս եկան, ճամփորդները քարե դուռ նկատեցին: Բացելով այն, նրան տեսան դարպասը՝ բարձր, կուրացուցիչ փայլող կամարը:

Ավելի ճիշտ, ճամփորդները դարպաս չտեսան՝ այն վաղուց չկար, այլ ելքի մոտ, ստվերում, տեղավորված ժամապահներին՝ հինգ խաղաղ ննջող օրք: Այստեղ Պահապանների հայտնվելուն չէին սպասում: Առաջինը պահակների գլխավորը վեր թռավ և անմիջապես էլ Արագորնից խոցված ընկավ: Մնացած օրքերը սարսափահար փախան: Պահապաններն արագորեն մոտեցան ելքին և իջան քարե հինավուրց աստիճաններով:

Սարսափելի ճանապարհորդությունն ավարտվեց:

Արագորնն առանց հանգստի շարժվում էր առաջ. նա որոշեց իսկույնևեթ հեռանալ դարպասից, որպեսզի օրքերը չկարողանան հասնել Ջոկատին: Ճամփորդների առջև փռված էր Սևագետքի հովիտը: Մշուշապատ Լեռները ծածկել էին արևը, բայց առջևում ոսկեզօծ հովիտն էր, իսկ վերևում կապույտ երկինքն էր՝ սպիտակ ամպերի թեթև խոպոպներով: Օրն արդեն կիսվել էր:

Կանգ առնելով, նրանք հետ նայեցին: Մշուշապատ Լեռնաշղթայի թափանցիկ ստվերում մռայլ սևին էր տալիս հսկայական կամարը: Ինչ-որ տեղ, խոր-խոր հողի տակ հազիվ լսելի գալարվում էր մեռնող որոտը. ռ-ռ-ռ-ռ-՛-գ, ռ-ռ-ո՛-գ, ռ-ռ-ո՛-գ, ռ-ռ-գ...

Եվ այստեղ, անզոր լինելով հաղթահարել անհուն վիշտը, Պահապաններն ազատություն տվեցին արցունքներին: Ոմանք կանգնել ու լուռ լաց էին լինում, մյուսները հեկեկալով թավալվում էին գետնին: Հեծկլտում էր նույնիսկ դժնի Բորոմիրը: Մեկ անգամ էլ հազիվ լսելի հառաչեց ընդերքը՝ ռ-ռ-գ, և հովտում լռություն տիրեց:

Գլուխ վեցերորդ. Քվեթլորիեն

Մեր գնալու ժամանակն է,— ասաց Արագորնը: Հետ նայելով՝ նա բարձրացրեց Անդրիլը և բացականչեց.— Մնաս բարո՛վ, Գանդալֆ... Չէ՞ որ ես ասում էի. «Քեզ մահացու վտանգ է սպառնում»: Դժբախտաբար, ես ճիշտ դուրս եկա, և մեր ճանապարհորդությունն անհուսալի է թվում ինձ... — Դեպի ուղեկիցները շրջվելով, Արագորնն ավելացրեց.— Բայց մենք առանց հույսի էլ կգնանք Մորդոր: Գուցե մեզ հաջողվի վրեժ լուծել: Իսկ ողբալու ժամանակ չունենք, բարեկամներ: Մեզ դժվարագույն ճանապարհ է սպասում:

Ճամփորդները արցունքները սրբեցին և հետ նայեցին: Հյուսիսում, Մշուշապատի երկու ճյուղերի միջև, մութ նեղ կիրճով սանդղավանդից սանդղավանդ թռչելով գլորվում էր մոխրասպիտակ փրփրալի վտակը, իսկ քիչ այն կողմ, դեպի հյուսիս-արևելք վեր էին խոյանում երեք հսկա գագաթներ՝ Ֆանուիդոլը, Քարադիրասը և Քելեբդիլը:

— Տեսնո՞ւմ եք, դա Սևագետքի սանդղաջրվեժն է,— կիրճը ցույց տվեց Արագորնը: — Հենց այստեղից էլ մենք պետք է իջնեինք Սևագետք, եթե բախտը մեզ ժպտար Բոսոր Դարպասի մոտ:

— Իսկ դրա փոխարեն Բարազինբարը ծիծաղեց մեզ վրա: Հրեն հիմա էլ է անիծվածը խնդմնդում,— Ջիմլին բռունցքով սպառնաց լեռանը:

Մշուշապատի ճյուղավորումները, որ փրփրադեզ արծաթագույն ջրվեժների շարքով կիրճ էին գոյացրել, ձգվում էին դեպի արևելք մոտ մեկուկես լիգ, իսկ հետո Արծաթաջրի հունը լայնանում էր, և այն հանդարտ հոսում էր հովտով մինչև Մշուշապատի ստվերով կիսաածածկված մի մեծ, ձվաձև լճի մեջ թափվելը: Լճի հարթ մակերեսը մուգ-մուգ էր՝ նույնիսկ արևելյան մասում, որն ստվերի տակ չէր ընկնում: Լճի հայելանման, առանց ծփանքի ջուրը նման էր երեկոյան երկնքի, ինչպես այն երևում է լուսավորված սենյակից: Լճի մուգ երկնագույն շրջանակը եզերում էին վառ կանաչ մարգագետինները:

— Հիշո՞ւմ եք, ես նրան հարցրի Օստրանում,— տխուր ասաց Ջիմլին ճամփորդներին. «Մի՞թե ինձ վիճակված է այդ երջանկությունը՝ տեսնել մեր նվիրական լիճը»: Ահա ես տեսնում եմ Հայելու լիճը, բայց ինձ որբացած ու դժբախտ եմ զգում:

Պահապանները քայլում էին վեցանկյուն ճաքճքված սալիկներով սալարկված հինավուրց ճանապարհով: Սալիկների ճեղքերում ու դրանց միացման տեղերում հավամրգի ու փշոտ մամուխ էր աճել: Ճանապարհն իջնում էր բլրաշատ հարթավայր, Հայելու լճի մոտ թեքվում էր հարավ-արևելք և հետո ձգվում Արծաթաջրի ափով: Ճանապարհի կողքերին, մերթ աջից, մեկ ձախից քարե ջարդված արձաններ էին ընկած: Լճի մոտ մի վիթխարի սյուն էր վեր բարձրանում, որի գագաթը քայքայված էր:

— Սա Դարինի կոթո՛ղն է,— բացականչեց Ջիմլին: — Արագորն, կարելի՞ է իջնել լճի ափ:

— Միայն իսկույն վերադարձի՛ր,— երկնքին նայելով, պատասխանեց Արագորնը: — Արևը մի երեք ժամից մայր կմտնի: Ցերեկը օրքերը քարանձավներից դուրս չեն գալիս, իսկ գիշերը մեզ կհետապնդեն, այնպես որ պետք է հեռանանք: Հիմա լիալուսին է, գիշերը մութ կլինի, իսկ օրքերը մթության մեջ արտակարգ վտանգավոր են:

— Գնանք, դու պետք է տեսնես Քելեդ-Զարամը,— կանչեց Ֆրոդոյին թզուկը և վազեց ներքև:

Ֆրոդոն, հոգնածությունն ու անտարբերությունը հաղթահարելով, ոտքերը քարշ տալով իջավ Հայելու լճի մուգ ափը. տիրոջ հետևից իջավ նաև Սամը:

Կոթողի մոտ Ջիմլին ոտքը կախ գցեց, և երբ հոբիթները մոտեցան, ասաց.

— Տեսնո՞ւմ եք, այստեղ մորիերեն գրված է. *«Դարինն այստեղից առաջին անգամ նայեց Քելեդ-Զարամի խորքը»:*

Կոթողի վրա կիսաջնջված գաղտնագրեր կային, սակայն դրանք կարդալ հնարավոր չէր. ավազն ու քամին գաղտնագրերը ջնջել էին:

— Եկեք մենք էլ նայենք լճի խորքը,— դեպի ափ շրջվելով, առաջարկեց Ջիմլին:

Ճամփորդները կռացան մուգ ջրի վրա: Սկզբում նրանք ոչինչ չտեսան: Իսկ հետո կապտա-հայելանման մակերեսին երևացին աստղերի արծաթագույն ցոլքեր (թեպետ երկնքում արևն էր փայլում) և բարձր լեռների ձյունե գագաթներ: Ճամփորդներին, չգիտես ինչու, լիճը չարտացոլեց, և նրանք շփոթված հեռացան ափից:

— Բարև և մնաս բարով, նվիրական լիճ,— խոր խոնարհվելով, բացականչեց Ջիմլին: Հետո շրջվեց դեպի հոբիթներն ու ավելացրեց.— Աստ հանգչի թագը Դարինի: Այն սպասում է նրա զարթոնքին...

— Ի՞նչ տեսար այնտեղ,— Սամին հարցրեց Փինը, երբ թզուկն ու հոբիթները հասան ջոկատին:

Բայց մտքերով տարված Սամը ոչինչ չպատասխանեց:

Մեծ, բլրապատ, սև ժայռաքար հիմքով ու բերրի հողաշերտով հովիտը հյուսիսից եզերում էր Արծաթաջուրը, իսկ հարավից՝ Սպիտակբաշը, դրա համար էլ գետերի հունը սև էր և հովիտն էլ հնուց Սևագետք էին անվանում, չնայած արևի ճառագայթներով լուսավորված երկու գետն էլ ուրախ արծաթին էին տալիս, իսկ սևանում էին միայն երեկոները և վատ եղանակին: Հնարավոր է, հովտի առաջին բնակիչները ամպամած օր էին եկել այստեղ:

Ճամփորդները քայլում էին Արծաթաջրի ափով:

— Հայելու լճից մինչև Արծաթաջրի և Սպիտակբաշի միացման տեղը տասը լիգ կլինի,— պատմում էր Արագորնը,— և այնտեղ անտառում մենք կգիշերենք: Այս ուղին մեզ համար նշել է Գանդալֆը, որ հետո դուրս գանք դեպի Մեծ Գետը: Արծաթաջրի ու Սպիտակբաշի

միացումից գոյանում է Ոսկե Կախարդուհի հորդառատ գետը, որը թափվում է Անդուին Մեծի մեջ:

— Դրանք միանում են Քվեթլորիենի մոտ,— ուրախ հուզմունքով ընդմիջեց Լեգոլասը,— էլֆերի ամենասքանչելի բնակավայրի մոտ, որը գտնվում է Ոսկի Անտառում: Քվեթլորիենի արծաթագույն ծառերը (որոնց կեղևը մոխրա-արծաթավուն է) աշնանը խիտ սաղարթից չեն զրկվում, այն դառնում է վառ ոսկեգույն և մնում է ճյուղերի վրա մինչև գարնան գալը: Գարնանը նախորդ տարվա տերևը թափվում է, անտառի բացատները ոսկով ծածկելով, իսկ ճյուղերին նոր տերևների հետ միասին բացվում են ոսկեդեղին ծաղիկները՝ օդը լցնելով մեղրի բուրավետությամբ: Այդպես են պատմում հինավուրց առասպելները՝ ինքս ոչ մի անգամ չեմ եղել Լորիենում: Կուզեի այնտեղ լինել գարնանը:

— Այնտեղ ձմռանն էլ վատ չէ,— նկատեց Արագորնը: — Բայց Լորիենը հեռու է: Իսկ հիմա մենք պետք է հեռանանք Մորիայից, դրա համար էլ քայլերն արագացրեք, բարեկամներ:

Արագորնը մեծ-մեծ քայլերով առաջ գնաց, և Սամն ու Ֆրոդոն սկսեցին հետ մնալ: Նրանք ամբողջ օրը ոչինչ չէին կերել: Յաթաղանի հարվածից Սամի ջերմությունը բարձրացել էր ու գլուխը պտտվում էր, իսկ շոգ Մորիայից հետո նա քամուց դողացնում էր: Զուր էր երկնքում փայլում արևը: Ֆրոդոն հևոցով ու արագացած էր շնչում, ամեն մի քայլը դժվարությամբ էր գցում:

Կես ժամ հետո Լեգոլասը հետ նայեց ու տեսնելով, որ հոբիթները շատ են հետ մնացել, անհանգստացած ձայն տվեց Արագորնին: Նա ևս շրջվեց ու վազեց հետ մնացողների մոտ: Նրան հետևեց Բորոմիրը: Մնացած Պահապաններն իսկույն կանգ առան:

— Ներեցե՛ք, բարեկամներ,— ասաց Արագորնը,— այսօր այնքան շատ բան տեղի ունեցավ, և ես այնպես եմ շտապում ձեզ հեռու տանել Մորիայից, որ ձեր վերքերի մասին բոլորովին մոռացել եմ: Դե դուք էլ պակասը չեք, խոսք չկա՝ չեք հիշեցրել... Իհարկե, մենք պետք է դադար առնեինք և առաջին հերթին ձեր վերքերը նայեինք... Դե, իսկ հիմա մի քիչ համբերեք: Առջևում հանգստի հարմար տեղ կա և այնտեղ արդեն ես կանեմ, ինչ կարող եմ: Բորոմիր, եկ գրկած տանենք նրանց:

Շուտով ճամփորդները մի վտակ տեսան, որը մեղմ քչքչոցով թափվում էր Արծաթաջրի մեջ: Իսկ Արծաթաջուրը, վերջին սահանքն անցնելով, լցվում էր լայն գետախորշը, որը ծածկում էին բրգաձև ճյուղաշատ սոճիներն ու մոշի փշոտ, խիտ թփուտները:

Արագորնը ծակող թփուտներից դուրս եկավ մի փոքրիկ բացատ, որը պատված էր կապույտ հապալասով ու ստվերված բրգաձև սոճիներով: Այստեղ կարճատև հանգիստ առան: Արևն սկսում էր թեքվել դեպի արևմուտք, իսկ նրանք միայն մի քանի լիգ էին հեռացել, և օրքերը առանց դժվարության կարող էին հասնել նրանց: Մինչ Պահապանները ցախ էին հավաքում, խարույկ վառում ու ջուր եփում, Արագորնը զննեց հոբիթների վերքերը: Սամի վերքը թեև խոր չէր, բայց, չգիտես ինչու, մինչև հիմա արյունահոսում էր, և Արագորնը անհանգստությամբ խոնարհվեց Սամի վրա: Սակայն զննումն ակնհայտորեն ուրախացրեց նրան:

— Բախտդ բերել է, ասան նա Սամին: — Շատերն ավելի լուրջ են հատուցել իրենց սպանած առաջին օրքի համար: Դու մաքուր դաշույնով ես վիրավորվել: Իսկ օրքեր հաճախ յաթաղաններին ուժեղ թույներ են քսում: Այս վերքն արագ կբուժենք: — Արագորնը խառնշտեց ուսապարկը և մի բուռ չոր տերև հանեց: — Բալասանի տերևներ են,— բացատրեց նա,— ես դրանք քաղել եմ Զավերտ սարի մոտերքից: Չոր վիճակում դրանք ավելի թույլ են ներգործում, քան՝ թարմ, բայց քո վերքը, կարծում եմ, կբուժեն: Սրանք դիր եռացրած ջրի մեջ, իսկ երբ կսառչի՝ վերքը լվա և զգուշությամբ չորացրու: Դե, հիմա քո հերթն է, Ֆրոդո:

— Ես արդեն լավ եմ,— հայտարարեց հոբիթը, Արագորնին թույլ չտալով արձակել թիկնոցի կոճակները: — Ես ուղղակի հոգնել եմ և շատ սոված եմ՝ հանգիստն ու սնունդն ինձ լրիվ կբուժեն:

— Մուրճի ու զնդանի արանքում գտնվելը կատակ բան չէ,— ծիծաղեց Արագորնը և լրջանալով ավելացրեց. — Բա որ կողոսկրերդ կոտրված լինեն... Ոչ, խնդրեմ, մի դիմադրիր զննելուն... — Նա խնամքով Ֆրոդոյի վրայից հանեց թիկնոցը, վերնաշապիկը... ու տարակուսանքով մռայլվեց, իսկ հետո քրքջաց: Օղազրահն Արծաթաջրի պես առկայծում էր արևի տակ: Արագորնը հանեց այն, թեթև թափ տվեց ու թանկագին քարերը ծիածանի

գույներով շողշողացին, իսկ զրահի նուրբ օղերի խշխշոցն ամառվա անձրևի աղմուկ հիշեցրեց: — Մի նայե՛ք, բարեկամնե՛ր,— ասաց Արագորնը,— մեր Ֆրոդոյի թանկագին մորթուն: Եթե Միջերկրի որսորդներն իմանային, որ հոբիթներն այսպիսի թանկագին մորթիներ ունեն, նրանք խմբերով կհոսեին Հոբիթստան...

— Եվ Միջերկրի հմուտ որսորդների նետերը հոբիթներին բնավ վնաս չէին տա,— օղազրահը դիտելով, նկատեց Ջիմլին: — Ախր այս զրահաշապիկը միթրիլից է... Միթրիլից... Իսկ այսպիսի հոյակապ աշխատանք, խոստովանում եմ, երբեք չեմ տեսել ու նույնիսկ չեմ իմացել, որ այդպիսի բան հնարավոր է: Այս օղազրահի մասին չէ՞ր խոսում Գանդալֆը: Այն ժամանակ նա, ըստ իս, թերագնահատեց սա:

— Հիմա եմ հասկանում,— միջամտեց Մերին,— թե ինչու էիր ամբողջ օրը նստում Բիլբոյի կողքը: Պարզվում է, որ նա քեզ զինում էր ճանապարհի համար: Ա՛յ թե հիանալի ծերուկ է... Հարմար առիթով պետք է նրան ասել, որ իր նվերը Ֆրոդոյին փրկեց մահից:

Այնտեղ, որտեղ նիզակը խփել էր օղազրահին, միթրիլի օղակը ճնշելով զրահի աստառը (նուրբ, ձգվող կաշվից շապիկ), կապտավուն դաջվել էր Ֆրոդոյի կրծքին: Բայց օղազրահը չէր պատռվել, և սահած նիզակը հոբիթին շպրտել էր մի կողմ ու թիթեռի պես, թիկնոցով մեխել պատին: Իսկ Ֆրոդոյի կողին մեծ ու ուռած կապտուկ կար: Մինչ մյուսներն ուտելիք էին պատրաստում, Արագորնը բալասանից եփուկ պատրաստեց ու դրանով լվաց հոբիթի բոլոր կապտուկները: Բուժիչ սպեղանու սուր հոտը կախվեց քամիներից պաշտպանված բացատի վրա, և շուտով Պահապաններն ուրախությամբ զգացին, որ իրենց հոգնածությունն արագորեն անցնում է: Սամի վերքը արյունահոսելուց դադարեց, իսկ Ֆրոդոն զգաց, որ կարող է շնչել, սակայն նիզակի հարվածի կապտուկը երկար ժամանակ չէր ներծծվում ու ցավում էր: Արագորնը դրա վրա փափուկ վիրակապ դրեց, որ Ֆրոդոն կարողանա օղազրահը հագնել:

— Երբ դու օղազրահը հագած ես,— ասաց նա հոբիթին,— ես ինձ ավելի հանգիստ եմ զգում: Հագի՛ր և մինչև արշավի վերջը չհանես, մանավանդ որ դա զարմանալի թեթև է: Օղազրահդ կարող ես հանել բարեկամներիդ մոտ, այնտեղ, որտեղ Թշնամին անզոր է... Բայց, ցավոք, այդպիսի վայրեր մեր ճանապարհին քիչ կհանդիպեն:

Կազդուրվելով, Պահապանները խարույկը հանգցրին, օջախը ծածկեցին սոճու ճյուղերով, որ իրենց դադարի տեղի հետքերը կորցնեն և Արագորնի հետևից դուրս եկան ճանապարհ: Մոտավորապես մեկ ժամ հետո Մշուշապատ լեռնաշղթան Ճամփորդներից ծածկեց մայր մտնող արևը, և սարերին մութ ստվերներ ընկան: Առափնյա հովիտներով գետից սողալով վեր ձգվեցին մշուշի սպիտակավուն ծվենները: Արևելքում իրիկնային մոխրագույն աղջամուղջն աստիճանաբար պարուրում էր լայնարձակ հարթավայրը՝ քայլող Պահապաններին խաբուսիկ կերպով մոտիկ ցույց տալով հեռավոր մթին, սև անտառը: Այժմ, երբ Սամն ու Ֆրոդոն իրենց առույգ էին զգում, Ջոկատը կարող էր բավականին արագ շարժվել, և ճամփորդները քայլեցին ևս երեք ժամ՝ միայն մի կարճատև դադար տալով:

Դաշտավայրը պարուրել էր գիշերային մութը: Երկնքում փայլում էին աստղերը, սակայն լուսինը դեռ դուրս չէր եկել: Ֆրոդոն ու Ջիմլին գիշերվան ականջ դնելով, քայլում էին վերջից: Ամեն ինչ խաղաղ էր: Վերջապես Ջիմլին խզեց լռությունը:

— Հետապնդում չեմ լսում կամ ես կաղնու քոթուկի պես խուլ եմ: Գուցե օրքերը հարձակվեցին մեզ վրա, որ Մորիայից դուրս վռնդեն, իսկ մեր արշավի, Համիշխանության Մատանու մասին նրանք ոչինչ էլ չգիտեն, դե՛հ, չեն էլ ուզում իմանալ: Երբ նրանք ուզում են վրեժ լուծել, երկար ժամանակ հետապնդում են թշնամուն:

Ֆրոդոն Ջարդողը հանեց պատյանից և բարձրացրեց գլխից վեր՝ շեղբը չէր լուսավորվում: Բայց հոբիթը քայլեր էր լսում... Այն պահից, ինչ ճամփորդներին ծածկել էր գիշերը, նա բոբիկ ոտքերի քստքստոց էր լսում, որը երբեմն քամին խլացնում էր: Թե՞ նրան միայն թվում էր... Դե, ո՛չ, նա լսում էր, ա՛յ հիմա էլ... Կտրուկ շուռ եկավ, հետ նայեց ու նրան թվաց, որ ճանապարհի վերևում երկու լուսատու կետեր են լողում: Նա սևեռուն նայեց ու ոչինչ չտեսավ:

— Հոգնե՞լ ես,— հոգատարությամբ հարցրեց Ջիմլին:

— Բանը դա չէ,— պատասխանեց Ֆրոդոն: — Իմ կարծիքով, մեկը մեր հետևից գաղտագողի գալիս է: Ես համարյա ամբողջ ժամանակ քայլեր եմ լսում: Իսկ հիմա ահա երկու առկայծող կրակ տեսա՝ աչքեր են և ուրիշ ոչինչ... — Ֆրոդոն լռեց:

Ջիմլին հետ նայեց ու ականջ դրեց:

— Սխալվում ես,— ասաց նա Ֆրոդոյին,— քամին է խշխշում խոտերի մեջ: Իսկ աչքերը... հրե՛ն, տես ինչքան առկայծող կրակներ կան... — Ջիմլին ցույց տվեց գիշերային երկինքը: — Գնանք, թե չէ մենք առանց այդ էլ հետ ենք մնացել:

Քամու խշշոցը թանձրացավ, ուժեղացավ, գիշերային խավարը խտացավ, և ճամփորդները հասկացան, որ մոտենում են անտառին:

— Դա Քվեթլորիե՛նն է,— բացականչեց Լեգոլասը: — Այստեղից սկսվում է Ոսկի Անտառը: Ափսո՛ս, որ հիմա գարուն չէ...

Ճանապարհը սուզվեց կայծկլտուն խավարի մեջ՝ բարձր, արծաթավուն ծառերը խշշացող տերևների ոսկեգույն շղարշով ճամփորդներից ծածկում էին աստղալից երկինքը:

— Ճիշտ ես,— ուրախությամբ հաստատեց Արագորնը: — Սա իսկապես Ոսկի Անտառն է, որտեղ ըստ Գանդալֆի ծրագրի մենք կարող ենք գիշերել: Նա ենթադրում էր, որ էլֆերի տիրույթներում օրքերը չեն համարձակվի մեզ հետապնդել:

— Իսկ էլֆերին հաջողվե՞լ է արդյոք պաշպանել սեփական երկիրը Թշնամու ամպից,— տարակուսեց Ջիմլին:

— Չարքանտառի էլֆերը բազում տասնամյակներ Լորիենում չեն եղել,— ասաց Լեգոլասը: — Բայց, ինչպես լսել եմ, մեր ազգականները հաջողությամբ կասեցնում են Խավարի Վարագույրը, թեպետ նրանց տիրապետության սահմանները խիստ փոքրացել են:

— Այո, նրանց տիրապետությունները շատ են փոքրացել: — Արագորնը ասես ինչ-որ բան հիշելով հառաչեց: — Նրանք նահանջել են Լորիենի խորքը և այսօր նրանց օգնության վրա հույս դնել չի կարելի: Եկեք մի քիչ առաջ անցնենք և գիշերելու համար բացատ գտնենք: — Արագորնը շրջվեց ու քայլեց ճանապարհով, սակայն Բորոմիրը տեղից չշարժվեց:

— Իսկ այս անտառը շրջանցել չի՞ կարելի,— հարցրեց նա:

— Շրջանցե՞լ, ինչո՞ւ,— զարմացած հարցրեց Արագորնը:

— Անծանոթ փորձանքները գաղտնի արահետների վրա միշտ էլ ավելի վտանգավոր են լինում, քան բացահայտ թշնամիները բանուկ ճանապարհներին,— հոնքերը կիտելով, բացատրեց Բորոմիրը: — Գանդալֆի խորհրդով մենք իջանք Մորիա... Հիմա էլ դո՞ւ ես շտապում կործանվել... Լորիենյան անտառից դուրս գալը հեշտ բան չէ, իսկ դուրս գալ այնպիսին, ինչպիսին մտել ես՝ անհնարին է, ահա թե ինչ են ասում Լորիենի մասին Գոնդորում...

— Ախր ճիշտ էլ ասում են,— նկատեց Արագորնը,— իսկ այ ասացվածքի իմաստը, ըստ երևույթին, մոռացվել է, այլապես գոնդորցիները Լորիենից չէին սարսափի: Բայց ինչևէ, Անդուինի մոտ դուրս գալ այստեղից կարելի է միայն անտառով՝ եթե չես ուզում վերադառնալ Մորիա կամ բարձրանալ Բարազինբար:

— Իհարկե չեմ ուզում,— ասաց Բորոմիրը,— դրա համար էլ կգամ քո հետևից անտառի միջով: Սակայն հիշիր, դա էլ է վտանգավոր...

— Վտանգավոր է,— համաձայնեց Արագորնը,— չարի համար: Եվ նրանց համար, ով նախանձախնդրորեն ծառայում է նրան: Իսկ այժմ՝ առաջ, ժամանակ ենք կորցնում:

Ճամփորդները լիգից ավելի չէին անցել, երբ ձախից հոսող Արածաթաջրի քչքչոցը խլացրեց աջից գահավիժող ջրվեժի աղմուկը: Երեսուն քայլ հետո նրանք առջևում տեսան սև ջրապտույտներով հոսանք, որ կտրում էր ճանապարհի մոխրագույն շերտը:

— Սա Սպիտակբաշն է,— բացականչեց Լեգոլասը: — Սրա մասին շատ երգեր են հորինվել, և մենք, հյուսիսային անտառային էլֆերս մինչև հիմա էլ երգում ենք դրանք ու անկարող ենք մոռանալ նրա ջրվեժների փրփրահեղ ալիքները. ծիածանագույն՝ ցերեկը և կապտավուն՝ գիշերը, գահավիժման թնդյունը և հորձանուտների մթին խորությունը: Բայց Սպիտակբաշի երբեմնի բնակելի ափերը վաղուց ամայի են, Սպիտակ Կամուրջը քանդված է, իսկ էլֆերին օրքերը քշել են արևելք: Սպասեցեք ինձ, ես կիջնեմ ջրի մոտ, քանզի ասում են, որ այդ գետը վանում է թախիծն ու թոթափում հոգնածությունը: — Էլֆը իջավ գիրթ ափով, որ կտրված էր բազմաթիվ մանր խոռոչներով, մտավ ջուրը և ձայն տվեց ճամփորդներին. — Այստեղ խորը

չէ, դուք էլ իջեք... Եկեք լողանք հարավային ափը: Ես գիշերելու հարմար բացատ եմ տեսնում: Եվ գուցե Սպիտակբաշի ջրվեժի զրույցի տակ բոլորս հաճելի երազներ կտեսնենք:

Ճամփորդներն իջան Լեգոլասի հետևից: Ֆրոդոն մտավ զով ջուրը՝ այստեղ գետը ծանծաղ էր, և զգաց, որ վհատությունը, թախիծն ու հոգնածությունը, կորուստների մասին հիշողությունը և գալիքի նկատմամբ վախը ասես կախարդական ուժով չքացան:

Պահապանները դանդաղ անցան Սպիտակբաշը, գետից շուտ դուրս գալու ցանկություն չունեին, մագլցեցին զառիթափ ափը, ուտելիք պատրաստեցին և հանգիստ կերան, իսկ Լեգոլասը նրանց հին ժամանակների Քվեթլորիենի մասին մի քանի ավանդություն պատմեց:

Երբ նա լռեց, գիշերային լռության մեջ լսվեց ջրբեժի միալար աղմուկը, և կամաց-կամաց Պահապաններին սկսեց թվալ, որ իրենք զանազանում են ինչ-որ տխուր երգ երգող էլֆերի ձայները:

— Այդ գետը մարդիկ են Սպիտակբաշ անվանել,— երկար դադարից հետո խոսեց Լեգոլասը,— իսկ էլֆերեն կոչվում է Նիմրոդել, որ նշանակում է «Սպիտակ մազերով կույս»: Թախծալուր երգեր են հյուսել այն մասին, թե ինչպես մորիացիները միթրիլի հանույթի ժամանակ ակամա արթնացրել են Չարքին, իսկ Նիմրոդելը կործանվել է Սպիտակ լեռներում...

— Թզուկները ոչ մի չար բան չեն արել,— Լեգոլասին ընդհատելով բացականչեց Ջիմլին:

— Ճշմարիտ է, ես չեմ ասել, թե արել են,— պատասխանեց էլֆը,— ես ասացի՝ արթնացրել են: Չարքը անզոր է Առաջնածինների առջև, բայց երբ այն արթնացել է, էլֆերից շատերը որոշել են թողնել Քվեթլորիենը՝ Ծաղկող Լորիենը ընդհանուր լեզվով, և Ծովի ճանապարհին Նիմրոդելը կործանվել է...

— Ասում են,— լռելուց հետո շարունակեց Լեգոլասը,— որ Նիմրոդելը, ինչպես և լորիենյան բոլոր էլֆերը, ապրում էր հսկայական ծառի գագաթին, իզուր չէ, որ քվեթլորիենցի էլֆերին անվանում են ծառակյացներ կամ գալադրիմ: Հնարավոր է, որ հիմա էլ են նրանք այդպես ապրում, քանի որ լորիենյան անտառի խորքում հազվագյուտ հզոր ծառեր են աճում:

— Պետք է խոստովանեմ,— խոսեց Ջիմլին,— որ ծառի վրա ես ինձ ավելի հանգիստ կզգայի: — Նա խեթ նայեց Մշուշապատի կողմը: — Օրքերի հետ հանդիպումն ինձ չի ուրախացնի:

— Ջիմլին իրավացի է,— ասաց Արագորնը: — Չէ որ մենք նստած ենք ճանապարհին շատ մոտիկ, իսկ ծանծաղ գետակը օրքերին չի կանգնեցնի: Հարկավոր է բարձրանալ ծառի վրա:

Պահապաններն այլևս չվերադարձան ճանապարհ, այլ գնացին գետի աջ ափով: Լեգոլասը կանգ առավ և առաջարկեց իր ուղեկիցներին.

— Սպասեցեք ինձ, ես կբարձրանամ ծառը և կնայեմ, թե ինչպիսի կատար ունի: Հանկարծ ու մեզ հաջողվի գիշերն այնտեղ կարճել... Անտառային հսկաներին վարժվել չեմ կարողանա... մելորնների՝ հսկա հացենիների մասին լսել եմ միայն հինավուրց առասպելներում:

— Չգիտեմ՝ դու ինչպես,— արձագանքեց Փինը,— բայց ես նույնիսկ առասպելական ծառերի վրա քնել չեմ կարող: Ես հո թռչուն չե՞մ...

— Որ այդպես է՝ բույն փորիր,— ասաց նրան Լեգոլասը: — Բայց եթե ուզում ես փրկվել օրքերից, ժամանակ մի կորցրու, գնա խորքերը... — Էլֆը ցատկեց, ճյուղից կախվեց ու... իսկույն էլ այն բաց թողնելով թռավ գետնին: Որովհետև վերևից, ոսկեգույն մթության միջից հրամայական ճիչ լսվեց.

— *Դա՛րո...*

— Չշարժվեք,— Պահապաններին շշնջաց Լեգոլասը:

Վերևում երգեցիկ ծիծաղ լսվեց, իսկ հետո ցածր, բայց հնչեղ ձայնը մի քանի անհասկանալի բառեր արտասանեց: Լեգոլասը նրա լեզվով պատասխանեց:

— Ո՞վ է նա և ի՞նչ է ասում,— հարցրեց Փինը:

— Էլֆ է,— իսկույն կռահեց Սամը: — Ինչ է, չե՞ս լսում ինչ ձայն ունի:

— Այո, դա էլֆ է,— հաստատեց Լեգոլասը: — Նա լորիենյան բարբառով է խոսում: Նրա խոսքերով ասած, դու այնքան բարձր ես ֆսֆսացնում, որ աչքերը փակ էլ կարելի է քեզ վրա

դիպուկ կրակել (Վախից Սամի շունչը կտրվեց): — Այդ ընթացքում լորիենցին նորից խոսեց: — Նա ասաց,— սկսեց թարգմանել Լեգոլասը,— որ մենք բարեկամների մոտ ենք և վախենալու ոչինչ չունենք... Նա ճանաչել է, որ ես իրենց հյուսիսային ազգակիցներից եմ... Պարզվում է, որ նրան Ֆրոդոյի մասին էլ է հայտնի... Նա առաջարկում է ինձ ու Ֆրոդոյին բարձրանալ ծառը ծանոթանալու համար, իսկ մնացածներին խնդրում է սպասել ներքևում:

Ծառից պարանե սանդուղք իջեցրին: Շատ բարակ պարանից լինելով, այն, ինչպես շուտով համոզվեցին Պահապանները, միաժամանակ արտակարգ ամուր էր: Լեգոլասը ճարպկորեն վազեց սանդուղքով վեր: Ֆրոդոն բարձրանում էր զգույշ ու դանդաղ. տիրոջ հետևից բարձրանում էր հավատարիմ Սամը՝ աշխատելով շնչել հավասարաչափ ու անձայն:

Հսկայական հացենու ճյուղերը բնից բաժանվում էին տարբեր կողմեր ու վեր, իսկ հետո ինքը բունն էր վիթխարի ծաղկի նման շրջանաձև ճյուղավորվում, և ոսկետերև խոշոր բաժակի հատակում դրված էր արծաթագույն տախտակներից հարթակ կամ, ինչպես լորիենցիներն են ասում, դելոն, կենտրոնում անցք՝ պարանե սանդուղքի համար:

Հասնելով մինչև հարթակ, Ֆրոդոն ու Սամը երեք լորիենցի էլֆ տեսան, որոնք անսպասելի դուրս լողացին կայծկլտուն մթության միջից: Քանի որ նրանք անշարժ նստած էին, քողարկիչ թիկնոցները նրանց անտեսանելի էին դարձնում: Էլֆերը մոտեցան շնչակտուր հոբիթներին, և նրանցից մեկն ասաց համընդհանուր լեզվով.

— Բարի գալուստ Լորիեն, բարեկամներ: Մենք հազվադեպ ենք հյուր ընդունում և համարյա մոռացել ենք համընդհանուր լեզուն: Այն հիշում են միայն մեր հետախույզները, որոնք հաճախ հեռանում են Անտառից, որովհետև նրանց հարկավոր է հետևել թշնամիներին և իմանալ միջերկրյան վերջին նորությունները: Նույնիսկ մեր հյուսիսային ցեղակիցներն էլ վաղուց չեն եղել Լորիենում: Ես հետախույզ եմ: Իմ անունը Հելդար է: Իսկ իմ եղբայրները՝ Օրոֆինն ու Ռամիլը, ընդհանուր լեզուն համարյա չգիտեն:

Էլֆերն իրենց անունները լսելով, հարգալիր, բայց լռելյայն խոնարհվեցին հոբիթներին:

— Ձեր մասին մեզ տեղեկացրել են Էլրոնդի սուրհանդակները և մենք վերհիշեցինք, թեպետև դժվարությամբ, որ ինչ-որ տեղ, Միջերկրի հյուսիս-արևմուտքում հնում ապրում էին կոլոտիկներ կամ, ինչպես դուք եք անվանում ձեզ, հոբիթներ: Մենք այստեղ օտարների չենք ընդունում, բայց ձեզ համար երաշխավորում է մեր հյուսիսային ցեղակիցը, դե դուք առանց երաշխավորության էլ չարագործների նման չեք, դրա համար էլ, ինչպես մեզ խնդրել է Էլրոնդը, պատրաստ ենք օգնել ձեզ հասնելու մինչև Անդուին: Այս գիշեր կանցկացնեք այստեղ, իսկ վաղը կանցնեք Կախարդուհով: Ձեր ջոկատում քանի՞ ռազմիկ կա:

— Ութ,— պատասխանեց Հելդարին Լեգոլասը,— նրանք, ես, ևս երկու հոբիթ (ընդամենը չորսն են) և երկու մարդ, մեկի մասին դուք երևի լսած կլինեք՝ Արագորն, հետքագետ-հյուսիսցի:

— Այո, Արագորնը՝ Արաթհորնի որդին, Լորիենում հայտնի է,— հաստատեց Հելդարը: — Նրա մասին մեր տիրուհուց ենք լսել: Բայց դու միայն յոթի անունը տվիր:

— Ութերորդը թզուկ է,— ասաց Լեգոլասը:

— Թզո՞ւկ,— խոժոռվելով հարցրեց Հելդարը: — Մենք թզուկների հետ գործ չունենք: Սև տարիները խզել են մեր դաշինքը: Ես չեմ կարող նրան թողնել Լորիեն:

— Բայց Դաինի թագավորությունից այդ թզուկին Էլրոնդն ինքն է Ֆրոդոյին ուղեկցող նշանակել,— փորձեց Հելդարին համոզել Լեգոլասը:

Հելդարն սկսեց խորհրդակցել եղբայրների հետ՝ մերթ ընդ մերթ Լեգոլասին ինչ-որ բաներ հարցնելով: Վերջինս նրան պատասխանում էր Լորիենի բարբառով, և Ֆրոդոն չհասկացավ, թե ինչի մասին են խոսում նրանք: Վերջապես Հելդարը շրջվեց դեպի հոբիթները:

— Լավ, ես կխախտեմ մեր սովորությունները և թզուկին կթողնեմ Լորիեն,— ասաց նա,— եթե Լեգոլասն ու Արագորնը խոստանում են ուշադիր հետևել նրան: Բայց հենց որ գետն անցնի՝ մենք նրա աչքերը կկապենք: — Էլֆը լռեց, հետո գործնական շարունակեց. — Օրքերն արդեն վաղուց են հոսում դեպի Մորիա, իսկ Լորիենի շուրջը գայլդարձյակներն են վխտում: Դուք ասացիք, որ Մորիայից կռվով եք դուրս եկել, ուրեմն ձեզ հետապնդում են օրքերը: Ժամանակն է հոգալ ձեր բարեկամների մասին: Հոբիթներն այստեղ կգիշերեն: Իսկ մարդիկ և թզուկը՝

հարևան հացենու վրա՝ այնտեղ մենք մեկ դելոն էլ ունենք: Նրանց համար պատասխանատու ես, Լեգոլաս: Մենք չենք վստահում ոչ թզուկներին, ոչ մարդկանց:

Լեգոլասն անաղմուկ իջավ ներքև, որպեսզի կատարի Հելդարի հանձնարարությունը: Շուտով բարձր ֆսֆսոց լսվեց, և Մերին ու Փինը բարձրացան հարթակ. երկուսն էլ վատ էին զգում:

— Մենք վերցրել ենք մեր վերմակները,— քիչ շունչը տեղը բերելով, խոսեց Մերին: — Իսկ մնացած բեռները Պանդուխտը թաքցրեց և վրան ճյուղեր ու տերևներ լցրեց:

— Իզուր եք դրանք քարշ տվել այստեղ,— ասաց Հելդարը: — Մելորնի գագաթին ձմեռը ցուրտ է, չնայած այսօր հարավային քամի է, մենք և՛ վերմակ ունենք, և՛ մորթե աստառով տաք թիկնոցներ, չէ՞ որ այստեղ Սելեբրանդի և Նիմրոդելի միացման տեղում մշտական պահակակետ կա:

Հոբիթներն, իհարկե, չհրաժարվեցին երկրորդ (պետք է նշել՝ շատ համեղ) ընթրիքից, իսկ ուտելուց հետո հագան մորթե թիկնոցները, փաթաթվեցին իրենց վերմակների, հետո էլֆերի վերմակների մեջ ու փորձեցին քնել, բայց ուր էր թե...

Հոբիթները չեն սիրում շատ վերև բարձրանալ և երբեք վերևում ննջարան չեն սարքում, որովհետև նրանց մեկհարկանի կացարաններում ուղղակի ոչ մի «վերև» չկա: Իսկ հսկայական հացենու կատարին գտնվող դելոնը ո՛չ պատեր ուներ, ո՛չ էլ բազրիք, միայն մի շարժական խսիր, որը ժամապահներին պաշտպանում էր քամուց: Դե փորձիր քնել այդպիսի ննջարանում:

— Միայն թե գետնին չզարթնենք,— փնթփնթաց Փինը:

— Եթե ես քնեմ,— արձագանքեց Սամը,— գետնին էլ թրմփամ՝ չեմ զարթնի: Էս բարձրաբերձ տեղում հոբիթի քուն կտանի՞... քունը գլխին ավելացրեց նա և տեղնուտեղն սկսեց խռմփացնել:

Ֆրոդոն ցրված նայում էր մթության մեջ: Կողքին խաղաղ ֆսֆսացնում էր Սամը, երկնքում իրար աչքով էին անում աղոտ աստղերը, դելոնի եզրին մոտ նստել էին գիշերային խավարի մեջ հազիվ զանազանվող էլֆերը: Հոբիթը տեսնում էր միայն երկու ժամապահներին, երրորդը երևի իջել էր ներքև: Ֆրոդոն հոգնած փակեց աչքերը և տերևների շրշյունի օրորից քնեց: Նա արթնացավ լուսադեմին: Հոբիթները քնած էին: Դելոնի վրա ոչ մի էլֆ չկար: Թույլ լուսավորում էր լուսնի մահիկը: Հեռվում խռպոտ ձայներ էին լսվում, համաչափ ոտնաձայն ու մետաղի զնգոց: Աղմուկն աճում էր, որոշակի դառնում:

Հանկարծ դելոնի կենտրոնական անցքի մոտ երևաց ինչ-որ մեկի գլուխը՝ կնգուղով: Ֆրոդոն վեր թռավ: Էլֆ էր:

— Ի՞նչ է պատահել,— շշնջաց Ֆրոդոն:

— *Իրչի*... կարճ փսփսաց էլֆն ու դելոնի վրա նետեց փաթաթված սանդուղքը:

— Օրքե՞րն են,— շշունջով հարցրեց Ֆրոդոն:

Բայց էլֆը ոչինչ չպատասխանելով, անհետացավ:

Ոտնաձայնը հեռացավ դեպի հյուսիս-արևելք: Անտառի վրա սև լռություն իջավ: Հիմա արդեն քամին էլ տերևները չէր խշխշացնում, նույնիսկ ջրվեժի ձայնը չէր լսվում: Ֆրոդոն նստեց ու փաթաթվեց վերմակով: Լավ է, որ օրքերը գետնի վրա չհասան իրենց... Բայց միթե հացենին հուսալի պաշպանություն է: Օրքերը հռչակված էին իրենց սուր հոտառությամբ, և նրանք կարողանում էին ծառ բարձրանալ: Ֆրոդոն պատյանից դուրս քաշեց Ձարդողը՝ շեղբը բռնկվեց, բայց շուտով հանգեց: Եվ այնուամենայնիվ Ֆրոդոյի տագնապն անընդհատ աճում էր: Նա վեր կացավ և, թաքուն մոտենալով սանդուղքի համար թողնված անցքին, զգուշությամբ նայեց ներքև: Ոչինչ տեսնել չհաջողվեց, բայց խշշացող շրշյուն լսվեց, որը նման չէր խոտերի մեջ քամու խշխշոցին:

Էլֆերի քայլերին էլ նման չէր, որովհետև էլֆերն անաղմուկ են քայլում: Ֆրոդոն շունչը պահած ականջ դրեց: Այո, ինչ-որ մեկը մագլցում էր վերև: Ֆրոդոն սևեռուն նայում էր մթության մեջ...

Եվ շուտով տեսավ փայլուն աչքերը: Նա, ով մագլցում էր դեպի դելոնը, քարացավ, ներքևում կասկածելի ձայները կտրվեցին, և հիմա առանց թարթելու նայում էր Ֆրոդոյին: Ֆրոդոն

սարսռաց: Աչքերը թարթեցին, արծաթամոխրագույն բնի շուրջը արագորեն սահեց անորոշ ստվերը, և բնից այն կողմ լսվեց մարող խշխշոց...

Իսկ մթության միջից հանկարծ դուրս լողաց լորիենցի Հելդարը: Համարյա ճյուղերին դիպչելով, նա մագլցեց վերև և զարմացած ասաց.

— Այստեղ ձեզ մի տարօրինակ եկվոր այցելեց: Ես նրան դեռ գետնից նկատեցի: Եվ ըստ երևույթին նա էլ ինձ տեսավ, որովհետև փախավ: Բայց դա օրք չէր: Սկզբում, երբ ես նայեցի նրան, մտածեցի, թե ձեզանից, կոլոտիկներից մեկն է իջել դելոնից՝ եկվորը փոքրամարմին էր: Բայց ախր դուք ինձնից ինչո՞ւ պետք է փախչեիք, և ինձ համար պարզ դարձավ, որ դա թշնամի է:

Բայց ես որոշեցի նրա վրա չկրակել, քանի որ նա կարող էր մահվանից առաջ ճչալ, իսկ օրքերը դեռ չէին հասցրել շատ հեռու գնալ: Նրանք հայտնվեցին Մորիայի կողմից. գարշելի չարագործներն անցել են գետը և երկար վարգել հարավային ափով՝ երևի հոտն առել են, թե ուր եք թեքվել դուք: Նրանք այստեղ հարյուր, հարյուր հիսուն հոգի կլինեին, ոչ պակաս: Մենք չէինք կարողանա կանգնեցնել նրանց, դրա համար էլ ես մնացի պահակակետում, Ռամիլը ձեր ձայները նմանակելով նրանց հորդան քաշել է իր հետևից Գաղտնի Թավուտները, իսկ Օրոֆինը ուղևորվել է մերոնց մոտ՝ օգնություն կանչելու:

Ոչ մի օրք անտառից չի ազատվի: Իսկ վաղվանից արևմտյան սահմանները կհսկեն սահմանապահ ջոկատները: Քնիր: Լուսաբացին մենք կուղևորվենք Սթերրու:

Ձմեռային թույլ արևը հսկայական հացենիների տերևներում ոսկեզօծվելով, լուսադեմին արթնացած հոբիթներին հիշեցնում էր իրենց հեռավոր Հոբիթստանի ամառային արևաձագը: Դելոնից դեպի արևմուտք ծառերի ճյուղերի միջից երևում էր Սպիտակբաշի նեղ հովիտը՝ բազմաթիվ ջրվեժների փրփրադեզ սանդուղքով: Հյուսիս-արևմուտքում փայլում էր Արծաթաջուրը: Ոսկե Կախարդուհուն ծառերը ծածկում էին:

Պահապաններն արագ պատրաստվեցին ճանապարհ ընկնելու:

— Մնաս բարո՛վ, Նիմրոդել,— բացականչեց Լեգոլասը:

— Մնաս բարով,— կրկնեց այդ բառերը Ֆրոդոն՝ մտածելով, որ հազիվ թե ինքը երբևէ տեսնի այդպիսի զարմանալիորեն պայծառ, հանգստացնող ձայնով ու կենարար գետ:

Հելդարը նրանց տարավ Կախարդուհու ափով: Շուտով նրանց միացավ և Ռամիլը:

— Ձեզ հետապնդողները,— ասաց նա Պահապաններին,— կխճճվեն Գաղտնի Թավուտներում մինչև երեկո, և նրանցից ոչ մեկը տուն չի վերադառնա՝ այդ մասին հոգ կտանեն Լորիենի ռազմիկները:

Մոտ երեք լիգ անցնելուց հետո Հելդարը կանգնեց և, դեմքով շրջվելով դեպի Կախարդուհին, երկու անգամ թռչունի նման ցածր սուլեց:

— Այն ափին,— բացատրեց նա Պահապաններին,— երկրորդ պահակակետն է գտնվում:

Ծառերի հետևից դուրս եկավ էլֆ ժամապահը՝ քողարկող թիկնոցով, բայց կնգուղը հետ գցած: Հելդարը խորշում փաթաթված արծաթապատ առասանը հմտորեն նետեց գետի վրայով: Էլֆը բռնեց այն ու կապեց ծառին:

— Կախարդուհին այստեղ շատ սառն է,— ասաց Հելդարը: — Բայց մեր բուռն ու անհանգիստ օրերին կայուն կամուրջներ կառուցելը վտանգավոր է: Նայեք՝ ինչպես ենք մենք անցնում գետը: — Էլֆը ամուր ձգեց առասանն ու պինդ կապեց ծառին: Իսկ հետո հանգիստ, ասես ճանապարհին քայլելիս լիներ, գետի վրայով գնաց ու եկավ:

— Դեհ ինձ համար դա սովորական անցում է,— ասաց Լեգոլասը: — Իսկ մյուսներն ի՞նչ անեն: Մի՞թե նրանք լողալով պետք է անցնեն:

— Ինչո՞ւ լողալով,— պատասխանեց Հելդարը: — Մենք այստեղ ևս երկու առասան ունենք: Մեկը կկապենք առաջինից քիչ վերև և, դրանից բռնելով, քո ընկերները կանցնեն:

Երբ այդ երերուն կամուրջը պատրաստ էր, Պահապաններն անցան հյուսիսային ափ՝ ոմանք դանդաղ, ոմանք մեծ դժվարությամբ, մյուսներն ավելի արագ ու անկաշկանդ: Հոբիթներից լավագույն լարագնացը Փինը դուրս եկավ. նա բռնել էր միայն մի ճոպանից և բավական վստահ էր առաջ գնում, սակայն աշխատում էր ներքև չնայել: Իսկ Սամը քայլում էր դանդաղ,

մանրիկ քայլերով, ձեռքերով ճոպաններից պինդ բռնած ու հայացքը ոսկեցոլք ջրից չկտրելով: Ափին նա թեթևացած շունչ քաշեց և բացականչեց.

— Դար ապրես՝ դար կսովորես, ինչպես ասում է իմ ծերուկը, դրա համար էլ ամբողջ կյանքում հողն է փորփրում և ոչ թե սարդի պես նստում է սարդոստայնում:

Ռամիլը մնաց հարավային ափին և գետանցումը վերջացնելուց հետո արձակեց երկու ճոպանները, իսկ երրորդը, որն արձակել էր գետն անցած Հելդարը, ձգեց դեպի իրեն և կծկեց: Հետո կծիկը գցեց ուսին, Պահապաններին հրաժեշտ տվեց ձեռքը թափահարելով և հետ գնաց դեպի առաջին կամուրջը:

— Եվ այսպես, ընկերներ, դուք մուտք եք գործում Սթերրու կամ ձեր լեզվով՝ Լորիենի սիրտը,— հանդիսավոր հայտարարեց Հելդարը: — Այս ափին քչերին է բախտ վիճակվել լինել... — Հելդարը լռեց և գործնական վերջացրեց. — իսկ հիմա մենք թզուկի աչքերը կկապենք՝ ես այդ մասին ասել եմ Լեգոլասին: Մնացածները կգնան առանց աչքերը կապելու, քանի չենք մոտեցել Անտառային ամրոցին:

— Լեգոլասը չէր կարող իմ փոխարեն որոշել,— խոժոռվելով խոսեց Ջիմլին: — Ես գերի չեմ, ոչ էլ Սաուրոնի լրտեսը: Դաինի Սարամիջի թագավորության բնակիչները երբեք Թշնամու հետ գործարքի մեջ չեն մտել: Ինչո՞ւ ես դու ինձ չարարկու համարում:

— Ի՞նչ ես կարծում,— հարցրեց նրան Հելդարը,— ես մեր հին օրենքը կխախտե՞ի, եթե քեզ չարարկու համարեի: Ըստ օրենքի, ես պետք է ոչնչացնեմ Սթերրու մտնելու փորձ անող թզուկին: Իսկ դու իմ օգնությամբ գետն անցար:

— Ես կգնամ առանց աչքակապի կամ կվերադառնամ Սարամիջի թագավորություն, որտեղ ինձ ոչ ոք մատնիչ չի համարի,— հպարտ պատասխանեց Ջիմլին Հելդարին: Հետ գնալով, նա ձեռքը տարավ տապարին:

— Դու քո վերադարձի ճանապարհը փակել ես Ոսկե Կախարդուհին անցնելով,— ասաց Հելդարը: — Ես պետք է քեզ հասցնեմ տիրակալների մոտ, իսկ նրանք արդեն թող որոշեն, թե ինչ անեն քեզ: Եթե փորձես լողալով անցնել, առաջին իսկ ժամապահը կնետահարի քեզ:

Ջիմլին գոտու տակից դուրս քաշեց տապարը:

Հելդարը կայծակնային արագությամբ հանեց նետն ու լարեց աղեղը: Երկրորդ էլֆը՝ նույնպես:

— Անիծյալ կամակոր,— քրթմնջաց Լեգոլասը:

— Ջիմլի, տեղիցդ չշարժվես,— փնչացրեց Արագորնը այնպես, որ Լեգոլասին ոչ ոք չլսեց: Ջիմլին քարացավ և Արագորնը ասաց. — Ջոկատը ես եմ առաջնորդում, դուք պետք է ենթարկվեք ինձ: Ջիմլին անարդարացիորեն նվաստացած կլինի, եթե միայն նրա աչքերը կապեն: Մենք բոլորս կգնանք կապված աչքերով... Չնայած դա ճանապարհորդությունը կդանդաղեցնի:

— Օ՜հ, պատկերացնո՞ւմ եք ինչ տեսք կունենանք,— անսպասելի ծիծաղելով բացականչեց Ջիմլին: — Գժերի երթ Ոսկի Անտառում... Ես պատրաստ եմ Լեգոլասի հետ միասին գժի դեր խաղալ,— ուրախ ավելացրեց նա,— մնացածները կարող են դիտող մնալ:

— Դու թզուկ ես,— վրդովվեց Լեգոլասը,— իսկ ես...

— Հաստակո՞ղ,— զայրալից հարցրեց նրան Արագորնը: — Չեղավ, եկեք արդարադատ լինենք: Կապիր աչքերս,— դիմեց նա Հելդարին:

— Հիշի՜ր, եթե ընկնեմ՝ ամեն կապտուկի համար պատասխան ես տալու,— Հելդարի վրա քթի տակ մռլտաց թզուկը՝ շոշափելով ձիգ կապված կապը:

— Չե՜ս ընկնի,— վստահ ասաց Հելդարը,— մեր Լորիենում հոյակապ արահետներ են:

— Զարմանալի ժամանակներ են,— փնթփնթաց Լեգոլասը: — Բոլորս նույն Թշնամու թշնամիներն ենք, երկնքում լուսավորում է պայծառ արեգակը և այնուհանդերձ ես՝ լինելով իմ ազգակիցների հյուրը, պետք է որպես կույր քայլեմ:

— Ոչ թե զարմանալի, այլ՝ զարհուրելի, առարկեց նրան Հելդարը: — Թշնամու չարագործ իմաստությունն ու ահարկու զորեղությունն է մեր մեջ անմիաբանություն ու փոխադարձ անվստահություն հարուցում: Մեզ՝ լորիենցիներիս, այնքան անգամ են դավել, որ հիմա ոչ ոքի

չենք հավատում, բացի, թերևս, Ազատքի մեր ազգակիցներից: Մեր բնակատեղին բոլոր կողմերից թշնամիներով շրջապատված մի կղզու է վերածվել: — Մի քիչ լռելուց հետո Հելդարը մռայլ ավելացրեց. — Խավարի Վարագույրը տարածվում է ու ամրանում: Այն չի կարողանում պարուրել Լորիենը, բայց նրա հզոր, սև թևերը շրջափակում են մեզ և՛ արևելքից, և՛ արևմուտքից: Հիմա եթե մենք վճռենք հեռանալ, մեզ չի հաջողվի ճեղքել-հասնել ծով: Մշուշապատն արդեն գրավված է օրքերի կողմից: Խլուտում վխտում են գայլդարձյակների ոհմակները: Ասում են, արդեն մթամած է Մուստանգրիմը, և Թշնամին մոտեցել է Մեծ Գետին: Նշանակում է՝ ազատ նավահանգիստներ էլֆերին մնացել են միայն հյուսիս-արևմուտքում, Հավերժական անտառից և կոլոտիկների հողերից այն կողմ...

— Այո, մեր հողերից արևմուտք էլֆերի ծովամերձ բնակավայրեր կան,— կարևոր տեսքով հաստատեց Մերին:

— Երջանիկ է այն ժողովուրդը,— բացականչեց Հելդարը,— որ ապրում է արևմտյան նավահանգիստներից ոչ հեռու: Մենք անհիշելի ժամանակներից չենք եղել այնտեղ: Պատմիր ինձ նրանց մասին,— խնդրեց նա հոբիթին:

— Ախր ես այնտեղ չեմ եղել,— խոստովանեց Մերին: — Առաջներում ճանապարհորդելու առիթ չեմ ունեցել: Եվ եթե իմանայի, թե ինչ է կատարվում աշխարհում, ապա դժվար թե Հոբիթստանից հեռանալու վճռականություն ունենայի:

— Նույնիսկ Իմլադրիսը կամ Քվեթլորիենը տեսնելու համա՞ր,— հարցրեց Հելդարը: — Մեր ներկայիս աշխարհը դաժան է ու վտանգավոր, որոշ ազատ հողեր մթապատ են, իսկ սերը հաճախ վշտի է վերածվում, բայց դրանից ավելի գեղեցիկ է դառնում: — Էլֆը լռեց ու թախծոտ վերջացրեց. — Շատերը կարծում են, որ Խավարի Վարագույրը ժամանակի ընթացքում կցրվի նույնիսկ Մորդորից ու անհետ կկորչի... Ես դրան չեմ հավատում: Աշխարհն արդեն երբեք նախկինը չի լինի, իսկ արևը՝ նույնքան պայծառ, ինչպես առաջ: Գուցե մի կարճատև պայծառացում լինի, և մենք՝ էլֆերս, դուրս գանք ծով... որպեսզի Միջերկրից հեռանանք ընդմիշտ: Մի՞թե մենք պետք է հեռանանք Լորիենից և ապրենք մի երկրում, ուր մելորն չի աճում... Չէ՞ որ եթե հավատանք էլֆերի ավանդություններին, ապա ծովից այն կողմ Ոսկի անտառներ չկան: Ես չգիտեմ, թե ինչպես ենք այնտեղ ապրելու...

Պահապանները իծաշարուկի գնում էին արահետով: Շարքի հետևից անշտապ քայլում էր Հելդարը, իսկ երթը փակում էր երկրորդ լորիենցին: Արահետը փափուկ էր, հավանաբար, ավազ էր, և շուտով ճամփորդներն սկսեցին ավելի վստահ քայլել: Երևի այն պատճառով, որ նրանք փակ աչքերով էին գնում, նրանց զգայնությունը չափազանց սրված էր: Ֆրոդոն զգում էր ձմեռվա քուն մտած, բայց կանաչ խոտի թեթև բույրը, լսում էր հացենու տերևների փսփսոցը, և՛ թռչունների դայլայլը, և՛ առվակների քչքչոցը, և՛ հորդառատ Կախարդուհու խաղաղ ճողփյունը: Երբ Ջոկատը հատում էր դաշտը, ձմեռային պայծառ արևը մեղմ շոյում էր նրանց դեմքերը:

Դեռևս Կախարդուհու մոտ նրան թվաց, թե ինքը հեռանում է այսօրվա աշխարհից, կարծես այդ երերուն ճոպանե կամրջակը գցված էր երեք Դարաշրջանի վրայով և տանում էր դեպի վաղանցուկ նախասկզբնական օրեր: Սթերրուում այդ տարօրինակ զգացողությունն ուժեղացավ՝ հնարավոր է աչքերը պինդ կապած լինելու պատճառով, Ֆրոդոն չէր կարողանում ազատվել այն մտքից, որ իր շուրջը կենդանանում է անցյալը: Ազատքում ամեն ինչ անցյալն էր հիշեցնում, իսկ այստեղ այն կենդանի էր ու իրական. չարությունն ու չարարկությունը, վիշտն ու տառապանքը թեև հյուսիսային էլֆերի վրա իշխանություն չունեին, բայց ընդհուպ մոտեցել էին Ազատքին, իսկ Լորիենն այնպես էր ապրում, ասես չարը դեռ չէր ծնվել:

Պահապաններն առանց դադարի քայլում էին Հելդարի հետևից, մինչև որ պաղ քամին լուր բերեց իջնող երեկոյի մասին: Նրանք ընթրեցին և, վերմակների մեջ փաթաթվելով, հանգիստ քնեցին փափուկ մարգագետնում, որը հյուսիսային քամիներից պաշտպանված էր թփուտներով: Հելդարը նրանց թույլ չտվեց աչքի կապերը հանել, այնպես որ նրանք ծառը բարձրանալ չէին կարող: Առավոտյան նորից ճանապարհ ընկան և հանգստանալու նստեցին միայն կեսօրից հետո: Ուտելուց հետո արդեն պատրաստվում էին շարժվել, երբ էլֆերի ձայներ լսեցին:

Դեպի Անտառի հյուսիս-արևմտյան սահմաններն էր շարժվում մի ուժեղ ջոկատ, որ հետ մղի օրքերի հարձակումը, եթե նրանք նորից քիթները Լորիեն մտցնեն: Ռազմիկների բերած

լուրերի որոշ մասը Հելդարը համառոտ պատմեց Պահապաններին: Նրանց հասնել փորձող օրքերին ոչնչացրել էին Գաղտնի Թավուտներում: Էլֆերը մի տարօրինակ արարած էին տեսել, որը կարծես թե երկոտանի էր, բայց գազանի էր նման. Էլֆերը եկվորին բռնել չէին կարողացել, իսկ հեռվից նրան նետահարել չէին կամեցել՝ հանկարծ ու դա մի անմեղ կենդանի է: Եվ եկվորը գետի երկարությամբ փախել է դեպի արևելք: Պահապաններին զարմացրեց Էլֆերի անհոգությունը, բայց Հելդարը նրանց բացատրեց, որ իրական չարարկուները Լորիեն ներխուժելու փորձ անում են միայն հորդաներով, ուրեմն եկվորն իսկապես փոքրիկ գազան էր:

— Բայց դեռ ամենագլխավորը չգիտեք,— ասաց Հելդարը: — Լորիենի տիրակալը թույլ է տվել բոլորիդ, նույնիսկ թզուկին, ճանապարհը շարունակել աչքերը բաց: Երևում է, նրանք լավ գիտեն ձեզանից յուրաքանչյուրին: Կարող է պատահել, իմ բացակայության ժամանակ Էլրոնդի կողմից նոր սուրհանդակ է եկել Լորիեն... — Նա առաջինը Ջիմլիի աչքակապը հանեց և, խոնարհվելով, բացականչեց. — Մի՛ զայրացիր, բարեկամ... Սև տարիներն սկսվելուց հետո ոչ մի թզուկ Լորիենում չի եղել: Քեզ մեծ պատվի են արժանացրել...

Շուտով Ֆրոդոյի աչքակապն էլ հանեցին: Նա աչքերը բացեց և հուզմունքով շուրջը նայեց: Պահապանները կանգնած էին մի ընդարձակ մարգագետնում: Նրանցից ձախ բարձրանում էր զմրուխտ կանաչով պատված մի բլուր: Բլուրը պսակված էր երկնաձիգ ու հինավուրց ծառերի երկշարք թագով, իսկ կենտրոնում աճել էր նույնիսկ այդ հսկաների մեջ վիթխարի երևացող ևս մեկ ծառ: Դա մելորն էր՝ ոսկեգույն սաղարթի մեջ սպիտակ դելոնով մի հսկայական հացենին: Ծառաշար թագի ներքին օղակը նույնպես հսկայական հացենիներ էին, իսկ արտաքինը՝ հոբիթներին անծանոթ ծառեր էին, արտակարգ սլացիկ սպիտակ բներով և գնդաձև խիտ կատարներով, բայց առանց տերևների: Բոլորաձև բլրի զմրուխտ լանջերը վառվում էին ձմեռային աստղերի նման սպիտակ և փոքրիկ լճակների նման կապույտ ծաղիկներով, իսկ բլրի վրա, երկնքի անհուն կապույտում, փայլում էր միջօրեի պայծառ արևը:

— Ձեր առջև Վշտալի Դամբանաբլուրն է,— թախծոտ հպարտությամբ խոսեց Հելդարը,— որտեղ իր կացարանի տեղում թաղված է Լորիենի կամ ինչպես դուք եք ասում՝ Օրինյալ Երկրի առաջին տերը՝ Էմրոսը, որը այստեղ էր տեղափոխվել Էլդարից: Այստեղ նույնիսկ ամենադաժան ձմռանը չեն թառամում էլդարյան մշտադալար ծաղիկներն ու անցյալի մասին շրշում է մշտականաչ խոտը: Հանգստացեք, մեզ մեկ անցում է մնում, երեկոյան դուք կներկայանաք Տիրակալներին:

Հոգնած Պահապանները պառկեցին խոտին, իսկ Ֆրոդոն շփոթահար շուրջն էր նայում՝ ուժ չունենալով պառկել կամ նույնիսկ շարժվել: Նա նայում էր անցյալի գիրկն ընկղմված աշխարհին, որ լուսավորված էր հավիտյանս կորուսյալ լույսով, և այդ շշմեցուցիչ հին աշխարհը, նրա զարմացած աչքերի առջև բացվելով, կարծես թե հենց նրա աչքերի առջև էլ ծնվում էր: Նա տեսնում էր միայն իրեն ծանոթ գույները. սպիտակ, դեղին, կանաչ, կապույտ: Բայց դրանք այնքան թարմ ու վառ էին, ասես առաջին անգամ այստեղ էին նրան հայտնվել, իսկ ինքը նայելուց հետո անուններ է տվել: Այստեղ չէր կարելի ամառը ափսոսալ գարնան համար կամ ձմռանը ամառվա մասին երազել՝ Օրինյալ Երկրի անփոփոխ կյանքում անցյալն ու ներկան միաձուլվում էին: Ֆրոդոն հանկարծ նկատեց Սամին՝ նա ապշահար աչքերն էր տրորում, ասես տեսածին չէր հավատում:

— Առաջ ես մտածում էի,— քրթմնջաց Սամը,— որ եթե էլֆեր են, ուրեմն գիշեր... ուրեմն մութ անտառ, և՛ լուսին, և՛ աստղեր... Իսկ այստեղ մի տես է՝ սպիտակ օր... Էն էլ պայծառից պայծա՛ռ, լուսավորից լուսավո՛ր... Եվ էդ նրանց շատ է սազ գալիս... Ոնց որ թե դու ոչ թե ինքդ ես, այլ երգի մեջ ես... Եթե հասկանում եք մտքինս:

Հելդարը նայեց նրանց ու ժպտաց, ասես ոչ միայն նրա բառերն էր լսել, ոչ միայն հասկացել էր Սամի մտքինը, այլև թափանցել է նրա մտքերի նվիրական խորքերը:

— Դուք զգացիք Լորիենի տիրուհու զորությունը,— հոբիթների համար ոչ այնքան հասկանալի բացատրեց նա: — Ուզո՞ւմ եք բարձրանալ Էմրոսի դելոնը:

... Հոբիթները գնում էին դեպի Դամբանաբլուրի գագաթը: Ֆրոդոն անշտապ քայլում էր Հելդարի հետևից, դեմքին զգում ու շնչում էր զեփյուռը: Մի խոսքով ապրում էր և, սակայն, պարզորոշ զգում էր, որ ընկել է հավետ անփոփոխ մի աշխարհ և որ երբ ինքն ստիպված

կլինի հեռանալ այստեղից, նա, հեռավոր հոբիթստանցի ճամփորդը, հավիտյանս կմնա այս աշխարհում:

Նրանք մոտեցան կենտրոնական մելորնին: Հենց այդ պահին քամին փչեց հարավից, և ոսկեգույն հացենու շրշյունի մեջ Ֆրոդոն լսեց, թե ինչպես կապուտակ ալիքները անցած-գնացած հեռվից բախվում են վաղուց անհատակ խորքերը քշված ափին, իսկ անծայրածիր լազուրի վերևում դայլայլում են թռչուններ, որպիսիք ոչ ոք չի տեսել Միջերկրում:

Հելդարն արդեն կորավ վերևում: Ֆրոդոն բռնեց պարանե սանուղքը, իսկ ձախ ձեռքով հենվեց մելորնին. դեռ երբեք այդքան լրիվ նրա առջև չէր բացվել ծառի մեջ տրոփող կենդանի կյանքը: Նա զգում էր թավիշ մաշկ-կեղևը և հզոր, բայց անպաշտպան փայտե մարմինը ոչ թե ատաղձագործի ու հյուսնի նման, այլ այնպես, ասես դարձել էր հացենու կաթնեղբայրը: Դելոնի վրա Հելդարը բռնեց նրա ձեռքը և, շրջվելով դեպի արևելք, լրջորեն ասաց.

— Ամենից առաջ նայիր այնտեղ...

Ֆրոդոն հնազանդ նայեց արևելք և հեռվում տեսավ մի ոչ բարձր բլուր, որը կարծես ծածկված էր վիթխարի ծառերով կամ թափանցիկ ոսկեզօծ գմբեթներով ու արծաթագույն դղյակներով: Ինչպես Ֆրոդոյին թվաց, բլուրը լուսավոր, անհաղթահարելի ձգողական ուժ էր ճառագում, և հանկարծ ասես նրան թևեր աճեցին, ցանկացավ բարձրանալ թափանցիկ օդ, որ թռչի դեպի այդ պայծառ բլուր և խաղաղություն մեջ հանգստանա բոլոր ձախորդություններից: Հետո նա նայեց հարավ-արևելք և տեսավ այնտեղ տարածված Ոսկի Անտառը, որի միջով հանդարտ հոսում էր Անդուին Մեծ գետը թափվող Կախարդուհիին: Նա ուշադիր նայեց և զարմանքով նկատեց, որ Անդուին Մեծի ձախ ափը և մյուս՝ արևելյան ափի ցածրադիր մարգագետինները թեթևակի ծածկված են մոխրասպիտակ շղարշով. այստեղ ձմեռ էր: Մարգագետիններում տեղ-տեղ թփուտներ էին ցցված, իսկ հորիզոնից այն կողմ, ցածրիկ բլուրները ծածկված էին նոսր անտառով: Մոխրագույն մշուշում դժգունում ու մարմրում էին Քվեթլորիենը ոսկեզօծող իրիկնային արևի դժգույն ճառագայթները:

Հելդարը նայեց Անդուինին և ասաց.

— Քիչ այն կողմ, այդ բլուրներից հետո սկսվում է Չարքանտառի Հմայաթավուտքը, որտեղ եղևնիներն ու սոճիները դեպի լույսը ձգվելով, անողոքաբար խեղդում են իրենց ազգակիցներին, իսկ ներքևում, հեղձուկ ու խոնավ կիսամութի մեջ, գետնին կպած, կանաչ-կանաչ փտում են դրանց ստորին ճյուղերը: Այնտեղ, բարձր բայց ճահճապատ բլրի վրա կանգնած է Դուլ Գուլդուրի անառիկ դղյակը, որտեղ մի ժամանակ թաքնվում էր Թշնամին, իսկ այժմ ինչ-որ անհասկանալի բան է տեղի ունենում: Դղյակի փայտաշեն սրածայր տանիքի վերևում հաճախ են կուտակվում սև ամպեր և փայլատակում են կայծակները: Բայց թե ինչ ուժեր են հակամարտում այնտեղ Թավուտքում՝ առայժմ հայտնի չէ նույնիսկ մեր տիրուհուն: — Հելդարը լռեց և ցած իջավ, Ֆրոդոն ու Սամը հետևեցին Էլֆին:

Դամբանաբլուրի ստորոտում նրանք տեսան Էմրոսի հացենու պես լուռ ու անշարժ կանգնած Արագորնին. նրա ձեռքին մի արծաթավուն ծաղիկ կար, իսկ աչքերում՝ երջանկության հուշերի ցոլքեր: Ֆրոդոն հասկացավ, որ իրենց ուղեկցորդը Լորիենի անփոփոխականությամբ հարատևող մի լուսավոր պահ է ապրում: Արագորնի խիստ դեմքն այժմ երիտասարդ էր ու գեղեցիկ, իսկ նրա ճամփորդական խունացած թիկնոցը արևի շողերում ոսկեգույն էր երևում: Ֆրոդոյի առջև նումենորցի ասպետ էր կանգնած... — *Վանիմելդա, Արվեն*,— լսեց նա: Արագորնը շարժվեց ու տեսավ հոբիթներին:

— Մշտապես այստեղ է ձգտում իմ սիրտը,— տխուր ժպտալով ասաց Արագորնը: — Եթե մեր ուղին հաղթանակով չավարտվի, այն այստեղ կհանգի հավիտյանս: Գնացինք... — Արագորնը բռնեց հոբիթների ձեռքերը և միացավ մյուսներին: Այս կյանքում նա այևս երբեք այստեղ չեղավ:

Գլուխ յոթերորդ. Գալադրիելի հայելին

Հելդարը Պահապաններին առաջ տարավ: Արևը թեքվեց Մշուշապատ լեռների կողմը, իսկ արևելքում թանձրանում էին երեկոյան ստվերները: Արահետը խորացավ հացենու անտառ, որտեղ կիսամութն արդեն գիշեր էր դառնում: Էլֆերը վառեցին աղոտ լապտերները:

Բայց շուտով մութը նորից թուլացավ՝ Պահապանները մի ընդարձակ դաշտ դուրս եկան: Առջևում դաշտը սահուն լայնանում էր՝ բաց անելով համարյա զառիկող զմրուխտ լանջերով ու լայն խանդակով ճամփորդներից բաժանված բարձր պատ: Պատի հետևում, արծաթե աստղերից պտավոր դարձած մթնող երկնքի հովանու տակ այնպիսի հսկայական հացենիներ էին բարձրանում, որպիսիք նրանք չէին տեսել նույնիսկ Լորիենում: Այդ աժդահաների ճյուղերը բոլորաձև աճում էին տարբեր բարձրությամբ, ասես հարկեր գոյացնելով: Յուրաքանչյուր հարկի խիտ տերևների միջից փայլփլում էին բազմաթիվ գույնզգույն կրակներ՝ արծաթե, կապույտ, կանաչ և ոսկի: Հելդարը շրջվեց Պահապանների կողմը և ասաց.

— Սա Գելեթհենն է՝ Անտառաբերդը, որտեղ հնուց ապրում են Լորիենի տիրակալները... Բայց այստեղից բերդ ընկնել հնարավոր չէ, քանի որ դարպասը հարավային կողմում է և այնքան էլ մոտիկ չէ՝ Գելեթհենը մեծ է:

Խանդակի երկարությամբ վեցանիստ մոլոշաքարով սալարկված լայն ճանապարհ էր ձգվում՝ այն թեքվում էր հարավ-արևելք: Պահապաններից ձախ, մութ պատից այն կողմ բարձրանում էր կրակներով գունազարդված Գելեթհենը: Սաղարթներում վառվում էին նորանոր կրակներ, և երբ ճամփորդները մոտեցան կամրջին, Գելեթհենի բլրի թեք լանջը գունավոր աստղալից երկնքի արտացոլում էր թվում:

Սպիտակ քարից կամարակապ կամուրջը ճամփորդներին մոտեցրեց մի հոծ պատի, որի երկարությամբ Հելդարը գնաց դեպի արևելք: Մի երեսուն քայլից հետո պատը վերջացավ, բայց նրա հետևում, առաջինից չորս քայլ հեռավորության վրա և զուգահեռ ձգվում էր երկրորդ պատը, իսկ դրանց արանքում նեղ միջանցք էր: Հելդարը թեքվեց հենց այդ միջանցքը. այժմ ճամփորդները հետ վերադարձան, միջանցքի վերջում երևում էր արևելք նայող դարպասը: Ֆրոդոն հիացավ: Հարավային պատի մեջ բացված դարպասը նայում էր Անդուին Մեծին: Իսկ այդպես էր ստացվել, որովհետև հին վարպետները քաղաքի շուրջը կառուցած պատը չէին պարփակել, այլ ծայրերը կանգնեցրել էին մեկը մյուսին զուգահեռ՝ մեջտեղում նեղ միջանցք թողնելով: Ահա այդ միջանցքում էր գտնվում դարպասը:

Դարպասից աջ, բրոնզե շղթայից փայտե կոթով մուրճ էր կախված: Մուրճով բախելով՝ Հելդարն ինչ-որ բան գոռաց, և ծանր դարպասն անաղմուկ բացվեց, բայց Ֆրոդոն ոչ մի պահակ չտեսավ: Ճամփորդները մտան, և դարպասը փակվեց: Էլի մի քսան-երեսուն քայլ հետո աջ կողմի բարձր պատն ընդհատվեց՝ Պահապանները մտան Անտառաբերդ: Գելեթհենի բնակիչները չէին երևում, բայց ամեն տեղ լսվում էին նրանց զրնգուն ձայները, իսկ բլրի վրա գարնան անձրևի նման մեղմալուր և ուրախ երգ էր լսվում:

Պահապանները բավական երկար էին բարձրանում: Վերջապես տեսան մուգ կանաչ լապտերիկներով լուսավորված բարձր շատրվան: Շատրվանի հետևում, բլրի գագաթին բարձրանում էր արծաթափայլ, թավիշ կեղևով և ոսկե տերևների մետաքսե շրշյունով մի հզոր հացենի: Սրա բնի երկարությամբ դրված սպիտակ սանդուղքը կորչում էր ոսկեթավ մթնշաղում: Այդ սանդուղքի ստորին աստիճաններին երեք զինված էլֆ էին նստած: Պահապաններին տեսնելով, պահակները վեր կացան:

— Լորիենի Տիրակալներն ինձ հանձնարարել են մեր հյուրերին բերել իրենց մոտ (Էլֆերից մեկը փողը փչեց, և վերևում հնչեց եռակի պատասխանը): Գնանք,— ասաց Հելդարը Պահապաններին,— ցույց կտամ վերև տանող ճանապարհը: Տիրակալները խնդրել են, որ էլֆ Լեգոլասը և կոլոտիկ Ֆրոդոն առաջինը բարձրանան: Մնացած հյուրերը թող հետևեն մեզ: Տիրակալների բնակարանը բարձրում է, եթե հոգնեք՝ կարող եք հանգստանալ:

Տիրակալների բնակարանը բարձրանալիս Ֆրոդոն շատ «հարկեր» անցավ: Վերջապես, բնի ճյուղավորման կոնքում հսկայական սպիտակ դելոն երևաց: Ֆրոդոն Հելդարի հետևից բարձրացավ այնտեղ և մեծ փայտե տուն տեսավ: Հելդարը բացեց երկփեղկանի դուռը և հոբիթին մտնելու նշան արեց:

Ֆրոդոյի աչքերի առջև մեղմ արծաթավուն լույսով լուսավորված մի դահլիճ բացվեց: Ձվաձև, զմրուխտե հատակով, երկնագույն առաստաղով և փիրուզագույն պատերով այդ դահլիճը թանկագին քար էր թվում, որի ներսում քարացել էր հավերժական կախարդական կյանքի մի պահը: Կենտրոնում՝ ոսկե գահերի վրա, կողք կողքի նստել էին Սելեբերնը և Գալադրիելը:

Հոբիթներին տեսնելով՝ տիրակալները վեր կացան. էլֆերի մոտ այդպես էին ողջունում հյուրերին նույնիսկ ամենամեծ տիրակալները, և Ֆրոդոն, նրանց վեհաշուք գեղեցկությունից

ապշած, հազիվ զսպեց հիացմունքի ճիչը: Լորիենի տիրակալները բարձրահասակ էին՝ Սելեբերնը Գալադրիելից քիչ ավելի, լայն, շլացուցիչ սպիտակ թիկնոցները ի վիճակի չէին թաքցնել նրանց պատանեկան բարեկազմությունը: Նրանց ուսերին էին թափվում փարթամ վարսերը՝ արծաթավուն տիրակալինը և ոսկեփայլ՝ տիրակալուհունը: Տիրակալների դեմքից տարիքը չէր երևում, միայն աչքերը՝ Ծովի պես խորունկ, բայց խորաթափանց, ինչպես Գիշերաստղը, խոսում էին նրանց, Միջերկրի հնագույն իմաստունների, հինավուրց հիշողության և փորձի մասին:

Հելդարը հոբիթներին առաջնորդեց Տիրակալների մոտ. Գալադրիելը միայն նայեց նրա աչքերին, իսկ Սելեբերնը համընդհանուր լեզվով ասաց.

— Բարի գալուստ, Ֆրոդո Հոբիթստանցի... Նստիր մեզ հետ ու մի փոքր հանգստացիր, կզրուցենք, երբ մյուսներն էլ կգան:

Դահլիճ մտնող յուրաքանչյուր Պահապանին Սելեբորնը քաղաքավարությամբ կոչում էր անունով և ողջունում նրա մայրենի լեզվով:

— Բարև, որդի և պատվիրակ Թրանդուիլի... Ես ցավում եմ, որ մեր հյուսիսային ազգակիցների համար գնալով դժվարանում է Օրինյալ Երկիր հասնելը:

— Համեցիր, Արագորն, որդի Արաթհորնի... Դու երեսունութ տարի մեզ մոտ չես եղել և ապրել ես թափառականի դաժան կյանքով, ես այդ տեսնում եմ քո դեմքից: Բայց պայքարը, ինչպես գիտես, շուտով կավարտվի: Իսկ առայժմ մոռացիր քո հոգսերը՝ Լորիենում կարող ես անհոգ հանգստանալ:

— Ողջույն քեզ Ջիմլի, որդի Գլոյնի... Մեծն թագավոր Դարինի կործանումից հետո Լորիենի սահմանները փակ են եղել թզուկների համար: Հանուն քեզ մենք զանց արեցինք այդ օրենքը: Ուրեմն թող մեր այսօրվա հանդիպումը Գելեթհենում օգնի վերականգնելու մեր հին բարեկամությունը և ցրելու Միջերկրի վրա նստած սև ամպը...

Թզուկը խոնարհ ողջունեց Տիրակալին:

Երբ Պահապանները հավաքվեցին դահլիճում, Սելեբերնը հարցական հայացքով նայեց բոլորին:

— Էլրոնդի Խորհրդում, սուրհանդակի խոսքերով, ինը Պահապան են ընտրվել,— ասաց նա,— ուրեմն հետո ինչ-որ բան փոխվե՞լ է...

— Ոչ,— առարկեց Տիրուհին,— Խորհուրդն իր որոշումը չի փոխել: — Գալադրիելի ձայնը հնչուն էր ու երգեցիկ, բայց անսպասելի ցածր: Պահապանները լուռ էին: — Որքան ես գիտեմ,— շարունակեց տիրուհին,— Պահապանների հետ ուղևորվել էր նաև Գանդալֆ Մոխրագույնը: Ես վաղուց էի ուզում նրան նորից տեսնել, բայց նա Լորիենի սահմանները չի մտել, իսկ ես կարող եմ հետևել նրա ճանապարհին՝ միայն երբ նա իմ տերության մեջ է: Օտար հողերում հրաշագործին հետևելը վեր է նույնիսկ սուր Աչքի ուժերից...

— Գանդալֆ Մոխրագույնին կլանեց Մութը,— խոր հառաչելով, ասաց Արագորնը: — Նրան չհաջողվեց Մորիայից դուրս գալ:

— Դա իսկապես չարագույժ նորություն է,— տիրող լռության մեջ ասաց Սելեբերնը և, Հելդարին նայելով, էլֆերեն հարցրեց. — Ինչո՞ւ ինձ շուտ չէիք հայտնել այդ մասին...

— Հելդարը մեր վշտի մասին չգիտե,— պատասխանեց Լեգոլասը համընդհանուր լեզվով: — Սկզբում մենք չափազանց հյուծված էինք Մորիայով անցած մեր ճանապարհի մասին պատմելու համար, իսկ հետո Լորիենի ամոքիչ խաղաղությունը ժամանակավորապես բթացրեց կորստի դառնությունը և չէինք ցանկանում այդ մասին վերհիշել:

— Բթացրեց, բայց չդարմանեց,— ավելացրեց Ֆրոդոն: — Քանի որ մեր կորուստն անփոխարինելի է, իսկ վիշտը... վիշտը երբեք չի մոռացվի: Գանդալֆը կարողացավ մեզ դուրս բերել Մորիայից և զոհվեց մարտում մեր փրկության համար:

— Բայց եթե նա կարողացել է ձեզ դուրս բերել Մորիայից, ապա ինչո՞ւ ինքը ձեզ հետ միասին դուրս չի եկել,— տարակուսանքով հարցրեց Սելեբերնը:

— Որովհետև զոհվեց,— պատասխանեց Արագորնը: — Բեր քեզ հերթականությամբ պատմեմ: — Արագորնը Լորիենի տիրակալին պատմեց Քարադհրասի ձնահողմի,

ագռավների, գայլդարձյակների, Մորիա նահանջելու և ընդերքի Պահակի, Տարեգրության սրահի, Բալինի գերեզմանի, օրքերի և կամրջի վրա տեղի ունեցած մարտի մասին... — Դա Բալրոգն էր,— եզրակացրեց Արագորնը,— բոսոր կրակը խավարի հովանու տակ:

— Թշնամին սարատակի բոսոր ընդերքից,— վախով ավելացրեց Լեգոլասը:

— Ընդերքի Սարսափը՝ արթնացված թզուկների կողմից կամ Դարինի Մեծ Չարքը,— վախը չթաքցնելով, քրթմնջաց Ջիմլին:

— Մենք ի սկզբանե գիտեինք, որ Քարադհրասի խորքերում թաքնված է ահեղ բոսոր թշնամին,— Ջիմլիին նայելով, ասաց Սելեբերնը: — Ուրեմն թզուկները նորից են հրահրել նրան... Ափսոս, որ քեզ թույլատրեցի Լորիեն մտնել... Քեզ և բոլոր նրանց, ովքեր քեզ հետ եկել են: Իսկ Գանդալֆին հարկ է խելագար կոչել, քանզի Մորիա իջնել կարող էր միայն խելագարը... Բայց նա իմաստուն էր... Եվ ես չէ, որ պետք է որոշեմ, արդյոք վերջում համակե՞լ էր նրան խելագարությունը, թե՞ ոչ:

— Գանդալֆ Մոխրագույնը,— միջամտեց Գալադրիելը,— երբեք խելագար արարքներ թույլ չի տվել, իսկ նրանց, ում անց է կացրել Մորիայով, անհայտ էին նրա բոլոր մտահղացումները: Եվ համենայն դեպս, Գանդալֆի արարքների համար կարելի է մեղադրել միայն Գանդալֆին... Իսկ թզուկները... Ասա, եթե Լորիենի ժողովուրդն ստիպված լիներ թողնել Օրինյալ երկիրը և շատ տարիներ հետո մեզանից որևէ մեկը, օրինակ՝ Տիրակալ Սելեբերն Իմաստունը, կարողանար նորից լինել Լորիենում, մի՞թե բաց կթողներ այդպիսի հնարավորությունը: — Գալադրիելը լռեց, իսկ հետո խոսեց՝ ասես հիշելով հին տարեգրությունը. — Անթափանցելի մութ է Քելեդ-Զարամի ջուրը և սառույցի պես պաղ են Քիբել-Նալայի աղբյուրները: Բայց քանի դեռ չէր արթնացել Ընդերքի Սարսափը՝ փառահեղ Քազադ-Դումի հրաշալի սրահները լուսավորված էին և տաքացված... — Տիրուհու կարկաչուն խոսքն ընդհատվեց, բայց նրա շուրթերին ժպիտ ծաղկեց:

Եվ զայրացած, խոժոռված Ջիմլին հանկարծ իր երևակայական թշնամիների աչքերում բարեկամական ցավակցություն և կարեկից սեր տեսավ: Նա շփոթված, իսկ հետո շնորհակալ ժպտաց, վեր կացավ և, խոնարհվելով, զրնգուն պատասխանեց.

— Սակայն Լորիենի Ոսկի անտառները Մորիայի մարմարե սրահներից գեղեցիկ են, իսկ Մորիական թագավորության շողշողուն գանձերը խամրում են Լորիենի տիրուհու գեղեցկության առջև...

Էլֆերն ու Պահապանները երկար ժամանակ լուռ էին: Վերջապես Սելեբերնը նորից խոսեց.

— Ներեցեք ինձ կոպիտ խոսքերի համար... Դրանք ցավի ու տագնապի ծնունդ են: Մենք կաշխատենք օգնել բոլորիդ, ձեզնից յուրաքանչյուրին, և հատկապես նրան, ով իր վրա է վերցրել ամենածանր բեռը:

— Մեզ հայտնի է, թե ինչու եք արշավանքի դուրս եկել,— Ֆրոդոյին նայելով, ասաց Գալադրիելը,— և չնայած չգիտեմ, թե ինչպես կվերջանա այն, բայց այնուամենայնիվ հույս ունեմ, որ Գանդալֆն անտեղի չէր համառորեն Պահապաններին բերում Լորիեն: Որովհետև Օրինյալ Երկրի ժողովուրդը արևելքում ապրում էր Սկզբնական ժամանակներից ի վեր, և մենք Չարի խարդախությունն ավելի լավ գիտենք, քան Միջերկրի մյուս ժողովուրդները: Մենք լեռներն անցել ենք դեռ մինչև արևմտյան առաջին ամրությունների ընկնելը և այն ժամանակվանից սկսած դատապարտված, առանց հաղթանակի հույսի, բայց աննահանջ դիմադրում ենք Չարին:

Այդ ես եմ Դարաշրջանի սկզբում հավաքել Միջերկրի լուսավոր ուժերի առաջին Խորհուրդը, հետո այն անվանեցին Իմաստունների Խորհուրդ, և եթե այն ժամանակ, ինչպես ես էի առաջարկում, Գանդալֆը դառնար Խորհրդի Գերագույն Իմաստունը, հնարավոր է, որ կյանքն այլ կերպ ընթանար: Ի դեպ, Միջերկրի համար դեռ ամեն ինչ կորած չէ, շատ բան կախված է ձեր արշավանքից, և ես կարծում եմ, որ կարող եմ որոշ հարցերում օգնել ձեզ, քանզի ինձ հայտնի է ոչ միայն անցածը, ոչ միայն այն, ինչ հիմա տեղի է ունենում, այլ մասամբ և այն, ինչ պետք է պատահի: Իսկ առայժմ կասեմ ձեզ, որ ձեր ճանապարհը անցնում է անդունդի վրա գցված դանակի սայրի վրայով. ձեզ, ձեզ հետ միասին և ողջ Միջերկիրը կկործանի հենց առաջին անճիշտ քայլը և կփրկի միայն փոխադարձ հավատարմությունը:

Հետո, ասես Պահապաններին իրար կապելով, Տիրուհին հայացքով դանդաղ նայեց բոլորին՝ նրանք զգում էին, որ շարժվել չեն կարող, մինչև նա ինքը հայացքն իջեցրեց ու լռությունից հետո հանգստացնող ու մեղմ տոնով ասաց.

— Իսկ այժմ, ժամանակն է, որ հանգստանաք:

Պահապանները թեթևացած ու հոգնած շնչեցին: Սկզբում, Տիրուհու կախարդող հայացքի ներքո, նրանց բոլորին, բացի Էլֆ Լեգոլասից և Արագորնից, տագնապալի անհանգստություն համակեց սեփական անձի նկատմամբ (Սամը նույնիսկ տանջալիորեն կարմրեց), իսկ հիմա հանկարծ խաղաղ հոգնածություն պատեց:

— Բարի գիշեր ձեզ,— խոսեց Սելեբերնը: — Վիշտն ու ծանր փորձությունները տանջել են ձեզ, բայց մենք կօգնենք, որ վերականգնեք ձեր ուժերը և պայքարեք Չարի անթիվ ծառաների դեմ:

Այդ գիշեր հուրախություն հոբիթների քառյակի, Պահապանները ստիպված չեղան բարձրանալ ծառի վրա: Էլֆերը շատրվանի մոտ վրան խփեցին, հյուրերի համար հարմար անկողիններ գցեցին և, հանգիստ քուն մաղթելով, հեռացան: Երբ էլֆերի ձայները լռեցին, ճամփորդները քննարկեցին երեկվա օթևանը, հիշեցին մեծ Էմրոսի դամբանաբլուրը, խոսեցին Լորիենի ներկա տիրակալների մասին, բայց ոչ մի խոսքով չհիշատակեցին Մորիայի դեպքերը՝ դրա համար առայժմ ուժ չունեին:

— Ասա խնդրեմ, ինչու կարմրեցիր տիրուհու մոտ, հը՞,— հանկարծ Սամին հարցրեց հետաքրքրասեր Փինը: — Էլֆ-տանտերերը կարող էին մտածել, թե ինչ-որ չարամտություն ունես: Հուսով եմ, քո չարագործ գլխում ոչ մի առանձնապես վտանգավոր միտք չկա, բացի իմ վերմակը գողանալու ստոր ցանկությունից:

— Վերմակը նրանից կծածկի՞ որ,— կատակին չպատասխանելով, փնթփնթաց Սամը: — Ախր նա ուղիղ հոգուս մեջ էր նայում... Նայում էր ու հարցնում. իսկ ի՞նչ կասես, եթե առաջարկեմ քեզ ուղևորվել Հոբիթստան... Դեռ մի տնակ ու տնամերձ էլ խոստանում էր...

— Ա՛յ քեզ բան,— զարմացավ Փինը: — Նա... չէ՞ որ ինձ էլ էր... Դե լավ, ինչ ասեմ... — ընդհատեց նա ինքն իրեն և շփոթված լռեց: Պարզվեց, որ արշավանքի յուրաքանչյուր մասնակցի, ինչպես մեկը մյուսին նայելով հասկացան Պահապանները, առաջարկվել էր պարզ, բայց անողոք ընտրություն հավատարմության և ամենանվիրական երազանքի միջև, Համընդհանուր Թշնամու դեմ մահացու վտանգավոր պայքարը դիր ուրիշի վրա, ճանապարհից շեղվիր՝ և երազանքդ կկատարվի:

— Նույնիսկ պատմել չարժե,— քրթմնջաց Ջիմլին ու նույնպես լռեց:

— Իմ կարծիքով՝ արժե,— առարկեց Բորոմիրը: — Կարող է պատահել, Տիրուհին ուզում էր փորձել մեզ, մեզ անհայտ, բայց բարի մտադրություններով... Եվ այնուամենայնիվ, ինչո՞ւ էր նա գայթակղում մեզ: Ինչո՞ւ էր այդքան վարպետորեն հավատ ներշնչում մեզ, որ կկատարի իր խոստումները: Գուցե որ մեր մտքե՞րն իմանա: Ես, իհարկե, նրան չլսեցի: Խոսքի տերը լինելը գոնդորցու համար օրենք է...

Սակայն Պահապաններն այդպես էլ չիմացան, թե ինչ էր նրան խոստացել Տիրուհին:, որովհետև նա կտրուկ դարձավ Ֆրոդոյին,— իսկ քեզ ինչո՞վ էր հրապուրում տիրուհին...

Ֆրոդոն չցանկացավ պատասխանել Բորոմիրին:

— Այդ մասին չարժե պատմել,— համոզված ասաց նա, կրկնելով Փինին և Ջիմլիին:

— Ձգոն եղիր... — խորհուրդ տվեց նրան գոնդորցին: — Նրա մտադրությունները հայտնի չեն...

— Հայտնի են,— Բորոմիրին ընդհատեց Արագորնը: — Իսկ այ դու չգիտես ինչ ես խոսում: Այս հողի վրա Չարին տեղ չկա, այն մահանում է նույնիսկ չարարկուների մտահղացումներում...

Ճիշտ է, երբեմն չարագործներն իրենք էլ են կործանվում, բայց միայն նրանք ում համար չարը կյանքի միակ հիմքն է դարձել: Այնպես որ այսօր հանգիստ կքնեմ՝ Ազատքից դուրս գալուց հետո առաջին անգամ: Հուսով եմ, մեր անհաջողություններն ու ցավերը գոնե ժամանակավորապես կվերանան: Մենք պետք է հանգստանանք ինչպես հարկն է... — Արագորնը պառկեց և անմիջապես քնեց:

Շուտով քնեցին նաև մյուս Պահապանները: Նրանց չէին խանգարում նույնիսկ երազները, և քնեցին արտակարգ երկար: Երբ արթնանալով դուրս եկան վրանից, երկնքում լուսավորում էր արծաթափայլ արևը, իսկ բարձր շատրվանի կլոր ջրավազանի վրա կամար էր կապել ծիածանը:

Գելեթիենում ցողի կաթիլի պես իրար հետևից անցնում էին խաղաղ, լուսավոր օրերը, և շուտով Պահապանները դրանց թիվը կորցրին: Երբեմն արևելքից մի ամպ էր գալիս, բայց որպես անձրև թափվելով, ամպերի երամի հետ լողում էր արևմուտք: Օրը օրին եղանակը տաքանում էր, թափանցիկ օդը գարնայանային էր թվում, սակայն անտառային մեղմ լռության մեջ դեռևս զգացվում էր ձմռան շունչը: Պահապանները զբոսնում էին Գելեթիենի շրջակայքում, կուշտ ուտում էին և շատ քնում, բայց կյանքը նրանց ձանձրալի չէր թվում՝ ըստ երևույթին նրանք ճանապարհներին շատ էին հոգնել:

Տիրակալները հյուրերին էլ չէին կանչում, իսկ բերդում ապրող մյուս էլֆերը համընդհանուր լեզուն գրեթե չգիտեին: Հելդարը նրանց բարի ճանապարհ ցանկանալով, նորից ուղևորվեց արևմտյան սահման՝ այժմ այնտեղ ուժեղ ջոկատ էր կանգնած: Լեգոլասը մշտապես կորչում էր ազգակիցների մոտ, նույնիսկ հազվադեպ էր գիշերում վրանում, միայն ճաշելու էր գալիս:

Թարմ վերքի պես ցավագին վիշտը, որ Պահապաններին թույլ չէր տալիս խոսել Գանդալֆի մասին, աստիճանաբար փոխվեց երախտալից թախծի, և այժմ նրանք հաճախ էին հիշում նրան: Երբեմն էլֆական քաղցրալուր երգերում նրանք լսում էին նրանք լսում էին իրենց զոհված ընկերոջ անունը՝ լորիենցիները նույնպես ողբում էին հրաշագործին: «Ա Միթրանդիր է սերվերեն»,— թախծալի երգում էին Գելեթիենի բնակիչները. նրանք, ինչպես Լեգոլասն ասաց Պահապաններին, Գանդալֆին անվանում էին Արծաթափայլ Ճամփորդ:

Ֆրոդոյին ու Սամին անհանգստություն էր պատել: Նրանք որոշեցին զբոսնել անտառում, բայց խաղաղ, շոյող զովությամբ մթնշաղում նրանց թվում էր, որ հսկա Հացենիները շրշում են Լորիենից մոտալուտ բաժանման մասին:

— Ի՞նչ ես մտածում էլֆերի մասին, Սամ,— շրշացող լռությունը ընդհատեց Ֆրոդոն: — Ես քեզ արդեն հարցրել եմ, բայց այդ ժամանակից հետո մենք ավելի մոտիկից ենք ճանաչել նրանց: Ի՞նչ ես մտածում նրանց մասին հիմա...

— Դե ախր, նրանք, էդ էլֆերը շատ տարբեր են,— պատասխանեց Սամը,— իզուր էլ ազգակից են: Էլֆը, դա, իհարկե, մեկ բառ է՝ էլֆ, նրան ձայնից էլ ոչ մեկի հետ չես շփոթի... Իսկ որ նայում ես, մեկը մյուսին նման չեն: Այ, վերցրեք թեկուզ այստեղացիներին, օրհնյալներին, մերը՝ Լեգոլասը, ախր բոլորովին ուրիշ է: Այստեղացիները կապված են իրեն օրհնյալին, ոնց որ ես ու դու մեր Հոբիթստանին: Թե նրանք են իրենց երկիրը փոխել ըստ իրենց, թե նա է նրանց իրենց հարմարացրել, էդ ձեզ ասել չեմ կարող, բայց մենակ թե իրենց երկիրն իրեն համար այն է, ինչ պետք է: Նրանք ախր ոչ մի փոփոխություն չեն ուզում, էստեղ որ ուզես էլ, ոչինչ չես փոխի: Նրանց մոտ նույնիսկ երբեք վաղը չի լինում, առավոտյան արթնանում ես՝ նորից այսօր է... Եթե հասկանում եք, թե ինչի մասին եմ խոսում: Եվ դրանց հրաշքներն էլ ոչ մի անգամ չեմ տեսել...

— Ախր այստեղ ամեն քայլափոխի զգում ես դա,— Սամին ընդհատելով, բացականչեց Ֆրոդոն:

— Զգալն՝ զգում ես, բայց տեսնելը՝ չես տեսնում,— համառորեն տիրոջն առարկեց Սամը: — Այ, Գանդալֆը իսկապես էլ հրաշագործ էր, հիշո՞ւմ եք, թե ինչ գույնզգույն կրակներ էր սարքում: Ամբողջ երկինքն էր վառվում, հավկուրն էլ կտեսներ... Ափսոս, որ Տիրակալները մեզ էլ չեն կանչում: Որովհետև, ես կարծում եմ, նրանց Տիրուհին կարող է իսկական հրաշք ցույց տալ... Կուզեի տեսնել... Երևի դուք էլ հաճույքով կնայեիք, քանի որ խեղճ Գանդալֆը զոհվել է:

— Ոչ, ասաց Ֆրոդոն: — Այստեղ առանց դրան էլ լավ է: Իսկ Գանդալֆն ինձ հարկավոր էր առանց հրաշագործության:

— Էդպես է, իհարկե,— համաձայնեց Սամը: — Եվ դուք մի կարծեք, թե ես նրան փնովում եմ: Ուղղակի շատ եմ ուզում իսկական հրաշքներ տեսնել, հին հեքիաթների նման: Իսկ որ նայեք, երկիրը Ազատքից նույնիսկ լավն է: Ախր էստեղ ապրում ես ոնց որ տանը, կարծես թե տոներին հյուր ես եկել, թե հասկանում եք ինչի մասին եմ խոսում: Ինձ էստեղից զոռով էլ չես քշի, բայց ախր մեր գործը ոչ ոք մեր փոխարեն չի անի, ուրեմն ճանապարհ ընկնելու ժամանակն է: Որովհետև, ինչպես իմ ծերուկը կասեր, Էստեղ պուպուզ, էնտեղ պուպուզով

գործդ առաջ չի գնա: Ոչ, ինչքան ես հասկանում եմ, Էստեղի էլֆերը մեր ճամփորդության մեջ օգնական չեն, նույնիսկ իրենց օրհնյալ հրաշագործությամբ: Նրանք իսկական հրաշագործի մոտ ի՞նչ են որ... Ճանապարհին առանց Գանդալֆի դեռ շատ լաց կլինենք...

— Երևի,— հառաչեց Ֆրոդոն: — Եվ այնուամենայնիվ ես կարծում եմ, որ էլֆերի տիրուհին կցանկանա մեզ հրաժեշտի ողջերթ մաղթել:

Հազիվ էր Ֆրոդոն վերջին խոսքերն արտասանել, երբ նրանց դիմաց դուրս եկավ Լորիենի տիրուհին՝ բարձրահասակ, բարեկազմ, վեհ ու գեղատես:

Նա հոբիթներին տարավ իր հետևից, արևելքից բլրի գագաթը շրջանցելով հասան ցանկապատված մի դաշտ: Քայլերը դանդաղեցնելով, հոբիթները հետ նայեցին: Դաշտով հոսում էր Տիրակալների կացարանի մուտքի շատրվանից սկիզբ առնող մի առվակ, որի երկարությամբ թեք սանդուղք էր իջնում: Երեքն էլ այդ սանդուղքով իջան մի փոքրիկ հովիտ: Այստեղ, հայելու պես ողորկ մակերեսով լճախորշի մոտ հոբիթները սպիտակ մարմարից ցածր պատվանդանի վրա մի արծաթե թաս տեսան: Թասի մոտ ոսկե սափոր էր դրված:

Տիրուհին կռացավ, սափորը վերցրեց ու լճակից ջուր լցրեց թասի մեջ: Հետո թեթևակի փչեց ջրին, սպասեց, մինչև ջրի մակերեի կնճռոտությունն անցավ, և ասաց.

— Ձեր առջև Լորիենի Տիրուհու Հայելին է: Ես ձեզ այստեղ բերեցի, որ եթե ձեր վճռականությունը կբավականացնի, նայեք առօրյա տեսանելիի սահմաններից այն կողմ:

Փոքրիկ հովտում բարձրահասակ ու գեղակազմ Գալադրիելը, ինչպես թվաց հուզված հոբիթներին, թույլ շողեր էր ճառագում:

— Իսկ ինչո՞ւ նայենք տեսանելիից այն կողմ և ի՞նչ կտեսնենք այնտեղ,— հարցրեց Ֆրոդոն:

— Իմ կամոք Մոգական Հայելին ձեզ կպարզի ամեն ինչ, որ դուք կցանկանաք,— հոբիթներին պատասխանեց Լորիենի Տիրուհին: — Բայց ավելի հետաքրքիր և, գլխավորը, օգտակար է Հայելուն լիովին ազատություն տալը: Ես չգիտեմ, թե հատկապես ինչ ցույց կտա ձեզ Հայելին՝ անցյալը, ձեր ներկայիս կյանքը կամ այսօրվա որոշ իրադարձություններ, որ կարող են ազդել ձեր ճակատագրի վրա, թե այն, ինչ կպատահի հետագայում: Դե դուք հազիվ էլ կարողանաք, թե ինչ իրադարձություններ են բացվում ձեր առջև՝ անցյալ, ներկա և գալիք... — Տիրուհին լռեց և հարցրեց Ֆրոդոյին. — Արդ ցանկանո՞ւմ ես նայել իմ Հայելին...

Ֆրոդոն նրա հարցին չպատասխանեց:

— Իսկ դո՞ւ,— Սամին դիմեց տիրուհին: — Որքան գիտեմ,— ավելացրեց նա,— ձեզ մոտ դա կախարդություն կանվանեին: «Կախարդություն» բառն ինձ այնքան էլ հասկանալի չէ, առավել ևս, որ դուք կախարդություն եք անվանում նաև Թշնամու նենգամիտ արարքները: Դու ուզում էիր տեսնել էլֆական հրաշագործությունը կամ, ըստ քեզ, իսկական կախարդություն: Դե ուրեմն փորձիր նայել Մոգական Հայելու մեջ:

— Ես կփորձեմ,— անվստահ արձագանքեց Սամը: Եվ շրջվելով Ֆրոդոյի կողմը, հառաչելով ասաց. — Լավ կլիներ Զառիթափի Պարկուտը տեսնեի: Մենք, ախր, սարսափելի է, թե ի՞նչ երկար տանը չենք եղել... Մի՞թե կախարդանքը ցույց կտա Նորգորդը... Երևի թե ինչ-որ աստղեր կտեսնեմ... կամ այնպիսի մի բան, որ հասկանալ էլ չի լինի:

— Եվ այնուամենայնիվ փորձիր,— ասաց Գալադրիելը: — Միայն թե ջրին ձեռքդ չդիպչի:

Սամը բարձրացավ պատվանդանի վրա և զգուշությամբ նայեց արծաթե թասի մեջ: Մութ ջուրը միայն աստղեր էր արտացոլում:

— Պարզ բան է,— փնթփնթաց նա: — Էդպես էլ գիտեի, աստղեր... — և հանկարծ լռեց: Վառ աստղերով երկնքի փոխարեն թասում փայլում էր ուրախ արևը, և քամին շարժում էր ծառերի ճյուղերը: Հոբիթը չհասցրեց հասկանալ, թե ինչ էր երևացել իրեն, որովհետև լույսը հանգավ, և պղտոր մշուշում նա նկատեց Ֆրոդոյին, որը պառկած էր սև պատի տակ, և նրա դեմքը մահվան դալկություն ուներ: Հետո տեսիլքը նորից փոխվեց, և Սամը իրեն տեսավ: Ինքը մենակ թափառում էր մութ միջանցքներում, երկար բարձրանում զսպանակաձև սանդուղքով՝ փորձելով փնտրել ինչ-որ մեկին, բայց ո՞ւմ... Ճիշտ ինչպես ծանր ու ընդհատվող երազում, նրա առջև արդեն նորից արևն էր փայլում և օրորվում էին ծառերի ճյուղերը, ոչ թե քամուց, ինչպես սկզբում թվաց նրան, այլ կացնի հարվածներից: Սամն իրեն կորցրեց:

— Սա ի՜նչ չարագործություն է,— զայրացած գոռաց նա: — Ո՞վ է թույլ տվել այդ անիծված Ավազունսին... Դրանք հոբիթների համար պետքական ծառեր են, հով են անում ջրաղացից մինչև Գետամերձ գնացող ճամփան, իսկ անիծյալը դրանք կտրում է... Ախ, հիմա ընկնեի Հոբիթստան, մի դաս տայի, որ կեղտոտ ձեռքերն ամեն տեղ չգցեր...

Ուշադիր նայելով՝ Սամը հայտնաբերեց, որ հին ջրաղացի տեղում աղյուսե այլանդակ շենք է կառուցվում, իսկ շինության կողքը դեպ երկինք է բարձրանում կարմիր աղյուսից մրոտ ծխնելույզը: Ծխի քուլաները արագ թանձրանալով, սև վարագույրով պատեցին Հայելին:

— Իսկ Նորգորդում ավելի վատ է,— քրթմնջաց Սամը: — Պարոն Էլրոնդը երևի գիտեր, ինչ էր անում, որ Փերեգրինին տուն էր ուղարկում... Ես ձեզ ցույց կտամ, չարագործնե՛ր... — հանկարծ ճչաց նա ու պատվանդանից իջնելով մռայլ ասաց. — Ես գնում եմ տուն: Նրանք ավերել են Պարկուտը և փողոց են նետել իմ ծերուկին: Ես տեսա, իմ խեղճուկրակը իր փալաս-փուլուսը լցրել է սայլակի մեջ ու կաղին տալով գնում է:

— Բայց դու չես կարող մենակ վերադառնալ,— հանգիստ հիշեցրեց Սամին Գալադրիելը: — Երբ դու շատ էիր ուզում գնալ, վճռեցիր, որ իրավունք չունես Ֆրոդոյին լքելու: Իսկ Հայելին հաճախ այնպիսի իրադարձություններ է ցույց տալիս, որոնց ժամանակը դեռ չի եկել և, շատ հավանական է, որ երբեք էլ չգա, եթե նա, ում ցույց է տվել, չշեղվի մեկ անգամ ընտրած իր ճանապարհից, որպեսզի կանխի հնարավոր լինելիքը: Մոգական Հայելին վտանգավոր խորհրդատու է:

— Իսկ ինձ ոչ մի խորհուրդ էլ պետք չէ: Եվ կախարդություն էլ պետք չէ,— փնթփնթաց Սամը: Հետո լռեց ու նստեց խոտերին: — Չէ, ամեն ինչից էլ երևում է, որ մեր տան ճամփան Մորդորով է անցնում,— լռելուց հետո խուլ ձայնով ասաց նա: — Բայց եթե հասնենք Հոբիթստան ու այնտեղ ամեն ինչ էնպես լինի, ինչպես ցույց տվեց Հայելին, թող չարագործներն ինձանից չնեղանան...

— Իսկ չե՞ս ուզում նայել Հակելու մեջ,— Ֆրոդոյին նայելով հարցրեց Գալադրիելը: — Ասացիր, որ այստեղ ամենուր հրաշագործություն ես զգում, իսկ Մոգական Հայելին վախեցնո՞ւմ է քեզ:

— Ինքս էլ չգիտեմ,— պատասխանեց Ֆրոդոն: Եվ մի քիչ լռելուց հետո, հույսի նշույլով ավելացրեց. — կարծում ես, արժե՞ նայել...

— Ոչինչ խորհուրդ չեմ տա քեզ,— ասաց Գալադրիելը: — Ինքդ վճռիր: Նաև՝ Հայելու տեսիլքները որպես խորհուրդ մի ընդունիր, քանզի պատահաբար իմանալով մեր կյանքը փոփոխելու ընդունակ իրադարձությունների մասին, դիմում ենք մտադրածից հրաժարվելու և սեփական ճակատագրին հավետ դավաճանելու վտանգին: Պատահական իմացությունները շատ վտանգավոր են, թեպետ երբեմն օգնում են պայքարում... Իմ կարծիքով, դու բավական իմաստուն ես ու խիզախ և Հայելում տեսածդ ճիշտ կընկալես, բայց վարվիր, ինչպես դու ես ցանկանում,— եզրափակեց Գալադրիելը:

— Ես ուզում եմ նայել,— որոշեց Ֆրոդոն և, պատվանդանին բարձրանալով, նայեց Հայելու մեջ:

Ձրի հայելին իսկույն պայծառացավ՝ հոբիթի աչքերի առջև մայր մտնող արևի շողերով լուսավորված հարթավայր բացվեց: Հեռվում հարթավայրը եզրափակում էին լեռները, լեռներից թեքլանջ բլուրների միջով զիգզագ ճանապարհ էր ձգվում դեպի Ֆրոդոն, բայց հետո այն կտրուկ թեքվում էր ձախ ու կորչում հորիզոնում: Ճանապարհին հազիվ նկատելի կետ էր շարժվում, Ֆրոդոն նայեց՝ պստլիկ արարած էր... Հոբիթին ուրախ հուզում պատեց. նա համոզված էր որ դա Գանդալֆն է, բայց սպիտակ գավազանով ու ճերմակ թիկնոցով: Սակայն դեմքը Ֆրոդոն լավ չտեսավ, նա ճանապարհով ձախ գնաց, հորիզոնից այն կողմ անցավ: Հետո այդ ճերմակ ճամփորդին հիշելով, Ֆրոդոն չկարողացավ որոշել՝ Գանդալֆի՞ն է տեսել, թե Սարումանին, իսկ հարթավայրը փոխվեց նոր տեսիլքով:

Գրոտած թղթերով ծածկված քառակուսի սեղանով փոքրիկ սենյակում դռնից-պատուհան ետուառաջ էր անում Բիլբոն, պատուհանը թակում էին անձրևի կաթիլները, իսկ ծեր հոբիթն ինչ-որ բանից հուզված էր, հանկարծ նա քարացավ, Հայելու մակերեսը կնճիռներով ծածկվեց, ու սենյակն անհետացավ:

Մոգական Հայելին պարզվեց, Ֆրոդոն մտքի հանկարծակի փայլատակումով գիտակցեց, որ իր առջև տեսիլքների հերթագայությամբ բաժանված անցնում են Մեծ Պատմության փուլերը, որի մեջ իրեն ներքաշել է ճակատագիրը:

Նրան երևաց փոթորկածուփ ծովը: Նա իսկույն հասկացավ, որ դա հենց փոթորկածուփ ծով է, թեև մինչ այդ ծով չէր տեսել՝ թխակապույտ, հսկայական ծառացած ալիքներով, թանձր ամպերը ծածկել էին արևը, բայց դրանց արճճե թաղանթը պատռելով, արևը լուսավորում էր դեպի արևելք լողացող նավը: Հետո հայտնվեց մեծ գետով երկու մասի բաժանված մի մարդաշատ քաղաք, հետո՝ սպիտակ քարե յոթ աշտարակներով վեհապանծ լեռնային ամրոց: Իսկ հետո փայլեց արևածագը և լուսավորեց խաղաղ Ծովը: Սև առագաստներով ու նեղ դրոշի վրա սպիտակ ծառով նավը ճեղքում էր երկնագույն ջրերի ջինջ ալիքները: Սա դանդաղ մոտեցավ ափին ու հսկույն ծածկվեց մշուշապատ մայրամուտի հրացոլքով, ու արևը մայր մտավ, և բոսոր մթնշաղում արյունահեղ մարտերի կարճատև բռնկումներով երևում էին անվերջանալի ճակատամարտի պատկերներ, և բոսոր մթնշաղը սև մութ դարձավ, ու Ֆրոդոն արդեն ոչինչ չկարողացավ զանազանել: Իսկ հետո, երբ մութը քիչ թուլացավ, ափից պոկվեց արծաթավուն նավակն ու արագորեն անհետացավ ծովային լայնարձակության մեջ: Ֆրոդոն պատրաստվեց իջնելու...

... Բայց հանկարծ հայելի-թասը նորից մթագնեց՝ ասես մի սև անցք դեպի անհուն դատարկություն, և, մթությունից դեպի Հայելու մակերևույթ լողալով, դանդաղ մոտեցավ **Աչքը**: Հրեղեն թերթևանունքներով, մահացու դեղնությամբ փայլող Աչքը, սակայն, կենդանի էր, իսկ բիբն ասես մի ճեղք էր դեպի քաոսը, անընդհատ տրոփում էր մեկ նեղանալով, մեկ լայնանալով: Ֆրոդոն սարսափահար նայում էր Աչքին, ի վիճակի չլինելով ճչալ կամ շարժվել:

Աչքի ապակեփայլ խնձորակը՝ կարմիր մազանոթների ցանցով պատված, Հայելու մեջ պտտվում էր նեղ ակնախոռոչում, և Ֆրոդոն, սարսափից քարացած, հասկանում էր, որ Աչքը ամբողջ աշխարհը զննելուց հետո ճգնում է տեսնել նաև Մատանու Պահապանին: Բայց քանի դեռ վերջինս դիմադրելու կամք ունի, քանի դեռ ինքը չի ցանկանա բացվել, Աչքն անկարող է բացահայտել իրեն: Անկարելիորեն ծանրացած Մատանին պիրկ ձգել էր բարալիկ շղթան, և հոբիթի վիզը թեքվել էր ցած, իսկ Հալելու ջուրը եռում էր ու քլթքլթում:

— Ձգո՛ւյշ, բարեկամս, ջրին չկպչե՛ս,— մեղմ ասաց Գալադրիելը Ֆրոդոյին, և վերջինս հետ քաշվեց փրփրացող սև ջրից, և Աչքն, աստիճանաբար խավարելով, սուզվեց, իսկ Հայելու մեջ արտացոլվեցին երեկոյան աստղերը:

Ֆրոդոն շտապ ցած թռավ պատվանդանից և, դեռևս դողալով, նայեց տիրուհուն:

— Քո վերջին տեսիլքն ինձ ծանոթ է,— ասաց տիրուհին: — Վախենալ պետք չէ: Բայց իմացիր՝ Լորիենը Սև Տիրակալից պահպանում են ոչ թե երգերը, վիներն ու գուսանները, նույնիսկ ոչ էլ էլֆ ռազմիկների նետերը: Այլ այն, Ֆրոդո, որ երբ նա մտածում է էլֆերի մասին, ես բացահայտում եմ նրա բոլոր մտահղացումները և կարող եմ ժամանակին վնասազերծել դրանք, իսկ նրան չի հաջողվում թափանցել իմ մտքերը:

Տիրուհին նայեց արևելք և ասես ինչ-որ բան հեռացրեց ձախ ձեռքով, իսկ աջը դանդաղ բարձրացրեց դեպի երկինք: Էլֆերի սիրած Գիշերաստղը այնքան պայծառ էր լույս տալիս, որ գետնին տիրուհու թույլ ստվերն էր նկատվում: Հովտում արդեն մութ էր, բայց հանկարծ ասես կայծակ փայլատակեց. Լորիենի տիրուհու ձախ ձեռքին շլացուցիչ շողաց սադափե շաղփաղփուն ձվաձև քարով ոսկե մատանին, և Ֆրոդոն հասկացավ կամ այդպես թվաց նրան:

— Այո,— հանգիստ հաստատեց Գալադրիելը, թեև Ֆրոդոն բարձրաձայն մեկ բառ անգամ չէր ասել: — Երեքից մեկը պահպանվում է Լորիենում: Ինձ է վստահված տիրել Նեիևին: Թշնամին այդ մասին չգիտե՝ առայժմ: Եվ քո հաջողությունից կամ անհաջողությունից կախված է Օրհնյալ Երկրի բախտը: Քանզի եթե դու կործանվես ճանապարհին, Միջերկրի մոգությունը տեղի կտա Չարի առջև, իսկ եթե կարողանաս պարտքդ կատարել, աշխարհը կենթարկվի ամենատեր ժամանակին, իսկ մենք դուրս կգնանք Օրհնյալ Երկրից կամ էլ ձեզ պես մահկանացու կդառնանք, կամավոր կերպով հանձնվելով նոր Տիրակալին, որից նույնիսկ անցյալի մասին հիշողությունդ չես փրկի:

Գալադրիելը լռեց, Ֆրոդոն էլ էր լռում, հետո նա նայեց Գալադրիելի աչքերին ու հարցրեց.

— Իսկ ի՞նչ ճակատագիր կընտրեիր դու, եթե ընտրելու հնարավորություն տրվեր քեզ:

— Ցավոք, ինձ ընտրել տրված չէ,— տխուր պատասխանեց Տիրուհին: — Մենք հավետ կհիշենք Լորիենը նույնիսկ ծովի այն կողմում, օրհնյալ հողում՝ և մեր կարոտը երբեք չի

մեղմանա: Սակայն Սաուրոնին հաղթելու համար էլֆերը պատրաստ են հրաժարվելու հայրենիքից, որի համար էլ մենք ապաստանեցինք Պահապաններին. դուք պատասխանատու չեք Լորիենի ճակատագրի համար... Իսկ եթե անկարելին երազեի, ապա կուզենայի, որ Թշնամու Մատանին խորտակվեր Մեծ Անդուինի մեջ:

— Դու իմաստուն ես, անվախ և արդարամիտ,— ասաց նրան հոբիթը: — Ուզո՞ւմ ես Թշնամու Մատանին տամ քեզ... Նրա հզորությունն իմ ուժերից վեր է:

Տիրուհին հանկարծակի զրնգուն ծիծաղեց:

— Ուրեմն իմաստուն եմ, անվախ և արդարամիտ,— շարունակելով ծիծաղել, կրկնեց նա: — Երբ դու առաջին անգամ ներկայացար ինձ, ես ինձ թույլ տվեցի նայել քո սիրտը՝ և քեզ հաջողվեց վրեժ լուծել ինձանից դրա համար: Դու զարմանալի խորաթափանց ես դառնում, Պահապան... Ինչո՞ւ թաքցնել, շատ անգամ եմ մտածել, թե ինչպես կվարվեմ, եթե պատահականության կամքով Թշնամու Մատանին ինձ մոտ հայտնվի և ահա հիմա կարող եմ այն ստանալ...

Չարը անդադար չար է ծնում, անկախ նրանից թե ով է այն բերել աշխարհ, ուրեմն գուցեև ես մեծագույն բարի՞ք կգործեմ քեզ վստահված Մատանուն տիրանալով...

Առավել ևս, որ այն ինձ կհասնի առանց բռնության, և ես Սև Տիրակալուհի չեմ դառնա... Ես կլինեմ ահարկու, ինչպես հանկարծահաս փոթորիկ, զարհուրելի, քանց կայծակը գիշերային երկնքում, կուրացուցիչ ու անողորմ, հանց երաշտի արևը, հաճելի, ցանկալի ու վտանգավոր՝ կրակի պես, պաղ, որպես ձմեռային աստղ, բայց ոչ Սև:

Նա ձախ ձեռքը պարզեց առ երկինք, և Նեինի քարը ակնթարթորեն բռնկվեց, ու Ֆրոդոն վախեցած հետ ընկրկեց, որովհետև տեսավ նույն այն Տիրակալուհուն, որի մասին հենց հիմա խոսում էր Գալադրիելը՝ շլացուցիչ, գեղատեսիլ, զարմանահրաշ և ահարկու: Բայց նա կրկին քնքուշ ծիծաղեց ու ձեռքն իջեցրեց, քարը խամրեց, և Ֆրոդոն թեթևացած հասկացավ, որ սխալվել է. նրա առջև կրկին կանգնած էր էլֆերի Տիրուհին՝ բարձրահասակ, նրբանուրբ, գեղահրաշ, բայց ոչ ահարկու, սպիտակ հագուստով և ոչ թե փայլատակող թիկնոցով, ձայնն էլ թախծոտ ու հանգիստ էր:

— Ես անցա փորձությունը,— ասաց նա,— կգնամ ծովից այն կողմ ու կմնամ Գալադրիել:

Երկարատև լռությունից հետո տիրուհին ասաց.

— Գնանք: Վաղը դուք մեկնելու եք Լորիենից, քանզի ընտրությունը կատարված է և ժամանակն անցնում է: Իսկ այժմ ձեզ ցանկանում է տեսնել տերը:

— Բայց սկզբում պատասխանիր,— խնդրեց նրան Ֆրոդոն,— մի հարցի, որը ես չեմ տվել Գանդալֆին: Միշտ ուզում էի հարցնել նրան, բայց չէի համարձակվում, իսկ հետո նա զոհվեց Մորիական քարանձավներում: Ինձ վստահված է գլխավոր Մոգական Մատանին, հապա ինչու ես չեմ տեսնում մյուս Պահապաններին: Ինչո՞ւ նրանց գաղտնի մտքերը չեմ իմանում:

— Դու ուղղակի չես փորձել տեսնել և իմանալ,— պատասխանեց տիրուհին,— և երբեք չփորձես... Դա անխուսափելիորեն քեզ կկործանի: Մի՞թե Գանդալֆը չի ասել քեզ, որ ցանկացած Մատանու ուժը կախված է նրա Պահապանի հզորությունից: Եթե դու տնօրինես Մատանին, չդառնալով իսկապես հզոր և իմաստուն, ապա վաղ թե ուշ համընդհանուր Թշնամին քեզ կենթարկի իր կամքին, և դու, ինքդ էլ այդ չնկատելով, կսկսես կատարել նրա բոլոր հրամանները: Հիշիր, դու ընդամենը Պահապան ես, այլ ոչ թե Տեր: Քեզ Մատանին վստահված է ոչ թե տիրելու, այլ պահպանելու համար: Երեք անգամ Մատանին հագել ես մատիդ... Ասա, սակայն, արդյոք քո՞ կամքով... Եվ այնուամենայնիվ շատ խորաթափանց ես դարձել... Քեզ համար բացվեցին իմ ծածուկ մտքերը: Իմաստուններից քչերը կարող են դրանով պարծենալ... Դու տեսար համընդհանուր Թշնամու աչքը և ճանաչեցիր Նեինը իմ մատին... Ասա, նկատե՞լ էիր իմ Մատանին,— հարցրեց Տիրուհին, դեպի Սամը շրջվելով:

— Ի՞նչ մատանի,— հարցին հարցով պատասխանեց Սամը: — Դու ձեռքով ցույց տվեցիր գիշերաստղը, և այն շատ պայծառ քեզ լուսավորեց: Բայց ես ոչ մի մատանի էլ չեմ տեսել և, որ խոստովանեմ, իսկի չհասկացա էլ, թե ինչի մասին եք զրուցում: Բայց դե որ ինքդ թույլ տվեցիր ինձ խոսել, ապա ես էլ իմ տիրոջ հետ միասին խնդրում եմ, վերցրու նրանից այդ Թշնամու Մատանին... Ախր որ այն քեզ անցներ, էլ ոչ ոք չէր համարձակվի քեզ չլսել... Դու էլ հո

կարգուկանոն կգցեիր այս աշխարհում: Չարագործները կերդվեին չքանդել Պարկուտը և իմ ծերուկին փողոց չէին գցի: Իրենք Չարից կտապալվեին:

— Այո, ես դրանց սանձերը կձգեի,— մտածկոտ հաստատեց Գալադրիելը: — Բայց հետո... Ի դեպ, Մատանին մնում է Ֆրոդոյի մոտ, այնպես որ այդ մասին չխոսենք: Գնանք, ձեզ սպասում է Լորիենի տերը:

Գլուխ ութերորդ. Հրաժեշտ Լորիենին

Բոլոր Պահապանները հավաքվել էին տերերի մոտ: Ողջունելուց հետո Սելեբերնը ասաց.

— Պահապանների ջոկատի ելույթի ժամն է: Ձեր առջև նորից ընտրություն է: Նա, ով կվճռի շարունակել արշավը, վաղը պետք է հեռանա Քվեթլորիենից: Իսկ ով չի ցանկանում գնալ Պահապանների հետ, կարող է առայժմ մնալ մեզ մոտ: Բայց եթե Թշնամին տիրանա Մատանուն, էլֆերի հյուրերը կներքաշվեն կռվի մեջ՝ չէ՞ որ մենք պետք է գրոհով հասնենք ծով: Իսկ այդ մարտում քչերն են ողջ մնում:

— Նրանք որոշել են շարունակել արշավը,— հյուրերին նայելով, ասաց Գալադրիելը:

— Ինձ համար արշավը տուն տանող ճանապարհն է,— հայտարարեց Բորոմիրը,— իմ ընտրությունը պարզ է:

— Իսկ դու համոզվա՞ծ ես,— հարցրեց նրան Սելեբերնը,— որ Պահապանները պատրաստ են Մինաս Թիրիթ գնալու:

— Մենք դեռ չգիտենք, թե ինչպես գնանք,— մտահոգ պատասխանեց Արագորնը տիրակալին: — Գանդալֆը ոչ մի անգամ այդ մասին չի խոսել: Իմ կարծիքով նա չհասցրեց էլ մտածել, թե մենք Քվեթլորիենից հետո ուր կգնանք:

— Առջևում Անդուինն է,— հիշեցրեց Տիրակալը: — Այն անցնել կարելի է միայն նավակով, քանի որ Օսգիլիաթում բոլոր կամուրջները քանդված են: Եթե ձեզ հարկավոր է հասնել Մինաս Թիրիթ, ապա կարող եք շարժվել աջ ափով, բայց ձախ ափով ճանապարհը կարճ է: Ուրեմն, ո՞ր ճանապարհն եք ընտրելու:

— Գոնդորի միջով ճանապարհն ավելի երկար է, բայց անվտանգ,— ասաց Բորոմիրը:

Արագորնը լռեց:

— Տեսնում եմ ձեր ճանապարհը դեռ պարզ չէ ձեզ համար,— ասաց Սելեբերնը, — և ես չէ, որ պետք է ընտրեմ այն: Մի քիչ այլ կերպ կօգնեմ ձեզ: Պահապաններից ոմանց համար նավակը նորություն չէ՝ Բորոմիրի, Լեգոլասի, Արագորն հետքագետի...

— Եվ հոբիթներից մեկի,— հանկարծ ճչաց Մերին: — Մեր կալվածքով հոսում է Բրենդիդուիմը, և ես գիտեմ, թե ինչ բան է նավակը, դա... դա վայրի զամբիկ չէ, որ ձգտում է վայր գցել իր հեծյալին:

— Հիանալի է, բարեկամս,— ասաց Սելեբերնը: — Ես կարող եմ ձեզ լորիենյան նավակներ տալ: Դրանք փոքր են ու թեթև, բայց ամուր, այնպես որ կարող եք անվախ լողալ, սակայն տեղ-տեղ հարկ կլինի տանել ձեռքով՝ Անդուինը սահանքներ ու ծանծաղուտներ շատ ունի: Ոտքով ճանապարհորդելը հոգնեցուցիչ է, քան նավակով, իսկ գլխավորը, Մեծ Գետով իջնելիս հանգիստ կխորհեք՝ ո՞ւր գնալ. արևելք՝ Մորդոր, թե՞ արևմուտք՝ Գոնդոր:

Արագորնը նավակների համար շատ ուրախացավ, որովհետև նա դեռ չէր կարողանում որոշել, թե որ ափով տանի Ջոկատը: Մյուս Պահապաններն էլ ոգևորվեցին: Առջևում նրանց սպասում էին բազմաթիվ վտանգներ, դրանում նրանցից ոչ ոք չէր կասկածում, բայց դե այնուամենայնիվ վտանգներին ընդառաջ լողալն ավելի հաճելի է, քան ոտքով քարշ գալը:

Համընդհանուր ուրախությանը միայն Սամը չէր մասնակցում. նա համոզված էր, որ նավակները վայրի զամբիկներից էլ վտանգավոր են (որոնք, ինչպես նա էր կարծում, առհասարակ գոյություն չունեին):

— Մենք վաղվա համար կպատրաստենք նավակներ ու անհրաժեշտ պիտույքներ,— խոստացավ Սելեբերնը: — Իսկ այժմ արդեն ուշ է, հանգստանալու ժամանակն է: Բարի գիշեր և հաճելի երազներ...

— Քնեք հանգիստ,— ասաց Գալադրիելը, — դեռ կհասցնեք ճանապարհ ընտրել: Իսկ գուցեև ձեզանից յուրաքանչյուրն արդեն սկսել է ընտրել, առանց այդ զգալու, այն միակ ճանապարհը, որը նախանշված է նրա ճակատագրով:

Պահապանները վերադարձան շատրվանի մոտ, իրենց վրանը՝ Լեգոլասն էլ նրանց հետ, որ խորհուրդ անեն: Տիրուհու խոսքը նրանց այնքան էլ չհանգստացրեց:

Ճամփորդները երկար ու բուռն քննարկում էին, թե ինչպես հասնել Ճակատագրի Լեռ: Շուտով բացարձակապես պարզ դարձավ, որ համարյա բոլորին վախեցնում է Մորդորը, և նրանք ուզում են գնալ Մինաս Թիրիթ, որ գոնե որոշ ժամանակով հետաձգեն ճամփորդությունը դեպի Սև Տիրակալի սարսափելի որջը: Ի դեպ, եթե Ֆրոդոն նրանց կոչեր Անուինն անցնել, նրանք կհաղթահարեին վախը, բայց Ֆրոդոն համառորեն լռում էր, և նրանք չգիտեին, թե ինչ վճիռ կայացնեին:

Եթե Գանդալֆն առաջվա պես նրանց հետ լիներ, ապա Արագորնը առանց տատանվելու կթեքվեր Գոնդոր՝ հավատալով, որ Բորոմիրի մարգարեական երազը, հաստատելով դունադանցիների հին ավանդությունը, կոչ է անում իրեն՝ Էլենդիլի ժառանգին, մարտի դուրս գալ Համընդհանուր Թշնամու դեմ: Բայց Գանդալֆը չկար, և Արագորնը հասկանում էր, որ ինքն է ստիպված լինելու ուղեկցել Ֆրոդոյին, եթե նա ցանկանա անցնել Անդուինը: Եվ, սակայն, ինքը ինչո՞վ կօգնի հոբիթին՝ կուրորեն սուզվելով Խավարի Վարագույրի հետևը...

— Ես մենակ էլ կգնամ Մինաս Թիրիթ, դա իմ պարտքն է,— ասաց Բորոմիրը: Հետո նա անքթիթ նայեց Ֆրոդոյին, ասես փորձելով կարդալ նրա մտքերը: Բայց նկատելով, որ հոբիթը չի պատրաստվում խոսել, գլուխը կախեց և մտածկոտ շարունակեց. — Եթե անհրաժեշտ է Մատանին ոչնչացնել, ապա զենքի ուժով այս դեպքում ոչնչի չես հասնի, և Պահապանի Գոնդոր գնալը միտք չունի: Բայց եթե անհրաժեշտ է ոչնչացնել Թշնամուն, ապա հիմարություն է հրաժարվել... — Բորոմիրը լռեց, կարծես թե մինչ այդ ինքն իր հետ էր խորհում, իսկ հիմա հանկարծ հասկացավ, որ բարձրաձայն է խոսում, և վերջացրեց ակնհայտորեն ոչ այնպես, ինչպես ուզում էր. — ... Մեծ Գոնդորի ռազմական օգնությունից:

Ֆրոդոյին անհագստացրին Բորոմիրի խոսքերը: Հրաժարվելը հիմարություն է,— սկսեց գոնդորցին... Ինչի՞ց... Գուցե Համիշխանության Մատանո՞ւց... Ֆրոդոն հիշեց, որ Էլրոնդի մոտ կայացած խորհրդում Բորոմիրն այդ մասին արդեն խոսք բաց արեց, բայց Էլրոնդը այն ժամանակ նրան ամեն ինչ բացատրեց, և նա, կարծես թե, հասկացավ բանն ինչ է: Հոբիթը հույսով նայեց Արագորնին, սակայն նա, մտքերի մեջ խորասուզված, ըստ երևույթին, պարզապես չէր լսում Բորոմիրին: Դրանով էլ խորհրդակցությունն ավարտվեց: Մերին ու Փինը վաղուց քնած էին, Սամը դիմանում էր, բայց թաքուն հորանջում էր: Օդում վաղորդյան թարմություն էր զգացվում: Ֆրոդոն մտավ վերմակի տակ ու քնեց:

Առավոտյան նրանք սկսեցին ճանապարհի պատրաստություն տեսնել: Էլֆերը նրանց վրանի մոտ հանդերձանքի ու սննդամթերքի մի քանի պարկ բերեցին: Ջիմլին բացեց պարկերից մեկը, շագանակագույն բարակ մի բլիթ հանեց, ջարդեց այն՝ միջուկը կրեմով դուրս եկավ, և, դեռ չփորձած, հիասթափված ասաց.

— Գալեթ... — Սակայն շնորհ արեց համտեսելու:

— Կանգ առ... — ծիծաղելով ձայնեցին էլֆերը: — Առանց այդ էլ դու միայն երեկոյան կողմ կսովածանաս, այն էլ եթե ամբողջ օրն աշխատես:

— Կյանքումս այսպիսի համեղ գալեթ չեմ կերել,— խոստովանեց Ջիմլին: — Ուղղակի հրա՛շք... Լճափի թագավորության մարդիկ ճանապարհի գալեթ թխելու գործում հավասարը չունեն, բայց ձեր բլիթների հետ համեմատել չի կարելի:

— Մեզ մոտ դրանք ոչ թե գալեթ, այլ *ճանլաշ* են կոչվում, իսկ համընդհանուր լեզվով՝ ճանապարհի հաց,— բացատրեցին էլֆերը: — Եթե դրանք չջարդվեն, ապա ճանապարհին նույնիսկ մի քանի շաբաթ թարմ կմնան, այնպես որ պահեք սև օրվա համար: Ճամփորդի համար, թեկուզ հսկա մարդու համար, բավական է ընդամենը մեկ ճանլաշ, որ մի ամբողջ օր ոչ սովածություն զգա, ոչ հոգնածություն:

Հետո տանտերերը ցույց տվեցին հագուստները՝ լորիենյան երկար կնգուղավոր թիկնոցներ, թեթև ու նուրբ, բայց ամուր գործվածքից, յուրաքանչյուր Պահապանի չափերով կարված: Դրանք ասես կլանելով զանազան երանգներ՝ արծաթափայլ էին թվում հսկա հացենիների թափանցիկ ստվերում, արևից ոսկեզօծվում, խոտից կանաչում, անամպ երկնքի ֆոնի վրա

երկնագույն էին ընդունում և մթնշաղին դժգույն մոխրագույն դառնում: Պահապանները բազմիցս զարմանքով զգացել էին, որ էլֆերին դժվար է նկատել, եթե նրանք ուզում են, որ իրենց չտեսնեն (քայլում են բացարձակապես անաղմուկ): Ճամփորդները շատ ուրախացան նվեր ստացած թիկնոցների համար: Թիկնոցների օձիքներն ու կնգուղները կոճկվում էին մոլոշաքարե ոսկեղջրավոր տերևաձև փոքրիկ զարդով:

— Իսկ սա կախարդակա՞ն է,— տեղեկացավ Փինը՝ ուրախությամբ նայելով իր նոր թիկնոցին:

— Մենք չենք հասկանում, ի՞նչ է նշանակում «կախարդական»,— հոբիթին պատասխանեց էլֆերից մեկը: — Քո թիկնոցն էլֆական է, կարող ես չկասկածել... Եթե դու այդ նկատի ունես: Օրհնյալ երկրի ջուրն ու օդը, հողն ու իրերը, ծառերն ու խոտերը դրան տվել են իրենց շողշողուն գույները, փափկությունն ու գեղեցկությունը, ամրությունն ու հավերժությունը, քանզի ամեն ինչ, որ շրջապատում է էլֆերին, կենդանանում է նրանց վարպետների ստեղծածում: Թիկնոցը ռազմիկների և հետախույզների հագուստ է, բայց հենց հագուստ է, ոչ թե զինվորական ասպազեն: Նետ ու նիզակից այն չի փրկի, բայց կպաշտպանի ցրտից ու անձրևից, շոգին կպատսպարի այրող արևից ու արշավի ժամանակ կթաքցնի թշնամու աչքից: Դուք արժանացել եք տերերի բարեկամական առանձնահատուկ վերաբերմունքին, քանզի ցարդ ոչ մի օտարական լորիենյան թիկնոց նվեր չի ստացել:

Հասավ մեկնելու պահը: Պահապանները տխրությամբ նայեցին երկար ժամանակ իրենց տանը փոխարինած վրանին (թեպետ չէին կարող հիշել, թե ինչքան ժամանակ են ապրել այստեղ), վրանի մուտքի մոտի շատրվանին, տիրակալների մելորնին... Շրջվելով՝ նրանք տեսան Հելդարին: Հին ծանոթին տեսնելով, Ֆրոդոն շատ ուրախացավ:

— Ես պահպանում եմ հյուսիսային սահմանը,— լանջն ի վեր բարձրանալով ասաց էլֆը, — բայց ինձ նշանակել են ձեզ ուղեկցող, և ես կարճ ժամանակով վերադարձա Գելեթհեն: Սևագետքի հովիտը ծխով է ծածկված, իսկ ընդերքը ահավոր ցնցվում է՝ լեռներում ինչ-որ վատ բան է կատարվում, և դուք չէիք կարող գնալ արևմուտք: Բայց Անդուինի ճանապարհը դեռևս բաց է: Գնանք, ժամանակ կորցնել չի կարելի:

Մելորնները զրգում էին էլֆերի ձայներից, բայց արահետներում նրանց ոչ ոք չհանդիպեց: Նրանք իջան բլրի ստորոտը, անցան դարպասը, պատերի միջև ընկած միջանցքը, սպիտակ կամրջով անցան խանդակը և, հետևելով Հելդարին, շրջվեցին արևելք:

Արահետը պտտվում էր խիտ անտառում. ոսկեզօծ տերևները ծածկում էին երկինքը, և ճամփորդներն զգում էին, որ թեքությամբ են իջնում: Մի տասը լիգ հետո հացենիների միջից փայլեց կեսօրվա արևը, ճամփորդներն ակամա արագացրին քայլերը, բաց դաշտ դուրս եկան ու հետ նայեցին: Նրանցից աջ հոսում էր Կախարդուհին՝ թափանցիկ, քչքչան ու ոչ շատ լայն, իսկ առջևում, դեպի արևելք, նրանց ճանապարհը կտրելով, անաղմուկ իր մութ ջրերն էր գլորում աներևակայելի լայն ու մռայլ Անդուինը: Հյուսիսից մարգագետնի նեղ շերտը երիզում էր հսկա հացենիների պատը: Անդուինից այն կողմ դարուփոսերով մարգագետիններում տեղ-տեղ թփեր էին ցցված, երևում էին բացատներ: Կախարդուհուց մինչև հորիզոնի մութ գիծը ձգվում էին անհրապույր մերկ անտառներ: Գետերը հարավից ու արևելքից սահմանափակում էին Օրհնյալ Երկրի ծաղկուն հողերը՝ Պահապանները մոտեցել էին Խլուտի սահմաններին:

Ոսկե Կախարդուհու ձախ ափին, Անդուին թափվելուց երեսուն քայլի վրա երևում էր սպիտակ քարից ցածր կառանատեղը, որտեղ կառանված էին տարբեր չափերի ու զանազան գույների մակույկներ: Էլֆերը Պահապանների պաշարները տեղավորեցին երեք ոչ մեծ մոխրագույն նավակների մեջ: Սամը զգուշորեն մոտեցավ ափին, կռացավ, բարձրացրեց պարանի կծիկը՝ այն թեթև էր ու մետաքսանման, և հարցրեց էլֆերին.

— Սա է՞լ է մեզ համար:

— Իհարկե,— հոբիթին պատասխանեցին էլֆերը: — Մենք ամեն նավակի մեջ երեք կծիկ ենք դրել, թող շատ լինի, քիչ չլինի: Երբեք առանց երկար, թեթև, բարակ ու ամուր պարանի ճամփորդության դուրս չգաս: Իսկ մեր պարանները հենց այդպիսին են: Եվ դրանք բազմիցս պետք կգան ձեզ:

— Թե չէ ես չգիտեմ... — բացականչեց Սամը: — Ա՛յ, մենք Ազատքից առանց պարան դուրս եկանք, դրա համար էլ մինչև Լորիեն ինքս ինձ անիծում էի...

— Կարող եք վարել նավակները,— հայտարարեց Հելդարը: — Միայն թե չշտապեք Անդուին դուրս գալ. սկզբում ձեզ հարկավոր է վարժվել մակույկներին:

— Այո՛, այո՛, զգույշ եղեք, բարեկամներ,— Հելդարին ձայնակցեցին մյուս էլֆերը: — Մեր նավակները խորը չեն սուզվում, եթե նույնիսկ չափից ավելի են բեռնված, և դուք դրանց միանգամից վարժվել չեք կարող: Սկզբում ափի մոտ փորձեք:

Պահապաններն անշտապ նստեցին մակույկները, առաջինը՝ Ֆրոդոն ու Սամը Արագորնի հետ, նրանցից հետո՝ Փինն ու Մերին Բորոմիրի հետ, իսկ վերջերս մտերմացած Ջիմլին ու Լեգոլասը նստեցին երկուսով՝ նրանց նավակում դրեցին նաև մթերքի պարկերը:

Նավակների հատակին դրված էին տերևաձև բերաններով թիեր: Արագորնը թիով հրվեց կառանատեղից և փորձի համար գնաց հոսանքին հակառակ՝ դեպի վեր: Նա թիավարել գիտեր, բայց գետն արագահոս էր և մակույկը բավական դանդաղ էր շարժվում: Սամը տեղավորվել էր առջևի նստարանին և, երկու ձեռքով նավակի կողերից կառչած, սարսափով նայում էր հզոր Անդուինին: Կախարդուհին ուրախ փայլփլում էր արևի տակ, երբեմն նավակի կողքով հացենու տերև էր լողում դեպի Անդուին:

Շուտով մարգագետինը վերջացավ և ճամփորդների գլխավերևում սաղարթի կամար կապվեց: Օդը չոր էր, բայց թարմ ու զով, լռությունը խզում էր միայն արտույտի երգը:

Արագորնը շրջվեց ու լողաց հոսանքի ուղղությամբ: Հանկարծ Գետի կտրուկ շրջադարձից դուրս լողաց մի հսկայական կարապ՝ հպարտ, ձյունաճերմակ պարանոցով, սաթե աչքերով, ոսկեզօծ կտուցով և թեթևակիորեն բացված թևերով: Լսվեց ցածր, քնքուշ երաժշտություն: Երբ զարմանալի թռչունը մոտեցավ, ճամփորդները հասկացան, որ դա մակույկ է, էլֆերի զարմանալի վարպետության արդյունքը: Հեռվից կարապը կենդանի էր թվում, թեև անբնական մեծ էր: Երկու բաց մոխրագույն թիկնոցներով մակույկավարները վարժ աշխատում էին սև թիերով, որոնց վերևում տարածված էին լայն թևերը:

Նավակում նստած էր Լորիենի տիրակալը, իսկ կողքը կանգնած էր Գալադրիելն ու, ինքն իրեն ցածր նվագակցելով, էլֆական թախծալուր երգեր էր երգում: Տիրակալների նավակը հասավ Պահապաններին:

— Մենք եկել ենք հաջողություն մաղթելու ձեզ ձեր վտանգավոր ու դժվարին ճանապարհին,— երգն ավարտելով, ասաց Գալադրիելը:

— Դուք երկար ժամանակ մեր հյուրը եղաք,— ավելացրեց Սելեբերնը,— բայց դե այնպես ստացվեց, որ մենք ոչ մի անգամ խրախճանք չարեցինք միասին: Տիրուհին հրավիրում է ձեզ հրաժեշտի ճաշկերույթի Սահմանային Մեծ Գետի ափին:

Ճաշկերույթին Ֆրոդոն համարյա ոչինչ չկերավ: Նա տխուր նայում էր էլֆերի տիրուհուն այն նախազգացումով, որ դա իրենց վերջին հանդիպումն է: Տիրուհին հզոր ու ահազդու չէր թվում, թեպետ գեղեցիկ էր, ինչպես միշտ: Նա հոբիթին հանկարծ թվաց (ինչպես բոլորին, ով հիմա շփվում է էլֆերի հետ) վաղեմի անցյալի հավերժ գեղանի բնակչուհի:

Ճաշից հետո Լորիենի Տիրակալը Պահապաններին պատմեց Գետափնյա հողերի մասին:

Անդուինը լայն կիրճով հոսում է անտառների ու քարքարոտ տափաստանների միջով: Սկզբում նա կտրուկ թեքվում է դեպի արևելք, իսկ հետո, մի քանի վիթխարի ոլորաններից հետո, աստիճանաբար նեղանալով հոսում է հարավ, կտրում ոչ մեծ ամայի սարահարթը և բավական վտանգավոր սահանքից հետո Թոլ Բրանդիր՝ ձեր լեզվով Ժայռոտ կղզով, բաժանվում է երկու կատաղի վտակի, որպեսզի գահավիժի Բոլոնի, կամ ինչպես էլֆերն են անվանում՝ Նենդալֆի հարթավայրը: Ցիցքար՝ էլֆերեն Ռերոս ջրվեժը, իհարկե նավակներով հաղթահարել հնարավոր չէ, ստիպված կլինեք շրջանցել այն: Սակայն նրանք, ովքեր պետք է գնան Մինաս Թիրիթ, ավելի լավ է Անդուինին հրաժեշտ տան մինչև Ռերոս հասնելը, որպեսզի գնան Մուստանգրիմով, խուսափելով Նենդալֆի ճահճուտներից: Միայն թե չշեղվեք հյուսիս-արևմուտք , դեպի Մշուշապատի հարավային ճյուղավորումների անտառները, քանզի այդ հինավուրց անտառների մասին բավական տարօրինակ լեգենդներ են պատմում:

— Վերջին անգամ Ազատքի ճանապարհին անցա Մուստանգրիմով,— ասաց Բորոմիրը: — Եվ չնայած գնում էի հարավային հողերով՝ Սպիտակ լեռներից դեպի Մոխրաջուր ու Դիվոտ գետերը, արևելյան Մուստանգրիմն ինձ ծանոթ չէ, բայց ոչինչ, տան ճանապարհն արևելքից էլ կգտնեմ...

Տեսնելով, որ գոնդորցին էլ չի շարունակելու, Գալադրիելը վեր կացավ ու հանդիսավոր հայտարարեց.

— Թող բոլորը խմեն հրաժեշտի թասը՝ սկսած ճանապարհի հաջող ավարտի համար: — Երբ բոլորը դատարկեցին թասերը, տանտիրուհին առաջարկեց նորից նստել: — Մենք հրաժեշտ տվեցինք իրար, և մեզ արդեն անջրպետում է կայանալիք բաժանման անտեսանելի ստվերը,— երկարատև դադարից հետո ասաց նա: — Բայց Լորիենից հեռանալուց առաջ ընդունեք էլֆերի հրաժեշտի նվերները:

Սկզբում նա դիմեց Արագորնին.

— Քեզ համար, Պահապանների Ջոկատի առաջնորդ, մեր վարպետները պատրաստել են փառապանծ Էլենդիլի սրին վայել պատյան: Այդ պատյանից հանվող թուրը չի կարող կոտրվել, բթանալ... Սակայն շուտով մեր միջև կբարձրանա անթափանց ու սև Խավարի Վարագույրը: Ուրեմն չունե՞ս արդյոք որևէ նվիրական իղձ, որ կարող եմ իրականացնել միայն ես, էլֆերի Օրհնյալ Երկրի տիրուհին:

Արագորնը այսպես պատասխանեց Գալադրիելին.

— Տիրուհի, իմ իղձերի կատարմանը ինձ կհասցնի միայն իմ սեփական ճանապարհը՝ ճանապարհ խավարի միջով մինչ հաղթանակ կամ կործանում: Ապագա կյանքի վերաբերյալ իմ բոլոր խոհերը կապված են Ազատքի և Լորիենի էլֆերի հետ, բայց իրականացնել իղձը վեր է քո կամ Էլրոնդի ուժերից...

— Ստույգ չես ասի, առարկեց նրան տիրուհին և ավելացրեց.— ընդունիր և՛ս մեկ ընծա: — Նա Արագորնին մեկնեց թափանցիկ կանաչ թանկարժեք քարից պատրաստված մի կրծքազարդ: Կրծքազարդը՝ բացված թևերով արծիվը, մեղմ լույս էր ճառագում, ասես տերևներով ծածկված արև էր: — Ես այս քարն ստացել եմ իմ մայրիկից և նվիրել եմ իմ աղջկան՝ Սելեբրայնին, նա՝ իր աղջկան, բայց այժմվանից այն քոնն է, քանզի ահա թե ինչ է կանխագուշակված. Քո ժամին կկոչեն քեզ Էլեսար՝ էլֆական բյուրեղ Էլենդիլի տոհմից:

Արագորնը խոնարհվեց, ընդունեց կրծքազարդն ու ամրացրեց կրծքին. հանկարծ բոլորը տեսան նրա իսկական արքայական դեմքը, և ասես ուսերից թոթափեց կործանարար հողերում դեգերելու իր բազմամյա լուծը:

— Երախտապարտ եմ քեզ, օ՜ Լորիենի տիրուհի, որ կյանք ես տվել Սելեբրայնին ու Արվենին,— ասաց նա:

Տիրուհին լուռ գլուխը խոնարհեց:

Երկու պատանի հոբիթներին՝ Փինի ու Մերիին, Գալադրիելը խոշոր ծաղկաձև ճարմանդներով արծաթե գոտիներ նվիրեց, Բորոմիրին՝ տպազիոնով դրվագված ոսկե գոտի, Լեգոլասը լորիենյան աղեղ ստացավ, որն ավելի ձիգ ու հզոր էր, քան չարքանտառցիներինը, և նուրբ, բայց ծանր նետերով լի կապարճ:

— Դե, իսկ քեզ համար, սիրելիդ իմ այգեպան,— տիրուհին քնքուշ ասաց Սամին,— հատուկ նվեր եմ պատրաստել, համեստ, սակայն հուսով եմ, օգտակար: — Նա հոբիթին մեկնեց մի տուփ, որի կափարիչի վրա մեկ տառ կար միայն փորագրված «Գ»: — Սա «Գ» գաղտնագիրն է,— բացատրեց տիրուհին: — Այդ տուփիկում ես մի քիչ հող եմ դրել, որ օրհնել եմ բերքառատությամբ Միջերկիր աշխարհի բոլոր մասերում: Այն քեզ չի պաշտպանի ճանապարհի վտանգներից, չի փրկի թշնամու նետից ու թրից, բայց եթե դու երբևէ վերադառնաս տուն և այս հողով պարարտեցնես նույնիսկ ավերված ու լքված այգիդ, ապա այն չտեսնված փարթամորեն կծաղկի: Եվ այն ժամանակ գուցե հիշես Լորիենը, որը տեսար, ցավոք, միայն ձմռանը, քանզի մեր ամառը վաղուց վերջացել է:

Սամը մինչև ականջների ծայրը կարմրեց և, շփոթված շնորհակալական խոսքեր քրթմնջալով, խոնարհվեց էլֆերի տիրուհուն:

— Մնաց իմանանք,— ասաց Գալադրիելը,— թե թզուկը ի՞նչ հիշատակ կուզենար ստանալ էլֆերից:

— Ո՛չ մի, տիրուհի՛,— ասաց Ջիմլին: — Ինձ համար բավական է, որ սեփական աչքերով տեսել եմ Օրհնյալ երկրի հրաշագեղ տիրուհուն:

— Լսեցի՞ք,— էլֆերին դիմեց Գալադրիելը: — Հիմա, ես կարծում եմ, ձեզ այլևս չի թվա, որ թզուկները տաղտկալի շահախնդիրներ են: Սակայն առանց նվեր մենք քեզ բաց չենք թողնի,

թանկագինդ իմ Ձիմլի,— ավելացրեց նա: — Ասա ինձ, ի՞նչ հիշատակ կուզեիր ստանալ Օրհնյալ Երկրի էլֆերից:

— Ոչինչ չեմ խնդրում, տիրուհի,— պատասխանեց թզուկը... Եվ երկար ժամանակ լռեց: Բայց հետո սիրտ արեց ու ասաց. — Եթե խոսենք անիրականալի երազների մասին... ապա ես կուզեի որպես ընծա ստանալ Լորիենի տիրուհու մազափունջը: Թզուկները թանկարժեք իրերի հարկը լավ գիտեն, և քո վարսերի համեմատությամբ, տիրուհի, ոսկին ժանգոտ երկաթ է թվում: Մի բարկացիր, որ ուրիշ ոչինչ չեմ խնդրում... — Այս անգամ նա վերջնականապես լռեց:

Լսվեց էլֆերի վախեցած փսփսոցը, իսկ Սելեբերնը զարմացած նայեց թզուկին: Բայց տիրուհին ժպտաց ու մեղմ հարցրեց.

— Իսկ ի՞նչ կանեիր այդ ընծան:

— Կպահպանեի որպես էլֆերի հետ բարեկամության անգին հիշատակ,— առանց մտածելու Տիրուհուն պատասխանեց թզուկը:

Եվ տիրուհին, մազափունջը կտրելով, տվեց թզուկին ու մտախոհ ասաց.

— Ես ոչինչ կանխագուշակել չեմ ուզում, քանզի Միջերկրի վրա Մութն է իջնում, և մենք չգիտենք, թե ինչ է սպասում մեզ ապագայում: Բայց եթե վիճակված է, որ Մութը ցրվի, ապա դու կկարողանաս շատ ոսկի ունենալ, սակայն դրա ստրուկը չես դառնա:

— Քեզ, Պահապան, վերջում եմ ընծա տալիս,— Ֆրոդոյին նայելով ասաց Գալադրիելը,— հենց այն պատճառով, որ վաղուց եմ վճռել, թե ինչպես գոնե մի քիչ թեթևացնեմ քո ճանապարհը: — Տիրուհին վեր կացավ և հոբիթին մեկնեց ներսից լուսավորվող մի բյուրեղապակե անոթ: — Այս թասի մեջ,— բացատրեց նա,— Հայելու լճախորշից երկու կաթիլ ջուր է Գիշերաստղի շողերով թափանցված: Որքան սև է խավարը, այնքան ավելի պայծառ է սա լուսավորվում: Հույս ունեմ, որ եթե քո ճանապարհին խավարեն լույսի մյուս աղբյուրները, ապա քեզ կօգնի էլֆական Լուսատուն, այնժամ հիշի՛ր Գալադրիելին ու նրա Հայելին:

Տիրուհին թասի լույսով լուսավորված հզոր էր, հրաշագեղ ու վեհասքանչ, բայց ոչ երբեք ահարկու, ինչպես այն ժամանակ Հայելու մոտ: Ֆրոդոն անխոս խոնարհվեց:

Սելեբերնը Պահապաններին ուղեկցեց մինչև կառանատեղ: Մայր մտնող արևի ճառագայթները ոսկեզօծել էին Կախարդուհու ալիքները. երկինքը զրնգում էր արտույտների դայլայլներից: Ճամփորդները խմբերի բաժանվեցին, ինչպես առաջին անգամ, երբ փորձում էին նավակները: Էլֆերը ձողերով հրեցին նրանց ափից, բարձրագոչ բարի ճանապարհ մաղթեցին, և Պահապանները լողացին դեպի Մեծ Անդուին: Կախարդուհու Անդուին թափվելու տեղում լուռ կանգնած էր Լորիենի տիրուհին: Թեթևագլոր ալիքները մակույկները հանեցին գետի մեջտեղը, և Լորիենը դանդաղ սկսեց հեռանալ, ասես մի մի ոսկեառագաստ նավ, որ Պահապաններից հեռանալով լողում էր դեպի անդառնալի անցյալ:

Վեհորեն մռայլ Անդուինը մթագնում էր Կախարդուհու ջինջ ջրերը: Նավակներն արագ լողացին հարավ, և շուտով Գալադրիելի լուսավոր կերպարանքը դարձավ փոքրիկ, հազիվ նկատելի կետ, որը փայլում էր հեռվում: Ֆրոդոյին թվաց, թե մի կայծ բռնկվեց: Այդ Գալադրիելը բարձրացավ ոտքերի ծայրերին ու ձեռքերը տարածեց վերջին հրաժեշտի համար, իսկ հետո ուղեկցող քամու խշշոցի հետ հեռվից եկող երգի ձայն լսվեց, մեղմ, հազիվ լսելի, բայց այնուամենայնիվ զրնգուն...

Անդուինը անսպասելիորեն շրջվեց դեպի արևելք, և բարձր, ծառապատ ափը Ֆրոդոյից ծածկեց Օրհնյալ Երկիրը: Այլևս երբեք նա այնտեղ չեղավ:

Նրանց դադարը հրաշալի երազի պես ընդհատվեց: Ճամփորդները լողում էին հարավ արևելք: Իրիկնային արևը գետում արտացոլվելով կուրացնում էր նրանց արցունքալի աչքերը: Ձիմլին, բոլորովին չթաքցնելով, լաց էր լինում:

— Հիմա, Օրհնյալ երկիրը տեսնելուց հետո,— տխուր ասաց իր ուղեկցին թզուկը,— ես ոչ մի բան հրաշագեղ չեմ անվանի... բացի նրա հրաժեշտի ընծայից: — Նա գրպանում շոշափեց տուփիկը, որի մեջ պահված էր Գալադրիելի ոսկեհեր խոպոպը:

— Ես դժվարությամբ որոշեցի Մորդոր գնալ,— արցունքները սրբելով, նորից խոսեց նա,— բայց գլխավոր վտանգների մասին, պարզվում է, որ չգիտեի: Ախր Էլրոնդը մեզ զգուշացրեց,

որ ոչ ոք չգիտե, թե ինչ փորձություններ կհանդիպեն ճանապարհին: Ես վախենում էի փորձանքներից ու զրկանքներից խավարում, բայց այդ վախն ինձ հետ չպահեց: Բայց եթե իմանայի, թե ինչ ահավոր եմ տանջվելու Լորիենից հեռանալիս, ապա դեռևս Ազատքից տուն կվերադառնայի: Որովհետև եթե հենց վաղը Թշնամին ինձ բռնի, ավելի դառը ցավ, քան այսօրվա հրաժեշտն էր, չի կարող հնարել... Խեղճ ես, դժբախտս...

— Բոլորիս համար էլ ծանր է,— ասաց Լեգոլասը: — Բոլորիս, ով ապրում է մեր խառը ժամանակներում: Մեզնից յուրաքանչյուրը կորուստների է դատապարտված: Բայց դե քեզ խեղճ ու դժբախտ չես կոչի՝ դու ինքդ չես կորցրել, իսկ դա ամենածանր կորուստն է: Ծանր պահին դու մնացել ես բարեկամներիդ հետ, և երջանկության ոչնչով չխաթարված հիշողությունը քեզ համար ցմահ պարգև կլինի:

— Հիշողությո՞ւնը,— վարանումով հարցրեց Ֆիմլին: — Շնորհակալություն քեզ բարի խոսքերի համար, բայց հիշողությունը չափազանց դառը մխիթարություն է: Ախր դա միայն անցած կյանքի հայելին է: Բոլոր դեպքերում այդպես են մտածում թզուկները: Էլֆերի համար անցյալը հավետ շարունակվում է, և նրանց համար հիշողությունը կենդանի կյանքի նման է, Իսկ մենք հիշում ենք միայն անցածի մասին, և մեր հիշողությունը դառնության երանգ ունի... — Ֆիմլին լռեց, իսկ հետո բացականչեց. — Լավ, ինքներս մեզ չքայքայենք: Խոսելով, միևնույնն է, վշտին չես օգնի... Եվ սառը լոգանքով, մեր մեջ ասած, նույնպես: Իսկ մենք արդեն ընկել ենք հորձանուտը: — Նա հարմար նստեց, թիերը վերցրեց ու սկսեց թիավարել դեպի արևմտյան ափ, որտեղ երևում էր Արագորնի նավակը:

Անդուինի հզոր, մթին ջրերը Պահապաններին արագ տանում էին դեպի հարավ-արևելք: Այստեղ ձմռան լիակատար իշխանություն էր: Ափերին մերկ ծառեր էին, որոնք ճամփորդների աչքից ծածկում էին գետամերձ հողերը: Լորիենից եկող տաք քամին դադարել էր, և Անդուինը պատված էր պաղ լռությամբ: Նույնիսկ թռչունների ծլվլոց չէր լսվում:

Խավարած արևը մտավ անտառի հետևը, և գետի վրա իջավ սառնամած աղջամուղջ, որը շուտով փոխվեց անաստղ գիշերվա: Ճամփորդները լողում էին ձախ ափին մոտ, մերկ ծառերը գորշ ուրվականների պես խթավոր արմատներն ագահորեն մեկնում էին դեպի սև, խուլ ճողփյունով ջուրը: Ֆրոդոն հոգնած փակեց աչքերը, և նրան մի անհանգիստ նինջ պարուրեց:

Գլուխ իններորդ. Մեծ Գետը

Ֆրոդոն արթնացավ անտառի բացատում: Նա խնամքով փաթաթված էր վերմակով, բայց զգում էր, որ այնուամենայնիվ քիչ մրսած է: Սկսվում էր պաղ, գորշ առավոտը: Բացատը շրջապատված էր բարձր ծառերով, իսկ ինչ-որ տեղ ներքևում աղմկում էր գետը: Քիչ հեռու Ֆիմլին օջախ էր վառել:

Նախաճաշելուց հետո ճամփորդներն իսկույն շարունակեցին ճանապարհը, սակայն ոչ ոք թիավարելու տրամադիր չէր, և մակույկները հանգիստ շարժվում էին հոսանքով: Առջևում, դեպի ուր էլ որ շրջվեին, նրանց մեծ վտանգ էր սպառնում: Նրանք ուրախ էին, որ Ժայռոտը հեռու է և չէին էլ շտապում հասնել: Այդպիսով նրանք ուժեր չէին ծախսում, և Արագորնը որոշեց չշտապեցնել նրանց: Միայն հետևում էր, որ լողան ամբողջ օրը՝ վաղ առավոտից մինչև ուշ երեկո, որովհետև վախենում էր, որ մինչ իրենք հանգստանում էին, Սև Տիրակալը ձեռքերը ծալած նստած չէր լինի:

Մերձափնյա անտառներն աստիճանաբար նոսրանում էին, իսկ երրորդ օրն առհասարակ չքացան: Արևելյան ափը ծածկվեց բլուրներով, որոնք տարածվում էին ընդհուպ մինչև հորիզոն՝ տձև, գորշ ու բացարձակապես մեռյալ. ոչ թռչուն ու գազան, ոչ ծառ կամ թուփ, կամ գոնե ժայռեր, որ աչքդ հանգստանա: Ճամփորդները մոտեցան Գորշ հարթավայրին, որը ձգվում էր Անդուինի երկայնքով Չարքանտառի հարավից մինչև գետամերձ բարձրավանդակն ու Մեռյալ Ճահիճները: Թշնամի՞ն էր թունավորել դրանք ինչ-որ կախարդանքով, ստորգետնյա բոսոր կրա՞կն էր խանձել, թե սև մորեխն էր սրբել, չգիտեր նույնիսկ Արագորնը: Դրանք ի սկզբանե անտի մեռյալ ու ամայի են եղել:

Արևմտյան ափը, նույնպես անծառ, ծածկված էր խիտ եղեգնուտով, որի մանուշակագույն-սև ավելները տխուր ու խուլ խշշում էին քամուց: Երբ եղեգնի պատն ընդհատվում էր, Ֆրոդոն տեսնում էր դրանց հետևում հեռավոր անտառի շերտը և Մշուշապատ Լեռնաշղթայի սանդղաձև ուրվագծերը:

Եղեգնուտում դայլայլում էին թռչունները, երբեմն գետի վրայով բադեր էին թռչում, իսկ մեկ անգամ ճամփորդները նույնիսկ կարապներ նկատեցին:

— Կարապնե՛ր,— բացականչեց Սամը,— ինչ մեծ են...

— Ու սև,— մռայլ ավելացրեց Արագորնը:

— Ի՜նչ պաղ ու մռայլ երկիր է,— դողալով ու կծկվելով քրթմնջաց Ֆրոդոն: — Ես կարծում էի հարավում ուրախ է ու տաք, ամեն ինչ ծաղկում է, ձմեռ էլ չի լինում:

— Մի՞թե սա հարավ է,— արձագանքեց Արագորնը: — Անդուինի ստորին հոսանքի շրջակայքում ու ծովափին արդեն ծառերը ծաղկելու ժամանակն է, իմ կարծիքով, այնտեղ տաք է և ուրախ, եթե, իհարկե, հարավային երկրները խավարած չեն: Իսկ մենք դեռևս միջին գոտում ենք՝ Մուստանգրիմի դքսության հյուսիսային սահմանի մոտ, որն անցնում է Բյուրեղիկ գետով, և ընդամենը մի հարյուր լիգ է Հոբիթստանից հարավ: Այստեղ հիմա ձյուն էլ կարող է գալ: Մուստանգրիմի հողերը հռչակված են իրենց բերրիությամբ և առաջներում խիստ բնակեցված էին, իսկ այժմ Անդուինի մոտ ոչ ոք չի ապրում, քանի որ նրա արևելյան ափերին նորից սկսել են գայլդարձյակներ երևալ: Իսկ նրանք թափառում են վիթխարի հորդաներով՝ իրենց ճանապարհին ոչնչացնելով ամեն կենդանի շունչ և, ասում են, ներխուժում են նույնիսկ մուստանգրիմցիների մոտ:

Սամն անհանգիստ նայեց շուրջը: Առաջ, երբ նրանք լողում էին անտառի միջով, թվում էր, թե ափամերձ թավուտներից իրենց հետևում են Թշնամու լրտեսները, դե իսկ հիմա, բաց տարածությունում իրեն բացարձակապես անպաշտպան էր զգում:

Անդուինը կտրուկ թեքվեց հարավ: Ափերը դանդաղ հետ լողացին: Արևելքում բլուրներն ասես տափակեցին, արևմտյան ափը փոխվեց կոշտ խոտի փնջերով ծածկված հարթավայրի: Անդուինը լայնահուն ու ծանծաղ դարձավ: Արևելյան քամին չոր էր ու պաղ:

Ճամփորդները համարյա իրար հետ չէին խոսում՝ յուրաքանչյուրն իր սեփական խոհերով էր տարված: Ֆրոդոն ծաղկուն Լորիենն էր հիշում՝ պայծառ արևն ու թափանցիկ հորդառատ անձրևները, ոսկի անտառներն ու արծաթե գետերը: Լեգոլասը մտքով հյուսիս էր տեղափոխվել, նա տեսնում էր ամառվա գիշեր, երկնագույն եղևնիների ստվերով պատված դաշտեր, լսում աստղերի շողերից փայլփլող աղբյուրների քչքչոց և Չարքանտառի էլֆերի զրնգուն ձայները: Ջիմլին մտածում էր, թե որտեղից ալմաստ գտնի, մեծ, բայց ջրի կաթիլի պես թափանցիկ, որ Գալադրիելի ընծայի համար զարդատուփ պատրաստի: Մերին ու Փինը ջանում էին հասկանալ, թե իրենց ուղեկիցն ինչ մտահոգություն ունի՝ Բորոմիրը եղունգներն էր կրծոտում, ինչ-որ բան էր քրթմնջում, իսկ երբեմն թիավարում էր Արագորնի մակույկի մոտ ու շատ տարօրինակ նայում Ֆրոդոյին: Սամը մտածում էր, որ բարեբախտաբար անվտանգ այս նավարկության ընթացքում խիստ կհոգնի պարապությունից: Մակույկում կծկված ու վհատ նայում էր միօրինակ ու տաղտկալի ափերին: Արագորնը թիերը նրան չէր վստահում, երբ ստիպված էին լինում ծանծաղուտներով անցնել:

Վերջանում էր նրանց նավարկության չորրորդ օրը, թանձրանում էր երեկոյան մշուշը: Սամը հոգնած, սովորականի պես մեջքը ճկած նստել էր մակույկի քթին ու մեկ-մեկ հետ էր նայում: Նա անհամբերությամբ տենչում էր մակույկից դուրս գալ ու ոտքի տակ ամուր գետինն զգալ: Հանկարծ նա ուղղվեց, աչքերը տրորեց ու երկար նայեց մակույկների հետևից լողացող մեծ գերանին: Հետո նրա հայացքը սահեց ափով ու նորից սկսեց ննջել:

… Այդ գիշեր նրանք իջան Գետի արևմտյան ափից քիչ հեռու գտնվող կղզյակը:

Ընթրիքից հետո, վերմակի մեջ տաքուկ փաթաթվելով, Սամը ննջող Ֆրոդոյին ասաց.

— Էսօր, հանգստից էդպես մի երկու ժամ առաջ աչքիս ինչ-որ անհասկանալի բան երևաց... Իսկ այ հիմա մտածում եմ, կարող է բոլորովին էլ չի երևացել, այլ ճիշտ է եղել:

— Վերջապես, թվացե՞լ է, թե չի թվացել,— հարցրեց Ֆրոդոն, իմանալով, որ Սամը, միևնույնն է, չի խաղաղվի, մինչև իր պատմությունը չպատմի: — Դե կարգին պատմի՛ր, ի՞նչ ես տեսել:

— Գերան,— խորհրդավոր շշնջաց Սամը: — Բայց դե ոչ սովորական գերան, այլ կենդանի ու աչքերով:

— Դե, գետում լիքը գերան է,— քաղցր հորանջելով արձագանքեց Ֆրոդոն,— իսկ ինչ վերաբերվում է աչքերին՝ վերջ տուր: Աչքեր ունեցող գերան նույնիսկ այստեղ չի լինում:

— Էդ մեկը չէ, լինում է,— համառեց Սամը: — Ես էլ մտածեցի, դե գերան է, էլի, գերանի նման լողում է իր համար Ջիմլիի մակույկի հետևից ու վերջ: Բայց դա հանկարծ սկսեց մեր հետևից հասնել: Այ էստեղ էլ աչքերը տեսա. փայլում են գերանի վրա երկու կրակի պես: Հետո տեսնում եմ այդ գերանը կենդանի է, որովհետև թաթեր ուներ, ոնց որ կարապինը, մենակ թե ավելի մեծ ու էդ թաթերով էր լողում: Մտածում եմ, էս ինչ երազ է: Ու աչքերս տրորեցի: Իսկ գերանը նկատեց, որ ես շարժվեցի, ու մեռելի պես անշարժացավ՝ ո՛չ թաթ, ո՛չ աչք: Ես էլ մտածեցի, որ չարժե տագնապ խփել, որ էդ բոլորն ինձ քնահարամությունից թվացել է: Իսկ երբ շուռ եկա ու նայեցի ափին, ինձ թվաց, որ ինչ-որ գազան ջրից դուրս թռավ ու թաքնվեց սեզերի մեջ: Ի՞նչ եք կարծում, դա ինչ էր:

— Համենայն դեպս երազ չէ,— ասաց Ֆրոդոն: — Այդ աչքերը ավելի շուտ էլ են երևացել: Ես դրանք տեսել եմ Մորիայում, հետո Սևագետքում: Եվ մի անգամ այդպիսի աչքերով մի արարած Լորիենում մագլցում էր մեր դելոնը: Այն ժամանակ Հելդարն էլ նկատեց: Իսկ հիշո՞ւմ ես, մեզ ինչ պատմեցին Մորիայից եկած օրքերին սպանած էլֆերը:

— Ո՞նց չէ, հիշում եմ,— պատասխանեց Սամը: — Եվ ձեր մորեղբոր պատմածներն եմ հիշում: Եվ, իմ կարծիքով, գիտեմ, թե ով է մեզ հետապնդում: Գոլլումը, անիծված լինի դա...

— Ես էլ եմ այդպես կարծում,— արձագանքեց Ֆրոդոն: — Երևի Չարքանտառից է փախել ու կարողացել գալ մեր հետքերով: Իսկ հիմա էլ հետևում է:

— Երևի՛,— տիրոջ հետ համաձայնեց Սամը,— ուրեմն մեզ հարկավոր է խիստ զգույշ լինել... Թե չէ էդ լպրծուն չարագործի թաթերը չեն դողա, գաղտնի կգա ու կխեղդի մեզ: Հիմա արդեն չարժե Պանդուխտին արթնացնել: Դուք էլ քնեք, իսկ ես կհսկեմ: Էդ նրա համար, որ մակույկում ես միայն բեռ եմ, ցերեկն էլ քունս վատ չեմ առնի:

— Բեռ-դիտորդ,— քմծիծաղեց Ֆրոդոն: — Լավ, ուրեմն դու կհսկես մինչև կեսգիշեր, իսկ հետո անպայման ինձ կարթնացնես՝ եթե ավելի շուտ ոչինչ տեղի չունենա:

Կեսգիշերին Սամը արթնացրեց տիրոջը և զեկուցեց, որ տագնապալի ոչինչ չի նկատել:

— Կարծես թե ինչ-որ բան ճլմփաց գետում, իսկ հետո ափին էլ ինչ-որ բան խշխշաց, բայց թե դա, կարծում եմ, քամին էր ու ալիքները:

Ֆրոդոն նստեց ու փաթաթվեց վերմակի մեջ:

Պահապանները քնած էին, ամեն ինչ խաղաղ էր, ժամանակը քնկոտ ու դանդաղ էր գնում, հոբիթի աչքն արդեն կպչում էր... Հանկարծ մակույկի մոտ ճողփյուն լսվեց, և ինչ-որ մեկը զգուշությամբ դուրս եկավ ջրից: Մակույկի կողքը բռնեց մի գունաթափ ձեռք, լողորդը ձգվեց, նայեց մակույկի ներսը և դանդաղ գլուխը շրջեց դեպի կղզյակը: Ֆրոդոն նստած էր ափին, ջրին շատ մոտ: Նա պարզ տեսավ երկու փայլուն աչքը, նույնիսկ եկվորի շունչը լսեց, վեր թռավ, պատյանից հանեց թուրը... Բայց փայլուն աչքերը վայրկենապես հանգան, ճողփյուն լսվեց, ու լողորդն անհետացավ: Իսկ Ֆրոդոյի կողքին արդեն կանգնած էր Արագորնը:

— Ի՞նչ է պատահել,— շշնջոցով հարցրեց հոբիթին:

— Գոլլումը,— կարճ պատասխանեց Ֆրոդոն:

— Ուրեմն դու նրա մասին գիտե՞ս,— զարմացավ Արագորնը: — Նա մեր հետքերով գալիս էր Մորիայի քարանձավներում: Իսկ հիմա կպել է գերանին ու հետևում է մեզ: Փորձել եմ բռնել, բայց ոչինչ չի ստացվել. աքիսի նման ճարպիկ է ու օձաձկան պես լպրծուն: Ուրեմն պետք է նրանից հեռու լողալ, որովհետև ազատ վիճակում նա շատ վտանգավոր է. և ինքն է ընդունակ թիկունքից սպանել և հարկավոր դեպքում թշնամիների կարող է բերել:

Այդ գիշեր Գոլլումն այլևս չերևաց: Ցերեկը ճամփորդները հանգստացան կղզյակում, իսկ երեկոյան նորից ճանապարհ ընկան: Այժմ առավոտները քնելուց առաջ միշտ ժամապահ էին նշանակում: Բայց ոչ մի ժամապահ Գոլլումին չտեսավ: Գուցե նա չէր մոտենում ճամփորդներին, գուցե պարզապես հետ էր մնացել: Պահապանները նավարկում էին առաջվանից արագ և մինչև ութերորդ գիշերը առանց որևէ իրադարձության: Եղանակը սառն էր ու ամպամած, քամին մշտապես հարավից էր փչում: Երեկոյան կողմ երկինքը մի քիչ պարզվեց, իսկ ամպերի արանքներից աղոտ երևաց լուսնի արծաթե մահիկը:

Ժայռերի վրա շատ թռչուններ էին պտտվում. ամպերի շղարշով ծածկված արևը լողաց բոսոր ժայռերի հետևը: Ափամերձ ժայռերի տակ պառկած Արագորնը ցրված նայում էր երկնքին ու

մտորում, թե Գոլլումը կարո՞ղ էր Ջոկատի մասին հաղորդած լինել Թշնամու ծառաներին: Պահապանները պատրաստվում էին մակույկները նստել:

Հանկարծ Արագորնը հապշտապ վեր թռավ: Նա հեռվում վիթխարի թռչուն տեսավ, որը թռչում էր հարավ-արևելք:

— Լսե՛ք, Լեգոլա՛ս,— ձայն տվեց Էլֆին,— քո կարծիքով սա արծիվ չէ՞:

— Արծիվ է,— վերև նայելով ասաց Էլֆը: — Կուզեի իմանալ, նա այստեղ ի՞նչ է անում: Չէ՞ որ արծիվները միայն սարերում են բնադրում: Գետամերձը դեռ լեռ չէ:

— Մինչև մութն ընկնելը տեղներիցս չենք շարժվի,— վճռականորեն հայտարարեց Արագորնը Պահապաններին:

Գիշերվա կողմ արևելյան քամին հանդարտվեց: Անդուինի վրա անթափանց խավար իջավ: Նվաղուն լուսինը հազիվ էր լուսավորում, և մշուշում խավար փայլփլում էին աստղերը: Սամը տարակուսանքով զննում էր լուսինը:

— Տարօրինակ բան է,— ասաց նա Ֆրոդոյին: — Լուսինը կասես թե ամեն տեղ էլ նույնն է՝ ինչ Էստեղ, ինչ Խլուտում, ինչ մեզ մոտ, Հոբիթստանում: Իսկ ա՛յ, դուրս է գալիս, որ Լորիենում ուրիշ լուսին է, իրենց սեփականն է, կամ էլ ես ժամանակը խառնել եմ: Հիշո՞ւմ եք, երբ մենք Էլֆերի մոտ էինք և առաջին գիշերը քնեցինք դելոնի վրա, լուսինը պակասում էր՝ եղջյուրները աջ, ու մնում էր ապրելու շաբաթից ոչ ավելի: Հա, իսկ հիմա մենք Լորիենից դուրս ենք եկել և յոթ օր նավարկել ենք, ու երեկ նայում եմ՝ երկինք է մագլցում ջահել լուսինը, նոր ծնված, եղջյուրները՝ ձախ: Ուրեմն դուրս է գալիս, ժամանակը տեղում կանգնա՞ծ էր... Հո մենք երեսուն օր չե՞նք մնացել Էլֆերի մոտ...

— Չգիտեմ,— մտածկոտ պատասխանեց Ֆրոդոն: — Իմ կարծիքով, Էլֆերը ժամանակի վրա չեն իշխում, նշանակում է՝ այն Լորիենում, այնուամենայնիվ, ընթանում է, բայց և ժամանակն էլ առայժմ դեռ իշխանություն չունի Էլֆերի վրա, դրա համար էլ Լորիենում այն չես նկատում: Նեինի Տիրուհու զորությունը մեծ է...

— Լորիենի սահմաններից դուրս Նեինի մասին չի կարելի խոսել նույնիսկ ամենամոտիկ բարեկամների, նույնիսկ ինձ հետ... — ընդհատեց Արագորնը: Նա անհանգիստ հայացք գցեց ափ, սակայն տագնապալի ոչինչ չնկատեց և Սամին նայելով, կարճ բացատրեց. — մինչ մենք ապրում էինք Օրհնյալ Երկրում, լուսինը բոլորեց, նորից ծնվեց ու կրկին բոլորեց: Ժամանակը չես կանգնեցնի: Երեսուն օր մենք հյուր եղանք Էլֆերի մոտ: Միջերկիրը կաշկանդող ձմեռը վերջանում է: Սկսվում է վերջին հույսի գարունը: — Արագորնը լռեց և մոտեցավ մակույկներին: — Նավարկելու ժամանակն է,— բարձր ասաց նա: — Սա գիշերային վերջին անցումն է, այստեղից հետո գետի հունը չգիտեմ: Հոսանքն ի վար մեզ կհանդիպի Սարն-Ջեբիրը՝ համընդհանուր լեզվով, Սահանքը, որտեղ գիշերով մենք անպայման կջարդվենք: Իսկ ցերեկը, լույսով, նորից կանգ կառնենք, որ մերձափնյա արահետներով շրջանցենք այն: Բայց մինչև բարձրավանդակ այստեղից մի հարյուր լիգ կլինի, ոչ պակաս: Այստեղ էլ հարկավոր է զգուշությամբ նավարկել ժայռի կամ կղզու բախվելուց խուսափելու համար: Այդ պատճառով էլ միշտ իմ հետևից եկեք:

Սամին նշանակեցին առաջ նայող: Մառախուղը ցրվեց, և վառ աստղերը կայծկլտացին գետի ջրում: Ծփացող ալիքների շողքը շլացնում էր աչքերը: Սամը ուշադիր նայում էր մթության մեջ: Կեսգիշերից անց էր. անտեսանելի ափերի մոտ ժայռերի մեջ խուլ աղմկում էր ջուրը, գետը գնալով արագահոս էր դառնում: Հանկարծ Սամը ճչաց՝ առջևում Պահապանների ճանապարհը փակելով, արևմտյան ափից մինչև գետի կենտրոն քարոտ ծանծաղուտի նեղ շերտ էր ձգվում: Հոսանքը կտրուկ ձախ թեքվելով, մակույկները քշեց արևելյան ափ: Փրփրած ջուրը ոռնում էր ու քլթքլթում, այնտեղ, ուր նեղ հոսանքը զարնվում էր արևելյան ափի ժայռերին, սպիտակափրփուր հորձանուտներ էին:

— Գիշերը այդտեղով չենք անցնի,— գոռաց Բորոմիրը՝ փորձելով շրջվել: — Իսկ եթե դրանից հետո սահանքն է սկսվում, ապա բոլորս կույր կատվի ձագերի պես կխեղդվենք...

— Հարկավոր է նավարկել դեպի արևմտյան ափ... — կտրուկ շրջվելով գոռաց Արագորնը:

Ջիմլին ու Լեգոլասը նույնպես շրջվեցին:

Արագորնը ծանր հակվեց թիերի վրա:

— Հաշիվներիս մեջ սխալվեցի,— ասաց Ֆրոդոյին: — Ըստ երևույթին, մենք մոտեցել ենք Սարն-Գեբիրին: Անդուինն ավելի արագ է հոսում, քան ես կարծում էի:

Ճամփորդները դժվարությամբ էին թիավարում հոսանքին հակառակ: Մակույկները դանդաղ լողում էին առաջ: Բայց ջուրը շարունակ նրանց աջ ափ էր քշում, որը չարագույժ ու սև էր թվում:

— Զախ, ավելի ձախ... կարող ենք խրվել ծանծաղուտն ու շրջվել,— գոռաց Բորոմիրը:

Ֆրոդոն զգաց, որ մակույկի տակը ճանկռոտում են ափամերձ ծանծաղուտի քարերը: Իսկ հետո գետի խուլ մռնչոցի մեջ սուր սուլոց լսվեց, և ափից ճամփորդների վրա նետեր թռան: Մեկը ծակեց Արագորնի կնգուղը՝ բարեբախտաբար, հետքագետն այդ ժամանակ կռացել էր, մյուսը կտցեց Ֆրոդոյին և զրնգալով ետ թռավ միթրիլե օղազրահից, երրորդը ճեղքեց Մերիի թին: Սամին թվում էր, որ ինքը տեսնում է նետաձիգների սև ուրվագծերը մուգ ժայռերի վրա: Արևելյան ափը շատ մոտիկ էր:

— Իրչե՞րը...— Էլֆերեն գոռաց Լեգոլասը:

— Օրքե՞րը,— տագնապահար բացականչեց Ջիմլին:

— Գոլլումի ձեռքի գործն է,— քրթմնջաց Սամը,— դրանց ուրիշ բերող չկա: — Թող սատկի այդ երիցս անիծյալ չարագործը... Անդուինն էլ է դրանց կողմից՝ մի գլուխ քաշում է արևելյան ափ...

Պահապանները որքան ուժ ունեին թիավարում էին: Նետերը թռչում էին նրանց գլխավերևով, մեկ-մեկ էլ խուլ ճողփյունով ջուրն էին պատռում: Սակայն հարձակում չեղավ: Օրքերը մթության մեջ հիանալի տեսնում են, բայց Պահապաններին փրկեցին լորիենյան թիկնոցները, թե չէ նրանց վիճակը վատ կլիներ:

Մակույկները դանդաղ առաջ էին շարժվում: Շուտով հոսանքի ճնշումը թուլացավ: Պահապանները թիավարեցին դեպի գետի կենտրոն, և աջակողմյան ժայռերը կուլ գնացին մթությանը: Նրանք կտրուկ շրջվեցին ձախ, գետը հատեցին և նավարկելով ափին մոտ, թփուտների ճյուղերի տակ քողարկվելով, շունչ առան ու թիերը թողեցին:

Լեգոլասը կապարճից նետը հանեց, աստիճանանման ժայռերով քիչ բարձրացավ վերև, աղեղը ձգեց ու նայեց ափից այն կողմ: Սակայն ոչինչ զանազանել չկարողացավ: Օրքերի ճիչերն աստիճանաբար լռեցին: Ֆրոդոն ներքևից նայեց Էլֆին: Գիշերային երկնքում աստղերն իրար աչքով էին անում, բայց հարավից սև ամպեր էին բարձրանում, և աստղերը մեկը մյուսի հետևից խամրում էին:

Հանկարծ ճամփորդներին սարսափ պատեց:

— Ո՞վ Էլբերեթ Գիլթոնիել,— գլուխը ետ գցելով շշնջաց Լեգոլասը:

Հարավից շարժվող ամպերից առաջ անցնելով, ճամփորդներին էր մոտենում մի թևավոր, հեքիաթային վիշապի պես վիթխարի ստվեր: Անդուինի հետևից ուրախ վայնասուն լսվեց:

Ֆրոդոն սահմռկեցուցիչ սարսափից քարացավ և հանկարծ հիշեց սառը դաշույնը, որ Ձավերտում փայլատակեց իր աչքերի առջև: Նա ուժահատ կծկվեց ու աչքերը փակեց:

Լորիենյան աղեղի լարը զրնգաց: Նետը սուլոցով երկինք խոյացավ: Թևավոր ստվերը ջղաձգորեն և խռպոտ ճչոցով անհետացավ Անդուինի այն կողմում: Երկնքում նորից աստղերը փայլեցին: Արևելյան ափին վայնասունը լռեց: Սև լռությունը ոչինչ չէր վրդովվում: Հանգստանալուց հետո Պահապանները վերցրին թիերն ու դանդաղ նավարկեցին հոսանքն ի վեր: Շուտով մի նեղ նեղուց հանդիպեց: Նրանք մտան նեղուցը, մոտեցան ափին ու որոշեցին մինչև լուսաբաց մնալ այստեղ: Նույնիսկ ամենափոքրիկ խարույկը նրանց կմատներ օրքերին, դրա համար էլ բավարարվեցին էլֆական բլիթներով:

— Օրհնյալ լինես, լորիենյան աղեղ և չարքանտառային էլֆի անվրեպ աչք... — բլիթները ծամելուց հետո բացականչեց Ջիմլին: — Դա հիանալի նետահարում էր, բարեկամս...

— Ես այդպես էլ չհասկացա, թե ում նշան բռնեցի,— դողը զսպելով ասաց Լեգոլասը:

— Ես էլ չհասկացա, թե ով է թռչում դեպի մեզ, բայց ինձ մոտակա հանդիպումը չէր ուրախացնում,— խոստովանեց Ջիմլին: — Չգիտես ինչու, հանկարծ Մորիան հիշեցի... — Թզուկը զգուշավոր շուրջը նայեց,— և Բալրոգին,— փսփսալով վերջացրեց նա:

— Դա Բալրոգը չէր,— առարկեց Ֆրոդոն, որ դեռ չէր հասցրել սարսափից ուշքի գալ,— այլ մեկ ուրիշը, Բալրոգը շիկացած ամպի է նման: Իսկ նա, որին Լեգոլասը նետահարեց... շնչեց ինձ վրա... — Ֆրոդոն դողդողալով կուչ եկավ,— գերեզմանային պաղ փչեց: Եվ ինձ թվաց... — հոբիթը պապանձվեց ու այլևս չշարունակեց:

— Ի՞նչ թվաց քեզ,— մակույկի կողի վրայով դեպի Արագորնի մակույկը թեքվելով, հարցրեց Բորոմիրը:

— Դե միայն թվաց,— խուսափեց Ֆրոդոն,— այնպես որ այդ մասին խոսելու հարկ չկա: Իսկ այ օրքերը ընկճվեցին, երբ Լեգոլասը խոցեց նրանց դաշնակցին:

— Ընկճվեցին ու կատաղեցին,— ճշտեց Արագորնը: — Բայց մենք, ցավոք, նրանց մտահղացումները չգիտենք: Համենայն դեպս պատրաստվենք մարտի: Այս գիշեր քնել չենք կարողանա:

Համր ձգվում էին գիշերային ժամերը: Հեռվում միալար աղմկում էր սահանքը: Գետից այն կողմ թշնամական լռություն էր ծվարում: Հարավից եկող թանձր ամպերը թաց ծածկոցի նման իջել էին Անդուինի վրա: Անդուինի խավարը տաք էր ու խոնավ: Ճյուղերին, մթության մեջ աղոտ փայլելով, կախվել էին մանր կաթիլների ուլունքաշարերը:

Երբ արևելքում լույսը բացվեց, ամպերի արանքից քամվող գորշ առավոտը խոնջացած ճամփորդների աչքին բացեց տխուր ու տարօրինակ կերպով մեղմացած մի աշխարհ՝ ոչ խիստ ուրվագծեր, ոչ մութ ստվերներ, միայն կիսաթափանցիկ սպիտակավուն մառախուղ: Արևելյան ափը չէր երևում:

— Մառախուղ չեմ սիրում,— քրթմնջաց Սամը: — Բայց մեկ էլ տեսնում ես մառախուղն էլ պետք եկավ: Կարող է պատահել, օրքերը հիմա մեզ չգտնե՞ն:

— Գուցե և չգտնեն,— ասաց Արագորնը: — Եթե մենք կարողանանք գտնել արահետը, որ ափով շրջանցենք Սարն-Ձեբիրը:

— Իսկ մեր ինչի՞ն են հարկավոր գետն ու գետամերձ արահետները,— խառնվեց Բորոմիրը: — Հասել է էլֆական կճեպները դեն նետելու ժամանակը: — Գլխի շարժումով գոնդորցին ցույց տվեց մակույկները: — Քանի որ հասել ենք մինչև սահանքը, հարկավոր է արդեն գնալ դեպի արևմուտք, շրջանցելով Բոլոնը, իսկ հետո թեքվել հարավ և անցնել Մաքրանտառի միջով:

— Դա Մինաս Թիրիթի ճանապարհն է,— ասաց Արագորնը: — Իսկ մենք դեռ չենք որոշել ուր գնալ: Բայց գլխավորը, շարժվելով Բոլոնյան ճահճուտով՝ ճշգրիտ չիմանալով, թե որտեղից պետք է թեքվել հարավ, շատ ավելի վտանգավոր է, քան գետով նավարկելը: Չէ՞ որ դու չգիտես արևելյան Մուստանգրիմը: Իսկ գետով գնալիս ճանապարհից չենք շեղվի:

— Հենց որ գետի վրայի մշուշը ցրվի, մեզ կջարդեն,— առարկեց Բորոմիրը: — Իսկ եթե նույնիսկ մենք օրքերից հեռանանք ու հասնենք Ժայռոտ, հետո ի՞նչ... Կցատկենք Ցիցքարի վրայով ու կթեքվենք ճահիճնե՞րը...

— Ցիցքարը ափով կշրջանցենք,— ասաց Արագորնը: — Եվ միաժամանակ արդեն կտեսնենք: Մոռացե՞լ ես, թե պարզապես չես ուզում հիշել նումենորցիների հին պահակային կետերը՝ Ամոն-Վեդարը և Ամոն-Սլոուշը: Գուցե շրջակա հողերը դիտելով, վերջապես կորոշե՞նք ուր գնալ:

Բորոմիրը երկար վիճեց Արագորնի հետ: Սակայն համոզված լինելով, որ Ֆրոդոն ու մյուսները որոշել են գնալ գետի երկայնքով, ասաց.

— Գոնդորցիները սովոր չեն այլ կողմ թեքվելու, երբ նրանց բարեկամներին դժվար ճանապարհ է սպասում: Ես ձեզ կօգնեմ մակույկները տանել, Հետո ձեզ հետ միասին կիջնեմ Ժայռոտ, թեպետ օրքերի պատճառով դա շատ վտանգավոր է: Բայց հետո անմիջապես կգնամ արևմուտք՝ մենակ, եթե ուղեկիցներ ունենալու արժանի չեմ:

Ներքևում մշուշը թեթևակի ցրվեց: Որոշված էր, որ Արագորնն ու Լեգոլասը գնալու են ափամերձ արահետը փնտրելու:

— Մինչև օրքերի հայտնվելը,— ասաց Արագորնը,— ճամփորդները հաճախ էին իջնում Անդուինով, և ինձ թվում է, արահետը գտնելը դժվար չէ: Բլրասարը միշտ էլ շրջանցել են ափով:

— Ինչ օրքերն սկսել են թափառել Անդուինի մոտերքում, գետով հյուսիսից հարավ անցնել համարյա անհնարին է,— նախազգուշացրեց Բորոմիրը: — Եվ որքան հարավ, այնքան Անդուինը վտանգավոր է դառնում:

— Դեպի հարավ բոլոր ճանապարհներն են վտանգավոր,— հանգիստ պատասխանեց նրան Արագորնը: — Մեզ սպասեցեք այստեղ մինչև վաղը առավոտ: Եթե այդ ժամանակ չվերադառնանք, առաջնորդ ընտրեք և անմիջապես հեռացեք:

Ընկճող տագնապով էին ճամփորդները նայում, թե ինչպես են մշուշում ծածկվում Լեգոլասն ու Արագորնը: Սակայն նրանց տագնապը, պարզվեց, իզուր էր: Հետախույզները երկու ժամ հետո վերադարձան:

— Ամեն ինչ կարգին է,— ցած իջնելով ասաց Արագորնը: — Ափից մի քիչ բարձր մի արահետ է ձգվում, որը Բլրասարից տանում է կառանատեղ: Մեզ հարկավոր կլինի քայլել մոտ մեկուկես լիգ: Մեկ լիգ ծանծաղուտի երկարությամբ և կեսն էլ մինչև այստեղ հասնելը: Հարավային կառանատեղից հետո գետն արագահոս է, բայց խութեր ու ծանծաղ տեղեր արդեն չկան: Իսկ հյուսիսային կառանատեղը, որտեղից սկսվում է արահետը, բավական հեռու է և երկար պետք է նավարկեն այնտեղ հասնելու համար: Այնպես որ այստեղ պետք է դուրս գանք: Գլխավորը՝ մակույկներն արահետ դուրս քաշելն է, ափն այստեղ, ինչպես տեսնում եք, գիրթ է ու ժայռոտ:

— Դժվար է լինելու,— փնթփնթաց Բորոմիրը:

— Բայց գլուխ կհանենք,— ասաց Արագորնը:

— Իհարկե կհանենք,— բացականչեց Ջիմլին:

Մակույկներն ափ հանելը շատ հոգնեցրեց Ճամփորդներին: Սկզբում արահետ հանեցին բեռը, հանգստանալուց հետո անցան մակույկներին, որոնք զարմանալիորեն թեթև էին: Թե ի՞նչ փայտից էին դրանք պատրաստված, Լեգոլասը չգիտեր, իսկ մնացածներն՝ առավել ևս չգիտեին, ամուր փայտը համարյա կշիռ չուներ, այնպես որ բեռնաթափված մակույկը կարող էին արահետով տանել նույնիսկ Փինն ու Մերին: Սակայն մակույկներն արահետ քարշ տալ առանց Բորոմիրի, երևի, չհաջողվեր: Փշրվող ժայռեր, քարաքոսի սողացող ցողուններով ծածկված ելուստներ, հագուստից կառչող մոշի թփերի տակ գտնվող ծերպեր, սառցասառն առվակներ, անհատակ ջրհորներ՝ այսպիսի տեղանքով վերելքը մակույկները շալակած փոքրիկ ճամփորդների համար անհնարին էր: Նույնիսկ Արագորնն ու Բորոմիրը հազիվ էին հաղթահարում այդ դժվարին վերելքը, բայց մակույկներն արահետ հանվեցին, և այնուհետև գործն արագ առաջ գնաց:

Արահետների աջ կողմում զիգզագ խորխորատներով ժայռերի ուղղաձիգ պատն էր, իսկ ձախից մռնչում էր անտեսանելի սահանքի ատամներից մաղվող գետը: Երբեմն արահետի վրա վերևից գլորված քարեր էին հանդիպում, երբեմն՝ հեղեղատներ, բայց սրանք անցնելը հեշտ էր: Շուտով արահետը թաքվեց ձախ և իջավ բնական գետնախորշում գտնվող կառանարան: Գետի երկարությամբ ձգվող հետիոտն ճանապարհը վերջացավ, շարունակության վրա անմատչելի ժայռերով կուտակումներ էին: Այդ ճանապարհը Պահապաններն անցան երկու անգամ և ամեն ինչ տեղափոխեցին:

Կամաց մութն սկսեց ընկնել. ճամփորդները հոգնած ու տրտում նստեցին քարե կառանատեղին: Օրը մեռնում էր, հեռվում միապաղաղ ոռնում էր Սարն-Ջեբիրը՝ ճամփորդների վրա ծանր քուն բերելով:

— Ահա և հասանք,— ասաց Բորոմիրը: — Սակայն այսօր նավարկել չենք կարող: Բոլորս էլ լավ քնելու կարիք ունենք:

— Ճիշտ է,— գոնդորցու հետ համաձայնեց Արագորնը: — Բայց երկար քնել չի հաջողվի, քանի որ երկուական ենք հերթապահելու. երեք ժամ քուն և մեկ ժամ հսկել: Եթե մառախուղը մինչև առավոտ մնա, հնարավոր է, խույս կտանք թշնամուց:

Գիշերը ոչ մի իրադարձություն տեղի չունեցավ, միայն առավոտյան կողմ թեթև անձրև մաղեց: Լուսադեմին Պահապանները ճանապարհ ընկան: Մշուշի ծածկոցը մի փոքր նոսրացել էր. ճամփորդները սեղմվել էին արևմտյան ափին, որ կաթնագույն մեգի մեջ մոխրագույն էր երևում: Մի երեք ժամ հետո անձրև սկսեց կաթկթալ, ու շուտով գարնանային հեղեղ թափվեց: Որպեսզի մակույկները չսուզվեն, ծածկեցին նուրբ անջրանցիկ կաշվե

գոգնոցներով, բայց նավարկելը շարունակեցին համարյա կուրորեն: Հեղեղը պատռեց մառախուղի վարագույրը ու արագ դադարեց: Երկինքը պարզվեց: Մութ ամպերը լողացին հյուսիս: Գետամերձ բարձրավանդակի ատամնավոր բլրաշարքերը երկու կողմից սեղմել էին Անդուինը. հոսանքը ճամփորդներին սրընթաց քշում էր ափի երկարությամբ. շրջվել ու թիավարել հոսանքին հակառակ՝ հիմա նրանք, հավանաբար, չէին կարող:

Ֆրոդոն տագնապահար նայում էր առաջ: Պահապանները մոտենում էին աղոտ կերպով մարդկային կերպարանք հիշեցնող վիթխարի ժայռերի: Բարձր, հզոր, չարագույժ-ահարկու՝ դրանք նմանվում էին գետի ստորին հոսանքները թշնամիներից պահպանող քարե ռազմիկների: Ճամփորդները պետք է նավարկեին դրանց արանքով:

— Սրանք Քարե Հսկաներն են,— ասաց Արագորնը,— նումենորյան թագավորության մեծ դյուցազունները: — Եվ բարձր գոռաց մյուս Պահապաններին: — Հետևեք ինձ... սահանքում պահեք ձեզ... Որքան կարելի է իրարից հեռու մնացեք...

Քարե Հսկաներն արդեն մոտ էին: Դրանք հարյուրամյակների փոթորիկների ընթացքում պահպանել էին իրենց արարիչներից ստացած վեհաշուք տեսքը: Համր, բայց ահազդու, հին, բայց հզոր, ժամանակից ճաճքված սաղավարտներով, քիչ կկոցած աչքերով նայում էին հյուսիս, նախազգուշաբար ձախ ձեռքը բարձրացրած վերև և աջ ձեռքում մարտական տապարը սեղմած: Առասպելական թագավորության վեհանիստ ժամապահները Ֆրոդոյին ակնածալի ահ էին ներշնչում, և նա աչքերը բարձրացրեց դեպի Հսկաները, երբ դրանց ստվերը ծածկել էր ճամփորդներին: Նույնիսկ Բորոմիրը գլուխն իջեցրեց անցյալի հսկա պահակների արանքում կատաղորեն պարող մակույկում:

Ուղղաձիգ, երկինք խոյացող ժայռերը սրընթաց անցնում էին Պահակների կողքով, սև, ալիքավոր հայելու նման ջուրը խլացուցիչ թնդում էր, մթնշաղ էր ու սարսռալի պաղ քամին թափանցում էր մինչև ոսկորները: Ֆրոդոն սեղմվեց դողդողացող Սամին, ականջ դնելով նրա կերկերուն քրթմնջոցին. « Եթե կենդանի մնացի... Էլ երբեք... ոչ մի գնով... մոտ էլ չեմ գա... հեռվից էլ չեմ նայի...»:

— Մի՛ վախեցեք...— հանկարծ հնչեց մի տարօրինակ ձայն:

Ֆրոդոն հետ նայեց ու տեսավ Պանդուխտին, սակայն իսկույն չճանաչեց, որովհետև նրա առջև կանգնած էր ոչ թե Պանդուխտը՝ վայրի Խլուտի հոգնած թափառականը, այլ գեղատեսիլ, երիտասարդ ու հզոր դյուցազնը: Անսասան ու հպարտ, բարձրապահ գլխով ու թիկնոցի անփութորեն հետ գցած կնգուղով: Անդուինի կատաղի սահանքը սանձահարող լորիենյան մակույկում կանգնած էր նա՝ արքան, որ վերադառնում է իր տերությունը:

— Մի՛ վախեցեք,— ձայնը հանգիստ էր ու հնչեղ: Գետի մռնչոցը այն չէր խլացնում: — Երկար տարիներ երազում էի տեսնել Քարե Հսկաներին՝ Իսիլդուրին և Անարիոնին: Իրենց ժառանգ Էլեսար Էլֆացուն՝ Էլենդիլի հարստության Արաթհորնի որդուն՝ նրանք կօգնեն սահանքը հաղթահարելու: Մի՛ վախեցեք, այստեղ մեզ վտանգ չի սպառնում:

Կիրճը, որով նավարկում էին Պահապանները, արագորեն նեղանալով շրջվում էր արևմուտք. սեղմված հոսանքի միաձայն թնդյունը բազմապատիկ ուժեղանում էր խուլ արձագանքից, որոտացող մթնշաղը թանձր կապտում էր... Բայց ահա առջևում թույլ լույս շողաց, կիրճի պատերն անսպասելիորեն հեռացան, և Պահապանները դուրս եկան մի խաղաղ լիճ: Դժգույն, քամուց սառած, ծվատված ամպերի նոսր փետուրներով, փոքրիկ մասերի կտրտված երկինքը արտացոլվում էր ջրում: Արևը բավական ցած էր իջել: Ձվաձև լճի ժայռակոփ ափերին հզոր կաղնիներ էին, փոթորկից ծռմռված ճյուղերը սառն ու խոնավ փայլփլում էին արևից: Հեռվում, լճի հարավային ծայրամասում թեք ափին երեք սար էր բարձրանում. մեջտեղի սարը երկու կողմից ողողում էր գետը:

— Դա Թոլ Բրանդիրն է,— ասաց Արագորնը, Պահապաններին ցույց տալով կենտրոնի սարը,— իսկ ձախ և աջ կողմերում նումենորցիների հին պահակակետերն են՝ Ամոն Սլոուշ և Ամոն Վեդար, (համընդհանուր լեզվով Ուկն և Ակն): Ժամանակին այնտեղ ժամապահները դիտում ու լսում էին՝ թշնամի չի՞ մոտենում արդյոք: Բայց ասում են, Թոլ Բրանդիր կղզու ափերին ոչ մարդ է ոտք դրել, ոչ գազան... Իսկ կղզուց այն կողմ հունհավետ մոլեգնում է Ռերոսը:

Դանդաղ դեպի հարավ լողալով, Պահապանները հաց կերան և մի քիչ հանգստացան: Իսկ հետո նորից թիերը վերցրին ձեռքները: Ցածր արևը աղոտ կարմիր էր, հարավում մթին էր տալիս Ժայռոտի վիթխարի զանգվածը և հստակ լսվում էր Ցիցքարի մռունչը:

Երբ ճամփորդները մոտեցան կղզուն՝ արդեն մթնել էր:

Վերջանում էր Մեծ Գետով նրանց ճանապարհորդության տասներորդ օրը: Խլուտի հողերը մնացին հետևում: Առավոտյան դեռ պետք է որոշեին՝ շարժվել դեպի արևմո՞ւտք, թե արևելք:

Գլուխ տասը. Պառակտում

Արագորնը աջ վտակով տարավ նրանց: Ակնի և վտակի միջև մարգագետին էր ընկած: Հեռավոր հողերը սուզված էին խավարի մեջ: Արագորնը շրջվեց ու թիավարեց ափ:

— Ես երբեք չեմ լսել,— ասաց նա ուղեկիցներին,— որ Ակնի մոտակայքում օրքեր երևացած լինեն: Սակայն միևնույնն է, մեզ ժամապահ պետք է:

Պահապանները մակույկները ափ հանեցին, փաթաթվեցին վերմակների մեջ և անմիջապես քնեցին: Գիշերը տագնապալի ոչինչ տեղի չունեցավ: Յուրաքանչյուր ժամապահ մեկ ժամ էր հերթապահում: Գոլլումը կամ օրքերը մինչև լուսաբաց չերևացին: Եթե Գոլլումը շարունակում էր հետևել Ջոկատին, ապա երևի մի տեղ սուսուփուս թաքնված էր: Բայց Արագորնի քունն անհանգիստ էր ու տագնապալի: Լուսադեմին նա վեր կացավ ու գնաց Ֆրոդոյի մոտ, որը հենց նոր փոխարինել էր Սամին:

— Մինչև հերթապահության դեռ շատ կա,— նրան ասաց հոբիթը,— ինչո՞ւ չես քնում:

— Ինքս էլ չգիտեմ,— պատասխանեց Արագորնը: — Ինչ-որ զգացում քունս խանգարում է: Բե՛ր մի նայենք քո Ջարդողին:

— Ինչո՞ւ,— զարմացած հարցրեց նրան Ֆրոդոն: — Դու կարծում ես օրքերը գալի՞ս են:

— Բե՛ր նայենք,— կրկնեց Արագորնը:

Ֆրոդոն թուրը հանեց պատյանից: Շեղբի ծայրերը հազիվ նկատելի լույս էին տալիս:

— Օրքերը... — անհանգիստ քրթմնջաց հոբիթը: — Շատ մոտիկ չեն, բայց այնուամենայնիվ մոտ են:

— Բավական մոտ են,— հաստատեց Արագորնը: — Բայց կարող է պատահել, միայն Սաուրոնի լրտեսներն են, որոնք թափառում են արևելյան ափերին: Մինչև վերջին ժամանակներս, որքան ես գիտեմ, Ամոն-Վեդարի շրջակայքում օրքեր չեն հայտնվել: Ասենք, ինչ գոնդորցիները նահանջել են, գետամերձ հողերում շատ բան է փոխվել: Մեզ այժմ հարկավոր է մեծ զգուշությամբ շարժվել:

Լուսաբացը հեռավոր հրդեհի հրացոլք էր հիշեցնում: Սև ծխի քուլաներից արևելքում թանձր ամպեր էին կուտակվում, որոնք ներքևից լուսավորում էր աղոտ առկայծող արևը: Բայց շուտով արևը բարձրացավ ջինջ երկնակամար, ոսկեփայլ լույսով ողողելով Թոլ Բրանդիրի խիստ ուրվագծերը: Ֆրոդոն հետաքրքրությամբ դիտում էր կղզին: Ձառիկող ժայռերի պատով այն բարձրանում էր փայլփլուն ծփացող վտակից: Ժայռերի կատարներն ի վեր մագլցում էին կաղնու պուրակներ, իսկ գագաթը բացարձակապես մերկ էր ու լերկ: Կղզու վրա թռչուններ էին պտտվում, բայց Ֆրոդոն ոչ մի գազան կամ գոնե ժայռերի ծերպերում օձ չնկատեց: Նախաճաշից հետո Արագորնն ասաց ուղեկիցներին.

— Ժամանակը եկել է, բարեկամներ: Այսօր ստիպված ենք վերջապես որոշելու, թե ուր ենք թեքվելու՝ արևմո՞ւտք, Գոնդոր, որպեսզի բացեիբաց կռվենք Թշնամու հետ, թե՞ արևելք, սարսափի ու խավարի երկիր: Բայց և հնարավոր է, որ մենք պետք է բաժանվենք, որպեսզի յուրաքանչյուրս իր սեփական պարտքը կարողանա կատարել: Որոշում կայացնելը հետաձգել չի կարելի, որովհետև Անդուինից այն կողմ վխտում են օրքերը, եթե, իհարկե, դեռ չեն անցել այս ափը, և հապաղումը կարող է մեզ կործանել:

Արագորնը լռեց: Պահապաններից ոչ ոք լռությունը չխախտեց, ոչ ոք չշարժվեց: Այնժամ Արագորնը նորից խոսեց.

— Ըստ երևույթին, ընտրության բեռը քո ուսերին է ընկած, Ֆրոդո: Մենք Պահապաններ ենք կոչվում, որովհետև ուղեկցում ենք քեզ, բայց Մատանու ճակատագրի համար միայն դու ես պատասխանատու, քեզ է վստահել Իմաստունների Խորհուրդը, և մենք չէ, որ պետք է որոշենք, թե ուր գնաս դու: Ես իրավունք չունեմ գլխավոր Պահապանին խորհուրդ տալու, ես Գանդալֆը չեմ, չնայած ճանապարհին որքան կարողացա՝ փոխարինեցի նրան: Չգիտեմ, նա ինչ կորոշեր Թոլ Բրանդիրից հետո: Ի դեպ, Գանդալֆն էլ, իմ կարծիքով, քեզ կթողներ վճիռը: Այո, Ֆրոդո, քո խոսքը գլխավորն է ու վերջնականը:

— Ես գիտեմ, որ պետք է շտապել,— դանդաղ և բոլորովին էլ ոչ միանգամից խոսեց Ֆրոդոն: — Բայց դա շատ ծանր բեռ է՝ վերջնական ընտրությունը: Մեկ ժամ տվեք մտածելու համար, Արագորն, և վերադառնալով, իմ խոսքը կասեմ:

— Ինչ արած, մտածիր միայնության մեջ, Ֆրոդո, որդի Դրոգոյի,— համաձայնեց Արագորնը, բարի ու ցավակցող հայացքով նայելով հոբիթին: — Մեկ ժամ կսպասենք քեզ այստեղ: Միայն հեռու չգնաս:

Արդեն ինչքան ժամանակ է Ֆրոդոն անշարժ, գլխիկոր նստած էր Տիրոջը ուշադիր հետևող Սամը քթի տակ մրթմրթում էր.

— Դե ինձ ի՞նչ կա, ես կլռեմ: մենակ թե էստեղ մտածելու ինչ կա, երբ առանց այդ էլ ամեն ինչ պարզ է:

Ասես ի պատասխան Սամի փնթփնթոցի, Ֆրոդոն վեր կացավ ու գնաց: Նրա թիկունքին չնայելու համար Պահապանները շրջվեցին: Սակայն Բորոմիրը, ինչպես նկատեց Սամը, անքթիթ հետևում էր նրան, մինչև Ակնի լանջի ծառերը ծածկեցին Ֆրոդոյին:

Անտառում աննպատակ թափառելով, Ֆրոդոն պատահաբար դուրս եկավ մի լքված ճանապարհ: Այն տանում էր դեպի սարի գագաթը: Ձառիվեր վերելքի վրա երևում էին կիսաքանդված, շատ տեղերում ծառերի արմատներով ճեղքված քարե աստիճաններ: Ֆրոդոն մեքենայորեն բարձրացավ վերև և շուտով հայտնվեց երեք կողմից մերկ արոսենիներով շրջապատված փոքրիկ մարգագետնում: Մարգագետնի կենտրոնում մի տափակ մոխրագույն գլաքար էր ընկած. ասես թե իրարից հեռանալով, որպեսզի առավոտյան արևը չծածկեն, ծառերն արևելքում բացում էին Թոլ Բրանդիրը և նրա գագաթի շուրջը պտտվող թռչուններին: Հեռվում ահարկու մռնչում էր Ռերոսը:

Ֆրոդոն նստեց քարին և կզակը ափերին դրած՝ խոր մտքերի մեջ ընկած անշարժացավ: Մտովի նրա հայացքի առջևով սրընթաց անցան Պարկուտից Բիլբոյի գնալուց հետո տեղի ունեցած իրադարձությունները: նա հիշեց Գանդալֆի պատմությունները, արշավի սկիզբը, Խուրհուրդն Էլրոնդի մոտ: Բայց որոշումը փախչում էր, մտքերը ցրվում էին...

Հանկարծ նա իրար անցավ. ինչ որ մեկի հայացքը թիկունքը ծակում էր, ճնշում նրա խոհերը: Նա հապշտապ վեր թռավ, հետ նայեց և թեթևացած շնչեց, տեսնելով Բորոմիրին: Գոնդորցու դեմքին լարված, բայց բարի ժպիտ էր սառած:

— Ես անհանգստանում էի քեզ համար, Ֆրոդո,— ասաց նա,— եթե Արագորնն իրավացի է, և օրքերը մոտ են, ապա մենակ անտառում շրջելը շատ վտանգավոր է: Հատկապես քեզ համար, ախր դու նրանց համար իսկապես անգին ավար ես: Ինձ դառը խոհեր են պատում: Դե որ քեզ գտել եմ, թույլ տուր նստեմ կողքդ: Երբ բոլորս միասին հավաքվում ենք, ամեն մի բառը անվերջանալի վեճեր է առաջացնում: Իսկ այստեղ, երկուսիս գուցե հաջողվի որևէ իմաստուն վճիռ կայացնել:

— Շնորհակալ եմ, Բորոմիր,— պատասխանեց Ֆրոդոն: — Մենակ թե հազիվ կարողանաս ինձ օգնել, որովհետև ես գիտեմ, թե ինչպես պետք է վարվեմ ու վախենում եմ: Ուղղակի վախենում եմ, Բորոմիր:

Ֆրոդոն լռեց: Ռերոսի հավասարաչափ թնդյունի միջից լսվում էր քամու սուլոցը մերկ ծառերի ճյուղերի մեջ: Բորոմիրը մոտեցավ հոբիթին և նստեց կողքը, նրա քարի վրա:

— Իսկ դու համոզվա՞ծ ես, որ չարչարանքդ իզուր չի անցնի,— մեղմ հարցրեց նա: — Ինչո՞ւ նախապես հրաժարվել ամեն տեսակ օգնությունից... Ես տեսնում եմ, որ քեզ խորհուրդ պետք է: Լսիր ինձ, Ֆրոդո...

— Հենց բանն էլ այդ է, որ ես կռահում եմ, թե ինչ խորհուրդ ես ինձ տալու, Բորոմիր,— ասաց Ֆրոդոն: — Այն իմաստուն է թվում... Բայց սիրտս ինձ նախազգուշացնում է:

— Նախազգուշացնո՞ւմ է... Ինչի՞ց,— կտրուկ հարցրեց Բորոմիրը:

— Հետաձգումից,— պատասխանեց Ֆրոդոն: — Հեշտ ճանապարհից: Ծանր բեռը թոթափելու ցանկությունից: Եվ էլի... Ինչպե՞ս դա արտահայտել... Այո, մարդկանց ուժի և հուսալիության նկատմամբ կույր հավատից:

— Այդ ուժը հուսալիորեն պահպանում է ձեզ մեծամեծ արհավիրքներից... — բացականչեց Բորոմիրը:

— Ես գոնդորցիների քաջությանը դույզն իսկ չեմ կասկածում,— ասաց Ֆրոդոն: — Բայց աշխարհն այժմ արագ է փոխվում: Մինաս Թիրիթի պատերն ամուր են, գիտեմ: Բայց եթե հանկարծ պարզվի, որ այնքան էլ ամուր չեն, հետո ի՞նչ կլինի...

— Ռազմիկներին վայել կդիմավորենք մահը,— պատասխանեց Բորոմիրը,— բայց չէ որ դեռ հույս կա, որ թշնամական զորքը ատամները կփշրի մեր բերդի պարսպին:

— Այդպիսի հույս չկա, քանի դեռ գոյություն ունի Մատանին,— կտրեց Ֆրոդոն:

— Մատանին,— կրկնեց Բորոմիրն ու նրա աչքերը բռնկվեցին: — Տարօրինակ չէ՞ արդյոք, որ բոլորիս այդքան տագնապ է պատճառում այդ փոքրիկ դատարկ բանը՝ ոսկե մատանին: Հապա մի ցույց տուր ինձ, ի՞նչ տեսք ունի, թե չէ ես Էլրոնդի Խորհրդի ժամանակ լավ չնայեցի:

Գլուխը բարձրացնելով, Ֆրոդոն Բորոմիրի աչքերում տարօրինակ կայծ տեսավ: Եվ չնայած գոնդորցու դեմքն առաջվա պես բարեկամական էր, հոբիթը սառն օտարացում զգաց:

— Ավելի լավ է չհանեմ,— կարճ ասաց նա:

— Որ լավ է, թող լավ լինի,— իսկույն նահանջեց Բորոմիրը,— դու գիտես: Բայց խոսել դրա մասին, հուսով եմ, կարելի՞ է: Ահա դուք միշտ խոսում եք Թշնամու ձեռքում նրա ահռելի հզորության մասին. իբր աշխարհը այժմ փոխվում է, և եթե Մատանին չոչնչացվի, Մինաս Թիրիթը, իսկ հետո էլ Միջերկիրը կչքանա Խավարի Վարագույրի տակ: Հնարավոր է, որ այդպես էլ պատահի, ես չեմ վիճում, եթե Մատանին ընկնի Թշնամու ձեռքը: Իսկ եթե մնա մեզ մո՞տ...

— Էլրոնդը նախազգուշացրեց Խորհրդի ժամանակ, որ Մատանին կարող է միայն Չարին ծառայել,— գոնդորցուն հիշեցրեց Ֆրոդոն:

— Ուրիշի ձայնով մի երգիր,— գոռաց Բորոմիրը: Նա վեր կացավ ու անհանգիստ սկսեց քայլել մարգագետնում: — Իսկ, իմիջիայլոց, գուցեև նրանք իրավացի են՝ Գանդալֆը, Էլրոնդը, բոլոր այդ էլֆերն ու հրաշագործները, իրենք իրենց համար: Գուցե նրանք իսկապես չարագործ դառնան, եթե Մատանին նրանց ձեռքն ընկնի: Չնայած ես մինչև հիմա մի կարգին չգիտեմ, նրանք իսկապե՞ս իմաստուն են, թե պարզապես երկչոտ են... Բայց մեզ, Մինաս Թիրիթի մարդկանց, որոնք արդեն բազում տարիներ Միջերկիրը պաշտպանում են Սև Տիրակալից, չարագործ չես դարձնի... Մեզ պետք չէ տիրել աշխարհին և հրաշքներ գործել: Մենք ցանկանում ենք ջախջախել համընդհանուր թշնամուն, որպեսզի պահպանենք մեր ազատությունը: Բայց նկատի ունեցիր, ինչ զարմանալի զուգադիպություն. հիմա, երբ մեր ուժերը սպառվելու մոտ են, նորից գտնվեց Մեծ Մատանին: Ճակատագրի նվեր է, ուրիշ կերպ չի լինի... Միայն վճռականությունն ու անվախությունն են հասցնում հաղթանակի: Արդարացի մարտում հաղթելու համար խիզախ մարտիկը պետք է ամեն ինչի պատրաստ լինի: Ինչ ասես չի անի մարտիկը հաղթանակի համար, իսկական մարտիկը... Արագորնը ի՞նչ չի անի: Իսկ եթե նա հրաժարվի, մի՞թե Բորոմիրը կտատանվի պայքարում... Համիշխանության Մատանին ինձ մեծամեծ հզորություն կհաղորդի: Իմ դրոշի տակ կհավաքվեն բոլոր ազատ հողերի քաջ դյուցազունները, և մենք առավել հիմնովին կջախջախենք Թշնամու զորագնդերը...

Թվում է, Բորոմիրը մոռացել էր Ֆրոդոյի մասին: Նա մարգագետնում գրգռված ետուառաջ էր քայլում, դատողություններ անելով Մինաս Թիրիթի հարձակվողական մարտերի, մարդկանց հզոր դաշնակցությունների և գալիք հաղթանակների մասին: Նրա ձայնը գնալով ավելի ու ավելի բարձր էր հնչում, իսկ Թշնամուն վերջնականապես հաղթելու ինքնավստահությունը սրընթաց աճում էր: Եվ ահա արդեն Թշնամու զորքը խառնիխուռն գլորվեց Մորդոր, վերջին թշնամիներին անխնա ջարդեցին Սև Բերդի պատերի տակ, իսկ ինքը՝ Բորոմիրը դարձավ մեծ, արդարամիտ ու իմաստուն թագավոր...

Հանկարծ գոնդորցին քարացավ գլխիկոր նստած հոբիթի առջև:

— Իսկ նրանք անպայման ուզում են զրկվել Մատանուց... — գոռաց նա,— հենց զրկվել, այլ ոչ թե ոչնչացնել, որովհետև եթե փոքրիկ կոլոտիկը կուրորեն ընկնի Մորդոր, ապա Թշնամին անխուսափելիորեն կտիրանա նրա գանձին...

Բորոմիրը վերևից ներքև նայեց Ֆրոդոյին:

— Հուսով եմ, ինքդ է՞լ ես հասկանում այդ, բարեկամս,— հարցրեց նա: — Ասացիր, որ վախենում ես: Բայց քո մեջ ոչ թե վախն է խոսում, այլ առողջ դատողությունը:

— Ոչ, ոչ, ես պարզապես վախենում եմ,— առարկեց Ֆրոդոն: — Ուղղակի սարսափելի է, Բորոմիր: Եվ այնուամենայնիվ ուրախ եմ, որ արտահայտվեցիր: Հիմա ես չեմ տարակուսում:

— Վաղուց էր պետք,— բացականչեց գոնդորցին:

— Դու ինձ չհասկացար, Բորոմիր,— ասաց Ֆրոդոն: — Ես չեմ գա Մինաս Թիրիթ:

— Բայց դու անպայման պետք է անցնես մեզ մոտ, թեկուզ կարճ ժամանակով,— շարունակում էր պնդել Բորոմիրը,— Մինաս Թիրիթն արդեն մոտ է, և Ժայռոտից Մորդոր ավելի շուտ չես հասնի մեր ամրոցից: Մեզ մոտ Թշնամու մասին վերջին նորությունները կիմանաս: Գնանք, Ֆրոդո,— ասաց Բորոմիրը, ձեռքն ընկերաբար նրա ուսին դնելով: Բայց գոնդորցու թաքնված գրգռվածությունը մատնում էր դողդողացող ձեռքը:

Ֆրոդոն վեր կացավ և, անհանգստությամբ Բորոմիրին նայելով ընկրկեց՝ մարդը հոբիթից հասակով երկու անգամ բարձր էր ու շատ ավելի ուժեղ:

— Մի՞թե դու ինձնից վախենում ես,— հարցրեց Բորոմիրը: — Մի՞թե ես դավաճանի կամ ավազակի եմ նման: Այո, քո Մատանին ինձ հարկավոր է, այժմ դու գիտես դա: Բայց երդվում եմ գոնդորցու պատվով, ես այն կվերադարձնեմ քեզ հաղթանակից հետո: Անմիջապես կտամ:

— Ոչ... — վախեցած ճչաց Ֆրոդոն: — Ես այն չեմ կարող վստահել ուրիշներին: Չեմ կարող:

— Հիմա՛ր,— մռնչաց Բորոմիրը: — Համա՛ռ հիմար: Դու կկործանվես սեփական հիմարությանդ պատճառով ու բոլորիս էլ կկործանես: Եթե մահկանացուներից որևէ մեկը կարող է հավակնություն ունենալ Մեծ Մատանու նկատմամբ, ապա, իհարկե, ոչ դուք, կոլոտիկներդ, այլ Նումենորի մարդիկ, և միայն նրանք... Անհեթեթ պատահականությունն է Մատանին քո ձեռքը տվել: Այն կարող էր իմը լինել: Այն պետք է իմը լինի... Տո՛ւր ինձ...

Ֆրոդոն առանց պատասխանելու հետ-հետ գնաց, որպեսզի իր քարով անջրպետվի խոշորամարմին գոնդորցուց:

— Իզուր ես վախենում,— քիչ ավելի հանգիստ ասաց Բորոմիրը: — Ինչո՞ւ Մատանուց չազատվես: Իսկ միաժամանակ և քո բոլոր վախերից ու կասկածներից: Հետո կհայտարարես, որ ես ուժով եմ խլել, որ ես առավել ուժեղ եմ քեզանից: Քանի որ ես իրոք ուժեղ եմ քեզնից, կոլոտիկ... — Գոնդորցին թռավ քարի վրայից ու նետվեց դեպի Ֆրոդոն: Նրա գեղեցիկ, առնական դեմքը զզվելիորեն աղավաղվեց, աչքերում ծածանվեց ագահության կրակը:

Խուսափելով, Ֆրոդոն նորից թաքնվեց քարի հետևը, և, դողացող ձեռքով Մատանին հանելով, հագավ այն, որովհետև Բորոմիրը նորից էր նետվում դեպի նա: Ապշահար գոնդորցին մի պահ քարացավ, իսկ հետո սկսեց դեսուդեն ընկնել մարգագետնում, փորձելով գտնել անհետացած հոբիթին:

— Ողորմելի ձեռնածու,— կատաղի գոռաց նա: — Այժմ ես գիտեմ, թե քո մտքում ինչ կա: Դու ուզում ես Մատանին տալ Սաուրոնին և պատեհ պահ ես փնտրում փախչելու համար, որպեսզի բոլորիս մատնես... Սպասիր, դե թող միայն ձեռքս հասնի քեզ... Անիծված լինես, Թշնամու վիժվածք, անիծված լինես առհավետ մթության ու մահվան խավարի... — Կույր մոլեգնության մեջ գոնդորցի քարի կպավ, սայթաքեց, տապալվեց գետնին ու մեռածի պես անշարժացավ, ասես նրան իր սեփական անեծքը դիպավ, իսկ հետո հանկարծ սկսեց անզոր հեծկլտալ:

Քամին ուժեղացավ. թախծալի սուլոցը գոնդորցուն ուշքի բերեց: Նա դանդաղ վեր կացավ, աչքերը սրբեց ու քրթմնջաց.

— Ես ի՞նչ էի դուրս տալիս... Ինչե՞ր եմ արել... Ֆրոդո՛... Ֆրոդո՛... — սարսափահար գոռաց նա: — Ֆրոդո՛, վերադարձիր... Միտքս մթագնել էր, բայց անցավ... Ֆրոդո...

Սակայն Ֆրոդոն արդեն հեռու էր. չլսելով Բորոմիրի վերջին ճիչերը, առանց ճանապարհ տեսնելու նա վազում էր դեպի վեր: Ափսոսանքն ու սարսափը տանջում էին հոբիթին, երբ հիշում էր գազանացած գոնդորցու աղավաղված դեմքն ու վառվող աչքերը, որտեղ փայլում էր խելացնոր ընչաքաղցությունը:

Շուտով նա հասավ սարի գագաթը, շունչ քաշեց ու գլուխը բարձրացրեց: Ասես մշուշում նրա առջև բացվեց սալարկված մի շրջանաձև հարթակ, որ եզերված էր ջարդված քարերի պատով: Պատից այն կողմ չորս սյուների վրա հենված տաղավար կար և սանդուղք, որ տանում էր դեպի տաղավար: Հոբիթը հասկացավ, որ դա Ամոն-Վեդարն է, կամ համընդհանուր լեզվով Ակն, նումենորցիների պահակակետ-դիտակետը: Նա աստիճաններով բարձրացավ, մտավ տաղավար, նստեց հսկիչ-բազկաթոռում ու սկսեց նայել շուրջը:

Սկզբում ոչինչ չէր երևում, բացի ուրվականային մշուշապատ ստվերներից, չէ՞ որ նրա մատին Թշնամու Մատանին էր: Իսկ հետո հանկարծ ստվերները որոշակիություն ստացան և դարձան անպարփակ աշխարհի պատկերներ, ասես հոբիթը որպես թռչուն երկինք էր հառնել: Արևելք էին ձգվում անծանոթ, անանուն թավուտներով եզերված հարթավայրեր, որոնց հետևում բարձրանում էին անանուն լեռներ: Հյուսիսում փայլփլում էր Անդուինի ժապավենը և ձախից գետին էր մոտենում ձյունապատ ժայռերի առկայծող ժանիքներով Մշուշապատը, արևմուտքում կանաչին էին տալիս Մուստանգրիմի արոտավայրերն ու համեստորեն սևին էր տալիս Օրթհանքի աշտարակը, որտեղից Գանդալֆին փախցրել էր Քամիխեղդը: Ծիածանի տակով բոլոնի հարթավայր գահավիժող Ցիցքարի փրփրադեզ վտակներից հարավ Անդուինը սուրում էր դեպի Իթիլյան ճահճուտ և այնտեղ, բազմաթիվ հոսանքների բաժանվելով, թափվում մոխրա-արծաթագույն Ծովը, որի վրա արևի փոշու նման բյուրավոր թռչուններ էին պտտվում:

Ծաղկող Միջերկրում, սակայն, խաղաղություն չկար: Մշուշապատի վրա մրջյունների նման վխտում էին օրքերը: Արևելյան Չարքանտառի կապույտ եղևնիների տակ կռվում էին մարդիկ, էլֆերն ու գազանները: Լորիենի սահմանները ծխով էին պատված: Մորիայի վրա սև ամպեր էին կուտակվել, Բրանդի հողերում հրդեհի բոցեր էին բարձրանում: Զինված հեծյալները ձիերը մտրակելով սուրում էին Մուստանգրիմի լայնարձակ հարթավայրերում: Իզենգարդը պահպանում էին գայլդարձյակների ոհմակները: Վաստակներն ու հորոդրիմցիները շարժվում էին արևմուտք. նետաձիգներ, թրակիրներ, հեծյալ նիզակակիրներ, հարյուրակայիններ ու հազարյակայիններ՝ թեթև երկանիվ այլակներով, պաշարներով բեռնված սայլեր, դատարկ սայլեր թալանված բարիքների համար. այս բոլորը Թշնամու զորքի անչափելի ուժն է:

Ֆրոդոն նորից նայեց հարավ: Անդուինից արևմուտք, Սպիտակ լեռներում հպարտորեն վեր էր խոյանում սպիտակ քարից անմատչելի պարսպով հզոր բերդը՝ Մինաս Թիրիթը, գոնդորցիների ապավենը: Եվ հոբիթի սրտում հույս ծագեց: Սակայն Անդուինից հարավ, Անձոխալեռների մոտ, նախալեռնային սև սարահարթի վրա բարձրանում էր վիթխարի սև ամրոց՝ գիշատիչ, բազմամարդ, ահազազուր: Ֆրոդոն ակամա նայեց արևելք: Անձոխալեռներից այն կողմ Գորգորոթի հովտում նույնիսկ պայծառ արևի տակ սևին էր տալիս Ճակատագրի Լեռան բոսոր ծխի քուլաներով պարուրված մենավոր զանգվածը: Հոբիթի հայացքը սահեց քիչ հեռուն: Եվ ահա մյուս տեսարանները փակեց ամրաշեն դղյակը: Ֆրոդոն ուզում էր շրջվել ու չկարողացավ: սանդղաձև ժայռի վրա, անթիվ պատերից ներս, գետնամած դիտաշտարակներով շրջապատված, որոնք սանդղակ առ սանդղակ վեր էին բարձրանում, սև սարդի նման սառել էր Բարադ-Դուրը՝ Խավարի ամրոցը, Սաուրոնի որջը: Եվ խավարը մարեց հոբիթի հույսը:

Իսկ հետո նա զգաց **Աչքը**:

Աչքը լարված փնտրում էր Պահապանին, որը համարձակվել էր Մատանին հագնել: Որպես կառչուն մատ, նա խուզարկում էր Միջերկիրը: Ֆրոդոն զգում էր, որ Աչքից չի թաքնվի: Ահա նա արդեն Ունկն է շոշափում: Ահա սահում է Ժայռոտի ձորերով... Ֆրոդոն թռավ հսկիչ-բազկաթոռից, ընկավ, կծկվեց տաղավարի հատակին, աչքերը ծածկեց լորիենյան կնգուղով...

Նա անձայն շշնջում էր. «*Չեմ տա... Չեմ հանձնվի*», իսկ տաղավարում հնչում էր. «*Կտամ... Կհանձնվեմ...*»: Խուլ արձագանքը Ակնի վրա տարածում էր անզորության այդ սորուն երդումը: Իսկ հետո նրա գլխում հնչեց. *հանիր, այ հիմար, Մատանին հանիր...* — և շուրջը լռություն լցվեց:

Փոքրիկ Պահապանի մեջ երկու հզոր ուժ էին հակամարտում: Մի ակնթարթ դրանք հավասարակշռվեցին, և նա գիտակցությունը կորցրեց: Իսկ երբ ուշքի եկավ, ապա զգաց, որ ո՛չ Աչք, ո՛չ ձայն այլևս չկան: Նա նորից ազատ կամքի տեր էր: Նա Մատանին հանեց մատից և հենց ճիշտ ժամանակին: Տաղավարի վրայով մութ ստվեր անցավ, որը գերեզմանային սառնություն շնչեց, և նորից արևը փայլեց: Երկնքում իրար էին ձայնում թռչունները:

Ֆրոդոն կամաց-կամաց ոտքի կանգնեց: Նա թուլություն էր զգում ինչպես հիվանդությունից հետո, բայց նրա կամքը վերջնականապես ամրացավ:

— Ես պետք է մենակ գնամ,— ասաց նա: — Որովհետև Մատանու մութ ուժն արդեն գործում է մեր Ջոկատում: Այո, ինձ հարկավոր է մենակ գնալ: Այժմ ես բոլորին հավատալ չեմ կարող, իսկ նրանց ովքեր ինձ երբեք չեն դավաճանի՝ բարի Սամը կամ Մերին ու Փինը, ես շատ եմ սիրում, որպեսզի քարշ տամ Մորդոր: Պանդուխտը մեծ ձգտում ունի գոնդորցիներին օգնելու, և այժմ նրանց կրկնակի է հարկավոր, քանի որ Բորոմիրը վարակված է չարագործությամբ: Հարկավոր է գնալ մենակ: Անհապաղ:

Նա ներքև վազեց, այն մարգագետինը, որտեղ նրան գտավ Բորոմիրը: Տագնապալի ճիչեր էին հասնում նրան:

— Ինձ են փնտրում,— բարձրաձայն ասաց նա: — Հետաքրքիր է, որքան ժամանակ է անցել... Երևի մի քանի ժամից ոչ պակաս: — Նրան թվաց, որ ճիչերը մոտենում են: — Ի՞նչ անել,— քրթմնջաց նա ցածրաձայն և հաստատ ասաց. — Մեկնել, իսկույն: Այլապես երբեք չեմ գնա: Եվ հրաժեշտ տալ էլ չի կարելի: Նրանք ինձ, միևնույնն է, չեն թողնի... Ուրեմն հարկավոր է հեռանալ առանց հրաժեշտ տալու:

Եվ Ֆրոդոն Մատանին հագավ:

Այնտեղ, որտեղ հենց նոր կանգնած էր հոբիթը, դանդաղ բարձրանում էր տրորված խոտը: Իսկ լանջն ի վար լսվում էր գարնանային քամու սոսափի պես թեթև շրշյուն:

Մնացած Պահապանները խմբված նստել էին ափին: Եվ չնայած նրանցից յուրաքանչյուրն իրեն խոսք էր տվել հանգիստ սպասել, խոսակցությունը մշտապես վերադառնում էր Ֆրոդոյի վճռին:

— Այո, ծանր ընտրություն է սպասում նրան,— հառաչելով ասաց Արագորնը: — Արևելքի ճանապարհը օրքերի պատճառով մահացու վտանգավոր է, որովհետև Թշնամուն կմատնեն որտեղ ենք թաքնվել, և Մութ Ուժերի ճնշման տակ Մինաս Թիրիթը վաղ թե ուշ կընկնի: Նույնիսկ Էլրոնդն ընդունեց, որ Թշնամու զորքին ի վիճակի չէ դիմադրել: Ի՞նչ անել... Վախենում եմ, որ միայն Գանդալֆը կարող էր այս կործանարար հանելուկը լուծել: Բայց Գանդալֆը չկա...

— Ուրեմն, ստիպված ենք մենք լուծել,— Արագորնի փոխարեն շարունակեց Լեգոլասը: — Մենք պետք է օգնենք Ֆրոդոյին: Եկեք կանչենք նրան ու քվեարկենք, թե ուր գնանք: Ինձ թվում է, քանի արևելյան ճանապարհը փակ է, հարկավոր է հասնել Գոնդոր և մի քիչ սպասել:

— Ինձ էլ է այդպես թվում,— Էլֆի հետ համաձայնեց Ջիմլին: — Բայց եթե Ֆրոդոն այնուամենայնիվ որոշի թեքվել արևելք, ես կգնամ նրա հետ:

— Ես էլ կգնամ,— արձագանքեց Լեգոլասը: — Հիմա նրան մենակ թողնելը դավաճանություն կլիներ:

— Դե մեր մեջ, իմ կարծիքով, դավաճաններ չկան,— ասաց Արագորնը: — Սակայն եթե Ֆրոդոն ուղևորվի Մորդոր, նրան չեն օգնի ոչ յոթ, ոչ յոթանասունյոթ ուղեկիցները... այլ նույնիսկ հնարավոր է, որ խանգարեն, մեծ ջոկատը հայտնաբերելը հեշտ է: Այնպես որ ես ընդամենը երեքին կառաջարկեի՝ Սամին (նա երբևէ կզատվի՞ իր տիրոջից), ինձ և Ջիմլիին:

— Իսկ մե՞նք,— վրդովված բացականչեց Մերին: — Ես ու Փինը դեռ տանը հաստատ որոշել էինք չբաժանվել Ֆրոդոյից... Եվ կգնանք... Միայն թե դա զարհուրելի է՝ թույլ տալ նրան... ուղիղ Թշնամու երախը... Մենք պետք է նրան հետ պահենք...

— Իհարկե՛, պետք է... — բարեկամի խոսքը հաստատեց Փինը: — Բայց իմաստ ունի՞ արդյոք հիմա խցկվել այնտեղ... Այ նա էլ չի կարողանում վճռել... հասկանում է, որ մենք նրան մենակ չենք թողնի գնա, իսկ խնդրել, որ իր հետ Մորդոր գնանք՝ չի ուզում... Իհարկե, կարող էր և

կռահել, որ մենք առանց որևէ խնդրանքի ինքներս կգնանք, եթե չկարողանանք նրան հետ պահել:

— Է՜հ, դուք տիրոջը չգիտեք,— միջամտեց Սամը: — Էդ նա՞ չի կարող վճռել... Թե չէ Լորիենում արդեն չէր վճռել... Դե դուք ասեք, նրա ինչի՞ն է պետք այդ Մինաս Թիրիթը... Դե դու չնեղանաս,— աչքերով գոնդորցուն փնտրելով, ավելացրեց Սամը: Եվ հանկարծ անհանգստացած բացականչեց. — Իսկ Բորոմիրն ո՞ւր է... Նա ախր երեկվանից ինքն իրենը չի... Ասենք, դե լավ, նրա տունը քթի տակ է, նրա հոգսը մենք չենք... Իսկ տերը, նա վաղուց է վճռել, որ կգնա Մորդոր: Վճռելը՝ վճռել էր, բայց մեկ-մեկ վախենում էր: Դե հիմա էլ, պարզ բան է, վախենում է: նա, իհարկե, շատ բաներ տեսավ, ինչ Պարկուտից դուրս եկավ՝ քանի որ երիցս անիծված Մատանին չգցեց գետն ու չփախավ, ուր աչքը կտրում էր... Դե, այնուամենայնիվ, վախը նրան կրծում է: Դե էստեղ ո՜վ չի վախենա, կուզեք իմանալ... Իսկ մեր բոլորի մասին նա հասկանում է, որ իրեն չենք լքի, հենց էդ էլ գլխավոր խանգարիչն է: Որովհետև նրա վճիռը մենակ գնալն է եղել: Այ հիմա նա կվերադառնա ու մեզ դեռ ցավի մեջ կգցի, հիշեք իմ խոսքերը, նա ոչ ոքի Մորդոր տանել չի ուզենա...

— Երևակայեք, Սամն իրավացի է,— մտախոհ ասաց Արագորնը: — Ուրեմն ի՞նչ ենք անելու...

— Չթողնել նրան... Ոչ մի դեպքում չթողնել,— գոռաց Փինը:

— Մենք դրա իրավունքը չունենք,— առարկեց Արագորնը: Նա գլխավոր Պահապանն է ու մենակ է պատասխանում Մատանու ճակատագրի համար: Մենք չպետք է մեր կամքը թելադրենք նրան: Չպետք է և չենք էլ կարող. չափազանց ահարկու ուժեր են ներքաշված Մեծ Մատանու համար մղվող պայքարի մեջ:

— Այդ դեպքում թող շուտ վերադառնա ու ինչ լինելու է՝ թող լինի,— աղերսագին ասաց Փինը: — Այսպիսի սպասումից կարելի է գժվել: Երևի վաղուց ժամն անցել է...

— Վաղուց նրա վերադառնալու ժամանակն է,— հաստատեց Արագորնը:

Պահապանները վեր կացան և այդ պահին ծառերի հետևից դուրս եկավ Բորոմիրը՝ շփոթված ու խոժոռ: Նա կանգ առավ, ասես իր ուղեկիցներին հաշվելով, և նրանցից քիչ հեռու նստեց խոտերին:

— Որտե՞ղ էիր, Բորոմիր,— նրան հարցրեց Արագորնը: — Ֆրոդոն քեզ չի՞ հանդիպել:

— Հանդիպել է,— քիչ հապաղելով պատասխանեց գոնդորցին: — Հետո չքացավ... Ես նրան համոզում էի գնալ Մինաս Թիրիթ... և տաքացա... Ու նա անհետացավ: Երևի հագավ Մատանին: Անհետացավ, կարծես գետնի տակն անցավ: Չհաջողվեց գտնել: Կարծում էի, արդեն վերադարձել է:

— Ուրիշ ասելիք չունե՞ս,— մռայլ ու խոժոռվելով, գոնդորցուն հարցրեց Արագորնը:

— Այժմ՝ ոչինչ,— ճիգով խոսեց Բորոմիրը:

— Էդ ո՞նց կլինի,— վախեցած հարցրեց Սամը,— ախր հագնել չի կարելի... Մենակ Թշնամին գիտի, թե դրանից ինչ փորձանքներ կգան...

— Դե նա երևի անմիջապես էլ հանել է,— մտածելով, ասաց Մերին: — Բիլբոյի նման, երբ նա ուզում էր անկոչ հյուրերից ազատվել:

— Իսկ գոնե ո՞ւր գնաց,— հուզված ճչաց Փինը: — Քանի ժամ է նա չկա, որտե՞ղ է...

— Ե՞րբ ես նրան տեսել, Բորոմիր,— հարցրեց Արագորնը:

— Կես ժամ, գուցեև ժամ առաջ,— անվստահ ասաց գոնդորցին: — Նա անհետացավ... Ես երկար փնտրում էի: Ես չգիտեմ, չգիտեմ... — Բորոմիրը գլուխն առավ ձեռքերի մեջ ու լռեց:

— Ամբողջ մի ժամ,— տնքաց Սամը: — Շուտ, գնացինք... Հարկավոր է գտնել նրան... — Սամը անտառ նետվեց:

— Սպասի՜ր,— տագնապահար հոբիթին ձայն տվեց Արագորնը: — Մենակ չի կարելի, հարկավոր է զույգերի բաժանվել...

Բայց նրան ոչ ոք չէր լսում: Սամն արդեն վազքով մտնում էր անտառ, Մերին ու Փինը սուրում էին գետի երկայնքով... Ֆրոդո՜... Ֆրոդո՜... կանչում էին նրանք, և դմբդմբան աձագանքը սփռում էր նրանց զրնգուն ձայները: Լեգոլասն ու Ջիմլին նույնպես մտան անտառ:

Արագորնը վազեց Սամի հետևից, բայց կանգ առավ ու գոռաց Բորոմիրին.

— Ուշքի եկ... Հիմա ժամանակը չէ վերլուծելու, թե ինչ ես ասել Ֆրոդոյին: Վազիր Փինի և Մերիի հետևից: Պահպանիր նրանց, և, եթե Ֆրոդոն չգտնվի, վերադարձիր այստեղ: Ես էլ շուտով կվերադառնամ:

Բորոմիրը վազեց գետի երկայնքով, Արագորնը՝ սարալանջն ի վեր: Երեք կողմից լեռնային արոսենիներով եզերված մարգագետնի մոտ նա հասավ Սամին:

Ծանր փնչալով հոբիթը դիտում էր Թոլ Բրանդիրը, ասես Ֆրոդոն կարող էր թևերը թափահարելով թռչել այնտեղ:

— Միասին գնանք,— նրան ասաց Արագորնը: — Այստեղ ոչ ոք մենակ չպետք է թափառի: Մեկ էլ տեսար մի փորձանք պատահեց: Սրտիցս տալիս է, արագ... Մենք կբարձրանանք Ամոն-Վեդար և կնայենք, թե շուրջն ինչ է կատարվում: Իմ կարծիքով, Ֆրոդոն հենց այնտեղ է գնացել: Այնպես որ ետ չընկնես, ուշադիր նայիր չորս կողմդ: — Արագորնը արագ բարձրացավ դեպի դիտակետ-պահակակետը:

Սամը չէր կարողանում հասնել հետքագետի հետևից: Նրան աչքից կորցնելով, կանգ առավ:

— Չես կարողանում ոնց որ պետքն է ոտքերով աշխատել՝ գլխով աշխատիր,— ինքն իրեն խորհուրդ տվեց Սամը: — Գոնդորցին խաբելու սովորություն չունի: Բայց թե կարծես ամեն ինչ չպատմեց: Ինչ-որ մի բան վախեցրել է տիրոջը, ու նա հանկարծ գլուխն է մտցրել՝ հեռանալ: Իսկ ո՞ւր: Պարզ բան է՝ արևելք: Առանց Սամի՞: Հենց այդպես է դուրս գալիս էլի, առանց Սամի (հոբիթի աչքերը լցվեցին արտասուքով): Իսկ դու մի լա, այլ մտածիր... — խթանեց ինքն իրեն: — Տերը թռչել առայժմ չի կարողանում: Իսկ արևելքը գետի մյուս կողմում է:

Ափին մակույկներն են: Դե՛, Սա՛մ, քեզ տեսնեմ, երկու ոտք էլ փոխ առ ու թռի ափ, գուցե հասնես...

Հոբիթը լռեց ու ցած սուրաց: Ընկավ, արյունոտելու աստիճան ծնկները քերծեց, շտապով վեր թռավ ու վազեց առաջ: Ահա և ափը: Սամը շուրջը նայեց: Եվ մի ակնթարթ աչքերը չռած քարացավ: Ափից դանդաղ դեպի ջուրն էր սահում մի մակույկ: Դատարկ:

Եվ շուրջն էլ ոչ ոք չկար: Ճչալով, հոբիթը նետվեց գետը: Դատարկ մակույկը մտավ ջուրը:

— Ե՛ս էլ,— հուսահատ գոռաց Սամը: — Ե՛ս էլ... Ու թափով վազելով, չրմփաց Անդուինը: մակույկն արդեն ափից հեռացել էր: Սամին իր մեջ առավ հզոր հոսանքը, և նա իսկույն ջրի տակ անցավ:

Դատարկ մակույկից հայհոյանք լսվեց: Հետո աշխուժորեն աշխատեցին թիերը՝ իրենք-իրենց, մակույկը շրջվեց ու լողաց դեպի այնտեղ, ուր սուզվեց Սամը:

Սամի գլուխը երևաց ջրի վրա: Նրա լայն բացված աչքերում սարսափն էր սառել: Նա ջղաձգորեն ջուր էր թքում: Ֆրոդոն ձախ ձեռքը մեկնեց նրան, իսկ աջով բռնեց նրա մազերից:

— Դե՛, դե՛, ոչինչ չկա,— վախեցած խոսեց նա,— ձեռքս բռնի, հիմա ափ դուրս կգանք:

— Փրկե՛ք,— պաղատագին բացականչեց Սամը,— ձեռքը չեմ տեսնում... Խեղդվո՛ւմ եմ... փրկե՛ք...

— Հրե՛ս, ձեռքս, հրե՛ս,— պատասխանեց Ֆրոդոն: նա ձեռքով թփթփացրեց Սամի ուսին, և նա անմիջապես կառչեց: — Նավակողից բռնիր,— ասաց Ֆրոդոն,— ես պետք է թիավարեմ:

Սամը կախվեց կողից:

Ֆրոդոն արագ մոտեցավ ափին, մակույկից դուրս եկավ ու Մատանին հանեց: Սամը անմիջապես իջավ մարգագետին:

— Այ թե պնդերեսն ես, հա՛,— ասաց Ֆրոդոն:

— Ախր էդ ո՞նց էիր, տեր իմ, այդպիսի բան որոշել,— հանդիմանանքով բացականչեց դողդողացող Սամը: — Ի՞նչ էիք անելու, որ ես չհասնեի:

— Ինձ համար հանգիստ գնալու էի արևելք,— ակամա ժպտալով, պատասխանեց Ֆրոդոն:

— Հանգի՞ստ... — վրդովված կրկնեց Սամը: — Առանց բոլորի, ամենագլխավորը՝ առանց ինձ: Իսկ որ ձեզ բան պատահի՞, ո՞վ է օգնելու... Մենա՞կ, հա՞... Էդ մեկը չէ... դրան, տեր իմ, ես դիմանալ չեմ կարող...

— Չե՞ս կարող: Իսկ եթե ճանապարհին կործանվես... Ի՞նչ ես կարծում, ես դրան դիմանալ կկարողանա՞մ,— հարցրեց Ֆրոդոն,— չէ՞ որ ես Մորդոր եմ գնում...

— Թե չէ էլ ո՞ւր,— պատասխանեց Սամը: — Իհարկե, Մորդոր, միասին էլ կգնանք:

— Լսիր, Սամ,— ասաց Ֆրոդոն: — Հիմա կվերադառնան մեր բոլոր ուղեկիցները և նորից անվերջանալի վեճեր կսկսվեն: իսկ ինձ հարկավոր է անպայման մեկնել: Միակ փրկությունը դրանում է, հասկացիր...

— Մենակ գնալը կործանում է, ոչ թե փրկություն,— առարկեց Սամը: — Ես էլ կգամ: Կամ էլ մեզնից ոչ ոք ոչ մի տեղ չի գնա: Դե ես հիմա բոլոր մակույկները կծակեմ, որ ձեզ մենակ չթողնեմ Մորդոր...

Ֆրոդոն շնորհակալ և ուրախ ծիծաղեց.

— Գոնե մեկը թող,— ասաց նա Սամին,— թե չէ ինչպե՞ս կանցնենք Անդուինը: Դե լավ, եղած-չեղածդ հավաքիր, պնդերես...

— Էս րոպեիս,— ուրախ ասաց Սամը: — Իմ ուղեպարկը հավաքված է: Միայն մի քիչ ուտելիք կվերցնեմ...

Ափից հրվելով, Ֆրոդոն ասաց.

— Ուրեմն ինձ մենակ գնալ չհաջողվեց: Իսկ ես, ճիշտն ասած, ուրախ եմ, որ չհաջողվեց: Շա՛տ ուրախ եմ, իմ թանկագին Սամ: Երևում է, այդպես է որոշված մեր ճակատագիրը, միասին գնալ մինչև վերջ: Հույս ունենանք, որ մեր ուղեկիցները կկարողանան անվտանգ ճանապարհ գտնել: Բայց հազիվ թե այլևս նրանց հանդիպենք:

— Ասում են՝ սարը սարին չի հանդիպում, մենք հո սա՞ր չենք,— առարկեց նրան Սամը:

Երկու փոքրիկ հոբիթ նավարկում էին դեպի արևելք: Ֆրոդոն ջանադիր աշխատում էր թիերով, բայց հոսանքը թեթև մակույկը արագ տանում էր: Ժայռոտի վեմերը հետևում մնացին. Ցիցարի մռնչոցը բացահայտորեն մոտենում էր: Սամը ջանադրաբար օգնում էր տիրոջը և այնուամենայնիվ դանդաղ, շատ դանդաղ էին հոբիթները նավարկում, անցնում Անդուինը:

Վերջ ի վերջո հասան անտառաշատ Ունկնի հարավային լանջերի ափը: Վերցնելով ուղեպարկերը, նրանք մակույկը դուրս քաշեցին ջրից և թաքցրին խոշոր, մոխրագույն գլաքարի տակ:

Իսկ հետո, առանց հապաղելու ճանապարհ ընկան:

Սրանով ավարտվում է Պահապանների Ջոկատի պատմությունը՝ Համիշխանության Մատանու համար Մեծ Ճակատամարտի Առաջին տարեգրությունը:

Պահապանները մեկնում են տարբեր կողմեր:

Երկրորդ Տարեգրությունը պատմում է երկու հզոր ամրոցների կատաղի պայքարի ժամանակ Պահապանների ճակատագրի մասին:

Խավարի Վարագույրը տարածվում է ու ամրանում:

Երրորդ Տարեգրությունը պատմում է դեպի Օրոդրուին Գլխավոր Պահապանի արշավի և Մութ Ուժերի դեմ նրա բարեկամների մղած ճակատամարտի մասին:

Միջերկրի վրա ծագում է Նոր Դարաշրջանի առավոտը: